ՏԻՏՂՈՍ Բ.
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

I. «Կատարեալ քրիստոնեայ»

ԲԳԿ ՄԾՋ. Ոմանք ի սիրոյն Քրիստոսի խրատին եւ այս բնութեամբ ընթանան յեկեղեցին ի պահս եւ յաղաւթս եւ յուսումն եւ յայլ առաքինութիւնս եւ կարճ ի կարճոյ հանդիպին մեծի մխիթարութեան:

ԲԳԿ ՄԾԷ. Իսկ ոմանք հանդիպին վասն մեղաց եւ դառնան ի խոստովանութիւն եւ մեկնեն զիւրեանց գաղտնիս եւ հանդիպին լուսոյն:

1. Մեղքեր

ՀԱՒ ԺԵ. Հարցումն. Թէ ոք յաւժարիցէ ի մեղանչել եւ խափանեսցի ի պատճառանաց ինչ, զինչ պարտ է ասել:

Պատասխանի. Ցայտ է թէ ի շնորհացն Աստուծոյ պահեցաւ եւ վասն այնորիկ պարտ է գոհանալ զտեառնէ Աստուծոյ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ յամենայնի:

ՍԱՊ ԻԶ. Ուսուցէք եւ զժողովրդականս յամենայն անառակութենէ ի բաց փախչել՝ յորկորստութենէ, յարբեցութենէ, ի հակառակութենէ, ի զրկելոյ զաղքատս եւ զընկերս իւրեանց. մի՛ կռուողս, մի՛ հանգանակողս, մի՛ չարասէրս. ատեսցեն զշնացողս, զգողս, զպոռնիկս, զաւազակս. ամենեւին մի՛ հաղորդեսցին եւ մի՛ ասպնջականս լինիցին այնպիսեանցն, զի մի՛ եղիցին եւ ինքեանք ընդ նոսին որդիք կորստեան: Զմանկունս իւրեանց սնուսցեն երկիւղիւ խրատու պատուիրանաց Աստուծոյ. զի այսպիսի զգուշութեամբ բարի յոյս ունիցեն իւրեանց եղիցի առ Աստուած եւ բարեխաւսութիւն, մարմնոյ ամենայն առողջութեամբ զարդարեսցի:

ՇԱՒ Ը. Եթէ ոք ի կախարդութեան գտցի այր կամ կին, եւ յուրացութեան կամ յայլ չարագործութեան, եւ ի զղջումն եւ յապաշխարութիւն ոչ եկեսցեն՝ ըստ գրոց հրամանի քարկոծ լիցին (Ղեւտ. Ի. 27): Ապա եթէ ի խոստովանութիւն եկեսցեն՝ ցելս անձանց իւրեանց յապաշխարութեան կացցեն ԺԲ. ամ առ դրանն ընդ ունկնդիրսն եւ Գ. ամ ընդ ապաշխարողս ելցէ, եւ յամենայն ժամ քննեալ հետքն ի ձեռն ողորմութեան եւ գթոյ տնանկաց, բազում ինչս ծախեալ ի կարաւտեալս վասն փրկութեան անձանց, ջերմեռանդն արտասուաւք գյետին թոշակն ընկալցին:

ԹՍՎ ԺԳ. Հաւատաւոր թէ գայթագղեսցի, թէ խորգով եւ սգով մտցէ յապաշխարութիւն՝ Զ. ամ դրան արտաքոյ եւ Գ՝ ընդ ապաշխարողս եւ Գ՝ աւրէնս մի՛ առցէ:

TITRE 2. LA SOCIÉTÉ

I. «Le bon chrétien»

ECB 256. Ceux qui exhortent à l'amour du Christ et vont à l'église avec de telles dispositions pour s'adonner aux jeûnes, aux prières, aux enseignements et autres vertus recevront tôt ou tard une grande consolation.

ECB 257. Et ceux qui après avoir péché se repentent par la confession et s'éloignent de leurs souillures verront la lumière.

1. Les péchés

QCA 15. Si quelqu'un souhaite pécher, mais en est empêché pour quelque raison, il est évident que c'est la grâce qui l'a préservé et il faut remercier notre Seigneur Jésus Christ.

SPT 26. Les prêtres doivent enseigner aux laïcs à fuir la débauche, la gloutonnerie, l'ivresse, la contestation, la nuisance aux pauvres et à leurs compagnons; à ne pas être querelleurs, bagarreurs, malfaisants, adultères, voleurs, fornicateurs, brigands. Ils doivent éviter de telles personnes et élever leurs enfants dans la crainte des commandements divins, afin que leurs âmes soient sauvées.

SHV 8. L'homme - ou la femme - qui est trouvé en train de pratiquer la sorcellerie ou d'apostasier ou de commettre tout autre méfait et qui n'incline pas vers le repentir et la pénitence, sera lapidé selon le commandement de l'Écriture (Lv 20, 27). Mais s'il se confesse, il se tiendra dans la pénitence jusqu'à sa mort, pendant douze ans à la porte de l'église avec les auditeurs et pendant trois ans, il sortira de l'église en même temps que les pénitents, et à toute heure, il fera l'aumône aux indigents, en vendant de nombreux biens en faveur des nécessiteux en vue du salut de son âme et grâce à des larmes ferventes, il recevra le viatique.

SEW 13. Le croyant qui commet un scandale fera pénitence vêtu d'un cilice, il se tiendra six ans à l'extérieur de l'église, puis trois ans avec les pénitents, puis pendant trois ans encore, il ne recevra pas la communion.

ԹԱՏ ԺԶ. Հարցումն. Որ հաւատացեալ եւ մկրտեալ է, եւ անկանի ի մեղս, զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Որ միանգամ ի Քրիստոս մկրտեալ են, մի՛ երբեք լիցի նոցա անկանել ընդ մեղաւք, այլ աստուածահաճոյ վարել զկեանս իւրեանց՝ մի՛ շնալ, մի՛ գողանալ, մի՛ արբենալ, մի՛ երդնուլ, մի՛ բամբասել, այլ որպէս Աստուծոյ իսկ ժողովուրդ առանց ամենայն կեղծաւորութեան:

ԿԵԱ Է. Քանզի զայդ ամենայն կանոն, զոր դրոշմեցաք ի մի վայր բովանդակեալ եւ ծայրաքաղ արարեալ, զաւգտակարն ամենայնի զմեղս եւ զարդարութիւն ցուցաք ձեզ, զամենայն ինչ ընդ ապաշխարութեամբ եդեալ աւգուտ ձեզ գործեցաք, զի խոտորել ի չարէն եւ առնել զբարին եւ զհաճոյն եւ զկատարեալն, զի իբրեւ զհատ ցորենոյ իջեալ ի հող՝ բողբոջեալ զատոքութիւն ցուցէք եւ բովանդակութիւն ըստ արքունական դրոշմեալ ի տախտակս քարեղէնս մատամբն Աստուծոյ գրեալ ներքոյ եւ արտաքոյ եւ տուեալ ի ձեռն Մովսէսի.

«ա. Մի՛ եղիցին ձեզ աստուածք, բայց յինէն:

բ. Մի՛ առնիցէք ձեզ կուռս ըստ ամենայն նմանութեանց, որ յերկինս եւ կամ յերկրի եւ կամ ի ջուրս:

գ. Մի՛ առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց:

դ. Յիշեսջիր դու զայն, զի ի Ձ. աւուր արար տէր Աստուած քո զերկինս եւ զերկիր եւ յեւթներորդին հանգեաւ: Նոյնպէս եւ դու պահեսցես զպատուիրանսդ, զի հանգիցես յետ Ձ. հազար դար ի կենաց քոց:

ե. Պատուեա զհայր քո եւ զմայր, զի աւրհնութիւն հաւր հաստատէ զորդիս:

զ. Մի՛ սպանանես:

է. Մի՛ շնար:

ը. Մի գողանար:

թ. Մի՛ սուտ վկայեր եւ մի՛ սուտ խաւսեր:

ժ. Մի՛ ցանկանար ընչից ընկերին քո, եւ ամենայն զինչ եւ իցէ ուրուք մի՛ ցանկանար» (Ելք, Ի. 3-4, 7-17. յմմտ. Մատթ. ԺԹ. 18-19.):

ԿԵԱ Ը. Միւս եւս մարգարէական կանոնիւ պարսպեցից զքեզ, ով քաջդ Թէոփիլէ (Ղուկ. Ա. 1-4), եւ բովանդակեցից զկանոնս. եկ երթիցուք ի սաղմոսարանն, որ հանապազ սեղան առաջի եդեալ կերակրէ զմեզ զինչ ասելով. «Եկայք որդեակք իմ, լուարուք ինձ եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ. մարդ ոք որ կամի զկեանս սիրել եւ զաւուրս իւր տեսանել ի բարութեան» (Սաղ. ԼԳ. 12-13.) եւ ժառանգել զարքայութիւնն երկնից. «Լռեցուսցէ զլեզու իւր ի չարութենէ եւ շրթունք իւր մի՛ խաւսեսցին զնենգութիւն, խոտորեսցէ ի չարէ եւ արասցէ զբարի» (Սաղ. ԼԳ. 14-15) եւ բնակեսցէ յաւիտեանս յաւիտենից: Մի՛ խաւսիր զումեքէ եւ մի՛ լսեր զումեքէ եւ մի՛ որ քեզ չար թուի՝ ընկերին քում առներ զայն. երկիր յԱստուծոյ ամաչելով եւ պատկառելով ի մարդկանէ. քանզի գրեալ է. «Զառիւծ ոյժ զարդարէ եւ զմարդ՝ Աստուծոյ երկիւղն». «Մեծամեծք աղքատացան եւ քաղցեան, բայց որք խնդրեն զՏէր՝ մի՛ պակասեսցի ի նոցանէ ամենայն բարութիւնք (Սաղ. ԼԳ. 11): Ո՞ յուսացաւ ի Տէր եւ յամաւթ եղեւ. սուտ ամենեւին մի՛ խաւսել. սուտ մի՛ երդնուլ. յորժամ երդնուս եւ դաշինս կռես՝ զուխտիւ մի՛ անցանել. լուր զինչ ասեն. «Կորուսանէ զամենեսեան որ

THD 16. Ceux qui ont été baptisés ne doivent pas tomber dans le péché et doivent s'écarter de l'adultère, du vol, de l'ivrognerie, du serment, de la calomnie, afin de se comporter comme le peuple de Dieu sans aucune hypocrisie.

SCA 7. Nous avons condensé la législation pour montrer ce que sont la justice et le péché, et l'utilité de la pénitence qui vous a détournés du mal. Vous êtes venus à maturité et selon l'ordre royal, la loi a été gravée sur des tablettes de pierre (Ex 31, 18) par l'intermédiaire de Moïse qui a reçu les Dix Paroles (Ex 20, 3-4; 7-17; cf. Mt 19, 18-19).

SCA 8. «Je te protégerai comme d'un rempart grâce à une autre loi des prophètes, bon Théophile, et je récapitulerai les canons» (Lc 1, 1-4). Celui qui veut hériter du royaume des Cieux ne prononcera ni n'écoutera aucune parole perfide, mais il aimera le bien et repoussera le mal (Ps 33, 10-15). Ne mens jamais, ne profère pas de faux serments lorsque tu scelles un contrat, ne viole pas un vœu (Ps 5, 7). Aimez la sainteté, la modestie, l'humilité, l'amour des hommes, honorez les vieillards, aimez les enfants et enseignez-leur la foi, considère ton prochain comme supérieur et respecte les *vardapets*. Va à l'Évangile avec humilité, sois le serviteur de tous (Mt 23, 11) et glorifie le Seigneur à toute heure.

խաւսին սուտ» (Սաղ. Ե. 7): Ձսրբութիւն եւ զպարկեշտութիւն սիրեցէք, զխոնարհութիւն բնական ագանելիս ձեզ արարէք, զմարդասիրութիւն քոյր կոչեցէք. զծերս պատուեցէք, զմանկունս սիրեցէք, զխրատ եւ զուսումն վարդապետութեան մի՛ արգելուք, զընկերս գեր ի վերոյ քեզ արասցես, զվարդապետս մեծարանաւք կալջիր, առաջի մեծամեծաց լռութիւն, առաջի իմաստնոց ունկնդրութիւն՝ ի վեր ունելով զմիտսն եւ ի խոնարհ՝ զաչսն. ոչ հպարտութեամբ, այլ խոնարհութեամբ երթ յԱւետարանն եւ ուսիր. որ կամիցի ի ձէնջ մեծ լինել, եղիցի ամենեցուն սպասաւոր: Ցայսր վերայ փառաւորեսցուք զԱստուած անդադար բերանով, յամենայն ժամ գոհութեամբ փառս տացուք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ողջ լերուք ի Տէր ամենայն մանկունք ուխտի եկեղեցւոյ:

ԲԳԿ ԽԲ. Կին որ գիտիցէ զչարիս առն իւրոյ եւ ծածկիցէ եւ պղծել տայ զսուրբ անկողինսն՝ Ե. ամ ապաշխարեսցէ, նոյնպէս եւ այրն եւ այլ գիտակք չարեաց:

ԲԳԿ ՂԹ. Իսկ եթէ ոմանք չոգան ի պոռնկութիւն կամ յայլ չար գործս եւ լինիցի նոցա անդ վախճան, արիւն նոցա ի գլուխ նոցա: Բայց նոքա որ սպանին՝ ընդ պատժաւք են՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցեն, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց: Իսկ պոռնիկն յուրկանոց երթիցէ եւ վաստակիցէ գոդեացն Է. ամ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, եւ թէ լիցի արժանի յետին թոշակին:

ԲԳԿ ՃՁԷ. Արժան է քահանային իւր վիճակին զգոյշ կալ հաւտին եւ զչարագործսն յանդիմանել հրապարակաւ, մանաւանդ զձեռնածուսն եւ զթովիչսն եւ զդեղահատսն եւ զլերդահմայ<ս>ն եւ զթիկնագէտսն եւ զյուռթողսն եւ զհատընկէցսն եւ զայլ փաթեթս չարեաց սատանայի. զայնպիսիսն արգելուլ յեկեղեցւոյ եւ ի կնքոյ եւ ի տաւնից մինչեւ ի կարգ կալ եւ ապաշխարել՝ Բ. ամ ընդ ունկնդիրս եւ Ա. ամ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց. եւ եթէ ոչ դառնան ի չար գործոցն՝ քահանայն կնիք նոցա մի՛ տացէ եւ պսակ մի՛ դիցէ եւ զդիս նոցա մի՛ թաղեսցէ. եւ եթէ ոք լուծցէ զկանոնս՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ՄԻԲ. Թէ ոք յիշխանաց զքահանայ անարգէ վասն պոռնկաց կամ այլ չարագործաց, որպէս թէ աւգնական լինել նոցա, եւ զարդար դատաստանն թիւրէ, որպէս եւ գիրն ասէ՝ «Իշխանք ձեր գողակիցք են գողոց» (Եսայ. Ա. 23), եղիցի նզովեալ ի Քրիստոսէ. եւ չարիք նոցա ի գլուխ նոցա եղիցին:

ԲԳԿ ՄԾԸ. Իսկ ոմանք անկեալք յաղաւթից եւ ծնկեալք ի պահոց, իբրեւ զշունս լիրբս անփոյթ լինին յամենայնի ուսումնատեացք, ոչ ի դիւին արատուէն, այլ յիւր չար եւ ի վատ բարուցն, մինչեւ ի վախճան անքակ լինին ի դիւէն:

ԲԳԿ ՄԿԵ. Իսկ այսահարութիւն է՝ արիւնհեղութիւն եւ սուտ երդումն եւ զուր վկայել եւ արուագիտութիւն եւ անասնազանցութիւն եւ ագահութիւն եւ արծաթսիրութիւն եւ արբեցութիւն. որ թէ այնմ հանդիպին, այսահար կոչիլ լաւ է քան զայնպիսի ախտից:

ECB 42. La femme qui dissimule les crimes de son mari et souille le lit de sainteté fera pénitence pendant cinq ans, de même que l'homme qui est au courant des crimes de sa femme, et s'agissant de toutes les personnes qui étaient informées.

ECB 99. Si certains forniquent ou commettent d'autres méfaits et que cela occasionne des morts, le sang de ces morts retombera sur leurs têtes. Mais s'agissant des homicides, ils se tiendront pendant cinq ans avec les auditeurs et pendant deux ans sous surveillance, et grâce à des dons aux nécessiteux, ils pourront communier. Quant au fornicateur, il travaillera dans une léproserie pendant sept ans, puis pendant trois ans, il entrera et sortira de l'église avec les pénitents, afin d'être digne du viatique au jour de sa mort.

ECB 187. Le prêtre doit être attentif à son lot et réprimander publiquement les malfaiteurs, notamment les prestidigitateurs, les enchanteurs, les guérisseurs, les haruspices, les liseurs d'omoplates, les incantateurs, les jeteurs de grains et autres amulettes qui sont les amorces de Satan; ces personnes seront écartées de l'Église, du baptême et des fêtes jusqu'à ce qu'elles cessent et fassent pénitence pendant deux ans avec les auditeurs, puis un an sous surveillance et avec des larmes, et des dons aux pauvres, elles se rendront dignes de la communion; mais si elles ne cessent pas leurs méfaits, le prêtre ne pourra ni les baptiser, ni les marier, ni enterrer leur cadavre; et celui qui viole ce canon sera anathématisé.

ECB 222. Le prince qui méprise un prêtre afin de protéger des fornicateurs ou d'autres malfaiteurs et s'abstient d'un juste jugement sera – comme le proclament les Écritures (Is 1, 23) – anathématisé par le Christ; et les crimes des malfaiteurs retomberont sur sa tête.

ECB 258. Ceux qui abandonnent les prières et se sentent accablés par les jeûnes sont comme des chiens hermétiques à tout enseignement, non à cause du vice du démon, mais en raison de leur nature malfaisante et vile, et jusqu'à leur mort, ils seront inséparables du démon.

ECB 265. Est considéré comme de la possession par le démon le fait de verser le sang, le parjure, le faux témoignage, la bestialité, la cupidité, l'amour des richesses et l'ivrognerie; il est préférable d'appeler de telles personnes des possédés plutôt que de les nommer du nom de telles tares.

ԿԿՄ Է. Որք խոստովանեցին եւ ապա դարձան ի փսխած իւրեանց, եւ դարձեալ խոստովանեսցեն՝ զաստն աճեցի, այլ ընկալ մարդասիրութեամբ ըստ բանին Տեառն որ եւթանասնեկին եւթն հրամայեաց թողուլ:

ԿՈՉ Ը. Որ ի բնութեանն մեղք են. Թէ ագահ իցէ, թէ արբեցող, թէ բամբասող, թէ նախանձոտ, թէ ոխս պահէ, թէ սնափառ է, թէ ստախաւս, թէ ստերդումն եւ զրպարտող, թէ յաղաւթից խափանեալ է, թէ չար ցանկացող է, թէ քսմոս է, թէ երկպառակ, թէ ի վհուկս եւ ի հատընկէցս երթեալ է, թէ զայլոյ մեղս հրապարակեալ է եւ ի ծածուկ քահանային ոչ ասաց, թէ կաշառ վասն դատաստանի էառ, թէ յիշոցն երետ եւ բան հայհոյութեան խաւսեցաւ, թէ զծնաւղսն անարգուք, թէ լեզուանիք, թէ զաղքատս ոչ ընկալաւ, թէ զսրբոց զոտս ոչ լուաց, թէ ի վերայ մեռելոց ճակատ հարեալ, թէ զվարձկան զրկեալ, թէ զկուսութիւն նուիրեալ Աստուծոյ՝ դարձեալ ստեաց, թէ ուխտեալ եւ ոչ կատարեալ, թէ ի թատերս յաւժարացեալ, թէ առ անձուկս մեղուցեալ, թէ արծաթասէր է, թէ զքահանայս բամբասեալ է, թէ ի տունս հեթանոսաց անխտիր կերակրեալ է, թէ ախտից տէր լեալ եւ զայլս ուսուցեալ, թէ ի ձիս յերասանեալ յագելապէս, թէ թովիչ, թէ ընկերատեաց, թէ անողորմ, թէ ամբարտաւան, թէ հպարտ, թէ զաչսն ի խառնակումն անասնոց անխտիր արձակեալ, թէ զաւագ ոչ է պատուեալ, թէ Տեառն միամիտ ոչ է ծառայեալ, թէ զպտուղ եկեղեցւոյն խաբեալ է, թէ զուխտս ըստ Աստուծոյ կամաց ոչ է կատարեալ, թէ ի տաւնի կամ ի կիւրակէի յառաջ քան զպատարագն հաց կերեալ է, թէ զուրբաթ կամ զչորեքշաբաթ ելոյծ, որ են մեծ մեղք:

2. «Մի սպաններ»

Ա. Անձնասպանութիւն

ԵԱԿ ԻԲ. Եթէ ժողովրդական ոք զինքն կրճատեաց՝ որոշեսցի զերիս ամս, քանզի դժրող է իւրոյ կենացն:

ԿԵՍ Ը. Եթէ խաւսեալ ուրուք իցէ զաղջիկ առն եւ նա թողցէ զխաւսեալն նմա եւ ննջեսցէ ընդ քեռ նորա կամ ընդ որում եւ իցէ, եւ ապա եթող զնա եւ անդէն յառաջին խաւսեալն դարձաւ եւ կին արար եւ ընդ որում ննջեացն՝ նա չոգաւ խեղդ արկ եւ մեռաւ առ նախանձու, այրն վասն պղծութեանն Է. ամ ընդ կարգաւք լիցի: Իսկ վասն մահու աղջկանն պարտական լիցին, որք գիտակ էինն եւ հոգաբարձուք էին եւ ոչ փոյթ արարին ուղղել զգործն՝ Ժ. ամ ընդ ունկնդիրս կացցեն եւ Ե. ամ ընդ ձեռամբ, ի ձեռն ողորմութեան սրբեալ հաղորդեսցի աւրինաց:

ՀԱԹ ԺԱ. Հարցումն. Որ յիւր միտսն ոչ իցէ եւ երթիցէ զիւրովի, այսինքն է՝ կամ գահավէժ առնի, կամ այլ ինչ մահու մեռանի, պարտ է ի վերայ նորա պատարագ մատուցանել, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է վիճակելոյն քննել թէ ճշմարտութեամբ պակասամիտ էր եւ արար զայս. քանզի բազում անգամ մերձաւորին ախտացելոյն կամելով դիպել

CYM 7. Ceux qui se sont confessés, puis sont retournés à leurs vomissures avant de se confesser à nouveau verront leur pénitence aggravée, mais malgré tout, ils seront reçus avec amour selon la parole du Seigneur qui a demandé de pardonner 77 fois.

APR 9. Des choses qui sont des péchés naturels. L'avarice, la rancune, la vanité, le mensonge, le parjure et la calomnie, manquer les prières, la méchante cupidité, la délation, semer la zizanie, fréquenter les enchanteurs et les *hatsnkeac'*, dévoiler publiquement les péchés des autres au lieu de les rapporter au prêtre, recevoir un pot-de-vin pour un procès, proférer des propos malhonnêtes et blasphématoires, ne pas respecter ses parents, être bavard, ignorer les pauvres, ne pas laver les pieds des saints, se frapper le front sur les morts, priver de salaire le travailleur, offrir sa virginité à Dieu puis trahir son vœu, ne pas respecter un vœu, aimer le théâtre, pécher par envie, aimer l'argent, manger sans retenue chez les païens, être un maître du vice et l'enseigner aux autres, regarder les chevaux avec lubricité, être un prestidigitateur, détester ses amis, la cruauté, l'orgueil, la fierté, regarder impunément la copulation des animaux, ne pas honorer les aînés, ne pas servir sincèrement le Seigneur, détourner les revenus de l'Église, violer ses vœux faits à Dieu, manger avant la messe un jour de fête ou un dimanche, rompre le jeûne le vendredi ou le mercredi.

2. «Tu ne tueras point»

A. Le suicide

CCL 22. Le laïc qui se castre lui-même sera exclu pendant trois ans, car il est l'ennemi de sa propre vie.

CES 9. Si un homme abandonne sa fiancée pour coucher avec la sœur de celle-ci ou une quelconque autre femme, puis abandonne celle-ci et revient avec sa fiancée pour l'épouser, et de ce fait, celle avec qui il avait couché se suicide par jalousie; cet homme fera pénitence pendant sept ans. Et les personnes responsables de la jeune fille qui étaient au courant de la situation mais qui n'ont rien fait se tiendront avec les auditeurs pendant dix ans, puis pendant cinq ans elles seront sous surveillance et, grâce à la miséricorde (*i.e.* les dons), elles pourront communier.

QCA 11. Le prêtre fera une enquête sur celui qui s'est suicidé pour savoir s'il avait sa raison ou non, car il arrive que les parents du mort mentent et le présentent comme sans raison, afin qu'une messe soit célébrée en son nom. Le prêtre doit enquêter avec minutie, car si le suicidé avait sa raison, il était son propre meurtrier et le prêtre s'exposera à un jugement pour avoir célébré une messe en son nom.

որ ի վերայ նորա պատարագ մատչի, ստեն եւ ասեն՝ ոչ էր յիւր միտս, զի մատուսցեն զպատարագն: Արդ՝ քննել պարտ է, մի՛ գուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար զայս, ապա ոչ է պարտ լինել պատարագ ի վերայ նորա, քանզի ինքնասպան եղեւ անձին իւրում. ապա պարտ է զամենայն քննել ճշմարտութեամբ, զի մի՛ ի դատաստան անկանիցի մատուցողն:

ՀԱԹ ԻԸ. Հարցումն. Եթէ ոք զդուստր իւր կամ զաղախին կամեսցի տալ առն եւ նոքա աղաղակիցեն. «Ոչ կամիմք լինել աշխարհականք, այլ սրբութեամբ եւ կուսութեամբ կամիմք կեալ յաշխարհի». եւ ի բռնադատելն զնոսա կամ խեղդին կամ ի քարէ անկանին, որպէս վասն մեռելոյն, պարտ է յիշատակ առնել, կամ որպիսի վնասակարութեան արժանի զնեղիչս նոցա համարել պարտ է. խնդրելի է բանս:

Պատասխանի. Ոչ է պարտ առնել զյիշատակն, զի անձնասպան եղեն. եւ որք նեղեցինն՝ ապաշխարեսցեն իբրեւ սպանողք:

ԲԳԿ ճԾՁ. Թէ ոք պոռնկեցաւ եւ այլ ընտանիքն նորա կամ ծնաւղքն նորա նախատեցին զնա եւ նա առ նախատինսն իւր չոգաւ անկաւ ի ջուր կամ խեղդ արկ եւ մեռաւ, արիւն նորա եւ մեղքն ի գլուխ հոգաբարձուացն, զի ոչ զգուշացան մահուան աղջկանն եւ առանց առաջնորդին դատեցան: Ապա եթէ ինքն առանց առաջնորդին դատելոյ, վասն նախատանաց խեղդ արկ եւ մեռաւ կամ չար դեղաւք, ահա կուտեաց զմեղս ի վերայ մեղաց, եւ ի դպրութենէն կենաց ջնջեցաւ անուն նորա. մի՛ իշխեսցէ քահանայն երթալ ի դի նորա կամ թաղել զնա կամ պատարագ առնել, բայց վարդապետն իշխան է յիշատակին:

ՍԿՆ ԺԱ. Վասն որք շնան եւ կամին սպանանել եւ ի շնորհացն Աստուծոյ ապրեցան՝ Ը. ամ ապաշխարեսցեն:

Բ. Մարդասպանութիւն

ԵԱԿ ԿԱ. Եթէ ոք ժառանգաւոր ի կռուի զոք հարցէ եւ ի միոջէ հարմանէն մեռցի՝ լուծցի, վասն յանդգնութեան իւրոյ. իսկ եթէ ժողովրդական իցէ՝ որոշեսցի:

ՀԱՅ Ա. Եթէ ոք հեղձուցանէ զտղայ իբրեւ զիսեղ կամ ի շնութեան զայն կամաւ արարեալ՝ փոխանակ մեռցի, զի եւ որպէս ոչ է հնար ի վեր կացուցանել, նոյնպէս եւ ոչ ապաշխարել:

ՀԱՅ ԺԲ. Եթէ ոք ընդ անձին իմաստութիւն հաւանեալ՝ զսպանողն կոչեցեալ յապաշխարութիւն, այնպիսին չանխայեալ, զարիւն նոցա յիւրմէ հոգւոյն պահանջեալ[1]:

[1] **Հմմտ.** Կանոնախմբի ամփոփումը՝ «Վասն պանծացեալ երիցու որ սպանողի ողջ ապաշխարութիւն ոչ դնէ»:

QCA 28. La fille ou la servante qui souhaitait vivre dans la virginité, mais qui après avoir été mariée de force par ceux ayant autorité sur elle se suicide, ne sera pas commémorée car elle s'est suicidée; et les oppresseurs subiront la pénitence des homicides.

ECB 156. La fornicatrice qui après avoir été accablée d'injures par des membres de sa famille se jette dans l'eau ou se pend et meurt, son sang et ses péchés retomberont sur la tête de ceux qui avaient autorité sur elle, car ils ont été négligents envers elle et l'ont jugée sans attendre le jugement du prélat. Mais si la fille sans attendre le jugement du prélat, du fait des injures de sa famille s'est tuée par pendaison ou par le poison, elle a accumulé péchés sur péchés et, de ce fait, son nom sera retiré du livre de vie; et le prêtre n'enterrera pas son cadavre ni ne célébrera de messe en son nom, mais le *vardapet* pourra rappeler son souvenir.

NPT 11. Ceux qui commettent un adultère puis tentent de se tuer, mais qui par la grâce de Dieu survivent feront pénitence pendant huit ans.

B. L'homicide

CCL 61. Le clerc qui durant une querelle frappe quelqu'un et le tue sur le coup sera déposé du fait de sa témérité; si le meurtrier est un laïc, il sera exclu.

CPC 1. Celui qui étouffe volontairement un enfant du fait de son impotence ou parce qu'il était le fruit d'un adultère sera exécuté, car il est impossible de le ressusciter, même par la pénitence.

CPC 12. Le prêtre téméraire qui – persuadé par sa conscience – ne soumet pas un homicide à la pénitence ne sera pas épargné et son âme sera redevable du sang versé[1].

[1] Le titre de ce canon dispose: «À propos du prêtre téméraire qui n'impose pas une pénitence complète à l'homicide».

ՀԱՅ ԺԸ. Եթէ ոք անմեղ գնասցէ ուղեւոր եւ ոչ զոք ունիցի յառաջ թշնամի պատահեալ, այլ թէ որ ամենեցուն գողն եւ աւազակն սմա դիպեսցին եւ սպանցէ սա զնոսա, մի՛ իբրեւ սպանող դատեսցի սուրբ եկեղեցի: Բայց վասն ահագին սեղանոյն՝ սրբեսցէ զանձն աւուրս սակաւս, զմտաւ ածեալ, թէ ընդէ՞ր իսկ եւ ակամայքն դիպեցան անձին թէպէտ եւ յԱստուծոյ իցէ մատնութիւնն:

ԿԵՍ Գ. Վասն կանանց որ պոռնկին եւ զմանկունս սպանանեն, առաջին վարդապետքն մինչեւ ի մահ սահմանեցին ընդ պատժովք լինել, բայց երկրորդս, վասն մարդասիրութեանն Աստուծոյ՝ կամ եղեւ ժողովոյն Ե. ամ լինել ընդ ունկնդիրս, Ե. եւս ամ ընդ ձեռամբ լինել, տրաւք ողորմութեամբ սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինաց:

ԿԵՍ Դ. Վասն որ ոչ զպոռնկորդի, այլ զարդար զաւակս սպանանեն կամաւք չար արուեստիւք իւրեանց մինչեւ ցմահ ընդ պատժովք լիցին, ընդ ունկնդիրսն կացցեն եւ ի ձեռն տրոց տնանկաց յելս վախճանին զյետին թոշակն տայցեն. եթէ արանց իցէ վնասն եւ եթէ կանանց՝ կանոն նոյն լիցի:

ԿԵՍ Ե. Վասն որոց ոչ կամաւք սպանին եւ ոչ գիտութեամբ, այլ կամ ի քուն ննջեաց ի վերայ եւ կամ ոչ զգուշացաւ եւ ի հուրն վնասեցաւ վկայութեամբ ընտանեաց եւ ընկերաց՝ առաջին կանոնքն Է. ամ եդին, բայց երկրորդս, վասն մարդասիրութեանն Աստուծոյ, կամ եղեւ մեծ ժողովոյն Գ. ամ առ դրանն հաւասարել աղաւթից եւ Բ. ամս մտեալ յեկեղեցի ընդ ապաշխարողս ելցէ, տրաւք եւ ողորմութեամբ հաղորդեսցի աւրինաց:

ԿԵՍ Ը. Վասն չար դիւթակախարդաց ջատկաց, որք մեծամեծ աւճիրս գործեն եւ դառնացուցանեն զԱստուած ի խորհուրդս իւրեանց, նոքա եւ յՈրդւոյն ուրանան, նոքա եւ զՅոգին սուրբ հայհոյեն, նոքա եւ զարդար զարիւն հեղուն ի գոհել չարեացն. զայնպիսիսն առաջին կանոնն եւ գիրն չապրեցուցանէ եւ արժանի են մահու թէ ի զղջումն ոչ եկեսցեն. բայց շնորհաց հոգիս կեցուցանէ թէ ի զղջումն եկեսցեն յապաշաւանս եւ ի խոստովանութիւն ըստ աստուածեղէն գրոց, թէ «Ոչ կամիմ զմահ մեղաւորին» (Եզեկ. ԺԸ. 32), այլ զդառնալ նորա եւ զկեալ: Կամ եղեւ մեծ ժողովոյն վասն մարդասիրութեանն Աստուծոյ, այնպիսիքն մինչեւ ի վախճան ընդ ունկնդիրսն կացցեն եւ քննեսցին եւ փորձեսցին հետք նոցա, բայց վարդապետն զմարդասիրութիւն եւ զյորդորումն եւ զյոյս ողորմութեան եւ զխոնարհել առ այնպիսիսն մի՛ արգելցէ, զի մի ի հին սովորութիւնն միտեսցեն միտքն, ողորմութեամբ, գթով եւ տրաւք տնանկաց քաւեսցեն եւ յետին թոշակին արժանի լիցին:

ԿԵՍ Ժ. Վասն գողոց, աւազակաց, մարդասպանաց եւ որ գաղտնի մահաբեր դեղովք անողորմ խողխողեն զորդիս մարդկան եւ որք հրով կիզուն եւ հրդեհեն զվաստակս եւ զշինուածս ոմանց մարդկան եւ մեծամեծ աւճիրս եւ բազում հարուածս, բազմադիմի եւ ազգի ազգի չարիս ածեն որդւոց մարդկան, նոքա եւ զարիւն արդար հեղուն, նոքա եւ զսրբութիւնս կործանեն, նոքա եւ զմանկունս եկեղեցւոյ խողխողեն, նոքա եւ զհայհոյութիւն ի բարձունս ձգեն, զայսպիսիս աւրէնքն

CPC 18. La personne irréprochable qui tue des voleurs et des brigands qui l'attaquent au cours d'un voyage ne sera pas considérée comme un homicide par l'Église. Mais il se purifiera près de l'autel un petit nombre de jours en se demandant, pour quelles raisons, ces épreuves lui ont été infligées.

CES 3. Les premiers *vardapets* avaient condamné les femmes qui forniquent et tuent leurs enfants à une punition jusqu'à leur mort, mais en raison de l'amour de Dieu pour les hommes, le concile a décidé que, pendant sept ans elles seront avec les auditeurs, puis, pendant cinq ans, elles seront sous surveillance et grâce à des dons de miséricorde, elles pourront communier.

CES 4. Celles ou ceux qui tuent volontairement leur enfant non adultérin, mais légitime seront punis toute leur vie, ils se tiendront avec les auditeurs et grâce à des dons aux pauvres, ils recevront le viatique.

CES 5. S'agissant des femmes qui tuent involontairement leur enfant durant leur sommeil en l'écrasant ou le faisant chuter dans le feu, et que des gens de la maison et des amis témoignent de cela, les premiers canons avaient soumis ces femmes à sept ans de pénitence, mais l'amour de Dieu pour les hommes a conduit le grand concile de Césarée à décider que, pendant trois ans, elles participeront aux prières près de la porte et, pendant deux ans, elles entreront et sortiront de l'église avec les pénitents, et par leurs dons aux pauvres et à l'aumône, elles pourront participer à la communion.

CES 8. Les mauvais sorciers ou sorcières qui commettent de très grands méfaits, outragent et blasphèment la Trinité, et versent le sang juste en sacrifice au Malin; le premier canon et l'Écriture les condamnaient à mort s'ils ne venaient pas au repentir; à présent, s'ils viennent au repentir et à la confession, ils vivront (Éz 18, 32). Et en raison de l'amour de Dieu pour les hommes, le concile a décidé qu'ils se tiendront avec les auditeurs jusqu'à leur mort, et leur conduite sera examinée et éprouvée, mais le *vardapet* les exhortera et les consolera afin qu'ils ne rechutent point, et par des dons aux pauvres, ils seront dignes du viatique.

CES 10. Les voleurs, les bandits, les assassins, ceux qui en secret recourent au poison pour tuer les enfants des hommes, les incendiaires qui brûlent les travaux et les édifices de certains, ceux qui infligent des coups, des maux et de graves préjudices aux enfants des hommes, qui versent le sang juste, renversent les choses saintes et blasphèment contre Dieu ont été – s'ils n'arrêtent pas leurs mauvaises actions – condamnés à mort par la Loi et les premiers canons, afin de servir d'exemple aux

եւ առաջին կանոնքն սպանանել հրաման ետուն, զի եւ այլքն խրատեսցին, եւ արժանի են մահու թէ ի չար գործոցն ոչ դարձցին. ապա եթէ քան զըմբռնելն յառաջ եւ ի չարչարանս արկանել ինքնին ի խոստովանութիւն եկեսցէ եւ ի չար գործոցն ամենեւին ի բաց կացցէ՝ կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյն զամենայն ինչ ընդ ապաշխարութեամբ արկանել, զի ուղիղ ապաշխարութիւն, թէ եւ մերձեալ լինի ի դրունս դժոխոց, կորզէ ի բաց, որպէս զԵզեկիայն: Ապաշխարութիւն զհնոցն ի ցաւղ դարձուցանէ, պահք եւ աղաւթք զբերանս առեւծուց սանձեն. քանզի ջերմ արտասուք եւ ապաշխարութիւն զմարդիկ ընդ հրեշտակս խառնեն եւ զհրեշտակս՝ ընդ մարդիկ, որպէս եւ Տէրն տերանց թողեալ զբազում հաւտսն որ յերկինս զմիոյ ոչխարիս զմարդկութեանս զհետ ընթանայր եւ ասէր թէ «Ուրախութիւն է հրեշտակաց ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ եւ ապաշխարեցելոյ» (Ղուկ. ԺԵ. 10): Արդ՝ եթէ դարձցին այսպիսի չարագործքն, զոր պատմեցաք ձեզ, սրտի մտաւք եւ յաւժարութեամբ ի խոստովանութիւն եւ ի դարձ փրկութեան եկեսցեն եւ զհին խմորն զայտումն մեղացն ցածուսցեն եւ ի նոր զանգուած եկեսցեն ջերմ արտասուաւք եւ գթով տնանկաց, քանզի եւ մեծ մարգարէն Դանիէլ բողոքէր առ թագաւորն, զի զմեղս քո ողորմութեամբ քաւեա եւ զանաւրէնութիւնս քո գթով տնանկաց նորափետուր զարդարեսցին, ընդունի զնոսա կանոնս. բայց ապաշխարութիւն յայտ լիցի, քանզի թագաւորն այն Ե. ժամանակ արածեցաւ ընդ անասունս, քանզի ամենայն մեծամեծ մեղացդ, զոր շարեցաք ի կարգի եւ ցուցաք ձեզ ապաշխարութիւն, միագոյն է մի աւրինակաւ, թէ գայթ ի գայթ ինչ իցէ ի վախճանի իւրեանց ընկալցին զյետին թոշակն. ապա եթէ ջերմեռանդն սրտիւ հայեցեալ վարդապետին եւ քննեալ զգործս նոցա եւ զխորհուրդս սրտից նոցա, ներելով արասցէ եւ զյորդորումն եւ զսէր մի՛ արգելցէ, ԺԵ. ամ ի դրունս ունկնդրաց եւ Ե. ամ հաւասարեսցէ ընդ ձեռամբ աղաւթից, ապա հաղորդեսցի աւրինաց եթէ կամք իցեն երիցուն (հմմտ. Ես. ԼԸ; Դան. Գ. 50, Դ. 24, 29; Ղուկ. ԺԵ. 10; Ա. Կորնթ. Ե. 7):

ՀԱԹ ԻԷ. Հարցումն. Թէ անասուն ինչ զմարդ սպանցէ, զինչ պարտ է զանասունն առնել:

Պատասխանի. Որպէս աւրէնքն ասեն:

ՀԱԹ ԻԹ. Հարցումն. Եթէ եղբայր ոք յեղբաւր վերայ յառնիցէ սպանանել զնա, եւ մինն փախիցէ միանգամ եւ երկիցս եւ երիցս, եւ իբրեւ կարի հետամուտ լինի եւ ի մտի ղնէ սպանանել զնա եւ դէպ լինի փախուցելոյն դառնալ եւ սպանանել զհալածիչն իւր, իբրեւ վկայիցեն բազումք, որ ականատես լեալ են այնմ ամենայնի, որպէս տայցեմք ապաշխարութիւն սպանողին կամ որպէս խորհիմք վասն յիշատակի մեռելոյն, որ ինքն պատճառ եղեւ մահուան իւրոյ:

Պատասխանի. Չէ արժան առնել զյիշատակ նորա, եւ սպանողն ապաշխարեսցէ:

ՀԱԹ Լ. Հարցումն. Եթէ ուրուք ծառայ յանհնազանդութեան գտցի եւ տէրն նորա առ բազում անգամ զայրանալոյն հարցէ եւ սպանցէ զծառայն, որպէս հրաման տացուք նմա վասն կարգաց ապաշխարութեան:

Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ:

ՀԱԹ ԼԱ. Հարցումն. Եթէ ոք ի գողութեան հարցէ եւ սպանցէ զգողն, որպէս

autres (1 Tm 1,20). Mais si avant d'être exécutés, ils passent aux aveux et cessent leurs mauvaises actions, le concile a décidé de les soumettre à la pénitence jusqu'à leur mort, et grâce à leurs dons aux pauvres, ils pourront recevoir le viatique (Is 38; Dn 3,50; Lc 15,10; 1 Co 5,7; Dn 4,24, 29). Pour tous ces énormes péchés, la pénitence est uniforme; mais s'ils font preuve d'ardeur dans leur pénitence, le *vardapet* observant leurs actions et en les exhortant pourra faire preuve de charité: ils se tiendront près de la porte avec les auditeurs pendant quinze ans et, pendant cinq ans, ils participeront aux prières sous surveillance, puis ils communieront si c'est l'avis du prêtre.

QCA 27. Si un animal tue un homme, il faut lui faire ce que la Loi commande.

QCA 29. Si par deux ou trois fois, quelqu'un fuit son frère qui le persécute et qui veut le tuer, mais que le fugitif finalement revient sur ses pas et tue son persécuteur, et que de nombreuses personnes témoignent de tous ces faits, on ne commémorera pas le mort, et le meurtrier fera pénitence.

QCA 30. Si un maître après s'être courroucé à de nombreuses reprises contre son serviteur désobéissant le frappe et le tue, il supportera la pénitence des homicides.

QCA 31. Celui qui au cours d'un vol frappe et tue le voleur supportera la pénitence des homicides.

պարտ է հայել ընդ սպանողն:

Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ:

ՀԱԹ ԼԳ. Հարցումն. Եթէ ուրուք յերախայութեան զեղբայր իւր սպանեալ է նենգութեամբ եւ գայցէ կնիք խնդրել, զինչ արասցուք:

Պատասխանի. Տալի է, վասն զի ոչ էր ընդ աւրինաւք յորժամ սպանն:

ՀԱԹ ԼԴ. Հարցումն. Եթէ ուրուք ի դիւահարելն իւրում մարդ սպանեալ է առ անզգայութեան իւրում եւ յորժամ սրբեսցի ի դիւէն, իբրեւ սպանող պարտ է նմա ապաշխարել, թէ ոչպէս:

Պատասխանի. Սակաւ ինչ, զի ի չարէն է գործն:

ՀԱԹ ԼԵ. Հարցումն. Թէ այր զայր սպանցէ քինու եւ եղբարք սպանանելոյն սպանանեն զսպանողն եւ չլսեն բարեխաւսութեան ուրուք, որպիսի ապաշխարութիւն պարտ է տալ նոցա:

Պատասխանի. Սպանողք են:

ՀԱԹ Խ. Հարցումն. Թէ ընդ ստեամբ կալցի մայր զմանուկ իւր եւ հեղձուցանէ երախայ, որպէս տացուք ապաշխարութիւն:

Պատասխանի. Ապաշխարել պարտ է Ե. ամ, որպէս կանոնք հրամայեն:

ՀԱԹ ԽԴ. Հարցումն. Թէ ոք յամբոխի միջի ձիով ընդ կուռն հարկանէ եւ սպանանէ զմարդ ոք ակամայ, լինի՞ քահանայութեան արժանի, թէ ոչ:

Պատասխանի. Վարք եւ կեանք մարդոյն խնդրեսցին՝ թէ սրբութեամբ են, իսկ վասն սպանելոյն ընդէ՞ր ոչ պահեաց աստուծային շնորհն:

ՀԱԹ ՀԲ. Հարցումն. Թէ ոք ի քահանայից ի սրբել զանդաստան իւր կամ զպարտէզ եւ քար ընկենու զորմով եւ դիպիցի մարդոյ եւ մեռանի, զինչ պարտ է առնել վասն կարգի քահանայութեանն պաշտաման. եւ կամ թէ ումեք յաշխարհականաց դոյնպէս ակամայ սպանութիւն դիպի, որպէ՞ս պարտ է տալ ապաշխարութիւն:

Պատասխանի. Սպանող է. ապաշխարեսցէ եւ զկարգ քահանայութեանն մի՛ պաշտեսցէ:

ԲԱԿ Գ. Եթէ ոք ապականեսցէ զէգ յանկարծաւրէն՝ մահապարտութեան դատաստան ընկալցի, բայց պարտ է հաւաստեաւ եւ ոչ կերպարանաւք ի վերայ հասանել քննութեամբ եղելոցն եւ ի մէջ ածել զկինն եւ տեսանել աւուրբք զաղմնն թէ աննկար իցէ թէ նկարեալ. այնպիսւոյն երկրորդ մահ համարեալ լիցի. պարտ է այնպիսւոյն մինչեւ ցաւր մահուան իւրոյ կալ յապաշխարութեան. բայց սահմանելի է ի վերայ այնպիսւոյն կարճել զժամանակն, քանզի սահմանադրութիւն ոչ եթէ ժամանակի յոլովութիւն է կատարեալ ապաշխարութիւն, այլ բարուցն ուղղութիւն ի զղջումն եկելոցն:

ԲԱԿ Ե. Ակամայութիւն ասի որ ամենեւին հեռի իսկ է որք ոչն կամին գործել ինչ

QCA 33. Le catéchumène qui tue son frère avec ruse, puis réclame le baptême pourra être baptisé, car il n'était pas soumis à la loi chrétienne quand il a tué.

QCA 34. Si un possédé tue un homme en état d'inconscience, une fois purifié, il supportera, pour un temps seulement, la pénitence des homicides, car il s'agit de l'œuvre du Malin.

QCA 35. Si un homme poussé par la haine en tue un autre et que les frères de la victime ignorent les tentatives de médiation, et tuent le meurtrier, ils supporteront la pénitence des homicides.

QCA 40. Si une femme qui allaite étouffe son enfant, elle fera pénitence pendant cinq ans, comme les canons l'ordonnent.

QCA 44. Si un homme qui traverse la foule à cheval heurte involontairement le dos de quelqu'un et le tue, puis se demande s'il est digne de la prêtrise, on examinera sa vie et celle de son épouse, afin de savoir s'il était pieux ou non, et s'agissant de l'homicide, on se demandera pourquoi la grâce divine ne l'a pas épargné de cela.

QCA 72. Le prêtre – qui alors qu'il nettoie son champ ou son jardin – jette une pierre par-dessus le mur et tue accidentellement un passant subira la pénitence des homicides et ne pourra plus exercer la prêtrise; le laïc qui commet la même action subira la pénitence des homicides.

BAC 3. Celui qui tue inopinément une femme enceinte sera condamné à mort, mais l'affaire doit être examinée avec certitude et non en apparence, et la femme sera disséquée afin de déterminer si l'embryon était formé ou non; car s'il était formé, un deuxième homicide aurait été commis; un tel meurtrier fera pénitence jusqu'à sa mort; mais on pourra raccourcir la peine, car la perfection de la pénitence ne dépend pas de sa durée, mais du comportement vertueux de ceux qui se repentent.

BAC 5. Un acte est considéré comme involontaire quand celui qui le commet

զայնպիսիսն, այսինքն թէ ուրուք յանկարծաւրէն քար ձգեալ լինի ի ծառ եւ պատահիցէ մարդոյ եւ կամ դարձեալ շարժեալ զպտուղ ի վերայ՝ ի վայր թափիցէ եւ յանկարծաւրէն պատահէ հարուած ինչ վիրաց կամ ի գազանէ իմեքէ, այսպիսիքս ամենեքեան կոչին ակամայք: Իսկ կամայքն յայտնի ամենեցուն են, թէ ոք հարկանիցէ զոք խիստ գաւազանաւ եւ արիւն հանիցէ կարծելով թէ յուղղութիւն ածիցէ զչարագործն, զոր պարտ էր խրատել եւ ոչ ի բաց բառնալ հարուածովք եւ սպանանել զմարդն. նոյնպէս եւ որ քարիւ եւ փայտիւ զոք ի մարդկանէ հարեալ չարչարիցէ առաւել քան զկարն, ընդ նոսին համարեալ եղիցի. այնպէս որպէս զսուր ի գործ արկանիցեն եւ կամ այլ ինչ յայնպիսեացն. Սոյնպէս եւ որ զփայտատ իսկ ձգիցեն, եւ ի ծանրութենէ երկաթոյն՝ ի սրոյն եւ ի ձեռաց իսկ երեւի հարուածն ի բազմապատիկ հարուածոյն, որ ի վերայ նորա են, գուշակէ զեղեալն: Սոյն աւրինակ առանց իրիք հակառակելոյ կոչին կամաւոր չարիք, որ յաւազակաց գործին: Արդ՝ այս են կամաւոր մեղք սպանութեանց եւ ակամայ յանցանքն, որ ոք կամիցի բժշկել զոգւոցն խոցոտումն իսկ ոմանք դեղս խառնեալ արբուցանեն, զոր սովոր են բազում կանայք առնել մինչեւ ցայժմ, յաղագս ընդ վայր սիրոյն՝ յիւրեանց բուն սիրելիս ոչ խնայեցին: Արդ՝ զայս ամենայն չարիս կամաւոր չարագործս պարտ է անուանել, ուստի այսպիսի մահք գործին: Նոյնպէս եւ որ առ նախանձու դեղս տայ իւրում մերձաւորի՝ ընդ մահապարտս համարեալ է եւ վճիռ Տեառն հատեալ է ի վերայ նորա, քանզի արանց եւ կանանց միապէս ունի՝ մտածութիւն աւրէնսդրութեանն, քանզի ինքն ասաց, թէ «Մի մեկնել ի միմեանց առանց բանի պոռնկութեան» (Մատթ. Ե. 32): Իսկ սովորութիւն մարդկան ոչ այսպիսի ինչ ունի եւ մանաւանդ յաղագս կանանց բազում ինչ բանս հաւատարմագոյնս գտանեմք ասել, որպէս եւ ինքն իսկ առաքեալն ասաց, թէ «Որ յարի ի պոռնիկն, մի մարմին լինի» (Ա. Կոր. Զ. 16). սոյնպէս եւ Յերեմիաս մարգարէ ասէ. «Թէ թողցէ կին զայր իւր եւ լինիցի առն այլում, եւ եթէ դարձցի անդրէն առ այր իւր ոչ ապաքէն պղծելով պղծեցաւ կինն այն» (յմմտ. Երեմ. Գ. 1). եւ դարձեալ միւսն ասէ, թէ «Որ ունիցի կին շուն՝ անմիտ է եւ ամպարիշտ» (Առակ. ԺԸ. 22), իսկ չար սովորութիւնն եւ զարս շունս եւ զկանայս շունս ի միասին կապեաց եւ արտաքոյ աւրինաց վարս ուսոյց, զի թէ եւ այրն մեկնելով ի կնոջէն եւ մերձենալով յայլ՝ շուն անուանի, նոյնպէս եւ կինն եթէ պակն եղեալ ցանկասցի այլում առն եւ ոչ դարձցի անդրէն յայր իւր՝ շուն համարեալ է (յմմտ. Հռոմ. Է. 3, Մարկ. Ժ. 11):

ԲԱԿ Ը. Իսկ որ ի պատերազմունս մահք գործին՝ հարքն մեր ամենեւին չհամարեցան զայն ի մահ, ըստ որում եւ մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոց հետեւել, բայց վասն զձեռս սրբելոյ բարւոք է այնպիսեացն Գ. ամս արտաքոյ հաղորդութեան լինել:

ԲԱԿ ԺԸ. Իսկ կին եթէ ի ճանապարհի ծնցի եւ յուղացեալ անփոյթ առնիցեն զմանկանէն՝ ընդ մահապարտս անկցի այնպիսին: Իսկ զշնացող կանայսն, մանաւանդ եթէ անուանիք իցեն եւ յառաջագոյն երկիւղածք կոչէին, որպէս զի մի հրապարակատեսք լինիցին՝ զայս եւ հարքն մեր չհամարեցան, որպէս զի մի պատճառք մահուան նոցա յանդիմանութիւնն եղիցի, այլ պարտ է նոցա արտաքոյ հաղորդութեան կալ, մինչեւ լցցեն զժամանակ ապաշխարութեան իւրեանց:

n'avait aucunement l'intention de faire une telle chose, ainsi celui qui jette soudainement une pierre dans un arbre qui ensuite frappe un homme ou qui secoue les fruits dans un arbre et, en les faisant tomber au sol inopinément blesse quelqu'un ou bien quand quelqu'un est attaqué par une bête sauvage. Et les actes volontaires sont clairement connus de tous: ainsi celui qui frappe violemment avec un bâton et verse le sang en imaginant qu'il corrige le malfaiteur, alors qu'il aurait fallu l'instruire plutôt que de le frapper à mort et le tuer; de même, celui qui frappe un homme avec une pierre ou un bâton et le fait souffrir sans pitié sera compté avec ceux qui frappent avec une épée ou tout autre objet de ce genre; ou encore ceux qui jettent une hache et qui, du fait du poids du fer, du tranchant et de de la force de leurs mains ne pouvaient aucunement ignorer les conséquences de leur acte. De même les actes malfaisants des brigands doivent incontestablement être considérés comme volontaires. Donc tels sont les homicides volontaires et les fautes involontaires. De même, commettent un homicide volontaire ceux qui mélangent du poison avec une boisson et le donnent à boire, comme beaucoup de femmes jusqu'à aujourd'hui ont l'habitude de faire, et au nom de leur vain amour, elles n'épargnent pas celui qu'elles aiment. Donc de tels criminels doivent être qualifiés d'homicides volontaires. De même, ceux qui par jalousie administrent du poison à leurs parents méritent la peine capitale et la punition de Dieu tombera sur eux, et ce même commandement concerne autant les hommes que les femmes, comme Lui-même l'a dit: «Ne vous séparez pas l'un de l'autre, excepté pour cause de fornication» (Mt 5, 32). Mais la coutume des hommes ne suit pas cette règle (cf. aussi 1 Co 6, 16; Je 3, 1; Pr 18, 22; Rm 7, 3; Mc 10, 11).

BAC 8. Nos pères ne considéraient pas ceux qui tuaient à la guerre comme des homicides et même si nous suivons leur conseil, nous préférons toutefois les priver de la communion pendant trois ans, afin que leurs mains soient purifiées.

BAC 18. Si une femme enfante au cours d'un voyage et laisse le nourrisson sans soin, elle sera condamnée à mort. Quant aux femmes adultères, notamment si elles étaient renommées et considérées auparavant comme pieuses, nos pères ont considéré qu'il était néfaste d'exposer leurs péchés publiquement, de sorte que la réprimande ne soit pas cause de leur mort, mais elles seront exclues de la communion, jusqu'à ce qu'elles accomplissent le temps de leur pénitence.

ԲԱԿ ԻԴ. Որ ոք հարուածովք մահու հարկանիցէ զընկեր իւր՝ սպանող է. այնպիսւոյն վրէժխնդրութիւն եղիցի:

ԹՍՎ Ա. Որպէս ասէ Տէր ցՄովսէս «Մի՛ առնէք ըստ գործոց հեթանոսաց, զի մուծանեն զձեզ ի մէջ իւրեանց, զի տխուր արարին զիս եւ ըստգիւտ զնոսա երկիր: Ի գրոց իմանայք, զի՛ առաքեցէք առ իս»: Ահա Արարածք եւ Մարգարէք առ ձեզ եւ Աւետարանք առ ձեզ են, ի նոցանէ կարող էք ուսանել եւ տալ ապաշխարութիւն անձանց ձերոց: Մի՛ արգելուք զապաշխարութիւն, զի «Մի՛ եղիցուք կցորդ մեղաց աւտարաց» (Ա. Տիմ. Ե. 22): Վասն զի, ասէ Տէր կամարար, թէ ոչ պահիցէք զպատուիրանս զայս, «Արգելցեն երկինք զանձրեւ եւ երկիրս զպտուղ իւր» (Բ. Օրէնք ԺԱ. 17). սատակեսցի երէ եւ գրաստ եւ թռչուն (հմմտ. Ովս. Դ. 3): Այս ամենայն յամս ձեր եղեւ. ո՛չ իմանայք, եղբարք: Քննեցէք եւ ի բաց ընկեցէք «Զչարն ի միջոյ ձերմէ» (Բ. Օրէնք ԻԱ. 21), զի մի՛ պարտաւոր եղիցուք արեան նոցա յաւուրն դատաստանի, վասն զի ի ձեռս քահանայիցն են «Փականք արքայութեան երկնից» (Մատթ. ԺՉ. 19). զի մի՛ եղիցուք իբրեւ զայնոսիկ, որ ինքեանք ոչ մտանեն եւ զայնոսիկ որ մտանելոցն են՝ արգելուն (յմմտ. Մատթ. ԻԳ. 13): Ո՞չ իմանայք, եղբարք, որ արգելուն զապաշխարութիւն՝ ինքն տայ զարիւն նոցա յաւուրն դատաստանի, որպէս ցուցանեն մեզ Արարածք. զոր Աստուած անէծ եւ որոշեաց՝ ո՛վ է որ աւրինէ զնա: Ո՞չ այսպէս ասէ Տէր՝ «Երկինք եւ երկիր անցցեն, յոմտ մի ի նշանաց փոքրիկ ոչ անցցէ» (Մատթ. Ե. 18, Ղուկ. ԺՉ. 17): Այժմիկ, եղբարք, քաւեալք եղիցուք ի մեղաց աւտարաց. քաւեսցուք զայնոսիկ, որ տգիտութեամբ յանցանեն, ասէ. նոքա «Զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն» (Ա. Կոր. ԺԵ. 50, Չ.). ոչ եթէ նոքա միայն, այլ եւ որ կցորդ են նոցա: Այժմ որոշեցէք զնոսա եւ տուք նոցա ապաշխարութիւն, եւ իւրաքանչիւր ըստ մեղաց նոցա: Մի՛ արտաքոյ աւրինաց, այլ ի գրոց, ի մեղաց, զոր Աստուած անէծ եւ նզովեաց: Ի բաց կացցուք այսուհետեւ յարիւնահեղէ, վասն զի, ասէ Տէր. «Եղիցի երերեալ եւ տատանեալ յերկրի» (Ծննդ. Դ. 12): Այլ այժմ ապաշխարեսցէ զամենայն աւուրս կենաց իւրոց եւ յաւուր մահուան իւրոյ խառնեսցի:

ԹԱՏ ԺԸ. Հարցումն. Որ ի շնալն հեղցէ զորդեծնութիւն, զինչ պարտ իցէ առնել:
Պատասխանի. Թէ ոք ի քրիստոնէից ի շնալն զորդեծնութիւնն հեղուցու եւ զԱստուծոյ երկիւղն ոչ ինչ համարի՝ զի մի՛ մարդկան յայտնեսցի, այնպիսին ընդ սպանողսն ապաշխարեսցէ բազում հառաչանաւք:

ԹԱՏ ԻԳ. Հարցումն. Որ շնայ եւ զմանուկն սպանանէ՝ զինչ արասցուք:
Պատասխանի. Որ շնայ եւ զմանուկ սպանանէ՝ ցաւր մահուան իւրոյ ապաշխարեսցէ, եւ ի վախճանին հաղորդեսցի:

ԹԱՏ ԻԹ. Հարցումն. Որ կամաւք մարդ սպանանէ, ո՞րպէս արժանի է:
Պատասխանի. ԺԵ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ե. ամ ընդ ձեռամբ, եւ յելս անձին իւրոյ հաղորդեսցի:

ԿԵՆ ԼԱ. Եթէ մայր զմանուկ սպանանէ՝ յամենայն ժամանակս իւր ապաշխարեսցէ եւ ի վախճանին հաղորդեսցի. եւ որ զկամաւոր սպանութիւնս առնեն՝ նոյն-

BAC 24. Celui qui bat à mort son ami est un homicide; et il supportera la punition méritée.

SEW 1. Les Saintes Écritures dénoncent inlassablement les homicides (cf. 1 Tm 5, 22; Dt 11, 17; Os 4, 3; Dt 21, 21; Mt 16, 19; 23, 13; 5, 18; Lc 16, 17; 1 Co 15, 50; 6, 9). À présent, excluez-les et donnez-leur la pénitence, à chacun selon ses péchés. Ne faites pas cela hors de la loi des chrétiens, mais à partir de l'Écriture qui indique les péchés que Dieu a maudits et anathématisés. Tenons-nous désormais loin du sanguinaire car le Seigneur dit: «Il sera gémissant et tremblant sur la terre» (Gn 4, 12). Mais à présent, il fera pénitence tous les jours de sa vie et au jour de sa mort, il sera réintégré.

THD 18. Le chrétien qui avorte sans craindre Dieu pour détruire le fruit de l'adultère, afin de dissimuler son péché devant les hommes, fera pénitence en compagnie des homicides avec de nombreux soupirs.

THD 23. Celui qui commet un adultère et tue l'enfant qui en est issu fera pénitence durant toute sa vie, pour pouvoir communier, au jour de sa mort.

THD 29. Celui qui commet un homicide volontaire fera pénitence pendant quinze ans avec les auditeurs et cinq ans sous surveillance, et au jour de sa mort, il pourra communier.

SCN 31. La mère qui tue son enfant et ceux qui commettent des homicides volontaires feront pénitence toute leur vie; et ils communieront au jour de leur mort;

պէս. իսկ որ ոչ կամաւոր սպանութիւնս առնեն՝ Ե. ամ ապաշխարեսցեն:

ՎԱՉ Ը. Քրիստոնեայ մարդ որ կռուի եւ արիւն հեղու՝ տարցեն առաջի եպիսկոպոսին եւ ըստ աւրինացն պատուհասեսցեն:

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

ԲԳԿ Բ. Որ ի պատերազմի արիւն հեղու՝ պարտ է Գ. ամ ապաշխարել:

ԲԳԿ Դ. Որ հարուածովք մահու հարկանէ զընկեր իւր՝ մահապարտ է: Թէ տէր զծառայ իւր սպանանէ տարապարտուց՝ մահապարտ է. թէ տիկին զաղախին՝ նոյն է: Եւ եթէ յաւր հարկի արիւնհեղութիւն լինի՝ մահապարտ է եւ պարտական. ի զուր անկեալ ի ձեռս իշխանի՝ մահապարտ է. եւ որ զգող յորոգայթ ընկենու՝ մահապարտ է:

ԲԳԿ ԻԶ. Թէ ծառայ անհնազանդ լինի տեառն կամ աղախին՝ մի՛ պահեսցէ ի տան իւրում, զի թէ հանդիպի մահ ի խրատտուէն՝ մահապարտ է:

ԲԳԿ ԼԷ. Եթէ ոք պոռնկի ճարտարութեամբ առն՝ համարեսցի որպէս այն, որ զմանկունսն սպանանեն. եւ ապաշխարութիւն նոյն եղիցի, զի արիւնահեղ է:

ԲԳԿ ՂԱ. Կին եթէ լինիցի յղի յառնէ իւրմէ եւ նա ոչ սպասեսցէ նմա, որպէս տկար անաւթոյ, այլ ըստ խստութեան սրտի գան հարկանէ եւ մանուկն մեռանի՝ պարտական է արեան արդարոյ. Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ ընդ ձեռամբ հաւասարեալ աղաւթից՝ արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՂԷ. Որք ի պատերազմի արիւն հեղին. Թէ թշնամիք յարձակին յանաւրինաց ի վերայ աշխարհին եւ ազդ լինի իշխանի աշխարհին եւ յարուցեալ տացէ պատերազմ ընդ նոսա եւ հանդիպի մահ ի ձեռաց ուրուք՝ անպարտ է յարենէն: Ապա եթէ սուրն վերանայ եւ գերեվարն անկցի ի սուր՝ արիւն նորա ի գլուխ նորա, զի տարապարտուց հեղաւ:

ԲԳԿ ՂԸ. Իսկ եթէ այլ որոգայթիւ պատահի ոչ կամաւ եւ ոչ ոխակալութեամբ, այլ անգիտութեամբ եւ ի գոջումն գայ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց եւ սուրբ աղաւթիւք արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՂԹ. Իսկ եթէ ոմանք չոգան ի պոռնկութիւն կամ յայլ չար գործս եւ լինիցի նոցա անդ վախճան, արիւն նոցա ի գլուխ նոցա: Բայց նոքա որ սպանին՝ ընդ պատժաւք են՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցեն, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց: Իսկ պոռնիկն յուրկանոց երթիցէ եւ վաստակիցէ

ceux qui commettent des homicides involontaires feront pénitence pendant cinq ans.

RVG 8. Le chrétien qui se bat et verse le sang sera amené devant l'évêque qui le châtiera en accord avec les lois.

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

ECB 2. Celui qui verse le sang à la guerre fera pénitence pendant trois ans.

ECB 4. Celui qui frappe à mort son compagnon mérite la peine capitale. De même que le maître qui tue son serviteur injustement ou la maîtresse qui tue sa servante. De même le débiteur qui frappe et tue durant la collecte des impôts, ou celui qui livre sans raison un innocent aux autorités, ou qui tend un piège mortel à un voleur mérite la peine capitale.

ECB 26. Un maître ne doit pas garder chez lui un serviteur ou une servante qui désobéit, car s'il le tue en le punissant, il sera condamné à mort.

ECB 37. Celui qui fornique par ruse avec un mâle est équivalent à celui qui tue un enfant; et il supportera la pénitence de ceux qui ont versé le sang.

ECB 91. Si un mari n'aide pas sa femme enceinte comme une personne fragile, mais la traite durement et la frappe au point de tuer l'enfant, en raison du sang innocent versé, il se tiendra pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance et par ses prières, il se rendra digne de la communion.

ECB 97. Ceux qui durant la guerre sur ordre du prince tuent des ennemis qui attaquent le pays ne seront pas responsables du sang versé. Mais s'ils massacrent des ennemis faits prisonniers, leur sang retombera sur leurs têtes, car ils ont versé le sang inutilement.

ECB 98. La victime d'un guet-apens qui, sans esprit de vengeance, verse involontairement le sang de ses agresseurs dont elle ignore l'identité, et qui regrette son acte fera pénitence pendant sept ans avec les auditeurs, trois ans sous surveillance et grâce à des dons aux nécessiteux, et des prières saintes, elle pourra communier.

ECB 99. Si certains forniquent ou commettent d'autres méfaits et que cela occasionne des morts, le sang de ces morts retombera sur leurs têtes. Mais s'agissant des homicides, ils se tiendront pendant cinq ans avec les auditeurs et pendant deux ans sous surveillance, et grâce à des dons aux nécessiteux, ils pourront communier.

գողեացն Է. ամ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, եւ թէ լիցի արժանի յետին թոշակին:

ԲԳԿ ճԱ. Իսկ եթէ ի ձեռն ծնաւղաց հանդիպի վախճան յանգիտութեան վասն աստուածային խրատուն՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ՝ ընդ ձեռամբ, տրաւք եւ արտասուաւք արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ճԻԱ. Որ պոռնկին եւ զմանկունսն սպանանեն, իշխան է առաջնորդն ժամանակին խուզել, մրել եւ աշխարհալուր ձաղել եւ դրամ առնուլ եւ յաղքատս տալ եւ գանալից խրատել, եւ առ դրանն ապաշխարել զկարգ իւր:

ԲԳԿ ճԽԱ. Թէ ոք ի մտի դնէ պոռնկել ընդ կնոջ իշխանի եւ յորոգայթ մահու անկանի, արիւն նորա ի գլուխ նորա եղիցի:

ԲԳԿ ճԾԷ. Կին պոռնիկ եթէ ի ծնունդս վատնի՝ մի՛ իշխեսցէ քահանայն գարշել կամ նողկալ, թէեւ իւր հանդիպին իրքն, այլ երթալ փութով եւ տալ կնիք մանկանն, զի չիք խտիր:

ԲԳԿ ճԾԹ. Թէ ոք յիւր արդարութեան վաստակս ընթացաւ վասն իւր աւգտի եւ յորոգայթ անկաւ կամ ի ձեռս աւազակաց կամ ի ժանիս գազանաց՝ անպարտ է յիւր արենէն, արժան է թաղել զնա իւրովին հանդերձիւն:

ԲԳԿ ճԿ. Ապա եթէ տեսանէ զսուր թշնամեաց կամ զայլ որոգայթս եւ այլք զգացուցին եւ նա անփոյթ արար, վասն իւր ճոխութեան չոգաւ ի գետ մոլեկան կամ ընդդէմ սրոյ կամ յայլ որոգայթս ըմբռնեցաւ, արիւն նորա ի գլուխ նորա, եւ չէ արժան թաղել զնա:

ԲԳԿ ճՁԸ. Իսկ որ չար դեղովք սպանանեն զմանկունս յորովայնին եւ զարգանդն կապեն դեղովք վասն յաճախ պոռնկութեան, եւ զայր եւ զկին խողխողեն եւ ատելիս առնեն միմեանց ի պսակին՝ արժան է քահանային զայնպիսին ի կարգ եւ յապաշխարութիւն ածել. Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցի աւրինաց: Եւ եթէ ի նոյն աղանդին մեռանին՝ ահա չար է մահ մեղաւորին, զրկեսցին ի սուրբ աւրինացն եւ ի դիրս քրիստոնէից մի՛ թաղեսցին:

ԲԳԿ ՄԲ. Թէ ոք սուտ վկայէ եւ ընկենու զեղբայր իւր յորոգայթ մահու եւ տուգանաց՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԵ. Խոստովանողք մի՛ իշխեսցեն արիւն հեղուլ եւ վայրապար խաւսել կամ ի գինեմոլս երթալ առանց իւր վարդապետին, եւ ոչ յեկեղեցի մտանել եւ համ-

Quant au fornicateur, il travaillera dans une léproserie pendant sept ans, puis pendant trois ans, il entrera et sortira de l'église avec les pénitents, afin d'être digne du viatique au jour de sa mort.

ECB 101. Les parents qui tuent involontairement leur enfant, en raison de la punition divine, se tiendront pendant cinq ans avec les auditeurs, puis pendant deux ans sous surveillance, et grâce à des dons et des larmes, ils pourront communier.

ECB 121. Concernant ceux qui forniquent puis tuent l'enfant né de leurs œuvres, le prélat ordonnera de les faire tondre pour un temps, de les enduire de suie, de leur jeter l'opprobre publiquement, de leur réclamer de l'argent en faveur des pauvres, de les corriger par le fouet, et qu'ils fassent pénitence à la porte de l'église selon leur rang.

ECB 141. Celui qui veut forniquer avec la femme d'un prince et de ce fait tombe dans un piège mortel verra son propre sang retomber sur sa tête.

ECB 157. Le prêtre ne doit pas abhorrer et être dégoûté par celle qui a forniqué, puis à fait périr son nouveau-né lors de sa naissance, mais s'il est prévenu, il doit venir en urgence pour donner le sceau à l'enfant, car le baptême purifie totalement.

ECB 159. Celui qui tombe dans un guet-apens ou sur des bandits, ou sous les crocs d'un fauve, alors qu'il s'affairait à son juste labeur ne sera pas responsable de son sang, et il pourra être enterré dignement avec son uniforme.

ECB 160. Mais celui qui aperçoit l'épée de l'ennemi ou d'autres dangers, ou qui est averti de cela par d'autres et qui, sûr de sa force, engage le combat tel un fleuve en furie et meurt, son sang retombera sur sa tête, et il ne faut pas l'enterrer.

ECB 188. S'agissant de ceux qui détruisent les fœtus dans leur sein avec des drogues nuisibles et appliquent des remèdes sur l'utérus en raison de fréquentes fornications, de même que les époux qui s'entredéchirent et ne se supportent plus; le prêtre les mettra dans le rang des pénitents et ils se tiendront pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance, et grâce à des larmes et des dons aux indigents, ils se rendront dignes de la communion. Mais s'ils meurent endurcis dans leur péché (litt. secte), ils seront privés de la sainte communion et leur cadavre ne sera pas enterré avec les chrétiens.

ECB 202. Celui qui témoigne faussement et fait chuter son compagnon dans un piège mortel paiera une amende et se tiendra pendant sept ans avec les auditeurs, puis pendant deux ans sous surveillance, et grâce à des dons aux indigents, il sera digne de la communion.

ECB 205. Les pénitents ne doivent pas verser le sang, parler en vain ou aller à une beuverie à l'insu de leur *vardapet*, ni entrer à l'église et embrasser la dextre

բուրել զաջ քահանային, կամ ամուսնանալ որ կոյսն իցէ՝ մինչեւ զկարգն ի գլուխ տանի աւրինութեամբ իւրոյ վարդապետին: Եթէ ոք յանդգնի՝ ապաշխարութիւնն անընկալ լիցի եւ եղիցի նզովեալ:

ԲԳԿ ՄԺԲ. Կին որ ի ծնունդս վատնի եւ ոչ կարէ ծնանել, եւ ի ճարտարաց ոք գիտասցէ, արժան է յաւշել եւ զերծուցանել զմայրն: Ապա եթէ մանուկն կենդանի լինի յորովայնին եւ յանդգնի ոք սպանանել զմանուկն՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, ապա արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԻԹ. Երախայ որ ի մաւրէ մեռեալ հանդիպի՝ անպարտ են ընտանիք նորա, վկայութեամբ երկուց եւ երից:

ԲԳԿ ՄԿԸ. Որք բանիւ Աստուծոյ աներկեւան երդմամբ դաշն խաղաղութեան հաստատեն վասն առ թշնամիս պատերազմողս՝ առ հաւատացեալս կամ առ հեթանոսս, եւ յետ այսորիկ ուխտադրուժ գտան դաշանցն եւ սպանին զնոսա եւ կամ ետուն ի ձեռս բարբարոսաց կամ յետս կացուցին ի հաւատոյն՝ այս չարիք եւ աղէտք հաւասար են այնոցիկ, որք ուրացան զՔրիստոս. պարտ է նոցա զամենայն ժամանակս ապաշխարել, զի կրկին ընկալցին զսպանողացն զդատաստանս, զի որով բանիւ փրկեցան արարածք, զնոյն բան դեղ մահու նիւթեցին:

ԲԳԿ ՄԿԹ. Որք հրամանաւ հեթանոսաց եւ բռնաւորաց առաքեցան լրուտես եւ զաշխարհս հաւատացելոց ի ձեռս թշնամեաց նոցա երթեալ ազդումն առնելով գուշակմամբ ապրեցուցին զբազումս փախստեամբ, նոքա ոչ ըստ առաջին մեղացն ընկալցին զդատաստանն, վասն զի բաժանորդ կացին այնոցիկ, որոց գրով պատմին նահատակութեամբ յիշատակք: Ապա եթէ դաւաճանող չարին գտանի պատճառաւ որ ի սուր եւ ի գերութիւն յափշտակութեան, այս չարիք ի վեր են եւթն պատիկ առաւել քան զսպանողացն դատաստանս. այսուհետեւ ոչ գտանի սահման կանոնական տալ նոցա դարձ փրկութեան, այլ եպիսկոպոսն տեսցէ զդարձ նոցա խոստովանութեանն, զինչ կամեսցի արասցէ՝ իշխան է, այլ մի՛ անյուսութեամբ դատապարտեսցէ, զի մի՛ իսպառ կորուսցէ, այլ կարեկից եւս լիցի իբրեւ ժառանգակից, զի հոգին ապրեսցի յահագին դատաստանացն:

ՍԿՆ Բ. Վասն պոռնկաց որ շնան եւ զմանկունս սպանանեն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ Ի. Վասն գողոց, աւազակաց եւ մարդասպանաց եւ որ հրով կիզուն եւ արիւն արդար հեղուն եւ հայհոյեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ե. ամ ընդ աւրինաւք ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԻԷ. Մանուկ որ ապոռնայէ կամ ձգէ եւ կամ ածէ՝ Թ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ Լ. Վասն որ զմահ խորհին այլոց, եւ իւր դիպեսցի մահն յայլոց սպանողաց՝

du prêtre ou se marier – pour celui qui est vierge – jusqu'à l'achèvement de leur pénitence avec la bénédiction du *vardapet*. Et celui qui abandonne sa pénitence sera anathématisé.

ECB 212. La femme qui fait une fausse couche pourra être sauvée par un médecin compétent qui découpera le fœtus, mais si l'enfant est vivant dans le sein de la mère et que quelqu'un ose le tuer, il se tiendra pendant sept ans avec les auditeurs, puis deux ans sous surveillance avant de pouvoir communier.

ECB 229. Si un enfant est mort-né, sa famille ne sera pas considérée comme responsable grâce au témoignage de deux ou trois personnes.

ECB 268. Ceux qui prêtent serment par Dieu pour établir des traités de paix avec des guerriers ennemis croyants ou païens, puis violent le traité et massacrent ces ennemis ou les livrent aux barbares, alors qu'ils s'étaient convertis à la vraie foi, seront identiques à ceux qui ont renié le Christ; ils feront pénitence durant toute leur vie sous peine d'être doublement traduits devant le tribunal des homicides, et les mêmes paroles qui ont sauvé les créatures seront des remèdes contre la mort éternelle.

ECB 269. S'agissant de ceux qui sur ordre des païens ou des oppresseurs espionnent des pays peuplés par des croyants, mais profitant de leur influence parviennent à sauver beaucoup d'habitants en les incitant à fuir, on ne les condamnera pas pour leur péché, car ils auront partagé le sort de ceux dont le souvenir est inscrit dans le livre des martyrs. Mais si le traître accomplit son méfait en raison de la violence (litt. de l'épée) et de la captivité, son crime sera pire que tous les homicides, et aucun canon en vue du salut n'existant à ce sujet, l'évêque observera la confession du criminel avec clémence, afin de ne pas le livrer au désespoir.

NPT 2. Les fornicateurs qui commettent l'adultère et tuent l'enfant qui en est issu feront pénitence pendant quinze ans.

NPT 20. Les voleurs, les brigands, les homicides, les incendiaires qui versent le sang innocent et insultent Dieu feront pénitence pendant quinze ans à l'extérieur et pendant cinq ans avec les auditeurs.

NPT 27. Celle qui avorte ou se fait aspirer son fœtus, ou se frappe le ventre fera pénitence pendant neuf ans.

NPT 30. Celui qui projette de commanditer un homicide, et que des assassins

Ժ. ամ ապաշխարեսցէ, թէպէտ եւ արժանի էր մահու:

ՍԿՆ ԼԱ. Վասն կնոջ որ յղի է եւ հարկանի յանգէտս յումեքէ եւ անցանի մանուկն՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԼԴ. Վասն որ ոչ կամաւ սպանանեն՝ Է. ամ ապաշխարեսցեն:

ԵՊԿ Բ. Վասն Էր աւրէնսդիրն չհրամայեաց մերձենալ յապարահն, քաջ հասիր ի վերայ եւ իմասցիս զչարաչար վնասն: Վասն ապարահին անկողնոց դիտեա, զի որ ոք առեալ զսերմանիսն ի լիճս եւ ի ծովակս սերմանեսցէ եւ ոչ յերկիր մաքուր՝ մոլեգնոտ համարիմք զնա, նոյնպէս լինին եւ ուխք կանանց ըստ ամսոց, զի կեդանի երկիր մանկանց յաւրինեսցի եւ զառեալն ի զուգակցէն մաքուր պահեսցէ: Արդ՝ ոչ այլ ինչ ունի պատճառք, բայց միայն վասն մանկանն կենդանութեան յիննամսեայ ժամանակի յորովայնի մաւրն, վասն որոյ եւ ոչ ի մատաղահասակին մաւրն լինի ապարահին, զի չեւ է ժամանակ արգանդին լինել մանկաբեր. եւ ոչ՝ յորժամ դադարէ ի ծննդենէն՝ լինի այն, այլ միայն ի ծննդոց ժամանակին լինի այն, զոր տնկեալ է Արարչին գլինելն ապարահին բնութեանն կանանց, զի մանուկն կենդանի պահեսցի. ուստի յառաջագոյն մինչ չեւ մանուկն ստեղծեալ է, ապարահին յառաւելութենէ կերակրոցն անկեալ ի յարգանդն ըստ ամսոյն եւ ոչ գտեալ զմանուկն ի նմա, ճեպով արտաքս ելանէ. եւ յորժամ մանուկն ստեղծանի՝ որ ելանէ արտաքս վասն մանկանն պիտոյից, որով զկենդանութիւն ունի: Վասն որոյ պարտ է զարմանալ եւ փառաւորել զսքանչելագործն Աստուած, որ վասն մերոյ զարմանալոյ զնոյն կարմրութիւն արեանն ի սպիտակութիւն կաթին դարձուցանէ մինչեւ մանուկն զարգասցի եւ ապա անդրէն ի նոյն գոյնն դառնայ, բայց բնութիւն միեւնոյն է: Եւ պղծութիւն ի նմա ոչ գոյ, զի թէ պիղծ էր ծնունդն, ապա եւ զհարսանիսն ոչ հրամայէր: Պիղծ՝ պոռնկութիւն է եւ լի է չարախտութեամբ անկողինք նոցա: Սուրբ է ամուսնութիւնն: Եւ որ վասն որդւոց անկեալ է ի բնութիւն նոցա, զոր հաստատեալ է Արարչին, բայց վասն ապարահին մի՛ յոգիսն մեղիցուք, մի՛ զմարմինսն ապականեսցուք զծննդոցն, զի զայս Մովսէս եւ մարգարէքն պատուիրեն՝ «Ի կին ապարահի չմերձենալ» (յմմտ. Ղեւտ. ԺԵ. 19, 20, ԺԸ. 19, Ի. 18, Եզեկ. ԺԸ. 6), այսինքն յանկողինս նորա ոչ ելանել, զի մի՛ կենդանի ծնունդն ապականեսցի ժանդիւքն որ ի նմանէ աճեցեալք, զի յորժամ յիւրմէ զուգակցէն ընկալցի զմանկարարութիւնն՝ առողջ եւ անարատ պտուղ որովայնի ծնցի յաշխարհս: Ապա թէ արք եւ կանայք առանց միաբանութեան յանդգնաբար լրբեցին զանարժանսն գործել, նոքա ոչ որդեծնութեան են ցանկացեալ, այլ պիղծ եւ անառակ ցանկութեան: Այլ եւ որք իմանալն կարեն եւ ոչ լինին աւուրքն այն որդեծնութեան, զի զաղտեղութիւնսն յոլովս ունին յինքեանս եւ ոչ տան պատկերին ստեղծանիլ եւ յաւդիլ ի միմեանս: Ապա եթէ սակաւ ունիցին զիիւթ աղտեղութեանցն ի ներս՝ յանկարծ ուրումն ստեղծանել ստեղծանի մանուկն: Բայց աղտեղութիւն ընդ ստեղծուածն խառնեալ ծնանին խեղք եւ թիւրք եւ մարմնահարք եւ կիսանդամք եւ աւելամարմինք, ջանգք եւ հիւանդոտք եւ անդամալոյծք. եւ ախտ աւրկութեան յաղտեղութենէն ի մասունս մասունս մարմնոյն բուսեալ եւ տնկեալ նեխէ եւ փտէ եւ վիրաւորէ եւ ապականէ զամենայն մարմինն, է՛ որ ի տղայու-

tuent les personnes qu'il avait désignées fera pénitence pendant dix ans, même s'il mérite la peine capitale (litt. la mort).

NPT 31. Celui qui heurte involontairement une femme enceinte et la fait avorter fera pénitence pendant trois ans.

NPT 34. Ceux qui tuent involontairement feront pénitence pendant sept ans.

CEC 2. À travers la Bible, Dieu a ordonné a de très nombreuses reprises aux hommes de ne pas s'approcher de leurs femmes pendant leurs règles, les rapports sexuels ayant pour but la procréation dans le cadre d'un mariage légitime qui est plein de sainteté (cf. Lv 15, 19-20; 18, 19; 20, 18; Éz 18, 6; Ps 2, 3; Ga 5, 4). De même, que quand nous avons les mains ou les vêtements sales, nous nous les lavons avant d'entrer à l'église; de même, la femme doit être lavée de ses impuretés avant de coucher avec son mari. De fait, ceux qui couchent avec leur femme pendant qu'elle a ses règles commettent un infanticide et soumettent gravement leur âme au péché.

թեան, Է որ յերիտասարդութեան, եւ Է որ եւս յառաջ ժամանակաւ չար ախտն յայտնի. վասն զի սրբոյ եւ հոգելից մարգարէին ծանուցեալ պատուիրէ եւ ասէ, թէ՝ «Ի կին ապարահ մի՛ ոք մերձեսցի» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 19, 20, ԺԸ. 19, Ի. Եզեկ. ԺԸ. 6), որպէսզի մի՛ կենդանի ծնունդն կորիցէ աղտեղի ախտիւքն: Եւ արդ՝ եթէ Մովսէս, Եզեկիէլ եւ մարգարէքն պատուիրեցին չմերձենալ յանկողինս ապարահից, եւ հմուտք բժշկացն յանկողնոցն զգուշացուցանեն զմեզ, եւ կշտակարկատք հեթանոսաց ի բժշկական արուեստից տեղեկացեալք զնոյն զանազան ախտիցն յոլովութիւն որ զմարմինս փաղփեալ ապականեցին նոքաւք որ ի յայնմ ժամանակի ի տաղտկալի անկողինսն մերձենայցեն, որպէս աւրէնս իմն հաստատեցին՝ որ միայն յանկողնոցն հեռանալ, այլ եւ ի տանցն եւ յարանցն հալածել իբր զբնութիւնս, զոր արար Աստուած, պիղծ համարել: Այլ մեք ոչ եթէ զոր արար Աստուած եւ հաստատեաց ի բնութեան կանանց խոտեմք եւ իշխեմք պիղծ համարել, այլ որպէս մարգարէն պատուիրեաց չմերձենալ յանկողինս նոցա վասն մանկակորոյս լինելոյ, որոց ոչ տայ ստեղծանիլ աղտեղութեանցն յոլովութիւն, եւ թէ յանկարծ ստեղծանի՝ լի ախտիւք եւ աղտեղութեամբ: Վասն այնորիկ եւ մեք պատուիրեմք ընդ մարգարէին՝ «Մի՛ մերձենալ յանկողին ապարահից» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 19, 20, ԺԸ. 19, Ի. 18), զի ծնունդն կորիցէ եւ ծնաւղքն յոգիս իւրեանց մեղանչեն աներկիւղաբար եւ յանդգնաբար, զի մեղքն յանդգնագոյն գործին եւ ոչ ակամայ եւ ցաւաւք: Իսկ որ ի սրբութիւնսն պատկառեն մտանել յաւուրս աղտեղութեանն, բարւոք առնեն վասն պատուի սրբութեանն, զի եւ մեք յորժամ ձեռս զխոտս ունիմք կամ հանդերձս գեռաթաթախս, պատկառեմք ի սրբութիւնսն մտանել եւ աղաւթել, այլ լուսանամք եւ մաքրեմք եւ ապա մտանեմք եւ անխիղճ իմն կատարեմք զաղաւթս որ է աւրինակ, թէեւ ոգւովքն սրբելովք պարտ է մտանել եւ կալ առաջի Աստուծոյ: Իսկ որ ըստ երրորդութեանն զանձն պիղծ ոք համարի, այնպիսին ընդ աւրինացն կապանաւք է եւ ընդ անիծից, զոր մարգարէն բողոքէր. «Խզեսցուք զկապանս նոցա» (Սաղ. Բ. 3) եւ որ այլն. եւ Պաւղոս ասէ, թէ՝ «Խափանեալ էք ի Քրիստոսէ որ աւրինաւքն արդարանայք» (Գաղ. Ե. 4): Արդ մի՛ ըստ հնոց աւրինացն իբրեւ ի պղծութենէ ոգւոյ խորշեսցուք ի յայսմանէ, այլ իբրեւ ի զազրալի մարմնոյ աղտոյ մերժեալ փախիցուք մինչեւ յաւր մաքրութեան նոցա եւ մանաւանդ յանկողնոց ապարահիցն բազումք փախիցեն, քանզի ոչ միայն հեղձութեան ծննդոցն են պարտապանք, այլ եւ չարաչար յոգիս իւրեանց մեղանչեն, որք անդէն իսկ յորովայնին զմանկարարութիւնն աղտոն ապականեն եւ ոչ տան նկարել ի կենդանութիւն:

ԿՈՉ Ե. Վասն սպանողաց. Թէ նախանձով եսպան, թէ նախանձեցաւ եւ իշխանութեամբ սպան, թէ ի գողութենէ, թէ մատնութեամբ, թէ յարբեցութենէ արք զկանայս, թէ ի պատերազմի, թէ ստութեամբ սպան:

APR 5. À propos des homicides. Celui qui tue par jalousie, celui qui devient jaloux et utilise son autorité pour tuer, celui qui tue pour voler, celui qui tue par la dénonciation, l'homme ivre qui tue sa femme, celui qui tue à la guerre, qui tue par ruse.

3. «Մի՛ գողանար»

Ա. Գողութիւն

ԵԱԿ ԿԷ. Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական առցէ ի սուրբ եկեղեցւոյ մոմեղէն կամ ձէթ՝ որոշեսցի. եւ հինգպատիկ տուժեսցի, հանդերձ որով առն (հմմտ. Ղեւտ. Ե. 16):

Անաւթով ոսկեղինաւ կամ արծաթեղինաւ սրբեցելով մի՛ ոք յիւր պէտս գողացեալ, զի աւրինազանցութիւն է. ապա թէ ոք ըմբռնեսցի՝ պատուհասիւ որոշեսցի:

ՀԱՅ Դ. Գող կամ ասպնջական իւր, ըստ կամաց եկեղեցւոյն, արժանի լիցի զնա մատնել մահու. զի հնացեալ աւազակն եւ իւր հացամեծարքն միշտ լինին ի մահ դատապարտեալք. զայսր զկնի պարտ է դատաւորին հետեւել:

ԿԵՍ Ժ. Վասն գողոց, աւազակաց, մարդասպանաց եւ որ գաղտնի մահաբեր դեղովք անողորմ խողխողեն զորդիս մարդկան եւ որք հրով կիզուն եւ հրդեհեն զվաստակս եւ զշինուածս ոմանց մարդկան եւ մեծամեծ աւճիրս եւ բազում հարուածս, բազմադիմի եւ ազգի ազգի չարիս ածեն որդւոց մարդկան, նոքա եւ զարիւն արդար հեղուն, նոքա եւ զսրբութիւնս կործանեն, նոքա եւ զմանկունս եկեղեցւոյ խողխողեն, նոքա եւ զհայհոյութիւն ի բարձունս ձգեն, զայսպիսիս աւրէնքն եւ առաջին կանոնքն սպանանել հրաման ետուն, զի եւ այլքն խրատեսցին, եւ արժանի են մահու թէ ի չար գործոցն ոչ դարձցին. ապա եթէ քան զըմբռնելն յառաջ եւ ի չարչարանս արկանել ինքնին ի խոստովանութիւն եկեսցէ եւ ի չար գործոցն ամենեւին ի բաց կացցէ՝ կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյն զամենայն ինչ ընդ ապաշխարութեամբ արկանել, զի ուղիղ ապաշխարութիւն, թէ եւ մերձեալ լինի ի դրունս դժոխոց, կորզէ ի բաց, որպէս զԵզեկիայն: Ապաշխարութիւն զինոցն ի ցաւդ դարձուցանէ, պահք եւ աղաւթք զբերանս առեւծուց սանձեն. քանզի ջերմ արտասուք եւ ապաշխարութիւն զմարդիկ ընդ հրեշտակս խառնեն եւ զհրեշտակս՝ ընդ մարդիկ, որպէս եւ Տէրն տերանց թողեալ զբազում հաւտսն որ յերկինս զմիոյ ոչխարիս զմարդկութեանս զհետ ընթանայր եւ ասէր թէ «Ուրախութիւն է հրեշտակաց ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ եւ ապաշխարեցելոյ» (Ղուկ. ԺԵ. 10): Արդ՝ եթէ դարձին այսպիսի չարագործքն, զոր պատմեցաք ձեզ, սրտի մտաւք եւ յաւժարութեամբ ի խոստովանութիւն եւ ի դարձ փրկութեան եկեսցեն եւ զհին խմորն զայտումն մեղացն ցածուսցեն եւ ի նոր զանգուած եկեսցեն ջերմ արտասուաւք եւ գթով տնանկաց, քանզի եւ մեծ մարգարէն Դանիէլ բողոքէր առ թագաւորն, զի զմեղս քո ողորմութեամբ քաւեա եւ զանաւրէնութիւնս քո գթով տնանկաց նորափետուր զարդարեսցին, ընդունի զնոսա կանոնս. բայց ապաշխարութիւն յայտ լիցի, քանզի թագաւորն այն Ե. ժամանակ արածեցաւ ընդ անասունս, քանզի ամենայն մեծամեծ մեղացդ, զոր շարեցաք ի կարգի եւ ցուցաք ձեզ ապաշխարութիւն, միագոյն է մի աւրինակաւ, թէ գայթ ի գայթ ինչ իցէ ի վախճանի իւրեանց ընկալցին զյետին թոշակն. ապա եթէ ջերմեռանդն սրտիւ հայեցեալ վարդապետին եւ քննեալ զգործս նոցա եւ զխորհուրդս սրտից նոցա, ներելով արասցէ եւ զյորդորումն եւ զսէր մի՛ արգելցէ, ԺԵ. ամ ի դրունս ունկնդրաց եւ Ե. ամ հաւասարեսցէ ընդ ձեռամբ աղաւ-

3. «Tu ne voleras point»

A. Le vol

CCL 67. Le clerc ou le laïc qui dérobe de la cire ou de l'huile dans la sainte église sera exclu; et il devra rendre le cinquième en plus de ce qu'il a pris (Lv 5, 16).

Celui qui dérobe pour son propre usage un objet en or ou en argent sanctifié agit illégalement; celui qui est pris sur le fait sera exclu.

CPC 4. Le voleur et son hôte, selon la volonté de l'Église, mériteront d'être livrés à la mort, car le brigand endurci et son complice doivent toujours être exécutés; après cela, il faut suivre la décision du juge.

CES 10. Les voleurs, les bandits, les assassins, ceux qui en secret recourent au poison pour tuer les enfants des hommes, les incendiaires qui brûlent les travaux et les édifices de certains, ceux qui infligent des coups, des maux et de graves préjudices aux enfants des hommes, qui versent le sang juste, renversent les choses saintes et blasphèment contre Dieu ont été – s'ils n'arrêtent pas leurs mauvaises actions – condamnés à mort par la Loi et les premiers canons, afin de servir d'exemple aux autres (1 Tm 1,20). Mais si avant d'être exécutés, ils passent aux aveux et cessent leurs mauvaises actions, le concile a décidé de les soumettre à la pénitence jusqu'à leur mort, et grâce à leurs dons aux pauvres, ils pourront recevoir le viatique (Is 38; Dn 3,50; Lc 15,10; 1 Co 5,7; Dn 4,24, 29). Pour tous ces énormes péchés, la pénitence est uniforme; mais s'ils font preuve d'ardeur dans leur pénitence, le *vardapet* observant leurs actions et en les exhortant pourra faire preuve de charité: ils se tiendront près de la porte avec les auditeurs pendant quinze ans et, pendant cinq ans, ils participeront aux prières sous surveillance, puis ils communieront si c'est l'avis du prêtre.

թից, ապա հաղորդեսցի աւրինաց եթէ կամք իցեն երիցուն (հմմտ. Ես.ԼԸ; Դան. Գ. 50, Դ. 24, 29; Ղուկ. ԺԵ. 10; Ա. Կորնթ. Ե. 7):

ՀԱԹ ԻԵ. Հարցումն. Թէ յանցաւոր ոք է եւ յանդգնեալ ի պոռնկութիւն եւ ի գողութիւն եւ մեք հանապազ աղաղակեմք, զի դարձցի յապաշխարութիւն եւ նա խեռ է եւ խստանայ եւ ոչ հաւանի բանից մերոց, ապա եթէ դէպ յինիցի նմա յանկարծակի յախտ մահու անկանել եւ աւրէնս խնդրէ ի ժամ մահուանն, պարտ է տալ, թէ ոչ: Պատասխանի. Պարտ է տալ. ապա եթէ յարիցէ ի հիւանդութենէն՝ ապաշխարեսցէ ըստ մեղացն:

ՀԱԹ ԼԱ. Հարցումն. Եթէ ոք ի գողութեան հարցէ եւ սպանցէ զգողն, ո՛րպէս պարտ է հայել ընդ սպանողն:

Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ:

ԹԱՏ ԺԷ. Հարցումն. Որ շնայ զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Թէ ոք այր կամ կին քրիստոնեայ շնացաւ՝ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն զԳ. ամս տքնեալ, պահեալ եւ աղաւթեալ, եւ լուծումն շաբաթու եւ կիւրակէր լիցի եւ ի տէրունական տաւնսն՝ մինչեւ ի կատարել երից ամացն, ապա ի չորրորդումն լիցի արժանի հաղորդութեան: Եւ որ գողացի ոք՝ զնոյն պատուհաս կրեսցէ: Ապա եթէ ի մեղսն յաւելցեն, կրկին ապաշխարեսցեն:

ԹԱՏ ԼԲ. Հարցումն. Որ զսահմանս ընկերին յափշտակէ, ո՛րպիսի ինչ է:

Պատասխանի. Զոր գրեաց Մովսէս հրամանաւ Աստուծոյ՝ իջցեն անէծքն ի վերայ նորա եւ եղիցի նզովեալ ի կեանս եւ ի մահ:

ԲԳԿ Դ. Որ հարուածովք մահու հարկանէ զընկեր իւր՝ մահապարտ է: Թէ տէր զծառայ իւր սպանանէ տարապարտուց՝ մահապարտ է. թէ տիկին զաղախին՝ նոյն է: Եւ եթէ յաւր հարկի արիւնհեղութիւն լինի՝ մահապարտ է եւ պարտական. ի զուր անկեալ ի ձեռս իշխանի՝ մահապարտ է. եւ որ զգող յորոգայթ ընկենու՝ մահապարտ է:

ԲԳԿ ԶԷ. Մի՛ ոք իշխեսցէ զյափշտակեալ անասուն մատուցանել ի նուէր Տեառն. եթէ ոք յանդգնեսցի՝ անընդունելի եղիցի:

ԲԳԿ ՃԵ. Արուեստաւորք որ զայլոց ինչս յափշտակեն՝ նզովեալ եղիցին, եւ տացեն ընդ միոյն չորեքպատիկ. ապա եթէ ոչ՝ ապաշխարեսցեն վարդապետին հրամանաւ:

ԲԳԿ ՄԻԵ. Թէ ոք ի քրիստոնէից գիսաչ յափշտակէ վասն ոսկւոյ կամ վասն արծաթոյ կամ վաճառէ կամ բեկանէ՝ եղիցի ընդ խաչահանունսն Քրիստոսի:

ՍԿՆ Ի. Վասն գողոց, աւազակաց եւ մարդասպանաց եւ որ հրով կիզուն եւ արիւն արդար հեղուն եւ հայհոյեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ե. ամ ընդ աւրինաւք

QCA 25. Si un pécheur s'enhardit dans la fornication ou le vol et, en dépit de nos appels constants à se convertir, ignore nos exhortations, puis tombe subitement malade et au seuil de la mort réclame la communion, il pourra la recevoir; mais en cas de guérison, il fera pénitence en fonction de ses péchés.

QCA 31. Celui qui au cours d'un vol frappe et tue le voleur supportera la pénitence des homicides.

THD 17. Le chrétien - ou la chrétienne - qui tombe dans l'adultère fera pénitence pendant trois ans en se tenant à l'extérieur de l'église en veillant, en jeûnant et en priant, mais il pourra faire relâche les samedis, les dimanches et pour les fêtes au nom du Seigneur, puis la quatrième année, il pourra communier. Et s'il commet un vol, la peine sera identique. Mais s'il commet les deux péchés, la peine sera doublée.

THD 32. Celui qui empiète sur les bornes de son compagnon sera maudit et anathématisé, dans la vie comme dans la mort, ainsi que Moïse l'a écrit sur ordre de Dieu.

ECB 4. Celui qui frappe à mort son compagnon mérite la peine capitale. De même que le maître qui tue son serviteur injustement ou la maîtresse qui tue sa servante. De même le débiteur qui frappe et tue durant la collecte des impôts, ou celui qui livre sans raison un innocent aux autorités, ou qui tend un piège mortel à un voleur mérite la peine capitale.

ECB 87. Celui qui vole un animal pour le présenter en offrande au Seigneur verra son offrande refusée.

ECB 105. Les artisans qui dérobent les outils de leurs collègues seront anathématisés et devront rembourser au quadruple; faute de quoi, ils feront pénitence selon le commandement du *vardapet*.

ECB 225. Le chrétien qui vole une croix – du fait qu'elle est en or ou en argent – ou la vend, ou la brise sera compté parmi les crucificateurs du Christ.

NPT 20. Les voleurs, les brigands, les homicides, les incendiaires qui versent le sang innocent et insultent Dieu feront pénitence pendant quinze ans à l'extérieur et

ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԻԱ. Վասն որ Ճ. դրամ գողանայ՝ Ե. մասն յընչիցն աղքատաց տացեն:

ԿՈՉ Ե. Վասն սպանողաց. Թէ նախանձով եսպան, թէ նախանձեցաւ եւ իշխանութեամբ սպան, թէ ի գողութենէ, թէ մատնութեամբ, թէ յարբեցութենէ արք զկանայս, թէ ի պատերազմի, թէ ստութեամբ սպան:

ԿՈՉ Ը. Վասն գողոց. Թէ սարահատ է, թէ տնահատ է, թէ զաղքատս կողոպտեաց, թէ զայլոյ գիտաց եւ ոչ ասաց, թէ յուրացութիւն անկեալ, թէ գրաւեցաւ, թէ երդուաւ եւ զեղբայրն ի մահուանէ փրկեաց, թէ երդուաւ առ սրտին եւ ոչ արար, թէ առ ամաւթոյ երդուաւ:

Բ. Գերեզմանի կողոպուտ եւ դիակապտութիւն

ՀԱՅ ԺԷ. Զդիակողոպուտ եթէ ըմբռնեսցի եւ ակամայ կամաւք խոստովանեալ՝ մեռցի. իսկ եթէ ոք ոչ սպանցէ, քննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչեւ ի մահ որոշեսցի, քանզի տեղի ապաշխարութեան նորա չիք:

ԳՐԻ ԺԵ. Որ զգերեզման բանայ առ անձուկ՝ Դ. ամ արտաքոյ եւ Ա. ի ներքս:

ԳՐԻ ԺԶ. Որ զդիս կողոպտեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ա. ի ներքս:

ԲԳԿ ԼԴ. Որ զդիսն կողոպտեն եւ ի տեղին ունին, արիւն նորա ի գլուխ նորա եղիցի:

ԲԳԿ ՀԹ. Որ առ փափագ զգերեզմանս բանան՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցեն, Ա. ամ ընդ ձեռամբ, հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՁԹ. Որ զդիս կողոպտեն՝ Ժ. ամ ընդ ունկնդիրս կացցեն, Ա. ամ ընդ ձեռամբ, բազում տրաւք տնանկաց հաղորդեսցի աւրինաց:

Գ. Ունեցուածքին հասցուած վնաս (այգի, արջառ, հունձք)

ԿԵՍ Ժ. Վասն գողոց, աւազակաց, մարդասպանաց եւ որ գաղտնի մահաբեր դեղովք անողորմ խողխողեն զորդիս մարդկան եւ որք հրով կիզուն եւ հրդեհեն զվաստակս եւ զշինուածս ոմանց մարդկան եւ մեծամեծ աւճիրս եւ բազում հարուածս, բազմադիմի եւ ազգի ազգի չարիս ածեն որդւոց մարդկան, նոքա եւ զարիւն արդար հեղուն, նոքա եւ զսրբութիւնս կործանեն, նոքա եւ զմանկունս եկեղեցւոյ խողխողեն, նոքա եւ զհայհոյութիւն ի բարձունս ձգեն, զայսպիսիս աւրէնքն եւ առաջին

pendant cinq ans avec les auditeurs.

NPT 21. Celui qui vole 100 *dram* donnera un cinquième de plus aux pauvres.

APR 5. À propos des homicides. Celui qui tue par jalousie, celui qui devient jaloux et utilise son autorité pour tuer, celui qui tue pour voler, celui qui tue par la dénonciation, l'homme ivre qui tue sa femme, celui qui tue à la guerre, qui tue par ruse.

APR 8. À propos des voleurs. Celui qui s'empare d'une terre (litt. d'un sommet), d'une maison, qui dépouille les pauvres, qui savait que quelqu'un allait commettre un vol et qui n'a rien dit, qui s'est renié pour voler, qui a hypothéqué les biens d'autrui, qui a juré de sauver son frère de la mort en volant, qui jure la main sur le cœur et ne tient pas son serment devra se confesser.

B. Le pillage de tombes et la violation de sépultures

CPC 17. Le pilleur de cadavres pris sur le fait et qui n'avoue son crime que sous la contrainte sera exécuté; mais si personne ne le tue, il restera sous la surveillance de l'église jusqu'à sa mort, car il n'existe aucun lieu de pénitence pour lui.

GLI 15. Celui qui ouvre une tombe avec convoitise se tiendra quatre ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants.

GLI 16. Ceux qui pillent les cadavres se tiendront quinze ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants.

ECB 34. Ceux qui pillent les cadavres et les laissent sur place verront le sang de ces morts retomber sur eux.

ECB 79. Celui qui ouvre les tombeaux avec convoitise fera pénitence trois ans avec les auditeurs, puis un an sous surveillance avant de communier.

ECB 89. Celui qui pille les cadavres fera pénitence pendant onze ans et grâce à des dons aux nécessiteux, il pourra participer à la communion.

C. Les déprédations causées aux biens (vigne, bétail, récoltes)

CES 10. Les voleurs, les bandits, les assassins, ceux qui en secret recourent au poison pour tuer les enfants des hommes, les incendiaires qui brûlent les travaux et les édifices de certains, ceux qui infligent des coups, des maux et de graves préjudices aux enfants des hommes, qui versent le sang juste, renversent les choses saintes et blasphèment contre Dieu ont été – s'ils n'arrêtent pas leurs mauvaises actions – condamnés à mort par la Loi et les premiers canons, afin de servir d'exemple aux

կանոնքն սպանանել հրաման ետուն, զի եւ այլքն խրատեսցին, եւ արժանի են մահու թէ ի չար գործոցն ոչ դարձցին. ապա եթէ քան զըմբռնելն յառաջ եւ ի չարչարանս արկանել ինքնին ի խոստովանութիւն եկեսցէ եւ ի չար գործոցն ամենեւին ի բաց կացցէ՝ կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյն զամենայն ինչ ընդ ապաշխարութեամբ արկանել, զի ուղիղ ապաշխարութիւն, թէ եւ մերձեալ լինի ի դրունս դժոխոց, կորզէ ի բաց, որպէս զԵզեկիայն: Ապաշխարութիւն զհնոցն ի ցաւղ դարձուցանէ, պահք եւ աղաւթք զբերանս առեւծուց սանձեն. քանզի ջերմ արտասուք եւ ապաշխարութիւն զմարդիկ ընդ հրեշտակս խառնեն եւ զհրեշտակս՝ ընդ մարդիկ, որպէս եւ Տէրն տերանց թողեալ զբազում հաւտսն որ յերկինս զմիոյ ոչխարիս զմարդկութեանս զհետ ընթանայր եւ ասէր թէ «Ուրախութիւն է հրեշտակաց ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ եւ ապաշխարեցելոյ» (Ղուկ. ԺԵ. 10): Արդ՝ եթէ դարձցին այսպիսի չարագործքն, զոր պատմեցաք ձեզ, սրտի մտաւք եւ յաւժարութեամբ ի խոստովանութիւն եւ ի դարձ փրկութեան եկեսցեն եւ զհին խմորն զայտումն մեղացն ցածուսցեն եւ ի նոր զանգուած եկեսցեն ջերմ արտասուաւք եւ գթով տնանկաց, քանզի եւ մեծ մարգարէն Դանիէլ բողոքէր առ թագաւորն, զի զմեղս քո ողորմութեամբ քաւեա եւ զանաւրէնութիւնս քո գթով տնանկաց նորափետուր զարդարեսցին, ընդունի զնոսա կանոնս. բայց ապաշխարութիւն յայտ լիցի, քանզի թագաւորն այն Ե. ժամանակ արածեցաւ ընդ անասունս, քանզի ամենայն մեծամեծ մեղացդ, զոր շարեցաք ի կարգի եւ ցուցաք ձեզ ապաշխարութիւն, միագոյն է մի աւրինակաւ, թէ գայթ ի գայթ ինչ իցէ ի վախճանի իւրեանց ընկալցին զյետին թոշակն. ապա եթէ ջերմեռանդն սրտիւ հայեցեալ վարդապետին եւ քննեալ զգործս նոցա եւ զխորհուրդս սրտից նոցա, ներելով արասցէ եւ զյորդորումն եւ զսէր մի՛ արգելցէ, ԺԵ. ամ ի դրունս ունկնդրաց եւ Ե. ամ հաւասարեսցէ ընդ ձեռամբ աղաւթից, ապա հաղորդեսցի աւրինաց եթէ կամք իցեն երիցուն (հմմտ. Ես.ԼԸ; Դան. Գ. 50, Դ. 24, 29; Ղուկ. ԺԵ. 10; Ա. Կորնթ. Ե. 7):

ԲԳԿ ՁԸ. Թէ ոք հրդեհիցէ զարդար վաստակս՝ տուժեսցի ընդ միոյն չորեքկին, թէ ոչ՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ՄԺԴ. Եթէ ոք ձեռն արկանէ անասնոյ ի հաւատացելոց՝ յեկեղեցի մի՛ մտցէ եւ յաջ քահանային մի՛ իշխեսցէ մերձենալ եւ մատաղ մի՛ իշխեսցէ առնել: Եւ եթէ թողցէ ի բաց՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ա. ամ՝ ընդ ձեռամբ, արժանի լիցի աւրինաց:

ՍԿՆ ԺԵ. Վասն որ զայգի հարկանէ առ չարի՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԺԶ. Վասն որ զարջառ հարկանէ կամ զայլ ինչ եւ սպանանէ՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԺԷ. Վասն որ տուն այրէ ընչիւք՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ Ի. Վասն գողոց, աւազակաց եւ մարդասպանաց եւ որ հրով կիզուն եւ արիւն արդար հեղուն եւ հայհոյեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ե. ամ ընդ աւրինաւք ապաշխարեսցեն:

autres (1 Tm 1,20). Mais si avant d'être exécutés, ils passent aux aveux et cessent leurs mauvaises actions, le concile a décidé de les soumettre à la pénitence jusqu'à leur mort, et grâce à leurs dons aux pauvres, ils pourront recevoir le viatique (Is 38; Dn 3,50; Dn 4,24, 29; Lc 15,10; 1 Co 5,7;). Pour tous ces énormes péchés, la pénitence est uniforme; mais s'ils font preuve d'ardeur dans leur pénitence, le *vardapet* observant leurs actions et en les exhortant pourra faire preuve de charité: ils se tiendront près de la porte avec les auditeurs pendant quinze ans et, pendant cinq ans, ils participeront aux prières sous surveillance, puis ils communieront si c'est l'avis du prêtre.

ECB 88. Celui qui incendie un juste labeur indemnisera la victime en lui rendant au quadruple ce qu'il a brûlé, sinon il fera pénitence pendant dix ans.

ECB 214. Celui qui frappe le bétail d'un croyant ne pourra pas entrer à l'église ni baiser la dextre du prêtre, ni offrir un *matał*. Et s'il transgresse ces commandements, il se tiendra pendant trois ans avec les auditeurs, puis pendant un an sous surveillance avant de pouvoir communier.

NPT 15. Celui qui détruit une vigne par malice fera pénitence pendant trois ans.

NPT 16. Celui qui frappe des bestiaux ou tout autre animal et le tue fera pénitence pendant trois ans.

NPT 17. Celui qui incendie une maison avec ses meubles fera pénitence pendant dix ans.

NPT 20. Les voleurs, les brigands, les homicides, les incendiaires qui versent le sang innocent et insultent Dieu feront pénitence pendant quinze ans à l'extérieur et pendant cinq ans avec les auditeurs.

ԿՈՉ Է. Վասն այրեցողաց. Թէ ամուրեաց իցէ վնասն, թէ քինով արար, թէ վասն զրկանաց, թէ ակամայ եղեւ, թէ վարձեցաւ եւ այրեաց:

4. «Մի՛ շնար»

Ընդհանուր

ԿՈՉ Ա. Թիւ խոստովանութեան. Թէ կոյս ընդ կուսի, թէ մինն կոյս է եւ մինն արամբ, եթէ աւճիրս ինչ ի յղանալն գործեաց, եթէ յղացեալ եւ սպանեալ, թէ ընտանիք իցեն, եթէ ի ծննդականն երթեալ է, եթէ յապարահիտ երթեալ է, եթէ ի շնալն երդուաւ, եթէ ի շնալն զսոդոմայականն գործեաց գործ, եթէ ընդ այլազգւոյ, եթէ շնալն զկիւրակէն ոչ պատուեաց, եթէ աւրէնս առ ի շնալն:

Ա. Շնութիւն, պոռնկութիւն, կանանց հետ լողանալու արգելանք

ԿԱՌ ԼԳ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ որպէս ի սկզբանէ զուգեաց Աստուած ամուսնութեամբ զմարդն, եւ աւգնական արար միմեանց եւ աւրհնեաց զնոսա, նոյնպէս սահմանեալ եւ հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն՝ եւ աւրինաւք ի ձեռն աջոյ քահանայութեանն եւ աւրհնութեամբ զուգեսցին: Բայց որպէս Մովսէսի պատուիրեաց արարիչն Աստուած, թէ «Պատուիրեա որդւոցն Իսրայէլի, Ես եմ տէր Աստուած ձեր. պատուիրանաց իմոց զգուշացարուք եւ մի՛ գնայցէք ըստ կրաւնիցն Եգիպտացւոց, ուստի ելէքն, եւ ըստ գնացից Քանանացւոց մի՛ գործիցէք» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 3): Եւ ասէ. «Մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ, զառականս դստեր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռ քոյ՝ թէ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ մի՛ յայտնեսցես, զառականս կնոջ հաւր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս հաւրաքեռ քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռորդւոյ քոյ մի՛ յայտնեսցես, պղծելով ընդ նոսա» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 6-18): Սոյնպէս եւ յերկրորդումն կարգեաց աւրէնսդիրն Մովսէս յանէծսն եւ ասէ. «Անիծեալ լիցի որ ննջիցէ ընդ կնոջ հաւր իւրոյ. զի յայտնեաց զաներեւոյթս հաւր իւրոյ. անիծեալ որ ննջիցէ ընդ քեռ իւրում, որ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ. եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ Եղիցի, եղիցի» (Բ. Օրէնք ԻԷ. 20-22): Նոյնպէս եւ սահմանեալ առաքելական կանոնաց.մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ, մինչեւ ի չորրորդն զարմն չունի իշխանութիւն առնել:

ՀԱՅ Գ. Պոռնիկն մինչեւ այնպէս գնասցէ, կացցէ հեռի ի դրանց եկեղեցւոյն նմա յանդիման, այլ հաղորդել կամ յեկեղեցի մտանել՝ քահանային առաւել շեղջէ ոգւոցն մեղականութիւն:

APR 7. À propos des incendiaires. Celui qui commet le mal tout seul, qui a été payé pour faire cela, qui fait cela en réponse à une injustice, qui fait cela de façon involontaire, qui a loué une chose puis l'a brûlée.

4. «Ne commets point l'adultère»

Généralités

APR 1. Ordre de la confession. La personne vierge avec la personne vierge, si l'un est vierge et l'autre a déjà été marié, si à la suite d'un forfait, la femme tombe enceinte et tue l'enfant, si elle commet l'adultère avec quelqu'un de sa famille ou alors qu'elle est en couche, ou pendant ses règles, ou qu'elle jure de le commettre, ou qu'elle commet l'adultère des sodomites, ou avec un païen (litt. étranger), ou un dimanche, ou qui communie après l'adultère.

A. La fornication, l'adultère et l'interdiction de se baigner avec des femmes

CAP 33. Dieu a permis aux hommes et aux femmes de s'unir par le mariage, qui est célébré par la dextre du prêtre comme l'ont commandé les apôtres. Mais Dieu a ordonné à Moïse de ne pas suivre la religion des Égyptiens et les lois des Cananéens (cf. Lv 18, 3); ainsi aucun homme ne doit s'approcher d'un membre de sa famille pour découvrir la nudité de son parent par le sang: Ne découvre pas la nudité de ta fille, de ta sœur – car elle est la fille de ton père ou de ta mère –, de la femme de ton père, de la sœur de ton père, de l'enfant de ta sœur en te souillant avec eux (cf. Lv 6, 6-18). Pareillement, dans la deuxième série de commandements, Moïse a maudit celui qui couche avec la femme de son père car il découvre la nudité de son père, avec sa sœur car elle est la fille de son père ou de sa mère (Dt 27, 20-22). Pareillement, les canons apostoliques ont disposé qu'aucun homme ne s'approchera d'un membre de sa famille – pour une relation adultère ou pour un mariage – jusqu'au quatrième degré de parenté.

CPC 3. Le fornicateur se tiendra loin des portes de l'église, mais si le prêtre communie avec lui ou le laisse entrer dans l'église, il fera peser sur son âme ses actes pernicieux.

ՀԱՅ Ժ. Եթէ պղծեսցի ոք ընդ քեռ կամ ընդ դստեր կամ ընդ քեռորդւոյ կամ ընդ եղբաւրորդւոյ, այնպիսին որոշեցաւ, որպէս ամենայն անծանաւթք Աստուծոյ, քանզի աւրէնքն տէրունեան մատնեաց զնա ի մահ. զայդ կրեսցէ՝ եթէ ի կին հաւր կամ եղբաւր կամ հաւրեղբաւր ոք անաւրինեցաւ:

ՀԱՅ ԻԲ. Կին որ երկուց եղբարց ախորժեսցի պոռնկել՝ մեռցի. իսկ ամուսնանալ ի վերջէ զատուցեալ յարանցն՝ ընկալցի եկեղեցի ապաշխարութեամբ ծանուս: Իսկ եթէ կայցէ արտաքոյ դրաց եկեղեցւոյն՝ յանդիման նորա աղաւթեսցէ ծանուսս մահու սահմանեալ: Իսկ եթէ եղիցի բազում ժամանակս, հայեսցի ստոյգ գիտուն վարդապետն: Ձդոյն եւ եղբարք առողք կրեսցեն:

ԿԵՍ Ա. Վասն կանանց, որ ընդ արամբ են եւ շնան, թէ թողցեն ի բաց զպղծութիւնն եւ յապաշխարութիւն եկեսցեն՝ Ե. ամ առ դրանն ընդ ձեռամբ կացցեն եւ Բ. ամս մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարող, քննեալ վարքն, տրաւք տնանկաց քաւեալ զմեղս իւր՝ հաղորդելոյ աւրինացն արժանի լիցի:

ԿԵՍ Բ. Վասն կուսանաց, որ քան զհարսանիսն յառաջ ընդ ումեք շնացաւ եւ ելոյծ զկուսութիւն իւր, կուսան այնուհետեւ մի՛ կոչեսցի, զի խրամատեցաւ ցանկն, բայց ապաշխարեսցէ ջերմ սրտիւ ողորմութեամբ եւ գթով տնանկաց սրբեսցէ զինքն, Բ. ամ առ դրանն հաւասարեսցէ աղաւթից եւ Ա. ամ մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարող եւ հաղորդեսցի աւրինաց եւ վասն յաղթութեան թշնամւոյն առցէ զաւրհնութեան պսակն հարսանեաց ի գլուխ իւր. թէ այր թէ կին կանոն այս լիցի:

ԿԵՍ Զ. Որք այրիք մնացեալ իցեն յետ ամաց ինչ եւ կամ բնաւ առն չիցէ լեալ եւ ի մեղս անկանիցի ի պոռնկութիւն, կամ եղեւ մեծ ամենայն ժողովոյն եթէ ամենեւին դարձցին ի մեղացն՝ ապաշխարութիւն դնել ի վերայ նոցա Գ. ամս առ դրանն ընդ ձեռամբ լինել եւ Բ. ամս մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարող, եւ քննեալ եւ փորձեալ զվարսն, ողորմութեամբ եւ գթով տնանկաց սրբեալ զմեղս իւր՝ հաղորդեսցի աւրինաց. ապա եթէ դարձեալ թաթաւեսցի ընդ տիղմն մեղաց իւրոց՝ զԷ. ամին ապաշխարութիւնն ի վերայ դիցես, բայց զյորդորումն եւ զսէր խոնարհութեան եւ զյոյս բարեաց անդադար սփռեսցէ:

ՆԷԿ Դ. Եթէ ոք ի մտի դնիցէ եւ ցանկանայցէ ընդ կնոջ ուրուք պոռնկել եւ խափանեսցի գործն, սրտիւ ահա շնացաւ ըստ Աւետարանին (Մատթ. Ե. 28), բայց գործոյն ի գլուխն չերթալն յայտ է թէ ի շնորհաց անտի պահեցաւ:

ՀԱԹ Ի. Հարցումն. Եթէ այր կնոջ ուրուք խառնագնաց է եւ անխտիր ի պոռնկութիւն, եւ կինն սուրբ է, յառաջ քան զառնն ապաշխարելն պարտ է կնոջն մերձենալ ի սրբութիւնն, թէ ոչ:

Պատասխանի: Պարտ է մերձենալ:

ՀԱԹ ԻԵ. Հարցումն. Թէ յանցաւոր ոք է եւ յանդգնեալ ի պոռնկութիւն եւ ի գողութիւն եւ մեք հանապազ աղաղակեմք, զի դարձցի յապաշխարութիւն եւ նա խեղ է եւ խստանայ եւ ոչ հաւանի բանից մերոց, ապա եթէ դէպ յինիցի նմա յանկարծա-

CPC 10. Celui qui fornique avec sa sœur, sa fille ou le fils de sa sœur, ou de son frère sera exclu comme quelqu'un de totalement étranger à Dieu, car les lois du Seigneur le livrent à la mort; et il subira cette peine s'il pèche avec la femme de son père, celle de son frère ou du frère de son père.

CPC 22. La femme qui fornique avec deux frères sera exécutée; mais si elle s'éloigne d'eux et se marie, elle sera soumise à une lourde pénitence. Et elle restera à la porte de l'église jusqu'à sa mort. Et après un long moment, un *vardapet* savant pourra examiner la ferveur de la pénitence. La même sanction s'appliquera aux deux frères.

CES 1. La femme mariée qui commet l'adultère, si elle cesse son impureté et s'adonne à la pénitence, en se tenant près de la porte pendant cinq ans, puis en entrant et en sortant de l'église avec les pénitents pendant deux ans, et ayant éprouvé sa conduite, et grâce à des dons aux pauvres, elle pourra communier.

CES 2. Le garçon ou la fille vierge qui commet l'adultère avant le mariage sera flétri à jamais, mais à la suite d'une pénitence fervente – en participant pendant deux ans aux prières près de la porte, puis en entrant et en sortant de l'église avec les pénitents pendant un an – et par des dons aux pauvres, il pourra communier et recevoir la couronne de bénédiction du mariage sur sa tête.

CES 6. Celles qui sont restées veuves et qui après un certain nombre d'années forniquent, de même que celle qui n'a jamais été mariée; si elles arrêtent totalement de pécher, pendant trois ans, elles seront près de la porte sous surveillance et pendant deux ans, elles entreront et sortiront de l'église avec les pénitents, et on examinera, et on éprouvera leur conduite, et par leurs dons aux pauvres, elles participeront à la communion; mais si elles récidivent, elles feront pénitence pendant sept ans non sans être exhortées et encouragées.

NEO 4. Celui qui veut forniquer avec la femme d'un autre est déjà adultère dans son cœur (Mt 5, 28), mais si l'acte ne s'accomplit pas, c'est qu'il en a été gardé par la grâce.

QCA 20. La femme pieuse dont le mari qui est débauché et fornicateur ne fait pas pénitence pourra communier.

QCA 25. Si un pécheur s'enhardit dans la fornication ou le vol et, en dépit de nos appels constants à se convertir, ignore nos exhortations, puis tombe subitement malade et au seuil de la mort réclame la communion, il pourra la recevoir; mais en

կի յախտ մահու անկանել եւ աւրէնս խնդրէ ի ժամ մահուանն, պարտ է տալ, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է տալ. ապա եթէ յարիցէ ի հիւանդութենէն՝ ապաշխարեսցէ ըստ մեղացն:

ԲԱԿ ԺԸ. Իսկ կին եթէ ի ճանապարհի ծնցի եւ յուղացեալ անփոյթ առնիցեն զմանկանէն՝ ընդ մահապարտս անկցի այսպիսին: Իսկ զշնացող կանայսն, մանաւանդ եթէ անուանիք իցեն եւ յառաջագոյն երկիւղածք կոչէին, որպէս զի մի՛ հրապարակատեսք լինիցին՝ զայս եւ հարքն մեր չհամարեցան, որպէս զի մի՛ պատճառք մահուան նոցա յանդիմանութիւնն եղիցի, այլ պարտ է նոցա արտաքոյ հաղորդութեան կալ, մինչեւ լցցեն զժամանակ ապաշխարութեան իւրեանց:

ԲԱԿ ԼԳ. Եթէ ոք կին ընդ եղբաւր իւրում պոռնկեսցի՝ ընդ սպանողի խոստովանութեան պարտի զանձն իւր ցուցանել:

ԲԱԿ ԼԴ. Իսկ եթէ ոք զազգային ապականեսցէ՝ զշնացողի պատուհաս կրեսցէ սաստկապէս տաժանելով:

ԲԱԿ ԼԸ. Թէ ոք զիւր գքոյր, որ առ ի հաւրէ կամ առ ի մաւրէ, ապականեսցէ՝ ի տուն աղաւթից նմա մի՛ ոք հրամայեսցէ մերձենալ մինչեւ հրաժարեսցէ այսպիսին յանպրժան եւ ի չար վարուց, այլ լալով կացցէ առ դուրս աղաւթանոցին եւ աղաչեսցէ զժողովուրդն վշտակցութեամբ հանդերձ զի խնդրեսցեն վասն նորա ի Տեառնէ: Եւ յետ այնորիկ զերեամ եւս առ ի լսելոյ միայն եւ յուսանելոյ յաստուծային գրոց եւ ոչ եւս արժան է նմա ընդ աղաւթականսն կալ. իսկ յետ այսորիկ տացի նմա յաղագս դառն արտասուաց մխիթարիլ ի Տեառնէ, բեկեալ սրտիւ արժանի եղիցի միայն տեսանելով զհաւատացեալսն եւ զերեամ մի այնպէս կացցէ: Ապա յետ Ժ. ամի յաղագս այսպէս համբերութեամբ արժանաւոր եղիցի ընդ հաւատացեալսն կալ յաղաւթս, զերկեամ մի այնպէս կացցէ ընդ հաւատացեալսն յաղաւթս լոկ, ապա յետ այնորիկ արժանի եղիցի սուրբ հաղորդութեանն: Սոյն աւրէնք կացցեն եւ որ ընդ նուոյ յանցանիցէ եւ որ ընդ մաւրուի կամ ընդ ազգականի ապականեսցի. սոյն եւ մի պատուհաս եղիցի ի վերայ ամենեցուն:

ՇԱՀ Գ. Եթէ ոք կին ունիցի եւ պոռնկեսցի եւ զկարգ ամուսնութեանն սրբութեամբ ոչ պահեսցէ եւ զպսակն, զոր առ ի ձեռն քահանային ի սուրբ եկեղեցւոջն ի գլուխ իւր ընկալաւ եւ զաւգնականն, որ նմա վիճակեցաւ ըստ գրեցելումն, եթէ՝ «Աւգնական առն իւրում ետու զկին իւր» (յմմտ. Ծննդ. Բ. 18). եւ քարոզն աղաղակէ, թէ՝ «Պատուական է ամուսնութիւն եւ անարատ անկողինք, որ սրբութեամբ գոյգին, բայց զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած» (Եբր. ԺԳ. 4). եւ դարձեալ՝ «Այր մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ կինն, նոյնպէս եւ կինն՝ իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ այրն» (Ա. Կոր. Է. 4): Արդ՝ եթէ ուրուք զաւրինութեան զկեանսն եւ զիեշտութեան, զոր առ յԱստուծոյ զփառաւորութիւն ի սուրբ եկեղեցւոջ, եւ ապա առ ոտն եհար եւ զաւրինութեամբ ամուսնութիւնն, զոր Աստուած ետ նոցա, պղծութեան կոխան արար, ի շնութիւն անկաւ եւ ի պոռնկութիւն եւ ի հանգանակս արբեցութեան, զայնպիսին կշտամբեսցեն գլխաւորքն գտնիւք եւ բանիւք աւգտակարաւք եւ յեկեղեց-

cas de guérison, il fera pénitence en fonction de ses péchés.

BAC 18. Si une femme enfante au cours d'un voyage et laisse le nourrisson sans soin, elle sera condamnée à mort. Quant aux femmes adultères, notamment si elles étaient renommées et considérées auparavant comme pieuses, nos pères ont considéré qu'il était néfaste d'exposer leurs péchés publiquement, de sorte que la réprimande ne soit pas cause de leur mort, mais elles seront exclues de la communion, jusqu'à ce qu'elles accomplissent le temps de leur pénitence.

BAC 33. La femme qui fornique avec son frère devra se confesser elle-même comme un homicide.

BAC 34. Celui qui se corrompt avec un parent sera soumis au châtiment des adultères en étant sévèrement accablé.

BAC 38. Concernant celui qui corrompt sa sœur, issue du même père ou de la même mère, personne ne pourra l'autoriser à s'approcher de l'église jusqu'à ce qu'il renonce à sa vie indigne et mauvaise, mais il devra rester à la porte de l'église en pleurant et supplier le peuple de prier le Seigneur en sa faveur avec compassion. Et après avoir écouté et appris les Écritures pendant trois ans, il sera toujours indigne de se tenir parmi ceux qui prient; puis, grâce à des larmes amères, il trouvera la consolation divine et sera seulement digne de regarder les croyants avec un cœur contrit, et il restera dans cet état pendant trois autres années. Puis, après dix ans, en raison de sa patience, il sera digne de prier avec les croyants et après deux autres années, il sera digne de la communion. La même loi et la même sanction seront imposées à celui qui pèche avec sa bru ou se corrompt avec sa belle-mère, ou tout autre parent.

SHV 3. L'homme marié qui fornique et ne garde pas pur l'ordre du mariage (cf. Gn 2, 18; Hb 13, 4; 1 Co 7, 4) sera réprimandé par les autorités, par des coups et des paroles salutaires, et elles l'écarteront de l'Église, et lui feront payer une amende à l'Église qui sera distribuée aux nécessiteux en compensation du fait qu'il a déshonoré l'Église et a souillé la couronne de bénédiction. S'il s'agit d'un noble, comme il n'est pas possible de le frapper de coups, on lui infligera une amende de 200 *dram* en faveur des nécessiteux et une pénitence de deux ans, et qu'il ne commette plus à nouveau l'impureté; alors il entrera dans l'église et se mêlera à ses compagnons. Mais s'il s'agit d'un vilain, qu'il soit roué de nombreux coups et il versera une amende de 100 *dram* à l'Église qui sera distribuée aux pauvres, et après s'être tenu éloigné de l'impureté pendant un an, il entrera dans l'église et se mêlera à ses compagnons; ce canon s'appliquera aux hommes comme aux femmes.

ւոյ ի բաց մերժեսցեն, եւ տուգան կալցին յեկեղեցի եւ ի կարաւտեալս բաշխեսցեն, փոխանակ զի անարգեաց զեկեղեցին եւ զպսակն աւրհնութեան պղծեաց: Եթէ ազատ է եւ գան չէ մարթ հարկանել, ի տուգանն եւ յապաշխարութիւնն յաւելցեն Մ դրամ կարաւտելոց՝ Բ. տարիս յապաշխարութիւն, եւ զպղծութիւնն այլ մի՛ եւս գործեսցէ. ապա մտցէ յեկեղեցի եւ ընդ ընկերս խառնեսցի: Ապա եթէ շինական է, գան յոլով արբցէ, Ճ. դրամ տուգան տացէ յեկեղեցի եւ յաղքատս բաշխեսցեն եւ տարի մի ի պղծութենէն հեռացեալ՝ մտցէ յեկեղեցի եւ յընկերս խառնեսցի. եթէ այր եւ եթէ կին կանոն այդ կացցէ:

Ապա եթէ ոք յառաջ քան զամուսնութիւնն ի պոռնկութեան գտաւ կամ ընդ աւտարի կամ որ նմա խաւսեալն էր, ընդ անարգանացն տուգան տացէ զինչ եւ արկցեն հայր եւ մայր կուսին, որպէս եւ Մովսէս հրամայեաց յԱւրէնսն (յմմտ. Բ. Օրէնք ԻԲ. 28-29): Եթէ կամեսցի զնոյն աղջիկն կին առնուլ, յառաջ ի ձեռն ապաշխարութեան սրբեսցին, եւ եթէ ի պսակն եկեսցեն, մի՛ իբրեւ կուսանաց պսակ աւրհնեսցեն, այլ իբրեւ երկակին տեառնագրեսցեն լոկ: Ապա եթէ աղջկանն կամաւք է պոռնկութիւնն, տուգանին հայր եւ մայր աղջկանն մի՛ իշխեսցեն, այլ Ճ. դրամ այրն եւ Ճ. դրամ աղջիկն տուգան տացեն յեկեղեցին եւ յաղքատս բաշխեսցեն:

Ապա եթէ մինն սուրբ կուսան եւ մինն պոռնկեալ՝ կուսանին իբրեւ կուսանի աւրհնեսցի, եւ պոռնկացելոյն որպէս երկակի ուռ տեառնագրել վասն յաղթութեան թշնամւոյն ի գլուխ դիցի. եւ յայսմհետէ զգոյշ:

ՇԱՀ ԺԲ. Որ զկին հաւր որդի ունիցի, զոր Պաւղոս յամենայն ժամ կականէր եւ ողբայր զԿորնթացիս զի ասէր, թէ՝ «Եւ այդ եւս եղեւ մինչեւ զկին հաւր իւրոյ ունել» (Ա. Կոր. Ե. 1). եւ ասէր, թէ՝ «Կտրեսջիք, ի միջոյ ի բաց հանջիք եւ մատնեսջիք ի ձեռս սատանայի, զի ոգին ապրեսցի յաւուրն դատաստանի» (յմմտ. Ա. Կոր Ե. 2, 5): Եւ կամ Ռուբէն որդին Յակոբայ՝ զիաւրդ անիծաւ վասն ընդ հարճի հաւրն ննջելոյ: Արդ՝ եթէ ոք զկին հաւր իւրոյ ունիցի, ոչ ընդունի զնա կանոնս եւ ի սուրբ եկեղեցի նա մի՛ մտցէ եւ յամենայն ժողովոյս նզովեալ լիցի, մինչեւ դարձցի եւ ապաշխարեսցէ Է. ամ ընդ ունկնդիրս, Գ. ամս ընդ ձեռամբ, Ճ. դրամ աղքատաց, Ճ՝ յեկեղեցի, եւ այլ վարքն քննեալ՝ հաղորդեսցի:

Եթէ հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբաւր, նոյն պատուհաս եւ նզովք լիցին: Այլ զջերմ հարազատի եւ զազգականի զկին ոք մի՛ իշխեսցէ ունել ի կնութեան եւ կամ շնալ: Եւ եթէ կնոջն կամաւք իցէ խառնակութիւնն՝ զպատուհասն եւ զտուգանս եւ զնզովս զնոյն կրեսցէ եւ յապաշխարութիւն կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, Ժ. տարի աղասցէ գոդեացն. ապա եթէ ազատ է եւ ի գոդիսն չերթայ՝ Յ դրամ տացէ նոցա:

ԹՍՎ Ե. Կնքաւոր թէ պոռնկեսցի՝ Դ. ամ արտաքոյ, Դ՝ ընդ ապաշխարողս եւ Գ. ամ աւրէնս մի՛ առցէ:

ԹՍՎ Զ. Երիտասարդ թէ պոռնկեսցի՝ կին նորա աւրէնս մի՛ առցէ մինչեւ խառնեսցին:

ԹՍՎ Է. Առնակին թէ շնասցի՝ Ժ. ամ արտաքոյ եւ Բ՝ ընդ ապաշխարողս եւ Գ.

Mais celui qui fornique avant le mariage, soit avec une étrangère, soit avec sa fiancée, versera une amende en compensation du déshonneur, suivant ce que le père ou la mère de la vierge proposeront, ainsi que Moïse l'a commandé dans la Loi (Dt 22, 28-29). S'il veut prendre la même fille pour femme, tout d'abord, qu'ils se purifient par la pénitence, et s'ils viennent à se marier, ils ne seront pas bénis avec le couronnement des vierges, mais simplement avec le signe de croix comme pour de secondes noces. Mais si la fornication a été commise avec le consentement de la fille, le père et la mère de la fille n'auront pas le droit de percevoir l'amende, mais l'homme versera à l'Église une amende de 100 *dram* et la fille de 50 *dram*, qui seront distribués aux pauvres.

Mais si l'un est vierge de façon sainte et l'autre un fornicateur, celui qui est vierge sera béni comme une personne vierge, et sur la tête du fornicateur sera posée une branche de saule, comme symbole de sa victoire sur l'ennemi, pour qu'il soit béni avec le signe de croix, comme pour de secondes noces; et après cela qu'ils soient vigilants.

SHV 12. Le fils qui prend la femme de son père (1 Co 5, 1; 2, 5; Gn 35, 22) ne sera pas reçu par les canons, il n'entrera pas dans l'église et sera anathématisé par toute l'assemblée, jusqu'à ce qu'il se convertisse et fasse pénitence pendant sept ans avec les auditeurs, trois ans sous surveillance, et il versera 50 *dram* aux pauvres et 50 *dram* à l'Église, et après que ses mœurs auront été examinées, il communiera.

Si le père prend la femme de son fils, ou le frère celle de son frère, les mêmes châtiments et anathèmes s'appliqueront. Mais personne n'aura le droit de prendre pour femme ou pour une relation adultère une femme du même sang ou une parente. Et si la débauche se fait avec la volonté de la femme, elle subira le même châtiment, l'amende et l'anathème, et elle se tiendra dans la pénitence, et sera placée dans une léproserie où elle moudra de la farine pour les lépreux pendant dix ans; mais si elle est noble et qu'elle n'aille pas chez les lépreux, elle leur versera 300 *dram*.

SEW 5. Le parrain qui fornique se tiendra pendant quatre ans à l'extérieur de l'église, puis pendant quatre ans avec les pénitents, puis pendant trois ans encore, il ne recevra pas la communion.

SEW 6. L'épouse d'un homme (litt. jeune homme) qui a forniqué ne communiera pas jusqu'à ce qu'ils puissent se connaître à nouveau.

SEW 7. La jeune femme qui commet un adultère se tiendra pendant dix ans à

ամ աւրէնս մի՛ առցէ: Ապա եթէ գաղտուկ է ապաշխարութիւն նորա՝ դրաց ի ներքոյ ապաշխարեսցէ մինչեւ կատարեսցի ԺԵ. ամ:

ԹՍՎ Ժ. Եթէ ոք զոր ոչ իցէ խաւսեալ՝ յաւսցի, անիծեալ լիցի, անջատեցէք եւ տուք այլում եւ ոչ մեղանչէք:

ԹԱՏ ԺԷ. Հարցումն. Որ շնայ զինչ պարտ է առնել:
Պատասխանի. Թէ ոք այր կամ կին քրիստոնեայ շնացաւ՝ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն զԳ. ամս տքնեալ, պահեալ եւ աղաւթեալ, եւ լուծումն շաբաթու եւ կիւրակէր լիցի եւ ի տէրունական տաւնսն՝ մինչեւ ի կատարել երից ամացն, ապա ի չորրորդումն լիցի արժանի հաղորդութեան: Եւ որ գողասցի ոք՝ զնոյն պատուհաս կրեսցէ: Ապա եթէ ի մեղսն յաւելցեն, կրկին ապաշխարեսցեն:

ԹԱՏ ԺԸ. Հարցումն. Որ ի շնալն հեղցէ զորդեծնութիւն, զինչ պարտ իցէ առնել:
Պատասխանի. Թէ ոք ի քրիստոնէից ի շնալն զորդեծնութիւնն հեղուցու եւ զԱստուծոյ երկիւղն ոչ ինչ համարի՝ զի մի՛ մարդկան յայտնեսցի, այնպիսին ընդ սպանողսն ապաշխարեսցէ բազում հառաչանաւք:

ԹԱՏ ԻԱ. Հարցումն. Եթէ ամուսնացեալքն շնան՝ զինչ արասցուք:
Պատասխանի. Որ առնակին իցէ եւ շնացաւ, ԺԲ. ամ ապաշխարեսցէ արտաքոյ՝ արտասուաւք զամենայն սրբապահս. յետ Զ. ամի անցանելոյ շաբաթու եւ կիւրակէի եւ ի տէրունական տաւնս լուծումն արասցէ եւ ի տարւոջն զերրոդ մասն պահեսցէ, եւ ապա մտցէ յեկեղեցի եւ հաղորդեսցի:

ԹԱՏ ԻԳ. Հարցումն. Որ շնայ եւ զմանուկն սպանանէ՝ զինչ արասցուք:
Պատասխանի. Որ շնայ եւ զմանուկ սպանանէ՝ ցաւր մահուան իւրոյ ապաշխարեսցէ, եւ ի վախճանին հաղորդեսցի:

ԿԵՆ Լ. Եթէ ոք շնացաւ կամ շնայցէ՝ Է. ամ ապաշխարեսցէ, եւ այսպէս աղաւթակից լիցի:
ԿԵՆ ԼԲ. Եթէ ուրուք խաւսեալ զաղջիկ՝ ապականեսցի ընդ քեռ նորա եւ դարձեալ ապականեսցի ընդ խաւսեցելումն, ինքն եւ որ գիտակակիցքն են՝ ԺԵ. ամ ապաշխարեսցեն եւ ապա հաղորդեսցին:

ԿԵՆ ԼԵ. Եթէ ոք ցանկասցի ննջել ընդ կնոջ եւ ոչ ձեռն արկիցէ՝ անպարտ լիցի, իսկ եթէ ձեռն արկեալ եւ ոչ կարացեալ՝ պարտաւոր լիցի ապաշխարութեան:

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

ԲԳԿ Ժ. Որ ընդ եղբաւր պոռնկի՝ ընդ սպանողի ընկալցի:

l'extérieur de l'église, puis pendant deux ans avec les pénitents, puis pendant trois ans encore, elle ne recevra pas la communion. Mais si sa pénitence se déroule secrètement, elle la fera sous la porte de l'église pendant quinze ans.

SEW 10. La personne non fiancée qui se déflore sera maudite, retranchée de la communauté et vous la donnerez à quelqu'un d'autre afin de ne pas pécher.

THD 17. Le chrétien - ou la chrétienne - qui tombe dans l'adultère fera pénitence pendant trois ans en se tenant à l'extérieur de l'église en veillant, en jeûnant et en priant, mais il pourra faire relâche les samedis, les dimanches et pour les fêtes au nom du Seigneur, puis la quatrième année, il pourra communier. Et s'il commet un vol, la peine sera identique. Mais s'il commet les deux péchés, la peine sera doublée.

THD 18. Le chrétien qui avorte sans craindre Dieu pour détruire le fruit de l'adultère, afin de dissimuler son péché devant les hommes, fera pénitence en compagnie des homicides avec de nombreux soupirs.

THD 21. L'épouse adultère fera pénitence pendant douze ans à l'extérieur de l'église avec des larmes durant tous les saints jeûnes; mais au bout de six ans, elle pourra faire relâche les samedis, les dimanches et les jours de fête au nom du Seigneur, et elle poursuivra son jeûne durant la troisième partie de l'année, puis elle entrera à l'église et communiera.

THD 23. Celui qui commet un adultère et tue l'enfant qui en est issu fera pénitence durant toute sa vie, pour pouvoir communier, au jour de sa mort.

SCN 30. Celui qui a commis ou qui vient de commettre l'adultère fera pénitence pendant sept ans et ainsi, il participera aux prières.
SCN 32. Le fiancé qui pèche avec la sœur de sa fiancée, puis pèche à nouveau avec celle-ci, lui-même et ses complices feront pénitence pendant quinze ans, et alors ils communieront.

SCN 35. Celui qui veut seulement coucher avec une femme sans faire de tentative n'est pas coupable, mais s'il essaye sans réussir, il sera condamné à une pénitence.

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

ECB 10. Celle qui fornique avec son frère se tiendra avec les homicides.

ԲԳԿ ԺԱ. Որ ազգային ապականէ՝ ընդ շնացողի պատուհաս կրեսցէ:

ԲԳԿ ԺԳ. Եթէ ոք պոռնկի ի տան Աստուծոյ ընդ արուի կամ ընդ իգի՝ արժանի լիցի միայն զհաւատացեալս տեսանել Ժ. ամ, յետ Ժ. ամի արժանի լիցի ընդ հաւատացեալս կալ՝ Ե. ամ ընդ ունկնդիրս, Ա՝ ընդ ձեռամբ մտցէ եւ ելցէ ընդ ապաշխարողս. ապա արժանի լիցի արիւնաց: Թէ քահանայ կամ սարկաւագ կամ ուխտական հանդիպեսցին ի չար ախտին՝ մինչեւ ի վախճան ընդ ունկնդիրս կացցէ, յետին թոշակին թէ լիցի արժանի:

ԲԳԿ ԽՍ. Կին որ առանց ընկերի ի ճանապարհ երթայ եւ ի պղծութիւն անկանի՝ Գ. ամ ապաշխարեսցէ եւ տրաւք տնանկաց արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ԽԵ. Թէ ոք ննջէ ընդ զոքանչի կամ ընդ քեռ կնոջ իւրոյ, առաջին վարդապետքն ԺԵ. ամ եդին, բայց վասն մարդասիրութեան Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ մտեալ յեկեղեցին ելցէ ընդ ապաշխարողս տրաւք եւ բազում ողորմածութեամբ արժանի լիցի յետին թոշակին:

ԲԳԿ ԽԷ. Կին եթէ շնացաւ ընդ առն անաւրինի յիւր կամաց եւ զղջացաւ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, բազում տրաւք ողորմութեամբ հաղորդեսցի աւրինաց. բայց վարդապետն հայելով ի վարսն՝ զյորդորումն սիրոյ մի՛ արգելցէ, իշխան է կարճել զժամանակն:

ԲԳԿ ԽԸ. Կին եթէ շնացաւ ընդ եղբաւր առն իւրում, թէ ի զղջումն եկեսցէ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, բազում տրաւք եւ ողորմութեամբ հաղորդեսցի աւրինաց. բայց վարդապետն զսէր մի՛ արգելցէ:

ԲԳԿ ԽԹ. Թէ ոք շնայ ընդ խորթու կամ ընդ մերձաւորի արեան իւրում եւ ի զղջումն եկեսցէ՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ՝ առ դրանն, Բ՝ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, տրաւք տնանկաց հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ Ճ. Կուսան թէ պոռնկեցաւ ընդ արամբոյն՝ ահա պղծեաց զամենայն տունն եւ զբարկութիւնն Աստուծոյ շարժեաց ի վերայ երկրի. թէ ի զղջումն եկեսցէ եւ թողցէ զչար գործսն՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ՝ առ դրանն, Բ՝ ընդ ձեռամբ մտցէ եւ ելցէ յեկեղեցին ընդ ապաշխարողս, տրաւք տնանկաց հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՃԴ. Կին եթէ շնայ ընդ ուխտականաց եկեղեցւոյ՝ եղիցի ապաշխարութիւն նորա ընդ երեքկնոյն:

ԲԳԿ ՂԹ. Իսկ եթէ ոմանք չոգան ի պոռնկութիւն կամ յայլ չար գործս եւ լինիցի նոցա անդ վախճան, արիւն նոցա ի գլուխ նոցա: Բայց նոքա որ սպանին՝ ընդ

ECB 11. Celui qui se corrompt avec un parent supportera la peine des adultères.

ECB 13. Celui qui fornique dans l'église avec un homme ou une femme fera pénitence pendant dix ans en se contentant de regarder les fidèles, puis il se tiendra pendant cinq ans avec les auditeurs, puis pendant un an il entrera à l'église sous surveillance et sortira avec les pénitents; alors il sera digne de la communion. Le prêtre, le diacre ou le clerc qui succombe au vice criminel se tiendra en pénitence avec les auditeurs jusqu'à sa mort et ainsi, il sera digne du viatique.

ECB 40. La femme qui voyage sans compagnon et tombe dans la souillure fera pénitence pendant trois ans, et par des dons aux nécessiteux, elle se rendra digne de la communion.

ECB 45. Les premiers *vardapet*s avaient infligé quinze ans de pénitence à celui qui avait couché avec sa belle-mère ou sa belle-sœur; à présent, par philanthropie le coupable fera pénitence pendant sept ans avec les auditeurs, puis pendant deux ans, il entrera et sortira de l'église avec les pénitents, et par de nombreux dons et aumônes, il se rendra digne du viatique.

ECB 47. La femme qui tombe volontairement dans l'adultère avec un homme impie, puis regrette fera pénitence sept ans avec les auditeurs, puis pendant trois ans elle entrera et sortira de l'église avec les pénitents, et grâce à de nombreux dons et aumônes, elle pourra communier; mais le *vardapet* observant sa conduite pourra raccourcir la durée de la pénitence.

ECB 48. La femme qui tombe dans l'adultère avec le frère de son mari, puis le regrette fera pénitence pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans elle entrera et sortira de l'église avec les pénitents, et grâce à de nombreux dons et aumônes, elle pourra communier; mais le *vardapet* pourra faire preuve de compassion.

ECB 49. Celui qui tombe dans l'adultère avec un enfant né d'un premier mariage ou avec un parent par le sang, puis le regrette fera pénitence pendant cinq ans avec les auditeurs, puis pendant trois ans à la porte de l'église, puis pendant deux ans elle entrera et sortira de l'église avec les pénitents, et grâce à des dons aux nécessiteux, il pourra communier.

ECB 50. La personne vierge qui fornique avec une personne mariée souille toute sa maison et déclenche la colère de Dieu sur terre; si elle le regrette et cesse ses actes malfaisants, elle fera pénitence pendant cinq ans avec les pénitents, puis pendant trois ans à la porte de l'église, puis pendant deux ans elle entrera et sortira de l'église avec les pénitents, et grâce à des dons aux nécessiteux, elle pourra communier.

ECB 54. La femme qui tombe dans l'adultère avec un ministre de l'Église subira triplement la pénitence des adultères.

ECB 99. Si certains forniquent ou commettent d'autres méfaits et que cela occasionne des morts, le sang de ces morts retombera sur leurs têtes. Mais s'agissant

պատժաւք են՝ Ե. ամ ընդ ունկնդիրս կացցեն, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց: Իսկ պոռնիկն յուրկանոց երթիցէ եւ վաստակիցէ գողեացն Է. ամ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, եւ թէ լիցի արժանի յետին թոշակին:

ԲԳԿ ճԻԱ. Որ պոռնկին եւ զմանկունսն սպանանեն, իշխան է առաջնորդն ժամանակին խուզել, մրել եւ աշխարհալուր ձաղել եւ դրամ առնուլ եւ յաղքատս տալ եւ գանալից խրատել, եւ առ դրանն ապաշխարել զկարգ իւր:

ԲԳԿ ճԻԲ. Ոչ է արժան կնոջ յաւուրս տաւնի զինքն այլակերպել եւ յեկեղեցի ընթանալ, որպէս ի պոռնկոց. եւ եթէ ոք յանդգնի՝ քահանայն արգելցէ ի մարմնոյ Տեառն եւ եղիցի նզովեալ:

ԲԳԿ ճԼ. Ոչ է արժան եղբաւր առ քեռ ննջել ի ԺԵ. ամենից ի վեր, կամ առ այլ մերձաւորի. եւ եթէ ոք յանդգնի՝ պոռնկին ապաշխարութիւն եղիցի:

ԲԳԿ ճԼԳ. Մի՛ ոք իշխեսցէ ելանել յանկողինս հարսին եւ մերձաւորի. եւ եթէ ոք յանդգնի՝ ապաշխարութիւն պոռնկին եղիցի:

ԲԳԿ ճԽԱ. Թէ ոք ի մտի դնէ պոռնկել ընդ կնոջ իշխանի եւ յորոգայթ մահու անկանի, արիւն նորա ի գլուխ նորա եղիցի:

ԲԳԿ ճԽԸ. Թէ ոք պոռնկեցաւ ընդ ումեք եւ յետոյ վասն առաջնորդին յորդորելոյ կին արար զնա, տուգան եւ հարումն մի՛ առցէ, բայց ապաշխարութիւն պոռնկին եղիցի:

ԲԳԿ ճԾ. Այր կամ կին եթէ ոչ միանգամ, այլ երկիցս եւ երիցս եւ բազում անգամ պոռնկեցան եւ ի զղջումն գան, զինչ աւրէն է գործել: Ըստ բազում մեղացն բազում պատիժք կուտին. բայց ապա յիշելով զքան մարգարէին Եզեկիէլի թէ՝ «Անաւրէնն դարձցի, ամենայն անաւրէնութիւնք նորա մի՛ յիշեսցին» (յմմտ. Եզեկ. ԺԸ. 21-22), հայեսցի վարդապետն ի ջերմեռանդն սրտին յաւժարութիւն եւ ի սրբութեամբ պահսն եւ յաղաւթսն, իշխան է զինչ կամեսցի, բայց միայն հաւատովք:

ԲԳԿ ճԾԱ. Բազում են մեքենայք սատանայի եւ բազում անգամ կորուսանէ զմարդիկ՝ կամ հայր ընդ դստեր կամ քոյր ընդ եղբաւր. առաջին աւրէնքն այրել հրամայեցին եւ արժանի իսկ են. բայց յաղագս Որդւոյն Աստուծոյ, գթով ժողովել զմոլորեալսն, <թէ> եկեսցեն յապաշխարութիւն, արժան է երթալ ի գողենոցն եւ վաստակել մինչեւ ի վախճան. ԺԵ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ե. ամ՝ ընդ ձեռամբ, թէ լիցի արժանի յետին թոշակին:

ԲԳԿ ՄԺԳ. Կին եթէ ամուսնացի եւ Աստուած փակէ զարգանդն՝ չտալ նմա պտուղ եւ նա զվնասն յայրն տայ եւ պոռնկի վասն մանկան՝ Է. ամ ընդ ունկնդիրս

des homicides, ils se tiendront pendant cinq ans avec les auditeurs et pendant deux ans sous surveillance, et grâce à des dons aux nécessiteux, ils pourront communier. Quant au fornicateur, il travaillera dans une léproserie pendant sept ans, puis pendant trois ans, il entrera et sortira de l'église avec les pénitents, afin d'être digne du viatique au jour de sa mort.

ECB 121. Concernant ceux qui forniquent puis tuent l'enfant né de leurs œuvres, le prélat ordonnera de les faire tondre pour un temps, de les enduire de suie, de leur jeter l'opprobre publiquement, de leur réclamer de l'argent en faveur des pauvres, de les corriger par le fouet, et qu'ils fassent pénitence à la porte de l'église selon leur rang.

ECB 128. Les femmes qui se maquillent les jours de fêtes et courent ainsi à l'église comme des fornicatrices devront être privées de la communion et anathématisées par le prêtres.

ECB 130. Le frère et la sœur ou les cousins âgés de plus de quinze ans qui dorment ensemble supporteront la pénitence des fornicateurs.

ECB 133. Celui qui dort dans le lit de sa fiancée ou d'une parente supportera la pénitence des fornicateurs.

ECB 141. Celui qui veut forniquer avec la femme d'un prince et de ce fait tombe dans un piège mortel verra son propre sang retomber sur sa tête.

ECB 148. Celui qui fornique avec quelqu'un et à la suite des exhortations du prélat finit par épouser la femme ne paiera pas d'amende ni ne sera battu, mais il subira la pénitence des fornicateurs.

ECB 150. L'homme ou la femme qui a forniqué à de nombreuses reprises avant de le regretter goûtera à de nombreux châtiments. Mais comme Ézéchiel a précisé qu'il ne fallait pas rappeler tous les péchés de celui qui s'était converti (cf. Éz 18, 21-22), le *vardapet* observera la ferveur du cœur, des prières et des jeûnes du pécheur, et agira comme il le souhaite avec foi.

ECB 151. Satan fait que le père couche avec sa fille ou la sœur avec son frère; les premières lois livraient de telles personnes au feu et à vrai dire elles le méritent; mais le Fils de Dieu par miséricorde a permis de les soumettre à la pénitence et ils iront trimer dans les lazarets jusqu'à la mort; et ils se tiendront pendant quinze ans avec les auditeurs, puis pendant cinq ans sous surveillance, afin de se rendre dignes du viatique.

ECB 213. L'épouse dont l'utérus est bouché par Dieu et qui rendant son mari responsable de sa stérilité, va forniquer pour tomber enceinte se tiendra pendant

կացցէ, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԻԲ. Թէ ոք յիշխանաց զքահանայ անարգէ վասն պոռնկաց կամ այլ չարագործաց, որպէս թէ աւգնական լինել նոցա, եւ զարդար դատաստանն թիւրէ, որպէս եւ գիրն ասէ՝ «Իշխանք ձեր գողակիցք են գողոց» (Ես. Ա. 23), եղիցի նզովեալ ի Քրիստոսէ. եւ չարիք նոցա ի գլուխ նոցա եղիցին:

ԳԱՍ Զ. Որք յետ մկրտութեանն զառածան ի մեղս պոռնկութեան, շնութեան եւ այլ զանազան չարեաց, տեսցէ որ վարդապետն է, թէ որչափ յամեալ է ի մեղսն, եւ ընտրութեամբ արասցէ նմա մնալ յապաշխարութեանն, որպէս առաքելականն հրամայէ բան, բայց յաշտիճան ոչ կարէ մերձենալ:

ՍԿՆ Բ. Վասն պոռնկաց որ շնան եւ զմանկունս սպանանեն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ Թ. Վասն որ ընդ երկու քերց պոռնկին եւ ապա զմինն կին առնէ՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԺԱ. Վասն որք շնան եւ կամին սպանանել եւ ի շնորհացն Աստուծոյ ապրեցան՝ Ը. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԺԲ. Վասն որ ընդ հեթանոսի շնան՝ Թ ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԻԳ. Վասն որ ընդ հաւր կնոջ ննջէ՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԼԶ. Վասն կնոջ որ ընդ արամբ է եւ շնայ, թէ թողցէ զպղծութիւն իւր՝ Է. ամ առ դրանն, Գ՝ ընդ աւրինաւք ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԼԷ. Վասն որ յառաջ քան զհարսանիսն շնան եւ կին առնէ՝ Գ. ամ արտաքոյ եւ Ա. ընդ աւրինաւք ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԼԹ. Վասն որ զմայր կնոջն պղծէ՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ Խ. Վասն որ շնայ եւ զնոյն կին առնէ՝ Գ. ամ ապաշախարեսցէ:

Բ. Անասնապիղծ եւ արուագէտ

ՀԱՅ Բ. Անասնապիղծ կամ որ պղծեն կամ որ պղծին, զարուին եւ զիգին ասացաւ, կամ որոշէ եկեղեցի մահու, կամ մեռցին որպէս տէրունեան աւրէնքն հրամայեն:

ՀԱՅ Ը. Արուապղծութեան բազում կերպարանս ասացին ծանաւթք գործոյն,

sept ans avec les auditeurs, puis pendant deux ans sous surveillance avant de pouvoir communier.

ECB 222. Le prince qui méprise un prêtre afin de protéger des fornicateurs ou d'autres malfaiteurs et s'abstient d'un juste jugement sera – comme le proclament les Écritures (Is 1, 23) – anathématisé par le Christ; et les crimes des malfaiteurs retomberont sur sa tête.

GNT 6. Ceux qui, après le baptême, s'enfoncent dans les péchés de la fornication, de l'adultère ou de différents autres méfaits, le *vardapet* verra combien de temps ils se sont attardés dans le péché et déterminera le temps de leur pénitence, comme la parole apostolique l'ordonne, mais ils ne pourront pas s'approcher des degrés de la cléricature.

NPT 2. Les fornicateurs qui commettent l'adultère et tuent l'enfant qui en est issu feront pénitence pendant quinze ans.

NPT 9. Celui qui fornique avec deux sœurs, puis épouse l'une d'elles fera pénitence pendant dix ans.

NPT 11. Ceux qui commettent un adultère puis tentent de se tuer, mais qui par la grâce de Dieu survivent feront pénitence pendant huit ans.

NPT 12. Ceux qui commettent un adultère avec un païen feront pénitence pendant neuf ans.

NPT 23. Celui qui couche avec la femme de son père fera pénitence pendant dix ans.

NPT 36. La femme mariée adultère qui cesse de pécher fera pénitence pendant sept ans devant la porte de l'église, puis pendant trois ans avec les auditeurs.

NPT 37. Ceux qui commettent l'adultère avant leur mariage, puis se marient feront pénitence pendant trois ans devant la porte de l'église, puis pendant un an avec les auditeurs.

NPT 39. Celui qui couche avec la mère de sa femme fera pénitence pendant dix ans.

NPT 40. Celui qui commet un adultère puis épouse la même femme fera pénitence pendant trois ans.

B. La zoophilie et l'homosexualité

CPC 2. Les zoophiles mâles ou femmes qui se souillent ou sont souillés avec des animaux, seront retranchés de l'Église jusqu'à leur mort ou bien seront exécutés ainsi que les lois du Seigneur l'ordonnent.

CPC 8. Celui qui s'est souillé ou qui se souille avec un mâle devrait être exécuté

իսկ եթէ գտցի ոք զարու պղծեալ կամ պղծէ անզգամութեամբ, մահ վախճանեսցէ նմա տէրունական աւրէնքն: Այլ ներէ զայս դատաստան՝ կատարեալ եւ սուրբ եկեղեցի, այլ ի ձեռնադրութիւն գալոյ ի բաց թքցի, զի զեղծիչ աւրինաց տեսցի: Իսկ եթէ պատրանաւք յումեքէ խաբեալ, որպէս թէ ոչ մեղք իցեն եւ ի միտս իւր եկեալ թէ խաբեցաւ, յետ բազում կրաւնից՝ տէրունեան հաղորդութեանն լիցի արժանի:

ՀԱՅ ԺԱ. Որ ընդ կանայս աւրկունս շնայցէ, որպէս զանասնապիղծսն է. նոյնպէս եւ կանայք ընդ արս աւրկացեալս, զի որպէս ընդ մեռելոյ պղծութիւն հաշուիցի եւ զչար ցանկութիւն նոցա քննեսջիր, զի ծնունդք նոցա աւրուկս ծնանին:

ՆԻԿ ԺԸ. Վասն այնոցիկ որ արուագէտք են, կցորդք են այնոցիկ որ պղծին ընդ անասունս եւ ապաշխարութիւն նոցին ի վերայ եղիցի. այլ եթէ քահանայ ոք ըմբռնեսցի յախտին՝ ելցէ ի քահանայութենէն, եւ եթէ յուխտի մանկանց՝ ի կարգէն ելցէ, եւ ապաշխարութիւն անասնագիտացն ի վերայ եղիցի:

ԱՆԿ ԺԷ. Վասն այնոցիկ ոյք ընդ անասունս պղծեցան, զի թէ ի կուսութեան ոք գործեաց զպղծութիւնն, որպէս թէ ինգետասան ամեան իցէ՝ ԺԵ. ամ ընդ ունկնդիրս կացցէ եւ Ե. ամ ընդ ձեռամբ, հայելով եւ քննելով զապաշխարութիւնն թէ արտասուաւք, ջերմեռանդն սրտիւ զղջանալով, քաւելով զմեղսն տրաւք տնանկաց, հաղորդելոյ արժանի լիցի յաւրէնսն: Ապա եթէ ի կատարման հասակի իցէ՝ որպէս թէ ի Ի. ամեանս, Ի. ամ ընդ ունկնդիրս կացցէ եւ Ե. ամ ընդ ձեռամբ: Եւ եթէ յամեալ իցէ ի մեղսն՝ յաւելցեն յապաշխարութիւնն, քննեսցի ըստ ջերմութեանն տրաւք տնանկաց, հաղորդեսցի աւրինաց: Ապա եթէ կին ունիցի եւ զգործ պղծութեանն գործիցէ՝ մինչեւ ի վախճան անձին իւրոյ ընդ ունկնդիրս կացցէ հեծեծանաւք եւ հառաչանաւք, եւս տրաւք տնանկաց: Կամ եղեւ մեծ ժողովոյն վասն մարդասիրութեանն Աստուծոյ յելս անձին իւրոյ զետին թոշակն տայցեն, եւ անասունն թէ յուտելեաց իցէ՝ զկաթն եւ զշաղիղն շունք կերիցեն:

ԱՆԿ ԺԸ. Ոյք բծաւոր էին եւ բիծ ինչ ունէին, այսինքն պիսակութիւն կամ այլ ինչ ախտ որ փոփոխելով իցէ, իբրեւ նենգութեամբ մերձեցան յայլս, զի վնասեսցեն ումեք, այսպիսիքն ընդ դիւահարս կացցեն:

ԳՐԻ ԺԱ. Իգացելոցն՝ Գ. ամս արտաքոյ եւ Ա. ի ներքս:

ԳՐԻ ԺԹ. Չէ մարթ քրիստոնէից նկատել զխառնս անասնոց, առաւել կանանց, պատուիրեն աւրէնք. եւ որ գտցի ոք՝ նզովեալ լիցի:

ԲԱԿ ԼԲ. Որ զառականս իւր ընդ արուս անցուցանիցէ, սահմանեսցի ի վերայ նորա ժամանակն այնպէս, որպէս ի շնութիւնսն զանաւրէնութիւնսն գործեն:

ԹՍՎ Բ. Որ երեսնամեայ է եւ ընդ անասնոյ պղծի՝ քարկոծեցէք զնա, ասէ, այլ այժմիկ ապաշխարեսցէ զամենայն աւուրս կենաց իւրոց, եւ յաւուր մահուան իւրոյ խառնեսցի:

selon les lois du Seigneur. Mais bien que l'Église lui fasse grâce de cette peine, il ne pourra toutefois être ordonné. Et s'il a été trompé par quelqu'un qui l'avait convaincu qu'en agissant ainsi il ne pêchait pas et qu'il comprend cela, il pourra accéder à la communion après de nombreuses privations.

CPC 11. Celui qui commet un adultère avec une lépreuse est équivalent au zoophile; de même, la femme qui couche avec un lépreux est comme celle qui se souille avec un cadavre, et ne vois-tu pas que les enfants issus de leurs rapports naîtront lépreux ?

NIC 18. Les homosexuels sont équivalents aux zoophiles et ils seront soumis à la même pénitence que ces derniers; mais si un prêtre ou un clerc est pris en flagrant délit de ce vice, il abandonnera son sacerdoce ou son ordre et subira la pénitence des zoophiles.

ACY 17. Celui qui se souille avec des bêtes en étant vierge et est âgé d'environ quinze ans par exemple, se tiendra pendant quinze ans avec les auditeurs, et pendant cinq ans il sera sous surveillance, et on examinera sa pénitence, et s'il se repent avec un cœur fervent et des dons aux pauvres, il pourra communier. Mais s'il est adulte – autour de vingt ans par exemple –, il se tiendra pendant vingt ans avec les auditeurs, et pendant cinq ans il sera sous surveillance, et s'il s'est obstiné dans le péché, on ajoutera de la pénitence, on examinera la ferveur et par des dons aux pauvres, il participera à la communion. Mais s'il est marié, il se tiendra avec les auditeurs jusqu'à sa mort dans les soupirs et avec des dons aux pauvres. Mais le concile a décidé qu'il pourra – en raison de l'amour de Dieu pour les hommes – recevoir à sa mort le viatique, quant à la bête, si elle est comestible, les chiens en mangeront le lait et le cadavre.

ACY 18. Ceux qui étaient contaminés et avaient une tache, par exemple de lèpre ou quelque autre mal qui se communique, et qui se sont approchés des autres par ruse pour leur nuire se tiendront avec les possédés.

GLI 11. Les efféminés se tiendront trois ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants.

GLI 19. Les chrétiens, et tout particulièrement les femmes ne doivent pas observer des accouplements d'animaux; et celui qui sera trouvé ainsi sera anathématisé.

BAC 32. Le mâle qui a des rapports sexuels avec des mâles subira le même temps de pénitence que celui prévu pour les adultères.

SEW 2. Celui qui est trentenaire et se souille avec des bêtes, «lapidez-le» est-il dit ! Mais à présent, qu'il fasse pénitence tout le reste de sa vie, afin de pouvoir communier au jour de sa mort.

ԹԱՏ Ի. Հարցումն. Որ ընդ արուի պղծի՝ զինչ առնելի է այսպիսին:

Պատասխանի. Թէ ոք պղծի ընդ արուի, պիղծ է այսպիսին. զամենայն աւուրս կենաց իւրոց. ապաշխարեսցէ արտաքոյ եկեղեցւոյն, եւ ի ժամանակի որոշմանն հաղորդեսցի:

ԹԱՏ ԻԷ. Հարցումն. Որ պիղծ ընդ անասնոյ զինչ արասցուք:

Պատասխանի. Որ ընդ անասնոյ պղծի՝ որչափ ամք են մարդոյն՝ ընդ ունկնդիրսն կացցէ, ապա Ե. ամ ընդ ձեռամբ, ապա մտցէ յեկեղեցի ընդ ժողովուրդսն, եւ ի վախճանին հաղորդեսցի:

ԿԵՆ ԻԶ. Պարտ է զպոռնկացեալսն ընդ անբան կենդանիսն յետ մկրտութեանն՝ ԺԵ. ամ ապաշխարել եւ այսպէս աղաւթակից լինել: Ապա եթէ ամուսնացեալք իցեն՝ ԻԵ. ամ. եւ այսպէս ի վախճանի կենացն հաղորդեսցին:

ԲԳԿ Թ. Որ զառականս ընդ արուս անցուցանէ՝ եղիցի ի վերայ նորա ժամանակ այն որ ի շնութիւնս զանաւրէնութիւնս գործեն, Գ. ամ ապաշխարեսցէ ընդ ունկնդիրսն, Ա. ամ՝ ընդ ձեռամբ:

ԲԳԿ ԼԶ. Որ ընդ կանայս ուրկացեալս շնայ՝ որպէս ընդ անասնոյ է, նոյնպէս որ ընդ արս ուրուկս շնայ՝ որպէս ընդ մեռելոյ շնայ, նոյնպէս եւ ընդ մարմնազեղծս եւ ընդ այսահարս:

ԲԳԿ ԽԱ. Կին որ յանասուն մատչի պղծիլ ի նմանէ՝ կցորդ է նա անասնազանցի:

ԲԳԿ ԽԶ. Այր եթէ ննջիցէ ընդ կնոջ իւրում արուագիտութեամբ, ըստ առաքելոյն որ ասէ. «Թողեալ զպէտս բնականս, բորբոքեցան ի պէտս անբնականս» (Հռոմ. Ա, 26), թէ ի զղջումն եկեսցէ՝ ԺԵ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ե. ամ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց եւ արտասուաւք, թէ լիցի յետին թոշակին արժանի. բայց վարդապետն հայելով ի վարսն՝ իշխան լիցի կարճել զպատիժն: Նոյն կանոն եւ կնոջն եղիցի:

ԲԳԿ ՂԶ. Իգացելոյն՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ա. ամ՝ ընդ ձեռամբ, բազում արտասուաւք արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ճԻԶ. Ոչ է արժան կնոջ մատչել եւ նայել յանասունս, յորժամ մերձենան յիրեարս, կամ համբուրել. եւ եթէ ոք յամարձակի՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ճԽԴ. Որ պղծեն զբերանս իւրեանց դատարկ բանիւք եւ հայհոյեն զՍուրբ Հոգին որ բնակեալն է ի մարդն՝ նոքա եւ զմարդ պղծեն եւ անասնիւ, եւ զպատկեր Աստուծոյ ի շան պատկեր ասեն. կցորդ են այնոցիկ որ ընդ անասունս պղծեցան, բայց քահանայն իշխան է զոր ինչ կամեսցի:

ԲԳԿ ճԽԵ. Որք յաւժարեցան յարուագիտութիւն եւ ոչ անկան ի գործն եւ յայլոց գիտութենէ զերծան՝ կցորդ են գործելեացն, բայց ապա վասն չարեացն ի գլուխ

THD 20. Celui qui se souille avec un mâle fera pénitence durant toute sa vie afin de pouvoir communier à la fin de celle-ci.

THD 27. Celui qui se souille avec des animaux se tiendra avec les auditeurs autant d'années que son âge, puis il se tiendra pendant cinq ans sous surveillance, puis il entrera avec les fidèles dans l'église et il pourra communier à sa mort.

SCN 26. Ceux qui ont forniqué avec des bêtes après le baptême feront pénitence pendant quinze ans, puis participeront aux prières; mais s'ils sont mariés, ils feront pénitence pendant 25 ans, afin de pouvoir recevoir la communion à la fin de leur vie.

ECB 9. Celui qui se souille avec un mâle supportera le même temps de pénitence que celui réservé aux adultères, il fera pénitence pendant trois ans avec les auditeurs et un an sous surveillance.

ECB 36. Celui qui commet l'adultère avec des femmes galeuses est identique au zoophile, et celle qui commet l'adultère avec des galeux est identique à la nécrophile, de même que ceux qui commettent l'adultère avec des estropiés ou des possédés.

ECB 41. La femme qui s'approche d'un animal et est souillée par lui sera associée aux zoophiles.

ECB 46. L'homme qui pratique la sodomie avec son épouse – ce qui est condamné par la parole de l'Apôtre (Rm 1, 26) – puis éprouve des regrets fera pénitence pendant quinze ans avec les auditeurs, puis pendant cinq ans sous surveillance, et par des dons aux nécessiteux et des larmes, il pourra recevoir le viatique; mais le *vardapet* peut raccourcir sa peine. Le même canon s'applique à l'épouse.

ECB 96. L'efféminé se tiendra pendant trois ans avec les auditeurs, puis pendant un an sous surveillance et par de nombreuses larmes, il pourra communier.

ECB 126. Les femmes qui s'approchent, qui regardent ou qui embrassent les animaux quand ils s'accouplent seront anathématisées.

ECB 144. Ceux qui souillent leur bouche par des paroles inutiles et profèrent des blasphèmes contre le Saint-Esprit qui habite dans chaque homme, souillent eux-mêmes les hommes en les assimilant aux animaux, et disent que Dieu a l'image d'un chien; ils sont complices des zoophiles, mais le prêtre pourra les traiter comme il le souhaitera.

ECB 145. Ceux qui souhaitent s'adonner à l'homosexualité mais qui ne passent pas à l'acte – grâce à l'expérience d'autres personnes – seront toutefois associés

չերթալոյ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ա՝ ընդ ձեռամբ. նոյն կանոն եւ որ ընդ անասուն խորհեցան պղծել:

ԲԳԿ ճԽԶ. Որ պոռնիկ ընդ գողի եւ ընդ ուրուկս, կցորդ է այնոցիկ որ ընդ անհաւատս պղծիցին:

ԲԳԿ ՄԺ. Կին կամ այր ցաւագին կամ ախտաժէտ կամ արուագէտ մի՛ իշխեսցէ ամուսնանալ եւ ապականել զպսակն աւրինութեան: Եւ եթէ ոք յանդգնի՝ զկէս ընչից իւրոց տացէ աղքատաց եւ Գ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ՄԿԱ. Իսկ ոմանց՝ ի կանանց կերպարանս երեւին եւ կանանց՝ յարանց կերպս. Եւ զոմանս քաջակալս անուանեն եւ խստագոյն քան զամենեսեան առ այսահարսն ընթանան, զորոց գիտական կոչեն եւ այլ դիմաւք առ ժամանակ մի անգիտութիւն լինի, խոտորին ի պահոց եւ յաղաւթից, եւ ապա յետոյ խստագոյն երեւեալ ըստ բանի Փրկչին՝ «Բնակէ յորդիս եւ յորդւոց որդիս Է. դիւաւք խստագունիւք քան զինքն» (Մատթ. ԺԲ. 45):

ԲԳԿ ՄՀԱ. Որք զանասնախառն բանսն ի բերանսն ունիցին եւ շրթամբք իւրեանց պղծին, մանաւանդ առ աստուածանմանեալ պատկերի, այս չարիք հաւասար է այնոցիկ, որք զՀոգին Սուրբ հայհոյեսցեն, որոց ոչ գոյ թողութիւն. նոքա ի հաղորդութիւն մի՛ մերձեսցին մինչեւ ի վախճան. ապա եթէ դարձցին եւ թողցեն զչարիսն՝ յետ Է. ամի ապաշխարութեան հաղորդեսցին աւրինաց: Իսկ եթէ քահանայ գտցի ի չարիսն կամ յուխտէ մանկանց՝ ի կարգէն լուծցին: Արդ՝ եթէ այսմ աղանդոյս գտցին հաղորդ որոշմամբ ըստ վերագոյն ասացելոցդ եւ դառնալով դարձցին անդրէն՝ յետ Ժ. ամի ապաշխարութեան մտցէ ի սուրբ եկեղեցին եւ Բ. ամ ընդ ապաշխարողսն ելցէ աղքատսիրութեամբ, եւ ապա հաղորդեսցի աւրինաց:

Եթէ ի մեր կողմանէս արժանաւորեալ էր աւծութեան եւ ձեռնադրութեան՝ դարձեալ անդրէն ի նոյն աշտիճան արժանաւորեսցի, իսկ եթէ զնոյն ընկալեալ էր՝ դարձեալ երկրորդութեամբ ընկալցի զաւծութիւնն եւ զձեռնադրութիւնն առանց ապաշխարութեան, զի նոցայն ոչ հոգեւորապէս ասի:

ՍԿՆ Գ. Վասն իգացելոց որ արտաքոյ արուացն է պոռնկութիւն՝ Դ. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԼԵ. Վասն արուագիտաց եւ անասնագիտաց. որքան ժամանակս ունին ի մեղս, այնքան ամս ապաշխարեսցեն. եւ թէ յամեալ իցեն՝ յաւելցեն եւ յապաշխարութիւնն:

ԿԿՄ Զ. Որք զբերանս իւրեանց պղծեալ են դատարկ բանիւք եւ զՀոգին Սուրբ հայհոյեն, նոքա են փողք սատանայի որ հալածեն զհրեշտակսն որ պահապան են մարդկան, զի որք զհայր եւ զմայր կոչեն յապականութիւն՝ նոքա եւ զեկեղեցի եւ զքահանայ զրպարտեն. իսկ որք ի գազանս եւ յանասունս յանդգնին, նման են այնոցիկ որ ընդ դեւս յախտին եւ որ զպատկեր Աստուծոյ ի շան կերպարան դարձու-

à ceux qui sont passés à l'acte, mais du fait qu'ils n'ont pas commis le crime, ils se tiendront pendant sept ans avec les auditeurs, puis pendant un an sous surveillance; le même canon s'applique à ceux qui avaient projeté de se souiller avec une bête.

ECB 146. Celui qui fornique avec un teigneux ou un galeux est identique à ceux qui se souillent avec les animaux.

ECB 210. L'homme - ou la femme - malade, infirme ou qui pratique la sodomie n'aura pas le droit de se marier. Et s'il ose le faire, il donnera la moitié de ses biens aux pauvres et fera pénitence pendant trois ans.

ECB 261. S'agissant de ceux qui prennent l'apparence de femmes et de celles qui prennent l'apparence d'hommes; et ceux qui se prétendent vertueux et traitent plus durement que quiconque les possédés, ceux qui se prétendent savants et, en d'autres circonstances se montrent ignorants, qui repoussent les jeûnes et les prières et ensuite se montrent sévères selon la parole du Sauveur «Sept esprits méchants s'établiront dans ses fils et ses petits-fils» (Mt 12, 45).

ECB 271. Ceux qui évoquent la bestialité en parole, notamment en évoquant l'image de Dieu, sont équivalents à ceux qui outragent le Saint-Esprit et ils seront exclus de la communion jusqu'à leur mort; mais s'ils se convertissent et expient leur crime, ils communieront après sept ans de pénitence. Mais si c'est un prêtre ou un clerc – qui se trouve dans cette secte –, il sera déposé de son rang et après s'être converti, et avoir fait pénitence pendant dix ans, il rentrera à l'église, puis pendant deux ans, il sortira avec les pénitents et par l'amour envers les pauvres, il pourra communier.

S'il avait été considéré par nous (*i.e.* Basile de Césarée) comme digne de l'onction et de la consécration, après s'être converti, il retrouverait son rang en recevant une seconde onction et une seconde consécration sans faire pénitence.

NPT 3. L'efféminé qui ne tombe pas dans la fornication avec un homme fera pénitence pendant quatre ans.

NPT 35. Les homosexuels et les zoophiles supporteront un temps de pénitence équivalent à la durée de leur péché; et s'ils diffèrent leur pénitence, on rallongera le temps de leur pénitence.

CYM 6. Ceux qui souillent leur bouche par des paroles inutiles et profèrent des blasphèmes contre l'Esprit Saint sont les trompettes de Satan qui persécutent les anges, gardiens de l'humanité, car ce sont les mêmes qui vouent leur père et leur mère à la perdition et qui calomnient à la fois l'Église et les prêtres; quant à ceux qui ont l'audace de se comporter comme des fauves ou des bestiaux, ils

ցանեն եւ նմանեցուցանեն. լալով ասեմ, այնպիսին է, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար եւ որք ասենն՝ անգէտք են, վասն որոյ զգուշասցին յանհնարին չարեացն: Բայց քահանայն տեղեկացեալ՝ գանեսցէ առժամայն: Եւ Գ. կապճեան յաղքատս տացէ եւ Յ ծնրադրութիւն, եւ ապա ճաշակեսցէ կերակուր եւ քահանայն իշխան է:

ԿՈՉ Բ. Վասն պոռնկաց. Եթէ ի կուսութեան գիջացաւ, եթէ կանամբի իցէ, եթէ բազում ժամանակս, եթէ բռնաբարեալ զոք, եթէ իգացեալ:

ԿՈՉ Գ. Վասն արուագիտաց. Թէ ի կուսութեան գործեաց, թէ կանամբի իցէ, թէ բազում ժամանակս, թէ ընտանիք իցեն, թէ ի պոռնկութենէ, թէ յանզգայութենէ, թէ ի չարիսն աւրէնս առ:

ԿՈՉ Դ. Վասն անասնագիտաց. Թէ յոր հասակի գործեաց, թէ յուտելեաց իցէ անասունն, թէ կին ունիցի, թէ յամեալ իցէ ի չարիսն:

Գ. Երազախաբութիւն եւ գիջութիւն

ՀԱՅ ԻԳ. Սերմներթութիւնք ի քուն՝ է որ խոտեսցի, է որ ոչ. եւ է այլաշարժութիւնք բազումք, է որ յոյժ ի գիրութենէ է, եւ է որ ի լագութենէ. եւ յոյժ այն է որ ի կրաւնիցն լագութենէ է: Քանզի որ ի գիտութենէ է, եւ նախ մեղք գիրութիւնքն են եւ ապա տարաժամ հոսութիւնքն. այնպիսւոյն՝ վասն երկուց ախտիցն պատկառել պարտ է յահագին խորհրդոյն մինչեւ յերիս աւուրս. զդոյն կանոնեցաք եւ արբեցելոյն որ զնոյն գիջացաւ: Իսկ այլ է որ գոլացուցանէ յինքեան եւ եռացուցանէ յորդոր մտաւք եւ յուրեք հայելով լլկէ զմարմինն եւ զարիւնն հոսեցուցանէ՝ կանոնեցաք նմա զպոռնկին ապաշաւանս, զի որպէս նա այլով մարմնով՝ եւ սա իւրովն զնոյն գարշութիւնս գրգռեցուցանէ: Իսկ որ ոչ գէրք եւ ոչ արբեալք այլ ի քնոյ թուլացեալք հոսեսցին, զառժամայն հառաչութիւնս եւ աղաւթս մատուցանեն եւ զանձինս ի սրբութենէն մի՛ զրկեսցեն: Եւ եթէ ի կրաւնից լագութենէ կամ յախտիցն հոսեսցի ի քուն, զսոյն հառաչութիւնս առնել բարիոք երկիւղածութիւն է, բայց զանձն ի սրբութենէ մի՛ զրկեսցէ եւ զատուսցէ:

ԳՐԻ Ժ. Որ ի ձիսն յերասանան յագելապէս՝ Գ. ամս արտաքոյ եւ Ա. ի ներքս:

ԹԱՏ ԺԹ. Հարցումն. Որ հեղու զինքն զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Թէ ոք անժուժկալաբար լլկէ զինքն եւ հոսումն արասցէ մարմնոյն, պիղծ է այնպիսին, ընդ շնացելոյն ապաշխարեսցէ. եւ եթէ յաւելեալ իցէ ի գործն՝ կրկին ապաշխարեսցէ, եւ այնպիսիքն ձեռնադրութեան մի՛ լիցին արժանի:

ԲԳԿ ԼԵ. Սերմներթութիւնք ի քուն՝ Է որ խոտելի է եւ Է որ անմեղադրելի է, զի թէ ի մտի դնէ պոռնկել ընդ ումեք եւ կամ մաքառին ընդ իւրեանց մարմինս եւ ապա ընդ քուն անցանէ՝ համարեալ է նմա ընդ պոռնկին: Ապա եթէ յանհոգս առնի եւ անցանէ՝ առանց պատժոց է, զի սովորութիւն է մարմնոյ եւ հարկ է անցանել:

sont pareils à ceux qui se souillent avec les démons et qui transforment, et font ressembler l'image de Dieu à une apparence de chien. Du fait que de tels hommes foulent aux pieds le Fils de Dieu et ne savent pas ce qu'ils font, on les ramènera à la raison par de terribles souffrances. Mais le prêtre qui était au courant de cela fera immédiatement battre le coupable. Et celui-ci donnera trois boisseaux aux pauvres et fera 300 génuflexions, et alors, il pourra se nourrir si le prêtre l'y autorise.

APR 2. À propos des fornicateurs. Celui qui se masturbe alors qu'il est vierge, celui qui fait cela en étant marié pendant une longue période, celui qui viole quelqu'un, celui qui est efféminé.

APR 3. À propos des homosexuels. Celui qui est vierge, qui est marié, qui pratique depuis longtemps, qui a une famille, qui pratique par désir de fornication, par absence de conscience, qui reçoit la communion en dépit de son crime.

APR 4. À propos des zoophiles. Celui qui commet cela alors qu'il est adulte, pendant qu'il nourrit les animaux, qui pratique ce crime depuis longtemps.

C. Les pollutions nocturnes et la masturbation

CPC 23. L'écoulement de sperme durant la nuit est condamnable dans certains cas et pas dans d'autres. Du fait du trop-plein dû à la continence ou de la libido, il se produit des mouvements et des écoulements incontrôlés; ceux qui en sont victimes seront retranchés de l'eucharistie jusqu'à trois jours, à l'instar de ceux qui, après avoir bu, sont victimes de pollutions nocturnes. Mais celui s'échauffe volontairement et maltraite son corps au point de faire couler son sang subira la pénitence des fornicateurs. Mais ceux qui ne souffrent pas de trop-plein ou qui n'ont pas bu et qui étant victimes d'écoulements nocturnes, poussent immédiatement des soupirs, et offrent des prières ne seront pas retranchés des sacrements.

GLI 10. Celui qui se masturbe à cheval tout son soûl se tiendra trois ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants.

THD 19. Celui qui tourmente son corps et provoque des écoulements devra, du fait qu'il est souillé, faire pénitence avec les adultères; et s'il réitère le même acte, il fera à nouveau pénitence et ne pourra pas être consacré.

ECB 35. Certaines pollutions nocturnes sont condamnables et d'autres pas, celui qui durant son sommeil s'imagine forniquer avec quelqu'un ou qui se débat avec son corps et est victime d'écoulements sera considéré comme un fornicateur. Mais celui qui se couche paisiblement et est victime de pollution ne sera pas puni, car de telles

ԿՈՉ Բ. Վասն պոռնկաց. Եթէ ի կուսութեան գիջացաւ, եթէ կանամբի իցէ, եթէ բազում ժամանակս, եթէ բռնաբարեալ զոք, եթէ իգացեալ:

Դ. Դաշտան, ամսական

ՓԻԻ Զ. Կանանց որ ըստ ամսական սահմանացն լինիցի՝ ըստ ապականածնութեան արեան, այրն մի՛ մերձեսցի ի նա ամուսնանալով. ապա եթէ մերձեսցի՝ նզովեալ եղիցի:

ՍԿՆ ԺԸ. Վասն որ ի կանանց աւրինի են եւ անխտիր կան եւ չհամարին ինչ՝ Դ. ամ ապաշխարեսցեն:

5. Այլ մեղքեր

Ա. Երդում. երդմնազանց եւ հայհոյիչ

ԿԱՌ ԺԵ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ որ սուտ երդնու կամ սուտ վկայէ եւ կամ որ երթայ առ կախարդս եւ հարցուկս, եւ քաւդեայս, եւ վհուկս, եւ հաւատայ ծննդոց եւ աստեղագիտութեանց, իբրեւ զայնոսիկ որ անաստուածքն են՝ խափանեսցինա իբրեւ զանաստուած ի քահանայութենէ, եւ մի՛ խառնեսցի ի պաշտաւն եկեղեցւոյ, եւ եթէ ժողովրդական ոք իցէ՝ մերժեսցի ի բաց:

ԿԵՍ Ժ. Վասն գողոց, աւազակաց, մարդասպանաց եւ որ գաղտնի մահաբեր դեղովք անողորմ խողխողեն զորդիս մարդկան եւ որք հրով կիզուն եւ հրդեհեն զվաստակս եւ զշինուածս ոմանց մարդկան եւ մեծամեծ աւճիրս եւ բազում հարուածս, բազմադիմի եւ ազգի ազգի չարիս ածեն որդւոց մարդկան, նոքա եւ զարիւն արդար հեղուն, նոքա եւ զսրբութիւնս կործանեն, նոքա եւ զմանկունս եկեղեցւոյ խողխողեն, նոքա եւ զհայհոյութիւն ի բարձունս ձգեն, զայսպիսիս աւրէնքն եւ առաջին կանոնքն սպանանել հրաման ետուն, զի եւ այլքն խրատեսցին, եւ արժանի են մահու թէ ի չար գործոցն ոչ դարձցին. ապա եթէ քան զըմբռնելն յառաջ եւ ի չարչարանս արկանել ինքնին ի խոստովանութիւն եկեսցէ եւ ի չար գործոցն ամենեւին ի բաց կացցէ՝ կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյն զամենայն ինչ ընդ ապաշխարութեամբ արկանել, զի ուղիղ ապաշխարութիւն, թէ եւ մերձեալ լինի ի դրունս դժոխոց, կորզէ ի բաց, որպէս զԵզեկիայն: Ապաշխարութիւն զինոցն ի ցաւդ դարձուցանէ, պահք եւ աղաւթք զբերանս առեւծուց սանձեն. քանզի ջերմ արտասուք եւ ապաշխարութիւն զմարդիկ ընդ հրեշտակս խառնեն եւ զհրեշտակս՝ ընդ մարդիկ, որպէս եւ Տէրն տերանց թողեալ զբազում հաւտսն որ յերկինս զմիոյ ոչխարիս զմարդկութեանս զհետ ընթանայր եւ ասէր թէ «Ուրախութիւն է հրեշտակաց ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ եւ ապաշխարեցելոյ» (Ղուկ. ԺԵ. 10): Արդ՝ եթէ դարձին այսպիսի չարագործքն, զոր պատմեցաք ձեզ, սրտի մտաւք եւ յաւժարութեամբ ի խոստովանութիւն եւ ի դարձ փրկութեան եկեսցեն եւ զհին խմորն զայտումն մեղացն ցածուսցեն եւ ի նոր զանգուած եկեսցեն ջերմ արտասուաւք եւ գթով

choses sont habituelles pour le corps et sont inévitables.

APR 2. À propos des fornicateurs. Celui qui se masturbe alors qu'il est vierge, celui qui fait cela en étant marié pendant une longue période, celui qui viole quelqu'un, celui qui est efféminé.

D. Les menstruations, les règles

PHI 6. L'homme qui s'unit à sa femme pendant qu'elle a ses règles sera anathématisé.

NPT 18. Ceux qui couchent avec leurs femmes pendant qu'elles ont leurs règles feront pénitence pendant quatre ans.

5. Les autres péchés

A. Le serment, le parjure et les blasphémateurs

CAP 15. Les prêtres qui prêtent un serment mensonger, qui font un faux témoignage ou qui vont chez les sorciers, les devins, les Chaldéens, les enchanteurs, qui croient dans les horoscopes et à l'astrologie à la manière des athées seront exclus du sacerdoce et s'il s'agit d'un laïc, on le retranchera de la communion.

CES 10. Les voleurs, les bandits, les assassins, ceux qui en secret recourent au poison pour tuer les enfants des hommes, les incendiaires qui brûlent les travaux et les édifices de certains, ceux qui infligent des coups, des maux et de graves préjudices aux enfants des hommes, qui versent le sang juste, renversent les choses saintes et blasphèment contre Dieu ont été – s'ils n'arrêtent pas leurs mauvaises actions – condamnés à mort par la Loi et les premiers canons, afin de servir d'exemple aux autres (1 Tm 1,20). Mais si avant d'être exécutés, ils passent aux aveux et cessent leurs mauvaises actions, le concile a décidé de les soumettre à la pénitence jusqu'à leur mort, et grâce à leurs dons aux pauvres, ils pourront recevoir le viatique (Is 38; Dn 3,50; Lc 15,10; 1 Co 5,7; Dn 4,24, 29). Pour tous ces énormes péchés, la pénitence est uniforme; mais s'ils font preuve d'ardeur dans leur pénitence, le *vardapet* observant leurs actions et en les exhortant pourra faire preuve de charité: ils se tiendront près de la porte avec les auditeurs pendant quinze ans et, pendant cinq ans, ils participeront aux prières sous surveillance, puis ils communieront si c'est l'avis du prêtre.

տնանկաց, քանզի եւ մեծ մարգարէն Դանիէլ բողոքէր առ թագաւորն, զի զմեղս քո ողորմութեամբ քաւեա եւ զանաւրէնութիւնս քո գթով տնանկաց նորափետուր զարդարեսցին, ընդունի զնոսա կանոնս. բայց ապաշխարութիւն յայտ լիցի, քանզի թագաւորն այն Ե. ժամանակ արածեցաւ ընդ անասունս, քանզի ամենայն մեծամեծ մեղացդ, զոր շարեցաք ի կարգի եւ ցուցաք ձեզ ապաշխարութիւն, միագոյն է մի աւրինակաւ, թէ գայթ ի գայթ ինչ իցէ ի վախճանի իւրեանց ընկալցին զյետին թոշակն. ապա եթէ ջերմեռանդն սրտիւ հայեցեալ վարդապետին եւ քննեալ զգործս նոցա եւ զխորհուրդս սրտից նոցա, ներելով արասցէ եւ զյորդորումն եւ զսէր մի՛ արգելցէ, ԺԵ. ամ ի դրունս ունկնդրաց եւ Ե. ամ հաւասարեսցէ ընդ ձեռամբ աղաւթից, ապա հաղորդեսցի աւրինաց եթէ կամք իցեն երիցուն (հմմտ. Ես.ԼԸ; Դան. Գ. 50, Դ. 24, 29; Ղուկ. ԺԵ. 10; Ա. Կորնթ. Ե. 7):

ՀԱԹ ԽԶ. Հարցումն. Թէ դատաստան ինչ լինի ընդ քահանայ եւ ընդ այլ ոք ի մարդկանէ եւ երդումն ի քահանայն կրթեսցի, վասն բազում կարասւոյ, որ զրպարտեն զնա եւ ոչ գտանէ ուրեք զգինս երդմանն տալ վասն աղքատութեան իւրոյ եւ ոչ դատախազքն հաւանին սակաւ կարասեաւ եւ ոչ ընտանւոյ ումեք երիցուն առնուցուն յանձն երդումն տալ ընդ նորա, իբրեւ բռնադատիցի եւ երդնու արդար, պարտ է անխիղճ կալ ի նմին քահանայութեանն, թէ ոչ:

Պատասխանի. Ոչ է պարտ երդնու եւ եթէ երդնուլ, զքահանայութիւնն ոչ է պարտ առնուլ:

ՀԱԹ ՀԶ. Հարցումն. Վասն պահապանաց. երդմունս իմն եւ պահպանութիւնս գրեն եւ անուանս ազգի ազգիս, զոր մեք ոչ գիտեմք պարտ է համարձակ թողուլ զնոսա՝ առնել զայն, թէ նզովել եւ կարճել:

Պատասխանի. Նզովել պարտ է եւ յեկեղեցւոյ եւս հանել:

ՀԱԹ ՁԴ. Հարցումն. Թէ ուրուք կարասի կորիցէ եւ խնդիր առնիցէ պանիր իմն երդմնեցուցանեն եւ տան ծամել եւ ասեն, թէ որոյ գողացեալ է չկարէ կլանել, այլ ի բերանն աճէ եւ կռուի եւ այնու յայտնի լինի գողութիւնն, պարտ է քրիստոնէից զայն առնել, թէ ոչ:

Պատասխանի. Որպէս վերագոյնն ասացաք, թէ ոչ է պարտ առնել, զի ամենայն ի կախարդութենէ է:

ԲԱԿ Զ. Իսկ որ երդնուցուն ոչ կամելով առնուլ զձեռնադրութիւնն յանձն, այսպիսիքն մի՛ հարկաւորեսցին երդմնաւորք լինել, զի թէպէտ եւ ոմանց հաճոյ թուեցաւ այս, այլ կանոնք եկեղեցւոյ ոչ ներեցին յայսպիսի ինչ իրս յանդգնել:

ԲԱԿ Լ. Իսկ եթէ ոք երդմնախոր գտանիցի՝ Ժ. ամ առանց հաղորդութեան կացցէ եւ զԵ. ամ լալով եւ արտասուաւք եւ գերիս ամս առաջի անկանելով ժողովրդեանն եւ տարի մի ընդ այլս կացցէ եւ ապա հաղորդեսցի:

ԲԱԿ ԽԵ. Եթէ ոք աւելի քան զայո կամ զոչ, այլ երդումն երդնուցու, եւ սա որ-
շեսցի շաբաթ մի:

QCA 46. Si un prêtre est en procès avec quelqu'un et qu'on réclame qu'il prête serment à propos de biens importants au sujet desquels on le calomnie, et qu'en raison de sa pauvreté il ne parvient pas à trouver les sommes nécessaires pour s'exempter du serment, et que les juges n'acceptent pas une somme moindre de sa part, et qu'aucun de ses parents n'acceptant de prêter serment à sa place, il est contraint de prêter un serment honnête, il ne pourra pas garder la prêtrise.

QCA 76. Ceux qui rédigent des phylactères et prêtent des serments, et conservent des notes comprenant des noms que nous ne connaissons pas seront maudits et retranchés de l'Église.

QCA 84. Si quelqu'un qui a égaré des biens diligente une enquête et que certains jurent sur un morceau de fromage, et le donnent à mâcher à la personne qu'ils suspectent en disant que le fromage grossira et s'accrochera dans la bouche du voleur qui sera ainsi clairement démasqué, tout ceci, comme nous l'avons déjà dit, n'est que de la sorcellerie et aucun chrétien ne doit faire cela.

BAC 6. Même si certains l'acceptent, il ne faut pas obliger à devenir parjures ceux qui ont juré de ne pas se faire ordonner, car les canons de l'Église n'accordent aucun pardon dans de tels cas.

BAC 30. Celui qui commet un parjure devra rester dix ans sans communier et pendant cinq ans il se tiendra en pleurant avec des larmes, et pendant trois ans, il se prosternera face à l'assemblée, puis il restera pendant un an parmi les autres fidèles, puis il communiera.

BAC 45. Celui qui prête un serment en disant plus que «oui» ou «non» sera exclu pendant une semaine.

ԲԳԿ Է. Եթէ ոք երդնու ուրացութեամբ՝ ԺԵ. ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ Ա. ամ՝ առ դրանն, հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ճԽԴ. Որ պղծեն զբերանս իւրեանց դատարկ բանիւք եւ հայհոյեն զՍուրբ Հոգին որ բնակեալն է ի մարդն՝ նոքա եւ զմարդ պղծեն եւ անասնիւ, եւ զպատկեր Աստուծոյ ի շան պատկեր ասեն. կցորդ են այնոցիկ որ ընդ անասունս պղծեցան, բայց քահանայն իշխան է զոր ինչ կամեսցի:

ԲԳԿ ճՅԹ. Քահանայ մի՛ թողցէ զոք յերդումն յեկեղեցի ամենեւին եւ մի՛ ճրագ անցուցանել եւ լինել ուրացող. եւ եթէ ոք յանդգնի՝ եղիցի ընդ խաչահանուսն Քրիստոսի, զի դատաւորքն իշխանք են եւ ոչ քահանայք:

ԲԳԿ ՄԱ. Թէ ոք զիւր ինչս արատաւոր տացէ ընկերի իւրում ի պատճառս վաճառու, եւ նենգութեամբ զրկէ սուտ երդնելով, եւ ինքն գովի յանձին իւրում, վասն զրկելոյ զեղբայրն՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ՄԿԸ. Որք բանիւ Աստուծոյ աներկեւան երդմամբ դաշն խաղաղութեան հաստատեն վասն առ թշնամիս պատերազմողս՝ առ հաւատացեալս կամ առ հեթանոսս, եւ յետ այսորիկ ուխտադրուժ գտան դաշանցն եւ սպանին զնոսա եւ կամ ետուն ի ձեռս բարբարոսաց կամ յետս կացուցին ի հաւատոյն՝ այս չարիք եւ աղէտք հաւասար են այնոցիկ, որք ուրացան զՔրիստոս. Պարտ է նոցա զամենայն ժամանակս ապաշխարել, զի կրկին ընկալցին զսպանողացն զդատաստանս, զի որով բանիւ փրկեցան արարածք, զնոյն բան դեղ մահու նիւթեցին:

ՍԿՆ Ի. Վասն գողոց, աւազակաց եւ մարդասպանաց եւ որ հրով կիզուն եւ արիւն արդար հեղուն եւ հայհոյեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ե. ամ ընդ աւրինաւք ապաշխարեսցեն:

ԿԿՄ Զ. Որք զբերանս իւրեանց պղծեալ են դատարկ բանիւք եւ զՅոգին Սուրբ հայհոյեն, նոքա են փողք սատանայի որ հալածեն զիրեշտակսն որ պահապան են մարդկան, զի որք զհայր եւ զմայր կոչեն յապականութիւն՝ նոքա եւ զեկեղեցի եւ զքահանայ զրպարտեն. իսկ որք ի գազանս եւ յանասունս յանդգնին, նման են այնոցիկ որ ընդ դեւս յախտին եւ որ զպատկեր Աստուծոյ ի շան կերպարան դարձուցանեն եւ նմանեցուցանեն. լալով ասեմ, այնպիսին է, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար եւ որք ասենն՝ անգէտք են, վասն որոյ զգուշասցին յանհնարին չարեացն: Բայց քահանայն տեղեկացեալ՝ գանեսցէ առժամայն: Եւ Գ. կապճեան յաղքատս տացէ եւ Յ ծնրադրութիւն, եւ ապա ճաշակեսցէ կերակուր եւ քահանայն իշխան է:

ԿՈՉ Ը. Վասն գողոց. Թէ սարահատ է, թէ տնահատ է, թէ զաղքատս կողոպտեաց, թէ զայլոյ գիտաց եւ ոչ ասաց, թէ յուրացութիւն անկեալ, թէ գրաւեցաւ, թէ երդուաւ եւ զեղբայրն ի մահուանէ փրկեաց, թէ երդուաւ առ սրտին եւ ոչ արար, թէ առ ամաւթոյ երդուաւ:

ECB 7. Le parjure fera pénitence en se tenant pendant quinze ans avec les auditeurs, puis pendant un an à la porte de l'église, avant de pouvoir communier.

ECB 144. Ceux qui souillent leur bouche par des paroles inutiles et profèrent des blasphèmes contre le Saint-Esprit qui habite dans chaque homme, souillent eux-mêmes les hommes en les assimilant aux animaux, et disent que Dieu a l'image d'un chien; ils sont complices des zoophiles, mais le prêtre pourra les traiter comme il le souhaitera.

ECB 179. Le prêtre ne laissera personne jurer dans l'église ni n'éteindra un flambeau comme un apostat, car les juges peuvent faire cela mais pas les prêtres; mais celui qui laisse faire de telles choses sera compté parmi les crucificateurs.

ECB 201. Celui qui vend un bien défectueux à son ami, par ruse ou en prêtant un faux serment, et se vante de sa tromperie sera anathématisé.

ECB 268. Ceux qui prêtent serment par Dieu pour établir des traités de paix avec des guerriers ennemis croyants ou païens, puis violent le traité et massacrent ces ennemis ou les livrent aux barbares, alors qu'ils s'étaient convertis à la vraie foi, seront identiques à ceux qui ont renié le Christ; ils feront pénitence durant toute leur vie sous peine d'être doublement traduits devant le tribunal des homicides, et les mêmes paroles qui ont sauvé les créatures seront des remèdes contre la mort éternelle.

NPT 20. Les voleurs, les brigands, les homicides, les incendiaires qui versent le sang innocent et insultent Dieu feront pénitence pendant quinze ans à l'extérieur et pendant cinq ans avec les auditeurs.

CYM 6. Ceux qui souillent leur bouche par des paroles inutiles et profèrent des blasphèmes contre l'Esprit Saint sont les trompettes de Satan qui persécutent les anges, gardiens de l'humanité, car ce sont les mêmes qui vouent leur père et leur mère à la perdition et qui calomnient à la fois l'Église et les prêtres; quant à ceux qui ont l'audace de se comporter comme des fauves ou des bestiaux, ils sont pareils à ceux qui se souillent avec les démons et qui transforment, et font ressembler l'image de Dieu à une apparence de chien. Du fait que de tels hommes foulent aux pieds le Fils de Dieu et ne savent pas ce qu'ils font, on les ramènera à la raison par de terribles souffrances. Mais le prêtre qui était au courant de cela fera immédiatement battre le coupable. Et celui-ci donnera trois boisseaux aux pauvres et fera 300 génuflexions, et alors, il pourra se nourrir si le prêtre l'y autorise.

APR 8. À propos des voleurs. Celui qui s'empare d'une terre (litt. d'un sommet), d'une maison, qui dépouille les pauvres, qui savait que quelqu'un allait commettre un vol et qui n'a rien dit, qui s'est renié pour voler, qui a hypothéqué les biens d'autrui, qui a juré de sauver son frère de la mort en volant, qui jure la main sur le cœur et ne tient pas son serment devra se confesser.

Բ. Աւետարանական մեղմութեան եւ ներողամտութեան պահանջ

ԵԱԿ ԾԲ. Եթէ ոք ժառանգաւոր զխուլ կամ զկաղ կամ զկոյր կամ զդէմսն վնասեալ այպանեսցէ՝ որոշեսցի. նմանապէս եւ ժողովրդականք:

ԲԱԿ ԽԱ. Եթէ ոք յանդիմանեսցի ի սխալանս ինչ հանդերձ սիրով եւ ոչ ընկալցի զյանդիմանութիւնն ամենայն երկիւղածութեամբ աղաչելով եւ խնդրելով զթողութիւն յորս մեղաւն՝ եւ սա որոշեսցի շաբաթ մի:

ԲԱԿ ԽԲ. Եթէ ոք գիտակակից եղեւ մեղաց ուրուք եւ ոչ ուղղեսցէ զնա կամ յանդիմանեսցէ խաղաղութեամբ հանդերձ սիրովն Քրիստոսի, այլ տրտմութեամբ իբրեւ մանաւանդ խռովեցուցանել զեղբայրն քան եթէ բժշկել զպատճառս մեղացն՝ ընդ նմա եւ սա որոշեսցի, զոր յանդիմանեացն ի մեղանսն, շաբաթ մի, քանզի իբրեւ զթշնամի եւ ոչ իբրեւ զեղբայր յանդիմանեաց:

ԲԱԿ ԽԳ. Եթէ ոք թշնամանէ կամ ընդդէմ կայ հրամայեալ յեղբաւրէ ըստ կարին եւ ոչ լուիցէ հանդերձ ամենայն խնդութեամբ որ ի Քրիստոս իբրեւ հաւանեցուցանելով զնա, նմանապէս եւ սա որոշեսցի շաբաթ մի:

ԲԱԿ ԽԶ. Եթէ ոք եթող եղբաւր իւրում եւ յետ անցեալ իրացն նախատեսցէ իբրեւ նշաւակելով, եւ նա՛ իբրեւ զանգութ եւ զխանդացող ի չարիս որոշեսցի շաբաթ մի:

ԲԱԿ ԽԵ. Եթէ ոք թողու ումեք զմեղս եւ յետ այնորիկ տեսանէ զնա անխտրաբար բերելով եւ ոչ հանդերձ զոհութեամբ եւ արտասուաւք աղաչիցէ զՏէր, թախանձեցուցանիցէ եւ յիշեցուցանիցէ նմա զըղջանալ եւ ցուցանել զգործս ապաշխարութեան, իսկ եթէ այսոցիկ եղելոցս եւ նա անփոյթ առնիցէ իւրոյ փրկութեանն, որոշեսցի՛ այսպիսիս յեղբայրակցութենէն ամենեւին, քանզի «Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ» (Ա. Կոր. Ե. 6, Գաղ. Ե. 9), ասացեալ սրբոցն:

ԲԱԿ ԽԹ. Եթէ ոք բարկացաւ եղբաւր ի տարապարտուց եւ ոչ առժամայն աղաչեսցէ զեղբայրն իւր, զոր տրմեցոյց, որպէսզի թողցէ նմա զմեղսն զոր մեղաւն ի նա, եւ սա՛ որոշեսցի շաբաթ մի:

ԲԱԿ Ծ. Եթէ ոք թշնամանեցաւ յեղբաւրէ եւ աղաչիցի յեղբայրակցութենէն եւ ոչ թողցէ զմեղսն, յիշելով զասացեալսն՝ եթէ ոք զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ, նոյնպէս եւ մեք մերոց յանցաւորացն պարտիմք թողուլ (Մատթ. Զ. 12), ապա թէ ոչ կամիցի թողուլ՝ նմանապէս եւ սա՛ որոշեսցի յեկեղեցւոյ եւ յեղբայրութենէ շաբաթս երկուս մինչեւ ուղղեսցէ զինքն:

ՎԱՉ Ը. Քրիստոնեայ մարդ որ կռուի եւ արիւն հեղու՝ տարցեն առաջի եպիսկոպոսին եւ ըստ աւրինացն պատուհասեսցեն:

ԲԳԿ ճԹ. Աշխարհական եթէ բամբասէ զքահանայն կամ ապտակէ՝ ընդ խաչա-

B. La douceur évangélique et le devoir d'indulgence

CCL 52. Le clerc ou le laïc qui se moque d'un sourd, d'un boiteux, d'un aveugle ou d'une personne défigurée sera exclu.

BAC 41. Si quelqu'un qui est réprimandé pour une faute avec amour n'accepte pas la réprimande, en suppliant avec piété la rémission de son péché, il sera exclu pendant une semaine.

BAC 42. Si une personne qui est au courant des péchés de quelqu'un ne le corrige ou ne le réprimande pas pacifiquement, mais en l'attristant, l'embarrasse au lieu de guérir les causes de son péché, elle sera exclue pendant une semaine avec celui qu'elle a réprimandé pour ses péchés, car elle l'a réprimandé comme un ennemi et non comme un frère.

BAC 43. Celui qui se querelle et s'oppose ardemment aux instructions de son frère, et n'écoute pas avec joie son exhortation à croire dans le Christ sera exclu pendant une semaine.

BAC 46. Celui qui a pardonné à son frère, puis après un certain temps, le blâme et le diffame sera exclu pendant une semaine, en raison de son manque de miséricorde et de sa rancœur tenace.

YAP 16. Comme pour un premier mariage, il faut recueillir le consentement mutuel de ceux qui se marient une seconde fois par l'intermédiaire d'intercesseurs et d'émissaires, et leur union devra être bénie par les prêtres de l'Église. Mais ceux qui se souillent ensemble avant leur mariage devront se séparer et ils se verront appliquer le canon des adultères. Mais s'ils n'acceptent pas de se séparer, ils ne pourront se mêler à l'Église de Dieu qu'après une pénitence de dix ans accompagnée d'aumônes et de larmes.

CSE 5. Ceux qui entre la Pâques et la Pentecôte et tous les dimanches célèbrent un mariage seront anathématisés; et si la commémoraison des saints survient lors des jours de la Résurrection du Seigneur, elle aura lieu un jour ouvré; si la fête de

Մկրտչին Յովհաննու եթէ ի Յարութեան աւուր յանդիպեսցի՝ անխափան կատարեսցեն, նմանապէս եւ զամենայն մարտիւրոսաց:

ԵՂԻ Ա. Եթէ ոք ի կիւրակէի կամ ի տաւնի կամ յերեւելի աւուր ամուսնանայ ընդ կնոջ իւրում՝ Ը. աւր ապաշխարեսցէ եւ ապա հաղորդեսցի:

ԿԵՆ ՃԶ. Ոչ է պարտ ի Քառասներորդսն կամ յաւուր Պենտակոստէից կամ ի կիւրակէսն յամենայն հարսանիս կատարել:

ԿԵՆ ՃԷ. Ոչ է պարտ քրիստոնէից ի հարսանիս ծափս հարկանել կամ երգս ինչ անպատեհ երգել:

ԿԵՆ ՃԸ. Ոչ է պարտ քահանայից ի հարսանիս կամ ի քաղաքս՝ տեսիլ ինչ ստահակ տեսանել:

ԲԳԿ ԻԲ. Քահանայութիւն Է որ յԱստուածոյ է եւ Է՝ որ ի սատանայէ. զի որ ուրացող է կամ արուագէտ կամ անասնապիղծ կամ պոռնիկ կամ արբեցող կամ ընչասէր կամ մարմնազեղծ կամ արիւնահեղ կամ ագահ կամ անողորմ, եւ լինի քահանայ, այնպիսին ի հաւրէ սատանայէ է. եւ եթէ չեն գիտակ նորա չար գործոցն, թէ որդի սատանայի է նա, մկրտեալն եւ պսակեալն ի նմանէ անմեղադրելի են՝ վասն չգիտելոյ զչարիսն, բայց ամենայն չարիք պատահեն նոցա:

ԲԳԿ ԻԸ. Քահանայ որ լուծեալ է ի կարգէն վասն չար գործոց՝ զմկրտեալն եւ զպսակեալն ի նմանէ պարտ է այլ նորոգել:

ԲԳԿ Լ. Ուխտաւոր մի ճանապարհ ունիցի ի մարմնաւոր կանայս վասն սիրոյ եւ մի տեսցէ զպսակեալս եւ մի ինքն դիցէ պսակ կամ առնիցէ մկրտութիւն կամ աւրէնս տալ կանանց, այլ ի մտանել արեգականն երթալ ի տեղիս իւրեանց. եւ եթէ յանդգնին՝ նզովեալ եղիցին ի Քրիստոսէ:

ԲԳԿ ՂԴ. Քահանայ որ վասն իւր վատ գնացիցին հալածեալ իցէ յեպիսկոպոսէն յայլ վիճակ, եւ անդ զկարգ քահանայութեանն յառաջ ունի, զմկրտեալն ի նմանէ եւ զպսակեալն ընդունել պարտ է եւ զվրէժն յԱստուած թողուլ:

ԲԳԿ ՄԼԷ. Քահանայ առանց քննելոյ պսակ մի դիցէ եւ մի զմարմինն Տեառն ի շաւիղս խոզից արկցէ: Ապա եթէ քննէ եւ ոչ խոստովանին, եւ այլք չյայտնեն զչար գործս նոցա, տացէ զմարմինն Տեառն, զի անպարտ է քահանան ի մեղաց նոցա:

ԲԳԿ ՄԼԸ. Երկրորդացն աւրհնեսցէ քահանայն պսակ առ դրանն եւ դիցէ ի գլուխ նոցա առ դրան եկեղեցւոյն՝ մինչեւ ապաշխարեսցեն եւ արժանի լիցին աւիրնաց:

ԲԳԿ ՄԽ. Իսկ եթէ պոռնիկք իցեն՝ մի թողցէ քահանայն յեկեղեցին, այլ առ դրանն

Jean le Précurseur et Baptiste survient le jour de la Résurrection, on la célébrera sans réserve, de même que l'ensemble des martyrs.

ELI 1. Celui qui se marie un dimanche, un jour de fête ou de solennité fera pénitence huit jours, puis il pourra communier.

SCN 106. Il ne faut pas célébrer des noces pendant le carême ou un jour de la Pentecôte, ou tous les dimanches.

SCN 107. Il ne faut pas que les chrétiens servent dans les noces ou chantent des chansons inconvenantes.

SCN 108. Il ne faut pas que des prêtres, à l'occasion des noces ou en ville, voient des spectacles déshonnêtes.

ECB 22. Le sacerdoce peut être inspiré par Dieu mais aussi par Satan; car l'apostat, l'homosexuel, le zoophile, le fornicateur, l'ivrogne, celui qui aime les richesses, le difforme, le sanguinaire, l'avare ou l'inhumain qui accède à la prêtrise a Satan pour père; mais celui qui est baptisé ou marié par un tel prêtre sans avoir eu connaissance de ses crimes ne sera pas condamné, mais les crimes commis par ce prêtre pourraient retomber sur lui.

ECB 28. Ceux qui ont été baptisés ou mariés par un prêtre qui avait été déposé de son rang, en raison de ses mauvaises actions, devront l'être à nouveau.

ECB 30. Le religieux ne doit pas avoir de commerce charnel avec une femme par amour, ni regarder la mariée, ni célébrer un mariage, ni conférer le baptême, ni donner la communion à des femmes et il doit rentrer chez lui au coucher du soleil; mais s'il commet une telle action, il sera anathématisé par le Christ.

ECB 94. Si un prêtre après avoir été chassé par son évêque en raison de son mauvais comportement s'enfuit dans un autre diocèse et exerce sur place son sacerdoce, les baptêmes et les mariages qu'il célébrera seront valides, mais lui-même subira la vengeance divine.

ECB 237. Le prêtre ne doit pas célébrer de mariage sans avoir au préalable interrogé les futurs époux, afin de ne pas jeter le corps du Seigneur aux pourceaux. Mais s'il les interroge et qu'eux ne se confessent pas, et que leurs proches aussi ne révèlent pas leurs mauvaises actions, le prêtre leur donnera la communion (*i.e.* les mariera), car il n'est en rien responsable de leurs péchés.

ECB 238. Le prêtre bénira et couronnera les secondes noces à la porte de l'église, jusqu'à ce que les époux fassent pénitence et se rendent dignes de la communion.

ECB 240. Le prêtre ne laissera pas les futurs époux qui étaient des fornicateurs

կացուսցէ եւ աւրինեսցէ զուռն առ սուրբ սեղանն եւ դիցէ ի գլուխ նոցա, ապաշխարեսցեն զկարգն եւ արժանի լիցին աւրինաց:

Գ. Բռնադատութիւն եւ առեւանգում

ԵԱԿ ԿԲ. Եթէ ոք զկոյսն բռնաբարեալ կալցի՝ որշեսցի եւ մի՛ լիցի նմա արժան այլ առնուլ, այլ զնոյն իսկ ընդ որ հաճեցաւն՝ թէպէտ եւ ի տառապելոց ոք իցէ:

ՀԱՅ ԺԵ. Ձառեւանկն եթէ որդիս ծնցի եւ հայր եւ մայր եւ աղջիկն չկամեսցի, մի՛ ինչ վնաս կրեսցէ ի չարգազան հոգւոյն՝ անդրէն դարձուցանել:

ԱՆԿ ԺԲ. Եւ որ միանգամ խաւսեալ աղջկունք եւ զուգեալ գտանիցին եւ յետ այսորիկ այլք յափշտակեցին, կամ եղեւ զի անդրէն տայցեն որում խաւսեալն էր. եւ թէ ի բռնութիւն ապաստան իցէ՝ մի՛ թողցեն:

ԳՐԻ Թ. Թէ ոք առեւանկ արասցէ՝ պսակն անվաւեր լիցի եւ պսակեալն ում կամիցի լիցի:

ԲԱԿ ԺԲ. Որք ի յափշտակութենէ ունին զկանայս իւրեանց՝ պարտ եւ արժան է որոց յառաջագոյն խաւսեալ էր փութալ եւ առ ինքեանս առնուլ. իսկ որովհետեւ այսպիսի պատահումն դիպեցաւ՝ պարտ եւ արժան է ի բաց որոշել զնա եւ տալ առաջնոյն իսկ որում խաւսեալն էր եւ միաբանել ընդ այնմիկ յորմէ մեկնեցաւն: Ապա եթէ ոչ առցէ յանձն՝ ի տան իւրում նստցի, եթէ եղբարս ունիցի կամ քորս կամ այլ ինչ ազգատոհմ զոք, մինչեւ այցելութիւն եղիցի նմա ընտրութեամբ քահանայից, զոր յետ չորից ամաց սովորութիւն է կանոնի որպէս զպոռնիկն մերձ լինել առ ի լսել զաւրինութեան ձայնս հանդերձ լալով եւ արտասուաւք. եւ յառաջին աղաւթիցն ի բաց մերժել զնոսա, իսկ երկրորդ անգամ մերձեցուցանել զնոսա ի լսելութիւն, իսկ յերրորդումն՝ յապաշխարութիւն, իսկ չորրորդ անգամ ի զուգաւորութիւն ժողովրդեանն, որպէս զի բարւոյ հաղորդութեանն արժանաւորք լիցին:

ԲԱԿ ԺԵ. Վասն յափշտակողաց կանոն ինչ այսպիսի ի սկզբանէ ի վաղնջուց ոչ ունիմք, այլ ի մերմէ մտաց հաճոյ թուեցաւ այսպիսի ինչ կարգս յաւրինել, որպէս թէ Գ. ամեան ժամանակաւ զյափշտակողսն արտաքոյ աղաւթից լինել, զոր ոչ է իսկ պարտ անուանել ոչ գողութիւն եւ ոչ ապականութիւն ինչ, այլ անձնակամակ յաւժարութիւն. զի զայն իշխեցին գործել եւ ոչ հոգացան վասն իւրեանց կենաց, որ արձակեալն է՝ յայտ է թէ ապականեալ է եւ շուն կոչի:

ԲԱԿ ԻԸ. Որ առ հարկի պոռնկութիւնք ինչ գործիցին՝ առանց պատժապարտութեան եղիցին, քանզի ոչ ի կամաց եղեւ, այլ ակամայ: Սոյնպէս եւ աղախին եթէ բռնադատեսցի ի տեառնէ իւրմէ՝ առանց պատուհասի եղիցի:

entrer dans l'église, mais il les placera devant la porte de l'église et bénira le sarment sur l'autel avant de le placer sur leur tête pour les unir, et ils supporteront la pénitence réglementaire pour se rendre dignes de la communion.

C. La contrainte et le rapt

CCL 62. Celui qui s'empare par violence d'une vierge sera exclu et ne pourra pas prendre une autre femme, mais il gardera celle qui lui avait plu, même si elle est pauvre.

CPC 15. La fille qui après avoir été enlevée donne naissance à un enfant – mais que ni son père, ni sa mère, ni elle-même ne souhaitent qu'un mariage ait lieu – ne devra subir aucun dommage de la part de celui qui a agi comme une bête féroce pour la faire revenir à lui.

ACY 12. Concernant la jeune fille fiancée qui a été enlevée, le concile a décidé qu'on la rende à celui à qui elle a été fiancée et, si le ravisseur recourt à la violence, on ne l'abandonnera pas.

GLI 9. Si quelqu'un enlève sa future femme son mariage sera invalidé et la mariée sera à qui la voudra.

BAC 12. Ceux qui ont obtenu leur femme à la suite d'un rapt doivent la rendre à celui avec lequel elle avait été fiancée en premier; et donc cette femme doit être séparée de son ravisseur et retourner avec son premier fiancé qu'elle épousera. Et si ce dernier ne l'accepte pas, elle restera chez elle – pourvu qu'elle ait des frères, des sœurs ou un quelconque parent –, jusqu'à ce que son cas soit examiné par les prêtres, les canons prescrivent que de telles femmes se tiendront près de l'église comme des prostituées pendant quatre ans pour entendre le son des bénédictions en versant des larmes; la première année, elles seront exclues des prières, et elles seront acceptées parmi les auditeurs la seconde année, et durant la troisième année, elles se tiendront parmi les pénitents, et la quatrième année, elles pourront se tenir avec le peuple afin de devenir dignes de la communion.

BAC 15. Depuis le commencement et les premiers temps, nous n'avons pas de canons concernant les ravisseurs, dès lors, sur notre propre initiative nous considérons juste de suivre la règle suivante: les ravisseurs seront exclus des prières pendant trois ans; car ce péché ne doit pas être appelé vol ou pollution, mais inclination volontaire; car ils ont eu l'audace d'agir ainsi sans se soucier de leur salut et la personne répudiée est clairement souillée et est appelée adultère.

BAC 28. La fornication commise sous la contrainte ne sera pas punissable, car l'acte n'a pas été réalisé volontairement, mais involontairement. Similairement, la servante qui est violée par son maître n'est pas punissable.

ՀԱԹ ԾԸ. Հարցումն. Թէ ոք զկին իւր եթող եւ զաւրէնսգէտ մարդ եւ զերկիւղած յԱստուծոյ բռնադատէ, եւ կինն, զոր բռնադատեաց, հանապազաւր լայցէ եւ այրն ոչ արձակէ ի բաց, ո՞րպէս պարտ է ընդ կնոջն հայել կամ ո՞րպէս ընդ այրն, վասն ապաշխարութեան եւ ի սրբութիւնս մերձենալոյ:

Պատասխանի. Ի բաց մեկնեսցին, զի շնացողք են. զկինն ապաշխարութեամբ յեկեղեցի թողցեն եւ զայրն՝ արտաքոյ եկեղեցւոյ արասցեն ծանր ապաշխարութեամբ զամենայն աւուրս կենաց իւրոց:

ՍԻՈ ԻԲ. Որք գերեվար լինին յանաւրինաց եւ ակամայ առ քաղցի կամ հարկէ նոցա կերիցեն յանսուրբ եւ ի պիղծ մսոյ, յորժամ դարձ արասցէ նոցա Աստուած յիւրեանց տեղիս՝ ամ մի ջերմեռանդ սրտիւ ապաշխարեսցէ արտասուաւք, պահաւք եւ աղաւթիւք արտաքոյ եկեղեցւոյ. եւ եթէ սխալանք այն իսկ իցեն նմա՝ հաղորդեսցի աւիրնաց, եւ զուրբաթ եւ զչորեքշաբաթ իսպառ պահեսցէ: Նոյն կանոնդ եղիցի եւ առ կանայս որք ակամայութեամբ պղծին ի հեթանոսաց:

ԿԵՆ ԻԳ. Չխաւսեալ աղջկունսն եւ յայլոց յափշտակեալս՝ պարտ է առաջին խաւսեցելոյն ի բաց տալ, թէպէտ եւ բռնազբաւսեցան:

ԲԳԿ Ա. Եթէ ոք ապականէ զէգ յանկարծաւրեայ բռնաբարւոյ, մահապարտութեան դատաստան ընկալցի՝ Բ. մահ համարեալ լիցի եւ մինչեւ ի վախճան ապաշխարեսցէ: Հայելով վարդապետն՝ իշխան լիցի կարճել զկարգն:

ԲԳԿ Ե. Թէ աղախին ի տեառնէ իւրմէ պոռնկի ակամայ՝ առանց պատժոյ է:

ԲԳԿ ԾԲ. Թէ ոք առեւանկ արասցէ՝ պսակն անվաւեր եղիցի, եւ պսակադիրն լուծցի, եւ կինն ո՛ւմ կամիցի՝ առն լիցի: Ապա եթէ յամեցաւ գործն՝ վարդապետն իշխան լիցի ուղղել. եւ եթէ բաժանեսցի՝ ապաշխարութիւն պոռնկին եղիցի:

ԲԳԿ ԾԳ. Կին որ առանց կամաց բռնադատեցաւ՝ Բ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ՂԵ. Թէ յանցանէ ոք ընդ կնոջ պոռնկութեամբ եւ ցանկութիւն նորա ոչ եկեսցէ յայտ՝ Բ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ա՝ ընդ ձեռամբ, հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՃԾԳ. Թէ ոք ակամայ ըմբռնեցաւ յանաւրինաց ի պոռնկութիւն, որպէս թէ ի գերութեան վարեալ եւ առանց աւգնականի ի փորձութիւն անկանի՝ յայտ է թէ առանց պատժոց է, թէ՛ այր եւ թէ՛ կին, բայց այրն ի քահանայութիւն մի՛ իշխեսցէ մերձենալ. ապա եթէ ընդ իւր հաւատակցի ըմբռնեցաւ ակամայ՝ Ա. ամ ապաշխարեսցէ ընդ ձեռամբ եւ մտեալ յեկեղեցի հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՄԺԶ. Կատաղի աղտեղութիւն, զոր առեւանկն ասեն, թէ քահանայ խորհրդակից լինի կամ պսակ դնէ՝ լուծեալ լիցի ի կարգէն, Ճ. տաճկինակ[1] եւ Ճ. դրամ տուգանս տացէ յեկեղեցին եւ զպիղծսն մեկնեսցեն ի միմեանց, Ճ. դրամ առցեն, զի

[1] Բառիմաստի համար տես *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի*, Վենետիկ, հտ. Բ. 1836-1837, էջ 842:

QCA 58. Si un homme abandonne sa femme, puis séquestre (litt. viole) une autre femme qui craint Dieu et qui est versée dans la loi (*i.e.* religion), et qu'en dépit du fait que celle-ci pleure tous les jours, il ne la laisse pas partir; après cela, ils devront se séparer car ils sont adultères, et la femme pourra entrer à l'église pour faire pénitence, tandis que l'homme se tiendra hors de l'église pour subir une lourde pénitence chaque jour de sa vie.

SIO 22. Ceux qui ont été emmenés en captivité par les impies et qui, contre leur volonté, du fait de la faim ou par nécessité ont mangé de la viande impure et souillée, lorsque Dieu les aura ramenés chez eux, ils feront pénitence pendant un an avec un cœur fervent, des larmes, des jeûnes et des prières en dehors de l'église; et si quelqu'un agit ainsi par erreur, il participera à la communion, mais il jeûnera complétement le vendredi et le mercredi. Ce même canon s'appliquera pour les femmes qui auront été souillées contre leur volonté par les païens.

SCN 23. Il faut rendre au premier fiancé les jeunes filles fiancées enlevées par d'autres, même si elles ont été violées.

ECB 1. Celui qui corrompt une fille par surprise et de force comparaîtra devant le tribunal des condamnés à mort comme responsable de deux morts, et il fera pénitence jusqu'à sa mort. Mais le *vardapet* pourra raccourcir le temps de sa peine.

ECB 5. La servante violée (litt. qui fornique contre sa volonté) par son maître ne subira pas de peine.

ECB 52. Celui qui se marie après avoir enlevé sa femme verra son mariage frappé d'invalidité et le célébrant sera déposé, et la femme pourra aller avec qui elle veut. Mais si elle tarde à se marier, le *vardapet* pourra l'orienter; et si ensuite elle quitte son mari, elle supportera la pénitence des fornicateurs.

ECB 53. La femme violée contre sa volonté fera pénitence pendant deux ans.

ECB 95. Celui qui pèche avec une femme fornicatrice, sans que son désir soit clairement établi se tiendra pendant deux ans avec les auditeurs, puis pendant un an sous surveillance et il communiera à la communion.

ECB 153. L'homme - ou la femme - qui fornique sous la contrainte avec des impies du fait qu'il est emmené en captivité ou qu'il ne reçoit aucune aide face au danger ne sera pas puni, mais l'homme ne pourra pas accéder à la cléricature; mais si la fornication forcée se fait avec un coreligionnaire, il se tiendra pendant un an sous surveillance avant de pouvoir entrer dans l'église et communier.

ECB 216. Le prêtre qui participe à la souillure abominable appelée rapt ou qui marie le ravisseur et la fille enlevée sera déposé de son rang et paiera une amende de 50 *tačkinak*[1] et de 100 *dram* à l'Église, et les impurs (*i.e.* les mariés) se sépareront,

[1] Voir *Nor baṙgirkʻ haykazean lezui* (Nouveau dictionnaire de la langue arménienne), éds G. Awetikʻean,

զաւրէնսն պղծեաց: Եւ որ ընդ նոսին էին մտեալ՝ Ծ. տաճկինակ եւ Ճ. դրամ տուգանս տացեն: Ապա եթէ հաւանեսցին ծնաւղքն, պսակ առցեն եւ աւրէնս, եւ ապա եղիցին այր եւ կին:

ՍԿՆ ԻԵ. Վասն որ արտաքոյ ելեալ կին եւ բռնադատեալ հաւանեսցի ի պղծելն՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

ԿՈՉ Բ. Վասն պոռնկաց. Եթէ ի կուսութեան գիջացաւ, եթէ կանամբի իցէ, եթէ բազում ժամանակս, եթէ բռնաբարեալ զոք, եթէ իգացեալ:

Դ. Եկեղեցականների ամուսնութիւն

ԵԱԿ ԻԴ. Որք ի ժառանգաւորութիւն անցանեն չեւ ամուսնացեալք, հրամայեմք, թէ կամեսցին ամուսնանալ, զգրակարդացս եւ զսաղմոսասացս միայն:

ԱՆԿ ԺԱ. Վասն սարկաւագաց. եթէ յորժամ տանիցին յաւծումն եւ նոքա բողոքիցեն, թէ ոչ կարեմք կուսան լինել, թողացուսցեն՝ մինչեւ սրբութեամբ զուգեսցին, զի սուրբ են անկողինք եւ անարատ՝ ամուսնութիւնք (հմմտ. Եբր. ԺԳ. 4), եւ ապա մատիցեն ի քահանայութիւն եւ համարձակութեամբ ի սպասու կացցեն եպիսկոպոսին. ապա եթէ ոմանք յաւծանելն լուռ եղեն եւ հաճելութեամբ յանձին կալան, որպէս թէ հաստատուն կացցեն յաշտիճանի անդ, եւ ապա յետոյ ամուսնացան՝ լռեալ լիցին ի քահանայութենէ եւ ի կարգէ պաշտաւնէից ի բաց կացցեն, Է. ամ ընդ ունկնդիրս կացցեն եւ Բ. ամս ընդ ձեռամբ տրաւք տնանկաց քաւեսցէ զմեղս իւր, քննեալ եւ հայեցեալ յապաշխարութիւնն եպիսկոպոսին՝ հաղորդեսցի աւրինացն, բայց ի կարգն եւ յաշտիճանն մի՛ մերձեցուսցեն:

ԳՐԻ Բ. Քահանայ որ կին առնու՝ Ե. ամ արտաքոյ, Բ՝ ի ներքս ապաշխարեսցէ, եւ Բ. ամս անհաղորդ կացցէ եւ ապա հաղորդեսցի:

ՀԱԹ ԿԹ. Հարցումն. Թէ ոք զկարգ քահանայութեանն թողու եւ կին առնէ, որպիսի՞ կարգաւ կամ ո՞րպէս, յետ քանի՞ ժամանակաց հաւասարել պարտ է սրբութեանն: Պատասխանի. Յերկար ժամանակս, յետ բազում ապաշխարութեան:

ԲԱԿ ԺԳ. Վասն երիցանց, որ յանարժան եւ յանպատեհ ամուսնութիւնս անկեալ են, պարտ է ի վերայ այնպիսեացն սահմանադրութիւնս առնել, այնպիսի ինչ աթոռակցութեան արժանաւորս առնել ընդ այլսն միայն: Իսկ յայլմէ սպասուէ պաշտամանն ի բաց հրաժարել եւ աւրինիլ յայլոց անտի եւ իւրոց յանցանացն հոգ տանել եւ ոչ եթէ աւրինութիւն ունեք բաշխել, քանզի անպատեհ է նմա զայս առնել, վասն զի տրտումն կալ յաւրինութեանն փոխատրութիւն է այնմ յանցանաց. իսկ նա որ ոչ ինքն զայս ունի զոր կորոյս ի տգիտութենէ յանցանաց իւրոց. զիմիրդ այլոցն զայս պարգեւել կարիցէ. նաեւ ոչ զմարմինն Քրիստոսի իշխանութիւն է այլոց բաշխել եւ ոչ յայլ ինչ սպասաւորութիւն մերձենալ եւ ոչ յեկեղեցւոջն համարձակապէս աւրի-

et donneront 100 *dram* pour avoir souillé le mariage. Et ceux qui étaient avec eux pour le mariage verseront une amende de deux fois 50 *tačkinak* et de deux fois 100 *dram*. Mais si les parents y consentent, ils pourront se marier légalement et seront considérés comme mari et femme.

NPT 25. La femme qui hors de chez elle est contrainte de se souiller fera pénitence pendant trois ans.

APR 2. À propos des fornicateurs. Celui qui se masturbe alors qu'il est vierge, celui qui fait cela en étant marié pendant une longue période, celui qui viole quelqu'un, celui qui est efféminé.

D. Le mariage des clercs

CCL 24. Parmi ceux qui sont entrés dans le clergé sans être mariés, seuls les lecteurs et les psalmistes pourront, s'ils le souhaitent, se marier.

ACY 11. Les diacres qui avant leur ordination indiquent qu'ils ne pourront pas rester vierges pourront se marier (cf. He 16, 4), avant d'être ordonnés et de se tenir au service de l'évêque; mais ceux qui se font ordonner sans rien dire, puis se marient renonceront à leur ordre et se tiendront à l'écart de leur rang, et pendant sept ans, ils se tiendront avec les auditeurs, et pendant deux ans, sous surveillance, et par leurs dons aux indigents, ils expieront leurs péchés, et l'évêque après avoir examiné leur pénitence pourra les admettre à la communion, mais ils ne pourront pas retrouver leur ordre et leur rang.

GLI 2. Le prêtre qui se marie fera pénitence pendant cinq ans à l'extérieur de l'église, pendant deux ans à l'intérieur et pendant deux ans, il ne participera pas à la communion, puis il communiera.

QCA 69. Celui qui abandonne la prêtrise et se marie ne pourra prendre part au sacrifice, qu'après un long moment et une longue pénitence.

BAC 13. Les prêtres qui contractent des mariages indignes et déshonorants se verront imposer des limites dans leur ministère, et ils seront seulement dignes de prendre part à leur siège avec leurs collègues. Et ils s'abstiendront de tout autre service liturgique, et ils seront bénis par les autres et s'occuperont de leurs propres fautes, mais ils ne béniront personne; car il serait inopportun pour eux de faire cela, sachant que rester triste durant les bénédictions constitue une rétribution pour leur péché; et comment ceux qui sont privés d'une chose qu'ils ont perdue (*i.e.* la bénédiction) en péchant du fait de leur ignorance, pourraient-ils l'offrir

X. Siwrmēlean, M. Awgerean, 2 vols., Venise, 1836-1837, II, col. 842.

նել, այլ բաւական լիցի նմա աթոռակցութիւնն միայն մինչեւ թողցէ նմա Քրիստոս զանգիտութեանն զյանցանսն:

ԲԱԿ ԼԵ. Եթէ ոք գրակարդաց եկեղեցւոյ է եւ նմա խաւսեալ զաղջիկ ոք կնութեան եւ նա յառաջ քան զհարսանիսն յանցուցեալ իցէ ընդ նմա, զտարի մի արգելեալ լիցի ի գրակարդացութենէ, որպէս գողացեալ զհարսանիսն՝ դադարեսցէ ի սպասաւորութենէ: Սոյն աւրինակ եւ ի վերայ սարկաւագացն եղիցի:

ԵՓՐ Ա. Քահանայ կամ կրաւնաւոր կամ սարկաւագ, որ կամակոր մտաւք ինքեան ընկենուն զպատիւն կամ զբեմն վասն ծանրութեան կամ ծուլութեան կամ ամբարտաւանութեան կամ հակառակութեան կամ ամուսնութեան՝ արտաքս ընկեսցի յեկեղեցւոյ եւ ի ժողովրդոց եւ ի կենդանի խորհրդոյն, քանզի հաւասար է նա այնոցիկ որ զՈրդին Աստուծոյ առ ոտն հարին եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցան եւ զշնորհաց հոգին թշնամանեցին. ապա եթէ ապաշխարեալ դարձցին, յետ Է. ամի ապաշխարութեան արժանասցին եկեղեցւոյ ի հաղորդութիւն. իսկ զպատիւն եւ զսքեմն ըստ կամաց եպիսկոպոսին առցեն:

ԲԳԿ ԼԳ. Որ մոնոգոնութիւն խոստանայ եւ կին առնէ, ուրացող է, նոյնպէս եւ քահանայն:

ԲԳԿ ՃԽԲ. Կին քահանային եթէ վախճանի ի վաթսնամենից ի վեր, քահանայն կացցէ յեկեղեցւոջն, ապա եթէ ի մանկութեան հանդիպի՝ երթալ առ ուխտականս եւ անդ լինել մինչեւ ցվախճան. նոյնպէս եւ կանայք նոցա, զի այն է հաճոյ առաջի Աստուծոյ. եւ եթէ ոչ՝ եղիցին նզովեալ:

ԲԳԿ ՃԾԲ. Քահանայ կամ սարկաւագ կամ ուխտական եկեղեցւոյ թէ պոռնկի յախտ ցանկութեան սատանայի, լաւ է միանգամ պոռնկել եւ ապաշխարել քան ամուսնանալ եւ յարակայ պոռնկել երեքկին եւ չորեքկին յար ի պոռնկութեան, զի լաւ էր նոցա պոռնկել եւ ի կարգ գալ ապաշխարութեամբ քան պղծել զեկեղեցի Աստուծոյ եւ զարդարութեան պսակն:

ԳԱՍ ԻԳ. Եպիսկոպոս՝ հանդերձ կնաւ մի՛ եղիցի, բայց եթէ մեռցի կինն, զի մեծն Յակոբոս, եղբայր Տեառն, առաջին եպիսկոպոս Երուսաղէմի կացեալ, այսպէս հրամայեաց եւ սուրբ առաքեալքն այսպէս գտան:

à d'autres ? De même, ils ne distribueront pas le corps du Christ aux autres ni n'accompliront impunément aucun autre service ou bénédiction dans l'église, mais ils se contenteront de garder leur part du siège jusqu'à ce que le Christ les libère de leur péché d'ignorance.

BAC 35. Le lecteur ou le diacre qui a péché avec sa fiancée avant le mariage n'aura pas le droit de lire pendant un an et cessera son ministère, du fait qu'il a volé le mariage.

SEP 1. Le prêtre, le religieux ou le diacre qui rabaisse sa dignité et son trône du fait de sa torpeur, sa paresse, son orgueil ou en se mariant sera mis à l'écart de l'Église, du peuple et de la communion, car il a outragé le Fils de Dieu; mais s'il se convertit et fait pénitence pendant sept ans il pourra communier, et l'évêque décidera s'il peut reprendre son ministère ou sa robe monacale.

ECB 33. Celui qui promet de devenir moine puis se marie est un apostat, de même que le prêtre qui se marie.

ECB 142. Le prêtre âgé de plus de 60 ans qui devient veuf se tiendra dans l'église, mais si cela se produit alors qu'il était jeune, il se tiendra avec les clercs de l'Église jusqu'à sa mort; et il en est de même pour la femme du prêtre, car cela est agréable à Dieu; et celui qui n'agit pas ainsi sera anathématisé.

ECB 152. S'agissant du prêtre, du diacre ou du clerc qui poussé par Satan fornique, il vaut mieux forniquer une fois, puis faire pénitence que, de se marier et de forniquer constamment, car il aurait été préférable pour eux de forniquer puis de faire pénitence que, de souiller l'Église et la couronne du mariage.

GNT 23. L'évêque ne sera pas avec sa femme, excepté si elle meurt, car Jacques le Majeur, le frère du Seigneur, premier évêque de Jérusalem, l'a ordonné ainsi et les saints apôtres ont trouvé la règle ainsi.

2. Արգելանք եւ արգելառիթ

Ա. Ընտանեկան կապ

1. Խնամութիւն

ԿԱՌ ԼԳ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ որպէս ի սկզբանէ զուգեաց Աստուած ամուսնութեամբ զմարդն, եւ աւգնական արար միմեանց եւ աւրինեաց զնոսա, նոյնպէս սահմանեալ եւ հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն՝ եւ աւրինաւք ի ձեռն աջոյ քահանայութեանն եւ աւրինութեամբ զուգեսցին: Բայց որպէս Մովսէսի պատուիրեաց արարիչն Աստուած, թէ «Պատուիրեա որդւոցն Իսրայէլի, Ես եմ տէր Աստուած ձեր. պատուիրանաց իմոց զգուշացարուք եւ մի՛ գնայցէք ըստ կրաւնիցն Եգիպտացւոց, ուստի ելէքն, եւ ըստ գնացից Քանանացւոց մի՛ գործիցէք» (յմմմ. Ղեւտ. ԺԸ. 3): Եւ ասէ. «Մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ, զառականս դստեր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռ քոյ՝ թէ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ մի՛ յայտնեսցես, զառականս կնոջ հաւր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս հաւրաքեռ քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռորդւոյ քոյ մի՛ յայտնեսցես, պղծելով ընդ նոսա» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 6-18): Սոյնպէս եւ յերկրորդումն կարգեաց աւրէնսդիրն Մովսէս յանէծսն եւ ասէ. «Անիծեալ լիցի որ ննջիցէ ընդ կնոջ հաւր իւրոյ. զի յայտնեաց զաներեւոյթս հաւր իւրոյ. անիծեալ որ ննջիցէ ընդ քեռ իւրում, որ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ. եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ Եղիցի, եղիցի» (Բ. Օրէնք ԻԷ. 20-22): Նոյնպէս եւ սահմանեալ առաքելական կանոնաց.մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ, մինչեւ ի չորրորդն զարմն չունի իշխանութիւն առնել:

ԵԱԿ ԺԷ. Որոյ երկուս քորս առեալ է եւ կամ քեռորդի՝ ոչ կարէ ժառանգաւոր լինել:

ՆԷԿ Բ. Կին եթէ լինիցի երկուց եղբարց՝ մերժեսցեն յիրերաց. կինն մինչեւ ի մահ ընդ ունկնդիրս կացցէ, նոյնպէս եւ այրն, ապա ըստ վարուցն իբրու թէ ողջացեալ իցեն ի մեղացն ի ձեռն ողորմութեան եւ պահոց՝ ի վախճանի իւրեանց հաղորդելոյ յետին թոշակին արժանի լիցին. ապա եթէ մինչ ի զուգութեանն են մահ տիրեսցէ, զոր ասեն՝ «Մահ մեղաւորին չար է» (Սաղ. ԼԴ. 22), զրկեալ եղիցին ի թոշակէն. բայց որ մնայն՝ այնպիսւոյն դժուարագոյն է ապաշխարութիւնն. իշխան լիցի վարդապետն ապաշխարութիւն դնել խստագոյն, որպէս եւ կամեսցի, ի ջերմութիւն ապաշխարութեանն հայեցեալ եւ յողորմութիւն գթոյ տնանկաց եւ մեծամեծ տրաւք, իշխան լիցի կարճել զժամանակն:

ՀԱԹ Թ. Հարցումն. Թէ ոք կոչեսցէ զվիճակեալն ի զուգաւորութիւն ամուսնութեան եւ ինքն լպրշիցէ զամուսնութիւն անաւրէնութեան կամ քենւոյ ամուսնութիւն, այսինքն է քեռ կնոջն, յառաջագոյն եղեալ որ հանդերձեալ է՝ զուգել, թէ պարտ

2. Les empêchements et les interdictions

A. Les liens de parenté

1. La consanguinité

CAP 33. Dieu a permis aux hommes et aux femmes de s'unir par le mariage, qui est célébré par la dextre du prêtre comme l'ont commandé les apôtres. Mais Dieu a ordonné à Moïse de ne pas suivre la religion des Égyptiens et les lois des Cananéens (cf. Lv 18, 3); ainsi aucun homme ne doit s'approcher d'un membre de sa famille pour découvrir la nudité de son parent par le sang: Ne découvre pas la nudité de ta fille, de ta sœur – car elle est la fille de ton père ou de ta mère –, de la femme de ton père, de la sœur de ton père, de l'enfant de ta sœur en te souillant avec eux (cf. Lv 6, 6-18). Pareillement, dans la deuxième série de commandements, Moïse a maudit celui qui couche avec la femme de son père car il découvre la nudité de son père, avec sa sœur car elle est la fille de son père ou de sa mère (Dt 27, 20-22). Pareillement, les canons apostoliques ont disposé qu'aucun homme ne s'approchera d'un membre de sa famille – pour une relation adultère ou pour un mariage – jusqu'au quatrième degré de parenté.

CCL 17. Celui qui épouse deux sœurs ou la fille de sa sœur ne pourra pas devenir clerc.

NEO 2. La femme qui épouse deux frères devra se séparer de son second mari et tous deux feront pénitence en se tenant avec les auditeurs jusqu'à leur mort, mais selon leur conduite et grâce à la miséricorde (*i.e.* aux dons), et au jeûne, ils pourront recevoir le viatique. Mais s'ils restent ensemble et que l'un d'eux meurt – sans recevoir le viatique (Ps 33, 22) - le *vardapet* pourra infliger une pénitence plus dure pour le survivant, mais selon la ferveur de la pénitence et de la pitié, et de grands dons aux pauvres, il pourra raccourcir le temps de pénitence.

QCA 9. Le prêtre qui est convié à célébrer un mariage illicite – à savoir, l'union d'un homme avec sa belle-sœur, c'est-à-dire la veuve de son frère défunt – doit refuser de le célébrer, car il s'agit d'une union illicite, mais le prêtre doit prier pour

է վիճակելոյն աղաւթս առնել ի վերայ նորա կամ պատարագ մատուցանել:

Պատասխանի. Միանգամ ասացի, թէ լուիցէ վիճակեալն զանաւրէն չամուսնութիւնն, ապա եթէ ամուսնութիւն անաւրէն է՝ ոչ է պարտ վիճակելոյն հաղորդել մեղաց աւտարաց:

ՀԱՌ ԺԸ. Հարցումն. Թէ ոք ունիցի կին եւ մեռցի, զքոյր նորա պարտ է առնուլ, թէ ոչ: Պատասխանի. Ոչ է արժան, զի պոռնկութիւն է:

ՀԱՌ ԺԹ. Հարցումն. Թէ ուրուք ի հեթանոսութեան ժամանակի արարեալ իցէ զկին եղբաւր իւրոյ եւ արդ կամիցի լինել քրիստոնեայ եւ ասէ. «Տուք ինձ կնիք». պարտ է առնուլ յանձն, թէ մեկնել ի կնոջէն եւ ապա կնքել:

Պատասխանի. Չէ արժան մեկնել, զի ոչ էր ընդ աւրինաւք յորժամ զկինն արար:

ԲԱԿ ԾԱ. Յայս իմն առաւել հակէ մարդ եթէ գտցէ յաւրինաց ինչ որ ըստ կամաց հեշտութեան լինի, ընդ լծով ծառայութեան աւրինաց անկանի. իսկ ապա թէ գուցէ ինչ ծանր աւրինացն ասացեալ առ Քրիստոսի ազատութիւնն փախուցեալ անկանիցի, այլ ես ծաղր առնեմ զայն, որ զժամանակ աւրէնադրութեանն ոչ կարաց իմանալ. աւրէնքն ասեն. «Այնոցիկ են, որ ընդ աւրինաւքն են» (յմմտ. Ա. Կոր. Թ. 21). ապա թէ ոչ պարտ է եւ ընդ թլփատութեամբ աւրինացն անկանել մեզ. բայց եթէ ոք ախտիւ պղծութեան յաղթեալ երբեք անկցի յերկուց քերց յանկրաւն խառնակութիւն, ոչ ամուսնութիւն պարտ է համարել զայն եւ ոչ բնաւ ամենեւին յեկեղեցւոյ միաբանութիւն ընդունել յառաջ մինչ չեւ մեկնեալ է զնոսա ի միմեանց: Բայց սակայն թէ եւ այլ ինչ ոչ գոյր ասել, շատ եւ բաւական էր սովորութիւնն առ ի չարին պահպանութիւն: Ոչ է պարտ, ասէ, «Հաւր եւ որդւոյ ընդ միում բոզի խառնակել» (Ամովս Բ. 7): Բազում եւ այլ ազգ պիղծ ախտից զոր դիւացն վարդապետանոց եգիտ, եւ աստուածային գիրք լռեցին՝ զպարկեշտ զպատուիրանացն բարբառեցան զազիր եւ գարշ անուանակոչութեամբք աղտեղեալ ոչ կամեցեալք, այլ ընդհանուր ի մի վայր բաւանդակ անուամբք զաղտեղութիւնս նոցա բամբասեաց, որպէս եւ Պաւղոս առաքեալ ասէ, եթէ «Պոռնկութիւն եւ ամենայն աղտեղութիւն մի՛ անուանեսցի ի միջի ձերում, որպէս եւ վայել է սրբոց» (Եփես. Ե. 3). Զի աղտեղութեանն անուամբ զարուացն զանճառագործութիւն եւ զիգացն ի մի վայր փակեաց. ապա ուրեմն ոչ ամենայն իրաւք լուռն կալ աներկիւղութիւն է ցանկասիրացն: Բայց ես ոչ լուռ կալ ասեմ զայս, այլ կարի քաջ ի բաց հրաժարեցուցանէ աւրէնսդիրն, քանզի ասելն թէ «Ոչ մտանիցես առ ամենայն ընտանութիւն մարմնոյ քո» (Ղեւտ. ԺԸ. 6) մերկանալ զամաւթ խայտառականաց նոցա՝ այսու ի մի վայր ածեալ փակէ զամենայն ազգ ընտանութեանն. զինչ այլ ընտանեգոյն կայցէ ուրուք, քան զկին իւր, զի ոչ եւս երկու, այլ մի մարմին են (յմմտ. Մար. Ժ. 8). եւ ի ձեռն կնոջն քոյր կնոջն յընտանութիւն առնն շրջեալ փոխեցաւ. զի որ զմայր կնոջն ոչ իշխէ առնուլ եւ ոչ զդուստր կնոջն՝ եւ ոչ զքոյր նորին, վասն որոյ եւ ոչ զքոյրն իւր. եւ այս անդրէն առ կին իւր դարձեալ առ ի չդառնալ եւ ոչ կնոջն յամուսնութիւն ընդ ընտանիս առն իւրոյ. քանզի հասարակ է ի վերայ երկոցունց ազգակցութեանն իրաւունք. բայց ես ամենեցուն, որ յաղագս ամուսնութեան խորհին, բողոքեմ, եթէ «Անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ» (Ա. Կոր. Է. 31), եւ ժամանակս կարճեալ է, զի որ ունիցին կանայս՝ իբրեւ

cet homme et offrir le sacrifice.

QCA 18. Un homme après la mort de sa femme ne peut pas épouser la sœur de celle-ci; car c'est de la fornication.

QCA 19. Le païen qui a épousé la femme de son frère, puis demande à être baptisé pourra l'être sans avoir à se séparer de sa femme; car il n'était pas soumis à la loi (*i.e.* chrétienne) quand il s'était marié.

BAC 51. L'homme suit la loi tant qu'elle l'arrange et quand il la trouve pénible, il se réfugie vers la soi-disant liberté du Christ (cf. Gal 5, 1; 1 Co 11, 21); toutefois, si quelqu'un poussé par une passion impure a des rapports contraires à la religion avec deux sœurs, il ne s'agira pas de mariage et ils ne seront pas admis parmi l'assemblée de l'Église jusqu'à ce qu'ils se séparent. Et même s'il n'y a rien d'autre à dire, une telle coutume (*i.e.* pratique) elle-même est plus que suffisante pour l'existence du mal. Le prophète dit qu'il est illicite «qu'un homme et son père s'unissent avec la même fille» (Am 2, 7). Il existe d'innombrables autres sortes de passions impures inventées par l'école des démons qui ne sont pas mentionnées par les Écritures, afin de ne pas évoquer des choses dégoûtantes (Ép 5, 3); mais ce silence ne signifie pas que les voluptueux peuvent agir avec insolence. Mais moi (*i.e.* Basile de Césarée), j'estime qu'il ne s'agit pas de silence, car le législateur a dit, «nul d'entre vous ne s'approchera de sa parente pour découvrir sa nudité» (Lv 18, 6), et ceci englobe toute forme de parenté; il n'y a rien de plus intime qu'un mari et sa femme (cf. Mc 10, 8); et par sa femme, la sœur de celle-ci entre dans la famille du mari; de même, il ne pourra pas épouser la mère ou la fille de sa femme ni la sœur de sa femme, ni sa propre sœur; de même, sa femme n'épousera pas un parent de son mari, car le droit de la parenté est commun aux deux époux (Co 7, 31, 29; 1 Th 4, 4-5).

թէ ոչ ունիցին: Բայց գլուխ Ճառելոցս՝ եթէ աւրինաւք դիմեալ ոք յամուսնութիւն, բացեալ առաջի կայ յաշխարհս ամենայն. ապա եթէ ախտաւոր է փոյթ ամուսնութեանն, վասն այնորիկ առաւել արգելլի է, զի ուսցի ամենայն ոք զանձն իւր սրբութեամբ ստանալ եւ մի՛ յախտս ցանկութեան անկանել:

ՇԱՒ ԺԲ. Որ զկին հաւր որդի ունիցի, զոր Պաւղոս յամենայն ժամ կականէր եւ ողբայր զԿորնթացիս զի ասէր, թէ՝ «Եւ այդ եւս եղեւ մինչեւ զկին հաւր իւրոյ ունել» (Ա. Կոր. Ե. 1). եւ ասէր, թէ՝ «Կտրեսջիք, ի միջոյ ի բաց հանջիք եւ մատնեսջիք ի ձեռս սատանայի, զի ոգին ապրեսցի յաւուրն դատաստանի» (յմմտ. Ա. Կոր Ե. 2, 5): Եւ կամ Ռուբէն որդին Յակոբայ՝ զիաւրդ անիծաւ վասն ընդ հարճի հաւրն ննջելոյ: Արդ՝ եթէ ոք զկին հաւր իւրոյ ունիցի, ոչ ընդունի զնա կանոնս եւ ի սուրբ եկեղեցի նա մի՛ մտցէ եւ յամենայն ժողովոյս նզովեալ լիցի, մինչեւ դարձցի եւ ապաշխարեսցէ Է. ամ ընդ ունկնդիրս, Գ. ամս ընդ ձեռամբ, Ճ. դրամ աղքատաց, Ճ՝ յեկեղեցի, եւ այլ վարքն քննեալ՝ հաղորդեսցի:

Եթէ հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբաւր, նոյն պատուհաս եւ նզովք լիցին: Այլ զջերմ հարազատի եւ զազգականի զկին ոք մի՛ իշխեսցէ ունել ի կնութեան եւ կամ շնալ: Եւ եթէ կնոջն կամաւք իցէ խառնակութիւնն՝ զպատուհասն եւ զտուգանս եւ զնզովս զնոյն կրեսցէ եւ յապաշխարութիւն կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, Ժ. տարի աղասցէ գոդեացն. ապա եթէ ազատ է եւ ի գոդիսն չերթայ՝ Յ դրամ տացէ նոցա:

ԹՍՎ Գ. Որ կին առնէ զմայր կամ զդուստր, ի հուր այրեցէք զնոսա: Անիծեալ որ առնէ զեղբաւր իւրոյ զկին, վասն զի ընդ եղբաւր իւրում պղծի. զի մի են նոքա: Որ առնէ զհաւրեղբաւր իւրոյ կին, որ առնէ զզոքանչ կին, որ առնէ զքենի կին, որ առնէ զթոռն կին, որ առնէ զհաւդ կին, անիծեալ եղիցին նոքա (յմմտ. Ղեւտ. Ի. 11, 13, 14). եւ որ շնայ ընդ քեռ իւրում՝ անիծեալ լիցի (յմմտ. Ղեւտ. Ի. 17, Բ. Օրէնք ԻԷ. 22): Որոշեցէք զնոսա ի միմեանց եւ անջատեցէք. եւ ապաշխարութիւն նոցա ԺԵ. ամ՝ դրան արտաքոյ եւ Ե՝ ընդ ապաշխարողս եւ Գ. ամ աւրէնս մի՛ առցէ:

ԹԱՏ Լ. Հարցումն. Որ մի մաւր կաթամբ սնեալ են՝ աւտարք ի միամեանց, արժմն է ամուսնանալ:

Պատասխանի. Չէ արժան, զի ծնաւղ եւ սնուցող մի համարեն:

ԿԵՆ ԼԳ. Կին եթէ ամուսնասցի երկուց եղբարց՝ մինչեւ ի վախճան որոշեսցի:

ՎԱՉ Ժ. Այր՝ զերրորդ ազգի կին մի՛ արասցէ, եւ զեղբաւր կին մի՛ արասցէ:

ԲԳԿ ճԼԲ. Թէ լինիցին Բ. եղբարք կամ այլ մերձաւորք եւ կամեսցին ամուսնանալ Բ. քերց կամ յայլ մերձաւորս՝ որոշեսցին ի միմեանց, եւ թողցեն յայն որ յառաջն էր ընթացեալ. ապա եթէ առ նախանձու երկոքինն ամուսնասցին՝ թողցեն զառաջին պսակեալն եւ զյետինն քակտեսցեն ի միմեանց. եւ վասն պսակին անարգանաց Ճ. դրամ յեկեղեցին տուգանս տացեն եւ ապաշխարութիւն երկկնոյն եղիցի եւ սրբեալ ի մեղաց՝ լիցին առն եւ արասցեն կանայս:

SHV 12. Le fils qui prend la femme de son père (1 Co 5, 1; 2, 5; Gn 35, 22) ne sera pas reçu par les canons, il n'entrera pas dans l'église et sera anathématisé par toute l'assemblée, jusqu'à ce qu'il se convertisse et fasse pénitence pendant sept ans avec les auditeurs, trois ans sous surveillance, et il versera 50 *dram* aux pauvres et 50 *dram* à l'Église, et après que ses mœurs auront été examinées, il communiera.

Si le père prend la femme de son fils, ou le frère celle de son frère, les mêmes châtiments et anathèmes s'appliqueront. Mais personne n'aura le droit de prendre pour femme ou pour une relation adultère une femme du même sang ou une parente. Et si la débauche se fait avec la volonté de la femme, elle subira le même châtiment, l'amende et l'anathème, et elle se tiendra dans la pénitence, et sera placée dans une léproserie où elle moudra de la farine pour les lépreux pendant dix ans; mais si elle est noble et qu'elle n'aille pas chez les lépreux, elle leur versera 300 *dram*.

SEW 3. Celui qui épouse sa mère ou sa fille sera brûlé. Celui qui prend la femme de son frère sera maudit car il se souille avec son frère. Celui qui prend la fille de son oncle, qui épouse sa belle-mère, sa belle-sœur, sa petite fille, son aïeule (Lv 20, 11, 13-14, 17, 20-21), ou celui qui commet un adultère avec sa sœur sera maudit (Lv 20, 17; Dt 27, 22). Séparez-les et éloignez (litt. coupez)-les, les uns des autres, et ils feront pénitence pendant quinze ans à la porte de l'église, puis pendant cinq ans avec les pénitents, puis pendant trois ans encore, ils ne recevront pas la communion.

THD 30. Deux personnes étrangères qui ont été nourries par le lait de la même femme ne peuvent pas se marier, car le sang et le lait sont une même chose.

SCN 33. La femme qui épouse successivement deux frères sera retranchée jusqu'à la fin de sa vie.

RVG 10. Un homme ne prendra pas pour femme une parente au troisième degré ni la femme de son frère.

ECB 132. Si deux frères ou deux cousins souhaitent épouser deux sœurs ou deux cousines, ceux qui se sont rencontrés en second devront se séparer et les premiers pourront se marier; mais si par jalousie les deux couples se marient, le premier mariage sera valide, mais ceux qui se sont mariés ensuite devront se séparer l'un de l'autre; et ils verseront une amende de 100 *dram* à l'Église pour avoir outragé le mariage, et ils supporteront la pénitence des bigames, et une fois purifié du péché, l'homme pourra prendre femme.

ԲԳԿ ՃԽԷ. Այր որ պոռնկի ընդ երկուց քերց՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ. Գ՝ ընդ ձեռամբ, տրաւք տնանկաց յետին թոշակին թէ լիցի արժանի, բայց կին ի նոցանէ մի՛ արասցէ:

ԲԳԿ ՄՃԲ. Որք զուգաւորին ընդ կնոջ եղբաւր կամ ընդ քերց նորա, բաժանեսցին եւ ապաշխարեսցեն զամենայն աւուրս կենաց իւրեանց. ապա եթէ ոչ բաժանեսցին՝ եղիցին իբրեւ զհեթանոսս:

ՍԿՆ Դ. Վասն խաւսելոյ զաղջիկ առն կին, եւ նա թողեալ՝ զքոյրն առնէ, եւ նա խեղդ արկեալ մեռանի՝ Ժ. ամ արտաքոյ եւ Ե՝ ընդ աւրինաւք:

ՍԿՆ Թ. Վասն որ ընդ երկու քերց պոռնկին եւ ապա զմինն կին առնէ՝ Ժ. ամ ապաշխարեսցէ:

ՍԿՆ ԻԴ. Վասն որ զեղբաւր կինն կին առնէ, ոչ ընդունի զնա եկեղեցի Աստուծոյ, բայց թէ մեկնեսցի եւ ստոյգ ապաշխարեսցէ եւ զմահապարտին ապաշխարութիւն կրեսցէ:

2. Ազգակցական կապ

ԿԱՌ ԼԳ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ որպէս ի սկզբանէ զուգեաց Աստուած ամուսնութեամբ զմարդն, եւ աւգնական արար միմեանց եւ աւրինեաց զնոսա, նոյնպէս սահմանեալ եւ հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն՝ եւ աւրինաւք ի ձեռն աջոյ քահանայութեանն եւ աւրինութեամբ զուգեցին: Բայց որպէս Մովսէսի պատուիրեաց արարիչն Աստուած, թէ «Պատուիրեա որդւոցն Իսրայէլի, Ես եմ տէր Աստուած ձեր. պատուիրանաց իմոց զգուշացարուք եւ մի՛ գնայցէք ըստ կրաւնիցն Եգիպտացւոց, ուստի ելէքն, եւ ըստ գնացից Քանանացւոց մի՛ գործիցէք» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 3): Եւ ասէ. «Մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ, զառականս դստեր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռ քոյ՝ թէ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ մի՛ յայտնեսցես, զառականս կնոջ հաւր քոյ մի՛ յայտնեսցես, զառականս հաւրաքեռ քոյ մի՛ յայտնեսցես, զառականս քեռորդւոյ քոյ մի՛ յայտնեսցես, պղծելով ընդ նոսա» (յմմտ. Ղեւտ. ԺԸ. 6-18): Սոյնպէս եւ յերկրորդումն կարգեաց աւրէնսդիրն Մովսէս յանէծսն եւ ասէ. «Անիծեալ լիցի որ ննջիցէ ընդ կնոջ հաւր իւրոյ. զի յայտնեաց զաներեւոյթս հաւր իւրոյ. անիծեալ որ ննջիցէ ընդ քեռ իւրում, որ առ ի հաւրէ իցէ կամ առ ի մաւրէ. եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ Եղիցի, եղիցի» (Բ. Օրէնք ԻԷ. 20-22): Նոյնպէս եւ սահմանեալ առաքելական կանոնաց.մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ, մինչեւ ի չորրորդն զարմն չունի իշխանութիւն առնել:

ԵԱԿ ԺԷ. Որոյ երկուս քորս առեալ է եւ կամ քեռորդի՝ ոչ կարէ ժառանգաւոր լինել:

ECB 147. L'homme qui fornique avec deux sœurs se tiendra pendant sept ans avec les auditeurs; puis pendant trois ans sous surveillance et par des dons aux indigents, il se rendra digne du viatique, mais qu'il ne prenne pas pour femme l'une des sœurs.

ECB 272. Ceux qui s'unissent avec la femme de leur frère ou avec leur sœur devront se séparer et faire pénitence durant toute leur vie; mais s'ils ne se séparent pas, ils seront équivalents aux païens.

NPT 4. Si une jeune fille promise à un homme se suicide par pendaison, du fait que celui-ci l'a abandonnée pour prendre sa sœur, l'homme fera pénitence pendant dix ans à l'extérieur de l'église, puis pendant cinq ans avec les auditeurs.

NPT 9. Celui qui fornique avec deux sœurs, puis épouse l'une d'elles fera pénitence pendant dix ans.

NPT 24. Celui qui épouse la femme de son frère ne sera pas admis par l'Église, mais s'il se sépare d'elle et se soumet à une pénitence sincère, il supportera la pénitence des condamnés à mort.

2. Les liens d'affinité

CAP 33. Dieu a permis aux hommes et aux femmes de s'unir par le mariage, qui est célébré par la dextre du prêtre comme l'ont commandé les apôtres. Mais Dieu a ordonné à Moïse de ne pas suivre la religion des Égyptiens et les lois des Cananéens (cf. Lv 18, 3); ainsi aucun homme ne doit s'approcher d'un membre de sa famille pour découvrir la nudité de son parent par le sang: Ne découvre pas la nudité de ta fille, de ta sœur – car elle est la fille de ton père ou de ta mère –, de la femme de ton père, de la sœur de ton père, de l'enfant de ta sœur en te souillant avec eux (cf. Lv 6, 6-18). Pareillement, dans la deuxième série de commandements, Moïse a maudit celui qui couche avec la femme de son père car il découvre la nudité de son père, avec sa sœur car elle est la fille de son père ou de sa mère (Dt 27, 20-22). Pareillement, les canons apostoliques ont disposé qu'aucun homme ne s'approchera d'un membre de sa famille – pour une relation adultère ou pour un mariage – jusqu'au quatrième degré de parenté.

CCL 17. Celui qui épouse deux sœurs ou la fille de sa sœur ne pourra pas devenir clerc.

ՀԱԹ ԺՉ. Հարցումն. Եթէ ոք հարազատի եղբաւր կամ հարազատի քեռ դուստր կին առնիցէ եւ նովին կացցէ մինչեւ ցվախճան, որպէս պարտ է նայել ընդ նոսա կամ որպէս հրաման տալ ի սրբութիւնսն մերձենալոյ:

Պատասխանի. Չէ արժան մերձենալ:

ՀԱԹ ԺԷ. Հարցումն. Եթէ հարազատաց որդիք պաշտ իցէ այր եւ կին լինել: Պատասխանի. Չէ արժան. չէ կին, այլ պոռնկութիւն:

ԲԱԿ ԾԱ. Ցայս իմն առաւել հակէ մարդ եթէ գտցէ յաւրինաց ինչ որ ըստ կամաց հեշտութեան լինի, ընդ լծով ծառայութեան աւրինաց անկանի. իսկ ապա թէ գուցէ ինչ ծանր աւրինացն ասացեալ առ Քրիստոսի ազատութիւնն փախուցեալ անկանիցի, այլ ես ծաղր առնեմ զայն, որ զժամանակ աւրէնադրութեանն ոչ կարաց իմանալ. աւրէնքն ասեն. «Այնոցիկ են, որ ընդ աւրինաւքն են» (յմմտ. Ա. Կոր. Թ. 21). ապա թէ ոչ պարտ է եւ ընդ թլփատութեամբ աւրինացն անկանել մեզ. բայց եթէ ոք ախտիւ պղծութեան յաղթեալ երբեք անկցի յերկուց քերց յանկրաւն խառնակութիւն, ոչ ամուսնութիւն պարտ է համարել զայն եւ ոչ բնաւ ամենեւին յեկեղեցւոյ միաբանութիւն ընդունել յառաջ մինչ չեւ մեկնեալ է զնոսա ի միմեանց: Բայց սակայն թէ եւ այլ ինչ ոչ գոյր ասել, շատ եւ բաւական էր սովորութիւնն առ ի չարին պահպանութիւն: Ոչ է պարտ, ասէ, «Հաւր եւ որդւոյ ընդ միում բոզի խառնակել» (Ամովս Բ. 7): Բազում եւ այլ ազգ պիղծ ախտից զոր դիւացն վարդապետանոց եգիտ, եւ աստուածային գիրք լռեցին՝ զպարկեշտ զպատուիրանացն բարբառեցան զազիր եւ գարշ անուանակոչութեամբք աղտեղեալ ոչ կամեցեալք, այլ ընդհանուր ի մի վայր բաւանդակ անուամբք զաղտեղութիւնս նոցա բամբասեաց, որպէս եւ Պաւղոս առաքեալ ասէ, եթէ «Պոռնկութիւն եւ ամենայն աղտեղութիւն մի՛ անուանեսցի ի միջի ձերում, որպէս եւ վայել է սրբոց» (Եփես. Ե. 3). զի աղտեղութեանն անուամբ զարուացն զանճառագործութիւն եւ զիգացն ի մի վայր փակեաց. ապա ուրեմն ոչ ամենայն իրաւք լուռն կալ աներկիւղութիւն է ցանկասիրացն: Բայց ես ոչ լուռ կալ ասեմ զայս, այլ կարի քաջ ի բաց հրաժարեցուցանէ աւրէնսդիրն, քանզի ասելն թէ «Ոչ մտանիցես առ ամենայն ընտանութիւն մարմնոյ քո» (Ղեւտ. ԺԸ. 6) մերկանալ զամաւթ խայտառականաց նոցա՝ այսու ի մի վայր ածեալ փակէ զամենայն ազգ ընտանութեանն. զինչ այլ ընտանեգոյն կայցէ ուրուք, քան զկին իւր, զի ոչ եւս երկու, այլ մի մարմին են (յմմտ. Մար. Ժ. 8). եւ ի ձեռն կնոջն քոյր կնոջն յընտանութիւն առնն շրջեալ փոխեցաւ. զի որ զմայր կնոջն ոչ իշխէ առնուլ եւ ոչ զդուստր կնոջն՝ եւ ոչ զքոյր նորին, վասն որոյ եւ ոչ զքոյրն իւր. եւ այս անդրէն առ կին իւր դարձեալ առ ի չդառնալ եւ ոչ կնոջն յամուսնութիւն ընդ ընտանիս առն իւրոյ. քանզի հասարակ է ի վերայ երկոցունց ազգակցութեանն իրաւունք. բայց ես ամենեցուն, որ յաղագս ամուսնութեան խորհին, բողոքեմ, եթէ «Անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ» (Ա. Կոր. Է. 31), եւ ժամանակս կարճեալ է, զի որ ունիցին կանայս՝ իբրեւ թէ ոչ ունիցին: Բայց գլուխ Ճառելոցս՝ եթէ աւրինաւք դիմեալ ոք յամուսնութիւն, բացեալ առաջի կայ յաշխարհիս ամենայն. ապա եթէ ախտաւոր է փոյթ ամուսնութեանն, վասն այնորիկ առաւել արգելի է, զի ուսցի ամենայն ոք զանձն իւր սրբութեամբ ստանալ եւ մի՛ յախտս ցանկութեան անկանել:

QCA 16. Celui qui épouse la fille de son frère ou de sa sœur et reste avec elle jusqu'à sa mort ne pourra pas recevoir la communion (litt. la sainteté).

QCA 17. L'union d'enfants unis par des liens parenté n'est pas un mariage, mais de la fornication.

BAC 51. L'homme suit la loi tant qu'elle l'arrange et quand il la trouve pénible, il se réfugie vers la soi-disant liberté du Christ (cf. Gal 5, 1; 1 Co 11, 21); toutefois, si quelqu'un poussé par une passion impure a des rapports contraires à la religion avec deux sœurs, il ne s'agira pas de mariage et ils ne seront pas admis parmi l'assemblée de l'Église jusqu'à ce qu'ils se séparent. Et même s'il n'y a rien d'autre à dire, une telle coutume (*i.e.* pratique) elle-même est plus que suffisante pour l'existence du mal. Le prophète dit qu'il est illicite «qu'un homme et son père s'unissent avec la même fille» (Am 2, 7). Il existe d'innombrables autres sortes de passions impures inventées par l'école des démons qui ne sont pas mentionnées par les Écritures, afin de ne pas évoquer des choses dégoûtantes (Ép 5, 3); mais ce silence ne signifie pas que les voluptueux peuvent agir avec insolence. Mais moi (*i.e.* Basile de Césarée), j'estime qu'il ne s'agit pas de silence, car le législateur a dit, «nul d'entre vous ne s'approchera de sa parente pour découvrir sa nudité» (Lv 18, 6), et ceci englobe toute forme de parenté; il n'y a rien de plus intime qu'un mari et sa femme (cf. Mc 10, 8); et par sa femme, la sœur de celle-ci entre dans la famille du mari; de même, il ne pourra pas épouser la mère ou la fille de sa femme ni la sœur de sa femme, ni sa propre sœur; de même, sa femme n'épousera pas un parent de son mari, car le droit de la parenté est commun aux deux époux (Co 7, 31, 29; 1 Th 4, 4-5).

ՇԱՀ ԺԲ. Որ զկին հաւր որդի ունիցի, զոր Պաւղոս յամենայն ժամ կականէր եւ ողբայր զԿորնթացիս զի ասէր, թէ՝ «Եւ այդ եւս եղեւ մինչեւ զկին հաւր իւրոյ ունել» (Ա. Կոր. Ե. 1). եւ ասէր, թէ՝ «Կտրեսջիք, ի միջոյ ի բաց հանջիք եւ մատնեսջիք ի ձեռս սատանայի, զի ոգին ապրեսցի յաւուրն դատաստանի» (յմմտ. Ա. Կոր Ե. 2, 5): Եւ կամ Ռուբէն որդին Յակոբայ՝ զիմրդ անիծաւ վասն ընդ հարճի հաւրն ննջելոյ: Արդ՝ եթէ ոք զկին հաւր իւրոյ ունիցի, ոչ ընդունի զնա կանոնս եւ ի սուրբ եկեղեցի նա մի՛ մտցէ եւ յամենայն ժողովոյս նզովեալ լիցի, մինչեւ դարձցի եւ ապաշխարեսցէ Է. ամ ընդ ունկնդիրս, Գ. ամս ընդ ձեռամբ, Ճ. դրամ աղքատաց, Ծ՝ յեկեղեցի, եւ այլ վարքն քննեալ՝ հաղորդեսցի:

Եթէ հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբաւր, նոյն պատուհաս եւ նզովք լիցին: Այլ զջերմ հարազատի եւ զազգականի զկին ոք մի՛ իշխեսցէ ունել ի կնութեան եւ կամ շնալ: Եւ եթէ կնոջն կամաւք իցէ խառնակութիւնն՝ զպատուհասն եւ զտուգանս եւ զնզովս զնոյն կրեսցէ եւ յապաշխարութիւն կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, Ժ. տարի աղասցէ գոդեացն. ապա եթէ ազատ է եւ ի գոդիսն չերթայ՝ Ց դրամ տացէ նոցա:

ՇԱՀ ԺԳ. Որ զազգական կին առնէ՝ այս պղծութիւն եւ գարշանք յայտնի լիցի, «Եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում» (Եփես. Ե. 3). զի մի՛ ոք ընդ աղտախանս մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց եւ անաստուած ամպարիշտ ազգացն. զոր հրաման առեալ մեծ աւրէնսուսոյց մարգարէին Մովսէսի ի Կենարարէն, թէ՝ «Պատուիրեա՛ որդւոցն Իսրաէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ, յայտնել զառականս նոցա» (Ղեւտ. ԺԸ. 6): Եւ յանէծսն գրէր Մովսէս, թէ «Անիծեալ որ ննջիցէ ընդ մերձաւորի արեան իւրոյ» (Բ. Օրէնք ԻԷ. 20, 22): Արդ՝ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն եւ զքրիստոնէութիւն զգեցեալ եւ զտէրունական մկրտութիւն՝ զկնիք եւ զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբաւրորդի կամ զհաւրաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի «Բարկութիւն անձին իւրում գանձէ» (յմմտ. Յռ. Բ. 5) այնպիսին. «Որդի անաւրինի թերակատար եղիցի եւ զաւակ անաւրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի» (Իմաս. Գ. 16): Զի եթէ զկին եղբաւր իւրոյ ունելոյ՝ մեծի մարգարէին եւ կարապետին Յովհաննու գլուխն կտրեցաւ (յմմտ. Մատթ. ԺԴ. 3-11, Մարկ. Զ. 24-27), ապա զինչ եւս աղէտս ոչ համարեսցի ոք, որ զազգական իւր կին առնիցէ, զոր ոչ հրամայեն աւրէնքն քրիստոնեականք եւ սուրբ առաքեալքն եւ աշակերտքն Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք ընդդիմացեալ աւրինացս եւ հաստատեալ կանոնիս եւ ամպարշտեալ ի հեթանոսութիւն եւ ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին եղիցի եւ բաժին նորա եւ ի սրբոյ եկեղեցւոյ աւտարացեալ եղիցի, որպէս եւ գրեալ է. «Բարձցի ամպարիշտն յերկրէ եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ» (Ես. ԻՉ. 10). «Ընդ անաւրէնս համարեսցի» (Ես. ՃԳ. 12, Մարկ. ԺԵ. 28) ըստ գրեցելոյն՝ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանաւրէնութիւն» (Սաղ. Զ. 9), մի՛ ոք ընկալցի զպատարագս նորա, քանզի պիղծ է առաջի Տեառն պատարագ նորա: Եւ թէ մատուցողն պիղծ է, առաւել եւս եւ զոհն նորա: Եւ եկեղեցի եւ կանոնք զապաշխարութիւն նորա ոչ ընդունին, զի «Ի խոտորել յինէն անզգամին եւ ես ինչ ոչ փոյթ առնէի» (Սաղ. Ճ. 4). մինչեւ թողցեն եւ դարձցին յանզգամութենէն եւ ի պիղծ գործոցն ըստ մարգարէին ձայնի. «Ընկեցէք

SHV 12. Le fils qui prend la femme de son père (1 Co 5, 1; 2, 5; Gn 35, 22) ne sera pas reçu par les canons, il n'entrera pas dans l'église et sera anathématisé par toute l'assemblée, jusqu'à ce qu'il se convertisse et fasse pénitence pendant sept ans avec les auditeurs, trois ans sous surveillance, et il versera 50 *dram* aux pauvres et 50 *dram* à l'Église, et après que ses mœurs auront été examinées, il communiera.

Si le père prend la femme de son fils, ou le frère celle de son frère, les mêmes châtiments et anathèmes s'appliqueront. Mais personne n'aura le droit de prendre pour femme ou pour une relation adultère une femme du même sang ou une parente. Et si la débauche se fait avec la volonté de la femme, elle subira le même châtiment, l'amende et l'anathème, et elle se tiendra dans la pénitence, et sera placée dans une léproserie où elle moudra de la farine pour les lépreux pendant dix ans; mais si elle est noble et qu'elle n'aille pas chez les lépreux, elle leur versera 300 *dram*.

SHV 13. Celui qui prend pour femme une parente, commet un acte manifestement impur et abominable et suit la coutume des païens et des nations athées impies (Ép 5, 3; Lv 18, 6; Dt 27, 20, 22). Aucun chrétien n'aura le droit de prendre pour femme sa sœur ou la fille de sa sœur, ou la fille de son frère, ou la sœur de son père, ou toute autre personne membre de sa parenté jusqu'au quatrième degré (Rm 2, 5; Sg 3, 16; Mt 14, 3-11). À présent, si quelqu'un s'oppose à ces lois et à ce canon qui a été établi, et avec impiété s'égare dans le paganisme et le judaïsme, sa part sera placée avec eux, et il deviendra étranger à la sainte Église (Is 26, 10; 53, 10; Ps 6, 9; 100, 4; Is 1, 16).

Celui qui bénit le mariage de telles personnes ou assiste aux noces se rend complice de leurs actes malfaisants, et il sera éloigné de l'ordre des ministres du culte. L'évêque ou le prêtre convaincu d'avoir été au courant sera déchu de son siège et de son sacerdoce, et il ne s'approchera pas de l'ordre des ministres du culte. Mais ceux qui se sont écartés des saintes lois et de la règle de l'Église, s'ils se convertissent de leur mariage impur et se séparent l'un de l'autre, pour le salut de leur âme, ils donneront des dons considérables, jusqu'à la moitié de leur fortune et de leurs biens aux nécessiteux, aux affligés et à la sainte Église; ils feront pénitence chaque jour de leur vie, pour devenir dignes de recevoir la communion à l'achèvement de leur vie. Mais les autorités ecclésiastiques qui étaient au courant et qui avaient béni le mariage paieront une amende de 500 *dram* aux pauvres, si c'est un évêque, de 200 *dram*, si c'est un prêtre; et celui qui a béni le mariage paiera 200 *dram*, et alors ils pourront regagner leur siège et leur sacerdoce.

Mais si les époux ne renoncent pas à leur mariage impur, le célébrant du mariage et ceux des prêtres qui étaient au courant ne regagneront pas leur siège et leur sacerdoce. Ces lois et ces canons s'appliquent autant pour le noble que le vilain.

Mais si quelqu'un s'élève contre ces canons et demande pour quelle raison les canons de Nicée n'ont pas disposé des sanctions aussi sévères, la réponse est que

զչարիս ձեր» (Ես. Ա. 16), ասէ Տէր:

Եթէ ոք այնպիսեացն պսակ աւրհնեսցէ, կամ ի հարսանիս երթիցէ, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա՝ եւ ի կարգէ պաշտաւնէից հեռացեալ եղիցի: Եւ եթէ ոք եպիսկոպոս կամ երէց գտցի ի խորհրդեանն՝ յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկեալ եղիցին եւ ի կարգ պաշտաւնէիցն մի՛ մերձեսցին: Բայց որ խոտորեցան յաւրինաց սրբոց եւ ի կարգէ եկեղեցւոյ, եթէ դարձցին ի պիղծ ամուսնութենէն, եւ մեկնեսցին ի միմեանց՝ ի ձեռն մեծամեծ տրոց մինչեւ զկէս կենաց եւ ընչից իւրեանց հոգւոց իւրեանց բաժին տացեն ի կարաւտեալս եւ ի վշտագնեալս եւ ի սուրբ եկեղեցի. զաւուրս կենաց իւրեանց ապաշխարեալ՝ ի վախճանին թէ լիցին հաղորդելոյ արժանի: Ապա եւ գլխաւորք եկեղեցւոյն որ ի խորհրդին էին եւ որ զպսակն աւրհնեաց, Շ դրամ եպիսկոպոսն, տուգանեսցի յաղքատս եւ Մ՝ երէցն, եւ Մ՝ որ զպսակն աւրհնեաց, եւ ապա մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն:

Ապա եթէ նոքա ոչ մեկնեսցին ի պիղծ ամուսնութենէն՝ եւ պսակադիրն եւ ի քահանայիցն որ ի խորհրդին եղեալ էին, մի՛ մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն: Թէ ազատ է, թէ շինական, աւրէնք եւ կանոնք այդ կացցեն:

Ապա եթէ ոք ընդդէմ եկեալ ասիցէ, թէ ի Նիկիական կանոնսն ընդէ՞ր չէ այդպէս ծանր եղեալ. վասն զի ոչ ունէր ոք ակն թէ այդպիսի մեծամեծ չարիք եւ աւճիրք յաշխարհի գործի՛ցին, այլ անդէն վաղվաղակի մաւտակտուր խզէին զչար արմատ կորստեանն:

ԹՍՎ Գ. Որ կին առնէ զմայր կամ զդուստր, ի հուր այրեցէք զնոսա: Անիծեալ որ առնէ զեղբաւր իւրոյ զկին, վասն զի ընդ եղբաւր իւրում պղծի. զի մի են նոքա: Որ առնէ զհաւրեղբաւր իւրոյ կին, որ առնէ զզոքանչ կին, որ առնէ զքենի կին, որ առնէ զթոռն կին, որ առնէ զհաւոյ կին, անիծեալ եղիցին նոքա (յմմտ. Ղեւտ. Ի. 11, 13, 14). եւ որ շնայ ընդ քեռ իւրում՝ անիծեալ լիցի (յմմտ. Ղեւտ. Ի. 17, Բ. Օրէնք ԻԷ. 22): Որոշեցէք զնոսա ի միմեանց եւ անջատեցէք. եւ ապաշխարութիւն նոցա ԺԵ. ամ՝ դրան արտաքոյ եւ Ե՝ ընդ ապաշխարողս եւ Գ. ամ աւրէնս մի՛ առցէ:

ՍԻՈ ԺԶ. Ցառաջ առաջին սուրբ հարքն յիւրեանց ժամանակս արգելին զազատս եւ զանազատս յարեան մերձաւորութենէ: Այժմ առ մեզ լուծեալ տեսանեմք, մանաւանդ յազատաց, զկանոն հարցն, զի անխտիր խառնին առ իւրեանց մերձաւորսն անկարգ ամուսնութեամբ: Ցայսմհետէ ի ցչորրորդ զարմ մի՛ իշխեսցեն ամուսնութեամբ զուգիլ. ապա թէ ոչ՝ նզովեսցին ի մէնջ, եւ ինքեանք տացեն պատասխանի Աստուծոյ ի մեծութեան նորա դատաստանին:

ԹԱՏ ԼԱ. Հարցումն. Եթէ ազգականք ամուսնանան, զինչ արասցուք:

Պատասխանի. Քակել արժան է ի միմեանց եւ ծանր ապաշխարութիւն ի վերայ դնել, զի չէ ամուսնութիւն, այլ յարակայ պոռնկութիւն եւ ընդ անիծիւք Արարչին:

ՎԱՉ Ժ. Այր՝ զերրորդ ազգի կին մի՛ արասցէ, եւ զեղբաւր կին մի՛ արասցէ:

ԲԳԿ ՀԱ. Եթէ ոք առնու կին ի մերձաւոր արենէ իւրմէ մինչեւ ի Զ-երորդն եւ յԷերորդն՝ նզովեալ եղիցի եւ մեկնեսցեն ի միմեանց առաջնորդքն. եւ վասն պսակին

personne ne pouvait prévoir que des méfaits et des crimes aussi considérables seraient commis en ce monde, mais pour le reste les Pères de Nicée arrachaient au plus près et détruisaient la mauvaise racine de perdition.

SEW 3. Celui qui épouse sa mère ou sa fille sera brûlé. Celui qui prend la femme de son frère sera maudit car il se souille avec son frère. Celui qui prend la fille de son oncle, qui épouse sa belle-mère, sa belle-sœur, sa petite fille, son aïeule (Lv 20, 11, 13-14, 17, 20-21), ou celui qui commet un adultère avec sa sœur sera maudit (Lv 20, 17; Dt 27, 22). Séparez-les et éloignez (litt. coupez)-les, les uns des autres, et ils feront pénitence pendant quinze ans à la porte de l'église, puis pendant cinq ans avec les pénitents, puis pendant trois ans encore, ils ne recevront pas la communion.

SIO 16. Dès le commencement, les premiers saints pères avaient interdits les unions consanguines aux nobles et aux non-nobles. De nos jours, leurs canons sont enfreints, notamment par les nobles, car ils s'unissent indistinctement à leurs proches par des mariages illégaux. Désormais, ils n'auront plus le droit de s'unir par mariage jusqu'au quatrième degré; sinon ils seront anathématisés par nous et devront en répondre devant Dieu et son grand tribunal.

THD 31. Les personnes unies par un lien de parenté qui se marient doivent être séparées et subir une lourde pénitence, car il ne s'agit pas d'un mariage, mais d'une ignoble fornication qui est maudite par le Créateur.

RVG 10. Un homme ne prendra pas pour femme une parente au troisième degré ni la femme de son frère.

ECB 71. Celui qui prend pour femme une parente jusqu'au sixième et septième degré sera anathématisé et les prélats les sépareront l'un de l'autre; et pour avoir

անարգելոյ Ճ. դրամ տուգանս տացէ յեկեղեցին եւ Գ. ամ առ դրանն ապաշխարեսցէ. բայց վարդապետն իշխան է զինչ կամեսցի:

ԲԳԿ ՄԺԵ. Եթէ ոք յիւր արենէ եւ ի մերձաւորէ խնամութիւն առնէ մինչեւ ի չորրորդ եւ ի հինգերորդ ազգն՝ պսակն անվաւեր լիցի եւ պսակադիրն լուծցի. Ճ. դրամ տուգանս տացէ եւ ապաշխարութիւն պոռնկին եղիցի եւ ում կամի առն լիցի:

ՍԿՆ ԻԲ. Վասն զազգական կին առնելոյ. ցհինգերորդն մի՛ իշխեսցէ, եւ զչորրորդն ապաշխարեսցէ եւ երրորդքն մեկնեսցին եւ ապաշխարեսցեն:

Բ. Հաւատ եւ դաւանանք

1. Կրօնական տարբերութիւն

ԼԱԻ Ժ. Չէ մարթ ոյք յեկեղեցւոյ մերոյ են ի պէսպէս եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ դդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ:

ԼԱԻ ԼԱ. Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել կամ առ հերձուածողս, բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի:

ՀԱԹ ՁԲ. Հարցումն. Թէ մոգի ուրուք կին կամի քրիստոնեայ լինել եւ այրն չարգելու, բայց ի կենդանութեան իւրում չարձակէ ի բաց, պարտ է նմա կնիք տալ, թէ ոչ. նոյնպէս եւ այրն եթէ կամի քրիստոնեայ լինել եւ կինն ի նմին մոգութեան հաստատուն կայ, պարտ է տալ կնիք ի նմին ամուսնութեան, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է տալ, կարի քաջ:

ՀԱԹ ՁԳ. Հարցումն. Թէ ոք ի քրիստոնէից լինի մոգ եւ կին նորին ի քրիստոնէութեան հաստատուն կայ. խիղճ ինչ է կնոջն, ընդ մոգի առնն կենալ, թէ ոչ, կամ սրբութեան հաւասարել համարձակութիւն է, թէ ոչ:

Պատասխանի. Ի սրբութիւնսն չէ իշխանութիւն մերձենալ, վասն զի նա եւ այրն իւր մի մարմին են. «Եղիցին, ասէ, երկոքին ի մարմին մի» (Ա. Կոր. Զ. 16):

ՍԻՈ ԺԱ. Քահանայք պատուէր արասցեն արանց եւ կանանց եւ դստերաց նոցա, զի ոչ արասցեն ընդ հեթանոսի գուգութիւն, զի չէ ամուսնութիւն, այլ անաւրէն եւ պիղծ խառնակութիւն, զի զինչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, զի չար է քան զշնութիւն, եւ որ գարշագոյն է քան զշնութիւն՝ բնական յանցանք:

ԿԻՐ Գ. Որք ամուսնացեալ են ընդ հեթանոսաց եւ տացէ նոցա Աստուած ժամանակ ապաշխարութեան, զամենայն ժամանակս ապաշխարեսցեն արտա-

outragé le mariage, ils paieront une amende de 100 *dram* à l'Église et feront pénitence pendant trois ans à la porte de l'église; mais le *vardapet* pourra les traiter comme il le souhaitera.

ECB 215. Celui qui contracte une alliance avec un parent consanguin jusqu'au quatrième ou cinquième degré verra son mariage frappé d'invalidité, et le célébrant sera déposé; il paiera une amende de 100 *dram* et supportera la pénitence des fornicateurs, puis l'homme pourra épouser qui il veut.

NPT 22. Il est interdit d'épouser une femme qui est un parent au cinquième degré, et si elle est parent au quatrième ou au troisième degré, ils se sépareront et feront pénitence.

B. Foi et confession

1. *Disparitas cultus*

LAO 10. Il n'est pas permis pour les membres de notre Église de livrer garçons et filles aux mariages bizarres et dissolus des païens (litt. étrangers), de donner à ceux-ci ou prendre femme d'eux.

LAO 31. Il ne faut pas contracter alliance avec les païens (litt. étrangers) ou les hérétiques, sauf s'ils acceptent de croire en la sainte Église.

QCA 82. Si la femme d'un zoroastrien souhaite devenir chrétienne et que son mari ne l'en empêche pas, mais que de son vivant il ne la répudie pas – ou si un mari zoroastrien veut devenir chrétien mais que sa femme reste fermement dans le zoroastrisme, l'un comme l'autre devront être baptisés, assurément.

QCA 83. La chrétienne dont le mari chrétien se convertit au zoroastrisme restera avec lui, mais elle ne pourra plus communier; car elle et son mari ne forment qu'un seul corps (1 Co 6, 17).

SIO 11. Les prêtres ordonneront aux hommes, aux femmes et à leurs filles de ne pas contracter d'union avec les païens, car il ne s'agit pas là d'un mariage, mais d'un concubinage impie et sale, car il n'y a rien de commun entre le fidèle et l'infidèle et cette union est pire que l'adultère, et ce qui est plus abominable que l'adultère est une faute contre-nature.

CYR 3. Si certains sont mariés avec des païens et que Dieu leur donne l'occasion de se repentir, ils feront pénitence avec des larmes et des aumônes en donnant la

սուաւք եւ ողորմութեամբ, որպէս զի զամենայն ինչս իւրեանց տացեն աղքատաց, ի տարւոջն միանգամ հաղորդեսցին աւրինաց: Ապա եթէ ոչ գոյ տեղի եւ ոչ զերծանի ի կապանաց անաւրէնութեանն, գնեսցեն ծառայս եւ ազատեսցեն քանի եւ կարասցեն. եւ ապա յետին թոշակին արժանի լինիցին:

ԿԻԻ Դ. Որք զժառանգս հեթանոսաց առնուն ի սնունդ, այնպէս է որպէս ոք զաւձ խնամարկեալ պաշտեսցէ ի ձեռն սովորութեան՝ ըստ ամուսնացելոցն ընդ հեթանոսական ազգին ուսան զանաստուածպաշտութիւնս նոցա. նոքա զթովչացն ապաշխարութիւնս կրեսցեն, Գ. ամ արտաքոյ ապաշխարեսցեն եւ Գ. ամ ընդ ապաշխարողսն ելցեն, եւ ապա հաղորդեսցին աւրինաց:

ԿԵՆ ՁՁ. Ոչ է պարտ ուղղափառաց եկեղեցւոյ ընդ հերետիկոսաց ամուսնութիւն առնել:

ԲԳԿ ԾԱ. Թէ ոք ամուսնասցի ընդ առն անաւրինի, թէ թողցէ զպղծութիւնն եւ յապաշխարութիւն եկեսցէ՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, Ա՝ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, տրաւք եւ արտասուաւք արժանի լիցի աւրինաց: Ապա եթէ դարձուսցէ զայրն ի մոլորութենէն ըստ գրեցելումն, թէ՝ «Որ դարձուցանէ զմոլորեալն նա մեծ կոչեսցի» (յմմտ. Մատթ. Ե. 19), բայց սակայն վասն անարգանաց սուրբ պսակին՝ Ա. ամաւ սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՃԾԴ. Թէ ոք յանհաւատից առցէ իւր կին ի հաւատացելոց եւ ինքն յաւժարի ի հաւատս՝ նախ տեսցեն սրտի մտաւք գդարձ նորա եւ ապա առցէ զաւծումն մկրտութեան եւ զպսակն աւրհնութեան: Ապա եթէ յառաջ ամուսնասցի եւ զպսակն աւրհնութեան պղծեսցէ՝ ապաշխարութիւն ըստ այնմ որ ընդ անաւրինին պոռնկի:

ՍԿՆ ԺԴ. Վասն որ զհեթանոս կին առնէ կամ լինի առն՝ չար է, մանաւանդ եթէ յանհաւատութեան կան մնան: Եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցէ եւ զծնունդսն ածիցէ ի հաւատս:

2. Կուսութեան ուխտ եւ խոստում

ՀԱՅ ԺՁ. Որոյ մոնազանութիւն խոստացեալ է՝ կամաւք եւ ոչ ի հարկէ, եւ խնդրէ ամուսնանալ, իբրեւ զուրացողն եւ դարձող է ի կարգ քահանայութեան. ի դատաստան անձին մի՛ խաբեսցի:

ԱՆԿ Ի. Վասն այնոցիկ ոյք ի չափ հասակի հասեալ իցեն եւ կուսութիւն խոստանայցեն պահել եւ ստեցին խոստմանն՝ ի շնութիւն անկան, կոյս այնուհետեւ ոչ եւս կարէ լինել, այլ եղիցի նա որպէս այն որ երկուս կանայս արարեալ իցէ, զսահման նոցին ընկալցի եւ զապաշխարութիւն նոցա Բ. ամս ընդ ձեռամբ առ դրանն, եւ Ա. ամ մտեալ յեկեղեցին ընդ ապաշխարողս ելցէ, զչերմութիւն ապաշխարութեանն տեսցեն եւ հաղորդեսցի աւրինացն, բայց յաւծումն քահանայութեան մի՛ մերձես-

totalité de leurs biens aux pauvres, afin de pouvoir communier une fois par an. Mais si les époux ne se séparent pas, ils achèteront des serviteurs pour les affranchir, autant qu'ils le pourront, et ainsi, ils seront dignes du viatique.

CYR 4. Ceux qui prennent des rejetons de païens pour les élever sont identiques aux adorateurs d'un serpent qu'ils choieraient, à l'image de ceux qui ont contracté mariage avec la race des païens, ayant appris d'eux l'athéisme; ils subiront la pénitence des charmeurs de serpents en se tenant trois ans hors de l'église, puis en sortant de celle-ci en compagnie des pénitents durant trois ans, et enfin, ils communieront à l'eucharistie.

SCN 86. Il ne faut pas que les fidèles orthodoxes de l'Église contractent mariage avec des hétérodoxes.

ECB 51. Celle qui se marie avec un homme impie, puis s'éloigne de la souillure fera pénitence pendant trois ans avec les auditeurs, puis pendant deux ans sous surveillance, et elle entrera et sortira avec les pénitents pendant un an, et par des aumônes et des larmes, elle sera digne de communier. Mais si l'homme se détourne de son impiété (litt. de son égarement), il se grandira (cf. Mt 5, 19), mais du fait qu'il a outragé le mariage, il se purifiera pendant un an avant de communier à la communion.

ECB 154. L'infidèle qui épouse une croyante et souhaite embrasser la foi chrétienne sera examiné sur la sincérité de sa conversion, puis il recevra l'onction du baptême et la couronne de bénédiction du mariage. Mais s'ils se souillent avant le mariage, elle supportera la pénitence réservée à ceux qui ont forniqué avec des infidèles.

NPT 14. Celui qui épouse une païenne - ou la païenne qui se marie avec un chrétien - est un criminel, et tout particulièrement s'il reste dans l'incroyance. Mais s'ils se séparent ou si l'infidèle meurt, elle fera pénitence pendant quinze ans et leurs enfants seront menés vers la foi.

2. Vœu et promesse de virginité

CPC 16. Celui qui promet de devenir religieux volontairement et non sous la contrainte, puis souhaite se marier sera considéré comme un apostat, et un apostat vis-à-vis de son ordre sacerdotal; sa personne n'échappera pas au Jugement.

ACY 20. Ceux qui parvenus à l'âge viril promettent de garder la virginité, puis tombent dans l'adultère sont équivalents aux digames, pendant deux ans ils seront sous surveillance à la porte de l'église et pendant un an, ils entreront dans l'église et en sortiront avec les pénitents, et on examinera la ferveur de leur pénitence, et ils communieront, mais ils ne pourront pas accéder au sacerdoce; mais il sera désormais interdit aux vierges d'aller chez certains comme des sœurs.

ցին. այլ վասն կուսանացն որ մերձենային առ ոմանս իբրեւ քեռք, զայնպիսիսն խափանեցաք, զի մի՛ եւս լիցին:

ԳՐԻ ԺԳ. Որ զկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեաց եւ ապա ապականեցաւ՝ Է. ամ ապաշխարեսցէ:

ԳՐԻ Լ. Կոյս որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ, նոյնպէս եւ մոնազն, մի՛ իշխեսցէ ամուսնանալ. ապա եթէ գտցի՝ ի հաղորդութենէն անկեալ հեռասցի, եւ եպիսկոպոսն տեսցէ զվարսն եւ որպէս կամի՝ մարդասիրեսցէ:

ՀԱԹ ԿԵ. Հարցումն. Թէ ոք ի տղայութենէ իւրմէ ի մէջ վանականաց սնեալ է մինչեւ ի չափ հասակի, եւ առեալ է յանձն զվարս միանձնութեան՝ կուսութեամբ կեալ յաշխարհի եւ ապա թուլանայցէ յայսմ խոստմանց եւ առնէ կին, արժանի՞ է քահանայութեան:

Պատասխանի. Չէ արժանի, վասն զի ընդ այնոսիկ համարեալ է որոց երկուս կանայս արարեալ է:

ԲԱԿ Ժ. Կուսանաց որոց միանգամ խոստացեալ իցեն զվարս իւրեանց Քրիստոսի նուիրել եւ զգաստութեամբ եւ համեստութեամբ գնալ, ապա դարձեալ անկանիցին ի մարմնաւորական ախտս եւ անարգեսցեն զդաշինսն, զոր եդին առ Աստուած: Եւ արդ, եթէ այրութիւն նուազ գտանի քան զկուսութիւնն, ապա յայտ է թէ եւ մեղանչել կուսին առաւել չար է, քան զայրուոյն: Եւ արդ, տեսցուք այժմ զգրեալսն ի Տիմոթեայ ի Պաւղոսէ, զոր ասեն, թէ «Ի մանկամարդաց այրեացն հրաժարեա, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ, ամուսնանալ կամին. իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջին հաւատսն արհամարհեցին» (Ա. Տիմ. Ե. 11-12), իսկ եթէ այրին ընդ այնպիսի ծանր տանջանաւք, որպէս է որ ի Քրիստոս հաւատսն ունին՝ անարգեն: Եւ զինչ ինչ կարեմք մեք զմտաւ ածել յաղագս կուսին յանցանաց, որ նոյն ինքն է հարսն Քրիստոսի, եւ սպաս ընտիր եւ նուէր Աստուծոյ կոչեցեալ: Ապա յայտ է, թէ այրին որպէս զաղախին ապականեալ դատապարտի, իսկ կոյսն ընդ դատաստանաւք շնացելոցն անկեալ կայ:

ԲԱԿ ԺԱ. Իսկ զհաւատաւորացն պոռնկութիւն մի՛ ոք համարեսցի յամուսնութիւն, այլ մանաւանդ յափշտակել զնոսա յայնպիսիշաւշափմանէ, քանզի այսոքիկ իմաստք եկեղեցւոյ աւգտութեան զգուշութիւն գործեն եւ զմէնջ հերձուածողացն բռնահարութիւն ոչ գտանել:

ԲԱԿ ԻԹ. Որ զկուսութիւն խոստացեալ է պահել եւ անկցի ի խոստմանէն եւ շնայցէ ընդ ումեք, նոյնպէս եւ որ զմոնազնութիւն խոստացեալ է պահել եւ անկցի ի շնութիւն, զամենայն ժամանակս կենաց իւրեանց ապաշխարեսցեն:

ԵՓՐ Ա. Քահանայ կամ կրաւնաւոր կամ սարկաւագ, որ կամակոր մտաւք ինքեան ընկենուն զպատիւն կամ զբեմն վասն ծանրութեան կամ ծուլութեան կամ ամբարտաւանութեան կամ հակառակութեան կամ ամուսնութեան՝ արտաքս

GLI 13. Celui qui a offert sa virginité à Dieu et puis s'est souillé fera pénitence pendant sept ans.

GLI 30. La vierge qui offre sa personne à Dieu, de même que le moine n'aura pas le droit de se marier; sinon il sera écarté de la communion et l'évêque examinera sa conduite, et selon sa volonté, le traitera avec humanité.

QCA 65. Celui qui depuis son enfance est élevé parmi les religieux et qui, une fois adulte, devient un solitaire vivant dans la virginité, mais qui ensuite viole son vœu et se marie ne sera pas digne de la prêtrise, car il doit être rangé parmi les digames.

BAC 10. S'agissant des vierges qui ont fait la promesse d'offrir leur personne au Christ et de vivre dans la chasteté et la modestie, mais qui par la suite sont tombées dans les vices corporels et ont méprisé le pacte qu'elles avaient contracté avec Dieu. Du fait que le veuvage est inférieur à la virginité, le péché de la vierge est un plus grand mal que celui de la veuve – comme l'évoquait Paul (1 Tm 5, 11-12). Et si la veuve est soumise à une punition si dure quand elle pèche, du fait qu'elle a déshonoré la foi du Christ, dès lors que pouvons-nous penser des péchés de la vierge qui est qualifiée d'épouse du Christ ? Donc évidemment, si une veuve qui a péché est condamnée comme une servante souillée, la vierge qui a péché sera soumise à la punition des adultères.

BAC 11. Et personne ne doit considérer la fornication des religieuses comme un mariage et plus encore, il convient de les préserver de tels contacts, sachant que la posture (litt. la tyrannie) des hérétiques nous est étrangère.

BAC 29. Celui qui a promis de garder la virginité et qui viole sa promesse, et fornique avec quelqu'un, de même que celui qui a promis d'être moine, et qui tombe dans l'adultère devra, faire pénitence tout au long de sa vie.

SEP 1. Le prêtre, le religieux ou le diacre qui rabaisse sa dignité et son trône du fait de sa torpeur, sa paresse, son orgueil ou en se mariant sera mis à l'écart de l'Église, du peuple et de la communion, car il a outragé le Fils de Dieu; mais s'il

ընկեսցի յեկեղեցւոյ եւ ի ժողովրդոց եւ ի կենդանի խորհրդոյն, քանզի հաւասար է նա այնոցիկ որ զՈրդին Աստուծոյ առ ոտն հարին եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցան եւ զշնորհաց հոգին թշնամանեցին. ապա եթէ ապաշխարեալ դարձցին, յետ Է. ամի ապաշխարութեան արժանասցին եկեղեցւոյ ի հաղորդութիւն. իսկ զպատիւն եւ զսքեմն ըստ կամաց եպիսկոպոսին առցեն:

ԿԵՆ ԻԹ. Որք կուսութիւն խոստացան եւ արհամարհեցին զխոստումն, ընդ երկրորդ ամուսնացելոցն ապաշխարեսցեն:

ԲԳԿ Զ. Եթէ ոք կուսութիւն խոստանայ պահել եւ պոռնկի, զամենայն աւուրս կենաց իւրոց ընդ ձեռամբ կացցէ:

ԲԳԿ ԼԳ. Որ մոնոզոնութիւն խոստանայ եւ կին առնէ, ուրացող է, նոյնպէս եւ քահանայն:

ԲԳԿ ԼԹ. Վասն այնոցիկ որ զանձինս իւրեանց նուիրեցին Աստուծոյ եւ շնան եւ կին առնեն եւ արանց լինին՝ Է. ամ ապաշխարեսցեն եւ բազում տրաւք աղքատաց արժանի լիցին աւրինաց:

ԳԱՍ ԺԹ. Որք կուսանալ խոստացան Աստուծոյ եւ պոռնկեցան՝ Զ. ամ արտաքս մնասցեն, Բ՝ ի ներքս ընդ լսողսն ոչ հաղորդեալ, ապա առցէ զձեւ կուսանի եւ հաղորդեսցի:

ԳԱՍ Ի. Որք պոռնկեցան ընդ կուսան հաւատաւորացն՝ զսպանողին կրեսցեն վտանգ, զի ապականեաց զտաճարն Աստուծոյ եւ զՔրիստոսի հարսնացեալն. ԺԵ. ամ ապաշխարեսցէ, ապա մտցէ ի հաւտն՝ սրբեալ ի չարէն եւ յելս անձինն հաղորդեսցի աւրինաց:

Գ. Կանոնական ընդունելի պայմաններ

1. Տարիք եւ ազատ ընտրութիւն

ԳՐԻ Ը. Թէ ոք գաղտ պսակ դիցէ՝ պսակադիրն լուծցի:

ՀԱԹ ԻԸ. Հարցումն. Եթէ ոք զդուստր իւր կամ զաղախին կամեսցի տալ առն եւ նոքա աղաղակիցեն. «Ոչ կամիմք լինել աշխարհականք, այլ սրբութեամբ եւ կուսութեամբ կամիմք կեալ յաշխարհի». եւ ի բռնադատելն զնոսա կամ խեղդին կամ ի քարէ անկանին, որպէս վասն մեռելոյն, պարտ է յիշատակ առնել, կամ որպիսի վնասակարութեան արժանի զնեղիչս նոցա համարել պարտ է. խնդրելի է բանս:

Պատասխանի. Ոչ է պարտ առնել զյիշատակն, զի անձնասպան եղեն. եւ որք նեղեցինն՝ ապաշխարեսցեն իբրեւ սպանողք:

se convertit et fait pénitence pendant sept ans il pourra communier, et l'évêque décidera s'il peut reprendre son ministère ou sa robe monacale.

SCN 29. Ceux qui ont violé leur promesse de virginité feront pénitence avec ceux qui se sont mariés une seconde fois.

ECB 6. Celui qui promet de rester vierge, puis fornique se tiendra dans la pénitence sous surveillance tous les jours de sa vie.

ECB 33. Celui qui promet de devenir moine puis se marie est un apostat, de même que le prêtre qui se marie.

ECB 39. Ceux qui promettent de rester vierges, puis commettent l'adultère et se marient feront pénitence pendant sept ans, et par de nombreux dons en faveur des nécessiteux, ils se rendront dignes de la communion.

GNT 19. Ceux qui ont promis leur virginité à Dieu, puis ont forniqué se tiendront pendant six ans à l'extérieur de l'église, puis pendant deux ans à l'intérieur avec les auditeurs sans communier, ensuite qu'ils se comportent comme une personne vierge et communient.

GNT 20. Ceux qui ont forniqué avec des fidèles vierges supporteront le danger d'homicide, car ils ont corrompu le temple de Dieu et l'épouse du Christ; ils feront pénitence pendant quinze ans, puis entreront parmi les ouailles, purifiés du mal, et au moment de leur trépas, ils communieront à l'eucharistie.

C. Les conditions personnelles canoniques

1. L'âge et le libre consentement

GLI 8. Si quelqu'un organise un mariage secret, le célébrant sera destitué.

QCA 28. La fille ou la servante qui souhaitait vivre dans la virginité, mais qui après avoir été mariée de force par ceux ayant autorité sur elle se suicide, ne sera pas commémorée car elle s'est suicidée; et les oppresseurs subiront la pénitence des homicides.

ԲԱԿ Ի. Իսկ աղջիկ ոք թէ արտաքոյ կամաց հաւր իւրոյ այլում հետեւեսցի՝ ի պոռնկութիւն համարեալ է. իսկ ապա թէ եկեալ հաշտեսցի ընդ ծնաւղս իւր՝ չէ պարտ իսկոյն վաղվաղակի ընդունել զնա յեկեղեցի, այլ զերեամ մի ընդ պատուհասիւ առնել զերկոսեան, զի որ կեայ ընդ շնացողի՝ շնացող է զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԲԱԿ ԻԱ. Իսկ եթէ ոք յաղախնանց արտաքոյ կամաց տեառնն իւրոյ ամուսնացի՝ ի պոռնկութիւն համարեալ է: իսկ եթէ համարձակութեամբ յայտնի առնուցու՝ ամուսնութիւն համարեալ է, եւ ոչ եւս հաստատուն լինի իշխանութիւն տեառն իւրոյ ի վերայ նորա:

ԲԱԿ ԻԳ. Իսկ որք միանգամ արտաքոյ կամաց որք իշխեսցեն նոցա՝ ամուսնանան, ի պոռնկութիւն համարեալ է. ապա եթէ հրաման առցէ ի նոցանէ, յայնժամ հաստատի ամուսնութիւն նոցա:

ՍԱՊ ԻԷ. Պատուէր արարէք նոցա, զի տղայոց կանայս մի՛ խաւսեսցին, եւ մի՛ կատարելոցն՝ առանց զիրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ. եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի՛ աւրհնէք մինչեւ ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան, պսակ մի՛ իշխէք դնել առանց քննութեան եւ ցնսին ինքեանս հարցանելոյ՝ գուցէ բռնադատութեամբ ծնաւղացն ակամայ հաւանեալ իցեն, եւ զայնպիսի հարսանիս մի՛ իշխէք յանձն առնուլ, զի մինչեւ ցայսաւր յայդպիսի անկարգութենէ բազում վնասք գնացին յաշխարհի՝ հոգեւոր եւ մարմնաւոր:

ՍԱՊ ԻԸ. Ապա եթէ լսեմ՝ եթէ ոք ի քահանայից յանդգնի եւ արտաքոյ մերոյ հրամանի այնպիսեացն պսակ աւրհնեսցէ՝ գիտասցէ, զի քահանայն պատուհաս կրեսցէ ըստ աւրինակի վնասակարացն, եւ ծնաւղքն ոչ անպարտ լինին ի պատուհասէ:

ՇԱՀ Է. Այք առեւանկ առնիցեն, կալցին զկինն եւ անդէն տացեն ցհայր եւ ցմայր իւր եւ տուգան տացեն փոխանակ անարգանացն եթէ ազատ է՝ ՌՄ. դրամ, եթէ շինական է՝ Ռ.: Եւ որք հրոսն երթեալ էին աւգնականք սուտ փեսային՝ առ այրն Ճ. դրամ տուգանեսցին, եւ զհրոսին դրամն զկէսն յեկեղեցի տացեն եւ զկէսն կարաւտելոց: Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակ դնելոյ՝ յեկեղեցի տուգան կալցին Ճ. դրամ, զի զպսակն աւրհնութեան անարգեաց, Գ. ամս յապաշխարութեան կացցէ: Ապա եթէ երիցու ուրուք գաղտ պսակ եդեալ իցէ առանց հաւր եւ մաւր աղջկանն, երէցն զքահանայութիւնն չիշխէ պաշտել եւ Ճ. դրամ տուգան կալցին եւ կարաւտելոց տացեն եւ պսակն, զոր եդ, անվաւեր լիցի: Ապա եթէ յետ այսր խռովութեան եւ տուգանաց, դարձեալ ի հաւանութիւն գան կամաւք աղջկանն եւ ծնողացն, եւ թէ յառաջ պոռնկեալ են՝ պսակ մի՛ աւրհնեսցի, այլ իբրեւ զերկակին ուռ տեառնագրեալ դիցի ի գլուխ. ապա եթէ կուսան կացեալք են՝ ըստ աւրինին պսակ աւրհնեսցի: Եթէ ազատ եւ եթէ շինական՝ կանոն այդ կացցէ:

BAC 20. La fille qui suit un autre homme contre la volonté de son père sera considérée comme coupable de fornication; et si elle rentre et se réconcilie avec ses parents, elle ne sera pas immédiatement admise dans l'Église, mais tous deux (*i.e.* la fille et l'homme) seront punis pendant trois ans, car celui qui vit avec un adultère demeure un adultère tout au long de sa vie.

BAC 21. La servante qui se marie contre la volonté de son maître sera considérée comme une fornicatrice. Mais si elle agit ouvertement, on considérera cela comme un mariage, et l'autorité de son maître ne s'exercera plus sur elle.

BAC 23. Ceux qui se marient contre la volonté de ceux ayant autorité sur eux seront considérés comme des fornicateurs; mais s'ils obtiennent leur permission (litt. commandement), leur mariage sera valide.

SPT 27. Les prêtres doivent commander aux laïcs de ne pas promettre des enfants ni des adultes sans que les deux parties se soient vues et appréciées et les prêtres doivent absolument refuser de marier des enfants jusqu'à ce qu'ils soient adultes. Quant aux adultes, ils doivent s'être rencontrés et mutuellement appréciés, et on ne les mariera pas sans avoir enquêté et interrogé les deux parties, car elles ont pu être contraintes par la violence de leurs parents, et il ne faut pas célébrer de tels mariages, car jusqu'à aujourd'hui, de telles irrégularités ont causé sur terre de grands dommages, aussi bien spirituels que corporels.

SPT 28. Mais le prêtre qui ose violer notre commandement (*i.e.* de Sahak le Parthe) pour célébrer un tel mariage subira un châtiment à la hauteur du tort qu'il a causé et, pareillement, les parents seront châtiés.

SHV 7. La femme d'autrui qui a été ravie sera reprise à ses ravisseurs pour être aussitôt rendue à son père et à sa mère, et ceux-ci verseront une amende en compensation du déshonneur, si c'est un noble 1200 *dram*, si c'est un vilain 600 *dram*. Et ceux qui étaient en bande comme auxiliaires du faux-époux paieront une amende de 100 *dram* pour l'homme, et la moitié de l'argent de la bande sera donnée à l'Église, et l'autre moitié aux nécessiteux.

Mais si le faux-époux a forniqué avec la fille sans avoir été marié, une amende de 100 *dram* sera prélevée en faveur de l'Église, du fait qu'il a déshonoré le mariage, et il se tiendra pendant trois ans en pénitence. Mais si un prêtre célèbre un mariage en secret sans le consentement du père et de la mère de la fille, il n'aura plus le droit d'exercer son sacerdoce et une amende de 100 *dram* sera prélevée et donnée aux nécessiteux, et le mariage, qu'il a célébré, sera invalidé. Mais, si après ce trouble et ces amendes, ils parviennent à un agrément avec l'accord de la fille et des parents, et qu'ils aient forniqué précédemment, la couronne ne sera pas bénie, mais, comme pour de secondes noces, une branche de saule en forme de croix sera posée posée

ԹՍՎ Դ. Այր յիսնամեան եթէ կին արասցէ եւ յիսնամեան կին եթէ առն լիցի, որոշեսցին յեկեղեցւոյ: Ամենեքին կարդացէք զնոսա աղճատեալս:

ՆԵՆ ԻԴ. Տղայոց պսակ մի՛ իշխեսցեն աւրհնել, եւ մի՛ կատարելոցն երկոցունց՝ առանց զմիմեանս տեսանելոյ, զի այսպիսի անժամ հարսանեաց գնացին վնասք մահաբերք. եւ ժողովրդականք զայսպիսի հարսանիս մի՛ իշխեսցեն առնել, զի նոցունց իսկ է կորուստ:

ՅԻԱ ԺԶ. Իսկ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդաւք եւ խաւսնականաւք հաւանեցուցանել յիրերաց յաւժարութիւն եւ յեկեղեցւոյն եւ ի քահանայիցն աւրհնութենէ ընդունել զնշան զուգաւորութեան իւրեանց: Իսկ եթէ ոք ոչ այսպէս, այլ յառաջ խանձեսցին եւ պղծեսցին առ իրեարս, զայնպիսիսն ի բաց մեկնեսցեն ի միմեանց, եւ զշնացելոցն զկանոն եւ զսահման ի վերայ դիցեն: Իսկ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնել ի միմեանց՝ յետ Ժ. ամի ապաշխարութեան ողորմութեամբ եւ արտասուաւք արժանաւորեսցին խառնել յեկեղեցի Աստուծոյ:

ԲԳԿ ճԽԹ. Այր թէ յարեցաւ ի կին սրբութեամբ՝ առանց իւր ծնաւղացն, եւ իւր հաճոյ թուեցաւ եւ երդուաւ, արժան է տանել ի գլուխ զգործն, զի լաւ է ի ծնաւղաց անարգիլ քան ուրանալ յԱստուծոյ. եւ եթէ ամուսնասցին՝ մի՛ ոք իշխեսցէ քակտել զնոսա:

ԲԳԿ ճԿԸ. Քահանայ գաղտ պսակ մի՛ աւրհնեսցէ եւ գաղտ աղ մի՛ աւրհնեսցէ եւ մի՛ ի դուրս ուրեք յեկեղեցւոյն:

ԲԳԿ ՄԶ. Այր վաթսնամեայ կամ կին որ մերձ են ի վախճան, արժան է պարապել աղաւթից եւ երթալ յեկեղեցին, անդադար զցայգ եւ զցերեկ խնդրել ի Տեառնէ զթողութիւն մեղաց: Ապա եթէ ջեռցին ի ցանկութիւն եւ կամին ամուսնանալ, զայնպիսիսն ոչ ընդունի եկեղեցի, զի ոչ է հարսանիս, այլ պոռնկութիւն. իշխան է առաջնորդն զինչ եւ կամեսցի:

ԲԳԿ ՄԷ. Իսկ եթէ այրիք իցեն՝ ծնեալ որդիս եւ տեսեալ զթոռունս եւ ի նոյն ախտ անկանիցին, զայն ոչ ընդունի եկեղեցի Աստուծոյ: Եւ քահանայ որ զուգէ զնոսա՝ եղիցի նզովեալ:

ԲԳԿ ՄԺԹ. Տղայոց պսակ մի՛ դիցէ քահանայն՝ մինչեւ ի չափ հասանեն եւ զիւրեանց հաճոյսն իմանան: Եւ եթէ ոք յանդգնի՝ լուծցի ի քահանայութենէն եւ ճ. դրամ տուգանս տացէ յեկեղեցին. եւ տղայն ի չափ հասեալ՝ ունի կամի ամուսնասցի:

ԲԳԿ ՄԻԱ. Ծնաւղք բռնաբար զզաւակս իւրեանց առն մի՛ տացեն, բայց իւրեանց հաճոյիւք, զի մի՛ ի փորձութիւն սատանայի անկցին. եւ վասն ընչից զտղայս ծերոց մի՛ տացեն. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի եւ մեղք նոցա ի գլուխ ծնաւղացն եղիցի:

sur leur tête; mais s'ils sont demeurés vierges, la couronne sera bénie selon la loi. Ce canon s'applique aux nobles et aux vilains.

SEW 4. Le quinquagénaire - ou la quinquagénaire - qui se marie sera exclu de l'Église. Vous tous qualifiez-les de décrépits.

NEN 24. Il ne faut pas bénir le mariage d'enfants ni de deux personnes pubères qui ne se sont pas rencontrées, car de telles unions engendrent des maux funestes; et les laïcs ne procéderont pas à de tels mariages qui mènent à leur propre perte.

YAP 16. Comme pour un premier mariage, il faut recueillir le consentement mutuel de ceux qui se marient une seconde fois par l'intermédiaire d'intercesseurs et d'émissaires, et leur union devra être bénie par les prêtres de l'Église. Mais ceux qui se souillent ensemble avant leur mariage devront se séparer et ils se verront appliquer le canon des adultères. Mais s'ils n'acceptent pas de se séparer, ils ne pourront se mêler à l'Église de Dieu qu'après une pénitence de dix ans accompagnée d'aumônes et de larmes.

ECB 149. S'agissant de celui qui s'attache avec sainteté à une femme qui lui a plu et qui lui jure fidélité, mais sans le consentement des parents de celle-ci, le mariage sera célébré, car il est préférable de manquer de respect à des parents qu'à Dieu; et personne ne pourra dissoudre ce mariage.

ECB 168. Le prêtre ne doit pas bénir un mariage secret ou procéder secrètement à la bénédiction du sel ou de quoi que ce soit en dehors de l'église.

ECB 206. L'homme ou la femme sexagénaire – étant proche de la mort – doit vaquer à la prière et aller, de jour comme de nuit, à l'église pour demander au Seigneur la rémission de ses péchés. Mais si enflammés par un désir concupiscent ils veulent se marier, l'Église ne les reçoit pas, car il ne s'agit pas de mariage mais de fornication; et le prélat fera ce qu'il voudra à leur sujet.

ECB 207. Les personnes en veuvage qui ont des enfants et des petits-enfants, et qui veulent se marier ne seront pas acceptées par l'Église de Dieu. Et le prêtre qui les marierait sera anathématisé.

ECB 219. Le prêtre qui marie un garçon qui n'est pas pubère et qui est incapable d'exprimer son consentement sera déposé de son sacerdoce, et paiera une amende de 100 *dram* à l'Église; et une fois adulte, le garçon épousera qui il veut.

ECB 221. Les parents ne doivent pas forcer leur fille à épouser un homme, mais elle doit pouvoir aller avec qui elle veut, de crainte de succomber aux tentations de Satan; et ceux qui donnent en mariage un enfant à une personne âgée pour un

2. Հիւանդութիւն եւ մարմնական պակասութիւն

ԲԳԿ ԽԴ. Թէ ոք ներքինի իցէ կամ մարմնազեղծ եւ կեղծաւորութեամբ կին առնէ եւ կնոջն հասեալ ի վերայ գործոյն՝ իշխան է կալ եւ քակել. եթէ քակի՝ ոլմ կամի առն լիցի, եւ զկէս ընչից նորա առցեն եւ վասն պսակին տուգան տացէ յեկեղեցին, Գ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ճԽ. Թէ ոք վասն ընչից զիւր սուրբ արմատն խառնակէ ընդ ուրուկս կամ ընդ այլ մարմնազեղծս առ ի պատճառս ամուսնութեան՝ եղիցին նզովեալ:

ԲԳԿ ՄԺ. Կին կամ այր ցաւագին կամ ախտաժէտ կամ արուագէտ մի՛ իշխեսցէ ամուսնանալ եւ ապականել զպսակն աւրհնութեան: Եւ եթէ ոք յանդգնի՝ զկէս ընչից իւրոց տացէ աղքատաց եւ Գ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ՄԽՁ. Ապա եթէ կուսանաց հանդիպի պատուհասն՝ ոչ կարէ ամուսնանալ, զի ոչ բնակէ լոյս ընդ խաւարի, այլ սուրբ եւ մաքուր աղաւթիւք առ դուրս եկեղեցւոյն խոստովանել զյանցանս իւր է. ժամանակս: Եւ եթէ հալածեսցի անաւրէն թշնամին, հաղորդեսցի աւրինաց եւ զինչ կամեսցի իշխան է՝ թէ՛ ամուսնասցի, թէ՛ կուսան կացցէ, բայց զահ եւ զերկիւղ ի սրտի կալցէ մինչեւ ցմահ:

Դ. Այլ պայմաններ

ԲԱԿ ԺԴ. Իսկ այնոքիկ որ զիւրեանց ապականեալսն կանայս առնուցուն, այնպիսեացն յաղագս յառաջագոյն ապականութեանն պարտ է պատուհաս կրել. իսկ վասն ամուսնութեանն ներումն թողութեան ունին: Ապա եթէ այրն կամ կինն դարձեալ անդրէն ի նոյն դարձցին, այրն ունի իշխանութիւն զկինն մերժել, իսկ կինն ոչ ունի իշխանութիւն ի վերայ առնն:

ԹՍՎ Թ. Յաւուրս Նոյի եղեւ ջրհեղեղն վասն այնոցիկ որ յաւսան զդստերսն Կայէնի: Եթէ զիւր խաւսեալ ոք յաւսցի՝ մի՛ խառնէք զնա յաւիտեան, զի գայլ եղեւ, եւ ոչ ետ աւրհնել զհարսանիս իւր: Եւ զաւակ նորա որ խառնի՝ անիծեալ եղիցի:

ՍԻՈ ԻԳ. Աղջիկ խաւսեալ առն, թէ <յ>ապարահի իցէ, մի՛ իշխեսցեն քահանայքն այնպիսւոյն պսակ դնել կամ զուգել ընդ առն յամուսնութիւն, մինչեւ սրբեսցի յապարահէն եւ ապա ամուսնասցի:

ԲԳԿ ճԽԸ. Թէ ոք պոռնկեցաւ ընդ ումեք եւ յետոյ վասն առաջնորդին յորդորելոյ կին արար զնա, տուգան եւ հարումն մի՛ առցէ, բայց ապաշխարութիւն պոռնկին եղիցի:

ԲԳԿ ճՁԷ. Արժան է քահանային իւր վիճակին զգոյշ կալ հաւտին եւ զչարա-

profit matériel seront anathématisés et les péchés de l'enfant retomberont sur la tête des parents.

2. La maladie et les infirmités corporelles

ECB 44. Si un castré ou un infirme parvient à se marier par ruse, l'épouse mise devant le fait accompli pourra défaire cette union et ensuite aller avec qui elle souhaite, et il donnera la moitié de ses biens comme amende à l'Église pour avoir souillé le mariage, et il fera pénitence pendant trois ans.

ECB 140. Celui qui par intérêt matériel unit son corps sain à celui d'un galeux ou d'un quelconque infirme en l'épousant sera anathématisé.

ECB 210. L'homme - ou la femme - malade infirme ou qui pratique la sodomie n'aura pas le droit de se marier. Et s'il ose le faire, il donnera la moitié de ses biens aux pauvres et fera pénitence pendant trois ans.

ECB 246. Si une personne vierge est possédée, elle ne pourra pas se marier, car la lumière et les ténèbres ne peuvent pas cohabiter, mais avec des prières saintes et pures, elle confessera ses fautes à la porte de l'église pendant sept jours. Et si elle chasse l'ennemi impie, elle pourra communier et agir comme elle le souhaite, à savoir se marier ou rester vierge, mais elle devra garder son cœur dans la crainte jusqu'à sa mort.

D. Les autres conditions

BAC 14. Celui qui épouse une femme qu'il a souillée auparavant sera puni avec elle pour leur souillure; mais ils doivent être pardonnés et pouvoir se marier. Mais si le mari ou la femme retombe dans le même péché, l'homme pourra répudier sa femme, mais la femme ne pourra pas faire cela avec son mari.

SEW 9. Aux jours de Noé, il y eut un déluge à cause de ceux qui avaient défloré les filles de Caïn. Celui qui déflore sa fiancée sera maudit et ne pourra se joindre à vous pour l'éternité, car il est devenu un loup et son mariage ne sera pas béni. Et celui qui communie avec ses enfants sera maudit.

SIO 23. Si une fille fiancée à un garçon a ses règles, les prêtres n'auront pas le droit de la couronner et de l'unir à son fiancé en mariage, jusqu'à ce qu'elle soit purifiée de ses règles et alors elle se mariera.

ECB 148. Celui qui fornique avec quelqu'un et à la suite des exhortations du prélat finit par épouser la femme ne paiera pas d'amende ni ne sera battu, mais il subira la pénitence des fornicateurs.

ECB 187. Le prêtre doit être attentif à son lot et réprimander publiquement les

գործսն յանդիմանել հրապարակաւ, մանաւանդ զձեռնածուսն եւ զթովիչսն եւ զդեղահատսն եւ զ լերդահմայ<ս>ն եւ զթիկնագէտսն եւ զյուռթողսն եւ զհատընկէցսն եւ զայլ փաթեթս չարեաց սատանայի. զայնպիսիսն արգելուլ յեկեղեցւոյ եւ ի կնքոյ եւ ի տաւնից մինչեւ ի կարգ կալ եւ ապաշխարել՝ Բ. ամ ընդ ունկնդիրս եւ Ա. ամ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց. եւ եթէ ոչ դառնան ի չար գործոցն՝ քահանայն կնիք նոցա մի՛ տացէ եւ պսակ մի՛ դիցէ եւ զդիս նոցա մի՛ թաղեսցէ. եւ եթէ ոք լուծցէ զկանոնս՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ՄԵ. Խոստովանողք մի՛ իշխեսցեն արիւն հեղուլ եւ վայրապար խաւսել կամ ի գինեմոլս երթալ առանց իւր վարդապետին, եւ ոչ յեկեղեցի մտանել եւ համբուրել զաջ քահանային, կամ ամուսնանալ որ կոյսն իցէ՝ մինչեւ զկարգն ի գլուխ տանի աւրինութեամբ իւրոյ վարդապետին: Եթէ ոք յանդգնի՝ ապաշխարութիւնն անընկալ լիցի եւ եղիցի նզովեալ:

ԲԳԿ ՄԻ. Թէ ոք խաւսեալ իցէ կին հաստատութեամբ քահանային եւ այլում առն տացեն՝ նզովեալ լիցի. եւ կինն այրի կոչեսցի եւ պսակն անվաւեր եղիցի:

3. Ս. Պսակի անվաւերականութեան պայմաններ եւ լուծում

ԵԱԿ Ե. Երէց կամ սարկաւագ զկին իւր մի՛ հանցէ պատճառանաւք երկիւղածութեան, ապա թէ հանցէ, ի բաց որոշեսցի, իսկ ի նմին յամառեալ՝ լուծցի:

ԵԱԿ ԽԵ. Եթէ ոք ժողովրդական զիւր կին հանեալ այլ առցէ եւ կամ զարձակեալն յայլմէ՝ ի բաց որոշեսցի:

ՀԱՅ Ե. Զկին որոշել յանձնէ անձնասպանութեան վրէժ է, ոչ մի ինչ պատճառք համարձակեն զնա հանել՝ ոչ ամլութիւն, ոչ ծախողութիւն, ոչ վատութիւն, բայց բռոտութիւն եւ պիսակութիւն եւ դիւահարութիւն եւ գոնջութիւն եւ կախարդութիւն կամ հանապազ պոռնկութիւն՝ ըստ տէրունեան աւրինին:

ՆԷԿ ԺԱ. Իսկ եթէ արձակեսցէ ոք զկին իւր վասն բանի պոռնկութեան կամ վասն այլ չարագործութեան, զոր ոչ միայն այրն, այլ եւ աշխարհ վկայէ զչար գործոց նորա՝ արձակեսցէ. ընդունի զնա կանոնս, բայց Ա. ամ ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինացն, եթէ կամեսցի կին արասցէ, եւ կինն այլում առն չիշխէ լինել մինչ կենդանի է այր նորա:

ՆԷԿ ԺԲ. Իսկ եթէ ոչ վասն պոռնկութեան եւ ոչ վասն չար գործոյ եթող զկին իւր, այլ վասն վատաբարութեան, որպէս թէ այլում ակն եդեալ իցէ՝ զայնպիսիսն ոչ ընդունին կանոնք մինչեւ դառնալ նորա յառաջին կինն, եւ ընդ յանցանացն Է. ամ ապաշխարութիւն ընկալցի, Ե. ամ արտաքոյ եւ Բ. ի ներքս: Ապա եթէ ոչ դարձցի

malfaiteurs, notamment les prestidigitateurs, les enchanteurs, les guérisseurs, les haruspices, les liseurs d'omoplates, les incantateurs, les jeteurs de grains et autres amulettes qui sont les amorces de Satan; ces personnes seront écartées de l'Église, du baptême et des fêtes jusqu'à ce qu'elles cessent et fassent pénitence pendant deux ans avec les auditeurs, puis un an sous surveillance et avec des larmes, et des dons aux pauvres, elles se rendront dignes de la communion; mais si elles ne cessent pas leurs méfaits, le prêtre ne pourra ni les baptiser, ni les marier, ni enterrer leur cadavre; et celui qui viole ce canon sera anathématisé.

ECB 205. Les pénitents ne doivent pas verser le sang, parler en vain ou aller à une beuverie à l'insu de leur *vardapet*, ni entrer à l'église et embrasser la dextre du prêtre ou se marier – pour celui qui est vierge – jusqu'à l'achèvement de leur pénitence avec la bénédiction du *vardapet*. Et celui qui abandonne sa pénitence sera anathématisé.

ECB 220. Ceux qui donnent une femme régulièrement fiancée par un prêtre à un autre homme que le fiancé seront anathématisés; la femme sera considérée comme une veuve et le mariage sera invalide.

3. Les modalités de l'invalidité de la sainte Couronne du mariage et le divorce

CCL 5. Le prêtre ou le diacre qui répudie son épouse sous prétexte de piété sera exclu et s'il persiste, il sera déposé.

CCL 45. Le laïc qui renvoie son épouse pour prendre une autre femme ou qui prend celle qui a été renvoyée par son mari sera exclu.

CPC 5. Se séparer de sa femme constitue un suicide, cela est interdit, même si elle est stérile, cédée comme gage ou méchante; excepté – selon la Loi – si elle est lépreuse, maculée de madrures, possédée, atteinte de teigne ou si elle pratique la sorcellerie, ou fornique constamment.

NEO 11. Celui qui renvoie sa femme pour cause de fornication ou pour toute autre mauvaise action et que les gens témoignent de cela, le canon admet cet homme, mais il fera pénitence pendant un an, et par la miséricorde (*i.e.* des dons) il se purifiera et pourra communier, et s'il le veut, il pourra se remarier, mais la femme ne le pourra pas aussi longtemps que son ancien mari est vivant.

NEO 12. Celui qui renvoie sa femme non pour cause de fornication ou pour toute autre mauvaise action, mais du fait de sa propre immoralité – par exemple car il a jeté les yeux sur une autre femme – ne sera pas admis par le canon tant qu'il ne sera pas retourné avec sa première femme; et pour sa faute, il recevra une pénitence de

առ բուն կինն իւր՝ զկեանս տանն իւրոյ բաժանեսցէ, զկէսն կնոջն իւրում տացէ եւ տուգան յեկեղեցի, զի զպսակն աւրինութեան զոր ընկալեալ էր վասն ամուսնոյ իւրոյ անարգեաց եւ ինքն զամենայն աւուրս կենաց իւրոց պոռնիկ կոչեսցի, մի՛ մտցէ յեկեղեցի Աստուծոյ, այլ ի դուրս հաւասարեսցի աղաւթից, ի ձեռն ողորմութեան տրաւք տնանկաց եւ վասն ջերմ արտասուաց զյետին թոշակն ընկալցի: Ապա եթէ կինն մեռցի եւ այլ կին չառնիցէ, ջերմ յապաշխարութիւն եկեսցէ, Է. ամ ի դրունս կացցէ եւ Գ. ամ ընդ ձեռամբ աղաւթից հաւասարեսցէ, ի ձեռն ողորմութեան, գթով տնանկաց քաւեալ զմեղսն՝ հաղորդեսցի աւրինացն:

ՆԷԿ ԺԳ. Վասն որ պատրաստեալ են ի քահանայութիւն եւ կանայս ունիցին՝ թէ մինչ չեւ ի քահանայութիւն մերձեցեալ իցէ եւ կինն շնայցէ, արձակեսցի կինն եւ առն չիշխէ լինել. եւ այրն ի քահանայութիւն մատիցէ. ապա եթէ կամք իցեն նմա կալ ընդ կնոջն, քահանայ ոչ եւս կարէ լինել, զի ոչ ընդունի զնա եկեղեցի եւ կանոն:

ԳԱՆ ԺԴ. Կին որ թողու զայր իւր՝ հեռանալ ի նմանէ, որպէս թէ ի հաւատս կացցէ, առանց կամաց առնն, կամ անգոսնեսցէ զայր իւր, թէ «Ես գեղաղէշ երեսս ունիմ կամ ազգիկ եմ կամ ընչաւետ եմ քան զքեզ», եւ ելանիցէ յառնէ իւրմէ, պատուհաս կրեսցէ եւ նզովեսցեն եւ յեկեղեցւոյ ի բաց հանցեն:

ԳՐԻ Զ. Եթէ ոք թողցէ զերկրորդն եւ յառաջինն դարձցի ի թողեալն՝ Է. ամ արտաքոյ եւ Ա. ընդ աւրինաւք:

ԳՐԻ ԻԳ. Որ վասն պոռնկութեան արձակեսցէ զկին իւր՝ արձակեսցէ, բայց Ն. ամ սրբեսցի:

ԳՐԻ ԻԴ. Այր որ զկին իւր թողու ի պատճառս աստուածպաշտութեան՝ նզովեալ եղիցի ի կեանս եւ ի մահ:

ՀԱՒԹ ԺԲ. Հարցումն. Եթէ ոք կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս ագանիցի, եւ այր նորա ասիցէ. «Ոչ կարեմ ժուժկալ լինել», եւ կամիցի այլ կին առնուլ, ա՞ւրէն է, թէ ոչ:

Պատասխանի. Շնութիւն միջնորդի յիրսդ. եւ զինչ պարտ եւ արժան է, ոչ գիտեմ վասն այնորիկ:

ՀԱՒԹ ԻԱ. Հարցումն. Եթէ այր ոք ոչ լինիցի ի գործարութեան եւ կինն ելանէ ի նմանէ, թէ ոք զկինն զայն կին առնիցէ, ընդ հանեալ կանայսն պարտ է համարել զայնպիսին, եթէ անխիղճ ունել. կամ եթէ այրն չարձակէ զկինն ի բաց եւ ասէ այսպէս, թէ «Ինձ մասն հասեալ յԱստուծոյ՝ կաց եւ պաշտեա զիս», մեք զինչ պատասխանի արասցուք:

Պատասխանի. Չէ արժան արձակել եւ ոչ ձեզ թողացուցանել նմա:

sept ans, pendant cinq ans, en dehors de l'église, et pendant deux ans, à l'intérieur. Mais s'il ne retourne pas à sa femme légitime, le patrimoine de sa maison sera partagé et il en donnera la moitié à sa femme, et paiera une amende à l'Église pour avoir méprisé le mariage, et lui-même sera appelé fornicateur durant toute sa vie, et il n'entrera pas dans l'église mais participera aux prières à la porte jusqu'à sa mort, et grâce à des dons aux pauvres et à des larmes, il recevra le viatique. Mais si la femme meurt et qu'il ne se remarie pas, après une pénitence fervente – en se tenant pendant sept ans à la porte et en participant aux prières sous surveillance pendant trois ans, et grâce à la miséricorde (*i.e.* des dons) en faveur des pauvres –, il pourra communier.

NEO 13. Si la femme de celui qui se prépare au sacerdoce commet l'adultère, elle sera renvoyée et ne pourra pas se remarier; et l'homme accédera au sacerdoce; mais s'il veut rester avec sa femme, il ne pourra pas être prêtre, parce que l'Église et le droit ne l'admettent pas.

GNG 14. La femme qui abandonne son mari sous prétexte de demeurer dans la foi, sans l'assentiment de celui-ci ou qui le méprise en lui disant qu'elle est très belle ou noble, ou plus riche que lui, subira une punition, on l'anathématisera et on l'exclura de l'Église.

GLI 6. Celui qui quitte sa seconde femme pour retourner avec la première qu'il avait quittée, se tiendra pendant sept ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants sans accès à la communion.

GLI 23. Celui qui répudierait sa femme pour cause de fornication, qu'il la répudie, mais il se purifiera durant une année.

GLI 24. L'homme qui quitte sa femme pour cause de piété religieuse sera anathématisé dans la vie et dans la mort

QCA 12. Celui dont la femme est totalement possédée, au point qu'il est nécessaire de l'enchaîner et qui déclare ne plus pouvoir rester continent, et désire se marier avec une autre femme; de fait, l'adultère s'immisce dans ce type d'affaire, et «je ne sais pas ce qu'il faut faire» -- dit Athanase d'Alexandrie !

QCA 21. La femme dont le mari est impuissant ne doit pas le quitter et se marier avec un autre homme; et il faut donner raison à son premier époux qui l'exhorte de ne pas le quitter.

ՀԱՌ ԻԲ. Հարցումն. Եթէ ուրուք յերախայութեան կին արարեալ աւրինաւք եւ որդիք լեալ են յամուսնոյ իւրոյ եւ թողու զայն որդւովքն եւ այլ կին առնէ եւ կնիք խնդրէ՝ զինչ արասցուք:

Պատասխանի. Ընդունիմք զնոսա, այլ նախ ապաշխարել:

ՀԱՌ ԻԳ. Հարցումն. Թէ կին ուրուք հաշմեսցի եւ ասէ ցայր իւր, թէ «Ես աւասիկ չեմ արժանի առնակնութեան, արա դու քեզ այլ կին, որ քեզ պիտանի է եւ զտուն քո շէն կալցի եւ ինձ ամ ըստ ամէ հաց եւ հանդերձս տուր եւ ես նստայց առ եկեղեցւոյդ մինչեւ ի վախճան ժամանակի իմոյ». եւ նա առցէ յանձն լինել զամենայն, ընդ պատուհասիւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ անվնաս է:

Պատասխանի. Վնասակար է, ոչ է իշխանութիւն այլ առնել, մինչեւ այն կենդանի է:

ՀԱՌ ԻԴ. Հարցումն. Թէ պոռնիկ կին ասէ ցայր իւր, թէ «Ես ապաշխարեմ զմեղս իմ, մի՛ թողուր զիս», եւ այրն կամի ունել զնա ի կնութեան, անվնաս են իրքն, թէ ոչ: Պատասխանի. Տէր է, իշխան է ունել զկին իւր:

ՀԱՌ ԻԶ. Հարցումն. Թէ այր ոք ընդ անասնոյ պղծիցի եւ յետ պղծութեանն զղջանայցէ եւ ապաշխարիցէ եւ վաստակիցի յաւրկանոցի, որպէս հրամայեն վարդապետք, եւ կին նորա յետ յանցանացն չկամի կալ նմա ի կնութեան վասն պղծութեանն, որ եղաւ ի վերայ նորա, եւ այրն այնպէս ասիցէ, թէ «Կամ կինն առաջին հաւանեսցի կամ այլ կին հրամայեցեք առնել»:

Պատասխանի. Կինն իշխեսցէ մեկնել եւ այրն չիշխէ այլ կին առնուլ:

ՀԱՌ ԽԲ. Հարցումն. Եթէ ոք ի քահանայից կին ունիցի եւ մեկնի ի կնոջէն՝ պաշտել զպաշտաւն քահանայութեան, եւ յետ ժամանակի անդրէն ի կին իւր դարձցի, պարտ է պաշտել զպաշտաւն քահանայութեանն, թէ ոչ:

Պատասխանի. Խնդրելի է, վասն Ը՛ր եթող զկինն. զի եթէ վասն չար գործոց եթող զկինն եւ անդրէն դառնայ՝ զքահանայութիւնն չիշխէ ունել. ապա եթէ վասն պաշտամանն եթող առ ժամանակ մի, ըստ առաքելոյ, իշխան է անդրէն ի կին իւր դառնալ:

ՀԱՌ ԽԳ. Հարցումն. Թէ ոք քահանայ կամի մեկնել ի կնոջէ իւրմէ եւ կինն ասէ ցնա. «Զիս յո՛ ապաստան թողուս, ես այսպէս առանց առն չկարեմ նստել, բայց եթէ առն լինիմ». մեք զինչ հրաման տացուք. կամ թէ երէցն մեռցի, այլում առն իշխէ՞ լինել, թէ ոչ:

Պատասխանի. Ոչ է արժան արձակել զկինն եւ ոչ կինն այլում առն լինել:

ՀԱՌ ԾԳ. Հարցումն. Թէ ոք ի կանանց քահանայից առ դիւթս երթայ եւ քահանայքն ի վերայ հասանեն եւ խոստովան լինի առ հարկի եւ ապաշաւէ, պարտ է քահանային զնա ի կնութեան ունել, թէ ոչ:

Պատասխանի. Չէ արժան ունել:

QCA 22. Le catéchumène qui abandonne son épouse, mère de ses enfants, pour une autre femme pourra être baptisé, mais seulement après avoir fait pénitence.

QCA 23. Le mari qui quitte sa femme estropiée – qui lui dit «laisse-moi pour une autre femme qui te réjouira et donne-moi seulement chaque année de quoi me nourrir, et me vêtir, tandis que je demeurerais à l'église» – et épouse une autre femme sera coupable, car il ne peut pas épouser une autre femme tant que la première est en vie.

QCA 24. Si une femme adultère dit à son mari, «Je me repens de mes péchés, mais ne n'abandonne pas», le mari peut, s'il le souhaite, la garder comme femme.

QCA 26. Si un homme après s'être souillé avec des animaux le regrette et fait pénitence, et travaille dans une léproserie, comme le prescrivent les *vardapet*s, mais que sa femme ne veut pas rester mariée avec lui en raison de son péché, elle pourra le quitter, mais lui ne pourra pas épouser une autre femme.

QCA 42. Le prêtre marié qui a laissé sa femme un temps pour exercer son ministère – en vertu de la parole apostolique –, peut ensuite retourner auprès d'elle pour continuer d'exercer son ministère; en revanche, s'il s'est éloigné d'elle pour commettre de méchantes actions, il ne pourra plus exercer la prêtrise.

QCA 43. Un prêtre ne doit pas quitter sa femme et dans tous les cas, celle-ci ne peut aucunement se remarier.

QCA 53. Si la femme d'un prêtre consulte des devins et que son mari le découvre, et qu'elle confesse son péché sous la contrainte, puis se repent, le prêtre ne doit pas rester avec elle.

ՀԱՌ ԾԵ. Հարցումն. Թէ ուրուք կին աւրկանայ կամ դիւահարի եւ այրն թողու զկինն եւ այլ կին առնէ, ընդ պատուհասիւք պարտիմք համարել զայնպիսին, թէ ոչ: Պատասխանի. Չէ արժան այլ կին առնուլ:

ՀԱՌ ԾԶ. Հարցումն. Թէ ոք զկին իւր զամուսին հանէ եւ այլ կին առնէ եւ նովին կնաւն ապաշխարութիւն խնդրէ, զինչ արժան է առնել:
Պատասխանի. Մեկնել ի միմեանց, զի շնացողք են. եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ:

ՀԱՌ ԾԷ. Հարցումն. Թէ ոք զկին իւր եթող եւ այլ կին արար եւ թողեալ կինն մեռաւ եւ նա զոր արարն նովին կնաւն ապաշխարութիւն խնդրէ, զինչ պարտ է առնել: Պատասխանի. Մեկնել պարտ է. ապա եթէ ոչ մեկնեսցին՝ ծանր ապաշխարութիւն ի վերայ եղեցի եւ յելս անձին իւրոյ զյետին թոշակն ընկալցին:

ՀԱՌ ԾԹ. Հարցումն. Թէ ոք վասն ամլութեան եթող զկին իւր եւ առնէ կին ծննդական եւ ապաշխարութիւն խնդրէ նովին կնաւն, զինչ պարտ է առնել:
Պատասխանի: Շնացող է:

ՀԱՌ Կ. Հարցումն. Թէ ոք ի կնահանէից այլ բարուք բարի է ողորմածութեամբ, արդար դատաստանաւք եւ ցանկայ սրբութեան հաւասարել նովին կնաւն, զոր արարն, զինչ պարտ է առնել:
Պատասխանի. Չէ արժան հաւասարել սրբութեան նովին կնաւն, զի չէ ամուսնութիւն, այլ պոռնկութիւն:

ՀԱՌ ԿԱ. Հարցումն. Թէ ոք վասն պոռնկութեան կամ վասն այլ չարագործութեան թողու զկինն եւ խնդրէ այլ առնուլ, զինչ արասցուք:
Պատասխանի. Այրն իշխէ այլ կին առնուլ եւ կինն այլ առն չիշխէ լինել:

ՀԱՌ ԿԲ. Հարցումն. Թէ ոք ի կնահանէից ասէ, թէ «Զամենայն արդարութիւնս զինչ եւ ասէք՝ արարից, բայց զկինդ եւ եթ ունել՝ ոչ կարեմ», զինչ պարտ է առնել: Պատասխանի. Չէ ընդունելի:

ՀԱՌ ԿԳ. Հարցումն. Թէ ոք կին ի պատճառս հաւատոց կամի մեկնել յառնէ իւրմէ եւ կամ այր՝ ի կնոջէ, զիարդ է հաւատքն:
Պատասխանի. Չէ ընդունելի:

ՀԱՌ ԿԴ. Հարցումն. Թէ ոք ի կնահանէից յերկար ժամանակս հեռացեալ է յեկեղեցւոյ, ասեն այսպէս, թէ «Առաջին կինն այլում առն եղեւ, եւ ի միւսմէն որդիք եղեն եւ կնոջն յայլմէ առնէ որդիք եղեն. եւ արդ ես զկինս զայս թողուլ ոչ կարեմ, բայց թէ սովին կնաւս իսկ հնար է ապաշխարել եւ մանաւանդ զի հասեալ եւս եմք ի ծերութիւն». զինչ պարտ է առնել:
Պատասխանի. Մեկնել արժան է ի միմեանց, ապա եթէ ոչ մեկնեսցին, ծանր ապաշխարութիւն ի վերայ դիցեն ողորմութեամբ եւ գթով տնանկաց քաւեսցեն զմեղս իւրեանց եւ ի տարւոջն Ա. աւր հաղորդեսցին:

QCA 55. Le mari qui abandonne son épouse qui est devenue lépreuse ou possédée ne peut pas prendre une autre femme.

QCA 56. Le mari qui quitte sa femme pour une autre ne peut pas demander avec cette dernière à faire pénitence ensemble et ils doivent se séparer, car ils sont adultères, et si un autre homme épousait la première femme répudiée, il commettrait un adultère.

QCA 57. Celui dont la première épouse – qu'il a abandonnée pour épouser une autre femme – meurt ne peut pas faire pénitence avec sa seconde femme, il doit la quitter car ils sont adultères; et s'ils restent malgré tout ensemble, ils subiront une lourde pénitence pour être dignes du viatique au moment de leur mort.

QCA 59. L'homme qui quitte son épouse stérile pour une autre femme qui est féconde, puis demande à faire pénitence avec sa seconde femme, sera considéré comme un adultère.

QCA 60. Celui qui quitte sa femme pour en épouser une autre et, qui par ailleurs est vertueux, miséricordieux et d'un jugement sûr, ne pourra pas recevoir la communion avec sa seconde femme, car ils ne sont pas mariés, mais vivent dans la fornication.

QCA 61. Celui qui abandonne sa femme du fait qu'elle a forniqué ou commis toute autre méchante action pourra se remarier avec une autre femme, mais l'épouse fornicatrice ne pourra pas se remarier avec un autre homme.

QCA 62. Si un homme qui quitte sa femme dit à son prélat, «Je ferai toutes les bonnes actions que vous m'avez demandé de faire», mais il m'est impossible de rester avec ma femme plus longtemps: cela est inacceptable.

QCA 63. Il est inacceptable qu'une femme ou un homme quitte son conjoint ou sa conjointe, sous prétexte de foi.

QCA 64. Si un homme après avoir quitté sa femme et s'être éloigné de l'Église un long moment affirme que cette femme s'est remariée avec un autre homme, avec qui elle a eu des enfants, et que lui-même est allé avec une autre femme qui a donné naissance à des enfant, et qu'à présent, il ne peut pas quitter sa seconde femme, notamment du fait qu'ils sont tous les deux âgés, ils doivent se séparer et s'ils ne le font pas, ils subiront une lourde pénitence et pratiqueront l'aumône, et la compassion envers les pauvres, et ainsi, ils pourront communier une fois par an.

ՀԱԹ ՀԴ. Հարցումն. Թէ կին քահանային գերի երթիցէ եւ մատնի ի պղծութիւն եւ յորժամ դարձցի անդրէն առ այր իւր, պարտ է քահանային նովին կնաւն կեալ, անխիղճ պաշտել զքահանայութիւնն, թէ ոչ:

Պատասխանի: Ոչ է պարտ, զի պղծեալ է:

ԲԱԿ ԺԴ. Իսկ այնոքիկ որ զիւրեանց ապականեալսն կանայս առնուցուն, այնպիսեացն յաղագս յառաջագոյն ապականութեանն պարտ է պատուհաս կրել. իսկ վասն ամուսնութեանն ներումն թողութեան ունին: Ապա եթէ այրն կամ կինն դարձեալ անդրէն ի նոյն դարձցին, այրն ունի իշխանութիւն զկինն մերժել, իսկ կինն ոչ ունի իշխանութիւն ի վերայ առնն:

ԲԱԿ ԺՁ. Որք միանգամ հրաժարեալ ի բաց մեկնեցան յարանց իւրեանց եւ անեռեւոյթ եղեն եւ յառաջ քան զմահն ընդ այլս զուգեցան՝ շնացողք են:

ԲԱԿ ԺԹ. Իսկ կին եթէ թողցէ զայր իւր եւ բաժանեսցի ի նմանէ եւ կամ այր զկին իւր, պարտ է հաւաստեալ քննել եւ ի վերայ հասանել եւ տալ նոցա ներումն ի ձեռն ապաշխարութեան:

ԲԱԿ Ի. Եթէ ոք կին զայր իւր թողեալ եւ այլում եղեալ առ տգիտութեան եւ դարձեալ վերստին յառաջին այրն իւր դարձցի, ի պոռնկութեան համարեալ է, բայց սակայն վասն տգիտութեանն ոչ է նմա իշխանութիւն ամուսնանալ, այլ բարւոք զի այնպէս կացցէ:

ԲԱԿ ԻԵ. Իսկ որ միանգամ յառնէ իւրմէ թողեալ է կին ոք, ըստ իմում բանիս այսպէս համարիմ եթէ լաւ է, որպէս եւ ասացն իսկ Տէր, թէ «Որ հանէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ» (Մատթ. Ե. 32), իսկ կինն եթէ պահեսցէ զանձն իւր եւ «Ոչ եղիցի առն այլում, ոչ կոչի շուն» (Հռոմ. Է. 3). ապա ուրեմն յայտ է եթէ եւ այրն ընդ պատուհասիւ է եւ կինն առանց ըստգտանաց, զի պահեաց զբանն տեառն Յիսուսի եւ ոչ կոչեցաւ շուն, զի ոչ միաւորեցաւ ընդ առն այլում:

ՇԱՀ Բ. Եթէ քահանայ ոք ի պղծութեան իցէ կամ ի պոռնկութեան եւ կամ յայլ ի վատթար գործս, եւ վկայութեամբ իրքն ի յայտ եկեսցեն, զքահանայութիւնն մի՛ պաշտեսցէ, Յ դրամ տուգան տացէ՝ յաղքատս բաշխեսցեն, եւ նա ի դպրաց կարգի կացցէ: Ապա թէ ի դպրութեանն ի նոյն պղծութեան գտանիցի, ի կարգէն ելցէ եւ ի դպրութենէն՝ մինչեւ ի կարգ ուղղութեան եկեսցէ ապաշխարութեամբ: Եւ տեսեալ եպիսկոպոսին զճանապարհս նորա՝ ի դպրաց կարգի կացցէ: Զի եկեղեցի զսուրբ կամի, մանաւանդ տէրունական սեղանն խորհրդոյ զանարատսն ընդունի. զի մի՛ բարկութիւն Աստուծոյ զարթիցէ ի վերայ երկրի ի ձեռն առաջնորդաց: Եթէ կնաւոր երէց գտցի ի պղծութեան եւ ի պոռնկութեան կամ յայլ գործս չարեաց եւ ստուգեալ վկայիւք՝ քահանայութիւնն լուծցի եւ յեկեղեցւոյ բաժնէ հեռացեալ լիցի, Յ դրամ տուգանս տացէ եւ ի կարաւտեալս բաշխեսցեն. եթէ երէց եւ եթէ սարկաւագ՝ կանոն այդ կացցէ. եւ նոքա ի կարգ զինուորութեան կացցեն եւ ի հարկս արքունի, եւ ընդ պաշտաւնեայս մի՛ խառնեսցին:

Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան գտցին, ընտրոյ տէր նոքա

QCA 74. Si la femme d'un prêtre est emmenée en captivité et qu'elle est livrée à la souillure, le prêtre ne pourra pas rester avec elle du fait qu'elle est souillée.

BAC 14. Celui qui épouse une femme qu'il a souillée auparavant sera puni avec elle pour leur souillure; mais ils doivent être pardonnés et pouvoir se marier. Mais si le mari ou la femme retombe dans le même péché, l'homme pourra répudier sa femme, mais la femme ne pourra pas faire cela avec son mari.

BAC 16. Celles qui ont congédié et quitté leur mari, et ont disparu, et avant la mort de celui-ci, se sont unies avec un autre homme sont des adultères.

BAC 19. Si une femme abandonne son mari et se sépare de lui ou bien l'inverse, il est nécessaire d'examiner les faits en détail pour comprendre la cause et leur accorder le pardon grâce à la pénitence.

BAC 26. Si une femme a abandonné son mari pour aller avec un autre homme par ignorance, puis est retournée avec son premier mari, il s'agit de fornication et, en raison de son ignorance, elle ne pourra pas se remarier, et le mieux pour elle serait de rester ainsi.

BAC 27. S'agissant de la femme qui a été abandonnée par son mari, il est bon qu'elle reste seule (Mt 5, 32; Rm 7, 3); ainsi l'homme sera punissable et la femme sera exempte de toute accusation, du fait qu'elle aura suivi la parole du Christ et n'a pas été appelée adultère, du fait qu'elle ne s'est pas unie avec un autre homme.

SHV 2. Le prêtre qui se trouve en état d'impureté, de fornication ou commet tout autre acte vil – et que les faits sont confirmés par témoignage – n'exercera plus le sacerdoce et versera une amende de 300 *dram* qui sera distribuée aux pauvres et lui-même se tiendra dans le rang des *dpirs*. En cas de récidive, il sera destitué de son ordre sacerdotal et du rang des *dpirs*, jusqu'à ce qu'il revienne dans la voie droite par la pénitence. L'évêque après avoir observé sa conduite, pourra l'autoriser à se tenir parmi les *dpirs*. Si un prêtre marié se trouve en état d'impureté, de fornication ou commet tout autre acte malfaisant et que cela est vérifié par des témoins, il sera déposé du sacerdoce et sera tenu éloigné du lot de l'Église, il versera une amende de 300 *dram* qui sera distribuée aux nécessiteux; et le même canon s'appliquera pour le diacre, et il se tiendra avec les militaires, et paiera l'impôt royal, sans pouvoir se mêler aux clercs.

Mais si la femme du prêtre ou du diacre est adultère, son mari choisira entre elle et le sacerdoce. S'il opte pour le sacerdoce, la femme sera expulsée de sa

լիցին՝ կամ զեկեղեցին եւ զքահանայութիւնն ընտրեսցեն, կամ զկինն: Եթէ զքահանայութիւնն առցէ՝ զկինն ի տանէն ի բաց հանցեն եւ ապաշխարութիւն խիստ ի վերայ դիցեն: Ապա եթէ յընտանեաց դուստր քահանայի ի պոռնկութեան գտանիցի, եկեղեցւոյ բաժնի մի՛ իշխեսցէ եւ ի քահանայական տանէն ի բաց ելցէ. եւ խիստ ապաշխարութիւն ի վերայ դիցեն եւ պատուհաս: Եւ որդւոյ երիցու նոյն պատուհաս լիցի: Եթէ երէցն մեռցի, կինն առն չիշխէ լինել. եւ ոչ երէցն կին առնել: Եւ աղախին պոռնիկ ի քահանայի տան մի՛ լիցի, «Չի սրբութիւն Տեառն է» (Ելք ԻԹ. 34):

ՇԱՀ Դ. Եթէ ոք զկին թողցէ՝ զորդւոց մայր՝ առանց բանի պոռնկութեան (Մատթ. Ե. 32; ԺԹ. 9), եւ կամ թէ արատ ինչ չար ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ եւ այլում ակն եդեալ իցէ, դատաստան այս լիցի՝ զորդիս եւ զտուն եւ զկեանսն եւ զհողն եւ զջուրն եւ զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկէսն կնոջն տացեն: Եւ թէ կամք են <կնոջն> այր ի տուն ածել յինքն՝ համարձակ ածցէ. զբաժինն կալցին եւ զարքունի հարկն ողջ արասցեն: Եւ այրն որ եթողն, Է. ամ ապաշխարեսցէ եւ յեկեղեցի տուգան տացէ, թէ ազատ է՝ 3 դրամ, թէ շինական՝ գանալի լիցի եւ 6. դրամ յեկեղեցի տուգանեսցի փոխանակ աւրինութեամբ զամուսնութիւնն խոտելոյ:

Ապա թէ մինչդեռ ի պայքարին եւ ի տուգանի իցեն, եւ կին ոք յանդգնեալ կնաթողին կին լինի եւ ամ մի չիցէ անցեալ, յայտ եղեւ թէ զառաջին կինն նա ետ թողուլ, կալցին զկինն եւ յաւրկանոց տարի մի աղասցէ գոդեացն: Եթէ ազատ է եւ յաւրկանոց չերթայ՝ 6. դրամ տացէ ի գոդիսն:

ՇԱՀ Ե. Եթէ կին ոք արար եւ ամուլ պատահեաց, եւ այրն հանցէ զնա վասն ամլութեանն, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին թէ անասուն, եթէ հանդերձ եթէ արծաթ՝ առնուլ իշխեսցէ եւ գնալ: Եւ եթէ քան զամլութիւնն այլ արատ չգուցէ ի <կինն՝> մարդն տուգան եւս տացէ կնոջն, վասն անարգանացն, թէ ազատ է՝ ՌՄ դրամ, եւ եթէ շինական՝ Ո: Ապա եթէ մինչդեռ ի դատին եւ ի տուգանսն իցեն, եւ ամ մի ի վերայ չէ անցեալ, եւ ոք ի կանանց յանդգնեսցի եւ առնն կին լինիցի, կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, քանզի յայտ եղեւ, եթէ հանելոյ կնոջն նա եղեւ պատճառ. եւ տարի մի աղասցէ գոդեացն եւ յաղախնութեան կացցէ եւ յեկեղեցին 6. դրամ տուգան կալցին, փոխանակ զի բուն ամուսնութիւնն վասն նորա խոտեցաւ: Ապա եթէ ազատ է եւ ի գոդենոց չերթայ՝ 6. դրամ տուգան տացէ գոդեացն:

Ապա եթէ առնն յառաջագոյն խորհուրդ լեալ է եթէ՝ «Զիմն թողում եւ զքեզ առնում», եւ կամ պոռնկութեամբ խանձական լեալ իցեն, 6. դրամ այրն տուգան տացէ յեկեղեցին: Եւ ապաշխարութիւն առնն Գ. ամս ընդ ունկնդիրս կացցէ եւ Ա՝ ընդ ձեռամբ մտցէ յեկեղեցի:

Որ զորդւոց մայր թողցէ կամ զամուլ՝ առանց բանի պոռնկութեան կամ այլ արատոյ, առն եւ կնոջ պատուհաս, տուգան եւ ապաշխարութիւն, կանոն եւ սահման այդ կացցէ:

maison et sera soumise à une dure pénitence. Mais si une fille de la famille du prêtre est trouvée dans la fornication, elle n'aura plus droit au lot de l'Église et sera expulsée de la maison du prêtre; et elle se verra imposer une stricte pénitence ainsi qu'un châtiment. Et le même châtiment s'appliquera au fils du prêtre. Et si le prêtre meurt, sa femme n'aura pas le droit de se remarier, de même que le prêtre, s'il devient veuf. Et une servante fornicatrice ne doit pas demeurer dans la maison du prêtre (Ex 29, 34).

SHV 4. Pour celui qui abandonne son épouse, mère de ses enfants sans motif de fornication de sa part (Mt 5, 32; 19, 9) ou en l'absence d'une tare maligne sur son corps, mais du fait que l'homme tombe dans l'adultère et en convoite une autre, la sentence est la suivante : les enfants, la maison, le patrimoine, la terre, l'eau et tout le reste seront partagés en deux, la moitié devant être cédée à la femme. Et si la femme désire amener un homme chez elle, qu'elle l'amène librement; alors sa part sera saisie pour être versée en totalité à l'impôt royal. Et l'homme fera pénitence pendant sept ans et versera une amende à l'Église, si c'est un noble 300 *dram*, si c'est un vilain, il sera roué de coups et paiera une amende de 100 *dram* à l'Église.

Mais si tandis que les époux sont en litige et soumis à l'amende, une autre femme ose devenir l'épouse de l'homme qui avait abandonné sa femme, alors qu'une année ne s'est pas encore écoulée, il sera alors évident que c'est elle qui l'a poussé à abandonner son épouse et de ce fait, elle sera saisie et placée dans un lazaret pour moudre de la farine pendant une année en faveur des lépreux. Si c'est une noble et qu'elle n'aille pas dans le lazaret, elle versera 100 *dram* aux lépreux.

SHV 5. L'épouse répudiée par son mari à cause de sa stérilité aura le droit de reprendre toutes les richesses qu'elle a apportées dans la maison – que ce soient les servantes, les animaux, les vêtements ou l'argent – et de partir. Mais si en dehors de sa stérilité, la femme ne possède pas d'autres tares, le mari versera en plus une amende à la femme, à cause du déshonneur, si c'est un noble 1200 *dram*, si c'est un vilain 600 *dram*. Mais si tandis qu'ils sont en procès et soumis à l'amende et qu'une année n'est pas encore passée, et qu'une femme devient l'épouse de l'homme qui avait abandonné sa première femme, elle sera saisie et placée dans un lazaret, car il est clair qu'elle est la raison pour laquelle l'homme a répudié son épouse; et elle moudra la farine pour les lépreux et les servira pendant un an, et elle s'acquittera d'une amende de 100 *dram* à l'Église, du fait que c'est à cause d'elle que le vrai mariage a été méprisé. Mais si c'est une noble et qu'elle n'aille pas à la léproserie, elle versera 100 *dram* aux lépreux.

Mais si par avance l'homme avait médité le dessein suivant, «Je vais abandonner ma femme pour te prendre» ou qu'ils se soient consumés dans la fornication, il versera une amende de 100 *dram* à l'Église. Et comme pénitence, il se tiendra pendant trois ans avec les auditeurs et entrera à l'église sous surveillance pendant une année.

Celui qui abandonne une mère de famille ou une femme stérile sans motif de fornication ou toute autre tare, le châtiment, l'amende et la pénitence pour l'homme et la femme seront ceux définis par ce canon.

ՇԱՀ Զ. Եթէ կին ոք յառնէ ելանիցէ, կալցին եւ անդրէն յայր իւր տացեն, եւ մանաւանդ զոր վարձանաւք իցէ վարձեալ եւ ոչ բոզաբար. եւ թէպէտ եւ վաճառեսցէ, թէպէտ եւ յաղախնութիւն կալցի, եթէ կամք իցեն՝ հոգեւոր եւ բարի խրատու եւ սիրով կալցին:

Ապա եթէ այրն չարաբարոյ ինչ է կամ պոռնիկ, կամ հանգանակող եւ արբեցող, կամ այլ ինչ խեղական, գանիւ եւ խրատու կշտամբեսցեն զայրն եւ հնազանդեցուսցեն զերկոսին. եթէ ազատ է՝ տուգանաւք եւ խրատու զայրն ի կարգ ածցեն. ապա թէ դիւրափոխեսցի այրն՝ կինն պաշտեսցէ զնա:

ՇԱՀ ԺԳ. Որ զազգական կին առնէ՝ այս պղծութիւն եւ գարշանք յայտնի լիցի, «Եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում» (Եփես. Ե. 3). զի մի՛ ոք ընդ աղտախանս մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց եւ անաստուած ամպարիշտ ազգացն. զոր հրաման առեալ մեծ աւրէնսուսոյց մարգարէին Մովսէսի ի Կենարարէն, թէ՝ «Պատուիրեա՛ որդւոցն Իսրաէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ, յայտնել զառականս նոցա» (Ղեւտ. ԺԸ. 6): Եւ յանէծսն գրէր Մովսէս, թէ «Անիծեալ որ ննջիցէ ընդ մերձաւորի արեան իւրոյ» (Բ. Օրէնք ԻԷ. 20, 22): Արդ՝ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն եւ զքրիստոնէութիւն զգեցեալ եւ զտէրունական մկրտութիւն՝ զկնիք եւ զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբաւրորդի կամ զհաւրաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի «Բարկութիւն անձին իւրում գանձէ» (յմմտ. Յռ. Բ. 5) այնպիսին. «Որդի անաւրինի թերակատար եղիցի եւ զաւակ անաւրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի» (Իմաս. Գ. 16): Զի եթէ զկին եղբաւր իւրոյ ունելոյ՝ մեծի մարգարէին եւ կարապետին Յովհաննու գլուխն կտրեցաւ (յմմտ. Մատթ. ԺԴ. 3-11, Մարկ. Զ. 24-27), ապա զինչ եւս աղէտս ոչ համարեսցի ոք, որ զազգական իւր կին առնիցէ, զոր ոչ հրամայեն աւրէնքն քրիստոնեականք եւ սուրբ առաքեալքն եւ աշակերտքն Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք ընդդիմացեալ աւրինացս եւ հաստատեալ կանոնիս եւ ամպարշտեալ ի հեթանոսութիւն եւ ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին եղիցի եւ բաժին նորա եւ ի սրբոյ եկեղեցւոյ աւտարացեալ եղիցի, որպէս եւ գրեալ է. «Բարձցի ամպարիշտն յերկրէ եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ» (Ես. ԻՁ. 10). «Ընդ անաւրէնս համարեսցի» (Ես. ՃԳ. 12, Մարկ. ԺԵ. 28) ըստ գրեցելոյն՝ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան, դյք գործէք զանաւրէնութիւն» (Սաղ. Զ. 9), մի՛ ոք ընկալցի զպատարագս նորա, քանզի պիղծ է առաջի Տեառն պատարագ նորա: Եւ թէ մատուցողն պիղծ է, առաւել եւս եւ զոհն նորա: Եւ եկեղեցի եւ կանոնք զապաշխարութիւն նորա ոչ ընդունին, զի «Ի խոտորել յինէն անզգամին եւ ես ինչ ոչ փոյթ առնէի» (Սաղ. Ճ. 4). մինչեւ թողցեն եւ դարձցին յանզգամութենէն եւ ի պիղծ գործոցն ըստ մարգարէին ձայնի. «Ընկեցէք զչարիս ձեր» (Ես. Ա. 16), ասէ Տէր:

Եթէ ոք այնպիսեացն պսակ աւրինեսցէ, կամ ի հարսանիս երթիցէ, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա՝ եւ ի կարգէ պաշտաւնէից հեռացեալ եղիցի: Եւ եթէ ոք եպիսկոպոս կամ երէց գտցի ի խորհրդեանն՝ յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկեալ եղիցին եւ ի կարգ պաշտաւնէիցն մի՛ մերձեսցին: Բայց որ խոտորեցան յաւրինաց սրբոց եւ ի կարգէ եկեղեցւոյ, եթէ դարձցին ի պիղծ ամուսնութենէն, եւ մեկնեսցին ի միմեանց՝ ի ձեռն մեծամեծ տրոց մինչեւ զկէս կենաց եւ ընչից իւրեանց

SHV 6. La femme qui quitte son mari sera arrêtée et lui sera rendue, notamment s'il l'a épousée avec une contrepartie et non comme une prostituée; et cela même s'il l'a vendue ou l'a tenue en servitude, s'ils le souhaitent, qu'ils vivent ensemble avec des remontrances spirituelles.

Mais si le mari a des mœurs perverses ou est fornicateur, dépensier, ivrogne ou dépravé d'une quelconque façon, il sera réprimandé par des remontrances et en étant battu, et les époux seront ramenés dans l'obéissance; et s'il est noble, il sera ramené à l'ordre par une amende et des remontrances; puis, si le mari s'amende facilement, la femme le servira.

SHV 13. Celui qui prend pour femme une parente, commet un acte manifestement impur et abominable et suit la coutume des païens et des nations athées impies (Ép 5, 3; Lv 18, 6; Dt 27, 20, 22). Aucun chrétien n'aura le droit de prendre pour femme sa sœur ou la fille de sa sœur, ou la fille de son frère, ou la sœur de son père, ou toute autre personne membre de sa parenté jusqu'au quatrième degré (Rm 2, 5; Sg 3, 16; Mt 14, 3-11). À présent, si quelqu'un s'oppose à ces lois et à ce canon qui a été établi, et avec impiété s'égare dans le paganisme et le judaïsme, sa part sera placée avec eux, et il deviendra étranger à la sainte Église (Is 26, 10; 53, 10; Ps 6, 9; 100, 4; Is 1, 16).

Celui qui bénit le mariage de telles personnes ou assiste aux noces se rend complice de leurs actes malfaisants, et il sera éloigné de l'ordre des ministres du culte. L'évêque ou le prêtre convaincu d'avoir été au courant sera déchu de son siège et de son sacerdoce, et il ne s'approchera pas de l'ordre des ministres du culte. Mais ceux qui se sont écartés des saintes lois et de la règle de l'Église, s'ils se convertissent de leur mariage impur et se séparent l'un de l'autre, pour le salut de leur âme, ils donneront des dons considérables, jusqu'à la moitié de leur fortune et de leurs biens aux nécessiteux, aux affligés et à la sainte Église; ils feront pénitence chaque jour de leur vie, pour devenir dignes de recevoir la communion à l'achèvement de leur vie. Mais les autorités ecclésiastiques qui étaient au courant et qui avaient béni le mariage paieront une amende de 500 *dram* aux pauvres, si c'est un évêque, de 200 *dram*, si c'est un prêtre; et celui qui a béni le mariage paiera 200 *dram*, et alors ils pourront regagner leur siège et leur sacerdoce.

Mais si les époux ne renoncent pas à leur mariage impur, le célébrant du mariage et ceux des prêtres qui étaient au courant ne regagneront pas leur siège et leur sacerdoce. Ces lois et ces canons s'appliquent autant pour le noble que le vilain.

Mais si quelqu'un s'élève contre ces canons et demande pour quelle raison les canons de Nicée n'ont pas disposé des sanctions aussi sévères, la réponse est que personne ne pouvait prévoir que des méfaits et des crimes aussi considérables seraient commis en ce monde, mais pour le reste les Pères de Nicée arrachaient au plus près et détruisaient la mauvaise racine de perdition.

հոգւոց իւրեանց բաժին տացեն ի կարաւտեալս եւ ի վշտագնեալս եւ ի սուրբ եկեղեցի. զաւուրս կենաց իւրեանց ապաշխարեալ՝ ի վախճանին թէ լիցին հաղորդելոյ արժանի: Ապա եւ գլխաւորք եկեղեցւոյն որ ի խորհրդին էին եւ որ զպսակն աւրհնեաց, Շ դրամ եպիսկոպոսն, տուգանեսցի յաղքատս եւ Մ՝ երէցն, եւ Մ՝ որ զպսակն աւրհնեաց, եւ ապա մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն:

Ապա եթէ նոքա ոչ մեկնեսցին ի պիղծ ամուսնութենէն՝ եւ պսակադիրն եւ ի քահանայից որ ի խորհրդին եղեալ էին, մի՛ մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն: Թէ ազատ է, թէ շինական, աւրէնք եւ կանոնք այդ կացցեն:

Ապա եթէ ոք ընդդէմ եկեալ ասիցէ, թէ ի Նիկիական կանոնսն ընդ՞ր չէ այդպէս ծանր եղեալ. վասն զի ոչ ունէր ոք ակն թէ այդպիսի մեծամեծ չարիք եւ աւճիրք յաշխարհի գործիցին, այլ անդէն վաղվաղակի մաւտակտուր խզէին զչար արմատ կորստեանն:

ԹՍՎ ԺԴ. «Եթէ ոք զկին եհան առանց բանի պոռնկութեան, ինքն տայ շնալ նմա» (Մատթ. Ե. 32), ապա թէ թողցէ եւ ապաշխարեսցէ՝ Ը. ամ արտաքոյ, Չ. ամ ընդ ապաշխարողս ելցէ, Ե. ամ աւրէնս մի՛ առցէ: Այս փոխանակ ընդ իւր եւ ընդ կնոջն, որպէս ասաց Տէր. «Թէ պահիցէք զպատուիրանս իմ, յաւիտեան կեցջիք» (Յով. ԺԵ. 10): Եւ յորժամ ապաշխարիցէք եւ խառնեսջիք՝ պատարագք ձեր ընդունելի լիցին (յմմտ. Հռ. ԺԵ. 16): Ապա եթէ նոյնպէս մեռջիք, մի՛ տիրեսջիք ի նոսա եւ մի՛ թաղէք զնոսա, որպէս ասէ երանելի առաքեալն. «Չի նոքա զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն» (Ա. Կոր. ԺԵ. 50, Չ. 9): Եւ ոչ թէ նոքա միայն, այլ եւ որ կցորդ են նոցա: Չի որ զայս առնէ, յաւիտեան կեցցէ (յմմտ. Ա. Յով. Բ. 17) եւ որ ոչն լսէ՝ մահու մեռցի: Եւ եթէ յաշխարհի աստ ապաշխարութեանս այսպէս ոչ ապաշխարիցէք, իսկ յաշխարհին հանդերձեալ զի՞ գործիցէք:

ՓԻԻ Ա. Կին եթէ ամուլ դիպեսցի՝ անգիտաբար ամուսնանալով, անմեղք են, մի՛ որոշեսցին ի միմեանց, իսկ զոր այլոց արանց փորձեալ իցեն եւ յետոյ այլք առնուցուն զկանայս անպտուղս, նոքա են ըստ նմանութեան քաղից եւ խոզից, որք զվայրենանալն միայն կամիցին. պարտապան եղիցին Աստուծոյ: Նոքա զարուագիտացն զդատաստանսն ընկալցին, Է. ամ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն, եւ Ժ. ամ յեկեղեցի մտցէ եւ ելցէ ընդ ապաշխարողս, եւ ապա հաղորդեսցի աւրինաց:

ԿԵՆ ԽԱ. Եթէ կին ուրուք շնացաւ մինչդեռ աշխարհական իցէ եւ յայտնի գտցի ընդ յանցանաւք, զայսպիսեացս զարս ոչ է արժան ի քահանայութիւն մատուցանել. իսկ եթէ յետ ձեռնադրութեանն գտցի ի շնութեան, կինն արձակել արժան է. ապա եթէ ունիցի ի կնութեան՝ ոչ կարէ լինել քահանայ:

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

ԲԳԿ Գ. Թէ թողցէ այր զկին վասն զաւակի, պարտ է հաւաստեաւ քննել եւ տալ ապաշխարութիւն զերկկնոյն:

SEW 14. «Celui qui renvoie sa femme sans qu'elle n'ait forniqué l'expose à devenir adultère» (Mt 5, 32), donc s'il la renvoie, il fera pénitence pendant huit ans à l'extérieur de l'église, puis pendant six ans avec les pénitents, puis pendant cinq ans encore, il ne recevra pas la communion. Ceci a été disposé aussi bien pour son bénéfice que pour celui de sa femme (Jn 15, 10; Hb 15, 16; 1 Co 15, 50; 6, 9; 1 Jn 2, 17).

PHI 1. La femme qui se marie en ignorant sa stérilité ne commet aucun péché et les époux ne doivent pas se séparer, mais celles qui ont déjà essayé de procréer et qui sont ensuite prises comme épouses par d'autres hommes, ceux-là sont identiques à des boucs ou des porcs et ils sont débiteurs envers Dieu; ils seront soumis au tribunal des sodomites et feront pénitence pendant sept ans à l'extérieur de l'église, puis pendant dix ans, ils entreront dans l'église et en sortiront avec les pénitents, puis ils communieront à l'eucharistie.

SCN 41. Un laïc dont l'épouse est surprise en flagrant délit d'adultère ne pourra pas accéder au sacerdoce; mais si c'est après son ordination, elle devra être renvoyée; mais s'il la garde comme épouse, il ne pourra plus être prêtre.

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

ECB 3. Si un homme abandonne sa femme à cause de sa stérilité, elle devra subir un examen médical approfondi et lui supportera la pénitence des bigames.

ԲԳԿ ԻԹ. Թէ ուրկանայցէ այր կամ կին՝ չէ արժան թողուլ ի բաց. եւ եթէ դեւ ունի՝ նոյնպէս, այլ սրբութեամբ ունել զնա, եւ այն է հաճոյ Աստուծոյ. ապա եթէ թողու՝ մի՛ իշխեսցէ ամուսնանալ մինչ կենդանի իցէ զրկեալն եւ ամ յամէ ինչս տալ նմա, զի զոր Աստուած զուգեաց մարդ՝ մի՛ մեկնեսցէ, զի մի մարմին են (Մատթ. ԺԹ. 9). եւ եթէ ոք ամուսնասցի՝ շուն կոչեսցի:

ԲԳԿ ԽԴ. Թէ ոք ներքինի իցէ կամ մարմնազեղծ եւ կեղծաւորութեամբ կին առնէ եւ կնոջն հասեալ ի վերայ գործոյն՝ իշխան է կալ եւ քակել. եթէ քակի՝ ում կամի առն լիցի, եւ զկէս ընչից նորա առցեն եւ վասն պսակին տուգան տացէ յեկեղեցին, Գ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ԾՁ. Կին քահանային եթէ գտանի ի պոռնկութեան՝ թողցէ ի բաց, ապա եթէ ոչ՝ լուծցի ի քահանայութենէն:

ԲԳԿ ԿԹ. Այր որ թողու զկին իւր վասն աստուածպաշտութեան եւ կամի աղաւթական լինել՝ նզովեալ եղիցի եւ Գ. ամ ապաշխարեսցէ առ դրանն:

ԲԳԿ ՃԼԲ. Թէ լինիցին Բ. եղբարք կամ այլ մերձաւորք եւ կամեսցին ամուսնանալ Բ. քերց կամ յայլ մերձաւորս՝ որոշեսցին ի միմեանց, եւ թողցեն յայն որ յառաջն էր ընթացեալ. ապա եթէ առ նախանձու երկոքինն ամուսնասցին՝ թողցեն զառաջին պսակեալն եւ զյետինն քակտեսցեն ի միմեանց. եւ վասն պսակին անարգանաց Ճ. դրամ յեկեղեցին տուգանս տացեն եւ ապաշխարութիւն երկկնոյն եղիցի եւ սրբեալ ի մեղաց՝ լիցին առն եւ արասցեն կանայս:

ԲԳԿ ՄԺԷ. Կանայք որ զիւրեանց արսն ատիցեն, այրիք կոչեսցին մինչեւ ի մահ. ապա եթէ դարձցին առ արս իւրեանց՝ լուծեալ լիցի բանադրութիւնն: Ապա եթէ մինչ չեւ դարձեալ են առ արս իւրեանց ընդ այլում ամուսնասցին՝ շուն կոչեսցին եւ մինչեւ ցվախճան ընդ ունկնդիրս կացցեն եւ յետին թոշակէն զրկեալ եղիցին. եւ զինչս նոցա աղքատաց բաշխեսցեն, զի ոչ է արժան առնուլ յեկեղեցի:

ԲԳԿ ՄԺԸ. Այր եթէ թողցէ զկին իւր եւ արասցէ այլ՝ շուն կոչեսցի, հաղորդել ընդ քահանայի կամ ընդ ժողովրդականաց մի՛ իշխեսցէ, հալածեսցի յազգէ եւ ի տոհմէ իւրմէ, եւ ինչքն աղքատաց բաշխեսցի: Ապա եթէ դարձցի յառաջինն եւ ապաշխարեսցէ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ՝ տրաւք տնանկաց եւ ջերմեռանդն ապաշխարութեամբ արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԽԷ. Իսկ եթէ կանամբի իցեն՝ որոշեսցին ի միմեանց, զի անհնար է հաղորդ լինել դիւաց եւ սեղանոյն Աստուծոյ. մինչեւ Է. ժամանակ առ դրան սուրբ եկեղեցւոյն ընդ ձեռամբ քահանային սուրբ եւ պարկեշտ գնացիւք, գետնատարած անկողնաւք, անճաշակ յամենայն յղփութեանց կերակրոց, սուրբ աղիւ եւ հացիւ հալածել զթշնամին եւ հաճոյ լինել Աստուծոյ եւ դառնալ ի բանակ իւր:

ECB 29. Le mari - ou la femme - ne doit pas abandonner son conjoint qui contracte la gale ou devient possédé, mais il doit en prendre soin avec sainteté car cela est agréable à Dieu; mais s'il l'abandonne, il ne pourra pas se remarier tant que le conjoint malade est vivant et année après année, il doit assurer sa subsistance, car ce que Dieu a uni, l'homme ne peut le défaire (Mt 19, 6); et s'il se remarie, il sera appelé adultère.

ECB 44. Si un castré ou un infirme parvient à se marier par ruse, l'épouse mise devant le fait accompli pourra défaire cette union et ensuite aller avec qui elle souhaite, et il donnera la moitié de ses biens comme amende à l'Église pour avoir souillé le mariage, et il fera pénitence pendant trois ans.

ECB 56. Le prêtre qui trouve sa femme en train de forniquer devra la renvoyer, sinon il sera déposé de son sacerdoce.

ECB 69. Le mari qui abandonne sa femme pour cause de piété et souhaite devenir religieux sera anathématisé et fera pénitence pendant trois ans à la porte de l'église.

ECB 132. Si deux frères ou deux cousins souhaitent épouser deux sœurs ou deux cousines, ceux qui se sont rencontrés en second devront se séparer et les premiers pourront se marier; mais si par jalousie les deux couples se marient, le premier mariage sera valide, mais ceux qui se sont mariés ensuite devront se séparer l'un de l'autre; et ils verseront une amende de 100 *dram* à l'Église pour avoir outragé le mariage, et ils supporteront la pénitence des bigames, et une fois purifié du péché, l'homme pourra prendre femme.

ECB 217. La femme qui prend en aversion son mari sera appelée veuve jusqu'à sa mort; mais si elle retourne à son mari son excommunication sera levée. Mais si elle ne retourne pas avec son mari et épouse un autre homme, elle sera adultère et elle se tiendra avec les auditeurs jusqu'à sa mort et sera privée du viatique; et elle distribuera ses biens aux pauvres, car il ne convient pas que l'Église les reçoive.

ECB 218. L'homme qui abandonne sa femme et en prend une autre sera appelé chien, et il ne pourra communier ni avec le prêtre, ni avec les fidèles, il sera chassé par sa famille et de sa maison, et ses biens seront distribués aux pauvres. Mais s'il retourne à sa première femme et fait pénitence en se tenant pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance, grâce à des dons aux indigents et une pénitence fervente, il sera digne de la communion.

ECB 247. L'épouse qui est possédée devra se séparer temporairement de son mari, car il est indigne d'accorder la communion et l'autel de Dieu aux démons; pendant sept jours elle se tiendra à la porte de l'église de façon sainte et modeste sous la surveillance du prêtre, en dormant à même le sol et en ne goûtant à aucune nourriture délicate, mais seulement à du sel et du pain bénis (litt. saints) et elle chassera l'ennemi, et se rendra agréable à Dieu, et pourra alors retourner auprès des siens.

ՍԿՆ Է. Վասն այնոցիկ ոյք զպոռնիկ կանայս թողուն՝ Ա. ամ ապաշխարեսցեն եւ կին արասցեն, եւ կինն՛ առն չիշխէ լինել:

ՍԿՆ Ը. Վասն որ զիւր կինն թողու եւ զայլ առնէ եւ ապա դառնայ յառաջինն՝ Ե. ամ ապաշխարեսցէ:

4. Երկրորդ կամ ավելի ամուսնութիւն

ԵԱԿ ԽԵ. Եթէ ոք ժողովրդական զիւր կին հանեալ այլ առցէ եւ կամ զարձակեալն յայլմէ՝ ի բաց որոշեսցի:

ՀԱՅ ԺԴ. Որ զհետ միմեանց մեռանին մինչեւ ցերրորդ, թէ վասն որդէծնութեան կամ վասն տնարարութեան իցէ՝ ընկալցի սուրբ եկեղեցի յապաշխարութիւն: Ապա թէ որդիք գուցեն եւ տնտես կայցէ՝ մերժեսցի, որպէս ամենաչար պոռնիկն:

ՆԷԿ Բ. Կին եթէ լինիցի երկուց եղբարց՝ մերժեսցեն յիրերաց. կինն մինչեւ ի մահ ընդ ունկնդիրս կացցէ, նոյնպէս եւ այրն, ապա ըստ վարուցն իբրու թէ ողջացեալ իցեն ի մեղացն ի ձեռն ողորմութեան եւ պահոց՝ ի վախճանի իւրեանց հաղորդելոյ յետին թոշակին արժանի լիցին. ապա եթէ մինչ ի զուգութեանն են մահ տիրեսցէ, զոր ասեն՝ «Մահ մեղաւորին չար է» (Սաղ. ԼԴ. 22), զրկեալ եղիցին ի թոշակէն. բայց որ մնայն՝ այնպիսւոյն դժուարագոյն է ապաշխարութիւնն. իշխան լիցի վարդապետն ապաշխարութիւն դնել խստագոյն, որպէս եւ կամեսցի, ի ջերմութիւն ապաշխարութեանն հայեցեալ եւ յողորմութիւն գթոյ տնանկաց եւ մեծամեծ տրաւք, իշխան լիցի կարճել զժամանակն:

ՆԷԿ Է. Վասն որ երկրորդ կին առնեն. երիցուն չէ պարտ եւ արժան երթալ ի հարսանիսն, զի ոչ են հարսանիք, այլ լոկ հացուտիք, ապա եթէ ընդդիմացեալ ուրուք հրամանիս երթիցէ՝ մի՛ շնորհուկս առնելով վասն հացին թողացուցանէ ինչ յապաշխարութենէն, այլ Բ. ամս առ դրանն աղաւթից հաւասարել եւ Ա. ամ մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարողս, ի ձեռն տրոց ողորմութեան հաղորդեսցի աւրինաց:

ՆԷԿ Ը. Վասն որ մինն կուսան եւ մինն երկեակ. եթէ այլ վարքն սըրբութեամբ իցէ՝ Գ. ամս ապաշխարեալ ի ձեռն տրոց հաղորդեսցի աւրինաց:

ՆԷԿ Թ. Վասն որ երրորդք իցեն. նոցայն ոչ ամուսնութիւն, այլ յամենայն ժամ պոռնկութիւն է: Եթէ ժամանակ կենաց իւրեանց յերկարեսցի եւ այլ վարքն կատարեալ հաւատովք իցեն սուրբ սրտիւ՝ ԺԵ. ամ ընդ ունկնդիրս եւ Ե. ամ հաւասարել աղաւթից ի ձեռն մեծամեծ ծախից, գթով, պահովք, ողորմութեամբ, ի տարւոջն միանգամ հաղորդեսցին: Ապա եթէ վարքն յետնութեամբ իցեն, ահա դիցես մեղս ի վերայ մեղաց նոցա՝ բազում աշխատութեամբ ի ձեռն տրոց ողորմութեան յետին թոշակին, թէ լիցին արժանի: Ապա եթէ քակեսցին ի միմեանց ի ձեռն հաւատոց կամաւք իրերաց, եւ կամ մինչդեռ ի զուգութեանն են եւ մինն մեռցի, եւ որ մնայն սրբութեամբ կեցցէ, ընդունելի է, վարդապետն հայեսցի եւ ներելով արասցէ:

NPT 7. Ceux qui abandonnent leur femme pour cause de fornication feront pénitence pendant un an, puis ils pourront se remarier, mais l'épouse ne pourra pas se remarier.

NPT 8. Celui qui abandonne sa femme pour une autre, puis retourne avec la première fera pénitence pendant cinq ans.

4. Les secondes ou multiples noces

CCL 45. Le laïc qui renvoie son épouse pour prendre une autre femme ou qui prend celle qui a été renvoyée par son mari sera exclu.

CPC 14. Celui qui perd successivement trois épouses qui meurent en couche ou lors de travaux domestiques, l'Église l'accueille à la pénitence. Mais s'il conçoit des enfants avec sa domestique, il sera écarté comme le plus malfaisant des fornicateurs.

NEO 2. La femme qui épouse deux frères devra se séparer de son second mari et tous deux feront pénitence en se tenant avec les auditeurs jusqu'à leur mort, mais selon leur conduite et grâce à la miséricorde (*i.e.* aux dons), et au jeûne, ils pourront recevoir le viatique. Mais s'ils restent ensemble et que l'un d'eux meurt – sans recevoir le viatique (Ps 33, 22) - le *vardapet* pourra infliger une pénitence plus dure pour le survivant, mais selon la ferveur de la pénitence et de la pitié, et de grands dons aux pauvres, il pourra raccourcir le temps de pénitence.

NEO 7. Le prêtre ne doit pas aller au mariage de ceux qui se marient une deuxième fois, car il ne s'agit pas d'un mariage, mais d'un simple banquet, mais celui qui s'y rendra non par flatterie, mais à cause du repas, pendant deux ans, il participera aux prières près de la porte et pendant un an, il entrera dans l'église et sortira avec les pénitents, et grâce à des dons de miséricorde, il pourra communier.

NEO 8. Celui qui épouse une vierge, puis une femme qui se marie pour la deuxième fois; si le reste de sa conduite est sainte, après avoir fait pénitence pendant trois ans, grâce à des dons, il participera à la communion.

NEO 9. Les troisièmes noces ne sont pas un mariage mais de la fornication. Mais si la vie des époux se prolonge et que, par ailleurs, ils se conduisent avec une foi parfaite, après quinze ans passés avec les auditeurs, puis après avoir participé pendant cinq ans aux prières, grâce au jeûne et à l'aumône, ils pourront communier une fois par an. Mais si leur conduite est vile, ce péché s'ajoutera à leur péché précédent et c'est seulement au prix d'œuvres pénibles et de dons de miséricorde qu'ils pourraient être dignes du viatique. Mais si grâce à leur foi, ils se séparent ou si l'un des deux meurt et que l'autre vit saintement, on pourra le recevoir, le *vardapet* l'observera et agira avec indulgence.

ՆԷԿ Ժ. Այլ վասն չորրորդին եւ հինգերորդին որ ունին կանայս՝ աւրէնք չեն, դատաւոր եւ եկեղեցի ոչ ընդունի, բայց եպիսկոպոսն գիտասցէ:

ՆԷԿ ԺԱ. Իսկ եթէ արձակեսցէ ոք զկին իւր վասն բանի պոռնկութեան կամ վասն այլ չարագործութեան, զոր ոչ միայն այրն, այլ եւ աշխարհ վկայէ զչար գործոց նորա՝ արձակեսցէ. ընդունի զնա կանոնս, բայց Ա. ամ ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինացն, եթէ կամեսցի կին արասցէ, եւ կինն այլում առն չիշխէ լինել մինչ կենդանի է այր նորա:

ԳՐԻ Ե. Որ մին կուսան եւ մին երկեակ՝ Բ. ամ արտաքոյ եւ մի՝ ընդ աւրինաւք:

ԳՐԻ Զ. Եթէ ոք թողցէ զերկրորդն եւ յառաջինն դարձցի ի թողեալն՝ Է. ամ արտաքոյ եւ Ա. ընդ աւրինաւք:

ՀԱՌ Թ. Հարցումն. Թէ ոք կոչեսցէ զվիճակեալն ի զուգաւորութիւն ամուսնութեան եւ ինքն լպրշիցէ զամուսնութիւն անաւրէնութեան կամ քենւոյ ամուսնութիւն, այսինքն է քեռ կնոջն, յառաջագոյն եղեալ որ հանդերձեալ է՝ զուգել, թէ պարտ է վիճակելոյն աղաւթս առնել ի վերայ նորա կամ պատարագ մատուցանել:

Պատասխանի. Միանգամ ասացի, թէ լուիցէ վիճակեալն զանաւրէն չամուսնութիւնն, ապա եթէ ամուսնութիւն անաւրէն է՝ ոչ է պարտ վիճակելոյն հաղորդել մեղաց աւտարաց:

ՀԱՌ ԺԲ. Հարցումն. Եթէ ոք կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս ագանիցի, եւ այր նորա ասիցէ. «Ոչ կարեմ ժուժկալ լինել», եւ կամիցի այլ կին առնուլ, ամրէն է, թէ ոչ:

Պատասխանի. Ծնութիւն միջնորդի յիրսդ. եւ զինչ պարտ եւ արժան է, ոչ գիտեմ վասն այնորիկ:

ՀԱՌ ԻԱ. Հարցումն. Եթէ այր ոք ոչ լինիցի ի գործարութեան եւ կինն ելանէ ի նմանէ, թէ ոք զկինն զայն կին առնիցէ, ընդ հանեալ կանայսն պարտ է համարել զայնպիսին, եթէ անխիղճ ունել. կամ եթէ այրն չարձակէ զկինն ի բաց եւ ասէ այսպէս, թէ «Ինձ մասն հասեալ յԱստուծոյ՝ կաց եւ պաշտեա զիս», մեք զինչ պատասխանի արասցուք:

Պատասխանի. Չէ արժան արձակել եւ ոչ ձեզ թողացուցանել նմա:

ՀԱՌ ԻԲ. Հարցումն. Եթէ ուրուք յերախայութեան կին արարեալ աւրինաւք եւ որդիք լեալ են յամուսնոյ իւրոյ եւ թողու զայն որդւովքն եւ այլ կին առնէ եւ կնիք խնդրէ՝ զինչ արասցուք:

Պատասխանի. Ընդունիմք զնոսա, այլ նախ ապաշխարել:

ՀԱՌ ԻԳ. Հարցումն. Թէ կին ուրուք հաշմեսցի եւ ասէ ցայր իւր, թէ «Ես աւասիկ չեմ արժանի առնակնութեան, արա դու քեզ այլ կին, որ քեզ պիտանի է եւ զտուն քո

NEO 10. Ceux qui se sont mariés pour la quatrième ou cinquième fois, la Loi n'est pas juge et l'Église ne l'admet pas, mais ce sera laissé à la décision de l'évêque.

NEO 11. Celui qui renvoie sa femme pour cause de fornication ou pour toute autre mauvaise action et que les gens témoignent de cela, le canon admet cet homme, mais il fera pénitence pendant un an, et par la miséricorde (*i.e.* des dons) il se purifiera et pourra communier, et s'il le veut, il pourra se remarier, mais la femme ne le pourra pas aussi longtemps que son ancien mari est vivant.

GLI 5. Les époux – dont l'un est vierge et l'autre remarié – se tiendront pendant deux ans à l'extérieur de l'église, et pendant un an à l'intérieur avec les participants, sans accès à la communion.

GLI 6. Celui qui quitte sa seconde femme pour retourner avec la première qu'il avait quittée, se tiendra pendant sept ans à l'extérieur de l'église et une année à l'intérieur avec les participants sans accès à la communion.

QCA 9. Le prêtre qui est convié à célébrer un mariage illicite – à savoir, l'union d'un homme avec sa belle-sœur, c'est-à-dire la veuve de son frère défunt – doit refuser de le célébrer, car il s'agit d'une union illicite, mais le prêtre doit prier pour cet homme et offrir le sacrifice.

QCA 12. Celui dont la femme est totalement possédée, au point qu'il est nécessaire de l'enchaîner et qui déclare ne plus pouvoir rester continent, et désire se marier avec une autre femme; de fait, l'adultère s'immisce dans ce type d'affaire, et «je ne sais pas ce qu'il faut faire» – dit Athanase d'Alexandrie !

QCA 21. La femme dont le mari est impuissant ne doit pas le quitter et se marier avec un autre homme; et il faut donner raison à son premier époux qui l'exhorte de ne pas le quitter.

QCA 22. Le catéchumène qui abandonne son épouse, mère de ses enfants, pour une autre femme pourra être baptisé, mais seulement après avoir fait pénitence.

QCA 23. Le mari qui quitte sa femme estropiée – qui lui dit «laisse-moi pour une autre femme qui te réjouira et donne-moi seulement chaque année de quoi me

շէն կալցի եւ ինձ ամ ըստ ամէ հաց եւ հանդերձս տուր եւ ես նստայց առ եկեղեցւոյդ մինչեւ ի վախճան ժամանակի իմոյ». եւ նա առցէ յանձն լինել զամենայն, ընդ պատուհասիւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ անվնաս է:

Պատասխանի. Վնասակար է, ոչ է իշխանութիւն այլ առնել, մինչեւ այն կենդանի է:

ՀԱԹ ԻԶ. Հարցումն. Թէ այր ոք ընդ անասնոյ պղծիցի եւ յետ պղծութեանն զղջանայցէ եւ ապաշխարիցէ եւ վաստակիցի յաւրկանոցի, որպէս հրամայեն վարդապետք, եւ կին նորա յետ յանցանացն չկամի կալ նմա ի կնութեան վասն պղծութեանն, որ եդաւ ի վերայ նորա, եւ այրն այնպէս ասիցէ, թէ «Կամ կինն առաջին հաւանեսցի կամ այլ կին հրամայեցեք առնել»:

Պատասխանի. Կինն իշխեսցէ մեկնել եւ այրն չիշխէ այլ կին առնուլ:

ՀԱԹ ԽԳ. Հարցումն. Թէ ոք քահանայ կամի մեկնել ի կնոջէ իւրմէ եւ կինն ասէ ցնա. «Զիս յո՛ ապաստան թողուս, ես այսպէս առանց առն չկարեմ նստել, բայց եթէ առն լինիմ». մեք զինչ հրաման տացուք. կամ թէ երէցն մեռցի, այլում առն իշխէ՞ լինել, թէ ոչ:

Պատասխանի. Ոչ է արժան արձակել զկինն եւ ոչ կինն այլում առն լինել:

ՀԱԹ ԾԵ. Հարցումն. Թէ ուրուք կին աւրկանայ կամ դիւահարի եւ այրն թողու զկինն եւ այլ կին առնէ, ընդ պատուհասիւք պարտի՞մք համարել զայնպիսին, թէ ոչ:
Պատասխանի. Չէ արժան այլ կին առնուլ:

ՀԱԹ ԾԶ. Հարցումն. Թէ ոք զկին իւր զամուսին հանէ եւ այլ կին առնէ եւ նովին կնաւն ապաշխարութիւն խնդրէ, զինչ արժան է առնել:

Պատասխանի. Մեկնել ի միմեանց, զի շնացողք են. եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ:

ՀԱԹ ԾԷ. Հարցումն. Թէ ոք զկին իւր եթող եւ այլ կին արար եւ թողեալ կինն մեռաւ եւ նա զոր արարն նովին կնաւն ապաշխարութիւն խնդրէ, զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Մեկնել պարտ է. ապա եթէ ոչ մեկնեսցին՝ ծանր ապաշխարութիւն ի վերայ եղիցի եւ յելս անձին իւրոյ գյետին թոշակն ընկալցին:

ՀԱԹ ԾԹ. Հարցումն. Թէ ոք վասն ամլութեան եթող զկին իւր եւ առնէ կին ծննդական եւ ապաշխարութիւն խնդրէ նովին կնաւն, զինչ պարտ է առնել:

Պատասխանի: Շնացող է:

ՀԱԹ Կ. Հարցումն. Թէ ոք ի կնահանէից այլ բարուք բարի է ողորմածութեամբ, արդար դատաստանաւք եւ ցանկայ սրբութեան հաւասարել նովին կնաւն, զոր արարն, զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Չէ արժան հաւասարել սրբութեան նովին կնաւն, զի չէ ամուսնութիւն, այլ պոռնկութիւն:

nourrir, et me vêtir, tandis que je demeurerais à l'église» – et épouse une autre femme sera coupable, car il ne peut pas épouser une autre femme tant que la première est en vie.

QCA 26. Si un homme après s'être souillé avec des animaux le regrette et fait pénitence, et travaille dans une léproserie, comme le prescrivent les *vardapet*s, mais que sa femme ne veut pas rester mariée avec lui en raison de son péché, elle pourra le quitter, mais lui ne pourra pas épouser une autre femme.

QCA 43. Un prêtre ne doit pas quitter sa femme et dans tous les cas, celle-ci ne peut aucunement se remarier.

QCA 55. Le mari qui abandonne son épouse qui est devenue lépreuse ou possédée ne peut pas prendre une autre femme.

QCA 56. Le mari qui quitte sa femme pour une autre ne peut pas demander avec cette dernière à faire pénitence ensemble et ils doivent se séparer, car ils sont adultères, et si un autre homme épousait la première femme répudiée, il commettrait un adultère.

QCA 57. Celui dont la première épouse – qu'il a abandonnée pour épouser une autre femme – meurt ne peut pas faire pénitence avec sa seconde femme, il doit la quitter car ils sont adultères; et s'ils restent malgré tout ensemble, ils subiront une lourde pénitence pour être dignes du viatique au moment de leur mort.

QCA 59. L'homme qui quitte son épouse stérile pour une autre femme qui est féconde, puis demande à faire pénitence avec sa seconde femme, sera considéré comme un adultère.

QCA 60. Celui qui quitte sa femme pour en épouser une autre et, qui par ailleurs est vertueux, miséricordieux et d'un jugement sûr, ne pourra pas recevoir la communion avec sa seconde femme, car ils ne sont pas mariés, mais vivent dans la fornication.

ՀԱԹ ԿԱ. Հարցումն. Թէ ոք վասն պոռնկութեան կամ վասն այլ չարագործութեան թողու զկինն եւ խնդրէ այլ առնուլ, զինչ արասցուք:

Պատասխանի. Այրն իշխէ այլ կին առնուլ եւ կինն այլ առն չիշխէ լինել:

ՀԱԹ ԿԴ. Հարցումն. Թէ ոք ի կնահանէից յերկար ժամանակս հեռացեալ է յեկեղեցւոյ, ասեն այսպէս, թէ «Առաջին կինն այլում առն եղեւ, եւ ի միւսմէն որդիք եղեն եւ կնոջն յայլմէ առնէ որդիք եղեն. եւ արդ ես զկինս զայս թողուլ ոչ կարեմ, բայց թէ սովին կնաւս իսկ հնար է ապաշխարել եւ մանաւանդ զի հասեալ եւս եմք ի ծերութիւն». զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Մեկնել արժան է ի միմեանց, ապա եթէ ոչ մեկնեսցին, ծանր ապաշխարութիւն ի վերայ դիցեն ողորմութեամբ եւ գթով տնանկաց քաւեսցեն զմեղս իւրեանց եւ ի տարւոջն Ա. աւր հաղորդեսցին:

ՀԱԹ ԿԵ. Հարցումն. Թէ ուրուք ի տղայութեան կին արարեալ է պսակաւ եւ աւրինաւք եւ ի տղայութեան կինն մեռանի, եւ յորժամ ի չափ հասանէ այլ կին առնէ եւ ասէ այսպէս, թէ «Զառաջինն ի պէտս մարմնոյ ես ոչ գիտէի ամենեւին, վասն տղայութեան ժամանակին»: Արդ, պարտ է այսպիսւոյն գալ ի կարգ քահանայութեան:

Պատասխանի. Չէ պարտ, վասն զի միանգամ պսակ առեալ է, այլ ոչ եւս կարէ զաւրինութեան պսակն առնուլ, յայտ է թէ երկուս կին արարեալ է:

ԲԱԿ Դ. Իսկ երրորդ ամուսնութեանն աւրէնք ոչ գոն, վասն զի աւրինացն չհրամայեցաւ ինչ այսպիսի, այլ որպէս արտաքս ինչ յեկեղեցւոյ ընկեցեալ տեսանեմ: Եւ դարձեալ հրապարակագոյժ առնել չէ բարւոք, որպէս հաճոյ թուեցաւ ոմանց ասել, թէ լաւ է այս, քան զպոռնկութիւն. բայց ոմանք եւ վասն չորրորդ ամուսնութեան բազում անգամ սահմանեցին անուանելով այնուհետեւ ոչ շնութիւն, այլ բազում ամուսնութիւն, մանաւանդ ըստ աւրինացն զպոռնկութեանն իսկ զտանջանս ընդունել, վասն որոյ եւ Տէրն իսկ Սամարացւոյն ճառեալ ասէր, թէ «Հինգ այր փոխեալ է քո եւ զոր այժմդ ունիս՝ չէ քո այր» (Յովհ. Դ. 18): Եւ այսպիսեացս ոչ եթէ կանոնաւ ինչ դնել ապաշխարութիւն, այլ ըստ կամաց սովորութեան. բայց պարտ է զայսպիսին ոչ աւտարացուցանել յԱստուծոյ եկեղեցւոյ, այլ լոկ արժանաւորք լիցին ի պաշտամանն արտաքոյ եկեղեցւոյ եւ ի հաղորդութենէն հեռի եղիցին. եւ այսպէս ցուցցեն զպտուղ ապաշխարութեան յանձինս իւրեանց, յետ ԺԵ. ամի կացցեն ի տեղի հաղորդողացն:

ԲԱԿ Ե. Իսկ զերկրորդ ամուսնութիւնն ամենեւին իսկ կանոնք արգելուն ի սպասաւորութենէ:

ԲԱԿ ԺԶ. Որք միանգամ հրաժարեալ ի բաց մեկնեցան յարանց իւրեանց եւ անեղեւոյթ եղեն եւ յառաջ քան զմահն ընդ այլս զուգեցան՝ շնացողք են:

ԲԱԿ ԻԲ. Որք յայրութեան են՝ իշխանութիւն ունին զուգել ընդ ում եւ կամին (յմմտ. Ա. Կոր. Է. 39, Հռոմ. Է. 1-3). առանց ըստգտանելոյ մի՛ ոք մեկնեսցէ ի միմեանց զնոսա, զոր եւ առաքեալն ասէ. «Չհամարեալ շուն, եթէ լինիցի առն այլում» (Հռոմ. Է. 3):

QCA 61. Celui qui abandonne sa femme du fait qu'elle a forniqué ou commis toute autre méchante action pourra se remarier avec une autre femme, mais l'épouse fornicatrice ne pourra pas se remarier avec un autre homme.

QCA 64. Si un homme après avoir quitté sa femme et s'être éloigné de l'Église un long moment affirme que cette femme s'est remariée avec un autre homme, avec qui elle a eu des enfants, et que lui-même est allé avec une autre femme qui a donné naissance à des enfants, et qu'à présent, il ne peut pas quitter sa seconde femme, notamment du fait qu'ils sont tous les deux âgés, ils doivent se séparer et s'ils ne le font pas, ils subiront une lourde pénitence et pratiqueront l'aumône, et la compassion envers les pauvres, et ainsi, ils pourront communier une fois par an.

QCA 67. Celui qui a été légalement marié dans sa jeunesse, puis est devenu veuf alors qu'il était toujours jeune et qui, arrivé à l'âge de la maturité se marie avec une autre femme, en précisant qu'il n'avait pas eu de rapports sexuels lors de son premier mariage ne pourra pas accéder à la prêtrise, car il est évident qu'il a été marié deux fois.

BAC 4. Les troisièmes noces sont interdites par la loi et sont considérées comme quelque chose d'extérieur à l'Église. Et il n'est pas bon d'évoquer ce point publiquement comme le font ceux qui estiment que cela vaut mieux que de la fornication; d'autres ont statué à diverses reprises à propos des quatrièmes noces, les qualifiant non pas d'adultère mais de polygamie, alors même que selon la loi, il s'agit d'une fornication digne de punition et c'est pourquoi le Seigneur a dit à la Samaritaine, «Tu as eu cinq maris, et celui que tu as maintenant n'est pas ton mari» (Jn 4, 18). Et de telles personnes ne feront pas pénitence selon les canons, mais d'après leur propre libre arbitre (litt. leur propre coutume); toutefois, il ne faut pas les rendre étrangères à l'Église de Dieu, elles seront seulement dignes d'entendre le culte à l'extérieur de l'église et ne recevront pas la communion; et ayant montré les fruits de leur pénitence en leurs âmes de cette façon, après quinze ans, elles pourront prendre place parmi ceux qui communient.

BAC 7. Ceux qui contractent un second mariage seront complètement exclus de leur ministère.

BAC 16. Celles qui ont congédié et quitté leur mari, et ont disparu, et avant la mort de celui-ci, se sont unies avec un autre homme sont des adultères.

BAC 22. Les veuves peuvent se marier avec qui elles le souhaitent (cf. 1 Co 7, 39; Rm 7, 1-3) sans encourir de reproches; et personne ne devra les séparer l'un de l'autre selon la parole de l'Apôtre (Rm 7, 3).

ԲԱԿ ԻԶ. Եթէ ոք կին զայր իւր թողեալ եւ այլում եղեալ առ տգիտութեան եւ դարձեալ վերստին յառաջին այրն իւր դարձցի, ի պոռնկութեան համարեալ է, բայց սակայն վասն տգիտութեանն ոչ է նմա իշխանութիւն ամուսնանալ, այլ բարւոք զի այնպէս կացցէ:

ԲԱԿ ԻԷ. Իսկ որ միանգամ յառնէ իւրմէ թողեալ է կին ոք, ըստ իմում բանիս այսպէս համարիմ եթէ լաւ է, որպէս եւ ասացն իսկ Տէր, թէ «Որ հանէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ» (Մատթ. Ե. 32), իսկ կինն եթէ պահեսցէ զանձն իւր եւ «Ոչ եղիցի առն այլում, ոչ կոչի շուն» (Հռոմ. Է. 3). ապա ուրեմն յայտ է եթէ եւ այրն ընդ պատուհասիւ է եւ կինն առանց ըստգտանաց, զի պահեաց զբանն տեառն Յիսուսի եւ ոչ կոչեցաւ շուն, զի ոչ միաւորեցաւ ընդ առն այլում:

ՍԱՊ ԻԳ. Տգէտ երէցեղբարք՝ ժողովուրդ մի՛ իշխեսցեն ունել. երկականայք երէցեղբարք ընդ զինուորս կացցեն՝ որոշեալ ամենեւին յեկեղեցականացն եւ ի մասնէ եկեղեցւոյն, վասն զի եղեն մարմնասէրք:

ՇԱՒ Բ. Եթէ քահանայ ոք ի պղծութեան իցէ կամ ի պոռնկութեան եւ կամ յայլ ի վատթար գործս, եւ վկայութեամբ իրքն ի յայտ եկեսցեն, զքահանայութիւնն մի՛ պաշտեսցէ, Յ դրամ տուգան տացէ՝ յաղքատս բաշխեսցեն, եւ նա ի դպրաց կարգի կացցէ: Ապա թէ ի դպրութեանն ի նոյն պղծութեան գտանիցի, ի կարգէն ելցէ եւ ի դպրութենէն՝ մինչեւ ի կարգ ուղղութեան եկեսցէ ապաշխարութեամբ: Եւ տեսեալ եպիսկոպոսին զճանապարհս նորա՝ ի դպրաց կարգի կացցէ: Զի եկեղեցի զսուրբ կամի, մանաւանդ տէրունական սեղանն խորհրդոյ զանարատսն ընդունի. զի մի՛ բարկութիւն Աստուծոյ զարթիցէ ի վերայ երկրի ի ձեռն առաջնորդաց: Եթէ կնաւոր երէց գտցի ի պղծութեան եւ ի պոռնկութեան կամ յայլ գործս չարեաց եւ ստուգեալ վկայիւք՝ քահանայութիւնն լուծցի եւ յեկեղեցւոյ բաժնէ հեռացեալ լիցի, Յ դրամ տուգանս տացէ եւ ի կարաւտեալս բաշխեսցեն. եթէ երէց եւ եթէ սարկաւագ՝ կանոն այդ կացցէ. եւ նոքա ի կարգ զինուորութեան կացցեն եւ ի հարկս արքունի, եւ ընդ պաշտաւնեայս մի՛ խառնեսցին:

Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան գտցին, ընտրոյ տէր նոքա լիցին՝ կամ զեկեղեցին եւ զքահանայութիւնն ընտրեսցեն, կամ զկինն: Եթէ զքահանայութիւնն առցէ՝ զկինն ի տանէն ի բաց հանցեն եւ ապաշխարութիւն խիստ ի վերայ դիցեն: Ապա եթէ յընտանեաց դուստր քահանայի ի պոռնկութեան գտանիցի, եկեղեցւոյ բաժնի մի՛ իշխեսցէ եւ ի քահանայական տանէն ի բաց ելցէ. եւ խիստ ապաշխարութիւն ի վերայ դիցեն եւ պատուհաս: Եւ որդւոյ երիցու նոյն պատուհաս լիցի: Եթէ երէցն մեռցի, կինն առն չիշխէ լինել. եւ ոչ երէցն կին առնել: Եւ աղախին պոռնիկ ի քահանայի տան մի՛ լիցի, «Զի սրբութիւն Տեառն է» (Ելք ԻԹ. 34):

ՇԱՒ Դ. Եթէ ոք զկին թողցէ՝ զորդւոց մայր՝ առանց բանի պոռնկութեան (Մատթ. Ե. 32; ԺԹ. 9), եւ կամ թէ արատ ինչ չար ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ եւ այլում ակն եդեալ իցէ, դատաստան այս լիցի՝ զորդիս եւ զտուն եւ զկեանսն եւ զհողն եւ զջուրն եւ զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկէսն կնոջն տացեն: Եւ թէ կամք են <կնոջն> այր ի տուն ածել յինքն՝ համարձակ ածցէ. զբաժինն

BAC 26. Si une femme a abandonné son mari pour aller avec un autre homme par ignorance, puis est retournée avec son premier mari, il s'agit de fornication et, en raison de son ignorance, elle ne pourra pas se remarier, et le mieux pour elle serait de rester ainsi.

BAC 27. S'agissant de la femme qui a été abandonnée par son mari, il est bon qu'elle reste seule (Mt 5, 32; Rm 7, 3); ainsi l'homme sera punissable et la femme sera exempte de toute accusation, du fait qu'elle aura suivi la parole du Christ et n'a pas été appelée adultère, du fait qu'elle ne s'est pas unie avec un autre homme.

SPT 23. Les *erēc'ełbayr*s ignorants ne pourront pas former une congrégation; et ceux qui sont remariés se tiendront avec les soldats et seront écartés de l'ensemble des clercs et du lot de l'Église.

SHV 2. Le prêtre qui se trouve en état d'impureté, de fornication ou commet tout autre acte vil – et que les faits sont confirmés par témoignage – n'exercera plus le sacerdoce et versera une amende de 300 *dram* qui sera distribuée aux pauvres et lui-même se tiendra dans le rang des *dpir*s. En cas de récidive, il sera destitué de son ordre sacerdotal et du rang des *dpir*s, jusqu'à ce qu'il revienne dans la voie droite par la pénitence. L'évêque après avoir observé sa conduite, pourra l'autoriser à se tenir parmi les *dpir*s. Si un prêtre marié se trouve en état d'impureté, de fornication ou commet tout autre acte malfaisant et que cela est vérifié par des témoins, il sera déposé du sacerdoce et sera tenu éloigné du lot de l'Église, il versera une amende de 300 *dram* qui sera distribuée aux nécessiteux; et le même canon s'appliquera pour le diacre, et il se tiendra avec les militaires, et paiera l'impôt royal, sans pouvoir se mêler aux clercs.

Mais si la femme du prêtre ou du diacre est adultère, son mari choisira entre elle et le sacerdoce. S'il opte pour le sacerdoce, la femme sera expulsée de sa maison et sera soumise à une dure pénitence. Mais si une fille de la famille du prêtre est trouvée dans la fornication, elle n'aura plus droit au lot de l'Église et sera expulsée de la maison du prêtre; et elle se verra imposer une stricte pénitence ainsi qu'un châtiment. Et le même châtiment s'appliquera au fils du prêtre. Et si le prêtre meurt, sa femme n'aura pas le droit de se remarier, de même que le prêtre, s'il devient veuf. Et une servante fornicatrice ne doit pas demeurer dans la maison du prêtre (Ex 29, 34).

SHV 4. Pour celui qui abandonne son épouse, mère de ses enfants sans motif de fornication de sa part (Mt 5, 32; 19, 9) ou en l'absence d'une tare maligne sur son corps, mais du fait que l'homme tombe dans l'adultère et en convoite une autre, la sentence est la suivante : les enfants, la maison, le patrimoine, la terre, l'eau et tout le reste seront partagés en deux, la moitié devant être cédée à la femme. Et si la

կալցին եւ զարքունի հարկն ողջ արասցեն: Եւ այրն որ եթողն, Է. ամ ապաշխարեսցէ եւ յեկեղեցի տուգան տացէ, թէ ազատ է՝ 3 դրամ, թէ շինական՝ գանալի լիցի եւ 6. դրամ յեկեղեցի տուգանեսցի փոխանակ աւրինութեամբ զամուսնութիւնն խոտելոյ:

Ապա թէ մինչդեռ ի պայքարին եւ ի տուգանի իցեն, եւ կին ոք յանդգնեալ կնաթողին կին լինի եւ ամ մի չիցէ անցեալ, յայտ եղեւ թէ զառաջին կինն նա ետ թողուլ, կալցին զկինն եւ յաւրկանոց տարի մի աղասցէ գողեացն: Եթէ ազատ է եւ յաւրկանոց չերթայ՝ 6. դրամ տացէ ի գողիսն:

ՇԱՒ Ե. Եթէ կին ոք արար եւ ամուլ պատահեաց, եւ այրն հանցէ զնա վասն ամլութեանն, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին թէ անասուն, եթէ հանդերձ եթէ արծաթ՝ առնուլ իշխեսցէ եւ գնալ: Եւ եթէ քան զամլութիւնն այլ արատ չգուցէ ի <կինն՝> մարդն տուգան եւս տացէ կնոջն, վասն անարգանացն, թէ ազատ է՝ ՌՄ դրամ, եւ եթէ շինական՝ Ո: Ապա եթէ մինչդեռ ի դատին եւ ի տուգանսն իցեն, եւ ամ մի ի վերայ չէ անցեալ, եւ ոք ի կանանց յանդգնեսցի եւ առնն կին լինիցի, կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, քանզի յայտ եղեւ, եթէ հանելոյ կնոջն նա եղեւ պատճառ. եւ տարի մի աղասցէ գողեացն եւ յաղախնութեան կացցէ եւ յեկեղեցին 6. դրամ տուգան կալցին, փոխանակ զի բուն ամուսնութիւնն վասն նորա խոտեցաւ: Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ 6. դրամ տուգան տացէ գողեացն:

Ապա եթէ առնն յառաջագոյն խորհուրդ լեալ է եթէ՝ «Զիմն թողում եւ զքեզ առնում», եւ կամ պոռնկութեամբ խանձական լեալ իցեն, 6. դրամ այրն տուգան տացէ յեկեղեցին: Եւ ապաշխարութիւն առնն Գ. ամս ընդ ունկնդիրս կացցէ եւ Ա՝ ընդ ձեռամբ մտցէ յեկեղեցի:

Որ զորդւոց մայր թողցէ կամ զամուլ՝ առանց բանի պոռնկութեան կամ այլ արատոյ, առն եւ կնոջ պատուհաս, տուգան եւ ապաշխարութիւն, կանոն եւ սահման այդ կացցէ:

ԹՍՎ ԺԲ. Առնակին թէ մեռցի եւ այրն այլ կին արասցէ՝ Գ. ամս ընդ ապաշխարողս եւ Գ՝ աւրէնս մի՛ առցէ:

ՆԵՆ ԻԵ. Ոչ է պարտ զկուսանս այրեաց ամուսնացուցանել եւ ոչ զայրիս՝ կուսանաց, զի աննման են:

ՅԻԱ ԺՋ. Իսկ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդաւք եւ խաւսնականաւք հաւանեցուցանել յիրերաց յաւժարութիւն եւ յեկեղեցւոյն եւ ի քահանայիցն աւրինութենէ ընդունել զնշան զուգաւորութեան իւրեանց: Իսկ եթէ ոք ոչ այսպէս, այլ յառաջ խանձեսցին եւ պղծեսցին առ իրեարս, զայնպիսիսն ի բաց մեկնեսցեն ի միմեանց, եւ զշնացելոցն զկանոն եւ զսահման ի վերայ դիցեն: Իսկ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնել ի միմեանց՝ յետ Ժ. ամի ապաշխարութեան ողորմութեամբ եւ արտասուաւք արժանաւորեսցին խառնել յեկեղեցի Աստուծոյ:

femme désire amener un homme chez elle, qu'elle l'amène librement; alors sa part sera saisie pour être versée en totalité à l'impôt royal. Et l'homme fera pénitence pendant sept ans et versera une amende à l'Église, si c'est un noble 300 *dram*, si c'est un vilain, il sera roué de coups et paiera une amende de 100 *dram* à l'Église.

Mais si tandis que les époux sont en litige et soumis à l'amende, une autre femme ose devenir l'épouse de l'homme qui avait abandonné sa femme, alors qu'une année ne s'est pas encore écoulée, il sera alors évident que c'est elle qui l'a poussé à abandonner son épouse et de ce fait, elle sera saisie et placée dans un lazaret pour moudre de la farine pendant une année en faveur des lépreux. Si c'est une noble et qu'elle n'aille pas dans le lazaret, elle versera 100 *dram* aux lépreux.

SHV 5. L'épouse répudiée par son mari à cause de sa stérilité aura le droit de reprendre toutes les richesses qu'elle a apportées dans la maison – que ce soient les servantes, les animaux, les vêtements ou l'argent – et de partir. Mais si en dehors de sa stérilité, la femme ne possède pas d'autres tares, le mari versera en plus une amende à la femme, à cause du déshonneur, si c'est un noble 1200 *dram*, si c'est un vilain 600 *dram*. Mais si tandis qu'ils sont en procès et soumis à l'amende et qu'une année n'est pas encore passée, et qu'une femme devient l'épouse de l'homme qui avait abandonné sa première femme, elle sera saisie et placée dans un lazaret, car il est clair qu'elle est la raison pour laquelle l'homme a répudié son épouse; et elle moudra la farine pour les lépreux et les servira pendant un an, et elle s'acquittera d'une amende de 100 *dram* à l'Église, du fait que c'est à cause d'elle que le vrai mariage a été méprisé. Mais si c'est une noble et qu'elle n'aille pas à la léproserie, elle versera 100 *dram* aux lépreux.

Mais si par avance l'homme avait médité le dessein suivant, «Je vais abandonner ma femme pour te prendre» ou qu'ils se soient consumés dans la fornication, il versera une amende de 100 *dram* à l'Église. Et comme pénitence, il se tiendra pendant trois ans avec les auditeurs et entrera à l'église sous surveillance pendant une année.

Celui qui abandonne une mère de famille ou une femme stérile sans motif de fornication ou toute autre tare, le châtiment, l'amende et la pénitence pour l'homme et la femme seront ceux définis par ce canon.

SEW 12. L'homme dont l'épouse meurt et qui se marie avec une autre femme se tiendra pendant trois ans avec les pénitents, puis pendant trois ans encore, il ne recevra pas la communion.

NEN 25. L'homme vierge ne doit pas épouser une veuve ni la femme vierge un veuf, car ils ne sont pas semblables.

YAP 16. Comme pour un premier mariage, il faut recueillir le consentement mutuel de ceux qui se marient une seconde fois par l'intermédiaire d'intercesseurs et d'émissaires, et leur union devra être bénie par les prêtres de l'Église. Mais ceux qui se souillent ensemble avant leur mariage devront se séparer et ils se verront appliquer le canon des adultères. Mais s'ils n'acceptent pas de se séparer, ils ne pourront se mêler à l'Église de Dieu qu'après une pénitence de dix ans accompagnée d'aumônes et de larmes.

ՍԻՈ Ժ. Երկրորդ ամուսնացելոցն մի՛ թողացուսցէ ի կարգէ ապաշխարութեան, ինքն պարկեշտաբար արբցէ, ապա եթէ ի զեղխ արբեցութեան գտցի՝ լուծցի:

ՍԻՈ ԺԳ. Երրորդացն զուգութիւն խառնակութիւն է, պղծագործ շնութիւն, անքաւելի յանցանք. այնպիսիքն եթէ ապաշխարութեամբ կամին ջնջել զմեղս, նախ որոշեսցին ի միմեանց իսպառ, ապա եղիցին արժանի ապաշխարութեան. եւ քահանայ որ զուգութեան նոցա պատճառ լինի՝ լուծցի եւ նզովեսցի:

ՓԻԻ Ա. Կին եթէ ամուլ դիպեսցի՝ անգիտաբար ամուսնանալով, անմեղք են, մի՛ որոշեսցին ի միմեանց, իսկ զոր այլոց արանց փորձեալ իցեն եւ յետոյ այլք առնուցուն զկանայս անպտուղս, նոքա են ըստ նմանութեան քաղից եւ խոզից, որք զվայրենանալն միայն կամիցին. պարտապան եղիցին Աստուծոյ. Նոքա զարուագիտացն զդատաստանսն ընկալցին, Է. ամ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն, Եւ Ժ. ամ յեկեղեցի մտցէ եւ ելցէ ընդ ապաշխարողս, եւ ապա հաղորդեսցի աւրինաց:

ԿԵՆ Թ. Պարտ է զերկրորդ ամուսնացեալսն յետ երից ամաց շնորհին արժանի առնել:

ԿԵՆ ԼԴ. Եթէ ոք ընդ բազում ամուսնութիւնս անցեալ է, ի վախճանին արժանի լիցի շնորհին:

ԿԵՆ ԼԹ. Ոչ է պարտ քահանայից՝ յերկրորդ հարսանիս երթալ:

ԲԳԿ Գ. Թէ թողցէ այր զկին վասն զաւակի, պարտ է հաւաստեաւ քննել եւ տալ ապաշխարութիւն զերկկնոյն:

ԲԳԿ ԻԹ. Թէ ուրկանայցէ այր կամ կին՝ չէ արժան թողուլ ի բաց. եւ եթէ դեւ ունի՝ նոյնպէս, այլ սրբութեամբ ունել զնա, եւ այն է հաճոյ Աստուծոյ. ապա եթէ թողու՝ մի՛ իշխեսցէ ամուսնանալ մինչ կենդանի իցէ զրկեալն եւ ամ յամէ ինչս տալ նմա, զի զոր Աստուած զուգեաց մարդ՝ մի՛ մեկնեսցէ (Մատթ. ԺԹ. 6), զի մի մարմին են. եւ եթէ ոք ամուսնասցի՝ շուն կոչեսցի:

ԲԳԿ ԽԴ. Թէ ոք ներքինի իցէ կամ մարմնազեղծ եւ կեղծաւորութեամբ կին առնէ եւ կնոջն հասեալ ի վերայ գործոյն՝ իշխան է կալ եւ քակել. եթէ քակի՝ ունի կամի առն լիցի, եւ զկէս ընչից նորա առցեն եւ վասն պսակին տուգան տացէ յեկեղեցին, Գ. ամ ապաշխարեսցէ:

ԲԳԿ ՄԸ. Իսկ եթէ մինն կոյս իցէ եւ մինն այրի, եւ մինն վախճանի, որ մնայն՝ ամուսնանալ անհնար է. եւ եթէ ոք յանդգնի՝ ապաշխարութիւն երեքկնոյն եղիցի եւ քահանայն լուծցի:

ԲԳԿ ՄԺԷ. Կանայք որ զիւրեանց արսն ատիցեն, այրիք կոչեսցին մինչեւ ի մահ.

SIO 10. Le prêtre ne doit pas retirer du rang des pénitents ceux qui se marient pour la seconde fois et lui-même doit boire avec modération lors des noces, mais s'il tombe dans l'ivresse, il sera déposé.

SIO 13. L'union en troisièmes noces est un dérèglement, un adultère impur, une faute inexpiable; si les coupables désirent effacer le péché par la pénitence, pour commencer, ils se sépareront complètement l'un de l'autre, alors ils seront dignes de la pénitence, et le prêtre qui a été la cause de leur union sera déposé et anathématisé.

PHI 1. La femme qui se marie en ignorant sa stérilité ne commet aucun péché et les époux ne doivent pas se séparer, mais celles qui ont déjà essayé de procréer et qui sont ensuite prises comme épouses par d'autres hommes, ceux-là sont identiques à des boucs ou des porcs et ils sont débiteurs envers Dieu; ils seront soumis au tribunal des sodomites et feront pénitence pendant sept ans à l'extérieur de l'église, puis pendant dix ans, ils entreront dans l'église et en sortiront avec les pénitents, puis ils communieront à l'eucharistie.

SCN 9. Ceux qui se sont mariés une deuxième fois seront jugés dignes du pardon après trois ans.

SCN 34. Celui qui s'est marié plusieurs fois sera digne du pardon (*i.e.* du viatique) à la fin de sa vie.

SCN 39. Les prêtres ne doivent pas se remarier.

ECB 3. Si un homme abandonne sa femme à cause de sa stérilité, elle devra subir un examen médical approfondi et lui supportera la pénitence des bigames.

ECB 29. Le mari - ou la femme - ne doit pas abandonner son conjoint qui contracte la gale ou devient possédé, mais il doit en prendre soin avec sainteté car cela est agréable à Dieu; mais s'il l'abandonne, il ne pourra pas se remarier tant que le conjoint malade est vivant et année après année, il doit assurer sa subsistance, car ce que Dieu a uni, l'homme ne peut le défaire (Mt 19, 6); et s'il se remarie, il sera appelé adultère.

ECB 44. Si un castré ou un infirme parvient à se marier par ruse, l'épouse mise devant le fait accompli pourra défaire cette union et ensuite aller avec qui elle souhaite, et il donnera la moitié de ses biens comme amende à l'Église pour avoir souillé le mariage, et il fera pénitence pendant trois ans.

ECB 208. Si l'un des époux était vierge et l'autre veuf, et que l'un d'eux meurt, le survivant ne pourra pas se marier à nouveau; sinon il subira la pénitence des trigames et le prêtre qui a célébré ce mariage sera déposé.

ECB 217. La femme qui prend en aversion son mari sera appelée veuve jusqu'à

ապա եթէ դարձցին առ արս իւրեանց՝ լուծեալ լիցի բանադրութիւնն: Ապա եթէ մինչ չեւ դարձեալ են առ արս իւրեանց ընդ այլում ամուսնասցին՝ շուն կոչեսցին եւ մինչեւ ցվախճան ընդ ունկնդիրս կացցեն եւ յետին թոշակէն զրկեալ եղիցին. եւ զինչս նոցա աղքատաց բաշխեսցեն, զի ոչ է արժան առնուլ յեկեղեցի:

ԲԳԿ ՄԺԸ. Այր եթէ թողցէ զկին իւր եւ արասցէ այլ՝ շուն կոչեսցի, հաղորդել ընդ քահանայի կամ ընդ ժողովրդականաց մի՛ իշխեսցէ, հալածեսցի յազգէ եւ ի տոհմէ իւրմէ, եւ ինչքն աղքատաց բաշխեսցի: Ապա եթէ դարձցի յառաջինն եւ ապաշխարեսցէ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ՝ տրաւք տնանկաց եւ ջերմեռանդն ապաշխարութեամբ արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԼԸ. Երկրորդացն աւրինեսցէ քահանայն պսակ առ դրանն եւ դիցէ ի գլուխ նոցա առ դրան եկեղեցւոյն՝ մինչեւ ապաշխարեսցեն եւ արժանի լիցին աւրինաց:

ԲԳԿ ՄԼԹ. Իսկ երրորդացն եւ չորրորդացն ոչ է ամուսնութիւն, այլ յարաժամ պոռնկութիւն, եւ ոչ զայնպիսիսն ընդունի եկեղեցի, բայց առաջնորդն իշխան է ժամանակին ուղղել:

ԴՍԺ Է. Այլ վասն մերոյ մեղաց յորժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց, բազում արք եւ կանայք ի գերութեան էին, նոցա ամուսինքն առանց վարդապետին հրամանի կանայս առին եւ արանց եղեն: Վասն այնպիսեացն սահմանեցաք այսպէս. թէ յառաջ քան զԷ. ամն մինչ զուգակիցն ի գերութեան էր եւ նոքա յանդգնութեամբ այլ ամուսին առին, այնպիսեացն ամուսնութիւնն ի պոռնկութիւն է. եւ զան եւ պատուհաս կրեսցեն, յընչից եւ ի ստացուածոց նոցա հրամայեցաք առնուլ վարդապետաց եւ յաղքատս բաշխել, եւ զնոսա զատուցանել ի միմեանց եւ ապաշխարել Է. ամ, իսկ յետ Է. ամին եթէ ամուսինքն դարձեալ լինին ի գերութենէն, անդրէն հրամայեցաք դառնալ յիւրաքանչիւր ամուսինս, ապա եթէ ոչ՝ կալցին զոր առինն. եւ նոքա որ դարձանն՝ աւրինութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լիցին եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի. իսկ որ համբերեացն զԷ. ամն, առցէ աւրինութեամբ, առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի:

ՍԿՆ Ե. Վասն որ մին կուսան է եւ մին երկեակ եւ զուգին՝ Գ. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ Զ. Վասն երրորդաց որք զուգին, եթէ թողցեն՝ ԺԵ. ամ արտաքոյ եւ Ե՝ ընդ աւրինաւք եկեղեցւոյ:

ՍԿՆ Է. Վասն այնոցիկ ոյք զպոռնիկ կանայս թողուն՝ Ա. ամ ապաշխարեսցեն եւ կին արասցեն, եւ կինն՛ առն չիշխէ լինել:

ՍԿՆ Ը. Վասն որ զիւր կինն թողու եւ զայլ առնէ եւ ապա դառնայ յառաջինն՝ Ե. ամ ապաշխարեսցէ:

sa mort; mais si elle retourne à son mari son excommunication sera levée. Mais si elle ne retourne pas avec son mari et épouse un autre homme, elle sera adultère et elle se tiendra avec les auditeurs jusqu'à sa mort et sera privée du viatique; et elle distribuera ses biens aux pauvres, car il ne convient pas que l'Église les reçoive.

ECB 218. L'homme qui abandonne sa femme et en prend une autre sera appelé chien, et il ne pourra communier ni avec le prêtre, ni avec les fidèles, il sera chassé par sa famille et de sa maison, et ses biens seront distribués aux pauvres. Mais s'il retourne à sa première femme et fait pénitence en se tenant pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance, grâce à des dons aux indigents et une pénitence fervente, il sera digne de la communion.

ECB 238. Le prêtre bénira et couronnera les secondes noces à la porte de l'église, jusqu'à ce que les époux fassent pénitence et se rendent dignes de la communion.

ECB 239. Les troisièmes et quatrièmes noces ne sont pas des mariages, mais une continuelle fornication et l'Église n'accepte pas de telles personnes, mais le prélat fixera comme bon lui semble le temps de leur pénitence.

DUN 7. Lorsque le pays est tombé en captivité aux mains d'ennemis, beaucoup d'hommes et de femmes ont été emmenés en captivité, et leurs conjoints se sont remariés sans l'autorisation de leur *vardapet*. Nous avons réglementé que si ces personnes se sont remariées moins de sept ans après le départ en captivité de leur conjoint, leur second mariage n'est que de la fornication; et elles recevront des coups et des châtiments, et leurs *vardapet*s confisqueront leurs biens et leurs possessions pour les distribuer aux pauvres, et elles devront se séparer l'une de l'autre pour faire pénitence pendant sept ans, et si leur conjoint revient de captivité avant sept ans, chacun retournera avec son conjoint légitime; s'ils reviennent après plus de sept ans de captivité, les personnes remariées resteront ensemble, mais supporteront à nouveau une pénitence et les anciens captifs auront la bénédiction pour se remarier; mais ceux qui ont patienté pendant sept ans sans se remarier pourront alors se remarier sans subir une amende et un châtiment, mais il supporteront une pénitence.

NPT 5. Les époux dont l'un vierge, l'autre remarié feront pénitence pendant trois ans.

NPT 6. Ceux qui se marient pour la troisième fois pourront, s'ils se séparent, faire pénitence pendant quinze ans à l'extérieur de l'église et pendant cinq ans avec les auditeurs dans l'église.

NPT 7. Ceux qui abandonnent leur femme pour cause de fornication feront pénitence pendant un an, puis ils pourront se remarier, mais l'épouse ne pourra pas se remarier.

NPT 8. Celui qui abandonne sa femme pour une autre, puis retourne avec la première fera pénitence pendant cinq ans.

ՍԿՆ ԼԸ. Վասն որ մին կուսան եւ միւսն երկեակ՝ մեկնեսցին, ապա եթէ ոչ՝ եւ մինն մեռանի, մնացեալն ԺԵ. ամ ապաշխարեսցէ:

5. Հաս-չհաս միութիւն. Ամուսնական անընդունելի կարգավիճակներ

Ա. Հարճութիւն

ԵԶԿ ԺԵ. Որ ընդ երկուս ամուսնութիւնս խառնակեցաւ յետ մկրտութեանն կամ հարճս ստացաւ՝ ոչ կարէ լինել եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ:

ՀԱՅ ԺԴ. Որ զհետ միմեանց մեռանին մինչեւ ցերրորդ, թէ վասն որդէծնութեան կամ վասն տնարարութեան իցէ՝ ընկալցի սուրբ եկեղեցի յապաշխարութիւն: Ապա թէ որդիք գուցեն եւ տնտես կայցէ՝ մերժեսցի, որպէս ամենաչար պոռնիկն:

ԼԱԻ Ա. Չի չէ մարթ ըստ եկեղեցւոյ կանոնաց ոյք ազատութեամբ եւ աւրինաւք բնակեցան ի միասին՝ եւ զերկրորդ հարսանիսն մի՛ գաղտ արասցեն, բայց իբրեւ փոքր ինչ ժամանակ անցեալ իցէ եւ պատրաստ իցեն աղաւթից եւ պահոց, ապա թողացուցանել նոցա եւ համարձակել սահմանեցաք:

ՍԻՈ ԺԱ. Քահանայք պատուէր արասցեն արանց եւ կանանց եւ դստերաց նոցա, զի ոչ արասցեն ընդ հեթանոսի զուգութիւն, զի չէ ամուսնութիւն, այլ անաւրէն եւ պիղծ խառնակութիւն, զի զինչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, զի չար է քան զշնութիւն, եւ որ գարշագոյն է քան զշնութիւն՝ բնական յանցանք:

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

Բ. Բազմամուսնութիւն

ՆԷԿ Գ. Որ ի պէսպէս ամուսնութիւն ինչ ըմբռնին՝ ժամանակն յայտնապէս է զոր սահմանեցաք, այլ դարձ նոցին եւ հաւատք թէ փութութեամբ ինչ իցեն՝ կարճեն զժամանակն:

6. Ծնողներ եւ ժառանգներ

Ա. Երեխայ եւ ծնողներ

ԳԱՆ ԺԵ. Ոյք հարկանեն, թողուն զորդիս իւրեանց եւ ոչ սնուցանեն եւ որչափ ձեռնհաս իցեն ոչ փոյթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին եւ սննդեանն մինչեւ ի

NPT 38. Si l'un des époux est vierge, tandis que l'autre avait déjà été marié, ils doivent se séparer, mais s'ils ne le font pas et que l'un d'eux meurt, le survivant fera pénitence pendant quinze ans.

5. Les unions licites-illicites. Les situations maritales prohibées

A. Le concubinage

CCL 15. Celui qui contracte un second mariage après son baptême ou prend une concubine ne pourra pas devenir évêque, prêtre ou diacre et il n'accédera jamais au rang sacerdotal.

CPC 14. Celui qui perd successivement trois épouses qui meurent en couche ou lors de travaux domestiques, l'Église l'accueille à la pénitence. Mais s'il conçoit des enfants avec sa domestique, il sera écarté comme le plus malfaisant des fornicateurs.

LAO 1. Il n'est pas permis selon les canons à ceux qui habitèrent ensemble librement de faire en cachette un second mariage, mais après qu'ils se seront préparés à la prière et au jeûne durant un peu de temps, on leur accordera le pardon et ils pourront communier.

SIO 11. Les prêtres ordonneront aux hommes, aux femmes et à leurs filles de ne pas contracter d'union avec les païens, car il ne s'agit pas là d'un mariage, mais d'un concubinage impie et sale, car il n'y a rien de commun entre le fidèle et l'infidèle et cette union est pire que l'adultère, et ce qui est plus abominable que l'adultère est une faute contre-nature.

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

B. La polygamie

NEO 3. Pour celui qui est dans les rets de différents mariages, le temps de la pénitence fixée est connu, mais si leur conversion et leur foi illustrent leur zèle, on raccourcira le temps.

6. Les parents et l'héritage

A. L'enfant et les parents

GNG 15. Ceux qui maltraitent, délaissent leurs enfants, qui ne se soucient pas de leur conduite et de leur éducation jusqu'à l'âge adulte, et qui n'en font aucun cas,

կատարմանն հասակին, այլ որպէս ի պատճառս պահոց եւ վանականութեան արհամարհիցէ եւ անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի:

ԳԱՆ ԺԶ. Եթէ ուրուք որդի, յորոյ ծնեալն է առաւել հաւատացեալ եւ առաքինի ի կարգս Աստուծոյ, հեռանայցէ որպէս ի պատճառս աստուածպաշտութեան եւ արհամարհիցէ եւ ոչ զարժանն եւ ոչ զիրաւ պատիւ ծնաւղացն հատուցանիցէ իբրեւ ծնաւղաց, քան զամենայն աստուածպաշտութիւն մեծ եւ ահաւոր թուեսցի եւ հատուցումն բարեաց, այնպիսին նզովեալ լիցի:

ԳՐԻ ԺԴ. Մանուկ, որ առանց կնքոյ մեռանի, եթէ ի ծնաւղացն ծուլութենէ լինի՝ Ե. ամ արտաքոյ, Ա. ընդ աւրինաւք: Նոյն եւ հոգաբարձուացն եւ քահանայիցն, որ ծուլացան:

ՍԱՊ ԻԶ. Ուսուցէք եւ զժողովրդականս յամենայն անառակութենէ ի բաց փախչել՝ յորկորստութենէ, յարբեցութենէ, ի հակառակութենէ, ի զրկելոյ զաղքատս եւ զընկերս իւրեանց. մի՛ կռուողս, մի՛ հանգանակողս, մի՛ չարասէրս. ատեսցեն զշնացողս, զգողս, զպոռնիկս, զաւազակս. ամենեւին մի՛ հաղորդեսցին եւ մի՛ ասպնջական լինիցին այնպիսեացն, զի մի՛ եղիցին եւ ինքեանք ընդ նոսին որդիք կորստեան: Զմանկունս իւրեանց սնուսցեն երկիւղիւ խրատու պատուիրանաց Աստուծոյ. զի այսպիսի զգուշութեամբ բարի յոյս ոգւոց իւրեանց եղիցի առ Աստուած եւ բարեխաւսութիւն, մարմնոյ ամենայն առողջութեամբ զարդարեսցի:

ԿԵՆ ԿԶ. Եթէ որդիք թողցեն զծնաւղս պատճառաւ աստուածպաշտութեան իբրեւ ոչ ինչ խափանեալ ի նոցանէ՝ նզովեալ լիցին:

ԿԵՆ ԿԷ. Եթէ ոք թողցէ զիւր որդիս յաղագս ճգնութեան՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ԻԷ. Որդիք որ ոչ հնազանդին ծնաւղաց իւրեանց՝ որ ինչ հասանէ յընչիցն տացեն սիրով եւ նստուսցեն ուրոյն, գուցէ չար հանդիպի. եւ որ կանայս առնեն՝ նոյնպէս արասցեն, զի այն է հաճոյ Աստուծոյ, զի եւ Պաւղոս զնոյն ասէ (յմմտ. Եփես. Ե. 31):

ԲԳԿ ԽԳ. Ծնաւղք եթէ զիւրեանց զաւակաց պղծութիւն տեսանեն եւ ծածկեն վասն ամաւթոյ եւ վասն աւգտի անձանց, չարիք նոցա ի գլուխ նոցա եղիցին եւ Է. ամ ապաշխարեսցեն, բայց վարդապետն իշխան լիցի կարճել զկարգն:

ԲԳԿ ճԲ. Որդիք որ ոչ պատուեն զծնաւղս իւրեանց՝ եղիցին նզովեալ:

ԲԳԿ ճԳ. Ծնաւղք որ զորդիս իւրեանց ակնառութեամբ սիրեն եւ ոչ խրատեն երկիւղիւն Աստուծոյ՝ նզովեալ եղիցին:

ԲԳԿ ճԼԱ. Եթէ ոք ի տղայութեան յանցեաւ մինչեւ ի ԺԵ. ամն՝ մի՛ յիշեսցի առաջի Տեառն, ըստ գրոյն որ ասէ. «Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան իմոյ մի՛ յի-

sous prétexte de jeûne et de vie monastique, seront anathématisés.

GNG 16. Le fils qui sous prétexte de piété s'éloigne de ses parents, surtout s'ils sont croyants et ne leur rend pas le juste honneur qu'ils méritent, alors que ceci est plus grand que toute forme de piété, sera anathématisé.

GLI 14. L'enfant qui meurt sans avoir été baptisé, si c'est du fait de la négligence des parents, ils feront pénitence pendant cinq ans à l'extérieur de l'église et pendant un an à l'intérieur avec les participants sans accès à la communion. La même peine sera infligée aux tuteurs ou aux prêtres qui ont été négligents.

SPT 26. Les prêtres doivent enseigner aux laïcs à fuir la débauche, la gloutonnerie, l'ivresse, la contestation, la nuisance aux pauvres et à leurs compagnons; à ne pas être querelleurs, bagarreurs, malfaisants, adultères, voleurs, fornicateurs, brigands. Ils doivent éviter de telles personnes et élever leurs enfants dans la crainte des commandements divins, afin que leurs âmes soient sauvées.

SCN 66. Les enfants qui abandonnent leurs parents sous prétexte de piété, alors qu'ils ne sont en rien gênés par eux seront anathématisés.

SCN 67. Celui qui abandonne ses parents sous prétexte d'ascèse sera anathématisé.

ECB 27. Les parents doivent subvenir aux besoins de leurs enfants, même si ceux-ci sont désobéissants et ils doivent leur donner une situation, de peur qu'il ne leur arrive un malheur; et ils doivent agir ainsi avec leur fils qui se marie pour être agréables à Dieu, comme le déclarait Paul (cf. Ép 5, 31).

ECB 43. Les parents qui constatent les souillures commises par leurs enfants et qui les dissimulent par honte ou par intérêt, ces crimes retomberont sur leurs têtes et ils devront faire pénitence pendant sept ans, mais le *vardapet* pourra raccourcir le temps de la peine.

ECB 102. Les enfants qui n'honorent pas leurs parents seront anathématisés.

ECB 103. Les parents qui aiment leurs enfants de façon immodérée et ne les élèvent pas dans la crainte de Dieu seront anathématisés.

ECB 131. On ne rappellera pas devant le Seigneur les fautes de celui qui a péché avant ses quinze ans (Ps 24, 7); mais les parents devront le surveiller pour ne pas

շեր» (Սաղ. ԻԴ. 7). բայց արժան է ծնաւղացն հսկել եւ զարդարն չտալ պղծել մինչեւ ի սուրբ ամուսնութիւնն. ապա եթէ ոչ՝ առանց պատժոց մի՛ արասցէ վարդապետն:

ԲԳԿ ճԿԳ. Ծնաւղք որ զինչս իւրեանց հոգեացն այլում տան եւ զիւրեանց զաւակսն ընդ վայր հարկանեն՝ նզովեալ լիցին եւ տուրք նոցա անընդունելի եղիցի:

ԲԳԿ ճԿԴ. Զինչս ծնաւղացն հաւասարեսցեն եւ ընդ Բ. բոյրն մի բաժին տացեն:

ԲԳԿ ճԿԵ. Որ զանդարձ ծնաւղաց կամ զայլ ննջեցելոց ոչ հատուցանէ՝ եղիցի նզովեալ եւ մեղք նորա ի գլուխ նորա:

ԲԳԿ ՄԼ. Երախայ եթէ յարգանդէ մաւր իւրոյ կենդանի գայ եւ հոգաբարձուքն անփոյթ առնեն եւ ոչ զգուշացուցանեն քահանային եւ երախայն մեռանի, արիւն նորա ի վերայ ամենեցուն որ ի տեղին հանդիպեցան, մանաւանդ ի վերայ մանկաբարձին եւ ծնաւղացն. Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ, ապա հաղորդեսցի աւրինաց. բայց վարդապետն հայելով ի վարսն՝ իշխան է կարճել զկարգն:

ԲԳԿ ՄԼԱ. Ապա եթէ ծնաւղն զգուշացուցանէ քահանային, եւ նա վասն իւր աշխատութեան եւ կամ վասն այլ զբաղման անփոյթ արար եւ մանուկն մեռաւ՝ քահանայանալ ոչ կարէ, զի ոչ զգուշացաւ հաւտին. Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Ա. ամ՝ ընդ ձեռամբ. բայց եպիսկոպոսն մարդասիրութիւն արասցէ շնորհելով զպատիւ քահանայութեան:

ԲԳԿ ՄԼԴ. Զերախայ մի՛ ոք իշխեսցէ պահել առանց կնքոյ քան զՋ. աւր կամ զԷ. ապա եթէ պահեսցէ ոք եւ վախճանի՝ քահանայն անպարտ է ի պատժոց:

ՍԿՆ ԺԹ. Վասն որ մանուկն մեռանի առանց կնքոյ ի ծուլութենէ՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

ԿՈՉ Զ. Վասն առն եւ կնոջ. Թէ անզգուշացաւ եւ այրեաց, թէ սիրովն Աստուծոյ ոչ են կացեալ, թէ ոխակալութեամբ են կացեալ, թէ խառն անկողնաւք, թէ յապարահիտ մերձեցաւ, թէ սրբութիւն առ ծննդականն ոչ գործեաց, թէ զկիւրակէն ոչ պատուեալ, թէ պղծութիւն համարեցաւ զամուսնութիւնն, թէ զայգի իւր այլ եւ այլ գործեաց, թէ զորդիս իւրեանց երկիւղիւ Աստուծոյ ոչ սնուցին, թէ վասն ամուսնութեան արհամարհեաց զկինն, թէ վատազգի համարեցաւ զկինն:

Բ. Որդեգրութիւն եւ ժառանգութիւն

ԿԻՐ Դ. Որք զժառանգս հեթանոսաց առնուն ի սնունդ, այնպէս է որպէս ոք զաւձ խնամարկեալ պաշտեսցէ ի ձեռն սովորութեան՝ ըստ ամուսնացելոցն ընդ

laisser l'innocent pécher avant son mariage, sinon le *vardapet* devra les châtier.

ECB 163. Les parents qui donnent leurs biens pour le repos de l'âme à d'autres personnes et abandonnent leurs enfants seront anathématisés, et leurs dons ne seront pas acceptables.

ECB 164. Les parents doivent répartir également leurs biens entre leurs deux filles et aucune d'elles ne doit recevoir une part en plus.

ECB 165. Celui qui ne remplit pas ses devoirs envers ses parents décédés ou d'autres personnes de son entourage sera anathématisé et les péchés des défunts retomberont sur sa tête.

ECB 230. Si un enfant sort vivant du sein de sa mère, mais que ses tuteurs s'avèrent négligents et n'alertent pas le prêtre, et que l'enfant meurt sans baptême, son sang retombera sur la tête de tous ceux qui étaient présents sur les lieux, et tout particulièrement de la sage-femme et des parents qui se tiendront pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance avant de pouvoir communier; mais le *vardapet* qui examinera leur comportement pourra écourter leur pénitence.

ECB 231. Si un enfant sort vivant du sein de sa mère et que les parents alertent le prêtre qui se montre négligent en raison de son travail ou d'autres occupations, et que l'enfant meurt, il ne pourra plus exercer le sacerdoce, car il n'a pas préservé son troupeau; il se tiendra pendant trois ans avec les auditeurs, puis pendant un an sous surveillance; mais l'évêque pourra faire preuve de philanthropie en le gratifiant à nouveau de sa dignité sacerdotale.

ECB 234. Personne ne doit laisser un nouveau-né plus de six ou sept jours sans le faire baptiser; et si l'enfant meurt dans cette situation, le prêtre ne sera pas tenu pour responsable.

NPT 19. Celui dont l'enfant meurt sans baptême du fait de sa paresse fera pénitence pendant trois ans.

APR 6. À propos des hommes et des femmes. Celui qui sans le savoir épouse une veuve, celle qui par amour de Dieu ne reste pas avec son époux, les époux qui se haïssent, ceux qui vivent dans un lit impur, celui qui couche avec sa femme pendant ses règles ou alors qu'elle n'est pas encore purifiée après un accouchement, ceux qui couchent le dimanche, qui considèrent le mariage comme une souillure, qui commettent diverses souillures avec leur parenté, qui n'élèvent pas leurs enfants dans la crainte de Dieu, celui qui du fait du mariage méprise sa femme, qui considère sa femme comme ignoble.

B. L'adoption et la succession

CYR 4. Ceux qui prennent des rejetons de païens pour les élever sont identiques aux adorateurs d'un serpent qu'ils choieraient, à l'image de ceux qui ont contracté

հեթանոսական ազգին ուսան զանաստուածպաշտութիւնս նոցա. նոքա զթովչացն ապաշխարութիւնս կրեսցեն, Գ. ամ արտաքոյ ապաշխարեսցեն եւ Գ. ամ ընդ ապաշխարողսն ելցեն, եւ ապա հաղորդեսցին աւրինաց:

ԴՍԺ Ը. Եթէ ոք՝ այր կամ կին ի սրբոյ եկեղեցւոյ ի ժառանգաւորաց անորդի իցէ, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայնն եւ անցեալ ըստ ինքն ի մերձաւորացն մի՛ իշխեսցէ հեռացուցանել զհող եւ զջուր եւ զշնորհս եկեղեցւոյն: Եւ մերձաւորքն եթէ բազումք են եւ նա կամիցի զմի ոք առնել իւր յորդեգիրս, իշխան է առնել, որ նմա ըստ կամս գնայցէ եւ դիւր լինիցի, բայց հեռաւորի եւ աւտարի չիշխէ տալ. բայց զշարժուն ոք եւ զիրիտակ ում կամի տալ՝ արժան է, եւ թէ վաճառել կամի կամ հոգեաց տալ՝ իշխան է. իսկ եթէ որդեգրեալն արժանասցի քահանայութեան՝ գեաւղջն վկայութեամբ, կամ որ որդեգրեացն զնա եւ չէր անկ նմա քահանայութիւն, սակայն զկէս շնորհին կալցի յաղագս ձեռնադրութեանն, ազատ ի հարկէ եւ ի բեկարէ. եւ զկէս շնորհին եւ զհող եւ զջուր բովանդակ սրբոյ եկեղեցւոյն թողցէ վախճանեալ քահանայն եւ կին նորա. ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղիցի, եթէ ոչ որդիս կամ թոռունս ունիցին, զի չվայելէ զսրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւն յարժանաւոր մերձաւորացն աւտարացուցանել եւ տալ հեռաւոր աւտարաց: Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ վաճառել իսկ թողացուսցէ վարդապետն, եւ զայն մի՛ շինականի ումեք, այլ յուխտէ եկեղեցւոյն, թէեւ հեռաւոր իցէ, իշխան է վարդապետն եւ մերձաւորին չմերձեցուցանել: Իսկ եթէ գեաւղջն երիցուն դիպի ժառանգութիւնն մնալ, եղիցի ժառանգութիւնն սրբոյ աթոռոյն, եւ ում կամեսցի շնորհեսցէ վարդապետն, միայն արժանաւորաց եւ գիտնոց:

Արդ՝ այս սահմանադրութիւն եկեղեցւոյ ի Հերակղէ Հռոմոց թագաւորէ եւ ի Խոսրովայ Պարսից արքայէ աւուրցն եւ այսր եղիցի. իսկ ինչ որ յառաջ քան զնոցա ժամանակն գործեցեալ է, մի՛ շարժեսցի, զի չգտեմք ինչ հաստատուն, թէ որպէս կալեալ, բայց յայսմ հետէ այսպէս կալցին, որպէս սահմանեցաք յանուն Տեառն, եւ մի՛ ոք իշխեսցէ փոփոխել զայս սահմանադրութիւն:

mariage avec la race des païens, ayant appris d'eux l'athéisme; ils subiront la pénitence des charmeurs de serpents en se tenant trois ans hors de l'église, puis en sortant de celle-ci en compagnie des pénitents durant trois ans, et enfin, ils communieront à l'eucharistie.

DUN 8. Celui faisant partie des héritiers de l'Église qui est sans enfant peut avec son épouse disposer intégralement durant sa vie de son lot et en faire bénéficier ses parents proches, mais aucun de ces derniers, en se mettant à sa place, ne peut détourner la terre, l'eau et les revenus de l'Église. Le prêtre peut aussi adopter un proche parent comme fils, pourvu que ce dernier lui soit obéissant, mais il ne peut pas donner son lot à des parents éloignés ou à des étrangers; toutefois il peut donner ou vendre à qui il le souhaite, un meuble ou un bien propre, le cas échéant pour le salut des âmes; si le fils adoptif est digne du sacerdoce selon le témoignage du village ou du prêtre, mais que le sacerdoce ne lui convient pas, en raison de son ordination, il gardera cependant la moitié des revenus libre d'impôt et de taxe; et le prêtre défunt et sa femme laisseront l'autre moitié des revenus à l'Église et la totalité du sol et de l'eau; mais si le prêtre n'a pas de fils ou de petits-fils, les revenus – quels qu'ils soient – seront donnés à des parents proches convenables mais non à des parents éloignés. Mais avec l'accord des ayants-droit, le *vardapet* pourra vendre le lot, mais uniquement à un membre de l'Église et non à un proche parent paysan du défunt, même si l'acheteur n'est lui-même qu'un parent éloigné. Mais si le lot reste entre les mains du prêtre principal du village, il reviendra à l'Église et le *vardapet* l'attribuera à qui il veut, pourvu que le bénéficiaire soit digne et instruit.

III. Յուղարկաւորութիւն եւ կարգ թաղման

1. Անընդունելի յուղարկաւորութիւն

ԳՐԻ ԺԷ. Որք կոծ դնեն եւ զհերս խզեն եւ կամ զճակատ հարկանեն՝ նզովեալ լիցին ի կեանս եւ ի մահ:

ԳՐԻ ԻԱ. Եթէ ոք ելոյծ զհրաման մեռելոյ եւ արհամարհեաց՝ նզովեալ լիցի:

ՀԱԹ ԼԶ. Հարցումն. Եթէ ոք անուանեալ քրիստոնեայ է եւ ի մահուան որդւոյ իւրոյ կամ դստեր կամ զինչ եւ է մերձաւորի կոծ դնէ հեթանոսաբար անյուսութեամբ եւ անառակութեամբ, փողովք եւ լկտութեամբ, պարուք զճակատ հարկանել արիւն հանել եւ ոչ լսել ձայնի խրատու քահանայիցն, այլ թշնամանել եւս եւ մերժել յինքեանց զքահանայսն անյուսութեան բանիւք, զինչ պարտ է առնել: Կամ վասն կենդանեացն, որ արարին այնպէս լկտութիւն կամ մեռելոյն յիշատակի կամ յետ միանգամ եւ երկիցս խրատուն եւ սոցա յանդգնութեանն, եւ մեզ յորու՞մ կարգի պարտ է հաստատուն կալ:

Պատասխանի. Ի բաց կալ ի նոցանէ եւ զնոսա արտաքոյ եկեղեցւոյ առնել, մինչեւ ի զղջումն եւ ապաշխարել բազում ժամանակս. իսկ զյիշատակ մեռելոյն քահանայքն արասցեն:

ՍԱՊ ԻԴ. Եւ որպէս եղեւ անառակ սովորութիւն քահանայից եւ նոցին կանանց՝ գերեզմանս առ եկեղեցիս առնել եւ ի տեղիսն սըրբութեան, յայսմհետէ յառաջ մի՛ իշխեսցեն առնել, այլ ի ժողովրդականացն հանգստարանս եղիցին եւ քահանայիցն հանգստարանք, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի:

ՍԱՊ ԼԳ. Գինի ըմպելիս ի լալիս մի՛ արասցեն, աշխար ի վերայ մեռելոյ մի՛ ոք առցէ, քանզի դիւական են ամենայն այսպիսի իրք. ապա եթէ իցէ ոք եւ անհնազանդեալ արասցեն՝ պարտական եղիցին ապաշխարութեան առ դուրս սուրբ եկեղեցւոյն:

ՇԱՒ ԺԱ. Որք կոծ դնեն մեռելոյ եւ անյուսութեամբ լան՝ թողեալ զյուսով եւ զաւրհնութեամբ զհրաժեշտն, զորմէ ասէ քարոզն, «Եթէ այսու կենաւք միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք» (Ա. Կոր. ԺԵ. 19). եւ եթէ «Մի՛ տգիտանայք վասն ննջեցելոցն» (Ա. Թես. Դ. 12), իբրեւ զանյոյս հեթանոսս: Արդ՝ եթէ յազատաց կամ ի շինականաց առաքելական կանոնին ընդդիմանան եւ կոծ դնեն՝ նզովեալ լիցին դնելիքն եւ կոծողքն, տարի մի յեկեղեցի մի՛ մտցեն եւ տուգան կալցին ազատին՝ Ճ. դրամ եւ շինականին՝ Ծ., եւ աղքատաց բաշխեսցեն. զի որով բարկացուցինն զԱստուած եւ զհոգի մեռելոյն խռովեցուցին. ի ձեռն տնանկաց տրոցն Աս-

III. – Les funérailles et les modalités d'inhumation

1. Les funérailles prohibées

GLI 17. Ceux qui poussent des cris de lamentation et s'arrachent les cheveux ou bien se frappent le front seront anathématisés, dans la vie et dans la mort.

GLI 21. Celui qui enfreint et méprise le commandement d'un défunt sera anathématisé.

QCA 36. Le chrétien qui, à l'occasion de la mort de son fils, de sa fille ou d'un de ses proches se lamente comme les païens, de façon obscène et débauchée avec des trompettes, des danses et en se frappant le front jusqu'aux sangs, et n'écoute pas les conseils des prêtres, mais les outrage et les repousse avec des paroles désespérées; et si, après avoir été réprimandé par les prêtres, il persiste dans son impudence, il faudra se séparer de telles personnes et les exclure de l'Église jusqu'à ce qu'elles se repentent et fassent pénitence durant un long moment, et les prêtres commémoreront le souvenir du défunt.

SPT 24. Les prêtres - et leurs épouses - ne devront pas, suivant une coutume débauchée, placer leurs tombes dans les églises et dans les lieux de sainteté, mais ils devront être enterrés dans le cimetière des laïcs, afin que les lieux de sainteté soient honorés avec décence.

SPT 33. Il ne faut pas boire du vin en pleurant ni se lamenter sur les morts, car de telles choses sont diaboliques; et celui qui désobéit et agit ainsi sera condamné à faire pénitence à la porte de l'église.

SHV 11. S'agissant de celles qui se frappent par deuil à côté des morts et qui pleurent avec désespoir, faisant fi des obsèques célébrées avec des bénédictions pleines d'espérance (1 Co 15, 19; 1 Th 4, 12), comme les païens qui n'ont pas d'espérance. À présent, si des nobles ou des vilains s'opposent au canon apostolique et se frappent par deuil, ils seront anathématisés, autant celles qui se frappent que ceux qui les commanditent, et ils n'entreront pas dans l'église pendant une année; et ils s'acquitteront d'une amende – de 100 *dram* pour les nobles et de 50 pour les vilains – qui seront distribués aux pauvres. Et notamment, si le défunt n'avait pas

տուած հաշտեսցի եւ վախճանելոյն հանգիստ լիցի: Եւ մանաւանդ թէ որ վախճանէրն՝ կոծ չհրամայեաց դնել եւ ընտանիքն եդին, որպէս ասացաքն, կոծադիրքն եւ կոծողքն յաւրինութենէ հեռի եղիցին եւ յեկեղեցւոյ: Եւ մեռելոյն ընտանիք պատարագ մի՛ արասցեն, զի ինքեանք ընդ բանիւ են, բայց երիցունքն եւ պաշտաւնեայքն յիւրեանց անձանց յանուն մեռելոյն պատարագ մատուսցեն, որպէս եւ արժանն խնդրէ, մինչեւ ընտանիքն ի կարգ եկեսցեն եւ զանունն յիշեսցեն ի սուրբ խորհուրդն. զի հոգիքն ի հանգստեան եղիցին: Ապա եթէ մեռեալն ի կենդանութեան իւրում պատուիրեաց թէ կոծ դիջիք, զտուգանն զոր հրամայեն կանոնք՝ երկպատիկ տացեն, եւ ընտանիքն եւ կոծողքն զպատուհասն զոր եդաք՝ կրեսցեն. բայց մեռելոյն պատարագ ոք մի՛ մատուսցէ եւ յիշատակ մի՛ արասցէ, եւ զանուն նորա մի՛ յիշեսցեն փոխանակ անյուսութեան նորա:

ՆԵՆ Ի. Գերեզմանս յեկեղեցիս մի՛ իշխեսցեն առնել, ապա եթէ գտցի ոք արարեալ՝ յեկեղեցւոջն պատարագ մի՛ ոք իշխեսցէ մատուցանել մինչեւ մաքրեսցեն զտեղիսն:

ԿՎՍ Ը. Հարցումն. Եթէ պա՛րտ է ի կենդանութեան զպատարագս ելից իւրոց կատարել ումեք զհոգւոց հանգիստ, զյիշատակ եւ զմասն, թէ՛ յետ վախճանին այսոքիկ կատարին:

Պատասխանի. Չէ պարտ նախ քան զվախճանն զկատարման պատարագս ի կենդանութեանն մատուցանել, վասն զի սուրբ առաքեալքն, եւ յետ նոցա սուրբ հարքն, յետ կատարածի կենացն ի հանգիստ հոգւոցն եւ ի թողութիւն մեղաց զայսոսիկ հրամայեցին կատարել:.

ՎԱՉ ԺԲ. Եւ այնք որ կոծ դնեն, զտանուտէրն եւ զգուսանն կապեսցեն եւ ի դուռն արքունի տարցեն եւ պատուհաս ի վերայ դիցեն. եւ ընտանիք զիետ արտասուել մի՛ իշխեսցեն:

ԲԳԿ ՂԲ. Թէ ոք ի վերայ մեռելոյ կոծ դնէ եւ արիւն հանէ, կոծադիրքն եւ կոծողքն նզովեալ լիցին ի Քրիստոսէ եւ Բ. ամ յեկեղեցի մի՛ մտցեն:

ԲԳԿ ՂԳ. Թէ մեռեալ պատուիրեաց՝ թէ զիս կոծով լացէք. պատարագ մի՛ իշխեսցեն առնել եւ կոծողքն Բ. ամ ապաշխարեսցեն:

ԲԳԿ ճԼԵ. Մի՛ ոք իշխեսցէ թաղել զդիս մերձ ի սուրբ եկեղեցիս, այլ արտաքս Խ. քայլ. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ճԿԵ. Որ զանդարձ ծնաւղաց կամ զայլ ննջեցելոց ոչ հատուցանէ՝ եղիցի նզովեալ եւ մեղք նորա ի գլուխ նորա:

ԲԳԿ ՄԽԲ. Ոչ է արժան զդիս պատել բազում կտաւովք, այլ միով, եւ զաւելորդն տալ աղքատաց:

commandé qu'on célèbre son deuil en se frappant et que sa famille a néanmoins préposé des pleureuses, comme nous l'avons dit, les organisateurs du deuil et celles qui l'accomplissent seront bannis des bénédictions de l'Église. Et la famille du mort ne fera pas dire une messe car elle est sous interdit, mais les prêtres et les ministres prendront l'initiative de célébrer la messe en l'honneur du mort, comme si cela avait été réclamé par une personne digne, jusqu'à ce que la famille retourne à l'ordre, alors elle aura le droit de demander à l'Église de commémorer le nom du défunt lors du saint mystère, afin que les âmes reposent en paix. Mais, si de son vivant, le mort avait ordonné qu'on célèbre son deuil en se frappant, alors sa famille versera le double de l'amende imposée par les canons et la famille, et celles qui se frappent supporteront le châtiment que nous avons fixé; mais personne n'offrira une messe à la mémoire du mort et ils n'auront pas le droit de rappeler son nom en raison de son manque d'espoir.

NEN 20. Les tombes ne doivent pas se trouver dans les églises et s'il y en a, on ne célébrera pas la messe aussi longtemps que le lieu ne sera pas nettoyé.

CDS 8. Il ne faut pas célébrer une messe de requiem du vivant de la personne, car les apôtres et les saints pères ont ordonné de l'accomplir après sa mort, pour le repos de l'âme et la rémission des péchés.

RVG 12. S'agissant de celles qui se frappent par deuil, le chef du clan et les musiciens seront chargés de chaînes et amenés à la cour pour être durement châtiés, et après cela, que leurs familiers n'osent pas commander de pleureuses.

ECB 92. Celui qui place un chœur de pleureuses en l'honneur du défunt et se fait saigner sera anathématisé – de même que les pleureuses – par le Christ, et ils n'entreront pas à l'église pendant deux ans.

ECB 93. Le défunt qui avait commandé un chœur de pleureuses ne pourra bénéficier de la célébration d'une messe et les pleureuses feront pénitence pendant deux ans.

ECB 135. Celui qui enterre un cadavre près de l'église à une distance inférieure à 40 pas sera anathématisé.

ECB 165. Celui qui ne remplit pas ses devoirs envers ses parents décédés ou d'autres personnes de son entourage sera anathématisé et les péchés des défunts retomberont sur sa tête.

ECB 242. Il ne faut pas envelopper un cadavre avec de nombreux tissus, car un seul suffira et on donnera le reste aux pauvres.

ԲԳԿ ՄԿԷ. Որք ի բազում ծովացեալ մեղացն խորս ընկղմեցան ոչ կարելով հասանել ի նաւահանգիստն խաղաղութեան ի ձեռն ազգի ազգի առաքինութեան եւ ապաշխարութեան, յետոյ երկիւղիւ մահու ըմբռնեալ եւ ի կենդանութեանն ի կենդանի պատարագն եւ ապաւինեցան հասանելով ճշմարիտ թողութեան՝ արժանի է, բայց կատարեսցէ զնա ճշմարիտ հաւատով եւ սիրով եւ ճշմարիտ յուսով, զի եւ պատարագ ոչ միայն վասն մեռելոց մատուցաւ առաջի Հաւր ի քաւութիւն, այլ եւ վասն կենդանեաց իսկ, եւ ոչ արդարոց միայն յատուկ, այլ եւ վասն մեղաւորաց. թուի թէ եւ սոցա իսկ յաղագս այժմ իսկ եւ վասն կենդանեաց եւ վասն մեռելոց հաւաստապէս բաշխի ի հաշտութիւն եւ ի թողութիւն մեղաց: Եւ յայտ յիշատակացն է եւ զի հաւաստապէս յիշատակին կենդանիք եւ մեռեալք, բայց մատուցողքն զգոյշ կացցեն յիշատակացն քառասնիցն՝ ի շաւթիցն եւ ի պատարագացն եւ յաւրինաց անտի չճաշակիցէ, նմանապէս եւ յայլ մեռելոց պատարագաց. իսկ ի տէրունական պատարագացն եւ ի Տեառն աւրն ի մատաղն հաղորդեսցի եւ զայլ միս ամենեւին մի՛ ճաշակեսցէ, ի տարւոջն միանգամ հաղորդեսցի ի հոգեւոր սեղանոյն եւ զԳ. Քառասնորդսն՝ զտէրունականն եւ զառաքելականն եւ զմարգարէականն սուրբ պահեսցէ եւ տուընջեան եւ գիշերոյն աղաւթից զԲ. բաժանեալ կանոնն անխափան կատարեսցէ եւ զնոյն մարդասիրութիւն Փրկչին մի՛ մոռասցին եւ զընդունելութիւն առ եկեղեցիս եւ առ քահանայս եւ առ կարաւտեալս մի՛ մոռասցի, զի յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ:

ԿԿՄ Ա. Քահանայ Կ. ամեայ ի պատարագէն լռեսցէ: Ապա եթէ առողջ իցէ՝ անյիշատակաց կատարեսցէ եւ մի՛ վարձեսցի:

2. Մահ եւ քրիստոնեայ

ՀԱԹ ՁԱ. Հարցումն. Թէ ի վարս գնացից իւրոց առաքինի է դիւահարն ի պահս եւ ամենայն պատուիրանաց Աստուծոյ հպատակ է եւ նովին ցաւով վախճանի, վասն յիշատակին զինչ պարտ է առնել: Պատասխանի. Առնել պարտ է:

ՍԱՊ ԾԲ. Իշխանք զգեաւղս եւ զդաստակերտս եւ զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պաճարաց եւ ի հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղագս սիրելեաց եւ ծնաւղաց եւ զվախճանելոց հատուցանել հատուցմունս, զարդ եւ պայծառութիւն կազմելով հոգւոց եւ մարմնոց, քանզի անսայթաք յորդորութեամբ տէրունական բանն զգուշացուցանէ ծառայից եւ պատուիրանապահաց իւրոց, թէ՝ «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան» (Մատթ. Զ. 20). եւ թէ «Դատարկաձեռն ամենեւին մի՛ երեւեսցիս առաջի իմ» (Ելք ԻԳ. 15). չեն, ասէ, այդրէն յերկրիս իւրական տուրքդ ձեր, այլ ի կատարս բարձրութեան երկնից յանսխալ եւ յանվրէպ գանձարանին:

ԱԲՄ Ա. Միտ դիր, ով սիրելութիւն, զի եթէ գիտութիւն եւ անգիտութիւն յաղագս հանգուցելոցն ասիցէ ոք ինչ առ բանս, ով ոք այնպէս ախմար, եթէ ոչ հան-

ECB 267. Ceux qui se sont noyés dans un océan de péchés sans se repentir et sans faire pénitence, puis ensuite par crainte de la mort se sont réfugiés dans l'offrande vivifiante pourront atteindre la véritable rémission, s'ils se conduisent avec sincérité. De fait, l'offrande est offerte aussi bien pour les morts que pour les vivants, mais que ceux qui commémorent les morts fassent attention, durant la quarantaine du souvenir, de ne rien manger d'autre que de la brioche avant la messe; quant à la messe pour le Seigneur, on ne communiera pas au *matał* et on ne goûtera pas à d'autres viandes, et une fois par an, on communiera à l'autel et par trois fois durant la quarantaine, en l'honneur du Seigneur, des apôtres et des prophètes, on jeûnera le jour et la nuit, et l'on priera deux fois en partageant le canon, et on n'oubliera pas le Rédempteur avec l'Église, les prêtres et les nécessiteux.

CYM 1. Le prêtre doit cesser de célébrer la messe à partir de 60 ans. Mais s'il est en bonne santé, il pourra continuer sans toutefois commémorer les défunts et il ne sera plus rémunéré.

2. Le chrétien face à la mort

QCA 81. Si un possédé qui a un comportement pieux, qui pratique le jeûne et obéit à tous les commandements de Dieu meurt de sa maladie, il faut commémorer son souvenir.

SPT 52. Les princes donnent des villages et des fermes, et des trésors d'or et d'argent, d'autres des offrandes tirées de leurs champs ou de leurs troupeaux et des vêtements précieux; certains pour le salut de leur personne, d'autres en mémoire de leurs parents et de leurs défunts et, en cela, ils suivent les commandements scripturaires (Mt 6, 20; Ex 23, 15).

AMK 1. Dieu reçoit les vœux et les exaucent, Il entend les prières des vivants et allège le fardeau des âmes des défunts qui se sont endormis dans l'espérance.

գուցեալքն. այլ Աստուած ընդունիչ է պատարագացն եւ կատարիչ ուխտից, լսէ աղաւթից կենդանեացն եւ թեթեւացուցանէ <զբեռինս> ոգւոցն մեռելոց յուսով ննջեցելոցն. ուսուցանեն մեզ եւ զայս Սուրբ գիրք, որպէս Եղիսէոս ոչ մանկանն մեռելոյ լսելով, այլ մաւրն աղաչանաց, կենդանացոյց զմանուկն եւ աւանդեաց մաւրն (յմմտ. Գ. Թագ. ԺԷ. 17-23): Եւ տէր Աստուած մեր գթալ, ասի, յայրի կինն եւ յարուցանել զմիամաւր որդին. այլ առաքելոցն զայրեացն արտասուս եւ կառաչս տեսանելով յարուցին զՏաբիթայն եւ աւանդեցին նոցա: Արդ՝ եթէ կենդանեացն աղաւթիւք ի մեռելութենէ ի կենդանութիւն գիտէ ածել աստուածային զաւրութիւնն՝ կարի յոյժ եւ մեղաց թողութիւն հաւատասցուք առնուլ յուսով ննջեցելոցն, որք ի կենդանեաց յաղագս նոցա խնդրեսցեն:

ԱԲՄ Գ. Իսկ յաղագս ծանաւթութեան առ միմեանս, վաղ իրք են ի միմեանց ի վախճանելոցս եւ յետոյ ժամանակ ի ծանաւթութեան՝ են երկու զանազանութիւնք. կամ ըստ սովորութեան մարմնոյ ի կարգաւորութենէ ծանուցեալ լինի, զի պահեսցէ զյիշատակ անմոռաց, զոր երբեմն տեսեալ ճանաչէր, իսկ ի ծերութիւն հասելոյն, զոր ի մանկութեանն ունէր, տեսակ ի մտի ունելով վրիպէ զծանաւթութիւնն եւ կամ մարգարէական ակամբ տեսեալ զոք ծանիցէ, որպէս Պետրոս զՄովսէս եւ զԵղիայն ի լերինն: Ապա ուրեմն հասարակական ասել զծանաւթութիւնն ի վերայ ամենայն ննջեցելոցն շամբուշ ինձ թուի, զի որպէս ննջեցին նոյնպէս եւ յարիցեն, զի ոմանք մանկունք, եւ ոմանք ծերք, արք եւ կանայք, իսկ տէր յաւետարանին հրեշտակակերպ ասաց զյարութեանն մանկունս: Այլ եւ ոչ մարգարէութիւն ամենեքեան տեսցեն, բայց միայն առաքինիքն ցնծալով ընդ առաջ յաջոյ կողմանէն ըստ Աւետարանին բանի հրաւիրեալք յարքայութիւնն:

ԿՎՍ ԺԵ. Հարցումն. Զքառասունս, զոր կատարէ աշխարի վասն մեռելոց, արժան է յիրաւի համարել եւ գովել, թէ ոչ, եւ կամ ուստի՞ իցէ հրամանդ այդորիկ: Պատասխանի. Կարի քաջ պարտ է յիրաւի համարել, գովել եւ յորդորել, վասն զի առաքելական է հրամանդ եւ աւանդութիւնդ: Այս ասպարէսք են նահատակաց սուրբ հարցն ի սուրբ Հոգւոյն, որ եւ մեզ ծարաւելոցս արբուցանէ առ ի բժշկել զմարմնական վէրս եւ թեթեւացուցանել զբեռն հոգւոց, զոր մեղաւորս միահամուռ ասացից, որ է ըստ ախտից մերոց:

ՍԻՈ ԺԸ. Ի յիաշատակ վախճանելոցն ի յընտանեաց նոցա որ ինչ ըստ կարգի աւրինաց քրիստոնէութեան, զոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխիթարութիւն հոգւոց նոցա կամ զքառասունս եւ զագապս ի հանգիստ նոցա կամ զայլ տուրս, զոր ինչ եւ հրամայեսցէ վախճանեալն հոգւոյն իւր, մի՛ իշխեսցեն յայլ եկեղեցիս կամ ի կրաւնաւորանոցս տալ այլ անդեն գեղջ եկեղեցւոյն երիցուն լիցին եւ վանացն՝ այնպիսեացն հասք, եւ իւրեանց տան երիցուն, ուր շնորհաւք սուրբ աւազանաւն վերստին եղեւ ծնեալ եւ պսակեալ եւ կենացն հացիւ կերակրեալ, ուստի եւ յուղարկեալ առ Աստուած երթայ: Իսկ յորժամ հարկաւորն յիւր եկեղեցին կատարեալ լինի, եւ կամեսցի աւելորդս ինչ առնել յայլ եկեղեցիս կամ ի կրաւնաւորս կամ յաղքատս, ապա լիցի համարձակ առնել ինչ:

Mais Élisée a ressuscité l'enfant mort non en l'entendant lui, mais à la suite des supplications de sa mère (cf. 3 R 17, 17-23). Et le Seigneur a eu pitié de la veuve et ressuscita son fils unique; et les apôtres firent de même avec Tabitha. Donc, si par les prières des vivants, Dieu peut ramener le défunt à la vie, combien plus encore pouvons-nous espérer obtenir la rémission des péchés des défunts en demandant aux vivants de prier pour eux.

AMK 3. À propos de la reconnaissance des uns des autres, ce sont des choses anciennes pour les défunts et par la suite, quand ils se retrouvent pour se reconnaître, il s'agit alors d'une chose bien différente; ou bien, selon l'habitude de la chair, il se reconnaît à sa complexion, car il aura gardé le souvenir inoubliable de celui qu'il avait vu autrefois et qu'il reconnaissait, mais arrivé à la vieillesse, ayant gardé en tête l'idée de la connaissance qu'il avait dans l'enfance, il se méprend sur la connaissance; ou bien il reconnaît quelqu'un pour l'avoir vu d'un œil prophétique, comme Pierre a vu Moïse et Élie sur la montagne. Donc dire que la connaissance est commune pour tous les défunts me semble fou car, comme ils se sont endormis, de même ils se lèveront certains enfants, certains vieux, hommes et femmes; or le Seigneur a dit dans l'Évangile que les enfants de la résurrection sont semblables aux anges. Mais aussi tous ne verront pas de prophétie, mais seulement les vertueux qui, invités au Royaume, se réjouiront à la droite, selon la parole de l'Évangile.

CDS 15. La quarantaine que les gens font pour les défunts doit être accomplie de plein droit, car il s'agit d'un ordre apostolique et d'une tradition, mais aussi du champ de bataille des saints pères athlètes fortifiés par le Saint-Esprit qui guérissent nos blessures corporelles et allègent le poids de nos âmes de pécheurs.

SIO 18. Les familles qui en vertu des commandements des saints pères et des lois religieuses accomplissent pour le repos de l'âme des défunts, les quarantaines, les agapes et les autres dons que le défunt avait ordonnés pour son âme n'auront pas le droit de les donner à d'autres églises ou institutions religieuses, mais ces revenus seront donnés sur place au prêtre du village ou du monastère du lieu où le défunt avait été baptisé, s'était marié et où il communiait. Mais si, après avoir donné le nécessaire à cette église, il reste du surplus, on pourra le donner à une autre église, à d'autres clercs ou à d'autres pauvres.

ՍԻՈ ԺԹ. Ժողովրդական ոք որ յաղագս պէսպէս ինչ սխալանաց բանադրեալ լինի յեպիսկոպոսէն, թէ մեռեալ՝ թող չթաղէ զնա քահանայ, եւ ոչ զերախայն մկրտել. ապա թէ դէպ լիցի երախայի հասանել այնպիսւոյն մեռանելոյ, քահանայն մկրտեսցէ զերախայն եւ թաղեսցէ զմեռեալն, եւ զայլ կապանս բանին պնդութեամբ անլոյծ պահեսցէ:

ԳՏԵ Դ. Որք ի ծովու կորեան կամ ի գետոյ կամ յամպարշտաց կամ ի շանդից եւ ի գազանաց եւ ի սրոյ եւ յամենայն չարամահութեանց՝ զյիշատակս ամենայն մեռելոց որ ի Քրիստոս հաւատացելոցն կատարեսցեն ի տնաւրէնութենէն մինչեւ ցհասարակաց յարութիւնն:

ՎԱՉ Գ. Ազատ մարդոյ եւ թագաւորազգի որ ինչ հոգւոյն մասն է տացէ իւրովք ձեռաւք ի կենդանութեանն՝ ձի թամբաւք եւ սանձիւք, եւ զոր ինչ կարողութիւնն իւր՝ տացէ. ապա եթէ ի կենդանութեանն չտայցէ, յետ մահուն ընտանիքն տացեն:

ՎԱՉ Դ. Պտուղ ի ժողովրդոց երիցուն՝ կարգ այս լիցի. թուանիկն Դ. գրիւ ցորեան եւ Զ. գրիւ գարի եւ ԺՉ. փաս քաղցու. եւ որ տառապեալն իցէ՝ հացիդ զկէսն տացէ եւ գինի որչափ եւ կարող իցէ. իսկ որոյ վար եւ այգի չէ՝ մի՛ առցեն: Եւ որ ոք աւելի քան զայս տացէ սակս ոգեաց՝ բարի առնէ, որպէս Պաւղոս ասէ. «Որ առատութեամբ սերմանէ, առատութեամբ հնձեսցէ» (Բ. Կոր. Թ. 6): Եւ ոյր ոչխար է՝ ի տանէ ոչխար մի եւ Գ. զգաթ բուրդ, մի պանիր. եւ ոյր ի տան ից<է>՝ մի յովանակ. եւ ոյր պախրէք իցեն՝ որթ մի:

ՎԱՉ Ե. Եթէ ազատ է, եւ եթէ շինական, եւ եթէ այլ ոք յաշխարհականաց՝ ի տարւոջն զպատարագն մի՛ խափանեսցէ, այսինքն զմեռելոց յիշատակ, որպէս կարող է, եւ անմասն մի՛ արասցեն զմեռեալսն ի վաստակոց իւրեանց: Եւ մեռեալ մարդոյն թէ ձի է՝ մի ձի յոր եւ կամի եկեղեցի տացէ. թէ արջառ է՝ նոյնպէս արասցէ:

ՎԱՉ ԺԹ. Կիւրակէին տէր եւ ծառայ ի վսամ եկեղեցին երթիցեն յաղաւթս եւ զյիշատակ յեկեղեցին տարցեն, այլ անաշխարհիկն զհոգեցատուրն յեկեղեցին տարցէ:

ԲԳԿ ԼԲ. Թէ երէց կամ սարկաւագ բորոտի կամ ուրկանայ՝ միայն առանձինն յաղաւթս կացցէ, առանց խորհրդոյ. եւ եթէ վախճանի՝ պատուով թաղեսցեն:

Եւ սիւնական թէ վախճանի՝ մատուսցէ քահանայն պատարագ, ելցէ ի վեր եւ տացէ հաղորդ եւ արասցէ զյիշատակ նորա ի նմին աւուր, զի այն է արժանն:

ԲԳԿ ՄԼԳ. Երախայ թէ եկեալ ի մկրտութիւն եւ քահանայն սկիզբն արարեալ հասանէ վախճան առ սուրբ աւազանին, տարցէ ի գլուխ զսուրբ խորհուրդն եւ տացէ կնիք, զի աւանդեցաւ ի ձեռն հրեշտակին եւ պատուով թաղեսցի:

SIO 19. Si un laïc excommunié pour différentes fautes par son évêque meurt, le prêtre ne devra pas l'enterrer ni le baptiser s'il était catéchumène; mais si étant catéchumène, il est mourant, le prêtre le baptisera et l'enterrera une fois mort, mais les autres effets de l'excommunication resteront fermes.

CSE 4. Ceux qui disparaissent en mer, dans un fleuve, chez les impies, en raison de la foudre, des fauves, de l'épée ou de toute autre mort violente, les autorités ecclésiastiques commémoreront le souvenir de ces défunts croyant dans le Christ et la résurrection.

RVG 3. Un noble ou un membre du clan royal doit durant sa vie donner la «part de son âme», à savoir un cheval sellé et harnaché et toute chose dans la mesure de ses moyens; mais s'il ne le fait pas de son vivant, les membre de sa famille pourront le faire après sa mort.

RVG 4. Le fidèle fortuné donnera comme fruit au prêtre quatre boisseaux de blé, six d'orge et seize cruches de vin doux; celui qui est démuni donnera la moitié du pain et autant de vin qu'il peut mais on ne prendra rien à celui qui n'a pas de champ ni de vigne. Et ceux qui, pour le salut de leur âme, donneront plus agiront bien (2 Co 9, 6). Et celui qui possède des moutons donnera un mouton, trois toisons de laine et un fromage; celui qui possède des chevaux donnera un poulain; et celui qui possède du bétail donnera un veau.

RVG 5. Un noble, un vilain ou tout laïc doit faire une offrande annuelle en commémoration des défunts dans la mesure de ses moyens pour ne pas priver les défunts d'une part de leurs gains. Et si le défunt possédait des chevaux ou des moutons, on donnera l'un d'eux à celui que l'Église choisira.

RVG 19. Le maître comme le serviteur iront le dimanche à l'église principale de la circonscription pour prier et offrir un service de commémoraison, mais l'étranger donnera à l'église pour le repos des âmes.

ECB 32. Le prêtre ou le diacre qui devient lépreux ou galeux se tiendra seul en prière sans communier; et s'il meurt on l'enterrera avec honneur.

S'agissant du stylite mourant, le prêtre célébrera une messe puis montera sur la colonne pour lui donner la communion et il commémorera son souvenir chaque année au jour anniversaire de sa mort.

ECB 233. Si un enfant meurt durant son baptême dans la sainte piscine, le prêtre appliquera sur sa tête la sainte communion et le sceau du baptême – car l'enfant a été confié à l'ange – et il l'enterrera avec honneur.

ԲԳԿ ՄԽԱ. Քահանայ որ քառասունս ունի մեռելոյ՝ մի՛ գիտասցէ զկին իւր՝ մինչեւ ցգլուխ. ապա եթէ յանցանէ՝ սրբեսցէ զինքն աւուրբք Բ. ապա մատիցէ ի պատարագն, զի սուրբ են անկողինքն:

ԲԳԿ ՄԽԳ. Արժան է զյիշատակ հանգուցելոցն կատարել ի նմին ամի եւ զբաժին նորա աղքատաց բաշխել. եւ զպատարագն արասցեն յաւղեաց եւ ի թռչնոց ըստ Ե. զգայութեան մարդոյն. ապա թէ ոչ՝ ըստ կարին:

3. Յուղարկաւորութեան արգելառիթ

ՀԱԹ ԺԱ. Հարցումն. Որ յիւր միտսն ոչ իցէ եւ երթիցէ զիւրովի, այսինքն է՝ կամ գահավէժ առնի, կամ այլ ինչ մահու մեռանի, պարտ է ի վերայ նորա պատարագ մատուցանել, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է վիճակելոյն քննել թէ ճշմարտութեամբ պակասամիտ էր եւ արար զայս. քանզի բազում անգամ մերձաւորին ախտացելոյն կամելով դիպել որ ի վերայ նորա պատարագ մատչի, ստեն եւ ասեն՝ ոչ էր յիւր միտս, զի մատուսցեն զպատարագն: Արդ՝ քննել պարտ է, մի՛ գուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար զայս, ապա ոչ է պարտ լինել պատարագ ի վերայ նորա, քանզի ինքնասպան եղեւ անձին իւրում. ապա պարտ է զամենայն քննել ճշմարտութեամբ, զի մի՛ ի դատաստան անկանիցի մատուցողն:

ՀԱԹ ԻԸ. Հարցումն. Եթէ ոք զդուստր իւր կամ զաղախին կամեսցի տալ առն եւ նոքա աղաղակիցեն. «Ոչ կամիմք լինել աշխարհականք, այլ սրբութեամբ եւ կուսութեամբ կամիմք կեալ յաշխարհի». եւ ի բռնադատելն զնոսա կամ խեղդին կամ ի քարէ անկանին, որպէս վասն մեռելոյն, պարտ է յիշատակ առնել, կամ որպիսի վնասակարութեան արժանի զնեղիչս նոցա համարել պարտ է. խնդրելի է բանս:

Պատասխանի. Ոչ է պարտ առնել զյիշատակն, զի անձնասպան եղեն. եւ որք նեղեցինն՝ ապաշխարեսցեն իբրեւ սպանողք:

ՀԱԹ ԻԹ. Հարցումն. Եթէ եղբայր ոք յեղբաւր վերայ յառնիցէ սպանանել զնա, եւ մինն փախիցէ միանգամ եւ երկիցս եւ երիցս, եւ իբրեւ կարի հետամուտ լինի եւ ի մտի դնէ սպանանել զնա եւ դէպ լինի փախուցելոյն դառնալ եւ սպանանել զհալածիչն իւր, իբրեւ վկայիցեն բազումք, որ ականատես լեալ են այնմ ամենայնի, որպէս տայցեմք ապաշխարութիւն սպանողին կամ որպէս խորհիմք վասն յիշատակի մեռելոյն, որ ինքն պատճառ եղեւ մահուան իւրոյ:

Պատասխանի. Չէ արժան առնել զյիշատակ նորա, եւ սպանողն ապաշխարեսցէ:

ՀԱԹ Ի. Հարցումն. Թէ ոք ի քահանայից կտրէ զինքն եւ դէպ լինի, զի մեռանի, վասն յիշատակին զինչ արասցուք, կամ թէ ապրի, արժանի՞ է գալ ի քահանայութիւն: Պատասխանի. Թէ մեռանի ոչ է պարտ առնել զյիշատակն, վասն զի անձնամահ եղեւ, իսկ եթէ ապրի, բազում արտասուաւք եւ խիստ ապաշխարութեամբ յետ Բժ. ամի հաղորդեսցի աւրինաց, բայց ի կարգ քահանայութեան մի՛ մատիցէ:

ECB 241. Le prêtre qui doit commémorer le souvenir (litt. la quarantaine) d'un défunt ne doit pas s'approcher de sa femme; sinon il devra se purifier pendant deux jours, puis il pourra s'approcher de la messe car le lit nuptial est saint.

ECB 243. Il faut commémorer le souvenir des défunts au jour anniversaire de leur mort et donner leur part aux pauvres; et on célébrera une messe suivie d'un repas avec un mouton et des volatiles selon les cinq sens de l'homme; et si cela est impossible, la famille offrira ce qu'elle peut.

3. Les privations de funérailles

QCA 11. Le prêtre fera une enquête sur celui qui s'est suicidé pour savoir s'il avait sa raison ou non, car il arrive que les parents du mort mentent et le présentent comme sans raison, afin qu'une messe soit célébrée en son nom. Le prêtre doit enquêter avec minutie, car si le suicidé avait sa raison, il était son propre meurtrier et le prêtre s'exposera à un jugement pour avoir célébré une messe en son nom.

QCA 28. La fille ou la servante qui souhaitait vivre dans la virginité, mais qui après avoir été mariée de force par ceux ayant autorité sur elle se suicide, ne sera pas commémorée car elle s'est suicidée; et les oppresseurs subiront la pénitence des homicides.

QCA 29. Si par deux ou trois fois, quelqu'un fuit son frère qui le persécute et qui veut le tuer, mais que le fugitif finalement revient sur ses pas et tue son persécuteur, et que de nombreuses personnes témoignent de tous ces faits, on ne commémorera pas le mort, et le meurtrier fera pénitence.

QCA 70. Le souvenir du prêtre qui meurt après s'être castré lui-même ne pourra pas être commémoré, car il s'est suicidé; et s'il survit, il ne pourra communier qu'après avoir fait strictement pénitence pendant douze ans avec beaucoup de larmes, mais il n'exercera plus la prêtrise.

ՇԱՀ ԺԱ. Որք կոծ դնեն մեռելոյ եւ անյուսութեամբ լան՝ թողեալ զյուսով եւ զաւրհնութեամբ զհրաժեշտն, զորմէ ասէ քարոզն, «Եթէ այսու կենաւք միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք» (Ա. Կոր. ԺԵ. 19). եւ եթէ «Մի՛ տգիտանայք վասն ննջեցելոցն» (Ա. Թես. Դ. 12), իբրեւ զանոյս հեթանոսս: Արդ՝ եթէ յազատաց կամ ի շինականաց առաքելական կանոնին ընդդիմանան եւ կոծ դնեն՝ նզովեալ լիցին դնելիքն եւ կոծողքն, տարի մի յեկեղեցի մի՛ մտցեն եւ տուգան կալցին ազատին՝ Ճ. դրամ եւ շինականին՝ Ծ., եւ աղքատաց բաշխեսցեն. զի որով բարկացուցինն զԱստուած եւ զհոգի մեռելոյն խռովեցուցին. ի ձեռն տնանկաց տրոցն Աստուած հաշտեսցի եւ վախճանելոյն հանգիստ լիցի: Եւ մանաւանդ թէ որ վախճանէրն՝ կոծ չհրամայեաց դնել եւ ընտանիքն եղին, որպէս ասացաքն, կոծադիրքն եւ կոծողքն յաւրհնութենէ հեռի եղիցին եւ յեկեղեցւոյ: Եւ մեռելոյն ընտանիք պատարագ մի՛ արասցեն, զի ինքեանք ընդ բանիւ են, բայց երիցունքն եւ պաշտաւնեայքն յիւրեանց անձանց յանուն մեռելոյն պատարագ մատուսցեն, որպէս եւ արժանն խնդրէ, մինչեւ ընտանիքն ի կարգ եկեսցեն եւ զանունն յիշեսցեն ի սուրբ խորհուրդն. զի հոգիքն ի հանգստեան եղիցին: Ապա եթէ մեռեալն ի կենդանութեան իւրում պատուիրեաց թէ կոծ դիջիք, զտուգանն զոր հրամայեն կանոնք՝ երկպատիկ տացեն, եւ ընտանիքն եւ կոծողքն զպատուհասն զոր եդաք՝ կրեսցեն. բայց մեռելոյն պատարագ ոք մի՛ մատուսցէ եւ յիշատակ մի՛ արասցէ, եւ զանուն նորա մի՛ յիշեսցեն փոխանակ անյուսութեան նորա:

ԲԳԿ ՃԾՁ. Թէ ոք պոռնկեցաւ եւ այլ ընտանիքն նորա կամ ծնաւղքն նորա նախատեցին զնա եւ նա առ նախատինսն իւր չոգաւ անկաւ ի ջուր կամ խեղդ արկ եւ մեռաւ, արիւն նորա եւ մեղքն ի գլուխ հոգաբարձուացն, զի ոչ զգուշացան մահուան աղջկանն եւ առանց առաջնորդին դատեցան: Ապա եթէ ինքն առանց առաջնորդին դատելոյ, վասն նախատանաց խեղդ արկ եւ մեռաւ կամ չար դեղաւք, ահա կուտեաց զմեղս ի վերայ մեղաց, եւ ի դպրութենէն կենաց ջնջեցաւ անուն նորա. մի՛ իշխեսցէ քահանայն երթալ ի դի նորա կամ թաղել զնա կամ պատարագ առնել, բայց վարդապետն իշխան է յիշատակին:

ԲԳԿ ՃԾԹ. Թէ ոք յիւր արդարութեան վաստակս ընթացաւ վասն իւր աւգտի եւ յորոգայթ անկաւ կամ ի ձեռս աւազակաց կամ ի ժանիս գազանաց՝ անպարտ է յիւր արենէն, արժան է թաղել զնա իւրովին հանդերձիւն:

ԲԳԿ ՃԿ. Ապա եթէ տեսանէ զսուր թշնամեաց կամ զայլ որոգայթս եւ այլք զգացուցին եւ նա անփոյթ արար, վասն իւր ճոխութեան չոգաւ ի գետ մոլեկան կամ ընդդէմ սրոյ կամ յայլ որոգայթս ըմբռնեցաւ, արիւն նորա ի գլուխ նորա, եւ չէ արժան թաղել զնա:

ԲԳԿ ՃՀԷ. Այր կամ կին եթէ հանդիպին այսահարութեան եւ զիւրեանց մեղսն խոստովանին, արժան է քահանային արգելուլ զնոսա յեկեղեցւոյ եւ յաւրինաց՝ մինչեւ զկարգն կատարեսցեն եւ ի դիւացն հեռասցին. ապա եթէ ննջեսցեն յաղաւթս եւ ի պահս պնդութեան՝ արժան է չզրկել յետին թոշակէն եւ զյիշատակն կատարել ընտանեացն եւ լնուլ զկարգն վարդապետին մարդասիրութեամբ:

SHV 11. S'agissant de celles qui se frappent par deuil à côté des morts et qui pleurent avec désespoir, faisant fi des obsèques célébrées avec des bénédictions pleines d'espérance (1 Co 15, 19; 1 Th 4, 12), comme les païens qui n'ont pas d'espérance. À présent, si des nobles ou des vilains s'opposent au canon apostolique et se frappent par deuil, ils seront anathématisés, autant celles qui se frappent que ceux qui les commanditent, et ils n'entreront pas dans l'église pendant une année; et ils s'acquitteront d'une amende – de 100 *dram* pour les nobles et de 50 pour les vilains – qui seront distribués aux pauvres. Et notamment, si le défunt n'avait pas commandé qu'on célèbre son deuil en se frappant et que sa famille a néanmoins préposé des pleureuses, comme nous l'avons dit, les organisateurs du deuil et celles qui l'accomplissent seront bannis des bénédictions de l'Église. Et la famille du mort ne fera pas dire une messe car elle est sous interdit, mais les prêtres et les ministres prendront l'initiative de célébrer la messe en l'honneur du mort, comme si cela avait été réclamé par une personne digne, jusqu'à ce que la famille retourne à l'ordre, alors elle aura le droit de demander à l'Église de commémorer le nom du défunt lors du saint mystère, afin que les âmes reposent en paix. Mais, si de son vivant, le mort avait ordonné qu'on célèbre son deuil en se frappant, alors sa famille versera le double de l'amende imposée par les canons et la famille, et celles qui se frappent supporteront le châtiment que nous avons fixé; mais personne n'offrira une messe à la mémoire du mort et ils n'auront pas le droit de rappeler son nom en raison de son manque d'espoir.

ECB 156. La fornicatrice qui après avoir été accablée d'injures par des membres de sa famille se jette dans l'eau ou se pend et meurt, son sang et ses péchés retomberont sur la tête de ceux qui avaient autorité sur elle, car ils ont été négligents envers elle et l'ont jugée sans attendre le jugement du prélat. Mais si la fille sans attendre le jugement du prélat, du fait des injures de sa famille s'est tuée par pendaison ou par le poison, elle a accumulé péchés sur péchés et, de ce fait, son nom sera retiré du livre de vie; et le prêtre n'enterrera pas son cadavre ni ne célébrera de messe en son nom, mais le *vardapet* pourra rappeler son souvenir.

ECB 159. Celui qui tombe dans un guet-apens ou sur des bandits, ou sous les crocs d'un fauve, alors qu'il s'affairait à son juste labeur ne sera pas responsable de son sang, et il pourra être enterré dignement avec son uniforme.

ECB 160. Mais celui qui aperçoit l'épée de l'ennemi ou d'autres dangers, ou qui est averti de cela par d'autres et qui, sûr de sa force, engage le combat tel un fleuve en furie et meurt, son sang retombera sur sa tête, et il ne faut pas l'enterrer.

ECB 177. Le prêtre doit interdire l'accès à l'église et à la communion à l'homme - ou à la femme - possédés qui confessent leurs péchés, tant qu'ils n'auront pas achevé la durée de leur pénitence et ne se seront pas libérés des démons: m[illegible] au moment de mourir, ils se tiennent fermes dans la prière et le jeûne, il ne faut pas

ԲԳԿ ճԶԷ. Արժան է քահանային իւր վիճակին զգոյշ կալ հաւտին եւ զչարագործսն յանդիմանել հրապարակաւ, մանաւանդ զձեռնածուսն եւ զթովիչսն եւ զդեղահատսն եւ զլերդահմայ<ս>ն եւ զթիկնագէտսն եւ զյուռթողսն եւ զհատընկէցսն եւ զայլ փաթեթս չարեաց սատանայի. զայնպիսիսն արգելուլ յեկեղեցւոյ եւ ի կնքոյ եւ ի տաւնից մինչեւ ի կարգ կալ եւ ապաշխարել՝ Բ. ամ ընդ ունկնդիրս եւ Ա. ամ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց. եւ եթէ ոչ դառնան ի չար գործոցն՝ քահանայն կնիք նոցա մի՛ տացէ եւ պսակ մի՛ դիցէ եւ զդիս նոցա մի՛ թաղեսցէ. եւ եթէ ոք լուծցէ զկանոնս՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ճԶԸ. Իսկ որ չար դեղովք սպանանեն զմանկունս յորովայնին եւ զարգանդն կապեն դեղովք վասն յաճախ պոռնկութեան, եւ զայր եւ զկին խողխողեն եւ ատելիս առնեն միմեանց ի պսակին՝ արժան է քահանային զայնպիսին ի կարգ եւ յապաշխարութիւն ածել. Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ՝ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցի աւրինաց: Եւ եթէ ի նոյն աղանդին մեռանին՝ ահա չար է մահ մեղաւորին, զրկեսցին ի սուրբ աւրինացն եւ ի դիրս քրիստոնէից մի՛ թաղեսցին:

ԲԳԿ ճՁԹ. Այր կամ կին որ ի հիւանդութիւն անկանին՝ արժան է սուրբ դեղովք բժշկել եւ ի պիղծ դեղոց հրաժարել՝ ի թիւրակէէ եւ ի թռչնաց կամ ի գազանաց եւ ի կայտառաց. զի եթէ մահ հասանէ նոցա, զրկեալ են ի սուրբ աւրինացն, քահանայն մի՛ իշխեսցէ թաղել. եւ եթէ ողջանան եւ յապաշխարութիւն գան՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ եւ Ա. ամ՝ ընդ ձեռամբ, արժանի լիցի աւրինաց:

les priver du viatique et on commémorera leur souvenir en présence de la famille, et le *vardapet* accomplira la célébration avec compassion.

ECB 187. Le prêtre doit être attentif à son lot et réprimander publiquement les malfaiteurs, notamment les prestidigitateurs, les enchanteurs, les guérisseurs, les haruspices, les liseurs d'omoplates, les incantateurs, les jeteurs de grains et autres amulettes qui sont les amorces de Satan; ces personnes seront écartées de l'Église, du baptême et des fêtes jusqu'à ce qu'elles cessent et fassent pénitence pendant deux ans avec les auditeurs, puis un an sous surveillance et avec des larmes, et des dons aux pauvres, elles se rendront dignes de la communion; mais si elles ne cessent pas leurs méfaits, le prêtre ne pourra ni les baptiser, ni les marier, ni enterrer leur cadavre; et celui qui viole ce canon sera anathématisé.

ECB 188. S'agissant de ceux qui détruisent les fœtus dans leur sein avec des drogues nuisibles et appliquent des remèdes sur l'utérus en raison de fréquentes fornications, de même que les époux qui s'entredéchirent et ne se supportent plus; le prêtre les mettra dans le rang des pénitents et ils se tiendront pendant sept ans avec les auditeurs, puis pendant trois ans sous surveillance, et grâce à des larmes et des dons aux indigents, ils se rendront dignes de la communion. Mais s'ils meurent endurcis dans leur péché (litt. secte), ils seront privés de la sainte communion et leur cadavre ne sera pas enterré avec les chrétiens.

ECB 189. L'homme ou la femme qui tombe malade doit se soigner avec les saints remèdes et refuser les remèdes thériaques impurs fabriqués à partir d'oiseaux, de fauves et de reptiles; car si la mort les atteint, ils seront privés de la sainte communion et le prêtre n'aura pas le droit de les enterrer; et s'ils se rétablissent, ils viendront à la pénitence en se tenant pendant trois ans avec les auditeurs, et pendant un an sous surveillance, et ainsi ils seront dignes de la communion.

IV. «Չարի տիրապետութիւն» եւ քրիստոնեայ

1. Կախարդութիւն, դիւթութիւն եւն

ԿԱՌ ԺԵ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ որ սուտ երդնու կամ սուտ վկայէ եւ կամ որ երթայ առ կախարդս եւ հարցուկս, եւ քաւդեայս, եւ վհուկս, եւ հաւատայ ծննդոց եւ աստեղագիտութեանց, իբրեւ զայնոսիկ որ անաստուածքն են՝ խափանեսցինա իբրեւ զանաստուած ի քահանայութենէ, եւ մի՛ խառնեսցի ի պաշտաւն եկեղեցւոյ, եւ եթէ ժողովրդական ոք իցէ՝ մերժեսցի ի բաց:

ՀԱՅ Ե. Չկին որոշել յանձնէ անձնասպանութեան վրէժ է, ոչ մի ինչ պատճառք համարձակեն զնա հանել՝ ոչ ամլութիւն, ոչ ծախողութիւն, ոչ վատութիւն, բայց բորոտութիւն եւ պիսակութիւն եւ դիւահարութիւն եւ գոնջութիւն եւ կախարդութիւն կամ հանապազ պոռնկութիւն՝ ըստ տէրունեան աւրինին:

ԿԵՍ Է. Վասն դիւթաց որք խոտորին եւ ըստ սովորութեան հեթանոսաց զհետ երթան, որպէս թէ ի տունս հեթանոսաց մտանել իբրեւ գիտակ լինել եւ ուսանել զիրս կախարդութեան եւ ապա ի զղջումն եկեսցեն եւ ի խոստովանութիւն՝ փորձեսջիր եւ քննեսջիր զդարձն, Ե. ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ Բ. ամ ընդ ձեռամբ հաւասարեսցէ աղաւթիցն, ողորմութեամբ եւ գթով տնանկաց սրբեալ զինքն հաղորդեսցի աւրինաց ըստ սուրբ ժողովոյն:

ԿԵՍ Ը. Վասն չար դիւթակախարդաց ջատկաց, որք մեծամեծ աւճիրս գործեն եւ դառնացուցանեն զԱստուած ի խորհուրդս իւրեանց, նոքա եւ յՈրդւոյն ուրանան, նոքա եւ զՅոգին սուրբ հայհոյեն, նոքա եւ զարդար զարիւն հեղուն ի զոհել չարեացն. զայնպիսիսն առաջին կանոնն եւ գիրն չապրեցուցանէ եւ արժանի են մահու թէ ի զղջումն ոչ եկեսցեն. բայց շնորհաց հոգիս կեցուցանէ թէ ի զղջումն եկեսցեն յապաշաւանս եւ ի խոստովանութիւն ըստ աստուածեղէն գրոց, թէ «Ոչ կամիմ զմահ մեղաւորին» (Եզեկ. ԺԸ. 32), այլ զդառնալ նորա եւ զկեալ: Կամ եղեւ մեծ ժողովոյն վասն մարդասիրութեանն Աստուծոյ, այնպիսիքն մինչեւ ի վախճան ընդ ունկնդիրսն կացցեն եւ քննեսցին եւ փորձեսցին հետք նոցա, բայց վարդապետն զմարդասիրութիւն եւ զյորդորումն եւ զյոյս ողորմութեան եւ զխոնարհել առ այնպիսիսն մի՛ արգելցէ, զի մի ի հին սովորութիւննն միտեսցեն միտքն, ողորմութեամբ, գթով եւ տրաւք տնանկաց քաւեսցեն եւ յետին թոշակին արժանի լիցին:

ԼԱՒ ԼԶ. Չէ մարթ քահանայից եւ ուխտաւորաց մոգս եւ թովիչս եւ դիւթս եւ վհուկս լինել կամ առնել հմայեակս եւ պահպանս, որ ճշմարտութեամբ չեն պահապանք, այլ կապանք հոգւոցն նոցին. եւ որ այսպիսի ինչ գտցին յանձին ունել՝ արտաքս քան զեկեղեցի ընկեսցին:

IV. Le chrétien face à «l'emprise du Malin»

1. La sorcellerie, la divination, etc.

CAP 15. Les prêtres qui prêtent un serment mensonger, qui font un faux témoignage ou qui vont chez les sorciers, les devins, les Chaldéens, les enchanteurs, qui croient dans les horoscopes et à l'astrologie à la manière des athées seront exclus du sacerdoce et s'il s'agit d'un laïc, on le retranchera de la communion.

CPC 5. Se séparer de sa femme constitue un suicide, cela est interdit, même si elle est stérile, cédée comme gage ou méchante; excepté – selon la Loi – si elle est lépreuse, maculée de madrures, possédée, atteinte de teigne ou si elle pratique la sorcellerie, ou fornique constamment.

CES 7. Les devins qui suivent la coutume des païens et entrent dans leurs maisons pour apprendre la sorcellerie, si ensuite ils se repentent, on les examinera et ils feront pénitence en se tenant pendant cinq ans avec les auditeurs, et pendant deux ans ils participeront aux prières sous surveillance, et grâce aux dons aux pauvres, ils communieront.

CES 8. Les mauvais sorciers ou sorcières qui commettent de très grands méfaits, outragent et blasphèment la Trinité, et versent le sang juste en sacrifice au Malin; le premier canon et l'Écriture les condamnaient à mort s'ils ne venaient pas au repentir; à présent, s'ils viennent au repentir et à la confession, ils vivront (Éz 18, 32). Et en raison de l'amour de Dieu pour les hommes, le concile a décidé qu'ils se tiendront avec les auditeurs jusqu'à leur mort, et leur conduite sera examinée et éprouvée, mais le *vardapet* les exhortera et les consolera afin qu'ils ne rechutent point, et par des dons aux pauvres, ils seront dignes du viatique.

LAO 36. Les prêtres et les clercs ne peuvent pas se faire mages, devins, sorciers, enchanteurs ou faire des amulettes et des talismans protecteurs qui ne sont que des liens pour les âmes; sinon ils seront rejetés hors de l'Église.

ԳՐԻ ԺԲ. Թովչացն՝ Ե. ամ արտաքոյ եւ Ա. ի ներքս, մեծ ողորմութեամբ:

ԳՐԻ ԻԷ. Ձեռնածուացն՝ Ա. ամ արտաքոյ եւ Ա. ի ներքս, հանդերձ արտասուաւք եւ ողորմութեամբ քաւեսցէ:

ՀԱՒԹ ԾԳ. Հարցումն. Թէ ոք ի կանանց քահանայից առ դիւթս երթայ եւ քահանայքն ի վերայ հասանեն եւ խոստովան լինի առ հարկի եւ ապաշաւէ, պարտ է քահանային զնա ի կնութեան ունել, թէ ոչ:
Պատասխանի. Չէ արժան ունել:

ՀԱՒԹ ՀՁ. Հարցումն. Վասն պահպանաց. երդմունս իմն եւ պահպանութիւնս գրեն եւ անուանս ազգի ազգիս, զոր մեք ոչ գիտեմք պարտ է համարձակ թողուլ զնոսա՝ առնել զայն, թէ նզովել եւ կարճել: Պատասխանի. Նզովել պարտ է եւ յեկեղեցւոյ եւս հանել:

ՀԱՒԹ ՀԷ. Հարցումն. Թէ որ ուլն ինչ արկանէ ոք այնոցիկ որոց արիւն հատանի եւ ասեն, թէ դադարեցուցանէ զարիւն, արդար բժշկութիւն պարտ է համարել, թէ նենգութեամբ. համարձակել՝ եթէ լինի գործն, եթէ կարճել:
Պատասխանի. Կարճել պարտ է վասն զի չէ յԱստուծոյ:

ՀԱՒԹ ՀԸ. Հարցումն. Թէ ոք թովիչ է կամ ձեռն ինչ ոք ածէ յաչաղոյ կամ այլ ցաւոյ եւ դեղ հատանէ ջերման եւ ասէ, թէ բժշկութիւն լինի. ի կարգ եկեղեցւոյ ոչպէս պարտ է համարել զնոսա կամ որպիսի պատուհասի արժանի առնել եւ կամ թէ համարձակութիւն տալ թովչացն, զի բժշկեսցեն զաւձահարսն, թէ ոչ: Պատասխանի. Ոչ է արժան համարձակութիւն տալ, զի թովչութիւնք եւ այլ ամենայն բաջաղմունք ի կախարդութենէ են, զոր չարին ուսուցեալ է մարդկան:

ՀԱՒԹ ՁԴ. Հարցումն. Թէ ուրուք կարասի կորիցէ եւ խնդիր առնիցէ պանիր իմն երդմնեցուցանեն եւ տան ծամել եւ ասեն, թէ որոյ գողացեալ է չկարէ կլանել, այլ ի բերանն աճէ եւ կռուի եւ այնու յայտնի լինի գողութիւնն, պարտ է քրիստոնէից զայն առնել, թէ ոչ:
Պատասխանի. Որպէս վերագոյնն ասացաք, թէ ոչ է պարտ առնել, զի ամենայն ի կախարդութենէ է:

ԲՁԿ ԼԱ. Եթէ ոք ի կախարդաց կամ ի դեղատուաց, որ տան անասնոց եւ ի ջուրս ձկան եւ մարդոյ եւ եկեալ խոստովանեսցին, այնպիսի իրքն ընդ պատժովք համարեսցին ի վերայ նոցա, զի անձամբք իւրեանց խոստովանեցան:

ԲՁԿ ԼԹ. Իսկ որ հմայից եւ հարցկաց միտ դնեն եւ զհեթանոսական սովորութեան զհետ երթիցեն եւ դարձցին եւ խոստովան եղիցին՝ զտարի մի լալով կացցեն հեռացեալք յեկեղեցւոյ եւ զտարի մի արժանաւորք եղիցին լսել զձայն պաշտամանն եւ զերեամ մի առաջի անկանելով ժողովրդեանն եւ զտարի մի ընդ հաւատացեալսըն կացցեն եւ այսպէս եղիցին ընկալեալք:

GLI 12. Les magiciens se tiendront pendant cinq ans à l'extérieur de l'église et pendant un an à l'intérieur avec les participants, en offrant d'importantes aumônes.

GLI 27. Le prestidigitateur se tiendra pendant un an à l'extérieur de l'église et pendant un an à l'intérieur avec les participants, et il expiera avec des larmes et des aumônes.

QCA 53. Si la femme d'un prêtre consulte des devins et que son mari le découvre, et qu'elle confesse son péché sous la contrainte, puis se repent, le prêtre ne doit pas rester avec elle.

QCA 76. Ceux qui rédigent des phylactères et prêtent des serments, et conservent des notes comprenant des noms que nous ne connaissons pas seront maudits et retranchés de l'Église.

QCA 77. Il faut empêcher d'agir celui qui met des colliers sur ceux qui saignent en disant que cela cautérisera la plaie, car cela est étranger à Dieu.

QCA 78. Le magicien qui accomplit des tours pour guérir du mauvais-œil ou d'autres maux, ou pour faire tomber la fièvre et qui prétend ainsi pratiquer la médecine ne pourra avoir aucun rapport avec l'ordre ecclésiastique; et il ne faut pas recourir à de telles personnes pour soigner les piqûres de serpent, car toute forme de magie et autre charlatanerie procède de la sorcellerie qui est enseignée aux gens par le Malin.

QCA 84. Si quelqu'un qui a égaré des biens diligente une enquête et que certains jurent sur un morceau de fromage, et le donnent à mâcher à la personne qu'ils suspectent en disant que le fromage grossira et s'accrochera dans la bouche du voleur qui sera ainsi clairement démasqué, tout ceci, comme nous l'avons déjà dit, n'est que de la sorcellerie et aucun chrétien ne doit faire cela.

BAC 31. Celui qui pratique la sorcellerie ou l'empoisonnement en donnant des drogues aux animaux ou aux poissons dans l'eau, ou aux hommes et vient à se confesser devra être puni pour de tels actes, car il a lui-même confessé son péché.

BAC 39. Ceux qui prêtent attention aux augures et aux devins en suivant la coutume des païens, puis se convertissent et se confessent devront pleurer pendant un an en se tenant à l'écart de l'église et pendant un an, ils seront dignes d'entendre le son de la liturgie, puis ils se prosterneront face à l'assemblée pendant trois ans, et ils se tiendront avec les *credentes* pendant un an, et alors ils seront admis.

ՇԱՀ Ը. Եթէ ոք ի կախարդութեան գտցի այր կամ կին, եւ յուրացութեան կամ յայլ չարագործութեան, եւ ի զղջումն եւ յապաշխարութիւն ոչ եկեսցեն՝ ըստ գրոց հրամանի քարկոծ լիցին (Ղեւտ. Ի. 27): Ապա եթէ ի խոստովանութիւն եկեսցեն՝ ցելս անձանց իւրեանց յապաշխարութեան կացցեն ԺԲ. ամ առ դրանն ընդ ունկնդիրսն եւ Գ. ամ ընդ ապաշխարողս ելցէ, եւ յամենայն ժամ քննեալ հետքն ի ձեռն ողորմութեան եւ գթոյ տնանկաց, բազում ինչս ծախեալ ի կարաւտեալս վասն փրկութեան անձանց, ջերմեռանդն արտասուաւք զյետին թոշակն ընկալցին:

ՇԱՀ Թ. Որք ի հարցուկս երթան կամ ի դիւթել՝ տուգան կալցին. եթէ ազատ է՝ Մ դրամ, եթէ շինական է՝ գան արբցէ ԺԵ. կրկին, Ճ. դրամ տուգան կալցին եւ կարաւտելոց տացեն, Գ. ամս ապաշխարեալ՝ հաղորդեսցին:

Ապա եթէ եպիսկոպոս կամ երէց երթեալ իցեն ի հարցուկսն եւ ստուգեսցին իրքն երկու<ք> կամ երիւք վկայիւք, զի գրեալ է. «Զքահանայէ չարախաւսութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ երիւք վկայիւք» (Ա. Տիմ. Ե. 19), եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն անկցի եւ երէցն յերիցութենէն լուծցի, Ռ դրամ եպիսկոպոսն տուգանեսցի, Շ՝ երէցն, եւ բաշխեսցեն կարաւտելոց յեկեղեցի, եւ անձանց իւրեանց լիցին մեղադիր, վասն զի «Առ ի չգոյէ Աստուծոյ ի մէջ Իսրաէլի՝ երթան առ Ճանճիկն աստուածն Ակկարոնի» (Դ. Թագ. Ա. 3): Ապա թէ ի կարգէ պաշտաւնէիցն եւ յուխտէ աբեղայից երթեալ իցեն ի հարցուկս կամ որդի երիցուն՝ զպատուհաս, զտուգանս, զապաշխարութիւն զաշխարհականացն կրեսցեն եւ ի կարգէ պաշտաւնէիցն ի բաց կացցեն: Եթէ այր եւ եթէ կին երթեալ իցեն ի հարցուկս, կանոն այդ լիցի:

ՇԱՀ Ժ. Որք լոկ դիւթեն եւ ոչ կախարդեն եթէ այր եւ եթէ կին՝ որ ի դիւթութեան գտցին՝ ԺԵ. կրկին գան արբցեն, խանձեսցին, մրեսցին, ոսկր արկցեն եւ յաւրկանոց տացեն՝ Բ. ամս աղասցեն գողեացն եւ զինչ եւ հրամայեսցեն գործել: Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ Շ դրամ տացէ գողեացն եւ Բ. ամ յիւրում եկեղեցւոջն յապաշխարութեան կացցէ եւ հաղորդեսցի եւ այլ մի՛ եւս մեղանչիցէ:

ԹԱՏ ԻԲ. Հարցումն. Կախարդի՝ զինչ արասցուք:
Պատասխանի. Կախարդի՝ ուրացողի կանոնք եղիցին ի վերայ:

ԳՏԵ Բ. Որք ուլունս արկանեն վասն կրից կամ վասն այլ ինչ հմայութեանց բարբանջանաց կամ գրարարութեամբ որ վարին՝ որոշեսցին յեկեղեցւոյ, զի թողին զԱստուած եւ գնացին առ Ճանճիկ աստուածն Ակկարոնի:

ԿԵՆ ԿԲ. Եթէ ոք թով իցէ կամ կախարդ իցէ՝ նզովեալ եղիցի:

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

ԲԳԿ Ը. Եթէ ոք ի կախարդաց կամ ի դեղատուաց յապաշխարութիւն գան,

SHV 8. L'homme - ou la femme - qui est trouvé en train de pratiquer la sorcellerie ou d'apostasier ou de commettre tout autre méfait et qui n'incline pas vers le repentir et la pénitence, sera lapidé selon le commandement de l'Écriture (Lv 20, 27). Mais s'il se confesse, il se tiendra dans la pénitence jusqu'à sa mort, pendant douze ans à la porte de l'église avec les auditeurs et pendant trois ans, il sortira de l'église en même temps que les pénitents, et à toute heure, il fera l'aumône aux indigents, en vendant de nombreux biens en faveur des nécessiteux en vue du salut de son âme et grâce à des larmes ferventes, il recevra le viatique.

SHV 9. L'homme - ou la femme - qui se rend chez les oracles pour pratiquer la divination paiera une amende de 200 *dram*, s'il s'agit d'un noble, mais si c'est un vilain, il sera roué de deux séries de quinze coups et paiera une amende de 100 *dram* qui seront donnés aux nécessiteux, et après trois ans de pénitence, il communiera.

Mais si un évêque ou un prêtre se rend chez les oracles et que les faits sont vérifiés par deux ou trois témoins (1 Tm 5, 19), ils seront déchus de leur rang respectif et l'évêque paiera une amende de 1000 *dram*, et le prêtre de 500 *dram* qui seront distribués aux nécessiteux à l'église, et qu'ils s'accusent eux-mêmes de péchés (4 R 1, 3). Mais si des clercs ou des membres du pacte des moines pénitents ou le fils d'un prêtre se rendent chez les oracles, ils subiront le châtiment, l'amende et la pénitence des laïcs et ils seront exclus du rang des ministres.

SHV 10. L'homme - ou la femme - qui pratique uniquement la divination et non la sorcellerie sera roué de deux séries de quinze coups, brûlé, enduit de suie et ses os seront brisés, et il sera livré à un lazaret où pendant deux ans, il servira les lépreux et accomplira ce qu'on lui commandera de faire. Mais s'il s'agit d'un noble et qu'il n'aille pas dans une léproserie, il versera 500 *dram* aux lépreux, et pendant deux ans, il se tiendra en pénitence dans son église, puis il communiera, et qu'il ne pèche plus à nouveau.

THD 22. On appliquera aux sorciers les canons portant sur les apostats.

CSE 2. Ceux qui jettent des osselets pour connaître le sort amoureux ou pour pratiquer toute autre forme de divination charlatanesque, ou qui usent de grimoires seront exclus de l'Église, car ils ont délaissé Dieu pour se donner à Baal Zebub, dieu d'Akron.

SCN 62. Celui qui pratique la magie ou la sorcellerie sera anathématisé.

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

ECB 8. Le sorcier ou le rebouteux qui vient à la pénitence doit être encouragé

արժան է յորդորել ի հաւատս, զի մի՛ խստութենէ կանոնաց զարհուրեալ անդրէն դառնայցեն ի նոյն չարիս, բայց դրոշմ դիցեն ի ճակատն եւ յուսն եւ ի ձեռսն եւ ի ծունգսն խաչանիշ:

ԲԳԿ Ղ. Վասն այնոցիկ որ լոկ դիւթեն եւ ոչ կախարդեն, իշխանութիւն լիցի քահանային՝ խանձել եւ մրել, եւ Ա. ամ ընդ ունկնդիրս ապաշխարեսցէ եւ Ա. ամ ընդ ձեռամբ, հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ՃՁԷ. Արժան է քահանային իւր վիճակին զգոյշ կալ հաւտին եւ զչարագործսն յանդիմանել հրապարակաւ, մանաւանդ զձեռնածուսն եւ զթովիչսն եւ զդեղահատսն եւ զլերդահմայ<ս>ն եւ զթիկնագէտսն եւ զյուռթողսն եւ զհատընկէցսն եւ զայլ փաթեթս չարեաց սատանայի. զայնպիսիսն արգելուլ յեկեղեցւոյ եւ ի կնքոյ եւ ի տաւնից մինչեւ ի կարգ կալ եւ ապաշխարել՝ Բ. ամ ընդ ունկնդիրս եւ Ա. ամ ընդ ձեռամբ, արտասուաւք եւ տրաւք տնանկաց արժանի լիցին աւրինաց. եւ եթէ ոչ դառնան ի չար գործոցն՝ քահանայն կնիք նոցա մի՛ տացէ եւ պսակ մի՛ դիցէ եւ զդիս նոցա մի՛ թաղեսցէ. եւ եթէ ոք լուծցէ զկանոնս՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ՃՁԹ. Այր կամ կին որ ի հիւանդութիւն անկանին՝ արժան է սուրբ դեղովք բժշկել եւ ի պիղծ դեղոց հրաժարել՝ ի թիւրակէէ եւ ի թռչնաց կամ ի գազանաց եւ ի կայտառաց. զի եթէ մահ հասանէ նոցա, զրկեալ են ի սուրբ աւրինացն, քահանայն մի՛ իշխեսցէ թաղել. եւ եթէ ողջանան եւ յապաշխարութիւն գան՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ եւ Ա. ամ՝ ընդ ձեռամբ, արժանի լիցի աւրինաց:

ԲԳԿ ՄԳ. Այր կամ կին անիծանող կամ բամբասող՝ նզովեալ եղիցին եւ անէծք նոցա ի նոսին դարձցին. եւ եթէ ապաշխարեն՝ Գ. ամ առ դրանն կացցեն հառաչելով, արժանի լիցին աւրինաց:

ԲԳԿ ՄԾԳ. Իսկ եթէ մերձեսցի ոք յայլ եւ այլ զբաղմունս կամ ի գիրս դիւաց կամ ի ցոյցս լուսնի եւ աստեղաց՝ եղիցի նզովեալ եւ անլոյծ կապանաւք անկցի յանշէջ հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

ԲԳԿ ՄԾԴ. Որք ընթանան առ նոսա եւ որք զաղանդսն առնեն եւ մոլորեցուցանեն զմարդիկ ի բանէն Քրիստոսի՝ որպէս զաւձն հողակեր նզովեալ լիցին:

ԲԳԿ ՄԿ. Իսկ ոմանք ընթանան յափափայս եւ ընդ հուր եւ ընդ ջուր եւ քարամբք դատեն զամենեսեան վասն դիւին լրբութեան, եւ վասն անփութութեան իւրեանց պահոց եւ աղաւթից ի տանջանս վախճանին:

ԲԳԿ ՄԿԲ. Իսկ ոմանք յարակայ մոլին, զոր լուսնահարն կոչեն, եւ զաստուածային մարտն վասն մեղաց եւ վասն առաքինութեան՝ լուսնին տան, թէ ի ծնունդս թէ ի հինն գայ դեւն եւ ընթանայ ի պէսպէս իրս, եւ ոչ ընթանայ յեկեղեցին Աստուծոյ աղաւթիւք եւ պահաւք խնդրել իւրեանց բժշկութիւն, այլ ընչիւք եւ պատա-

dans la foi, de crainte qu'effrayé par la dureté des canons, il ne retombe dans les mêmes maux, mais on lui scellera le signe de croix sur le front, l'épaule, les mains et les genoux.

ECB 90. Le prêtre pourra faire enduire de suie et marquer par le fer ceux qui pratiquent la magie sans s'adonner à la sorcellerie, et ils feront pénitence pendant un an avec les auditeurs, puis un an sous surveillance, puis ils communieront à la communion.

ECB 187. Le prêtre doit être attentif à son lot et réprimander publiquement les malfaiteurs, notamment les prestidigitateurs, les enchanteurs, les guérisseurs, les haruspices, les liseurs d'omoplates, les incantateurs, les jeteurs de grains et autres amulettes qui sont les amorces de Satan; ces personnes seront écartées de l'Église, du baptême et des fêtes jusqu'à ce qu'elles cessent et fassent pénitence pendant deux ans avec les auditeurs, puis un an sous surveillance et avec des larmes, et des dons aux pauvres, elles se rendront dignes de la communion; mais si elles ne cessent pas leurs méfaits, le prêtre ne pourra ni les baptiser, ni les marier, ni enterrer leur cadavre; et celui qui viole ce canon sera anathématisé.

ECB 189. L'homme ou la femme qui tombe malade doit se soigner avec les saints remèdes et refuser les remèdes thériaques impurs fabriqués à partir d'oiseaux, de fauves et de reptiles; car si la mort les atteint, ils seront privés de la sainte communion et le prêtre n'aura pas le droit de les enterrer; et s'ils se rétablissent, ils viendront à la pénitence en se tenant pendant trois ans avec les auditeurs, et pendant un an sous surveillance, et ainsi ils seront dignes de la communion.

ECB 203. L'homme - ou la femme - qui profère des malédictions ou des calomnies sera anathématisé et ses malédictions retomberont sur lui; mais s'il fait pénitence pendant trois ans à la porte de l'église avec des soupirs, il sera digne de la communion.

ECB 253. Celui qui s'adonne à la pratique des écritures démoniaques ou qui scrute la lune, ou les étoiles sera anathématisé et lié par des chaînes indissolubles, et chutera pour l'éternité dans la géhenne inextinguible qui est préparée pour Satan et ses anges.

ECB 254. Ceux qui s'allient à ceux qui s'adonnent à la pratique des écritures démoniaques (litt. sectaires) ou qui scrutent la lune, ou les étoiles et adhèrent à leurs sectes, et éloignent les hommes de la parole du Christ seront anathématisés à l'instar du serpent.

ECB 260. Ceux qui parcourent des lieux escarpés et attaquent tous les passants avec du feu, de l'eau et des pierres du fait des démons qui les habitent, et de leur négligence des jeûnes, et des prières mourront dans les souffrances.

ECB 262. Ceux qui sont constamment en furie et qu'on appelle lunatiques, et qui attribuent à la lune le combat divin en raison des péchés et de la vertu, s'ils sont possédés par le démon – depuis leur naissance ou depuis très longtemps – qui se manifeste de diverses manières, et qu'ils n'accourent pas à l'Église de Dieu avec

րագաւք ընթանան առ այսահարսն եւ լուսնովն բժշկութիւն խնդրեն ի նորոգսն ի նոր եւ ի հին լուսնին եւ զարդար եւ զսուրբ լոյս լուսնին խառնեն ընդ իւրեանս որ անլոյծ կապանաւք կան առաջի Քրիստոսի:

ՄԲԿ Ա. Արդ՝ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ, թէ որ զմանուկ տգէտ եւ զտխմար որ ոչ կարէ կարդալ զԱւետարանն ի բեմի ի լուր ժողովրդոց եւ զբոլոր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա, զի զհասնոցն եւ զուսելոցն զմեղացն համարս անձինք իւրեանց տան: Այլ աւրէն է առաւել զգիտունն եւ զհասակաւ կատարեալն արժանացուցանել այսմ շնորհի որ կարող են ապրեցուցանել զանձինս եւ առաջնորդել ժողովրդեան. վասն որոյ մեծին իսկ Պաւղոսի ձայնարձակ բարբառովն զբողոք բարձեալ ասէր Տիմոթէի թէ՝ «Ձեռն յուրուք վերայ վաղվաղակի մի դնիցես եւ մի՛ լինիցիս կցորդ մեղաց աւտարաց» (Ա. Տիմ. Ե. 22). եւ դարձեալ թէ՝ «Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ՝ ի դատաստան սատանայի անկանիցի» (Ա. Տիմ. Գ. 6). այլ զի պարտ է, ասէ, քահանային անարատ լինել, որպէս Աստուծոյ տնտեսի, վերակացու լինել բանին վարդապետութեան հաւատարիմ (յմմտ. Տիտ. Ա, 9): Արդ՝ զոր աւրինակ Պաւղոս զՔրիստոս դնէ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ երաշխաւոր եւ փրկանս ամենայն աշխարհի, արդ ոչ ապաքէն նոյնաւրինակ եւ քահանային աւրինակ է ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ եւ փրկանք քաւութեան մեղաց ժողովրդեանն Աստուծոյ: Արդ՝ եթէ վասն մեծին Մովսէսի ասէ գիր թէ՝ «Հեզ եւ խոնարհ եւ հանդարտ էր մարգարէն քան զամենայն մարդիկ եւ ուսեալ զամենայն իմաստութիւն Եգիպտացւոց» (յմմտ. Թիւք, ԺԲ. 3). զի թէ հեզն եւ հանդարտն եւ իմաստունն եւ անարատն ի բծոյ, հաւատարիմ պատգամաւորն Աստուծոյ եւ մտերիմ տեսուչ ժողովրդեանն ոչ կարաց ի մեղաց ողջ պահել զժողովուրդն եւ ապրեցուցանել զնոսա ի հարուածոցն Աստուծոյ եւ ժառանգեցուցանել նոցա զպարգեւական երկիրն, իսկ արդ այլ քահանայք տգէտք եւ արատաւորք զիմդ կարեն ապրեցուցանել զժողովուրդսն ի մեղաց, որք եւ զանձինս անգամ ոչ կարեն պահել ի մեղաց, թող թէ ժողովրդեանն Աստուծոյ-լինել միջնորդ եւ երաշխաւոր, տանել յարքայութիւնն Աստուծոյ. քանզի գրեալ է եւ պատուիրեալ եթէ՝ «Մի՝ յաջ խոտորիցիս եւ մի՝ յահեակ» (Առ. Դ. 27): Վասն որոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ զգուշանալ ի ձեռնադրութենէ տգիտաց, եւ մի՛ կաշառաւք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն կամ յերիցութիւն կամ ի սարկաւագութիւն կամ յայլ աշտիճան, այլ որպէս ի սուրբ Աւետարանին Փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն թէ՝ «Զրի առէք եւ ձրի տուք» (Մատթ. Ժ. 8):

Նորին. Իսկ որ զուրբաթ որպէս կիւրակէ պահեն եւ ի գործոյ դատարկացուցանեն՝ մեղք են, եւ կոչեն զնա ծեր. ոյր է տեսեալ զնորա ծերութիւնն, զի Ե. աւրն աւագ է քան զնա, իսկ որք չորեքտասան չորեքշաբաթ տաւնս կատարեն տգիտաբար՝ մեղք են, զի հեթանոսական է եւ անհրաման:

Իսկ վասն նապաստակի եւ ցռոյ մսոյ, զոր ուտեն ոմանք, ոչ եթէ աւրենք ինչ հրամայեցին ուտել կամ վարդապետք, այլ ի գարշանէ եւ ի սովորութենէ՝ ըստ սովորութեան նախնեացն հեթանոսաց, այլ ըստ աւրինացն հրամանի ոչ է պատուեալ: Նոյնպէս եւ վասն ամճոց է իմանալ, յորոց սովորութիւն է եւ ի գարշանէ զմեռելոտիսն

des prières et des jeûnes en demandant leur guérison, mais apportent plutôt des donations et des offrandes à des sorciers (litt. des démoniaques) en leur demandant la guérison par la lune – avec la nouvelle et l'ancienne lune – et qui mélangent la juste et sainte lumière de la lune à ceux (*i.e.* les sorciers) qui sont condamnés avec des liens indissolubles devant le Christ.

PYM 1. L'ordinand qui a ordonné un enfant ignorant et crétin – qui ne peut pas lire l'Évangile sur le *bêma* à l'attention des membres de l'assemblée et qui n'a pas étudié l'ensemble des enseignements de l'ordre sacerdotal – supportera la punition pour cette ordination, car il lui revient de rendre compte des péchés des personnes mûres et instruites. Mais il convient de légitimer davantage le savant et celui qui est parfait en âge de cette grâce, eux qui peuvent se sauver eux-mêmes et guider l'assemblée; c'est pourquoi le grand Paul lui-même se plaignit à haute voix auprès de Timothée: «N'impose les mains à personne avec précipitation, et ne participe point aux péchés d'autrui» (1 Tim. 5, 22); et de nouveau: «Qu'il ne soit point néophyte, de peur que, étant enflé d'orgueil, il ne tombe dans le jugement de Satan» (1 Tim. 3, 6); mais, en effet, il faut que le prêtre, dit-il, soit sans tache comme économe de Dieu, qu'il soit un fidèle surveillant de la parole de la doctrine» (cf. Tite 1, 9). Donc, à l'exemple de Paul qui pose le Christ comme intermédiaire entre Dieu et les hommes, garant et rachat du monde entier, le prêtre doit à partir de cet exemple être un guide totalement exempt de taches et permettre le rachat expiatoire des péchés du peuple de Dieu. À présent, l'Écriture dit à propos du grand Moïse que le prophète est le plus doux, le plus humble et le plus paisible de tous les hommes (cf. Nb 12, 3), et instruit de toute la sagesse des Égyptiens; car si le doux, le paisible, le sage et l'immaculé de tache, le fidèle messager de Dieu et intime surveillant du peuple ne peut pas garder préservé des péchés le peuple et le sauver des coups de Dieu, et le faire hériter de la Terre promise, comment les autres prêtres ignorants et maculés pourraient-ils sauver les assemblées des péchés, eux qui ne peuvent pas même se garder des péchés, sans parler d'être un intermédiaire et un garant du peuple de Dieu et de le conduire au royaume de Dieu. En effet, il est écrit et ordonné: «N'incline ni à droite ni à gauche» (Prov. 4, 27). C'est pourquoi je commande (*i.e.* Yovhannēs Mandakuni) aux prélats de l'Église de prendre garde à ne pas ordonner des ignorants à faire présenter par quelqu'un des pots-de-vin d'argent pour l'épiscopat, la prêtrise, le diaconat ou tout autre degré, mais comme le dit le Rédempteur dans le saint Évangile à ses saints disciples: «Vous avez reçu gratuitement, donnez gratuitement» (Mt 10, 8).

Du même. Mais ceux qui jeûnent le vendredi comme le dimanche et s'arrêtent de travailler, c'est péché, et on l'appelle vieux; où ont-ils vu sa vieillesse ? Car le dimanche est plus vieux de cinq jours que le vendredi; mais ceux qui de façon ignorante célèbrent le 14 février la venue du Seigneur au Temple le 40e jour comme des mercredis, c'est péché, car c'est une attitude païenne et non autorisée.

Mais concernant la viande de lapin (litt. lièvre) et d'onagre, que certains mangent, ce n'est pas la Loi qui ordonne d'en manger ou les *vardapet*s, mais c'est par goût pour l'abomination et par habitude, selon l'habitude des ancêtres païens, mais selon l'ordre de la Loi ce n'est pas acceptable (litt. honoré). De même aussi, concernant

ուտեն անխտիր, որպէս հեթանոսս, այլ ոչ հրամանաւ: Իսկ որք ուտեն, պարտին սուրբ հաղորդութեանն զգուշանալ՝ մինչեւ սրբեսցին ի ձեռն պահոց եւ աղաւթից: Իսկ որք զթիւրակէսն առնուն վասն կարեաց մարմնոյն՝ ի սուրբ մարմնոյն զգուշասցին մինչեւ սրբեսցին ի ձեռն պահոց եւ աղաւթից: Այս ամենայն եւ այլ բազում կայ որ եւ ոչ բաւեմ զգրով արկանել, կամ գուսանացն արուեստ որ զպոռնկութիւնս յորդորէ, զի քրիստոնէից, վասն յուսոյն որ կայ պահի յերկինս, հարկ է պարկեշտանալ յամենայնէ, զի անուն Տեառն յոյս է նորա:

ՍԿՆ ԻԶ. Վասն որ չարապաշտ էր եւ հմայից հաւատայ բժժանաց՝ Ե. ամ ապաշխարեսցէ:

2. Դիւահարութիւն

ԵԶԿ ՀԳ. Եթէ զոք դեւ ունիցի, ժառանգաւոր մի՛ եղիցի, իսկ մաքրեալն ընդունելի եղիցի, եւ եթէ իցէ արժանի՝ եղիցի:

ՀԶՅ Ե. Չկին որոշել յանձնէ անձնասպանութեան վրէժ է, ոչ մի ինչ պատճառք համարձակեն զնա հանել՝ ոչ ամլութիւն, ոչ ծախողութիւն, ոչ վատութիւն, բայց բորոտութիւն եւ պիսակութիւն եւ դիւահարութիւն եւ գոնջութիւն եւ կախարդութիւն կամ հանապազ պոռնկութիւն՝ ըստ տէրունեան աւրինին:

ԱՆԿ ԺԸ. Ոյք բծաւոր էին եւ բիծ ինչ ունէին, այսինքն պիսակութիւն կամ այլ ինչ ախտ որ փոփոխելով իցէ, իբրեւ նենգութեամբ մերձեցան յայլս, զի վնասեցեն ումեք, այսպիսիքն ընդ դիւահարս կացցեն:

ՀԱԹ Բ. Հարցումն. Թէ դիւահար ոք երախայ իցէ եւ կամիցի, նաեւ կամ որք նորա իցեն, զի առցէ նա զսուրբ մկրտութիւնն, պամրտ է առնուլ, թէ ոչ, այլ թէ մերձ ի մահ իցէ դիւահարն:

Պատասխանի. Եթէ ոչ սրբեսցի ի պիղծ այսոյն, ոչ կարէ առնուլ զսուրբ մկրտութիւնն, բայց մերձ ի մահ իւր մկրտեսցի:

ՀԱԹ Գ. Հարցումն. Թէ կնքաւոր է այսահարն, արժանի է առնուլ ի սուրբ խորհրդոյն, թէ ոչ:

Պատասխանի. Թէ ոչ խայտառակէ զսուրբ խորհուրդն կամ հայհոյէ՝ հաղորդեսցի, բայց մի՛ հանապազ, զի բաւական է նմա կիւրակէէ ի կիւրակէն:

ՀԱԹ Դ. Հարցումն. Թէ ոք երախայ հիւանդասցի եւ ի մտաց թափեսցի եւ ոչ կարէ զհաւատն խոստովանել, եւ աղաչեսցեն ընտանիքն նորա զի առցէ զսուրբ մկրտութիւնն, այլ զի եւ աղաչանքն եւս յերկար լինիցին մինչեւ յաւուրս Է. արժանի է առնուլ, թէ ոչ:

Պատասխանի. Արժան է առնուլ, թէ ի պիղծ այսոյն ոչ փորձեսցի:

les mets préparés à partir de ces viandes, il faut savoir que c'est l'habitude de ceux qui mangent sans réserve des charognes par goût pour l'abomination, comme les païens, mais ce n'est pas par ordre. Quant à ceux qui en mangent, ils devront s'abstenir de la sainte communion jusqu'à ce qu'ils se soient purifiés par les jeûnes et les prières. Mais ceux qui prennent de la thériaque en raison de besoins corporels s'abstiendront du saint corps jusqu'à ce qu'ils se soient purifiés par les jeûnes et les prières. Il y a en plus de tout cela beaucoup d'autres choses que je ne peux pas coucher par écrit ici, tel l'art des aèdes qui exhorte à la fornication car, pour l'espoir qui est gardé dans le ciel, le chrétien doit se montrer modéré en tout, car le nom du Seigneur est son espoir.

NPT 26. L'impie qui a foi dans les amulettes des ensorceleurs fera pénitence pendant cinq ans.

2. La possession démoniaque

CCL 73. Celui qui est possédé ne pourra devenir clerc, mais une fois purifié, il sera reçu et, s'il en est digne, il pourra devenir clerc.

CPC 5. Se séparer de sa femme constitue un suicide, cela est interdit, même si elle est stérile, cédée comme gage ou méchante; excepté – selon la Loi – si elle est lépreuse, maculée de madrures, possédée, atteinte de teigne ou si elle pratique la sorcellerie, ou fornique constamment.

ACY 18. Ceux qui étaient contaminés et avaient une tache, par exemple de lèpre ou quelque autre mal qui se communique, et qui se sont approchés des autres par ruse pour leur nuire se tiendront avec les possédés.

QCA 2. Le catéchumène possédé ne peut être baptisé tant qu'il n'est pas purifié du mal, mais s'il est mourant, on le baptisera.

QCA 3. Le possédé baptisé qui ne déshonore ou n'outrage pas la sainte communion pourra la recevoir, mais uniquement d'un dimanche à l'autre et non quotidiennement.

QCA 4. Si un catéchumène tombe malade et ayant perdu la raison est incapable de réciter le *credo*, mais que sa famille réclame avec insistance, durant sept jours, de le faire baptiser, il pourra recevoir le baptême, s'il n'est pas tenté par le démon impur.

ՀԱՌ ԺԲ. Հարցումն. Եթէ ոք կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս ագանիցի, եւ այր նորա ասիցէ. «Ոչ կարեմ ժուժկալ լինել», եւ կամիցի այլ կին առնուլ, ամ՞րէն է, թէ ոչ:

Պատասխանի. Շնութիւն միջնորդի յիրսդ. եւ զինչ պարտ եւ արժան է, ոչ գիտեմ վասն այնորիկ:

ՀԱՌ ԼԴ. Հարցումն. Եթէ ուրուք ի դիւահարելն իւրում մարդ սպանեալ է առ անզգայութեան իւրում եւ յորժամ սրբեսցի ի դիւէն, իբրեւ սպանող պա՞րտ է նմա ապաշխարել, թէ ո՞րպէս:

Պատասխանի. Սակաւ ինչ, զի ի չարէն է գործն:

ՀԱՌ ԾԵ. Հարցումն. Թէ ուրուք կին աւրկանայ կամ դիւահարի եւ այրն թողու զկինն եւ այլ կին առնէ, ընդ պատուհասիւք պարտի՞մք համարել զայնպիսին, թէ ոչ: Պատասխանի. Չէ արժան այլ կին առնուլ:

ՀԱՌ ՀԹ. Հարցումն. Թէ ոք յերախայից դիւահար է եւ ի պահս եւ ի ճգնութեան հանապազ ճգնի եւ ստիպէ զմեզ հանապազ եւ խնդրէ կնիք առնուլ, եւ դեւն ոչ հանապազ ունի, այլ ամսոյ ամսոյ կամ տարի տարի, զի՞նչ պարտ է առնել, տացու՞ք կնիք, թէ ոչ:

Պատասխանի. Չէ պարտ տալ մինչեւ սրբեսցի:

ՀԱՌ ՁԶ. Հարցումն. Թէ քրիստոնեայ անուն է դիւահարն եւ ստիպէ զմեզ եւ աւրէնս խնդրէ, զինչ արասցուք:

Պատասխանի. Չէ արժան տալ:

ՀԱՌ ՁԱ. Հարցումն. Թէ ի վարս գնացից իւրոց առաքինի է դիւահարն ի պահս եւ ամենայն պատուիրանաց Աստուծոյ հպատակ է եւ նովին ցաւով վախճանի, վասն յիշատակին զինչ պարտ է առնել:

Պատասխանի. Առնել պարտ է:

ՅՄՏ Ժ. Դեւք առանց հրամանի Աստուծոյ ոչ իշխեն մտանել ի մարդ (Մատթ. Ա, 18). եւ յայտ ի Սաւուղայ է, զի ասեն ծառայքն Սաւուղայ. «Այս չար ի Տեառնէ խեղդէ զքեզ» (Ա. Թագ. ԺՁ. 15). եւ վասն Յոբայ Աստուած ետ հրաման, զի ասէ Տէր ցսատանայ. «Ահա մատնեմ զնա քեզ» (Յոբ Բ. 6). եւ յերամակ խոզիցն ոչ իշխեցին մտանել դեւքն առանց հրամանի Աստուծոյ, ապա ի մարդ զիարդ իշխեն մտանել: Բայց, ասեն գիրք. Որ անմեղն է եւ առաքինանայ, իսկ յոմանց պատիժս խնդրէ եւ զոմանս խրատէ:

ՅՄՏ ԺԱ. Բայց աւրէնս ոչ է պարտ առնուլ մինչեւ սրբի. ապա եթէ ի նմին վախճանի, եւ գոհութեամբ ընդունի ընդ մարտիւրոսս, պայծառանայ առաջի Աստուծոյ, զոր առաքեալ ասէ. «Մատնեցի զայնպիսին սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յաւուր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Ա. Կոր. Ե. 5):

QCA 12. Celui dont la femme est totalement possédée, au point qu'il est nécessaire de l'enchaîner et qui déclare ne plus pouvoir rester continent, et désire se marier avec une autre femme; de fait, l'adultère s'immisce dans ce type d'affaire, et «je ne sais pas ce qu'il faut faire» – dit Athanase d'Alexandrie !

QCA 34. Si un possédé tue un homme en état d'inconscience, une fois purifié, il supportera, pour un temps seulement, la pénitence des homicides, car il s'agit de l'œuvre du Malin.

QCA 55. Le mari qui abandonne son épouse qui est devenue lépreuse ou possédée ne peut pas prendre une autre femme.

QCA 79. Le catéchumène qui est possédé par un démon, même s'il jeûne continuellement et mène une vie d'ascèse, et nous presse continuellement de le baptiser, et que le démon ne le possède que par intermittence - d'un mois sur l'autre ou d'une année sur l'autre – ne sera pas baptisé aussi longtemps qu'il ne sera pas complètement purifié.

QCA 80. Si un possédé est appelé chrétien et qu'il nous (*i.e.* les prélats) presse pour recevoir la communion, il ne faut pas la lui donner.

QCA 81. Si un possédé qui a un comportement pieux, qui pratique le jeûne et obéit à tous les commandements de Dieu meurt de sa maladie, il faut commémorer son souvenir.

YMD 10. Les démons ne peuvent pas entrer dans un homme sans l'ordre de Dieu comme cela ressort des Écritures (Mt 1, 18; 1 R 16, 15; Jb 2, 6), sachant qu'ils n'entrent même pas dans un troupeau de cochons sans l'ordre de Dieu. Mais les Écritures disent également à propos des personnes innocentes et vertueuses que Dieu peut aussi bien les sanctionner que les instruire.

YMD 11. Le possédé ne doit pas recevoir la communion avant de s'être purifié et s'il meurt dans cet état, il sera reçu par action de grâce parmi les martyrs et resplendira devant Dieu, comme le dit l'Apôtre (1 Co 5, 5).

ԿԵՆ ԻԷ. Ոչ է պարտ բորոտաց կամ դիւահարաց ընդ հաւատացեալսն աղաւթել:

ԲԳԿ ԻԹ. Թէ ուրկանայցէ այր կամ կին՝ չէ արժան թողուլ ի բաց. եւ եթէ դեւ ունի՝ նոյնպէս, այլ սրբութեամբ ունել զնա, եւ այն է հաճոյ Աստուծոյ. ապա եթէ թողու՝ մի՛ իշխեսցէ ամուսնանալ մինչ կենդանի իցէ զրկեալն եւ ամ յամէ ինչս տալ նմա, զի զոր Աստուած զուգեաց մարդ՝ մի՛ մեկնեսցէ, զի մի մարմին են (Մատթ. ԺԹ. 9). եւ եթէ ոք ամուսնասցի՝ շուն կոչեսցի:

ԲԳԿ ԼԱ. Շաբաթ եւ զկիւրակէ եւ զՊենտակոստէ մի՛ ոք իշխեսցէ ընդ պահաւք արկանել, բայց զայսահարսն: Եւ որ յառաջ քան զՅայտնութիւնն ծնունդ առնէ՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ԼԶ. Որ ընդ կանայս ուրկացեալս շնայ՝ որպէս ընդ անասնոյ է, նոյնպէս որ ընդ արս ուրուկս շնայ՝ որպէս ընդ մեռելոյ շնայ, նոյնպէս եւ ընդ մարմնազեղծս եւ ընդ այսահարս:

ԲԳԿ ԼԸ. Եթէ ոք անարժանութեամբ յաւրէնս մատչի՝ հանդիպի նոցա այսահարութիւն, գողութիւն, պիսակութիւն, մուրացութիւն, աղքատութիւն. պատահարք ամենայն չարեաց հանդիպին իւրեանց եւ որդւոց իւրեանց եւ որպէս հուր կիզու զամենայն ինչս իւրեանց:

ԲԳԿ ՃԺԴ. Քահանայ ի ժամ մկրտութեանն մի՛ իշխեսցէ զկինմարդ ի սուրբ աւազանն թողուլ եւ մի՛ կնքաւոր կացուցանել զայսահարս եւ զապաշխարողս:

ԲԳԿ ՃԺԶ. Քահանայ մի՛ իշխեսցէ աւրէնս տալ այսահարի մինչեւ գիտասցէ զդիւին հալածումն: Ապա եթէ յանդգնի ոք եւ նա ի դիւէն այլ ըմբռնի՝ եւ քահանայն ընդ խաչահանուսն Քրիստոսի է, եւ այսահարն մի՛ իշխեսցէ յեկեղեցի մտանել:

ԲԳԿ ՃԺԷ. Այր կամ կին եթէ հանդիպին այսահարութեան եւ զիւրեանց մեղսն խոստովանին, արժան է քահանային արգելուլ զնոսա յեկեղեցւոյ եւ յաւրինաց՝ մինչեւ զկարգն կատարեսցեն եւ ի դիւացն հեռասցին. ապա եթէ ննջեսցեն յաղաւթս եւ ի պահս պնդութեան՝ արժան է չզրկել յետին թոշակէն եւ զյիշատակն կատարել ընտանեացն եւ լսուլ զկարգն վարդապետին մարդասիրութեամբ:

ԲԳԿ ՄԽԴ. Այսահարութիւն բազում հանդիպին արդարոց եւ մեղաւորաց:

ԲԳԿ ՄԽԵ. Թէ արդարոց հանդիպի՝ արժան է ծնաւղացն բառնալ զպահսն եւ արգելուլ զնա յամենայն կերակրոց, եւ ստեամբ միայն կերակրել՝ մինչեւ ի լսուլ Է. ժամանակացն:

SCN 27. Il ne faut pas que les lépreux ou les possédés prient avec les fidèles.

ECB 29. Le mari - ou la femme - ne doit pas abandonner son conjoint qui contracte la gale ou devient possédé, mais il doit en prendre soin avec sainteté car cela est agréable à Dieu; mais s'il l'abandonne, il ne pourra pas se remarier tant que le conjoint malade est vivant et année après année, il doit assurer sa subsistance, car ce que Dieu a uni, l'homme ne peut le défaire (Mt 19, 6); et s'il se remarie, il sera appelé adultère.

ECB 31. Personne – à l'exception des possédés – ne doit mépriser le samedi et le dimanche durant les jours de la Pentecôte en jeûnant. Et celui qui célèbre la Nativité avant l'Épiphanie sera anathématisé.

ECB 36. Celui qui commet l'adultère avec des femmes galeuses est identique au zoophile, et celle qui commet l'adultère avec des galeux est identique à la nécrophile, de même que ceux qui commettent l'adultère avec des estropiés ou des possédés.

ECB 38. Ceux qui s'approchent de la communion de façon indigne subiront la possession par le démon, la gale, les épidémies, la mendicité, la pauvreté; du fait de leur crimes; eux-mêmes et leurs enfants, récolteront des catastrophes et tous leurs biens se consumeront dans le feu.

ECB 114. Lorsqu'il confère le baptême, le prêtre ne doit pas laisser les femmes s'approcher de la sainte piscine et il ne faut pas accepter un possédé ou un pénitent en tant que parrain.

ECB 176. Le prêtre ne doit pas donner la communion à un possédé tant qu'il constate que le démon le persécute. Mais s'il donne la communion à quelqu'un de possédé, il sera compté parmi les crucificateurs du Christ et le possédé ne pourra pas entrer à l'église.

ECB 177. Le prêtre doit interdire l'accès à l'église et à la communion à l'homme - ou à la femme - possédés qui confessent leurs péchés, tant qu'ils n'auront pas achevé la durée de leur pénitence et ne se seront pas libérés des démons; mais si au moment de mourir, ils se tiennent fermes dans la prière et le jeûne, il ne faut pas les priver du viatique et on commémorera leur souvenir en présence de la famille, et le *vardapet* accomplira la célébration avec compassion.

ECB 244. La possession par des esprits impurs touche en nombre aussi bien des personnes justes que des pécheurs.

ECB 245. Si une personne juste est possédée, ses parents lui imposeront un jeûne de sept jours durant lesquels ils ne la nourriront que de lait.

ԲԳԿ ՄԽԶ. Ապա եթէ կուսանաց հանդիպի պատուհասն՝ ոչ կարէ ամուսնանալ, զի ոչ բնակէ լոյս ընդ խաւարի, այլ սուրբ եւ մաքուր աղաւթիւք առ դուրս եկեղեցւոյն խոստովանել զյանցանս իւր Է. ժամանակս: Եւ եթէ հալածեսցի անաւրէն թշնամին, հաղորդեսցի աւրինաց եւ զինչ կամեսցի իշխան է՝ թէ՛ ամուսնասցի, թէ՛ կուսան կացցէ, բայց զահ եւ զերկիւղ ի սրտի կալցէ մինչեւ ցմահ:

ԲԳԿ ՄԽԷ. Իսկ եթէ կանամբի իցեն՝ որոշեսցին ի միմեանց, զի անհնար է հաղորդ լինել դիւաց եւ սեղանոյն Աստուծոյ. մինչեւ Է. ժամանակ առ դրան սուրբ եկեղեցւոյն ընդ ձեռամբ քահանային սուրբ եւ պարկեշտ գնացիւք, գետնատարած անկողնաւք, անճաշակ յամենայն յղփութեանց կերակրոց, սուրբ աղիւ եւ հացիւ հալածել զթշնամին եւ հաճոյ լինել Աստուծոյ եւ դառնալ ի բանակ իւր:

ԲԳԿ ՄԽԸ. Ապա եթէ այլ սաստիւ, զոր ոմանք քաջ ասեն, կամ այլ լլկութեամբ երեւեալ կերպս կերպս, կամ ի տեսլեան գիշերոյ՝ ամենեցուն հալածումն ի ձեռն աղաւթից եւ պահոց է. բայց արժան է քահանային ըստ պատահմանն զգործն ուղղել եւ ըստ իւրաքանչիւր փորձութեանց զպահսն յաւելուլ եւ կարճել:

ԲԳԿ ՄԽԹ. Յաւուրս սուրբ Զատկին իշխանութիւն ունի քահանայն զկապեալսն լուծանել ի պահոց թէ Բ. կամ Գ. ամաւք հալածումն լեալ է թշնամւոյն. յաւուր կիւրակէի արասցէ լուծումն վտանգելոյն, զի այնու զարհուրի հրապուրիչ բանսարկուն:

ԲԳԿ ՄԾ. Իսկ եթէ քահանայ կամ սարկաւագ կամ ուխտական հանդիպի պիղծ այսոյն, զի ամենայն սուրբք նովաւ փորձեցան եւ գտան որպէս ոսկի ընտիր, զի եւ ընդ Կենարարին մերոյ մարտեաւ եւ եղեւ կոխան ոտից նորա ի ձեռն քառասնաւրեայ պահոցն, զոր արար եւ խրատէ:

ԲԳԿ ՄԾԱ. Արդ՝ անհնար է կալ յաշտիճանի քահանայութեան որում հանդիպի. թէ կանամբի իցէ՝ երթիցէ ի սուրբ եկեղեցին եւ ընդ ապաշխարողսն անկեալ դաւղեալ անբարբառ ձայնիւ ի ծածուկ սրտին զսուրբ եւ զմաքուր աղաւթսն առ ծածկագէտն Աստուած սփռեսցէ եւ գետնատարած անկողնաւք եւ սուրբ աղուհացիւ զհպարտացեալ բանսարկուն հերքեսցէ, որպէս Յոբն երանելի. Է. ժամանակաւ փրկեալ ի թշնամւոյն առցէ զաւծումն պաշտամն ի տանն իւրում:

ԲԳԿ ՄԾԲ. Իսկ եթէ ոք լլկանաւք մաքառի ընդ քահանայս եւ ընդ ուխտականս, քառասնաւրեայ պահաւք եւ աղաւթիւք խոստովանել զյանցանս իւր եւ զլլկանս բռնութեան թշնամւոյն հալածել եւ հրամանաւ հայրապետին իւրոյ՝ ահիւ եւ երկիւղիւ կալցէ զկարգն:

ԲԳԿ ՄԾԵ. Այսահարութիւն ոչ բնութեամբ հանդիպի մարդկան, այլ բազում ի դէմս դէմս:

ECB 246. Si une personne vierge est possédée, elle ne pourra pas se marier, car la lumière et les ténèbres ne peuvent pas cohabiter, mais avec des prières saintes et pures, elle confessera ses fautes à la porte de l'église pendant sept jours. Et si elle chasse l'ennemi impie, elle pourra communier et agir comme elle le souhaite, à savoir se marier ou rester vierge, mais elle devra garder son cœur dans la crainte jusqu'à sa mort.

ECB 247. L'épouse qui est possédée devra se séparer temporairement de son mari, car il est indigne d'accorder la communion et l'autel de Dieu aux démons; pendant sept jours elle se tiendra à la porte de l'église de façon sainte et modeste sous la surveillance du prêtre, en dormant à même le sol et en ne goûtant à aucune nourriture délicate, mais seulement à du sel et du pain bénis (litt. saints) et elle chassera l'ennemi, et se rendra agréable à Dieu, et pourra alors retourner auprès des siens.

ECB 248. On chassera les esprits terrifiants appelés *kaǰ* ou les autres tourments qui apparaissent sous différentes formes, ou dans les visions nocturnes par les prières et les jeûnes; mais le prêtre devra agir pour le mieux selon les différents maux de chacun en rallongeant ou en raccourcissant les jeûnes.

ECB 249. Le jour de Pâques le prêtre peut libérer du jeûne les personnes enchaînées qui sont persécutées par l'ennemi depuis deux ou trois ans; et le dimanche, il pourra libérer celui qui est en danger, car ce jour épouvante Satan.

ECB 250. Le prêtre, le diacre ou le clerc qui est attaqué par le démon impur – car tous les saints ont été tentés par lui et notre Rédempteur a lutté contre eux et les a foulés aux pieds par un jeûne de 40 jours qu'il a supporté et a enseigné – devra jeûner.

ECB 251. Celui qui est possédé par le démon ne pourra pas devenir prêtre; et s'il est marié, il ira à la sainte église pour se prosterner discrètement avec les pénitents en murmurant sans proférer de son – avec un cœur secret – des prières saintes et pures à Dieu qui voit tout et en dormant à même le sol, et par des saints jeûnes, il rejettera le démon à l'instar du bienheureux Job; et sept jours après avoir chassé l'ennemi, il recevra l'onction du culte chez lui.

ECB 252. La personne tourmentée qui se querelle avec les prêtres et les clercs jeûnera pendant 40 jours avec des prières et elle confessera ses fautes pour chasser les tourments infligés par l'ennemi, et sur l'ordre de son patriarche, elle se tiendra avec crainte et frayeur parmi les pénitents.

ECB 255. La possession par le démon n'atteint pas un homme de façon prédéterminée, mais en touche un grand nombre de telle ou telle façon.

ԲԳԿ ՄԿԱ. Իսկ ոմանց՝ ի կանանց կերպարանս երեւին եւ կանանց՝ յարանց կերպս. Եւ ոմանս քաջակալս անուանեն եւ խստագոյն քան զամենեսեան առ այսահարսն ընթանան, զորոց գիտական կոչեն եւ այլ դիմաւք առ ժամանակ մի անգիտութիւն լինի, խոտորին ի պահոց եւ յաղաւթից, եւ ապա յետոյ խստագոյն երեւեալ ըստ բանի Փրկչին՝ «Բնակէ յորդիս եւ յորդւոց որդիս Է. դիւաւք խստագունիւք քան զինքն» (Մատթ. ԺԲ. 45):

ԲԳԿ ՄԿԲ. Իսկ ոմանք յարակայ մոլին, զոր լուսնահարն կոչեն, եւ զաստուածային մարտն վասն մեղաց եւ վասն առաքինութեան՝ լուսնին տան, թէ ի ծնունդս թէ ի հինն գայ դեւն եւ ընթանայ ի պէսպէս իրս, եւ ոչ ընթանայ յեկեղեցին Աստուծոյ աղաւթիւք եւ պահաւք խնդրել իւրեանց բժշկութիւն, այլ ընչիւք եւ պատարագաւք ընթանան առ այսահարսն եւ լուսնովն բժշկութիւն խնդրեն ի նորոգսն ի նոր եւ ի հին լուսնին եւ զարդար եւ զսուրբ լոյս լուսնին խառնեն ընդ իւրեանս որ անլոյծ կապանաւք կան առաջի Քրիստոսի:

ԲԳԿ ՄԿԳ. Իսկ զոմանս գաղտ լլկէ ի գիշերի, զոր ոմանք հոգեգէշ կոչեն, ասեն եւ խստագոյն քան զամենայն անաղաւթս եւ անպահս առնէ եւ զոգին մատնէ ի գեհենն:

ԲԳԿ ՄԿԴ. Իսկ որք ի քուն ընդոստնուն եւ լան եւ կամ ծիծաղին եւ իբրեւ զշուն մռնչեն եւ ընդ վայր խաւսին եւ թմբրին եւ անկանին ի զարհուրումն, եւ յորժամ այսն թողու զարթնուն եւ ցնծալով երազս խաւսին:

ԲԳԿ ՄԿԵ. Իսկ այսահարութիւն է՝ արիւնհեղութիւն եւ սուտ երդումն եւ զուր վկայել եւ արուագիտութիւն եւ անասնազանցութիւն եւ ագահութիւն եւ արծաթսիրութիւն եւ արբեցութիւն. որ թէ այնմ հանդիպին, այսահար կոչիլ լաւ է քան զայնպիսի ախտից:

ԲԳԿ ՄԿԶ. Իսկ քահանային այսպէս արժան է կարգել զայսահարսն. յորժամ հանդիպի այսն պիղծ, տանել ի դուռն եկեղեցւոյն եւ քառասնեակս առնել, Է. անգամ աղաւթս առնել հանդերձ սուրբ Աւետարանաւն, հայել եւ տեսանել գլրբութիւն դիւին, յաւելուլ եւ կարճել զկարգն եւ զպահն ըստ ողորմութեանն Աստուծոյ. ի պահս եւ յաղաւթս կացցէ, զի այն է հաճոյ Աստուծոյ:

ECB 261. S'agissant de ceux qui prennent l'apparence de femmes et de celles qui prennent l'apparence d'hommes et ceux qui se prétendent vertueux et traitent plus durement que quiconque les possédés, ceux qui se prétendent savants et, en d'autres circonstances se montrent ignorants, qui repoussent les jeûnes et les prières et ensuite se montrent sévères selon la parole du Sauveur «Sept esprits méchants s'établiront dans ses fils et ses petits-fils» (Mt 12, 45).

ECB 262. Ceux qui sont constamment en furie et qu'on appelle lunatiques, et qui attribuent à la lune le combat divin en raison des péchés et de la vertu, s'ils sont possédés par le démon – depuis leur naissance ou depuis très longtemps – qui se manifeste de diverses manières, et qu'ils n'accourent pas à l'Église de Dieu avec des prières et des jeûnes en demandant leur guérison, mais apportent plutôt des donations et des offrandes à des sorciers (litt. des démoniaques) en leur demandant la guérison par la lune – avec la nouvelle et l'ancienne lune – et qui mélangent la juste et sainte lumière de la lune à ceux (*i.e.* les sorciers) qui sont condamnés avec des liens indissolubles devant le Christ.

ECB 263. Ceux qui se torturent la nuit et qu'on appelle *hogegēš*, et qui sont touchés plus durement que tous les autres, et qui ne prient et ne jeûnent pas, leurs âmes seront livrées à la géhenne.

ECB 264. S'agissant de ceux qui gesticulent dans leur sommeil, pleurent ou rient et grognent comme des chiens, et parlent en vain, puis tombent dans la torpeur et l'effroi, et qui, lorsque le démon les abandonne, se réveillent et racontent leurs rêves avec allégresse.

ECB 265. Est considéré comme de la possession par le démon le fait de verser le sang, le parjure, le faux témoignage, la bestialité, la cupidité, l'amour des richesses et l'ivrognerie; il est préférable d'appeler de telles personnes des possédés plutôt que de les nommer du nom de telles tares.

ECB 266. Le prêtre doit traiter le possédé de la manière suivante: lorsque le démon produit sa souillure, le prêtre doit emmener le possédé devant la porte de l'église et lui imposer un jeûne de 40 jours, et faire sept prières avec l'Évangile pour observer, et regarder la ruse du démon, et il pourra rallonger et raccourcir la pénitence et le jeûne selon la miséricorde, et il se tiendra dans les jeûnes et les prières car cela est agréable à Dieu.

ՏԻՏՂՈՍ Գ.
«ԱՐՏԱՔԻՆՔ»

I. Հերձուածողութիւն

1. Քննութիւն

Ա. Հերետիկոսութեան արմատներ

ԿԱՌ ԺԹ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ չէ իշխանութիւն քահանայապետի կամ երիցու եւ ոչ իցէ առաջնորդ եկեղեցւոյ առանց իւրոց պաշտաւնակցացն առնել զիրս ինչ յեկեղեցւոջ. բայց կամաւք եւ միաբանութեամբ ամենեցուն արասցեն, զոր ինչ կամինն, զի մի՛ լիցի տրտմութիւն եւ հերձուածք ի միջի իւրեանց, զի ի միաբանութենէ ամենեցուն եւ քարոզութիւնն հաւատարիմ լիցի, եւ հաւատն հաստատուն, որպէս եւ Փրկիչն ասէ, թէ «Ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ. 20):.

ԵԱԿ ԾԵ. Եթէ ոք ստութեամբ զվերագրեալսն ամպարշտաց գիրս իբրեւ զսուրբս յեկեղեցի մուծեալ առ ի վնաս ժողովրդոց՝ լուծցի:

ՍԱՊ Ժ. Վասն որոյ եւ անհատ պարտի պահել յարդարուն զդպրոցսն ի վանս եւ յայլ արժանաւոր տեղիս, զի լուսաւորեալք լուսով պատուիրանացն Աստուծոյ՝ զամենեսեան լուսաւորեսցեն. քանզի յորժամ ուխտն որ գլուխն է եկեղեցւոյ ընտիրք եւ պիտանիք լինիցին, եւս առաւել ժողովուրդն: Եւ եթէ եղիցի ոք ի ժողովրդենէն ծոյլ, վարուք առաքինութեան դիւրագոյն լիցի ածել յուղղութիւն, քանզի չէ փոքր յաղագս այդորիկ հոգ ի վերայ քորեպիսկոպոսին՝ այց առնել եւ վարուց ժողովրդեանն, եւ ըստ պարապոյ ուխտաւորեալ պահոցն եւ աղաւթից՝ ուրախացուցանել գրոց սրբոց վարդապետութեամբ, շահել զմեղուցեալսն, եւ տալ տեղեկութիւն կրթութեան եւ պահպանութիւն ամբիծ հաւատոյ, եւ զգուշանալ եւ փախչել ի հերձուածողաց եւ յաղծապիղծ գործոց, քանզի զդիտաւորութեան գործ նոցա է հաւատացեալ եպիսկոպոսին, ըստ աւրինակի բարգաւաճեալ մեծի մարգարէին Մովսէսի, որ կացոյց ոստիկանս ի վերայ ժողովրդեանն քննել եւ դատավճիռ հատանել. եւ զծանր ինչ բան առ ինքն հասուցանել, եթէ զգուշասցին եւ զգուշացուսցեն ըստ պատգամի մարգարէութեան, թէ «Ահա սուր գայ» (յմմտ. Եզեկ. Լ. 4). եւ ազգ երկրին ապստամբեալ անփոյթ առնիցէ՝ նոքա յանաւրէնութեան իւրեանց մեռցին, եւ նա ապրեցուսցէ զանձն իւր:

ՍԱՊ ԼԶ. Քանզի բազումք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել եւ այլ զոմն վանս, եւ տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս եւ հերձուածս մուծանել ի մի միաբանութիւն հաւատոց եւ մոռացան զպատուիրանին բանն որ ասէ. «Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն» (Եփես. Դ. 5). զի որ այլ եւ այլ կամին ասել՝ յայտնապէս եւ զհաւատոցն ցուցանէ զբաժանումն. քանզի եկեղեցի ոչ ցուցանէ

TITRE 3.
LES «EXTÉRIEURS»

I. Les hérésies

1. Décryptage

A. Les racines de l'hérésie

CAP 19. Le chef des prêtres ou le doyen, ou qui que ce soit parmi les prélats de l'Église, ne pourra s'occuper des affaires de l'Église sans ses collègues; ils devront tous ensemble agir de concert pour faire ce qu'ils jugent bon, afin que les hérésies et les troubles ne surgissent pas, car c'est uniquement l'union de tous qui permettra une prédication et une foi affermies, «car là où deux ou trois sont réunis en mon nom, moi je suis au milieu d'eux» (Mt 18, 20).

CCL 55. Le clerc (litt. celui) qui introduit des livres des impies dans l'église et les présente comme saints pour la perdition du peuple sera déposé.

SPT 10. Il faut conserver continuellement les écoles probes et illuminées – par les commandements de Dieu – dans les monastères et les autres lieux saints; car lorsque le clergé à la tête de l'Église est méritant et excellent, le peuple ne l'est que davantage. Et le chorévêque ramènera les fidèles laïcs paresseux vers la voie droite, et il les réjouira par l'enseignement des saintes Écritures, et selon des jeûnes et des vœux faits à loisir, il instruira les pécheurs et préservera la foi des fidèles loin des hérétiques et de leurs actes impurs, car l'évêque a confié aux chorévêques la tâche de surveillance encouragé par l'exemple de Moïse qui avait institué des surveillants auprès du peuple pour les examiner et rendre des jugements; et si une affaire grave survient, ils (*i.e.* les chorévêques) doivent lui (*i.e.* l'évêque) en référer après avoir mis en garde les protagonistes (cf. Éz 30, 4).

SPT 36. Les églises et les monastères représentent une seule et même chose et ne diffèrent en rien comme le prétendent ceux qui veulent instaurer querelles et hérésies, car il n'y a qu'«un Seigneur, une foi, un baptême» (Ép 4, 5); et l'Église n'est pas un bâtiment en bois ou en pierre mais l'ensemble des hommes assemblés

մեզ պատուիրանն Աստուծոյ՝ որ ի քարանց եւ ի փայտից է շինեալ, այլ զհաւատովն շինեալ զազգ մարդկան ի վերայ վիմին հաստատութեան. ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է եկեղեցի, որ գումարէ եւ շինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ: Քանզի նոյն ինքն Կենարարն ուսուցանէ ասելով ցՊետրոս. «Դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զքեզ մի՛ յաղթահարեսցեն» (Մատթ. ԺԶ. 18): Արդ՝ զինչ իմանայցեմք զասելն ցՊետրոս վէմ, միթէ որպէս զմի ոք ի քարանց. քաւ լիցի, այլ մարդ բանաւոր, գլուխ առաքելական դասուն. եւ զի անդրդուելի հաւատովք խոստովանեաց զՔրիստոս որդի Աստուծոյ, երանութիւն ընկալաւ եւ վէմ անուանեցաւ: Ապա ուրեմն եւ շինեալքն ի վերայ նորա ոչ են քարինք անշունչք, այլ մարդիկ՝ նորին հաւատոյ հաղորդակիցք: Քանզի ոչ դանդաղին գիրք սովին անուամբ ձայնել զՏէրն մեր եւ զփրկիչ երբեք երբեք ըստ պիտոյից. յիշատակէ ահա եւ երանելին Պաւղոս զանուն եկեղեցւոյ ասելով. «Զորս եդն Աստուած յեկեղեցւոջ այս են՝ նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս» (Ա. Կոր. ԺԲ. 28) եւ որ ի կարգին է: Տեսանես զյարմարումն եւ զբարձրութիւն եկեղեցւոյ. զսուրբ եւ զամբիծ հաւատոյն ասեմ, որոյ առաքեալք եւ մարգարէք եւ վարդապետք են նաւավարք, ունելով նաւապետ զմարմնացեալ եւ զմարդացեալ բանն Աստուած. եւ զնա իսկապէս խոստովանիմք ասել մայր եկեղեցւոյ ի Քրիստոս հաւատացելոց, քանզի զաւրէն նաւի զամենեսեան յինքն ամփոփելով ցամաքաթեւ յամենայն աշխարհական ծփանաց կարող լինի ապրեցուցանել. բայց միայն աներկեւան պահեսցուք զհաւատս՝ որով շինեցաք բանաւոր եւ մտաւոր եկեղեցի ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից: Այսմ եկեղեցւոյ ուսուցանէ Տիմոթեայ խնամ ունել երանելի առաքեալն սիւն եւ հաստատութիւն անուանելով. յայտնի է, ասէ, ի նմա խորհուրդ աստուածապաշտութեան: Եւ յիրաւի, մանաւանդ թէ ճշմարիտ իսկ, զի ոչ են բաւական անձայնաւոր կամ անշունչ արարածք յայտնել զխորհուրդ աստուածպաշտութեան, այլ միայն բանաւոր եկեղեցիս: Վասն այսորիկ եւ սաղմոսն բարձրաձայն գոչէ, թէ «Աւրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց» (Սաղ. ՃԽԹ. 1): Ահա եւ Սամուէլ մրագարէ որ հաւատարիմն կոչեցաւ՝ զնոյն ուսուցանէր ի պատուիրելն իւրում Սաւուղայ, Իբրեւ գնասցես յինէն՝ հանդիպեսցիս եկեղեցւոյ՝ պարու մարգարէից մարգարէացելոց (յմմտ. Գ. Թագ. Ի. 36, Ա. Թագ. Ժ. 5): Եւ դարձեալ թէ «եկեղեցաւցաւ ժողովուրդն ի Դանայ մինչեւ ի Բերսաբէէ իբրեւ զայր մի» եւ «եկեղեցի մարգարէից մարգարէացելոց, եւ Սամուէլ կայր ի վերայ նոցա»: «Եւ աւրհնեաց Սողոմոն զեկեղեցին» եւ «լու եղեւ բանս այս յականջս եկեղեցւոյն». «եւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս», «եւ լուայ զպատգամս զայս ի միջոյ հրոյ յաւուրն եկեղեցւոյ» (Դատ. Ի. 1, Ա. Թագ. ԺԹ. 20, հմմտ. Բ. Մնաց. Զ. 3, Գործ. ԺԱ, 22, Գործ. ԺԶ. 5, յմմտ. Բ. Օր. Գ. 36). «քանզի եկեղեցի արար գլուխ մարգարէիցն Մովսէս զցեղն իսրաէլի հրամանաւ Աստուծոյ». «Եկեղեցացո, ասէ, զժողովուրդն ի դուռն խորանին վկայութեան» (Ցեսու ԺԸ. 1): Տեսանես, զի ոչ եթէ զխորանն կոչէ եկեղեցի, յորում կայր արկղն կտակարանաց, եւ միւս խորանն, որ կոչէր սրբութիւն, այլ զհաւատացեալ ժողովուրդն աւետարանէ: Վասն այնորիկ եւս առաւել բարձրագոյն եւ առաքեալն Պաւղոս նորագոյնս իմն եւ յաւէտ հրաշալիս, քանզի ցուցանէ զեկեղեցի անդրանկաց գրելոց ոչ յերկրի, այլ յերկինս, որոց անուանք գրեալ են ի դպրութեան կենաց: Տեսո՛ր զճշմարիտ հիմն եկեղեցւոյ, վասն որոյ Փրկիչն ասաց խնդալ զառաքեալսն, թէ «Խնդացէ՛ք զի անուանք ձեր

dans l'unique union de la connaissance et de la foi du Fils de Dieu. Et quand Il a dit à Pierre qu'Il bâtirait son Église sur lui (Mt 16, 18), Il ne pensait pas à un bâtiment mais à un être rationnel, chef des apôtres. De même, Paul parlant du nom de l'Église précisait qu'elle incluait en son sein, d'abord les apôtres, puis les prophètes et enfin les *vardapet*s (1 Co 12, 28) qui sont soumis au Verbe incarné qui est le capitaine du vaisseau qui transporte tous ses passagers sains et saufs à travers les vagues du monde. Et c'est au sein de cette Église nommée pilier et support que s'accomplit le mystère du culte divin, que seules des créatures vivantes et rationnelles peuvent exprimer (cf. Jn 18, 1; 1 R 19, 20; Lv 8, 3). Et Moïse ne nommait pas église la tente où se trouvait le coffre du Testament ni même celle appelée «saint des saints», mais la population ferme dans la foi; et Paul, de manière plus sublime encore, a évoqué une Église de premiers-nés qui ne sont pas inscrits sur terre mais dans les cieux, et dont les noms sont dans le livre de vie (Ph 4, 3). Ceci est l'Église inviolable dont la construction débute sur terre, mais s'accomplit dans les cieux. Ceci est le mystère que nous avons appris à appeler l'Église apostolique catholique; car tous ceux qui sur terre croient dans le Christ sont appelés Église apostolique catholique du fait du commandement «Allez partout sur terre pour enseigner les païens, pour les baptiser au nom de la Trinité et qu'ils gardent tout ce que je vous ai commandé» (Mt 28, 19).

գրեալ են ի դպրութեան կենաց» (Ղուկ. Ժ. 20, Յայտ. Գ. 5). եւ զանապական, որոյ սկիզբն կալաւ շինելոյ յերկրի, որ անցանելոց է, եւ աւարտեցաւ ի կատարս երկնից բարձրութեան: Այս է խորհուրդն եկեղեցւոյ. զայս ուսաք ասել կաթողիկէ առաքելական եկեղեցի, զի ընդ ամենայն տիեզերս հաւատացեալք ի Քրիստոս առաքելական յորջորջին եկեղեցի, վասն տէրունական հրամանին, որ առ նոսա թէ՝ «Գնացէք ընդ ամենայն երկիր, աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյ, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ» (Մատթ. ԻԸ. 19-20):

ՍԱՊ ԼԷ. Արդ՝ թէպէտ եւ փոքր ի շատէ ասացաք յաւրինակացն, որ բազմապատիկ կան ի գիրս սուրբս վասն եկեղեցւոյ սրբոյ, բաւական եղիցի. քանզի յայտնի եղեւ անքակ միութիւն, եւ ոչ երկպառակեալ, որպէս կամեցան պատառումն առնել եւ կռիւս վաղվաղակի տխմարութեամբ իւրեանց. զի ի ճշմարիտ հաւտէն Քրիստոսի, որ է եկեղեցի Աստուծոյ՝ նա միայն է պատառեալ եւ անջատեալ, որ ի հերձուածս կործանի եւ մեղաց լինի պաշտաւնեայ, զի մեղքն բաժանեն եւ աւտարացուցանեն յԱստուծոյ: Բայց զայս ասելով մեր՝ զանբաւ միաւորութիւն եկեղեցւոյ յայտնի արարաք, եթէ զինչ է եկեղեցի: Այլ ոչ եթէ արհամարհել ինչ ուսուցանեմք զշինուածովք պատուեալ զտեղիսն, որ անուանին ժողովրդանոցք, քանզի ի նոսա ժողովին քահանայք եւ մանկունք ուխտի եւ պաշտաւնեայք Աստուծոյ՝ կատարել զաղաւթս եւ զխնդրուածս, վասն որոյ եւ աղաւթարանք կոչին եւ սրբարանք. եւ հաստատեալ կայ ի նոսա տէրունական սեղանն յորոյ վերայ զհացն եւ զգինին պատարագեմք, յաւրինակ կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի ի մեզ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. եւ ի նոսա կայ ուղղեալ աւազան մկրտութեան, որով լուսաւորեալք վերստին ծնդեամբ եւ հոգւովն սրբով, դրոշմիմք ի յոյս կենացն յաւիտենականաց. եւ հանապազ անդր գումարելով՝ լսեմք սաղմոսերգութիւնս եւ զպատգամս պատուիրանացն Աստուծոյ: Եւ վասն զի միշտ անդր ժողովիմք, եւ ապաւէն ապաստանի է մեզ, զամենայն առասացեալսն ի նմա կատարել սովորութիւն եղեւ եկեղեցի անուանել յարանուանաբար, այլ ոչ բնաւորապէս: Եւ քանզի բազումք այսպէս կամ վկայարանք ուրեք ուրեք յանուն, ճանաչեմք եթէ համանուն նոցա են շինեալք, այլ ոչ եթէ ինքեանք իսկ յորոյ անուն շինեցան. եւ մի պատիւ է ամենեցուն, զի մի խորհուրդ կատարի, քանզի սեղանն ամենայն ուրեք տէրունական ասի եւ պատարագն. բայց միայն տաւնիւքն զանազանին, զի իւրաքանչիւր տեղւոջ սովորութիւն է կատարել զկարգ տաւնիցն:

ՍԱՊ ԽԷ. Որպէս վերագոյն ասացաք, թէ հայր է եպիսկոպոսն եւ ըստ լաւութեան եւ աջողութեան պիտի փայփայել եւ յառաջեցուցանել զընտանիսն, եւ յանձն առնել զգործ եկեղեցւոյն ի կանոնի կարգաց, ուստի այլանդակ անառակութիւնք եւ հերձուածք խամրին եւ վարք աստուածահաճոյ կենաց հանդերձ բարեպաշտութեամբ պտղալից զարդարին: Բայց գիտեմք, զի ոմանք ըմբոստացեալ ճոռոմաբանեն, մանաւանդ ազգասէր ծնկոտքն, զմարգարէին ի կիր առնուլ զբանն, թէ՝ «Յընտանեաց զաւակի քո՝ զակն մի արկանիցես» (Ես. ԾԸ. 7). եւ զայն ոչ իմացան թէ ընտանիս զմիաբանութիւն հաւատոյն կոչէ: Վասն որոյ բարձրաբարբառ փողն եկեղեցւոյ ճշդիւ մեկնեալ գոչէ. եւ զինչ ասիցէ. «Թէ հնար է, ասէ, ընդ ամենայն

SPT 37. La sainte Église constitue une unité indivisible contre laquelle s'élèvent ceux qui engendrent de sottes querelles; car l'Église de Dieu est le vrai troupeau duquel se sépare celui qui tombe dans l'hérésie et qui devient un serviteur du péché étranger à Dieu. Il ne faut donc aucunement mépriser les lieux et les bâtiments dans lesquels se réunissent les prêtres, les clercs et les fidèles pour accomplir le culte divin; et dans ces oratoires et ces sanctuaires se trouve l'autel du Seigneur sur lequel sont offerts le pain et le vin pour l'expiation de nos péchés; et c'est là qu'est érigé un font baptismal dans lequel nous connaissons une seconde naissance par le Saint-Esprit. Et du fait que nous nous rencontrons continuellement là, et que nous y trouvons un refuge à travers les offices, il est devenu habituel de l'appeler église, mais seulement comme un nom commun et non pas une appellation qui signifierait une identité de chose. Car il y a dans divers places de nombreux *martyria* que nous connaissons par les noms de ceux en l'honneur de qui ils ont été construits; et une même vénération est à rendre à tous, car dans chacun d'eux un seul et même mystère s'accomplit, et partout, l'autel et l'office sont dédiés au Seigneur; et c'est seulement les fêtes qui y sont célébrées qui diffèrent, car selon la coutume, chaque lieu possède son propre ordonnancement des fêtes.

SPT 47. L'évêque est donc un père qui doit faire avancer les membres de l'Église selon leur mérite et flétrir les débauchés et les hérétiques. Mais certains individus mondains et bouffons qui sont asservis à leur clan font preuve hypocritement de piété pour favoriser et enrichir leurs parents; et en agissant de la sorte ils transgressent les prescriptions des Écritures (Is 58, 7; Rm 12, 18).

մարդկան զխաղաղութիւն կալջիք» (Հռոմ. ԺԲ. 18), մանաւանդ առ ընտանիսն հաւատոց: Այս է պատճառ ընտանեացն խնամածութեան. բայց թէ գետնաքարշ եւ մոմոշ իցէ եւ պատճառս բարեպաշտութեան կեղծաւորիցի՝ սիրել եւ հարստացուցանել զազգայինս իւր՝ լուիցէ միւս եւս բանին որ մեղմովն խրատէ, թէ՝ «Մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո» (Մատթ. Զ. 3): Մի՛ ոք իշխեսցէ անամաւթ համարձակութեամբ զչարդ զայդ առնել պատճառ բարեգործութեան. զի չար է կամակար լրբութիւն, քան զմեղանչելն, քանզի եղբայրասպանն Կային եւ Գէեզի, որ դառն ագահութեամբն էր զբաղեալ, քան ընդ մեղացն եւս առաւել վասն անամաւթ լրբութեանն կրեցին պատիժ պատուհասից:

ՅՄՏ Դ. Եթէ ասիցէ ոք, թէ գինի որթոյ բերէ եւ ձէթ՝ ծառոյ եւ ձուկն՝ ջրոյ, ո՛վ անհեդեդ զգայարան, այն է Նեստորի անիծելոյ աղանդն, զի Բարսեղ Կեսարացի զձուկն գազան ասէ, եւ առաքեալ վկայէ. «Այլ մարմին ձկան եւ այլ մարմին անասնոյ եւ այլ մարմին թռչնոյ» (Ա. Կոր. ԺԵ. 39): Արդ առաքեալ մարմին ասէ եւ հերձուածողն՝ ջուր: Արդ՝ զիա՛րդ իցէ ջուր, զի կենդանի է՝ յաւդք, ոսկերք, ջիղք, արիւն, աչք. ա՛յլ է, քննեա խորհրդիւ ի ձկունս եւ ի գազանս, որ ի ցամաքի են՝ առեւծ, ինծ, արջ, վիշապ, որ է աւձ եւ գիրք ասեն սինկղ եւ հիդրայ ծովայինք. սինկղն շուն ասի երեք գլխի եւ հիդրայն եւս չարագոյն քան զնա, բայց զիւրեանց զորդիսն ոչ ուտեն, իսկ ձուկն զիւր մերձաւորութիւնսն ուտէ, եւ մարդ եւս ուտէ. ապա զիա՛րդ եւս իցէ ջուր: Այլ կան եւ հաւք ջրայինք եւ անասունք, եւ ո՛վ է, որ առանց ջրոյ սնանի: Արդ՝ գիրք զձուկն կենդանի ասեն եւ պատարագ եւս առնեն: Եկ եւ առ ձէթ. գիրք՝ զիւղ եւ զձէթ մի ասեն: Եսայի ասէ. «Փայտ իւղոյ» (Ես. ԽԱ, 19). եւ Դաւիթ ասէ. «Ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան.» (Սաղ. ՂԱ, 11) եւ աւետարանագիրն ասէ, վասն կուսանացն, թէ ձէթ ոչ առին (յմմտ. Մատթ. ԻԵ. 3). եւ եթէ «Տուք մեզ յիւղոյդ ձերմէ» (Մատթ. ԻԵ. 8): Ահա յայտ է, թէ իւղ եւ ձէթ մի են: Դարձեալ. ոչ եթէ Ադամ պանիր եկեր, այլ պտուղ ծառոյ եւ ել ի դրախտէն (յմմտ. Ծննդ. Գ. 6, 23): Իսկ վասն գինւոյ գիրք ասեն. «Զարբեցողսն եւս չար քան զդիւահարսն». զոր եւ առաքեալ ասէ. «Մի՛ արբեցողք» (Առակ. ԻԳ. 20) եւ ոչ ասաց թէ մի՛ ըմպէք գինի, զի եւ Նոյի հրամայեաց ըմպել գինի վասն տրտմութեան, զի ցՆոյ գինի ոչ էր, բայց միայն խաղող: Ապա Նոյի հրամայեաց առնել վասն տրտմութեան. նոյնպէս եւ մեզ ետ ի վայելչութիւն, ոչ եթէ արբենալ եւ զեղխել, այլ կերակուրս յորժամ ուտեմք ի նմին կամք, իսկ յորժամ արբենամք՝ զայլ խորհուրդս ածեմք զմտաւ եւ ոչ զԱստուծոյն, զոր եւ Եսայի ասաց. «Վայ այնոցիկ, որ յառնեն ընդ առաւաւտս՝ եւ գիետ լինին ցքւոյն» (Ես. Ե. 11) եւ գինւոյն, որ «Գինին, անդէն իսկ զնոսին այրէ» (Ես. Ե. 11): Դարձեալ ասէ. «քահանայն եւ մարգարէն յիմարեցան վասն ցքւոյն» (Ես. ԻԸ. 7): Յառաջ ուխտաւորքն Սամուէլ եւ Սամփսոն եւ որդիքն Յովնադաբայ միս ուտէին, բայց գինի եւ ցքի ոչ ըմպէին. զի գինի եւ հացաւղի եւ մեղրաւղի եւ ամբրաւաւղի մի են, զոր գիրք վկայեն, զի պանիր եւ իւղ եւ ձու եւ ձուկն եւ ձէթ մի են: Թէ ասիցէ ոք, թէ ձու յաւր Ի կենդանի լինի. եւ կենդանի անասնոյ, թէ յաւր Ի դարման ոչ լինի, մեռանի. բայց զոր Հին եւ Նոր Կտակարանաց ասացեալ է եւ վարդապետացն, որ են այս՝ Աթանաս, Կիւրեղ, Յովհաննէս, Սահակ Երուսաղէմի, Ակակ, Գրիգոր Աստուածաբան, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Նէոկեսարեայ, Բասիղ Կեսարացի, Երէնիոս, Իւրեգինէս, Եւսեբիոս, Կղեմենտոս, Տիմոթէոս, Յովհան Կոստանդնուպաւլսի, Ձէնոբ, Սեբերիանոս: Արդ՝ զոր սոցա կարգաւորեալ է, մարգարէից եւ առաքելոց վկայութեամբ չէ պարտ ումեք զանց առնել:

YMD 4. Les Écritures et les écrits des pères légitiment – contre tous les hérétiques et les sectaires – le fait que le samedi et le dimanche, on peut rompre le jeûne s'agissant du fromage, des œufs, de l'huile, du poisson et du vin, sachant que concernant le vin c'est l'ivresse qui est condamnable et non sa consommation. Et l'huile d'onction et l'huile d'olive représentent une seule et même chose.

ՀԻՊ Ա. Ըստ աւետեաց յիշատակին Թ. ամսեայ ծնեալ Տէրն իմ եւ Լ. ամեայ մկրտեցաւ ի նմին աւուր ըստ Ղուկայ Աւետարանչին. «Եւ Յիսուս էր ամաց իբրեւ Լ-ից» (Ղուկ. Գ. 23): Եւ յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ. վասն զի աննման էր յայլում աւուր ծնանել բանին Աստուծոյ եւ յայլում մկրտել եւ թերահաւատութիւն ի միջի արկանել, զի զայլ ծնեալ եւ զայլ մկրտեալ խոստովանեցան: Եւ վասն զի Բ. որդիս եւ Բ. բնութիւնս եւ Բ. դէմս խոստովանեցան, եւ այնր աղագաւ Բ. տաւնս յեղափոխեցին, որք ոչ հնազանդեցան առաքելական հրամանին եւ անհնազանդք էին եւ ուխտադրուժք: Իսկ եկեղեցի հաստատեցաւ այսպիսի տաւնիւք. ի մի աւուր տաւնել զծննդեանն եւ զմկրտութեանն եւ պատուել այսպէս՝ այրիք եւ ապաշխարողք եւ եկեղեցւոյ մանկունք, քահանայք եւ վանականք եւթնից եւթնեակք չափեսցեն պահաւք, բայց միայն ի շաբաթուն եւ ի միաշաբաթուն, եւ յաւուրս տաւնեկին Ը. աւր համաւրէն հաւատացելոց եղիցի պահք շաբաթն եւ միաշաբաթն, եւ յաւուր յորում դիպեսցի տաւնն Տեառն՝ կատարեսցեն:

Բ. Պայքար

ԵԱԿ ԾԷ. Եթէ ոք ժառանգաւոր վասն մարդկային երկիւղի Հրէի կամ հեթանոսի կամ թերահաւատի կորասցի, եթէ զանուն Քրիստոսի՝ ունի՝ լուծցի եւ որոշեսցի. իսկ եթէ զանուն ժառանգաւորի՝ լուծցի:

ՍԻՈ Զ. Եւ վարդապետ կարգեսցեն անխափան յեկեղեցիսն, զի մի՛ շնորհ աստուածգիտութեանն խափանեսցի եւ ճարակող աղանդք հերձուածոցն ի ներքս մտցեն:

ԹԱՏ Զ. Հարցումն. Զհաց եւ զգինի ո՞րպէս պատշաճեսցուք առ սուրբ սեղանն:

Պատասխանի. Զհաց պատարագին յորում աւուր մատուցանիցեն՝ ի նմին աւուր եփեսցեն խաչապէս դրոշմաւ. նոյնպէս եւ զգինին սուրբ բաժակին՝ սուրբ ամանաւք հանցեն ի սուրբ սեղանն, մի՛ ոք յանդգնեսցի խառնել ջուր ի յայն բաժակն, զի չէ այն աստուածահաճոյ, այլ անագորոյն մտաց. եւ որ առնէ ոք զայնպիսին, չէ քրիստոնեայ, եւ նզովեալ եղիցի մինչեւ դարձցի յաղանդոյն:

ԲԳԿ ՄՅԱ. Որք զանասնախառն բանսն ի բերանսն ունիցին եւ շրթամբք իւրեանց պղծին, մանաւանդ առ աստուածանմանեալ պատկերի, այս չարիք հաւասար է այնոցիկ, որք զՅոգին Սուրբ հայհոյեսցեն, որոց ոչ գոյ թողութիւն. նոքա ի հաղորդութիւն մի՛ մերձեսցին մինչեւ ի վախճան. ապա եթէ դարձցին եւ թողցեն զչարիսն՝ յետ Է. ամի ապաշխարութեան հաղորդեսցին աւրինաց: Իսկ եթէ քահանայ գտցի ի չարիսն կամ յուխտէ մանկանց՝ ի կարգէն լուծցին: Արդ՝ եթէ այսմ աղանդոյս գտցին հաղորդ որոշմամբ ըստ վերագոյն ասացելոցդ եւ դառնալով դարձցին անդրէն՝ յետ Ժ. ամի ապաշխարութեան մտցէ ի սուրբ եկեղեցին եւ Ք. ամ ընդ ապաշխարողսն ելցէ աղքատսիրութեամբ, եւ ապա հաղորդեսցի աւրինաց:

Եթէ ի մեր կողմանէս արժանաւորեալ էր աւծութեան եւ ձեռնադրութեան՝ դարձեալ անդրէն ի նոյն աշտիճան արժանաւորեսցի, իսկ եթէ զնոյն ընկալեալ էր՝ դարձեալ երկրորդութեամբ ընկալցի զաւծութիւնն եւ զձեռնադրութիւնն առանց ապաշխարութեան, զի նոցայն ոչ հոգեւորապէս ասի:

HYP 1. L'Évangile témoigne que notre Seigneur est né au bout de neuf mois et qu'il a été baptisé 30 ans après le même jour (Lc 3, 23). Le discours concernant le baptême précise que pour le Verbe de Dieu naître un jour et être baptisé un autre jour est impensable. Puis l'incroyance se propagea car ils confessèrent un qui est né, et un autre qui est baptisé du fait qu'ils ont confessé deux Fils, deux natures et deux personnes, ils ont forgé deux fêtes en n'obéissant pas et en transgressant l'ordre apostolique. Mais l'Église a été établie avec les fêtes suivantes: célébrer la Nativité et le Baptême le même jour et l'honorer ainsi, et les veuves, les pénitents, les clercs, les prêtres et les religieux calculeront leur jeûne sept fois sept jours, sauf le samedi et le dimanche, et durant ces jours de festivités, l'ensemble des fidèles jeûnera durant huit jours y compris le samedi et le dimanche, et ils célébreront quel que soit le jour, la fête du Seigneur.

B. La lutte contre l'hérésie

CCL 57. Le clerc qui par crainte humaine devant un juif, un païen ou une personne de peu de foi renie le nom du Christ sera déposé et exclu; s'il se repent on le recevra comme laïc.

SIO 6. Les *vardapet*s doivent prescrire sans obstacle des ordonnancements au sein des églises, de façon à ce que la connaissance de Dieu ne soit pas entravée et que les sectes dévorantes d'hérétiques ne s'insèrent pas dans celles-ci.

THD 6. Le pain du sacrifice doit être cuit avec le sceau de la croix le jour même où le sacrifice est offert; de même, le saint calice doit être présenté avec la sainte vaisselle sur l'autel, et personne n'aura l'audace de mélanger l'eau dans le calice, car ceci est inhumain et désagréable à Dieu; et celui qui agit ainsi n'est pas un chrétien, et il sera anathématisé jusqu'à ce qu'il revienne de sa secte.

ECB 271. Ceux qui évoquent la bestialité en parole, notamment en évoquant l'image de Dieu, sont équivalents à ceux qui outragent le Saint-Esprit et ils seront exclus de la communion jusqu'à leur mort; mais s'ils se convertissent et expient leur crime, ils communieront après sept ans de pénitence. Mais si c'est un prêtre ou un clerc – qui se trouve dans cette secte –, il sera déposé de son rang et après s'être converti, et avoir fait pénitence pendant dix ans, il rentrera à l'église, puis pendant deux ans, il sortira avec les pénitents et par l'amour envers les pauvres, il pourra communier.

S'il avait été considéré par nous (*i.e.* Basile de Césarée) comme digne de l'onction et de la consécration, après s'être converti, il retrouverait son rang en recevant une seconde onction et une seconde consécration sans faire pénitence.

ԳԱՍ ԻԶ. Որք վերակոչին յեպիսկոպոսութիւն, քննեսցի՝ եթէ կարասցէ հերքել զհերձուածողացն հոյլս տեղեկութեամբ գրոց սրբոց. ապա եթէ չիցէ առ այս բաւական՝ դադարեսցէ, թէեւ ի սրբոց իցէ:

Գ. Հերձուածողների հետ ամուսնութեան արգելանք

ԼԱԻ ԼԱ. Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել կամ առ հերձուածողս, բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի:

ԲԱԿ ԺԱ. Իսկ զհաւատաւորացն պոռնկութիւն մի՛ ոք համարեսցի յամուսնութիւն, այլ մանաւանդ յափշտակել զնոսա յայնպիսի շաւշափմանէ, քանզի այսոքիկ իմաստք եկեղեցւոյ աւգտութեան զգուշութիւն գործեն եւ զմէնջ հերձուածողացն բռնահարութիւն ոչ գտանել:

ԿԵՆ ՁՁ. Ոչ է պարտ ուղղափառաց եկեղեցւոյ ընդ հերետիկոսաց ամուսնութիւն առնել:

Դ. Հերձուածողների հետ աղօթելու եւ հաղորդուելու արգելանք

ԵԱԿ ԼԱ. Մի զոք յաւտարաց եպիսկոպոսաց կամ երիցանց կամ սարկաւագաց առանց ընծայական թղթոյ ընդունել, եւ կամ թէ ընդունիցին, սակայն քննել, եթէ իցեն քարոզ բարեպաշտութեան՝ ընկալեալ լիցին, ապա թէ ոչ՝ զպէտս նոցա տացեն, իսկ ի հաղորդութիւն մի՛ ընկալցին, վասն զի բազում ինչ լինի խաբէութեամբ:

ԵԱԿ ԽԳ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թերահաւատից միայն աղաւթակից լեալ՝ որոշեսցին. ապա թէ եւ նոցա հրամայեսցին իբրեւ քահանայից աղաւթել՝ լուծցին:

ԵԱԿ ԽԴ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զթերահաւատից զմկրտութիւն ընկալեալ կամ զպատարագ՝ լուծանել հրամայեմք, զի «զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ զինչ մասն հաւատացելոյն ընդ անհաւատին» (Բ. Կորնթ. Զ. 15):

ԵԱԿ Կ. Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցէ ի ժողովարան Հրէից կամ թերահաւատից աղաւթել՝ լուծցի:

ՀԱՅ ԺԳ. Ի հերձուացող բանից՝ եթէ եպիսկոպոս ոք կամ երէց կամ մոնազոն որք եւ իցեն, անսացեալ խրատու առաքելոյն՝ ի բաց որոշեսջիր, քանզի բազում ասողք են, եթէ առ կաշառս եւ չեն մեղք: Ասէ. «Մատնեա զեղբայր քո եւ անմեղ ես». այնպիսեացն եթէ ներեսցէ ոք կամ ախորժեսցէ, կցորդ լինիցի չարեաց գործոց նոցա:

ԼԱԻ Զ. Չէ արժան այլազգւոյն եւ հերձուածողին՝ի յամելն իւրում յայսպիսի իրս՝ ի տաճար Աստուծոյ մտանել:

GNT 26. Pour ceux qui sont appelés à l'épiscopat, on examinera s'ils sont capables de réfuter les hérétiques par des arguments tirés des saintes Écritures; mais s'ils ne sont pas capables de faire cela, qu'ils cessent de vouloir accéder à l'épiscopat, même s'ils mènent une vie sainte.

C. L'interdiction de mariage avec les hérétiques

LAO 31. Il ne faut pas contracter alliance avec les païens (litt. étrangers) ou les hérétiques, sauf s'ils acceptent de croire en la sainte Église.

BAC 11. Et personne ne doit considérer la fornication des religieuses comme un mariage et plus encore, il convient de les préserver de tels contacts, sachant que la posture (litt. la tyrannie) des hérétiques nous est étrangère.

SCN 86. Il ne faut pas que les fidèles orthodoxes de l'Église contractent mariage avec des hétérodoxes.

D. L'interdiction de prier et de communier avec les hérétiques

CCL 31. Il ne faut aucunement recevoir un évêque, un prêtre ou un diacre sans une lettre de recommandation qui, par ailleurs devra être examinée, et si ce sont des prédicateurs de la vraie foi, on les accueillera, sinon, on leur fournira le nécessaire, mais sans les accueillir dans la communion, car bien des choses peuvent survenir par tromperie.

CCL 43. L'évêque, le prêtre ou le diacre qui prie avec gens de peu de foi sera exclu; mais s'il les autorise à prier comme des prêtres, il sera déposé.

CCL 44. L'évêque, le prêtre ou le diacre qui admet le baptême ou le sacrifice des gens de peu de foi sera déposé (2 Co 6, 15).

CCL 60. Le clerc ou le laïc qui se rend dans l'assemblée des juifs ou des gens de peu de foi pour prier sera déposé.

CPC 13. Celui qui ne s'éloigne pas de l'évêque, du prêtre ou du moine qui profère des propos hérétiques et se laisse corrompre par eux devient complice de leurs actes malfaisants.

LAO 6. Le païen (litt. étranger) ou l'hérétique, tant qu'ils persévèrent dans cet état, n'entreront pas dans le temple de Dieu.

ԼԱՒ ԼԳ. Չէ մարթ ընդ այլազգիս կամ ընդ հերձուածողս յաղաւթս կալ:

ՆԵՆ ԼԶ. Երախայն կամ դադրեսցէ ի մեղանչելոյն կամ ի բաց որոշեսցի:

ՅԻԱ ԻԹ. Ոչ է պարտ ամենեւին անխտիր լինել եւ հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց, այլ խորշել ի նոցանէ, եւ ոչ հաւասարէ ընդ նոսա ի հոգեկան եւ ի մարմնական սեղանս, զի պատկառեսցին եւ փափագեսցին միաբանել ընդ ուղղափառութեան աւանդիչս:

ԿԵՆ Կ. Ոչ է պարտ ընդ հերետիկոսս ճաշել կամ աղաւթել, կամ աւրհնութիւն առնուլ ի նոցանէ:

ԿԵՆ ԿԳ. Ոչ է պարտ աւրհնել ընդ Հրէայս կամ ընդ հերձուածողս կամ ընդ հեթանոսս, եւ ոչ տաւնական ընծայս առնուլ:

ԿԵՆ ՁԴ. Ոչ է պարտ հերետիկոսաց ընդ մեզ յաղաւթս կալ:

ԿԵՆ ՁԵ. Ոչ է պարտ ի հանգստարանս կամ ի վկայարանս հերետիկոսաց երթալ:

ՄԱԿ Ե. Եւ ոպէս մերձեսցուք առ սեղանն սուրբ եւ կենդանարարն խորհուրդ:

Առ այդ անմահութեան վիճակ՝ մի՛ ոք երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ եւ մի՛ գործովք անարժանութեամբ մերձ լինել յանդգնեսցի, զի մի՛ զկամս Աստուծոյ բարկութեանն յամենայն երկիր շարժեսցէ, եւ ինքն լուիցէ զասացեալսն՝ «Դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ, զի ատեցեր զխրատ իմ» (Սաղ. ԽԹ. 16-17): Այլ ուղիղ գնացիւք եւ ճշմարիտ հաւատով մատուցեալ՝ լուսաւորեսցի, եւ այլոց ինքեամբ գործեսցէ փրկութիւն:

Ե. Թերահաւատների վկայութեան անընդունելիութիւնը

ԵԱԿ ԿԹ. Եւ ի վկայութիւն զեպիսկոպոսէ զթերահաւատ ոք մի՛ ընդունել. այլ եւ ոչ գհաւատացեալ զմի, «Քանզի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան» (Բ. Օրենք, ԺԹ. 15; Մատթ. ԺԸ. 16, Ա. Տիմ. Ե. 19):

Զ. Հերձուածողների մկրտութիւն

ԵԱԿ ԽԴ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զթերահաւատից զմկրտութիւն ընկալեալ կամ զպատարագ՝ լուծանել հրամայեմք, զի «զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ զինչ մասն հաւատացելոյն ընդ անհաւատին» (Բ. Կորնթ. Զ. 15):

ԵԱԿ ՅԹ. Եպիսկոպոս կամ երէց՝ զոր ճշմարտութեամբ ունիցի զմկրտութիւնն եւ վերստին մկրտեսցէ զնա կամ զպղծեալն յամպարշտութեանց մկրտեսցէ՝ անկցի յեպիսկոպոսութենէն, որպէս ծիծաղելով զխաչիւն եւ զմահուն տեառն, եւ ոչ ընտրէ քահանայն սուտ քահանայացեալն:

LAO 33. Il est interdit de prier avec les païens (litt. étrangers) ou avec les hérétiques.

NEN 36. Il ne faut jamais héberger les hérétiques chez soi car cela est interdit par les canons apostoliques.

YAP 29. Il ne faut absolument pas supprimer les distinctions et communier avec les hérétiques, mais il faut les éviter et ne pas se mêler à eux pour les repas spirituels et corporels, de sorte qu'ils aient honte et désirent s'unir avec les dépositaires de l'orthodoxie.

SCN 60. Il ne faut ni manger, ni prier avec les hétérodoxes, ni recevoir d'eux la bénédiction.

SCN 63. Il ne faut pas offrir de louanges avec les juifs ou avec les hérétiques, ou avec les païens ni accepter d'eux les présents festifs.

SCN 84. Les hétérodoxes ne doivent pas prier avec nous (*i.e.* les croyants).

SCN 85. Il ne faut pas aller dans les tombeaux ou dans les *martyria* des hétérodoxes.

MCJ 5. Celui qui fait preuve de duplicité ou de manque de foi, ou se comporte mal ne doit pas s'approcher de l'eucharistie, car il déclencherait la colère de Dieu sur toute la terre (Ps 49, 16-17). Mais il faut s'en approcher avec une démarche et une foi droite en vue de notre propre salut et celui des autres.

E. Ne pas recevoir les témoignages des gens de peu de foi

CCL 69. Il ne faut pas recevoir le témoignage d'une personne de peu de foi contre un évêque ni même celui d'un seul croyant; mais il faut que deux ou trois témoins confirment la chose (Dt 19, 15; Mt 16, 18; 2 Co 13, 1).

F. Le baptême des hérétiques

CCL 44. L'évêque, le prêtre ou le diacre qui admet le baptême ou le sacrifice des gens de peu de foi sera déposé (2 Co 6, 15).

CCL 79. L'évêque ou le prêtre qui baptise à nouveau celui qui a été régulièrement baptisé ou qui ne baptise pas celui qui a été souillé chez les hérétiques (litt. les mécréants) sera déchu de l'épiscopat, du fait qu'il se moque de la croix et de la mort du Seigneur, et ne distingue pas le le véritable prêtre du faux prêtre.

ԵԱԿ Զ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց, ըստ Աստուծոյ բարբառոյն, ոչ մկրտեսցէ ի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգին, այլ յերիս հարս եւ յերիս որդիս եւ յերիս հոգիս՝ անկցի ի քահանայութենէն:

ԵԱԿ ԶԱ. Եպիսկոպոս կամ երէց որ ոչ յերիս մկրտութիւնս միոյ սըրբութեանն կատարեսցէ, այլ ի մի մկրտութիւն՝ որ ի մահն Տեառն տուաւ՝ անկցի ի քահանայութենէն, քանզի ոչ ասաց մեզ Տէր. «Ի մահս իմ մկրտեցէք, այլ գնացէք աշակերտեցէք զնոսա եւ մկրտեցէք յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19): Բայց որ մկրտելոցն է՝ ուսցի. եթէ Հայր ոչ խաչեցաւ եւ ոչ ծնունդ կրեաց մարդոյ, եւ ոչ Հոգին սուրբ մարդ եղեւ, եւ ոչ չարչարանս կրեաց, քանզի ոչ մարմնացաւ, բայց Փրկիչն փրկեաց զաշխարհս, ի վերայ հասեալ բարկութեամբ Միածին որդին: Վասն զի մարմնացաւ իւրով մարդասիրութեամբն, ի կուսէն մարմին ստեղծեալ. քանզի իմաստութիւն շինեաց իւր տուն (Առակ Թ. 1), որպէս արարիչ. քանզի խաչի համբերեաց եւ ապրեցոյց զաշխարհս յանակնկալ բարկութենէն:

Արդ՝ մկրտիմք յանուն Հաւր՝ ոչ որպէս մարդ եղելոյ կամ չարչարեցելոյ, եւ յանուն Որդւոյ՝ որպէս կրեցելոյ զծնունդն՝ որպէս համբերելոյ խաչի՝ որպէս մեռելոյ եւ յարուցելոյ, եւ յանուն Հոգւոյն սրբոյ՝ համագոյական Հաւր եւ Որդւոյ: Իսկ որք ոչ յայս մկրտեն, որպէս ոչ գիտելով զխորհուրդ բարեպաշտութեան, անկցին ի քահանայութենէ:

ԵԱԿ ԶԲ. Որ զՀայր ասէ չարչարեալ՝ ամպարիշտ է եւ ծանրագոյն քան զՀրէայսն՝ ընդ Քրիստոսի եւ զՀայր բեւեռելով. իսկ որ զՈրդին ուրանայ զմիածինն վասն մեր մարմնացեալ եւ խաչի համբերեալ՝ աստւածամարտ է եւ սրբոցն պատերազմող: Իսկ որ զՀոգին սուրբ Հայր անուանէ կամ Որդի՝ տգէտ եւ անմիտ է, քանզի Որդին արարչակից է Հաւր եւ աթոռակից եւ աւրէնսդրակից եւ դատաւոր եւ յարութեան պատճառ. եւ Հոգին սուրբ համագոյ, քանզի երեք են առանձնաւորութիւնք համագոյական աստուածութեանն. վասն զի առ մեաւք Սիմոն կախարդ զգայռեաւ ձգելով ժողովրդեանն մոլար եւ անհաստատ եւ չար յինքն հոգի, եւ մի եռանուն գոլ լեզուանեցաւ զԱստուած: Իսկ երբեմն զչարչարանսն Քրիստոսի եւ զծնունդն եհատ: Արդ՝ դուք, ով տենչալիք, ի մի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգի երիցս մկրտեցէք ըստ Տեառնն կամաց եւ ըստ մերոյ հոգւոյն հրամանի:

Է. Դարձ առ ուղղափառ հաւատ

ԵԱԿ ԿԳ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ երկրորդ ձեռնադրութիւն ունիցի յումէքէ՝ լուծցի նա եւ որ ձեռնադրեացն, բայց եթէ ցուցցէ ի թերահաւատից ունել նմա զձեռնադրութիւնն, քանզի յայսպիսեացս զմկրտեալսն կամ զձեռնադրեալսն ոչ հաւատացեալս եւ ոչ ժառանգաւորս լինել հնարէ:

ՆԻԿ Ը. Ոյք անուանեն զինքեանս երբեմն սուրբս մերձենալ առ առաքելական եւ կաթողիկէ եկեղեցի, կամ եղեւ սուրբ եւ մեծ ժողովոյն, զի ձեռնադրութիւնս ընկալցին եւ ապա կացցեն ի պաշտամանն: Նախ քան զամենայն, գրով խոստովանութիւն տացեն, զի յանձին կալցին եւ զհետ երթիցեն ըստ կարգի կաթողի-

CCL 80. L'évêque ou le prêtre qui ne baptise pas selon la parole de Dieu, au nom du Père, du Fils et du Saint-Esprit, mais au nom de trois pères, de trois fils et de trois esprits sera déchu du sacerdoce.

CCL 81. L'évêque ou le prêtre qui ne procède pas aux trois immersions de l'unique baptême (litt. sainteté), mais à une seule immersion conférée pour la mort du Seigneur, sera déchu du sacerdoce, car le Seigneur ne nous a pas dit: «Baptisez pour ma mort», mais «Allez, enseignez toutes les nations et baptisez-les au nom du Père, du Fils et du Saint-Esprit» (Mt 28, 19). Mais que celui qu'on baptise apprenne que le Père n'a pas été crucifié et n'est pas passé par une naissance humaine, et que le Saint-Esprit n'est pas devenu un homme, et n'a pas souffert du fait qu'Il ne s'est pas incarné, mais le Sauveur, Fils Monogène, a sauvé le monde de la colère imminente. Car il s'est incarné en raison de sa philanthropie, prenant un corps incarné de la Vierge, car la sagesse s'est bâti une maison (Pr 9, 1), comme le Créateur; du fait qu'il a enduré la croix et a épargné le monde d'une colère inopinée.

Donc nous sommes baptisés au nom du Père, non pas comme s'il était devenu un homme ou avait souffert, et au nom du Fils, comme celui qui a connu la naissance et a souffert la croix, qui est mort et a ressuscité, et au nom du Saint-Esprit qui est consubstantiel avec le Père et le Fils. Et ceux qui ne baptisent pas de cette façon seront déposés du sacerdoce, du fait qu'ils ignorent le mystère de la piété.

CCL 82. Celui qui affirme que le Père a souffert est un hérétique (litt. mécréant) et est pire que les juifs, car il mélange le Père avec le Fils; mais celui qui nie le fait que le Fils Monogène s'est incarné et a enduré la croix pour notre salut est un ennemi de Dieu et il guerroie contre les saints; mais celui qui qualifie l'Esprit Saint de Père ou de Fils est ignorant et insensé, car le Fils est co-créateur avec le Père et il siège avec lui sur le trône céleste, et légifère avec lui, et il est le juge et la cause de la résurrection; le Saint-Esprit leur est consubstantiel, car la divinité consiste en trois hypostases consubstantielles; car, c'est de nos jours que Simon le Mage a attiré vers lui par ses vomissements l'âme errante, inconstante et mauvaise des gens en clamant avec désinvolture que Dieu a trois noms. Et ainsi, il renonça aux souffrances et à la naissance du Fils. Donc vous, très chers, baptisez par trois immersions au nom du Père, du Fils et du Saint-Esprit, selon la volonté du Seigneur et l'ordre de notre esprit.

G. Le retour à la foi orthodoxe

CCL 63. L'évêque, le prêtre ou le diacre qui reçoit une seconde ordination sera déposé – de même que l'ordinand –, sauf s'il démontre que sa première ordination lui avait été conférée par des personnes de peu de foi, car ceux baptisés ou ordonnés par de telles personnes ne sont pas des fidèles ou des clercs.

NIC 8. Ceux qui se disent saints (*i.e.* les novatianistes) pour adhérer à l'Église catholique et apostolique recevront l'imposition des mains et garderont leur ministère, à condition de promettre par écrit de suivre les lois de l'Église. Si les clercs qui ont fait pénitence – en respectant les temps assignés – après avoir failli

կէ եկեղեցւոյ աւրինացն, այսինքն է աւրինացն հաւասարել: Վասն այնոցիկ որ մինչդեռ ի հալածանսն էին՝ անկան ի ճշմարտութենէն, վասն այնոցիկ եւ ամք կարգեալ են եւ ժամանակք ընտրեալ են, զի յանձն առցեն զամենայն զինչ եւ հաճոյ եղեւ կաթողիկէ եկեղեցւոյ, ուր եւ իցեն ամենեքեան, թէ ի գեաւղս, թէ ի քաղաքս, եւ նոքին միայն գտանիցին, ձեռնադրեսցին՝ ուր գտանին, եւ ի պաշտաման կացցեն ըստ նմին սովորութեան: Եւ ամենայն ոք, որ կաթողիկէ եկեղեցւոյ առ եպիսկոպոսք կամ երէցք մերձենայցեն, յայտ է զի եպիսկոպոս եկեղեցւոյն կալցի զպատիւ եպիսկոպոսին, այլ որ անուանեալ կաթարոսացն եպիսկոպոս՝ զերիցու պատիւ ընկալցի, բայց եթէ կամ իցէ եպիսկոպոսին՝ զպատիւ անուանն միայն տալ նմա: Ապա եթէ այս նմա հաճոյ ոչ իցէ՝ զմտաւ ածցէ կամ տեղի կամ գաւառ վերակացութեան կամ երիցութեան, վասն զի ի պաշտամանն կացցէ, զի մի՛ ի քաղաքին երկու եպիսկոպոսք երեւիցին:

ՆԻԿ ԺԹ. Որք հերձուածեցան ի հերձուածս Պաւղովնիայի հերձուածողի եւ յետ այսորիկ ապաւինեցան ի կաթողիկէ եկեղեցի՝ սահման եղեալ է, զի դարձեալ մկրտեսցին ի կաթողիկէ եկեղեցի, զի այն ոչ լիութեամբ էր. ապա եթէ ոք ի նոցանէ յանցեալ ժամանակս ընդ ուխտիւն լինին, զի թէ ամբիծք կամ անարատք գտանիցին ձեռնադրեսցին յեպիսկոպոսէն եկեղեցւոյ սրբոյ. ապա եթէ ի հարցանելն եւ ի քննելն անարատք չգտանիցին, արժան է լռեցուցանել զայպիսիսն: Սոյնպէս եւ վասն սարկաւագացն եւ ամենայն ոք որ եւ իցեն ընդ կանոնաւք. նոյն կարգ կացցէ: Ցիշեցաք եւ վասն սարկաւագաց կանանցն, որք կերպարանաւք ձեռնադրութիւն ունին, զի ամենայն իրաւք իբրեւ զմի յաշխարհականաց կացցեն:

ԼԱԻ Է. Վասն այնոցիկ, որ ի հերձուածողաց իցեն, այսինքն որ ասին Նաւատացիք կամ Չորեքտասաներորդեայք, ի դառնալն իւրեանց մի՛ յերախայս մի՛ ի հաւատացեալս մի՛ ընդունիցիք յառաջ մինչ չեւ նզովեալ եւ ուրացեալ զամենայն հերձուածողս, առաւել զոր գիտէինն եւ ուսեալ էին. յետ այսորիկ որք կոչին հաւատացեալք, ուսցին զհաւատոյս մերոյ զխորհուրդ եւ աւծցին զաւծումն սրբութեան եւ հաւասարեսցին աւրինաց:

ԼԱԻ Ը. Վասն այնոցիկ որք են ի հերձուածոյն Փռիւգացւոցն, ի դառնալն իւրեանց, եթէ յուխտէն իւրեանց իցեն մեծամեծաց, այսպիսիքս ամենայն փութով նախ ուսցին եւ ապա մկրտեսցին յեկեղեցւոյ մերոյ յեպիսկոպոսաց եւ յերիցանց:

ՍԱՐ ԺԹ: Եթէ յետ այնորիկ անդրէն կարգաւորեալ եպիսկոպոսին՝ այսուհետեւ խաղաղութիւն հաստատեսցի, զի մի՛ նշխարք երկպառակութեան մնասցեն յեկեղեցական կանոնս. թուեցաւ եւ որք ի Մովսէսէ կարգեցան եւ որք յԵւտիքիոնսէ, քանզի նոցա եւ ոչ մի ինչ մեղանք գտան՝ զամենեսին ընդունել:

ՍԱՐ Ի. Քանզի հեզք եւ համբերողք պարտիմք լինել եւ հանապազորդ առ ամենեսեան ունել գորովս, որք միանգամ ի վիճակէ եկեղեցական յառաջ մատեան յոմանց եղբարց մերոց, եթէ կամեսցին դառնալ անդրէն, յորս եւ անուանեցան յեկեղեցիս, յայսմհետէ ընդունել, բայց Եւտիւքիանոսի որ չեւ եպիսկոպոսի անուն

lors des persécutions, sont les seuls présents dans les villages ou les villes où ils se trouvent, ils seront consacrés là et demeureront dans leur ministère; selon la même coutume, si un évêque cathare (*i.e.* novatianiste) arrive dans un lieu où se trouve déjà un prêtre ou un évêque de l'Église catholique, seul ce dernier aura la dignité épiscopale. Mais l'évêque cathare accédera à la dignité sacerdotale, à moins que l'évêque de l'Église catholique veuille lui donner simplement le titre honorifique d'évêque. Sinon, il l'installera dans un autre lieu avec charge de chorévêque ou de prêtre afin qu'il demeure dans le ministère; mais il ne peut jamais y avoir deux évêques dans une même ville.

NIC 19. Les paulianistes qui viennent à l'Église devront être rebaptisés car leur baptême n'était pas complet; mais ceux qui faisaient partie de leur clergé, à condition qu'ils soient sans souillure, seront consacrés par l'évêque de l'Église, sinon on leur enlèvera leur ordre. Cette disposition s'appliquera aussi aux diacres et à tous ceux qui sont dans le clergé. Quant aux diaconesses qui apparemment ont reçu la consécration, elles se tiendront de toute façon comme n'importe quel laïc.

LAO 7. Ceux qui reviennent de l'hérésie dite des novatianistes ou quartodécimans et qui se convertissent ne seront reçus ni parmi les catéchumènes, ni parmi les *credentes*, avant qu'ils n'aient anathématisé et renié tous les hérétiques, surtout ceux qui les connaissaient; ensuite, les *credentes* apprendront le mystère de notre foi, puis seront baptisés et communieront.

LAO 8. Les membres de l'hérésie des Phrygiens (*i.e.* les montanistes) qui se convertissent, s'ils font partie de leur clergé (litt. «les grands»), on les instruira avec un très grand soin, puis ils seront baptisés par les évêques et les prêtres de notre Église.

SAQ 19. Les clercs établis par Moïse et Eutychinos qui sont tombés dans l'erreur seront reçus puisqu'aucune faute n'a été trouvée chez eux.

SAQ 20. Il faut être doux, patient et amical avec les clercs qui viennent de la part de certains de nos frères, et il faut les recevoir s'ils veulent revenir dans les églises pour lesquelles ils avaient été nommés. Mais Eutychianios et Moïse ne pourront pas réclamer pour eux l'épiscopat mais seulement la communion laïque.

անձին պարտ է վրէժխնդրել, այլ եւ ոչ զՄովսէսէ եպիսկոպոսութեան արժանի գոլ կարծել: Իսկ եթէ աշխարհական հաղորդութիւն պահանջեսցեն, ոչ էր պարտ նոցա ուրանալ: Ամենեքեան ասացին. Հաճոյ է:

ԲԱԿ Բ. Արդ հաճոյ թուեցաւ այժմ որք ի սկզբանէ ի վաղուց մկրտեալ են յաղանդաւորաց, զայն ամենայն իրաւք արհամարհել. իսկ որ բաժանմունս առնեն՝ զնոսա ընդունել, քանզի դեռեւս յեկեղեցւոջ են, իսկ որ արտաքոյ ժողովս կատարեն, եւ դարձցի ոք ի նոցանէն եւ արժանաւորապէս ապաշխարութիւն ցուցանէ եւ ի դարձ փրկութեան եկեսցէ եւ ձեռնադրութեան շնորհ ունէր՝ արժանի է անդրէն ի նոյն աշտիճան ընդունել, քանզի զղջացեալ ապաշխարեաց:

ԿԵՆ Ը. Պարտ է ձեռնադրել զայնոսիկ որ ի Նաւատացւոց ժառանգութենէն գրովք հաւանեալք ուղղափառութեան հաւատոյ, թէպէտ եւ եպիսկոպոսք իցեն, եկեալքն աւծանել:

ԿԵՆ ԺԹ. Պարտ է որք ի հերձուածողացն դառնան՝ Պաւլիանոսք եւ Պոնտացիք՝ մկրտել, թէպէտ եւ եպիսկոպոսք իցեն:

ԳԱՍ Ա. Եթէ ոք ասիցէ՝ զՈրդին Աստուծոյ արարած ըստ Արիոսի մոլորութեանն, եւ ոչ էական եւ անսկզբնական ընդ Հաւր եւ համապատիւ, որպէս են ըստ տիեզերական սիւնհոդոսին ՅԺԸ-իցն, այնպիսին մերժեսցի յեկեղեցւոյ, եւ մի՛ կալջիք հաղորդութիւն ընդ նոսա, զի նզովեալ են: Ապա եթէ դարձցին զղջմամբ խոստովանելով զմիասնական Սուրբ Երրորդութիւնն ընդ մեզ, ուղղափառ հաւատով անսկիզբն Հայր, անսկիզբն Որդի, անսկիզբն Հոգին Սուրբ դաւանելով՝ ի նախնական սովորութենէն հեռացեալք եղիցին, ընկալեալք նախ ձեռնադրութեամբ ապաշխարութեան, ապա վերստին ծննդեամբ սուրբ աւազանին եղիցին ընդունելիք:

ԳԱՍ Բ. Իսկ որք զՍաբէլի զուգահաւաքմանն ի միասին զդսրովելի ախտն ախտանան եւ զՄակեդոնի հոգէմարտի զ'ի բաց ընկենլի զթիւր վարդապետութիւնն, մի՛ ոք այնպիսեացն կցորդեսցի, այլ նզովեսցեն, որպէս արտադրեցին սուրբ հարքն ՃՃ., որք ի Կոստանդնուպաւլիս գումարեցան, ի բաց տրոհելով զչար վիշապն ի մեռեալս: Արդ՝ եթէ ոք ի նոցանէ դարձցի ուրացեալ զաղանդն նոցա՝ նզովիւք ուսցին նախ զհաւատս առաքելական եկեղեցւոյ եւ ապա մկրտեսցին ի կաթողիկէն սուրբ, եւ ոչ վաղվաղակի կալցին աշտիճան ինչ մինչեւ փորձեսցին ըստ առաքելոյն խրատու:

2. «Եղծ աղանդոց»[1]

Ա. Ուղղափառութիւն եւ չարափառութիւն

ԵԱԿ ԶԲ. Որ զՀայր ասէ չարչարեալ՝ ամպարիշտ է եւ ծանրագոյն քան զՀրէայսն՝

[1] Ակնյայտ է, որ մեր այս ենթավերնագիրը փոխառութիւն է մեծ աստուածաբան Եզնիկ Կողբացու կողմից մօտ. 448 թ.գրուած համանուն երկից:

BAC 2. Ceux qui ont été baptisés par des hérétiques (litt. sectaires) seront totalement rejetés contrairement à ceux qui ont été baptisés par des schismatiques et qui appartiennent malgré tout à l'Église; quant à ceux qui après avoir constitué des Églises séparées se rachètent par la pénitence, on les recevra, de même que le clerc qui pourra garder son rang, car il s'est repenti par la pénitence.

SCN 8. Les clercs novatianistes qui acceptent par écrit la foi orthodoxe seront consacrés y compris leurs évêques.

SCN 19. Les hérétiques paulianistes et pontiens qui reviennent à l'Église devront être baptisés, même s'ils sont évêques.

GNT 1. Celui qui à la suite d'Arius dit que le Fils de Dieu est une créature et qu'il n'est ni incréé, ni sans commencement avec le Père, ni égal en honneur, comme ils le sont selon le concile universel des 318, sera écarté de l'Église, et ne communiez pas avec eux, car ils sont anathématisés. Mais s'ils se convertissent avec componction et confessent avec nous la sainte Trinité consubstantielle, professant avec une foi orthodoxe le Père sans commencement, le Fils sans commencement et le Saint-Esprit sans commencement, ils seront reçus, d'abord dans la pénitence par l'imposition des mains, puis après une seconde naissance dans la sainte piscine.

GNT 2. Il ne faut jamais se joindre aux sabelliens qui confondent comme égaux le Père et le Fils ou aux macédoniens, mais il faut les anathématiser comme l'ont formulé les 150 saints Pères à Constantinople. À présent, si l'un d'eux veut revenir à l'Église, après avoir renié leur secte, il apprendra la foi orthodoxe avec des anathèmes contre les hérésies avant d'être baptisé, mais on ne l'admettra pas immédiatement à la cléricature, afin d'éprouver longuement sa foi selon le précepte apostolique.

2. «Contre les sectes»[1]

A. Orthodoxie et hétérodoxie

CCL 82. Celui qui affirme que le Père a souffert est un hérétique (litt. mécréant)

[1] Notre titre représente évidemment un hommage au chef-d'oeuvre – composé vers 448 – du grand théologien Eznik Kołbac'i.

ընդ Քրիստոսի եւ զՀայր բեւեռելով. իսկ որ զՈրդին ուրանայ զմիածինն վասն մեր մարմնացեալ եւ խաչի համբերեալ՝ աստւածամարտ է եւ սրբոցն պատերազմող: Իսկ որ զՀոգին սուրբ Հայր անուանէ կամ Որդի՝ տգէտ եւ անմիտ է, քանզի Որդին արարչակից է Հաւր եւ աթոռակից եւ աւրէնսդրակից եւ դատաւոր եւ յարութեան պատճառ. եւ Հոգին սուրբ համագոյ, քանզի երեք են առանձնաւորութիւնք համագոյական աստուածութեանն. վասն զի առ մեաւք Սիմոն կախարդ զգայռեաւ ձգելով ժողովրդեանն մոլար եւ անհաստատ եւ չար յինքն հոգի, եւ մի եռանուն գոլ լեզուանեցաւ զԱստուած: Իսկ երբեմն զչարչարանսն Քրիստոսի եւ զծնունդն եհատ: Արդ՝ դուք, ոմն տենչալիք, ի մի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգի երիցս մկրտեցէք ըստ Տեառնն կամաց եւ ըստ մերոյ հոգւոյն հրամանի:

ՆԻԿ Գլուխ հաւատոց. Ցիշխանութեանն Պաւղովնի եւ Յուղիանոսի փառաւորաց եւ լուսաւորաց, յամաց Աղեքսանդրի ՈԼՁ. յամսեանն մարերի իբրեւ ԻԲ. էր ամսոյն, յառաջ քան զԺԳն կաղանդին յունի ամսոյ ի Նիկիայ, մայր քաղաքացն Բիւթանացւոց, եղաւ հաւատս՝ Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ: Այս են հաւատք, զոր եդին սուրբ հարքն: Ցառաջ վասն Արիոսի հայհոյութեանն յասելն թէ արարած է Որդին Աստուծոյ եւ վասն ամենայն հերձուածողաց՝ Սաբեղի, Փոտինոսի եւ Պաւղոսի Սամստացւոյ եւ Մանիքեցւոց եւ Վաղենտինաց եւ Մարկիովնացւոց եւ վասն ամենայն հերձուածողաց[1], որք յարեան ի վերայ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ, զորս դատապարտեցին ի Նիկիայ քաղաքի իբրեւ ժողովեալ էին եպիսկոպոսք ՅԺԸ. որոց անուանքն ըստ իւրաքանչիւր իշխանութեան գրեալ է, որ զի փութապէս ծառայք Աստուծոյ առաւելագոյն փոյթ եդին զարեւելեաց եպիսկոպոսացն դնել զանունս, վասն զի արեւմտից եպիսկոպոսացն՝ ոչ, նոյնպէս խնդիր ինչ էր վասն հերձուածողաց:

ԿՍՊ Ներածութիւն . Ցետ ոչ բազում աւուրց թագաւորելոյ մեծի Թէոդոսի աստուածասէր թագաւորի երեւեցաւ այր մի Մակեդոն անուն, որ հայհոյէր զՀոգին սուրբ, եւ ոչ ի Հաւր եւ յՈրդւոյ էութենէ ասէր, այլ յաւտար եղութենէ, վասն որոյ ժողովին ի Կոստանդնուպաւլիս եպիսկոպոսք ՃՆ., դատապարտեցին զնա եւ հոգեմարտ անուանեցին եւ սահմանեցին բանս՝ գլուխ Գ:

ԿՍՊ Ա. Ոչ խոտել զհաւատ սուրբ հարցն ՅԺԸ-իցն, որք ի Նիկիայ՝ ի Բիւթանիա ժողովեցան, այլ մնալ նմա հաստատուն եւ նզովել զամենայն հերձուածս եւ յայտնապէս՝ զԵւնոմիանոսացն, այսինքն Աննոմանիցն, եւ զԱրիանոսացն, այսինքն Եւդոքսիանոսացն, եւ զԿէսարիանոսացն, այսինքն հոգեմարտացն, եւ զՍաբբեղիանոսացն եւ զՄարկեղիանոսացն եւ զՓոտիանոսացն եւ զԱպողինարոսացն:

ԵՓՍ Ներածութիւն. Իսկ յաւուրս փոքու Թէոդոսի, այր վիշապագլուխ երեւեցաւ Նեստոր անուն, սա սկսաւ զինել ընդդէմ ճշմարտութեան եւ շրջաբերական

[1] Միջնադարեան Հայաստանում տարածուած հերետիկոսութեանց ցանկի համար տե՛ս **R. W. Thomson**, «An Armenian List of Heresies», *Journal of Theological Studies* n. s. 16 (1965), էջ 358-367 եւ **Ե. Տէր-Մինասեան**, Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնից, Երեւան, 1968:

et est pire que les juifs, car il mélange le Père avec le Fils; mais celui qui nie le fait que le Fils Monogène s'est incarné et a enduré la croix pour notre salut est un ennemi de Dieu et il guerroie contre les saints; mais celui qui qualifie l'Esprit Saint de Père ou de Fils est ignorant et insensé, car le Fils est co-créateur avec le Père et il siège avec lui sur le trône céleste, et légifère avec lui, et il est le juge et la cause de la résurrection; le Saint-Esprit leur est consubstantiel, car la divinité consiste en trois hypostases consubstantielles; car, c'est de nos jours que Simon le Mage a attiré vers lui par ses vomissements l'âme errante, inconstante et mauvaise des gens en clamant avec désinvolture que Dieu a trois noms. Et ainsi, il renonça aux souffrances et à la naissance du Fils. Donc vous, très chers, baptisez par trois immersions au nom du Père, du Fils et du Saint-Esprit, selon la volonté du Seigneur et l'ordre de notre esprit.

NIC *Credo*. Nous croyons en un seul Dieu, Père Tout-Puissant. Tel est le *credo* qu'ont établi les saints Pères. Les 318 Pères condamnèrent dans la ville de Nicée les blasphèmes d'Arius, de Sabellius, de Photinus, de Paul de Samosate, des manichéens, des valentiniens, des marcionites et de tous les hérétiques[1].

CTP Préambule. Peu après l'accession au trône de Théodose le Grand, l'empereur ami de Dieu, Macédonius blasphémait l'Esprit Saint en disant qu'il ne procédait pas de l'essence du Père et du Fils, mais d'une substance étrangère, c'est pourquoi, 150 évêques se rassemblèrent à Constantinople. Ils le condamnèrent et lui donnèrent le nom de pneumatomaque, et ils établirent trois chapitres.

CTP 1. Il ne faut pas rejeter la foi des 318 saints Pères de Nicée, mais elle doit rester ferme et il faut anathématiser toutes les hérésies, et notoirement, celles des eunoméens, c'est-à-dire des anoméens, des ariens, c'est-à-dire des eudoxiens, des semi-ariens, c'est-à-dire des pneumatomaques, des sabelliens, des marcelliens, des photiniens et des apollinaristes.

EPH Préambule. Sous le règne de Théodose le Jeune, Nestorius – qui était patriarche de Constantinople – poussé par Satan, consolida le blasphème de Paul de

[1] Sur les listes d'hérésie dans l'Arménie médiévale, voir **R. W. Thomson**, «An Armenian List of Heresies», *Journal of Theological Studies* n. s. 16 (1965), p. 358-367, et plus généralement **E. Tēr Minasyan**, *Histoire de l'apparition et du développement des sectes médiévales*, Érévan, 1968 (en arménien).

թղթովքն աղանդէր զտիեզերս. զի էր հայրապետ Կոստանդնուպաւլսի ուրուազեալ ի սատանայէ. զՊաւղոսի Սամոստացւոյ եւ զԴիոդորի հայհոյութիւնն հաստատէր, զերկուց բնութեանց շարայարումն պատկանելով ի տնաւրէնութեան բանին Աստուծոյ՝ խորհուրդն քողախնդրէր, վասն որոյ ժողովեալ յԵփեսոս եպիսկոպոսք Մ, անտարրական սրով կտրէին զնա ընչ մէջ եւ կորզէին ի տարաբնակ վայրս սահմանադրելով կանոնս՝ գլուխ Զ.:

ԲԱԿ Ա. Արտաքսեալքն յեկեղեցւոյ՝ ամենայն՝ հերձուածողք ասին, այլ զկէսս հերձուածողս կոչեցին միայն եւ զայլս՝ բաժանողս եւ զայլ առանձին ժողովարարս: Վասն զի աղանդաւորք այնոքիկ ասին, որ ամենեւին ի բաց որոշեալք են յուղիղ հաւատոց: Իսկ բաժանողք այնոքիկ ասին, որ վասն պատճառանաց ինչ իրաց եկեղեցւոյ կամ խնդիր առ միմեանս լինելոյ ժողովս առանձին կատարեն, առ ոչ կարելոյ հնազանդել նոցին քահանայից եւ եպիսկոպոսաց յաղագս անխտրութեան ժողովրդեանն, որ բազում բծով լի են եւ անխտիր ի պաշտաւնն մատչին եւ ոչ երբեք կամեցան ի յառուլ ի կանոն եկեղեցւոյ, այլ անձամբ յանձինս իւրեանց ձգեցին զպատիւ քահանայութեանն եւ ձեռնադրութեանն եւ զհետ նոցա զնացին բազումք ի ժողովրդենէն, այսոքիկ են որ առանձին ժողովս կատարեն: Ասի դարձեալ եւ բաժանումն եւ այլ ինչ, որք, յորժամ որպէս յաղագս պէսպէս ապաշխարութեան ի խնդիրս ինչ անկանիցին յեկեղեցւոջ: Իսկ աղանդաւորք են այսոքիկ՝ Մանիքեցիք, Վաղենտիանոսք, Մարկիոնացիք, որպէս եւ Յուլիացիք[1], որք ի սոյն բազում եւ ազգի ազգի արատս ի հաւատսն, որ ի տէր մեր Յիսուս Քրիստոս, մուծանեն:

ԽԺԱ Ներածութիւն. Խոստովանիմք որպէս ուսուցին գիրք սուրբք եւ վարդապետք ճշմարիտք ՅԺԸ.-ն որ ի Նիկիա եւ ՃՃ.-ն որ ի Կոստանդնուպաւլիս եւ Մ.-ն որ յԵփեսոս, որ հաստատեցին զհաւատս սուրբս որ ժողովեցան ի Սուրբ Հոգւոյն եւ յիւրեանց ժամանակս հալածեցին զմոլորեցուցիչսն, որք էին իբրև զգայլս ապականիչս հաւտին Քրիստոսի. եւ զի նահատակեցան հաւատովք եւ նզովեցին զամենայն հերձուածողս. եւ ահա գրեալ են անուանք նոցա ի գիրս կենդանութեան, եւ մեք որդիք եւ ժառանգք նոցա հաւատոցն եմք, քանզի նախանձաւորք նոցա եմք, զաւրանամք հաւատովք եւ նզովեմք զամենայն հերձուածողս:

Նզովեմք զԱրիոս որ հայհոյեաց եւ ասէ թէ՝ «Որդի ոչ է ի բնութենէ Հաւր»:

Նզովեմք եւ զՄակեդոն որ ասաց թէ՝ «Հոգին Սուրբ նուազագոյն է քան զՀայր եւ զՈրդի»:

Նզովեմք եւ զՊաւղոս Սամոստացի որ ասէր թէ՝ «Յիսուս մարդ էր եւ իմաստութեամբ զաւրանայր եւ ուսուցանէր. եւ իմաստութիւն մեծ է քան զՅիսուս»:

Նզովեմք եւ զՓլաբիանոս եպիսկոպոս[2] որ ասաց թէ՝ «Որպէս նմանութեամբ

[1] Յուլիանականութեան մասին տե՛ս **R. Draguet**, *Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ*, Louvain, 1924: Զ-Ը. դդ. Հայաստանում տարածուած յուլիանական գաղափարների մասին տե՛ս **Ե. Տէր-Մինասեան**, *Հայոց եկեղեցի*, էջ 84 շրնկ :

[2] 446 թուականին Կոստանդնուպոլսի պատրիարք դարձած Փլաբիանոսը Հռոմի Լեւոն Ա. պապի յայտնի «Տօմարի» հասցեատէրն է: Իբրեւ այդ ժամանակ Թէոդոս Բ. կայսեր կողմից պաշտպանուող Եւտիքեսի եւ «մոնոֆիզիտականութեան» հակառակորդ՝ Փլաբիանոսը գահազրկւում է 449 թ. Եփեսոսի ժողովում, որին շուտով տրուելու էր «աւազակաց ժողով» որակումը: Նա շուտով մահանում է Լիդիայում՝ իր աքսորավայրում: Բայց յաջորդ տարի իսկ՝ Թէոդոս Բ-ի մահուանից յետոյ, նրա աճիւնը հանդիսաւորապէս տեղափոխւում է Կոստանդնուպոլիս, իսկ նրա յիշատակը վերականգնւում՝ իբրեւ

Samosate et Diodore de Tarse; il étalait au grand jour l'association des deux natures, comme le mystère convenant à l'économie du Verbe de Dieu; c'est pourquoi, 200 évêques rassemblés à Éphèse le coupaient en deux, le faisaient disparaître en pays étranger et établissaient six canons.

BAC 1. Ceux expulsés de l'Église sont appelés hérétiques, bien que certains parmi eux soient appelés schismatiques et d'autres conventiculaires. Nous dénommons hérétiques (litt. sectaires) ceux qui se sont totalement écartés de la foi orthodoxe. Et les schismatiques sont ceux qui en raison de questions ecclésiastiques ou de problèmes entre personnes s'assemblent séparément; la cause est que des gens poussés par l'indiscipline désobéissent aux prêtres et aux évêques; et ceux-ci à leur tour, pleins de vices, après avoir accédé à leur rang ne respectent jamais les canons de l'Église, mais se servent de leur dignité pour leurs propres intérêts et entraînent de nombreuses personnes à leur suite: ceux-ci sont les conventiculaires. Une autre cause de schisme s'explique par l'action de ceux qui s'opposent à l'Église concernant divers points portant sur la pénitence. Et les hérétiques (litt. sectaires) sont les suivants: les manichéens, les valentiniens, les marcionites, les julianistes[1] et tous ceux qui introduisent divers vices dans la foi du Christ.

PFA 1. Nous confessons ce que nous ont enseigné les Saintes Écritures et les *vardapet*s véridiques au nombre de 318 à Nicée, de 150 à Constantinople et de 200 à Éphèse qui s'étaient rassemblés à la faveur du Saint-Esprit pour conforter la sainte foi et chasser les déviants qui sévissaient en leurs temps, tels des loups gâtant le troupeau du Christ; et ils ont combattu par la foi et ont anathématisé tous les hérétiques; et à présent leurs noms sont inscrits dans le livre de vie, et nous sommes leurs enfants et leurs héritiers dans la foi, car nous sommes leurs émules, nous qui nous fortifions par la foi et anathématisons tous les hérétiques.

Nous anathématisons Arius qui a blasphémé en disant que «le Fils n'est pas de la nature du Père».

Nous anathématisons aussi Macédonius qui a dit que «le Saint-Esprit est inférieur au Père et au Fils».

Nous anathématisons aussi Paul de Samosate qui disait que «Jésus était un homme et il se fortifiait en sagesse et enseignait, mais la sagesse conférée par Dieu est supérieure à Jésus».

Nous anathématisons aussi l'évêque Flavien[2] qui a dit que «c'est en apparence et

[1] Sur le julianisme, l'ouvrage de référence reste **R. Draguet**, *Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ*, Louvain, 1924. Concernant l'influence prégnante du julianisme en Arménie, notamment entre le VI[e] et le VIII[e] siècle, voir **E. Tēr Minasyan**, *L'Église*, p. 84 sq..

[2] Flavien qui devient archevêque de Constantinople en 446 est le récipiendaire du fameux *Tome* composé par le pape Léon I[er]. Adversaire d'Eutychès et du «monophysisme» qui est alors soutenu par l'empereur Théodose II, Flavien est déposé par le concile d'Éphèse de 449, bientôt surnommé le «Brigandage

եւ ստուերաւք երեւեցաւ Որդին Աստուծոյ յաշխարհիս եւ ոչ ամ ստուգապէս մարմին եւ շունչ ի Սուրբ Կուսէն»:

Նզովեմք եւ զԱպաւղինար որ ասաց թէ՝ «Մարմին ամ ի Սուրբ Կուսէն, եւ միտս եւ շունչ ոչ առ»:

Առաւել նզովեմք զպիղծն Նեստոր որ հայհոյեաց եւ ասէ թէ՝ «Մարիամ ոչ ծնաւ Աստուած, այլ մարդ արարած իբրեւ զմի ի մարգարէիցն, եւ այնու մեծ էր քան զմարգարէսն, զի տաճար էր բանին Աստուծոյ»:

Նզովեմք եւ զԹէոդորոս եւ զԴիոդորոս եւ զԻբիա եւ զԱկակ եւ զԲարա ի Մծբնայ եւ զպիղծ կանոնս նոցա. եւ որ միանգամ հնազանդեցան կամ հնազանդին չար ժողովոյն Նեստորի որ ամպարշտեալ ասաց թէ՝ «Շնորհի արժանաւորեցաւ Քրիստոս՝ լինել տաճար բանին Աստուծոյ. նոյն այս մարդ՝ Քրիստոս, ի զաւակէ Դաւթի, չարչարեցաւ եւ մեռաւ, եւ մահուամբն իւրով արար փրկութիւն ամենեցուն: Եւ յաղագս այնր պատուցեաւ լինել Որդի Աստուծոյ»: Եւ հայհոյեն եւ ասեն. «Այլ՝ Որդի Աստուծոյ ի հաւրէ, եւ այլ՝ որդի որ ի Մարիամայ է». մինչեւ խելագարեցան եւ արհամարհեցին զՀայր երկու որդւովք՝ միովն բնութեամբ եւ միովն եկամուտ: Եւ յայսմ մուծին զչորրորդութիւնն խոստովանութեամբն իւրեանց եւ մոռացան զսուրբ զերրորդութիւնն որ յերկնաւորաց եւ յերկրաւորաց փառաւորի եւ ըստ նոցա բանիցն անարէնութիւն հաստատի, եթէ նոր Աստուած երկրպագի, որոյ սկիզբն ի Մարիամայ եւ այսր է. եթէ այդ այդպէս է, ամենայն ազգք եւ տոհմք կորեան, եթէ մարդ էր լոկ որ ի խաչին էր, եւ մարդոյ խաչի երկիր պագանեն եւ զմարմին եւ զարիւն մարդոյ ճաշակեն:

Նզովեմք եւ զտոմարն Լեւոնի որ Բ. բնութիւն ասաց եւ Բ. դէմս ի Քրիստոս յետ միաւորութեանն:

Նզովեմք եւ զՍեւերիանոս եւ զգիրս նորա զապականիչս որ արար բաժանումն ի մարմնաւորութենէ անտի եւ ասաց եթէ՝ «Մահկանացու էր մարմինն Աստուծոյ, որպէս ամենայն մարդոյ՝ մինչեւ ցյարութիւնն անփառաւոր եւ անկատար, բայց ի յարութեանն փառաւորեցաւ»: Եւ ոչ լուան զբանն Պետրոսի առաքելոյ որ ասէր թէ՝ «Մարմին նորա ոչ ետես զապականութիւն» (Գործ. Բ. 31):

ա. Որ ոչ հաւատայ եթէ բնութեամբ էութեանն ճանաչի միութիւնն որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

բ. Որ ոչ խոստովանի զՅիսուս Աստուած որ համբուրեաց զխաչն կամաւորութեամբ վասն մեր՝ մինն ի դիմաց յերրորդութենէն եւ ի բնութենէ Աստուծոյ հաւր, բայց փոխանակ այդորիկ ասէ թէ՝ «Մարդ է, բնութեամբ այր է, արարած Աստուծոյ է, շնորհաւք որդի է, ընտրութեամբ անչարչարելի եւ անմահական, եւ բնութեամբ մարդ գոլով». որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

գ. Որ ասէ թէ՝ «Յերկնից կամ յայլմէ բնութենէ առ մարմին Աստուած եւ ոչ խոստովանի թէ՝ ի մերմէ բնութենէս եւ ի Մարիամայ սրբոյ կուսէն առ Տէրն մեր մարմին եւ շունչ, չարչարեցաւ եւ մեռաւ վասն մեր որպէս եւ կամեցաւ», որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

դ. Որ համարձակիցի զմարմինն Աստուծոյ ասել ապականացու ի միաւո-

քաղաքի օրինական պատրիարք: Տե՛ս **C. Fraisse-Coué**, «D'Éphèse à Chalcédoine: 'La paix trompeuse' (433-451)», *Histoire du christianisme III. Les Églises d'Orient et d'Occident (432-610)*, Paris, 1998, էջ 9-77.

sous forme d'ombre que le Fils de Dieu s'est manifesté au monde, et qu'il n'a pas réellement pris sa chair et son souffle de la sainte Vierge».

Nous anathématisons aussi Apollinaire qui a dit «qu'Il a pris corps de la sainte Vierge, mais non son intellect ni son souffle».

Plus encore, nous anathématisons l'impur Nestorius qui a blasphémé et a dit que «Marie n'a pas engendré Dieu, mais un homme créé comme l'un des prophètes, et il était plus grand que les prophètes du fait qu'il était le temple du Verbe de Dieu».

Nous anathématisons aussi Théodore, Diodore, Ibas, Acace et Barsauma de Nisibe, ainsi que leurs canons impurs; ainsi que tous ceux qui se sont soumis et qui se soumettent à la méchante assemblée de Nestorius qui a proféré une impiété en disant: «Le Christ s'est rendu digne de la grâce d'être le temple du Verbe de Dieu; le Christ est ce même homme, de la descendance de David qui a souffert et qui est mort, et qui par sa mort a assuré le salut de tous. Et pour cela, il a reçu l'honneur de devenir le Fils de Dieu». Et ils blasphèment et disent: «une chose est le Fils de Dieu engendré par le Père et une autre le fils de Marie»; et ils en sont arrivés à perdre la raison et à outrager le Père en parlant de ses deux fils, l'un par nature et l'autre d'une façon adventice. Ils introduisent ainsi une quaternité dans leur *credo* oubliant la sainte Trinité qui est glorifiée par les créatures célestes et terrestres et par leurs paroles s'instaure l'impiété, selon laquelle un nouveau Dieu est adoré dont le commencement est, en l'occurrence Marie. S'il en est ainsi, toutes les nations et toutes les races sont perdues, si c'était seulement un homme qui était sur la croix alors c'est la croix d'un homme qu'ils adorent et le corps et le sang d'un homme auxquels ils goûtent.

Nous anathématisons aussi le Tome de Léon qui proclame deux natures et deux personnes dans le Christ après l'union.

Nous anathématisons aussi Sévère et ses écrits corrupteurs, qui dit le Fils après son incarnation et dit que «le corps de Dieu était mortel, et imparfait comme celui de tout homme, déchu de la gloire (litt. non-glorieux), mais que ce n'est que dans la résurrection qu'il a été glorifié». Mais ils n'ont pas entendu la parole de l'apôtre Pierre qui disait que «son corps ne connaît (litt. vit) pas la corruption» (Ac 2, 31).

Celui qui ne croit pas que l'union se reconnaît par la nature de l'essence, celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème

Celui qui ne confesse pas que le Dieu Jésus qui embrassa la croix volontairement pour nous est l'une des hypostases de la Trinité et de la même nature que Dieu le Père, mais dit à la place qu'«un homme de sexe masculin par nature, créature de Dieu, Fils par la grâce, impassible et immortel par élection, étant homme par nature». Celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème.

Celui qui dit que Dieu a pris chair du ciel ou d'une autre nature que la nôtre

d'Éphèse». Exilé en Lydie, il meurt très rapidement. Mais dès l'année suivante, à la suite de la disparition de Théodose II, sa dépouille est solennellement ramenée à Constantinople et sa mémoire est réhabilitée, voir **C. Fraisse-Coué**, «D'Éphèse à Chalcédoine: 'La paix trompeuse' (433-451)», *Histoire du christianisme III. Les Églises d'Orient et d'Occident (432-610)*, Paris, 1998, p. 9-77.

րութեանն եւ ասէ բաժանումն Աստուծոյն եւ մարմնոյն, եւ ոչ առաւել խոստովանի անապական մի բնութիւն անմահի, մի դէմս երկրպագեալ, զի է Աստուած եւ մարմին ի մի բնութիւն անյերկուանալի, որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

ե. Որ ասէ զկարգ միաբանութեանն բաժանեալ յԲ. բնութիւնս եւ յայն մուծանեն զչորրորդութիւնն, այնպիսիքն նզովեալ լիցին:

զ. Որ ասէ զմահն Տեառն կենդանացուցչի եւ զչարչարանսն փրկարար՝ ապականացու, եւ ոչ առաւել խոստովանեսցի, եթէ չարչարանաւք անչարչարելի եւ մահուամբ անմահ, որ էնն Աստուած, որ ամենայն ինչ դիւրին է, որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

է. Որ ասէ զմարմինն ճշմարիտ Աստուծոյ տեառն Յիսուսի Քրիստոսի թէ ի միաւորութենէն մինչեւ ի յարութիւնն ապականացու էր եւ անփառաւոր եւ անկատար, բայց ի յարութեանն փառաւորեցաւ եւ կատարեցաւ, եւ ոչ խոստովանի եթէ որպէս զկնի յարութեանն էր, նոյնպէս եւ յառաջ քան զյարութիւնն կենդանացուցիչ եւ անապական, որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի:

Զայս ամենայն զոր գրեցաք եւ նզովեցաք զամենայն հերձուածողս պիղծս, ուսեալք ի մարգարէից եւ յառաքելոց որ ասէ՝ «Փախիր ի պիղծ եւ ի նորաձայն հակառակութենէ եւ ի մոլորեցուցիչ գիտութենէ» (յմմտ. Ա. Տիմ. Զ. 20), զոր պատուիրեցին մեզ սուրբ վարդապետք, եւ զոր ասացեալ է սրբոց՝ ոչ մեկնիմք ի նոցա ուղղափառ հաւատոյն եւ խոստովանիմք եւ երկիր պագանեմք Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԳԱՍ Ա. Եթէ ոք ասիցէ՝ զՈրդին Աստուծոյ արարած ըստ Արիոսի մոլորութեանն, եւ ոչ էական եւ անսկզբնական ընդ Հաւր եւ համապատիւ, որպէս են ըստ տիեզերական սիւնհոդոսին ՅԺԸ-իցն, այնպիսին մերժեսցի յեկեղեցւոյ, եւ մի կալջիք հաղորդութիւն ընդ նոսա, զի նզովեալ են: Ապա եթէ դարձցին զղջմամբ խոստովանելով զմիասնական Սուրբ Երրորդութիւնն ընդ մեզ, ուղղափառ հաւատով անսկիզբն Հայր, անսկիզբն Որդի, անսկիզբն Հոգին Սուրբ դաւանելով՝ ի նախնական սովորութենէն հեռացեալք եղիցին, ընկալեալք նախ ձեռնադրութեամբ ապաշխարութեան, ապա վերստին ծննդեամբ սուրբ աւազանին եղիցին ընդունելիք:

ԿՐՆ Ներածութիւն. Սուրբ եւ աստուածասէր ժողովն որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հռոմոց եւ ի մեծն Հռոմայ հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ եւ հրամանաւ նորին թագաւորին զսրբոց առաքելոցն զաւանդութիւնս եւ զսուրբ ժողովոյն Նիկիայ եւ զՃՁ-իցն որ ի

et ne confesse pas que «de notre nature et de la Sainte Vierge Marie notre Seigneur a pris chair et souffle et qu'il a souffert et qu'il est mort pour nous, comme il l'a voulu». Celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème.

Celui qui ose dire que la chair de Dieu est corrompue dans l'union et qui introduit une division entre Dieu et la chair et surtout qui ne confesse pas une nature incorruptible de l'immortel, une hypostase adorée, qu'il est Dieu et chair en une nature exempte de doute. Celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème.

Celui qui dit que l'ordre de l'union est divisé en deux natures et ainsi introduit en elle une quaternité, qu'un tel soit anathème.

Celui qui dit que la mort du Seigneur vivificateur et la passion salvatrice sont corruptibles, et de plus qui ne confesse pas qu'est impassible dans les souffrances et immortel dans la mort celui qui est, Dieu, pour qui chaque chose est aisée. Celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème.

Celui qui dit que la chair du Seigneur Jésus-Christ, Dieu véritable, était, de l'union jusqu'à la résurrection, corruptible, sans gloire (litt. non glorieux) et imparfaite, mais que dans la résurrection il a reçu la gloire et a été rendu parfait, et ne confesse pas qu'il était après la résurrection comme il était avant la résurrection: vivificateur et incorruptible, celui qui ne confesse pas ainsi, qu'il soit anathème.

Tout ce que nous avons écrit – et nous avons anathématisé tous les hérétiques impurs – nous l'avons appris par les prophètes et les apôtres selon la parole: «Fuis les querelles impures, porteuses d'innovations et les enseignements erronés» (1 Tm 6, 20), ce que nous ont commandé les saints *vardapet*s, et ce qu'ont dit les saints, nous ne le séparons pas de leur foi orthodoxe et nous le confessons et adorons la sainte Trinité composée du Père, du Fils et du Saint-Esprit, maintenant, pour toujours et à jamais; amen.

GNT 1. Celui qui à la suite d'Arius dit que le Fils de Dieu est une créature et qu'il n'est ni incréé, ni sans commencement avec le Père, ni égal en honneur, comme ils le sont selon le concile universel des 318, sera écarté de l'Église, et ne communiez pas avec eux, car ils sont anathématisés. Mais s'ils se convertissent avec componction et confessent avec nous la sainte Trinité consubstantielle, professant avec une foi orthodoxe le Père sans commencement, le Fils sans commencement et le Saint-Esprit sans commencement, ils seront reçus, d'abord dans la pénitence par l'imposition des mains, puis après une seconde naissance dans la sainte piscine.

KAR Préambule. Le saint concile de Karin réuni par ordre de l'empereur Justinien à la frontière mitoyenne de l'Arménie, de la Géorgie et de l'Albanie – avec le catholicos d'Arménie Sahak – a confirmé la foi des conciles de Nicée, de Constantinople et d'Éphèse et a anathématisé tous les hérétiques, les premiers, les intermédiaires et les derniers. D'abord la secte de Marcion, d'Artémon, de Mani, de Paul de Samosate, d'Arius, de Macédonius, le *Tome* de Léon et tous les hérétiques – qui se sont opposés aux apôtres et au saint concile de Karin – qu'il faut rejeter hors

Կոստանդնուպաւլիս եւ զՄ-իցն որ յԵփեսոս, զայն հաստատել հաւատ եւ նզովել զամենայն հերձուածողս զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս: Նախ եւ առաջին զաղանդն Մարկիոնեայ եւ զաղանդն Արտեմոնի եւ զաղանդն Մանիքեցւոցն եւ զաղանդն Պաւղեայ Սամոստացւոյ եւ զաղանդն Արիոսի եւ զաղանդն Մակեդոնի եւ զտումարն Լեւոնի եւ զամենայն հերձուածողս, որք արտաքոյ սրբոց առաքելոցն քարոզութեան եւ սուրբ ժողովոյն են ասացեալ, արտաքս ընկենուլ յեկեղեցւոյ եւ աւտար համարել եւ ոչ հաղորդել ընդ այնպիսեացն եւ թագաւորական հրամանաւ յաքսորս բնակեսցէ այնպիսին մինչեւ ցաւր մահուան իւրոյ:

Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թէոդոսուպաւլիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն, եւ ինչ ինչ որ պէտք էին, եդին ի լրութիւն եկեղեցւոյ եւ ի կանոնս զգուշաւորս գլուխս Թ.:

Բ. Եւստաթեացիք եւ ճգնակեցութեան եւ վանականութեան ծայրահեղ դրսեւորումներ

1. Ընդհանուր

ԳԱՆ Ներածութիւն. Եւ եկեալ ի մի վայր վարդապետք կողմանց կողմանց արեւելից, հիւսիսոյ եպիսկոպոսք ԺԵ. ի մեծ եկեղեցին ի Գանգրացւոց առ սուրբն Եւսեբիոս, զի առաւել եւս կարգեսցեն եւ հաստատեսցեն զեղեալ կանոն մեծի ժողովոյն ինչ ինչ որ պիտոյ էր ի լրութիւն եկեղեցւոյ: Քանզի էր ի կողմանսն յայնոսիկ Եւստաթեացւոց հերձուածութիւնք, որք ասէին անմտութեամբ իւրեանց, եթէ որք ընդ ամուսնութեամբ են եւ մեղան, անյոյս են ի փրկութենէ: Եւ այլ իմն այլաշոն կարգս ի մէջ բերեալ թիւրէին զուղիղ կարգս եկեղեցւոյ: Որք եւ կանանց զհանդերձս առնացիս զգեցուցանէին, այլ եւ փոքրել զվարսս ի գլխոյ իւրեանց, զոր արգելն Պաւղոս (Ա. Կոր. ԺԱ, 5-6), որք եւ զմսակերութիւն պիղծ համարէին եւ այլ զինչ եւս պատմեսցուք զազգի այլանդակ գործս նոցա մինչեւ հեռանալ ծառայից ի տերանց եւ աղախնանց ի տիկնանց, եւ կանանց յարանց, այլ եւ զպտուղս եւ զսպասս եկեղեցւոյ ազանելիս իւրեանց առնել եւ այնու սուրբ առնել զանձինս իւրեանց: Զի եթէ ոչ էաք ի հրամանէ Հոգւոյն սրբոյ ժողովեալք եւ ի բաց կտրեալ զվնասակար զգաղձն եւ քաղեալ զորոմնն ի ցորենոյն, ելեալ տարածեալ գայր սէզ մեղացն (Մատթ. ԺԳ. 30):

ԳԱՆ Վերջաբան. Զայս գրեմք եւ ոչ խափանեմք ոյք յեկեղեցի Աստուծոյ գիրս ստանալ կամ զճարտարութիւն կամ զպահոն կամին, այլ որք ընդունին գիրս պահոցն՝ ի պատճառս ամբարտաւանելոյ ի վերա այնոցիկ, ոյք միամտութեամբ կեան եւ ոչ նենգութեամբ կամ պատրանաւք, այլ որք բարձրամտեն արտաքս քան զգիրս եւ քան զկարգս կանոնաց եկեղեցւոյ եւ նոր կարգս կացուցանեն: Այլ մեք եւ ընդ կուսութիւն խոնարհութեամբ զարմանամք եւ զպահս պարկեշտութեամբ եւ հեզութեամբ եւ աստուածպաշտութեամբ, ընդունիմք եւ զհեռանալն խոնարհութեամբ յերկրաւորացս, ընդունիմք եւ զամուսնութեան բնակութիւն, պարկեշտութեամբ պատուեմք եւ զմեծութիւն հանդերձ արդարութեամբ ոչ անգոսնեմք եւ զմէկին եւ զլոկ եւ զարհամարհեալ ագանելիս վասն պիտոյից միայն մարմնոյ

de l'Église et à qui il ne faut pas obéir. Par ordre impérial, ces personnes vivront en exil jusqu'à leur mort.

Les nombreux évêques venant de Géorgie et d'Albanie se réunirent à Théodosiopolis et élaborèrent neuf canons pleins de prudence.

B. Les eustathiens et l'anachorèse et les pratiques monastiques extrémistes

1. Généralités

GNG Préambule. Quinze évêques qui étaient des *vardapet*s se réunirent à Gangres – auprès de Saint Eusèbe – afin de confirmer les canons établis par le grand concile de Nicée en vue de la perfection de l'Église. Car en ces lieux, il y avait l'hérésie des eustathiens qui dans leur folie disaient que les gens mariés avaient péché et n'avaient aucun espoir de salut et ils introduisaient d'autres prescriptions trompeuses pour détourner les gens des justes prescriptions de l'Église. Ils faisaient revêtir les femmes avec des habits d'hommes et elles se coupaient les cheveux, ce que Paul leur avait interdit (1 Co 11, 5-6) et ils considéraient comme impure la consommation de viande; et les esclaves quittaient leurs maîtres, et les servantes leurs maîtresses, et les femmes leurs maris; et s'habillant grâce aux offrandes et aux biens d'Église, ils se considéraient comme saints. Réunis à Gangres par l'ordre du Saint-Esprit, les évêques présents ont ainsi retranché la cuscute nuisible et arraché l'ivraie du blé (Mt 13, 30).

GNG Épilogue. Nous ne critiquons aucunement ceux qui veulent suivre les Écritures, la science ou l'ascèse, sauf ceux qui jeûnent pour s'élever au-dessus des autres et qui dans leurs pensées s'élèvent au-dessus des Écritures et des canons de l'Église et établissent des prescriptions nouvelles. Nous admirons la virginité dans l'humilité, nous acceptons le jeûne accompagné de modestie et de piété et nous acceptons que l'on renonce aux choses terrestres, et nous honorons la maison conjugale, et nous ne méprisons pas la richesse accompagnée de justice, et nous louons les vêtements simples et ordinaires portés uniquement pour les besoins du corps, mais nous refusons les allures lâches et efféminées. Et nous honorons, et nous jugeons utiles les maisons de Dieu et les assemblées qui s'y réunissent étant

առանց ամենայն խոտելոյ գովեմք, այլ գլոյծ եւ զջաղջախ եւ զշեղտամեղտ ագանելիս եւ զգնացս չընդունիմք: Եւ զտունս Աստուծոյ պատուեմք եւ զժողովսն, որ ի նոսա ժողովին, որպէս զսուրբս եւ զաւգտակարս ընդունիմք, իբրեւ ոչ փակեմք կամ գրաւեմք զաստուածպաշտութիւնս ի տունս կամ ի տաճարս, այլ քան զամենայն տեղիս որ յանուն Աստուծոյ շինեալ են պատուեմք եւ որ ի նոսա ժողովեալ են ի հասարակաց աւգուտ ընդունիմք: Եւ զառաւելագոյն զտուրս եւ զբարեգթութիւնս որ յեղբարս, որ ըստ տուչութեան եկեղեցեաց եւ կարգաց որ յաղքատս լինի, երանեմք: Եւ զուղիղ գործ ընկալեալ ասեմք, որ ինչ տուաւ եւ կարգեցաւ ի սուրբ գրոց եւ յառաքելոց, յեկեղեցի լինել մեզ աղաւթս առնեմք, զի կատարեսցի: Զայս կանոնս զոր եղաք եւ գրեցաք ի Գանգրա վասն հաստատութեան կարգի աւրինաց ոչ աւելի ինչ եւ ոչ աւտարոտի ի մէջ բերեալ, այլ զոր սուրբ ժողովն կանոնեցին՝ զնոյն ի լրութիւն բովանդակեցաք: Քանզի են ոմանք, որ տգիտութեամբ ինչ ինչ գործելով, կուտեն անապաշխար բեռինս անձանց, ըստ գրեցելոցն եթէ ի մէջ տգիտաց ճշմարտութիւն պատառի, զի եթէ կարի փոքր մեղք իցեն եւ ընդ ապաշաւանաւք ոչ անկանիցի՝ մահու չափ լինին, ըստ առաքելոյն՝ են «Մեղք որ մահու չափ են» (Ա. Յովի. Ե. 17):

ԼԱՒ Ներածութիւն. Յետ այսորիկ զաւրանայր Աւստացւոց հերձուածն, որ Չորեքտասաներորդս կոչին, որ բազմաց յայլայլութիւնս դաւանէին ի լըլկանս եկեղեցւոյ, վասն որոյ ժողովեալ ի Լաւոդիկեայ Փռիւգացւոց եպիսկոպոսք ԻԵ. որք ժողովեալ ի Պատկանիանէս[1] ի պէսպէս իշխանութենէ յարիանոսաց, ջնջումն առնէին նոցա խիթմանցն:

ԼԱՒ Ե. Վասն այնոցիկ, որ ի հերձուածողաց իցեն, այմինքն որ ասին Նաւատացիք կամ Չորեքտասաներորդեայք, ի դառնալն իւրեանց մի՛ յերախայս մի՛ ի հաւատացեալս մի՛ ընդունիցիք յառաջ մինչ չեւ նզովեալ եւ ուրացեալ զամենայն հերձուածողս, առաւել զոր գիտէինն եւ ուսեալ էին. յետ այսորիկ որք կոչին հաւատացեալք, ուսցին զհաւատոյս մերոյ զիսորհուրդ եւ աւծցին զաւծումն սրբութեան եւ հաւասարեսցին աւրինաց:

2. Թիւր վերաբերմունք եկեղեցու եւ եկեղեցական տօների նկատմամբ

ԳԱՆ Ե. Ոյք ուսուցանեն զտուն Աստուծոյ եւ որ ի նա ժողովն ժողովիցին արհամարհել՝ նզովեալ լիցին:

ԳԱՆ Զ. Ոյք արտաքս քան զեկեղեցին ժողովս ժողովիցին եւ արհամարհիցեն զեկեղեցին եւ կամիցին զեկեղեցւոյ պէտս գործել, իբրեւ ոչ իցէ երէցն ըստ կամաց եպիսկոպոսին լեալ՝ նզովեալ լիցին:

ԳԱՆ Է. Ոյք զպտուղ եկեղեցւոյն կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ կամ տալ, եւ որ ոչ կամաւք եպիսկոպոսին կամ որ ձեռնադրեացն զայնպիսիսն յայսպիսի իրս եւ կամաւք նորա չառնիցէ եւ չգործիցէ՝ նզովեալ լիցին:

[1] Հռոմէական վարչական համակարգի մէջ ներառուելով՝ Փռիւգիան բաժանուեց երեք մասի, որոնցից մէկն էր պատկատեան Փռիւգիան: Կանոնի այս համառօտ ներածութիւնն անհասկանալի է. եւստաթեականները երբեք չեն եղել «չորեքտասաներորդականներ»:

donné que la piété ne se renferme pas dans les maisons ou les temples. Et nous félicitons les frères qui accomplissent avec abondance des dons et des actes de miséricorde, qui selon la tradition et les préceptes des Églises sont faits en faveur des indigents. Et acceptant les actions droites, nous prions pour que s'accomplisse tout ce qui a été ordonné par les Écritures et les apôtres. Nous avons établi ces canons à Gangres pour confirmer les dispositions de la loi sans rien y ajouter de plus; car certaines personnes en faisant des choses par ignorance amassaient sur elles des fardeaux de péchés sans repentir (1 Jn 5, 17).

LAO Préambule. L'hérésie des eustathiens se fortifiant, ils furent appelés quartodécimans, et ils professaient des altérations sur beaucoup de points; c'est pourquoi, 25 évêques réunis à Laodicée de Phrygie - Pacatienne de différents diocèses en Asie -[1] les détruisirent !

LAO 7. Ceux qui reviennent de l'hérésie dite des novatianistes ou quartodécimans et qui se convertissent ne seront reçus ni parmi les catéchumènes, ni parmi les *credentes*, avant qu'ils n'aient anathématisé et renié tous les hérétiques, surtout ceux qui les connaissaient; ensuite, les *credentes* apprendront le mystère de notre foi, puis seront baptisés et communieront.

2. Les comportements déviants envers l'Église et les solennités ecclésiastiques

GNG 5. Ceux qui enseignent à mépriser la maison de Dieu et ceux qui s'y réunissent seront anathématisés.

GNG 6. Ceux qui se réunissent hors de l'église et la méprisent, et veulent accomplir le service de l'église sans le prêtre, et conformément à la volonté de l'évêque seront anathématisés.

GNG 7. Ceux qui veulent prendre ou donner les offrandes faites à l'église en dehors de l'église et celui qui, sans l'assentiment de l'évêque ou de la personne qu'il a nommée pour cette fonction, agit sans son accord sera anathématisé.

[1] Intégrée dans le système administratif romain, la Phrygie fut divisée en trois parties, l'une d'elle étant la Phrygie pacatienne. Cette brève introduction reste peu compréhensible, ainsi les eustathiens n'étaient aucunement des quartodécimans.

ԳԱՆ Ը. Որ տայցէ կամ առցէ զպտուղ արտաքոյ քան զեպիսկոպոսն կամ որ կարգեալն է ի տնտեսութիւն տուրս տալոյ՝ տալին եւ առնելին նզովեալ լիցին:

ԳԱՆ ԺԱ. Ոյք արհամարհեն զայնոսիկ որք հաւատով ագապս առնեն եւ վասն պատուի Տեառն կոչեն զեղբարս, եւ ոչ կամին հաւասարել եւ յանձն առնուլ եւ արհամարհիցեն՝ նզովեալ լիցին:

ԳԱՆ ԺԸ. Եթէ ոք իբրեւ ի կարծիս պահոց արհամարհիցէ զաւր կիւրակէի եւ ի պահոց թիւ արկ կամ ի գործ, որպէս զայլ աւուրս, ոչ գտցէ հանգիստ յարքայութեանն Աստուծոյ եւ մեծ ժողովն նզովէ եւ մերժէ:

ԳԱՆ ԺԹ. Եթէ ոք ի պահողաց, արտաքս քան զիարկ ինչ մարմնաւոր, այսինքն է ցաւոց եւ վշտաց, ամբարհաւաճեաց եւ ամբարտաւանեաց եւ զտուեալ եւ զկարգեալ զպահս հասարակաց որ պահի յեկեղեցւոջ ելոյծ եւ արհամարհեաց իբրեւ կրիցի ի նմա կատարեալ միտք եւ խորհուրդք՝ նզովեալ լիցի:

ԳԱՆ ԻԲ. Եթէ ոք երթիցէ ի ժողովս մարտիւրոսաց՝ զգոյշ եւ պատրաստ լիցի սրբութեան, յորդորման, պաշտաման, խոնարհութեան, աղաւթից, զի մեծ վարձս առցէ: Ապա եթէ ոք երթիցէ ամբարտաւանութեամբ հպարտանալք ի ցոյցս տեսողաց եւ դիտել զնմանիս իւր՝ նզովեալ լիցի:

ԿԵՆ Ճ. Եթէ ոք արհամարհելով զեկեղեցեաւն եւ զեկեղեցւոյ խորհուրդ ի տան գործէ՝ նզովեալ եղիցի:

ԿԵՆ ՃԲ.Եթէ ոք գարշեսցի յայնցանէ որ հաւատով ագապս առնեն եղբարց կամ աղքատաց՝ նզովեալ եղիցի:

ԿԵՆ Ճ. Եթէ ոք ամբարտաւանելով գարշեսցի ի մարտիւրոսաց ժողովոց՝ նզովեալ եղիցի:

3. Արհամարհական վերաբերմունք ամուսնացեալ քահանայի նկատմամբ

ԳԱՆ Դ. Ոյք երկմտեն եւ խորշեն յերիցուէ, որ ամուսնացեալ իցէ, որպէս թէ ոչ իցէ արժան ի նոցանէ աւրէնս առնուլ՝ նզովեալ լիցին:

ԿԵՆ ԽԹ. Եթէ ոք խղճիցէ յերիցուէ ամուսնացելոյ աւրէնս առնուլ՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ՃԴ. Եթէ ոք յուխտէ եկեղեցւոյ անգոսնեսցէ զքահանայ որ կանամբի իցէ եւ գարշի ի նմանէ՝ նզովեալ եղիցի:

GNG 8. Celui qui prend ou donne l'offrande à l'insu de l'évêque ou de la personne qu'il a établie pour administrer la distribution des dons sera anathématisé.

GNG 11. Ceux qui méprisent les fidèles qui font les agapes avec foi et invitent leurs frères à honorer le Seigneur, et qui ne veulent pas participer à ces agapes ni les recevoir et les méprisent seront anathématisés.

GNG 18. Celui qui pour une prétendue ascèse méprise le dimanche et le compte comme un jour de jeûne ou de travail comme les autres jours ne trouvera pas de repos dans le Royaume, et le concile de Gangres l'anathématise et l'exclut.

GNG 19. Celui qui s'affranchit d'un jeûne commun fixé dans l'Église, non pour cause de maladie, mais par orgueil, en prétextant que c'est en lui que se trouve la perfection sera anathématisé.

GNG 22. Celui qui va à l'assemblée en l'honneur des martyrs avec humilité et pour la prière sera récompensé. Mais s'il y va avec orgueil pour s'afficher et observer ceux qui lui ressemblent, il sera anathématisé.

SCN 50. Celui qui méprisant l'église accomplit les mystères de l'Église dans une maison sera anathématisé.

SCN 52. Celui qui abhorre ceux qui font les agapes avec foi pour les frères ou les pauvres sera anathématisé.

SCN 70. Celui qui par orgueil prend en aversion les assemblées des fêtes des martyrs sera anathématisé.

3. Les comportements méprisants envers les prêtres mariés

GNG 4. Ceux qui ont des hésitations ou de l'aversion pour un prêtre marié, comme s'il ne convenait pas de recevoir d'eux la communion, seront anathématisés.

SCN 49. Celui qui est gêné de recevoir la communion d'un prêtre marié sera anathématisé.

ECB 74. Le clerc qui méprise un prêtre, du fait qu'il est marié, et l'abhorre sera anathématisé.

4: Արհամարհական վերաբերմունք ամուսնութեան նկատմամբ

ԵԱԿ ԽԶ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւին իսկ ի քահանայական կարգէ յամուսնութենէ, ի մսոյ եւ ի գինոյ ոչ վասն ճգնաւորութեան, այլ պիղծ վարկանելով, զայնոսիկ ի բաց մեկնի, մոռացեալ թէ ամենայն ինչ յոյժ բարի է (Ծննդ. Ա, 31) զի արու եւ էգ արար Աստուած զմարդն (Ծննդ. Ա, 27), այլ հայհոյելով անգոսնեսցէ զգործաւորութիւնն՝ կամ ուղղեսցի կամ լուծցի եւ յեկեղեցւոյն ի բաց ընկեսցի. նմանապէս եւ ժողովրդական ոք:

ԳԱՆ Ա. Ոյք զամուսնութիւն մեղադրեն եւ անգոսնեն, կամ որ ոչ ննջէ ընդ առն իւրում՝ իբրեւ իցէ հաւատացեալ եւ երկիւղած եւ գարշելի համարիցին եւ մեղադիր առնիցեն իբրեւ այն, թէ յարքայութիւն ոչ կարէ մտանել, այնպիսիքն նզովեալ լիցին:

ԳԱՆ Թ. Ոյք կուսանան եւ պահեն զանձինս իւրեանց, որպէս թէ գարշ իցէ ամուսնութիւն եւ հեռանայցեն եւ ոչ վասն բարւոյ եւ սուրբ պարկեշտութեանն՝ նզովեալ լիցին:

ԳԱՆ Ժ. Ոյք կոյսք իցեն վասն Աստուծոյ եւ գեր ի վերոյ են ամուսնացելոցն եւ ամբարհաւաճիցեն՝ նզովեալ լիցին:

ԿԵՆ ԽԶ. Եթէ ոք զամուսնութիւն մեղադրիցէ, որպէս թէ զամուսնացեալսն ոչ մտանել յարքայութիւն Աստուծոյ՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ՀԲ. Որ զամուսնութիւն անարգէ վասն հաւատոց եւ գարշ համարին զսուրբ անկողինս, նզովեալ լիցին եւ Ա. ամ ապաշխարեսցեն:
ԲԳԿ ՀԳ. Եթէ ոք վասն յաճախ պտուղ տալոյ արգելցէ զինքն յարդար անկողնոյ՝ Գ. ամ ապաշխարեսցէ:

5. Ծնող-զաւակ յարաբերութիւն

ԳԱՆ ԺԵ. Ոյք հարկանեն, թողուն զորդիս իւրեանց եւ ոչ սնուցանեն եւ որչափ ձեռնհաս իցեն ոչ փոյթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին եւ սննդեանն մինչեւ ի կատարմանն հասակին, այլ որպէս ի պատճառս պահոց եւ վանականութեան արհամարհիցէ եւ անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի:

ԳԱՆ ԺԶ. Եթէ ուրուք որդի, յորոյ ծնեալն է առաւել հաւատացեալ եւ առաքինի ի կարգս Աստուծոյ, հեռանայցէ որպէս ի պատճառս աստուածպաշտութեան եւ արհամարհիցէ եւ ոչ զարժանն եւ ոչ գիրաւ պատիւ ծնաւղացն հատուցանիցէ իբրեւ ծնաւղաց, քան զամենայն աստուածպաշտութիւն մեծ եւ ահաւոր թուեսցի եւ հատուցումն բարեաց, այնպիսին նզովեալ լիցի:

ԿԵՆ ԿԶ. Եթէ որդիք թողցեն զծնաւղս պատճառաւ աստուածպաշտութեան իբրեւ ոչ ինչ խափանեալ ի նոցանէ՝ նզովեալ լիցին:

4. Les comportements méprisants envers le mariage

CCL 46. L'évêque, le prêtre, le diacre ou quiconque de rang sacerdotal qui s'abstient du mariage, de viande et de vin non par ascèse, mais du fait qu'il considère tout cela comme immonde et oublie que «Tout est très bien» (Gn 1, 31) et que «Dieu a fait l'homme mâle et femelle» (Gn 1, 27), et méprise la création en l'outrageant, qu'il se corrige sinon on le déposera et on le retranchera de l'Église; de même pour un laïc.

GNG 1. Ceux qui méprisent le mariage ou celle qui ne couche pas avec son mari, sous prétexte qu'elle est croyante et pieuse, et ceux qui regardent le mariage comme abominable et blâment le mari en disant qu'il ne peut pas entrer dans le Royaume seront anathématisés.
GNG 9. Ceux qui sont vierges et se gardent du mariage comme si cela était une abomination, et s'en éloignent pour cette raison, et non par amour de la bonne chasteté seront anathématisés.

GNG 10. Ceux qui sont vierges pour Dieu et qui se mettent au-dessus des gens mariés avec orgueil seront anathématisés.

SCN 46. Celui qui blâme le mariage en disant que les époux n'entreront pas dans le royaume de Dieu sera anathématisé.

ECB 72. Celui qui méprise le mariage en raison de sa foi et considère la sainte couche comme abominable sera anathématisé et fera pénitence pendant un an.
ECB 73. Celui qui se prive de la juste couche pour éviter d'engendrer une progéniture nombreuse fera pénitence pendant trois ans.

5. Les rapports parents-enfant

GNG 15. Ceux qui maltraitent, délaissent leurs enfants, qui ne se soucient pas de leur conduite et de leur éducation jusqu'à l'âge adulte, et qui n'en font aucun cas, sous prétexte de jeûne et de vie monastique, seront anathématisés.

GNG 16. Le fils qui sous prétexte de piété s'éloigne de ses parents, surtout s'ils sont croyants et ne leur rend pas le juste honneur qu'ils méritent, alors que ceci est plus grand que toute forme de piété, sera anathématisé.

SCN 66. Les enfants qui abandonnent leurs parents sous prétexte de piété, alors qu'ils ne sont en rien gênés par eux seront anathématisés.

ԿԵՆ ԿԷ. Եթէ ոք թողցէ զիւր որդիս յաղագս ճգնութեան՝ նզովեալ եղիցի:

6. Տէր-ստրուկ յարաբերութիւն

ԳԱՆ Գ. Ոյք զծառայ ի պատճառս աստուածպաշտութեան պատրեն արհամարհել զտեարս իւրեանց եւ հեռանալ ի ծառայութենէ նոցա եւ ոչ ամենայն փութութեամբ պատուել եւ պաշտել զնոսա, իբրեւ իցեն տեարքն քրիստոնեայք եւ երկիւղածք՝ նզովեալ լիցին:

ԿԵՆ ԽԷ. Եթէ ոք ծառայ պատճառանաւք աստուածպաշտութեան գնասցէ ի տեառնէ, իբրեւ ոչ թողացուցեալ ի նմանէ՝ նզովեալ եղիցի:

7. Ցուցադրական կեցուածք՝ զգեստի եւ արտաքին տեսքի փոփոխութեամբ

ԳԱՆ ԺԲ. Ոյք յարանց պահս ինչ համարեցան զտրտում եւ զտխուր հանդերձ ինչ ագանել, որպէս թէ այսպիսի ինչ իրաւք արդարասցին եւ դատապարտեսցեն զայնոսիկ ոյք ահիւ եւ երկիւղիւ եւ ոչ փառասիրութեամբ զսովորական հանդերձն ագանին եւ դսրովիցեն, այսպիսեաւքս նզովեալ լիցին:

ԳԱՆ ԺԳ. Կին ոք, որպէս թէ պահս ինչ համարէ փոխել զզգեստ կանանց, եւ զարանց զգեստ ինչ ագաւ կամ զկերպարան ինչ այնպիսի ստացաւ՝ նզովեալ լիցի:

ԳԱՆ ԺԷ. Եթէ ոք ի կանանց կարծեսցէ իբրեւ աստուածապաշտութիւն եւ գիերս փոքրեսցէ, զոր ետ Աստուած յիշատակ հնազանդութեան՝ իբր թէ ոտն եհար եւ արհամարհեաց զհրամանն հնազանդութեան՝ նզովեալ լիցի:

ԿԵՆ ԿԸ. Եթէ ոք կին յաղագս ճգնութեան փոքրիցէ գիերս իւր եւ առնական ձեւ զգեցցի՝ նզովեալ եղիցի:

8. Ցուցադրական եւ արհամարհական վերաբերմունք կերակուրի նկատմամբ

ԵԱԿ ԽԶ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւին իսկ ի քահանայական կարգէ յամուսնութենէ, ի մսոյ եւ ի գինոյ ոչ վասն ճգնաւորութեան, այլ պիղծ վարկանելով, զայնոսիկ ի բաց մեկնի, մոռացեալ թէ ամենայն ինչ յոյժ բարի է (Ծննդ. Ա, 31) զի արու եւ էգ արար Աստուած զմարդն (Ծննդ. Ա, 27), այլ հայհոյելով անգոսնեսցէ զգործաւորութիւնն՝ կամ ուղղեսցի կամ լուծցի եւ յեկեղեցւոյն ի բաց ընկեսցի. նմանապէս եւ ժողովրդական ոք:

ԵԱԿ ԽԸ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ յաւուրս տաւնից ոչ ճաշակէ ի մսոյ եւ ի գինւոյ՝ լուծցի, որպէս զհարեալ խղճիւ մտաց իւրոց (Ա. Տիմ. Դ. 2) եւ պատճառք գայթագղութեան բազմաց եղեալ:

SCN 67. Celui qui abandonne ses parents sous prétexte d'ascèse sera anathématisé.

6. Les rapports maître-esclave

GNG 3. Ceux qui par tromperie poussent un serviteur à abandonner et à mépriser son maître chrétien et pieux, au lieu de le servir sous prétexte de piété seront anathématisés.

SCN 47. Le serviteur qui, sous prétexte de piété, s'éloigne de son maître sans son autorisation sera anathématisé.

7. L'inversion ostentatoire des tenues vestimentaires et des apparences extérieures masculines et féminines

GNG 12. Les hommes qui considèrent comme une ascèse le fait de porter un habit triste, comme s'ils se justifiaient par une telle chose, et qu'ils condamnaient ceux qui portent des vêtements ordinaires, par crainte de Dieu et non par gloire seront anathématisés.

GNG 13. La femme qui considère comme un jeûne le fait de changer son habit de femme et qui revêt un habit d'homme ou quelque chose qui y ressemble sera anathématisée.

GNG 17. La femme qui considère comme un acte de piété le fait de se couper les cheveux que Dieu lui a donnés, comme un rappel à la soumission et donc à méprisé l'ordre de soumission sera anathématisée.

SCN 65. La femme qui sous prétexte d'ascèse se coupe les cheveux et revêt des habits d'homme sera anathématisée.

8. L'attitude ouvertement méprisante envers certains aliments

CCL 46. L'évêque, le prêtre, le diacre ou quiconque de rang sacerdotal qui s'abstient du mariage, de viande et de vin non par ascèse, mais du fait qu'il considère tout cela comme immonde et oublie que «Tout est très bien» (Gn 1,31) et que «Dieu a fait l'homme mâle et femelle» (Gn 1,27), et méprise la création en l'outrageant, qu'il se corrige sinon on le déposera et on le retranchera de l'Église; de même pour un laïc.

CCL 48. L'évêque, le prêtre ou le diacre qui s'abstient de viande et de vin les jours de fête sera déposé, car il est gâté dans sa conscience (1 Tm 4, 2) et est devenu cause de scandale pour beaucoup.

ԱՆԿ ԺԵ. Ոյք յուխտի անդ իցեն երիցունք կամ սարկաւագունք կամ այլ ոք ի պաշտաւնէից եւ հեռի իցեն ի մսոյ եւ միտք իւրեանց յաւժար իցեն ի ճաշակել, համարձակ կերիցեն եւ մի՛ գաղտաբար. ապա թէ կամք իցեն՝ պահիցեն, ընդունին կանոնքս զերկոսին: Ապա եթէ ոք պիղծ համարիցի կամ զբանջար եւ գիաց, որ մսոտ իցէ, ոչ ընդունին զնա կարգք եկեղեցւոյ:

ԳԱՆ Բ. Ոյք ուտեն միս՝ առանց արեան եւ զոհելոյ եւ մեռելոտւոյ. զի ամենայն երկիւղածութեամբ եւ հաւատովք լիցի եւ դատապարտեսցեն զայնպիսիսն վասն ուտելոյն, իբրեւ այն, թէ յոյս ոչ ունիցին առ Աստուած՝ նզովեալ լիցին:

ԿԵՆ ԻԴ. Որք յուխտի անդ իցեն երիցունք եւ սարկաւագունք, եւ հեռի իցեն ի մսոյ, կամ եղեւ զի ճաշակեսցեն, ապա եթէ կամեսցին՝ պահեսցեն մսոյ. ապա եթէ պղծեսցին կամ պիղծ համարեսցին մինչեւ զբանջարն որ ընդ մսոյն անկանիցի, կամ հպիցի ի միսն՝ չուտիցեն, եւ ոչ անսայցեն կանոնացս, լուռ լիցին յաշտիճանէ քահանայութեանն:

ԿԵՆ ԽԸ. Եթէ ոք գարշեսցի ի մսակերաց՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ Ղ. Եթէ ոք մսահատի վասն պղծութեան՝ նզովեալ եղիցի եւ Ա. ամ ապաշխարեսցէ: Ապա եթէ վասն հաւատոց է՝ պահեսցէ:

ԲԳԿ ԶԳ. Անխտիր մատուսցէ քահանայն զպատարագն որպէս ի Զատկին, նոյնպէս եւ յամենայն ժամ, եւ մի՛ նողկալով ի բաժակէն. թէ ոչ՝ նզովեալ եղիցի:

Գ. Արտեմոն – Artémon

ԱՆՏ Ներածութիւն. Ցետ բազում ժամանակաց անցանելոյ դարձեալ բորբոքեցաւ աղանդն Արտեմոնայ, վասն ամենասուրբ տաւնից այլափոխումն առնել եւ յաւելուածս արտաքոյ կանոնեալ սուրբ ընթերցուածոց որ ի սուրբ առաքելոցն աւանդեցաւ եկեղեցւոյ սրբոյ:

ԿՐՆ Ներածութիւն. Սուրբ եւ աստուածասէր ժողովն որ ժողովեցան յամեմայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հռոմոց եւ ի մեծն Հռոմայ հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ եւ հրամանաւ նորին թագաւորին զսրբոց առաքելոցն զաւանդութիւնս եւ զսուրբ ժողովոյն Նիկիայ եւ զՃՁ-իցն որ ի Կոստանդնուպաւլիս եւ զՄ-իցն որ յԵփեսոս, զայն հաստատել հաւատ եւ նզովել զամենայն հերձուածողս զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս: Նախ եւ առաջին զաղանդն Մարկիոնեայ եւ զաղանդն Արտեմոնի եւ զաղանդն Մանիքեցւոցն եւ զաղանդն Պաւղեայ Սամոստացւոյ եւ զաղանդն Արիոսի եւ զաղանդն Մակեդոնի եւ զտումարն Լեւոնի եւ զամենայն հերձուածողս, որք արտաքոյ սրբոց առաքելոցն

ACY 15. Les clercs qui s'abstiennent de viande, puis souhaitent en manger ne doivent pas le faire en cachette, mais en plein jour, les canons admettent cela et aussi ceux qui veulent jeûner. Mais les lois de l'Église n'admettent pas celui qui estime impurs les légumes ou le pain qui ont touché la viande.

GNG 2. Ceux qui condamnent les personnes qui mangent avec piété et foi de la viande sans le sang ou de la viande non sacrifiée ou étouffée, comme si elles n'avaient aucun espoir devant Dieu seront anathématisés.

SCN 24. Les clercs, les prêtres et les diacres doivent manger de la viande, toutefois, ils peuvent s'en abstenir, mais s'ils l'ont en horreur ou l'estiment impure, au point de ne pas manger les légumes qui tombent dans la viande ou la touchent et s'ils n'obéissent pas aux canons, ils seront déposés du sacerdoce.

SCN 48. Celui qui a horreur de ceux qui mangent de la viande sera anathématisé.

ECB 70. Celui qui ne mange pas de viande du fait qu'il considère cela comme une chose impure sera anathématisé et fera pénitence pendant un an. En revanche, il peut s'en abstenir pour cause de piété.

ECB 83. Le prêtre doit offrir le sacrifice de la même façon le jour de Pâques et à tout autre moment, et sans éprouver du dégout pour le calice; sinon il sera anathématisé.

C. Artémon

ATC Préambule. La secte d'Artémon innova à propos des saintes fêtes, en suscitant des changements et des additions en dehors des saintes lectures mises dans le canon qui avait été légué par les apôtres.

KAR Préambule. Le saint concile de Karin réuni par ordre de l'empereur Justinien à la frontière mitoyenne de l'Arménie, de la Géorgie et de l'Albanie – avec le catholicos d'Arménie Sahak – a confirmé la foi des conciles de Nicée, de Constantinople et d'Éphèse et a anathématisé tous les hérétiques, les premiers, les intermédiaires et les derniers. D'abord la secte de Marcion, d'Artémon, de Mani, de Paul de Samosate, d'Arius, de Macédonius, le *Tome* de Léon et tous les hérétiques – qui se sont opposés aux apôtres et au saint concile de Karin – qu'il faut rejeter hors de l'Église et à qui il ne faut pas obéir. Par ordre impérial, ces personnes vivront en exil jusqu'à leur mort.

Les nombreux évêques venant de Géorgie et d'Albanie se réunirent à Théodosiopolis et élaborèrent neuf canons pleins de prudence.

քարոզութեան եւ սուրբ ժողովոյն են ասացեալ, արտաքս ընկենուլ յեկեղեցւոյ եւ աւտար համարել եւ ոչ հաղորդել ընդ այնպիսեացն եւ թագաւորական հրամանաւ յաքսորս բնակեսցէ այնպիսին մինչեւ ցաւր մահուան իւրոյ:

Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թէոդոսուպաւլիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն, եւ ինչ ինչ որ պէտք էին, եդին ի լրութիւն եկեղեցւոյ եւ ի կանոնս զգուշաւորս գլուխս Թ.:

ԿՐՆ Ա. Վասն մեծի Յայտնութեան, զոր կարգեցին առաքեալքն ի Հոգւոյն Սրբոյ ի յունուարի Ձ-ն կատարել մեծ առաւելութեամբ ի փառս Աստուծոյ: Արդ՝ եթէ ոք ի պատրիարգաց կամ ի մայրաքաղաքաց եպիսկոպոսաց կամ յերիցանց կամ ի սարկաւագաց, այլազգ խորհիցի եւ արտաքոյ Առաքելական կանոնաց, զոր ոմանք ի դեկտեմբերի ԻԵ-ն ծնունդ առնեն, մոլորեալք յաղանդն Արտեմոնի: Արդ՝ եթէ ոք ըստ այնմ մտաց խորհից եւ մոլորիցի յուղիղ կարգաց եւ ի կրաւնից Աստուծոյ՝ այնպիսին անկցի ի կարգէ եւ յաշտիճանէ մերժեսցի. եթէ պատրիարգ իցէ եւ եթէ եպիսկոպոս հրամանաւ թագաւորականաւ ելցէ յաշխարհէ եւ յաքսորս բնակեսցէ մինչեւ ի մահ, զի մի արմատ դառնութեան ի վեր երեւեալ եւ նովաւ բազումք պղծիցին. զոր եւ ոմն ի մերոց եղբարց յԱսիացւոց աշխարհին տաւնեաց ընդ Ասորիս հետեւող եղեալ Արտեմոնի, տարագրեցաւ յեկեղեցւոյ եւ արտաքս անկաւ իբրեւ զուռն (Յով. ԺԵ. 6), ըստ բանին Տեառն: Արդ՝ եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ հետեւող եղիցի այնմ աղանդի՝ այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ եւ ի սուրբ ժողովոյս. ամէն:

ԿՐՆ Դ. Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ փոխեսցէ զգիրս ընթերցուածոցն զԱւետարանացն զճրագալուցին, զոր սրբոյն Յակոբայ եղբաւր Տեառն մերոյ եդեալ է յաղագս կնոջն փրկութեան ի Հոգւոյն Սրբոյ. այլ արդ, ասեմ, եթէ ոք այլազգաբար խորհիցի ըստ Արտեմոնի եւ ըստ Յոբնաղի դրութեանն, եւ փոփոխէ զսահմանս առաքելականս եւ ոչ ընթերցցի Աւետարան ըստ Ղուկայ «Եւ հովիւք էին» (Ղուկ. Բ. 8) ըստ կնոջն փրկութեան, եւ յետոյ ի Մատթէոսէ ըստ մարմնաւորութեանն եւ նախնիս ունել զԴաւիթ եւ զԱբրահամ. եւ եթէ այլազգ ինչ խորհիցի եւ մտացածին բանիւք վտարանդի առնէ զմարդիկ՝ այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ եւ ի սուրբ ժողովոյն. եթէ քահանայ է լուծցի, եւ եթէ ժողովրդական՝ որոշեսցի: Եւ եթէ ոչ ընթերցցի զընթերցուածոցն գիրս, զոր եդեալ է, առաջինն վասն աշխարհարարութեան եւ յետոյ զԵսայեայ մարգարէի զընթերցուածն, զոր եդեալ է համառաւտ վասն տնաւրէնութեան Տեառն, եւ յետ ամենեցուն ի Դանիէլէ եւ զերգս Երից մանկանցն, եւ զՍատանայ ի հուր. եւ որ այլազգ խորհիցին՝ այնպիսիքն նզովեալ եղիցին յԱստուծոյ եւ ի մէնջ եւ ի սուրբ ժողովոյն:

ԿՐՆ Ե. Վասն ութաւրեայ աւուրցն ընթերցուածոցն եւ Աւետարանացն, թէ պարտ է զամենայն աւուրսն ընթեռնուլ ընթերցուած յառաքելական մատենիցն Պաւղոսի եւ ոչ ընթեռնուլ մարգարէ, վասն զի ամենայն քարոզութիւն մարգարէիցն կատարեցաւ յերեկորին ճրագալուցին եւ միաւորեցաւ հարսն եւ փեսայն յառագաստին. վասն զի այսպէս կանոնեցին առաքեալքն տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

KAR 1. Les apôtres inspirés par le Saint-Esprit ont ordonné que l'Épiphanie soit célébrée le 6 janvier avec grande pompe. Si quelqu'un parmi les patriarches ou les évêques des métropoles, les prêtres ou les diacres célèbre – en dehors des canons – la Nativité le 25 décembre, il a été corrompu par la secte d'Artémon. Et il sera déchu de sa charge, et expulsé de son rang; et ce même patriarche ou cet évêque sera chassé du pays par ordre impérial et vivra en exil jusqu'à sa mort. Et si l'un de nos frères d'Asie célèbre selon les Syriens en suivant la secte d'Artémon, il sera proscrit de l'Église et tombera à l'extérieur comme le sarment (Jn 15, 6). De fait, l'évêque, le prêtre, le diacre – ou simplement celui de l'ordre sacerdotal – qui suit cette secte sera anathématisé par Dieu et par le saint concile de Karin.

KAR 4. L'évêque, le prêtre ou le diacre ou quiconque qui change l'ordre des lectures de l'Évangile des luminaires qui a été établi par Jacques, le frère du Seigneur, pour le salut de la femme par le Saint-Esprit; et celui qui pense comme les autres nations (litt. étrangers), selon Artémon et le décret de Juvénal, et change l'ordre des apôtres, qu'il lise l'Évangile de Luc «Et il y avait des bergers» pour le salut de la femme (Lc 2, 8), puis celui de Matthieu selon l'incarnation et l'ascendance de David et d'Abraham; et s'il pense comme d'autres nations (litt. étrangers), et mène l'homme en esclavage, il sera anathématisé par Dieu et le saint concile de Karin, si c'est un prêtre, il sera délié, si c'est un laïc, il sera exclu. Et s'il ne lit pas le livre des lectures qui a été établi, d'abord sur la création du monde, puis la lecture du prophète Isaïe qui a été établie pour l'économie du Sauveur, puis toute la lecture de Daniel, le cantique des trois enfants et de Satan dans le feu; et s'il pense comme les autres nations (litt. étrangers), il sera maudit par Dieu et le saint concile de Karin.

KAR 5. Concernant l'Octave des lectures et de la lecture des Évangiles, il faut lire tous les jours les lettres de l'apôtre Paul et ne pas lire le prophète, car toute la prédication des prophètes s'accomplit le soir des luminaires et les fiancés sont unis dans la chambre nuptiale comme l'ont canonisé les apôtres. Et saint Jacques a ordonné les lectures, et en se rassemblant le lundi de la Loi dans le sanctuaire

տոսի: Եւ սուրբն Յակոբոս կարգեաց զընթերցուածս եւ յաւրինեաց յերկրորդում աւուրն ի մատրան սրբոյն Ստեփանոսի ժողովելով եւ անդ կատարելով զաւրէն կոծոցն. եւ յետոյ ի Պաւղոսի առաքելական մատենէն եւ Աւետարան ի Յովհաննէ. եւ յերրորդում աւուր կիւրակէին ժողովին ի սուրբ մատրանն որ է կաթողիկէ եւ բարձրագահ քան զամենայն եկեղեցիս եւ ընթեռնուլ ընթերցուած յառաքելական մատենէն եւ Աւետարան ի Մատթէոսէ «Իբրեւ նոքա գնացին» (Մատթ, ԺԱ, 7), եւ այսպէս զամենայն աւուրսն կատարել դրութեամբ սրբոյն Յակոբայ ի փառս Աստուծոյ: Եւ մի՛ հետեւել դրութեան Յոբնաղի եւ Արտեմոնի եւ նոցին խորհողացն: Ապա եթէ ոք գտցի աւտար քարոզութեան հաւանեալ եւ արարեալ՛ եթէ քահանայ է՝ լուծցի, եթէ ժողովրդական՝ որոշեսցի, եթէ եպիսկոպոս՝ արտաքոյ աշխարհաց ելցէ, թագաւորական հրամանաւ յաքսորս բնակեսցէ մինչեւ ցաւր մահուան իւրոյ:

ԿՐՆ Զ. Վասն աւրինաւոր տաւնի Քառասներորդաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր ի փետրուարի ԺԴ-ն հրամայեցաւ կատարել ի փառս Աստուծոյ եւ մի՛ տաւնել ընդ հերձուածողս, որք դրութեամբ Արտեմոնի մոլորեցան յուղիղ ճանապարհէն եւ զդիր եւ զընթերցուած փոխեցին. կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյս, զի ժողովեալ ամենայն հաւատացելոց, բերկրանաւք սրտիւ եւ ցնծալից ուրախութեամբ, հսկմամբ յերեկորեայ տաւնեսցեն ի փառս Աստուծոյ, յորում աւուր եւ հանդիպեսցի, հոգեւորական աւրինութեամբ, ջահիւք բորբոքելովք աւրինել զայն որ ըստ մարմնոյ մարդացաւ եւ կրեաց զամենայն կիրս մարդկային բնութեանս: Մինչեւ յերրորդ ժամն եղիցին ի հսկման ամենայն զգուշութեամբ, եւ յերրորդ ժամուն պատարագ մատչի՝ ի փրկութիւն ամենայն հաւատացելոց, որ զսրբութեամբ վայելողացն աստուածատեսակս գործէ, յորում աւուրն զգիշերն որպէս տիւ լուսաւորէ, այնմ աւուր նկարել եւ ակն ունել եւ մի՛ արհամարհանաւք եւ ծուլութեամբ: Ապա եթէ ի պահս սուրբ Զատկի աղուհացիցն Քառասներորդացն հանդիպիցի, յորում աւուր հանդիպի՛ ի նմին աւուր տաւնեսցի սաղմոսիւք եւ աւրինութեամբ եւ երգովք հոգեւորաւք. եւ մի՛ փոխեսցեն զաւրն՝ ծուլութեան պատճառաւ <եւ> արհամարհանաւք, եւ պատարագ մատչիցի ի փառս Աստուծոյ եւ ի կատարումն խորհրդոյն. եւ ի փափուկ կերակուրս ամենեւին մի՛ լուծանիցին՝ մի՛ ի ձէթ, մի՛ ի գինի եւ մի՛ ի ձուկն, բայց միայն ի հաց եւ յաղ: Եւ եթէ ոք ըստ սովորական սրբոյ բաժակին այլ ինչ ագահիցի ի պատարագին՝ անընկալ լիցի, տաւնն եւ պահքն անվաւեր եղիցի. ըստ Մեծի հինգշաբաթի աւուրն պատարագին եղիցի պատարագն եւ կերակուրն: Ապա եթէ յարձակման աւուր հանդիպիցի՝ գառնազէն խմբեսցեն ամենայն հաւատացեալք ի Քրիստոս:

Դ. Մանի[1]

ԳԱՍ ԺԴ. Համբաւ եհաս երբեմն զԿիւլիկեցւոց եպիսկոպոսէն, թէ դառն խստութեամբ վարի առ իւրսն, որպէս թէ խարանաւք նշաւակէ զոմանս վասն մեղաց, կամ այլ իրիք ինչ. առաքեցաք մերժել զդատապարտողն: Արդ՝ մի՛ անհաւատութեան գործ առ մերս կալցի, զի եւ Մանեայ պղծոյ աշակերտքն զայս առնէին, զի որք զայսպիսիսս գործեն՝ նզովեալքն են:

[1] Հայաստանում Մանիի ուսմունքի տարածման վերաբերեալ տե՛ս **B. Outtier**, «La christianisation du Caucase», *Il Caucaso. Cerniera fra culture dal Maditerraneo alla Persia (Secoli IV-XI). Settimane di studio del Centro Italiano di studi sull' alto medioevo XLIII*, Spolète, 1996, էջ 553-570:

d'Étienne, l'on accomplit l'obligation des lamentations; puis les lettres apostoliques de Paul et l'Évangile de Jean; et le mardi après le dimanche, on se rassemble dans le sanctuaire appelé *kat'olikē* qui est plus élevé que toutes les autres églises et on écoute les lectures des livres des apôtres et l'Évangile de Matthieu «Quand ils arrivèrent» (Mt 11, 7), et ainsi, on accomplit tous les jours selon les écrits de saint Jacques à la gloire de Dieu. Et il ne faut pas suivre les normes de Juvénal et d'Artémon et de leurs complices. Et celui qui dans ses opinions ou dans sa pratique reste étranger à la présente prédication sera déposé, s'il est prêtre, et exclu, si c'est un laïc, et si c'est un évêque, il sera chassé du pays, et par ordre impérial vivra en exil jusqu'à sa mort.

KAR 6. La fête obligatoire du 40e jour de notre Seigneur qui a lieu le 14 février ne doit pas être célébrée selon les hérétiques corrompus par les prescriptions d'Artémon qui ont modifié les modalités des lectures agréables à Dieu; car tous les croyants doivent se réunir dans la joie pour célébrer au crépuscule de la nuit – avec des torches enflammées – Celui qui s'est fait homme selon la chair et a intégré tous les ingrédients de la nature humaine. Jusqu'à la troisième heure, on ira dans les ténèbres avec précaution et à la troisième heure, on fera le sacrifice qui réalise la vision de Dieu. Ensuite, si le 40e jour avait lieu dans le carême du pain et du sel de Pâques, en ce même jour, on le célébrera avec des psaumes, des bénédictions et des chants spirituels et qu'on ne change pas le jour sous prétexte de paresse, et l'on offrira le sacrifice de mystère; et que l'on ne consomme pas des mets raffinés, de l'huile, du vin ou du poisson, mais seulement du pain et du sel. Et si quelqu'un, selon la coutume de la coupe sainte restreint quoi que ce soit d'autre du sacrifice, il ne sera pas accepté et la célébration et le jeûne seront invalides; et que selon le sacrifice du grand jeudi se fassent le sacrifice et la nourriture. Puis, si le jour est libre, tous les croyants se rassembleront à l'agneau pascal.

D. Mani[1]

GNT 14. Jadis la rumeur est parvenue au sujet de l'évêque de Cilicie, comme quoi il se comportait avec une âpre sévérité envers ses fidèles (litt. les siens), marquant certains de stigmates en raison de leurs péchés ou pour d'autres raisons; nous avons ordonné d'écarter celui qui a prononcé une telle condamnation. À présent, que personne n'agisse parmi nous comme un infidèle, car ce sont les disciples de l'impur Mani qui faisaient cela et ceux qui agissent ainsi sont anathématisés.

[1] Sur le manichéisme en Arménie, voir **B. Outtier**, «La christianisation du Caucase» , *Il Caucaso. Cerniera fra culture dal Maditerraneo alla Persia (Secoli IV-XI). Settimane di studio del Centro Italiano di studi sull' alto medioevo XLIII*, Spolète, 1996, p. 553-570.

Ե. Արիոս

ՆԻԿ Գլուխ հաւատոց. Յիշխանութեանն Պաւղովնի եւ Յուղիանոսի փառաւորաց եւ լուսաւորաց, յամաց Աղեքսանդրի ՈԼՋ. յամսեանն մարերի իբրեւ ԻԲ. էր ամսոյն, յառաջ քան զԺԳն կաղանդին յունի ամսոյ ի Նիկիայ, մայր քաղաքացն Բիւթանացւոց, եղաւ հաւատս՝ Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ: Այս են հաւատք, զոր եդին սուրբ հարքն: Յառաջ վասն Արիոսի հայհոյութեանն յասելն թէ արարած է Որդին Աստուծոյ եւ վասն ամենայն հերձուածողաց՝ Սաբեղի, Փոտինոսի եւ Պաւղոսի Սամստացւոյ եւ Մանիքեցւոց եւ Վաղենտինաց եւ Մարկիովնացւոց եւ վասն ամենայն հերձուածողաց, որք յարեան ի վերայ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ, զորս դատապարտեցին ի Նիկիայ քաղաքի իբրեւ ժողովեալ էին եպիսկոպոսք ՅԺԸ. որոց անուանքն ըստ իւրաքանչիւր իշխանութեան գրեալ է, որ զի փութապէս ծառայք Աստուծոյ առաւելագոյն փոյթ եդին զարեւելեաց եպիսկոպոսացն դնել զանունս, վասն զի արեւմտից եպիսկոպոսացն՝ ոչ, նոյնպէս խնդիր ինչ էր վասն հերձուածողաց:

ՆԻԿ Թուղթ Կոստանդիանոսի. Զի չարեաց եւ ամպարշտաց լծակից եղեւ Արիոս, յիրաւի զնոյն պատուհաս նոցին անարգանաւք կրեսցէ, որպէս եւ այժմ Պորփիւր որ աստուածպաշտութեան թշնամին եւ աւրէնսդրութիւն անաւրէնութեամբ վասն պաշտաւնէից հաստատեաց, ըստ արժանի գիւտի գիատուցումն չարեաց իւրոց. եւ այսչափ եւս, զի նախատելի իցէ եւ որ գալոց ժամանակքն իցեն, զի առաւելապէս եւս լցցի չարաչար եւ հայհոյեալ կռփանաւք եւ ապականեսցին որ ի նմա ամպարշտութեան աւրէնսդրութիւնն: Այսպէս եւ այժմ. կամ եղեւ, զի որ Արիոսի եւ ոյք հաւասարեն կամաց նորա, զի Պորփիւրացիք կոչին, զի ոյք եւ ունեք բարուց հաղորդեալ են՝ զնոցին անուանս ունին: Եւ յետ այսորիկ թէ առ ունեք գիրք Արիոսի կարգեալ իցէ եւ գտանիցի՝ զայնպիսիսն այրելով այրեսցեն, զի ոչ միայն ապականեալ վարդապետութիւն նորա կորիցէ, այլ զի ամենայնիւ բնաւ յիշատակ նորա մի՛ գտանիցի: Այլ զայս յայտնապէս հրաման տամ, զի թէ առ ունեք գիրք որ յԱրիոսէ եղեալ կամ կարգեալ իցէ եւ տեսանիցի առ ունեք կամ իբրեւ թաքոյց եւ ոչ առ ետեղ ի կրակ մերձեցոյց եւ կամ ոչ վատնեաց այրելով՝ այսպիսին մահու մեռցի. ապա եթէ ի նմին ժամանակի այլք եւս գտցեն, պատիժս այս լիցի՝ գլուխ զորմ տայցեն եւ այսպէս վճարեսցեն ի կենաց իւրեանց:

ՀԱՒԹ ԺԴ. Հարցումն. Արիանոսաց մերձ կալով կամ այլոց հերձուածողաց, պարտ է պատարագ մատուցանել:

Պատասխանի. Ոչ է պարտ զսուրբ պատարագն մատուցանել, բայց եթէ խոստովանեսցին ի հերձուածոյն փախչել:

ԳԱՍ Ներածութիւն. Աշակերտեալք սրբութեան հաւատոյ՝ դաւանողք սրբոյ ուխտիս քարոզիչք ճշմարտութեան, որք զբանին Աստուծոյ զիջումն ուղղահաւատութեամբ գովեստաբանէք, նախ ուսջիք ի բաց խուսափել ի հերետիկոսացն բծաւորական աղանդից եւ յարիանոսացն չարափառաց, եւ մերոյս ուշ եղեալ բանից ընտրանաւք Հոգոյն Սրբոյ բնակեսջիք ի Քրիստոս Յիսուս տէր մեր:

E. Arius

NIC *Credo*. Nous croyons en un seul Dieu, Père Tout-Puissant. Tel est le *credo* qu'ont établi les saints Pères. Les 318 Pères condamnèrent dans la ville de Nicée les blasphèmes d'Arius, de Sabellius, de Photinus, de Paul de Samosate, des manichéens, des valentiniens, des marcionites et de tous les hérétiques.

NIC Lettre de Constantin. Arius qui s'est joint aux impies subira le même châtiment qu'eux et Porphyre qui a établi une législation inique concernant les ministères sacrés sera accablé de châtiments et d'injures; et sa législation impie ira à sa ruine, et si après cela les écrits d'Arius sont lus et trouvés chez quelqu'un, ces livres seront brûlés afin que sa doctrine corrompue soit détruite et oubliée. Et si ses écrits sont déposés ou lus chez quelqu'un qui donc les cache ou ne les livre pas sur place au feu, j'ordonne (*i.e.* Constantin) qu'il soit tué. Mais si dans le même temps d'autres en trouvent, on les tuera en frappant leur tête contre un mur.

QCA 14. Il ne faut pas offrir le sacrifice en présence d'ariens ou d'autres hérétiques, à moins qu'ils ne promettent de fuir l'hérésie.

GNT Préambule. Les ecclésiastiques doivent avant tout éviter les hétérodoxes des sectes souillées et les ariens cacodoxes, et être attentifs aux canons (litt. à nos paroles) donnés par Grégoire de Nazianze.

ԳԱՍ Ը. Եթէ ցանկայ ոք լինել եպիսկոպոս՝ ահա բարւոյ գործոյ ցանկացաւ ըստ Պաւղոսի, այլ ի հրամայելոց առաքելոցն մի՛ գտցի նուազեալ ամենայն բարեձեւութեամբ գնալ առ եկեղեցականսն եւ առ արտաքինսն, առաւել կալցի բան վարդապետութեան սերմանել լսաւղաց, որպէս եւ Տէրն ի լերինն իւրոց աշակերտացն խրատել, բժշկել, զի մի՛ անունն Աստուծոյ անպատուեսցի ի տգիտութենէն, զի տգէտ հովիւ անպատուելի է Աստուծոյ եւ սրբոց. զի զիմարդ լինի յանձանձիչ եկեղեցւոյ Աստուծոյ որ տգիտանայ քննել զգիրս, որով բանն Աստուած առ Հրեայսն ասէր ունել կեանս եւ Պաւղոս հրաժարեցոյց ի թղթին որ առ Տիմոթէոս եւ Տիտոս (յմմտ. Ա. Տիմ. Գ. 1-7, Տիտ. Ա, 10-16), նաեւ հայրս մեր երկրորդ Աբրահամ ի բեմական նախընծայ վարդապետութեանն հանապազ ասէր. «Ոչ կալ այնպիսեացն յակաստանի, այլ լուծանել հրամայէ բազում ըստգտանաց փաստաւոր», զոր եւ մեծ քարոզն Հռոմայ ի շրջաբերական կանոնեալ թուղթսն ոչ հրամայէ աւծանել զայնպիսիսն եւ զաւծեալսն լուծանել: Արդ՝ որք փառամոլութեամբ եւ վասն մամոնայի ձգեցան առ այսպիսի պատիւ՝ մերժեսցին յառաքելական աթոռոյն. նաեւ ձեռնադրեցին զնա, որպէս ի մէնջ Անտիոքացին որ արծաթով զայս նախաձեռնէր կոչեցելոցն, նոյնպէս եւ Ղուկիոս արիոսեան եւ Զոսիմոս, զի ոչ գիտացեալ զինքեանս, կորուստ բազմաց եղեն. փորձեսցեն նախ զինքեանս եւ ապա ի պատիւն սուրբ մատիցեն, որպէս ուսոյց առաքեալն:

ՄԱԿ Զ. Եւ զիմարդ է արժան զխորհուրդն կատարել:

Զփրկականն խորհուրդ մարմնոյ եւ արեանն Տեառն պարտ է երկիւղիւ եւ զգուշութեամբ կատարել, եւ ուղիղ դաւանել խոստովանութեամբ՝ ուրոյն ի հերձուածողացն փորձիչ խորհրդոց. Զի մի՛ արիանոսացն մերձ լինելով, ըստ առաքելոյն՝ անունն Աստուծոյ եւ ճշմարտութիւնն հայհոյեսցի (յմմտ. Հռոմ. Բ. 24):

ՄԱԿ Թ. Զայս աւանդեմ ձեզ պատուիրան հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ՝ ըստ խնդրոյ աղաչանաց ձերոց. նզովեմք ի վերայ այսոցիկ զայլաձեւսն խորհեցեալսն, զի ի միմեանց ընկալեալ ձեռնադրութեամբ զշնորհս՝ ոչ բերեմք պակասութիւն: Եւ միապատիւ ոչ իրաւունս վարկանիմք զկարգքեալսն ուղղապէս եկեղեցւոյ. եւ զփառամոլ անձինս կըշտամբեմք, որք խորհին հակառակ՝ որպէս պատմեալ եղեւ մեզ զՏուրգեայ Բասենոյ եւ Բագրեւանդայ եպիսկոպոսէ որ սակաւուք ընդ արիանոսս միաւորեալ է եւ դարձեալ խղճեալ: Եւ արդ՝ եւ այլ եւս յանդգնագոյնս խորհի եպիսկոպոս միայն աթոռաւ, եւ ընդ արքեպիսկոպոսին ինքեամբ անձին տայ պատիւ, զոր չէ արժան ընդունել, զի եւ ոչ հարքն աւանդեցին այսպիսի ինչ հակառակութիւնս յեկեղեցի մուծանել. եւ անվայելուչ է համարել հաւասար, մինչեւ կոչմամբ ի պատիւ աթոռոյն ժամանեսցէ: Եւ արդ պարտ է զայնպիսին քաղցրութեամբ ի հնազանդութիւն կոչել. եւ եթէ ի նոյնն մնասցէ՝ խորշել իբրեւ յաւտարէ: Ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիս: Ողջ լերուք ի Տէր հաստատուն եւ ուղիղ հաւատով. ամէն:

Զ. Հոգեմարտներ (աղանդ Մակեդոնի)

ԿՍՊ Ներածութիւն. Յետ ոչ բազում աւուրց թագաւորելոյ մեծի Թէոդոսի աստուածասէր թագաւորի երեւեցաւ այր մի Մակեդոն անուն, որ հայհոյէր զՀոգին սուրբ, եւ ոչ ի Հաւր եւ յՈրդւոյ էութենէ ասէր, այլ յաւտար եղութենէ, վասն որոյ

GNT 8. Le candidat à l'épiscopat doit être capable d'enseigner la doctrine et les Écritures et, en aucune façon être un ignorant, afin de ne pas déshonorer le nom de Dieu, car l'ignorant ne peut pas prendre soin de l'Église et – à l'image du Seigneur – dire aux juifs comment faire usage de leurs biens – et à l'image de Paul – leur faire y renoncer (cf. 1 Tm 3, 1-7; Tt 1, 10-16); de telles personnes ne seront pas consacrées à l'épiscopat et si elles sont déjà évêques, elles seront déposées, comme le disait Abraham et les lettres encycliques canoniales de l'évêque de Rome. Et ceux qui ont usé de la corruption pour accéder à la cléricature – à l'exemple des ariens Lucius et Zosime – seront chassés de leur trône, de même que leurs ordinands

MCJ 6. Il faut célébrer le saint sacrement du corps et du sang du Seigneur avec crainte et avec une confession de foi orthodoxe, et hors des sacrements des hérétiques, du fait qu'en présence des ariens, le nom et la vérité de Dieu sont blasphémés (cf. Rm 2, 24).

MCJ 9. Ceux qui s'opposent à la foi et à l'ordre de l'Église seront anathématisés. Et il convient de respecter la hiérarchie ecclésiastique qui procède des ordinations, et ceux qui s'opposent à cela seront condamnés, comme cela fut le cas de T'urg, l'évêque de Bagrewand, qui pour un court moment s'était uni aux ariens, avant de se reprendre. Et à présent poussé par l'orgueil, alors que n'étant qu'évêque, il veut s'arroger l'honneur d'un archevêque, chose qu'il n'est pas digne de recevoir, car les pères ont dénoncé ceux qui introduisent des oppositions dans l'Église; et il (*i.e.* T'urg) ne doit pas être considéré comme un archevêque tant qu'il n'aura pas accédé à un tel honneur. Il convient donc de le ramener avec douceur à l'obéissance, mais s'il s'obstine, on le traitera comme un étranger.

F. Les pneumatomaques (la secte de Macédonius)

CTP Préambule. Peu après l'accession au trône de Théodose le Grand, l'empereur ami de Dieu, Macédonius blasphémait l'Esprit Saint en disant qu'il ne procédait pas

ժողովին ի Կոստանդնուպաւլիս եպիսկոպոսք ՃԾ., դատապարտեցին զնա եւ հոգեմարտ անուանեցին եւ սահմանեցին բանս՝ գլուխ Գ:

ԿՍՊ Գ. Վասն Մաքսիմոսի շնականի եւ վասն նորա անկարգութեան, որ ի Կոստանդնուպաւլսի եղեւ. զի Մաքսիմոս ոչ եպիսկոպոս եղիցի, եւ ոչ որք ի նմանէ ձեռնադրեցան յոր եւ իցէ աշտիճան վիճակի. ամենայն, որ ինչ ի նա եւ որ նովաւ եղեն, անհաստատուն եղեալ:

ԳԱՍ Բ. Իսկ որք զՍաբէլի զուգահաւաքմանն ի միասին զդսրովելի ախտն ախտանան եւ զՄակեդոնի հոգէմարտի զ'ի բաց ընկենլի զթիւր վարդապետութիւնն, մի՛ ոք այսպիսեացն կցորդեսցի, այլ նզովեսցեն, որպէս արտադրեցին սուրբ հարքն ՃԾ., որք ի Կոստանդնուպաւլիս գումարեցան, ի բաց տրոհելով զչար վիշապն ի մեռեալս: Արդ՝ եթէ ոք ի նոցանէ դարձցի ուրացեալ զաղանդն նոցա՝ նզովիւք ուսցին նախ զհաւատս առաքելական եկեղեցւոյ եւ ապա մկրտեսցին ի կաթողիկէն սուրբ, եւ ոչ վաղվաղակի կալցին աշտիճան ինչ մինչեւ փորձեսցին ըստ առաքելոյն խրատու:

Է. «Նեստորական» եւ Քաղկեդոնական

ԵՓՍ Ներածութիւն. Իսկ յաւուրս փոքու Թէոդոսի, այր վիշապագլուխ երեւեցաւ Նեստոր անուն, սա սկսաւ զինել ընդդէմ ճշմարտութեան եւ շրջաբերական թղթովքն աղանդէր զտիեզերս. զի էր հայրապետ Կոստանդնուպաւլսի ուրուազեալ ի սատանայէ. զՊաւղոսի Սամոստացւոյ եւ զԴիոդորի հայհոյութիւնն հաստատէր, զերկուց բնութեանց շարայարումն պատկանելով ի տնաւրէնութեան բանին Աստուծոյ՝ խորհուրդն քողախնդրէր, վասն որոյ ժողովեալ յԵփեսոս եպիսկոպոսք Մ, անտարրական սրով կտրէին զնա ընդ մէջ եւ կորզէին ի տարաբնակ վայրս սահմանադրելով կանոնս՝ գլուխ Զ:

ԵՓՍ Ա. Քանզի պիտոյ էր եւ որ ոչ եկին ի ժողովն եւ մնացին ի գաւառին՝ ոչ անգիտանալ զկարգաւորեալս, ծանուցանեմք ձերումդ սրբութեան, զի թէպէտ եւ մայրաքաղաքացին, որ է գաւառիդ, ի բաց կացեալ ի տիեզերական եւ ի սուրբ ժողովոյն, կամ որ յետ այնորիկ միաւորեսցի, զի կամ ընդդէմ Կեղեստիանոսի խորհեցաւ՝ Հռոմայ եպիսկոպոսապետին կամ խորհեսցի. սա ընդդէմ եպիսկոպոսաց գաւառին գործել ինչ ոչ իւիք կարասցէ ամենայն եկեղեցական հաղորդութեան աստի առնուլ, քանզի անդէն արտաքսեալ է ի ժողովոցս եւ ոչ ունի զազդողութիւն, այլ եւ նոցա եպիսկոպոսաց գաւառին եւ որ շուրջ մայրաքաղաքացիքն են, որք ուղղափառ հաւատոյս խորհին, ընդ նոցա ձեռամբ եղեցի ամենեւիմբ եւ յաշտիճանէն եւ յեպիսկոպոսութենէն արտաքսեսցի:

ԵՓՍ Բ. Եթէ ոմանք ի գաւառաց եպիսկոպոսունք ոչ գտան ի սուրբ ժողովն եւ յաւելան ի բացակայսն, կամ յաւելուլ կամին կամ ձեռնարկեալք ի քակտումն Նեստորի՝ դարձեալ անդրէն ընթացան ի բացակայ ժողովն, սոցա ամենեւին, որպէս թուեցաւ սուրբ ժողովոյս, աւտար լինել ի քահանայութենէն եւ յաշտիճանէն ի բաց անկանել:

de l'essence du Père et du Fils, mais d'une substance étrangère, c'est pourquoi, 150 évêques se rassemblèrent à Constantinople. Ils le condamnèrent et lui donnèrent le nom de pneumatomaque, et ils établirent trois chapitres.

CTP 3. Les clercs consacrés par Maxime – qui lui-même a été déposé – à Constantinople ne seront pas considérés comme des clercs, sachant que tout ce qui a été fait par lui ou pour lui sera sans valeur.

GNT 2. Il ne faut jamais se joindre aux sabelliens qui confondent comme égaux le Père et le Fils ou aux macédoniens, mais il faut les anathématiser comme l'ont formulé les 150 saints Pères à Constantinople. À présent, si l'un d'eux veut revenir à l'Église, après avoir renié leur secte, il apprendra la foi orthodoxe avec des anathèmes contre les hérésies avant d'être baptisé, mais on ne l'admettra pas immédiatement à la cléricature, afin d'éprouver longuement sa foi selon le précepte apostolique.

G. Les «nestoriens» et les chalcédoniens

EPH Préambule. Sous le règne de Théodose le Jeune, Nestorius – qui était patriarche de Constantinople – poussé par Satan, consolida le blasphème de Paul de Samosate et Diodore de Tarse; il étalait au grand jour l'association des deux natures, comme le mystère convenant à l'économie du Verbe de Dieu; c'est pourquoi, 200 évêques rassemblés à Éphèse le coupaient en deux, le faisaient disparaître en pays étranger et établissaient six canons.

EPH 1. Il faut porter à la connaissance de ceux qui n'étaient pas venus au saint concile d'Éphèse que si le métropolite de la province fait défection au saint concile œcuménique et par la suite s'oppose à Célestin le chef des évêques de Rome, il ne pourra rien faire contre les évêques de sa province favorables au concile ni participer à la communion ecclésiastique, du fait qu'il est déjà exclu par le saint concile; il sera sous l'autorité des évêques de sa province et des métropolites des environs qui sont orthodoxes et il sera exclu de la dignité de l'épiscopat.

EPH 2. Les évêques qui ne sont pas venus au saint concile d'Éphèse et se sont joints aux dissidents ou qui veulent se joindre à eux, après s'être d'abord opposés à Nestorius, avant de rejoindre son conventicule dissident, seront privés du sacerdoce et déchus de leur rang.

ԵՓՍ Գ. Որք յամենայն գաւառի վիճակեալք ի Նեստորէ եւ որք ընդ Նեստորին են արգելեան զուղիղ խորհել՝ եւ սոցա զիւրեանց աշտիճանս առնուլ իրաւացուցաք. եւ հասարակաց տիեզերական եւ ուղղափառ ժողովոյն որք զնոյն խորհին եւ որոց խորհեալ է եւ կամ այժմ եւ կամ յետ այսորիկ վիճակեալս յորում եւ իցէ ժամանակի, որոց թերահաւատեալ են կամ ի բաց կացեալ են կամ զանցեալ են եպիսկոպոսունք զսուրբ կանոնաւք եւ զուղղափառ հաւատովք, համարեցաք մի իւիք ընդ վնասու լինել եւ ոչ իւիք տարազու կամ ժամանակաւ:

ԵՓՍ Դ. Եթէ ոմանք ի բաց կացեալք յուխտաւորաց եւ իշխեսցեն կամ առանձին <կամ հրապարակաւ> ընդդէմ Կեղեստիանոսի խորհել՝ եւ նոքա անկեալք լիցին ի քահանայութենէն ի սուրբ ժողովոյս:

ԵՓՍ Ե. Որք ի չար ինչ ի գործս դատապարտեցան առաջի սուրբ ժողովոյն կամ յիւրեանց եպիսկոպոսաց եւ սոցա անկանոնական վասն առ ամենեսին անխտրութեանն Նեստորիոս եւ կամ որք նորա հաւատոյն են՝ հատուցանել կամեցան կամ կամեսցին կամ աւրէնս կամ աշտիճան, անաւգտակարգ մնասցեն. եւ սոքա եղեցին ոչ ինչ պակաս, քան որք անկեալքն են ի քահանայութենէ, իրաւացի համարեցաք:

ԵՓՍ Զ. Նոյնպէս եւ թէ ոմանք կամեսցին որ ինչ գրով ասացաւ եւ կարգաւորեցաւ ի սուրբ ժողովոյն որ յԵփեսոս, որով տարազու եւ իցէ շարժել զոր սուրբ ժողովն սահմանեաց՝ եթէ եպիսկոպոսունք իցեն կամ վիճակեալք՝ յիւրեանց ամենեւին անկցին յաշտիճանէն. ապա եթէ աշխարհականք իցեն՝ անհաղորդք լիցին:

ԿՐՆ Ը. Դարձեալ ի վերայ այսր ամենայնի պատուիրանագիր աւանդութեանս գեր քան զասացեալս աւանդեմք կանոնական սահմանադրութիւնս հանուրց ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ եւ սպասաւորաց խորհրդական սեղանոյն. զի լուաք լուր սարսափելի եւ ծանրագոյն, թէ ի տեղիս տեղիս յառաջնորդաց եկեղեցւոյ ոմանք խմորեալ ի Նեստորականաց եւ ի Քաղկեդոնականաց, ապականեն զսուրբ խորհուրդն խառնմամբ խմորոյ եւ ջրոյ: Արդ՝ յայսմ հետէ եպիսկոպոս կամ երէց գտցի որ այսպիսի չար սովորութեամբ աւանդեսցեն զսուրբ խորհուրդն՝ լուծցին յամենայն քահանայական պատուոյ եւ ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին: Ապա եթէ տգիտութեամբ ոք արար եւ յետոյ զղջացեալ խոստովան լիցի՝ ընկալցի զայնպիսին սուրբ եկեղեցի Դ. ամաց ապաշխարութեամբ. իսկ եթէ ժողովրդական ոք հաղորդեսցի տգիտութեամբ այնպիսի հերձուածողական ապականեալ աւրինացն՝ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցէ ամս Բ. իսկ կամաւք եւ գիտութեամբ արարողքն՝ զամս Զ. արտաքոյ եկեղեցւոյ լիցին մեծաւ զղջմամբ, եւ վարդապետն հայելով ի ջերմագոյն արտասուսն՝ արժանաւորեսցէ խորհրդոյն: Ապա եթէ ոչ ապաշխարեսցեն եւ արհամարհեսցեն զպատուիրեալս ի մէնջ՝ ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին:

Ը. Մծղնէ

ՆԷԿ Ներածութիւն. Այս կանոնք յետոյ եղան քան որ յԱնկիւրիայն կամ ի Կեսարիայն, բայց քան զՆիկիայն յառաջագոյն, քանզի ժողովեալ ի Նէոկեսարեայ ԺԶ. եպիսկոպոսաց վասն պոռնկական աղանդոյն որ թոյլն տային քահանայից վասն պղծութեան գործոց, յոր ժողովեալ սահմանեցին կանոնս Ի. գլուխք:

EPH 3. Les clercs de n'importe quelle province qui ont été écartés par Nestorius ou ceux de son parti reprendront leur rang; de même que tous les clercs qui, en quelque temps que ce soit, ont adhéré au concile œcuménique et orthodoxe d'Éphèse ne doivent aucunement être condamnés par des évêques qui ont dévié de la foi orthodoxe ou ont transgressé les saints canons.

EPH 4. Les clercs qui font défection et qui s'opposent à Célestin, l'évêque de Rome seront déchus de leur sacerdoce par le saint concile d'Éphèse.

EPH 5. Ceux qui ont été condamnés par le saint concile d'Éphèse ou par leur évêque pour leurs mauvaises actions et qui sont ensuite reçus dans la communion ou sont réintégrés dans leur rang par Nestorius, ou par ceux qui partagent sa foi, cela ne leur sera d'aucune utilité et ils resteront punis et déchus de leur sacerdoce.

EPH 6. Ceux qui s'opposent de quelque manière aux décisions mises par écrit du saint concile d'Éphèse seront complètement déchus de leur rang s'il s'agit d'évêques ou de clercs et s'il s'agit de laïcs, ils seront privés de la communion.

KAR 8. Si en dépit de la vénérable tradition et de la législation canonique, un évêque ou un prêtre – qui étant infecté par les nestoriens ou les chalcédoniens – corrompt le saint sacrifice par le mélange du levain et de l'eau, il sera déchu de sa dignité sacerdotale et anathématisé par le saint concile de Karin. Mais celui qui a agi ainsi par ignorance, puis s'est repenti et confessé sera reçu après quatre ans de pénitence. Si un laïc accepte par ignorance de telles lois hérétiques, il se repentira hors de l'église pendant deux ans, mais s'il agit ainsi volontairement, il se repentira hors de l'église pendant six ans avec une sévère pénitence et le *vardapet* observant la chaleur de ses larmes pourra le réintégrer à la communion. Mais s'il ne se repent pas, le saint concile de Karin l'anathématise.

H. Les *mcłnēs*

NEO Préambule. Seize évêques se réunirent à Néocésarée à propos de la secte de la fornication, qui donnait licence aux prêtres en ce qui concerne les actes d'impuretés.

ՇԱՀ Ներածութիւն. Պարտ եւ պատշաճ է նաւավարին հոգալ զարուեստագործութիւն նաւին եւ զշաւիղս ծովուն նկատել եւ ըստ հողմոցն աջողութեան գնալ ի վերայ մկանանց ծովուն: Նոյնպէս եւ զաւրավարին յամենայն ժամ զզաւրսն ի հանդիսի անցուցանել զայրընտիր եւ զձիրընտիր, զէն զարամբ, սպառազէն զերիվարաւ եւ ակն ունել ի ճակատուն յաղթող գտանել եւ առնուլ պսակ եւ պատիւ ի թագաւորէն: Ապա առաւելապէս արժան եւ իրաւ է վարդապետաց, սրբոյ եկեղեցւոյ հովուաց, առաջնորդաց աւրինաց արդարութեան եւ ստոյգ պատուիրանաց Աստուծոյ կենդանւոյ, «Ցանենայն ժամ յաւրէնս Տեառն խորհել ի տուէ եւ ի գիշերի» (Սաղ. Ա, 2), եւ զմանկունս եկեղեցւոյ յամենայն ժամ նորափետուր զարդարել ի Տէր:

Յետ փոխելոյ յերկրէս վարդապետացն, հարցն արդարոց եւ ճշմարիտ աւրէնսդիր առաջնորդացն, եւ մանաւանդ սրբոյ քահանայապետին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ հոգելից, հոգեկիր, ճշմարտասէր վարդապետին Մեսրովբայ, որ լուսաւորեաց զերկիրս Հայոց վարդապետութեամբ իւրով, ի փոխել նոցա յերկրէս լինէր եղծումն եւ քայքայումն կարգաց եւ աւրինաց սրբոյ եկեղեցւոյ, որպէս եւ տեսանէր ի տեսլեանն յառաջագոյն սուրբ քահանայապետն Սահակ, կամ եւս յառաջ սուրբն Գրիգորիոս: Բազմանային որք յաճախէին ի գործս պղծութեան եւ յետս ընդդէմ գնային. «ի ցամաքել սիրոյն բազմանայր անաւրէնութիւն» (յմմտ. Մատթ. ԻԴ. 12). եւ ոչ ոք էր որ քաղէր զորոմնն եւ սրբէր զգաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սէզն եւ տարածէր աւր ըստ աւրէ. եւ լինէր յաճախումն մծղնէից եւ այլոց չարեաց՝ կնահանէից, պոռնկաց, գողոց, անձնակամակաց, ամենայն խոտորնագ չարագործաց յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորգոմայ. եւ լինէր սուգ եւ տրտմութիւն: Որք էին ի ժամանակին նախանձնախնդիր վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք, որք ունէին զուխտ սրբութեան, պաշտաւնեալք Քրիստոսի եւ մանկունք սրբոյ եկեղեցւոյ. այլ եւ յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան արդար ճանապարհին: Եւ մանաւանդ, զի ոչ էր ի ժամանակին յայնմիկ իշխանութիւն եւ տէրութիւն ի ձեռն ազգին Մամիկոնէից, զի ղաւղեալ եւ նուաճեալ եւ հնազանդեալ էին համբարձելոյ պարսկային թագաւորութեանն. զի թէպէտ եւ հեծէին մռմռային, մռնչէին ի նմանութիւն կորեանց առեւծուց, Վարդան Մամիկոնեան համազգաւք իւրեանց՝ հանդերձ եղբարբք, այլ կային իբրեւ ի գառագղի արգելեալք, եւ ակն ունէին ի վերուստ աւգնականութեան, քանզի չարահնար ազգն Պարսից ի կասկածանս կային եւ յերկիւղի եւ ոչ տային զիշխանութիւնն ի ձեռս նոցա:

Ապա «Աւր ըստ աւրէ բղխէր զբան եւ գիշեր գիշերոյ ցուցանէր» (Սաղ. ԺԸ. 3) զգործս անարգելութեանն բան առ բան հասանէր մարդ ի մարդոյ, ինչումն լինէր յիւրաքանչիւր լսելիս: Գային ժողովէին ի հրամանէ միաբանութեանն յեղեալ կէտն ի Շահապիվան, ի բանակետղ թագաւորացն Հայոց, ի ժամանակ<ի> Նորաբեր տաւնին: Եւ լինէր այս ի Ե. ամի թագաւորութեանն Յազկերտի Պարսից արքայի եւ Վասակայ Սիւնւոյ մարզպանութեանն Հայոց եւ Վահանայ Ամատունւոյ հազարապետութեանն եւ Վրուայ Խոռխոռունւոյ մաղխազութեանն:

<Եւ գային ժողուէին եպիսկոպոսք Ի[1] եւ երիցունք բազումք, սարկաւագք եւ նախանձայոյզ պաշտաւնեայք Քրիստոսի եւ համաւրէն ուխտք եկեղեցւոյ, իշխանք, գաւառատեարք, գաւառակալք, պետք, բռնաւորք, զաւրագլուխ հարիւրաւորք, ազատք, կուսակալք կողմանց կողմանց մեծ աշխարհին Հայոց, նախարարք ամե-

[1] Տե՛ս էջ 376-377, ի. 1:

SHV Préambule. Il est nécessaire et convenable pour le capitaine de se soucier de la maîtrise du navire et de considérer les voies de la mer et, au gré des vents, de se frayer adroitement sur les ondes de la mer. De même, le général à tout instant doit passer en revue ses troupes, l'élite des troupes d'infanterie et des cavaliers, l'armement des hommes, la cuirasse des coursiers et veiller à se rendre victorieux sur le front, et à recevoir laurier et gloire de la part du roi. Dès lors, bien plus encore est-il digne et juste pour les *vardapet*s, pasteurs de la sainte Église, prélats des lois de justice et des authentiques commandements du Dieu vivant, «de méditer en toute heure la loi du Seigneur, de jour comme de nuit» (Ps 1, 2), afin d'orner en toute heure les enfants de l'Église d'un nouveau plumage dans le Seigneur.

CSE 4. Ceux qui disparaissent en mer, dans un fleuve, chez les impies, en raison de la foudre, des fauves, de l'épée ou de toute autre mort violente, les autorités ecclésiastiques commémoreront le souvenir de ces défunts croyant dans le Christ et la résurrection.

SCN 11. Les apostats ou les transgresseurs n'accéderont pas à la cléricature.

SCN 12. Ceux qui après avoir cru ont apostasié sans qu'il y eût danger feront pénitence pendant trois ans dans les larmes et la mortification, et prendront ainsi part aux prières, et après quinze ans, ils seront dignes du pardon.

SCN 21. Les prêtres qui ont sacrifié et qui ensuite sont revenus, et ont confessé leur faute ne seront pas complètement déposés, mais ils seront seulement dignes du trône sans pouvoir offrir le sacrifice ni prendre la parole, ni accomplir un autre ministère sacerdotal. Similairement, le diacre ne fera pas les proclamations ni ne servira, sauf si l'évêque l'y autorise, en raison d'une grande piété.

SCN 22. Ceux qui ont sacrifié sous le coup du danger et de la violence, tout en s'avouant toujours chrétiens, feront pénitence pendant trois ans puis seront dignes du pardon.

SCN 61. Celui qui prie devant les anges ou devant d'autres créatures sera anathématisé.

ՎԱՉ ԺԱ. Եւ որ զկին թողու, եւ որ առանց պսակի կին առնէ, եւ որ անաւրէն եւ մարդասպան է, եւ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն եւ դառն մահ ի վերայ դիցեն:

ԲԳԿ ԺԲ. Որ գՔրիստոս ուրանայ եւ յանցանէ զփրկական խորհրդովն՝ զամենայն ժամանակսն լալով ապաշխարեսցէ եւ յետին թոշակին արժանի լիցի, եթէ այր եւ եթէ կին:

ԲԳԿ ԻԲ. Քահանայութիւն է որ յԱստուածոյ է եւ է՝ որ ի սատանայէ. զի որ ուրացող է կամ արուագէտ կամ անասնապիղծ կամ պոռնիկ կամ արբեցող կամ ընչասէր կամ մարմնազեղծ կամ արիւնահեղ կամ ագահ կամ անողորմ, եւ լինի քահանայ, այնպիսին ի հաւրէ սատանայէ է. եւ եթէ չեն գիտակ նորա չար գործոցն, թէ որդի սատանայի է նա, մկրտեալն եւ պսակեալն ի նմանէ անմեղադրելի են՝ վասն չգիտելոյ զչարիսն, բայց ամենայն չարիք պատահեն նոցա:

ԲԳԿ ԼԳ. Որ մոնազոնութիւն խոստանայ եւ կին առնէ, ուրացող է, նոյնպէս եւ քահանայն:

ԲԳԿ ԽԷ. Կին եթէ շնացաւ ընդ առն անաւրինի յիւր կամաց եւ զղջացաւ՝ Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, բազում տրաւք ողորմութեամբ հաղորդեսցի աւրինաց. բայց վարդապետն հայելով ի վարսն՝ գյորդորումն սիրոյ մի՛ արգելցէ, իշխան է կարճել զժամանակն:

ԲԳԿ ԾԱ. Թէ ոք ամուսնացի ընդ առն անաւրինի, թէ թողցէ զպղծութիւնն եւ յապաշխարութիւն եկեսցէ՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ՝ ընդ ձեռամբ, Ա՝ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, տրաւք եւ արտասուաւք արժանի լիցի աւրինաց: Ապա եթէ դարձուսցէ զայրն ի մոլորութենէն ըստ գրեցելումն, թէ՝ «Որ դարձուցանէ զմոլորեալն նա մեծ կոչեսցի» (յմմտ. Մատթ. Ե. 19), բայց սակայն վասն անարգանաց սուրբ պսակին՝ Ա. ամաւ սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ԾԻԲ. Որ զմանկունս անհաւատից ի ստինս առնուն՝ Բ. ամ ընդ ունկնդիրս կացցէ եւ Ա. ամ՝ ընդ ձեռամբ:

ԲԳԿ ԾԻԴ. Ոչ է արժան ճաշակել հաւատացելոց ընդ անհաւատից եւ ոչ համբուրել եւ ոչ ի տունս նոցա մտանել. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ԾԼԹ. Այր կամ կին յանհաւատից թէ գան ի մկրտութիւն՝ արժան է ընդունել քահանային, բայց փորձել եւ քննել պարտ է. թէ ունին ամուսին՝ չէ արժան քակտել, այլ սրբութեամբ տանել յաւազանն եւ զկարգն կատարել եւ ապա աւրինել զջուրն եւ ինքեանց լուանալ տալ եւ ինչս ծախել եւ աւր ըստ աւրէ յորդորել ի հաւատս:

ԲԳԿ ՃԾԳ. Թէ ոք ակամայ ըմբռնեցաւ յանաւրինաց ի պոռնկութիւն, որպէս թէ

RVG 11. Celui qui abandonne sa femme, qui cohabite avec une femme sans l'épouser, qui est un impie, qui est un homicide ou qui consulte les voyants sera amené à la cour royale chargé de chaînes pour être mis à mort cruellement.

ECB 12. L'homme - ou la femme - qui renie le Christ et viole le mystère vivifiant fera pénitence en pleurant tous les jours de sa vie, et alors il sera digne du viatique.

ECB 22. Le sacerdoce peut être inspiré par Dieu mais aussi par Satan; car l'apostat, l'homosexuel, le zoophile, le fornicateur, l'ivrogne, celui qui aime les richesses, le difforme, le sanguinaire, l'avare ou l'inhumain qui accède à la prêtrise a Satan pour père; mais celui qui est baptisé ou marié par un tel prêtre sans avoir eu connaissance de ses crimes ne sera pas condamné, mais les crimes commis par ce prêtre pourraient retomber sur lui.

ECB 33. Celui qui promet de devenir moine puis se marie est un apostat, de même que le prêtre qui se marie.

ECB 47. La femme qui tombe volontairement dans l'adultère avec un homme impie, puis regrette fera pénitence sept ans avec les auditeurs, puis pendant trois ans elle entrera et sortira de l'église avec les pénitents, et grâce à de nombreux dons et aumônes, elle pourra communier; mais le *vardapet* observant sa conduite pourra raccourcir la durée de la pénitence.

ECB 51. Celle qui se marie avec un homme impie, puis s'éloigne de la souillure fera pénitence pendant trois ans avec les auditeurs, puis pendant deux ans sous surveillance, et elle entrera et sortira avec les pénitents pendant un an, et par des aumônes et des larmes, elle sera digne de communier. Mais si l'homme se détourne de son impiété (litt. de son égarement), il se grandira (cf. Mt 5, 19), mais du fait qu'il a outragé le mariage, il se purifiera pendant un an avant de communier à la communion.

ECB 122. Celles qui prennent les enfants des infidèles pour les allaiter (litt. au sein) se tiendront deux ans avec les auditeurs et un an sous surveillance.

ECB 124. Les fidèles qui mangent avec les infidèles, qui les embrassent ou qui vont dans leurs maisons seront anathématisés.

ECB 139. Le prêtre doit recevoir l'homme - ou la femme - infidèle qui demande le baptême non sans l'avoir éprouvé et examiné; et si l'infidèle est marié, il ne doit pas quitter son conjoint, mais le prêtre devra les emmener vers la piscine pour y accomplir la règle et bénir l'eau, et les immerger dedans en épuisant le surplus d'eau, puis il les exhortera jour après jour dans la foi.

ECB 153. L'homme - ou la femme - qui fornique sous la contrainte avec des impies

ի գերութեան վարեալ եւ առանց աւգնականի ի փորձութիւն անկանի՝ յայտ է թէ առանց պատժոց է, թէ այր եւ թէ կին, բայց այրն ի քահանայութիւն մի՛ իշխեսցէ մերձենալ. ապա եթէ ընդ իւր հաւատակցի ըմբռնեցաւ ակամայ՝ Ա. ամ ապաշխարեսցէ ընդ ձեռամբ եւ մտեալ յեկեղեցի հաղորդեսցի աւրինաց:

ԲԳԿ ճԾԴ. Թէ ոք յանհաւատից առցէ իւր կին ի հաւատացելոց եւ ինքն յաւժարի ի հաւատս՝ նախ տեսցեն սրտի մտաւք զդարձ նորա եւ ապա առցէ զաւծումն մկրտութեան եւ զպսակն աւրհնութեան: Ապա եթէ յառաջ ամուսնասցի եւ զպսակն աւրհնութեան պղծեսցէ՝ ապաշխարութիւն ըստ այնմ որ ընդ անաւրհնին պոռնկի:

ԲԳԿ ճԾԵ. Պոռնկորդի կամ անհաւատ թէ վարժին դպրութեամբ եւ սուրբ վարուք մատչին ի քահանայութիւն, վկայութեամբ այնոցիկ որ գիտակն են՝ եղիցին արժանի, զի չիք խտիր ձեռն աւազանին:

ԲԳԿ ճԾԸ. Թէ ոք ի հաւատացելոց գերեվար լինիցի՝ վասն կերակրոյ մի՛ մեռացի, բայց վասն հաւատոց մեռցի, զի պսակ ընդ սուրբս ընկալցի: Ապա եթէ ուրասցի՝ ուրացեալ լիցի առաջի Հաւրն որ յերկինս է. թէ դառնայ ի հաւատն՝ վարդապետն իշխան է հաւատովքն ուղղել զգործն:

ԲԳԿ ճԿԱ. Թէ ոք դնէ զյոյս իւր ի մարդ մահկանացու, եղիցի նզովեալ յԱստուծոյ:

ԲԳԿ ճՀԸ. Քահանայ մի՛ իշխեսցէ մտանել ի տուն կնոջ որ ունիցի այր անհաւատ, մի՛ թողցէ զնա յեկեղեցի Աստուծոյ եւ մի՛ ընկալցի ողջոյն ի նմանէ եւ մի՛ տացէ աղ զուարակի նորա եւ մի՛ կնիք ուստերաց եւ դստերաց նորա. եւ եթէ հասանէ վախճան՝ զրկեսցին ի թոշակէն, բայց թէ դարձցին եւ ապաշխարեսցեն զկարգն. եւ եթէ ոք յանդգնի ի քահանայից երթալ առ նոսա եւ տալ զսրբութիւնս Աստուծոյ՝ շանց՝ եղիցի ընդ խաչահանուսն Քրիստոսի:

ԲԳԿ ճՀԹ. Քահանայ մի՛ թողցէ զոք յերդումն յեկեղեցի ամենեւին եւ մի՛ ճրագ անցուցանել եւ լինել ուրացող. եւ եթէ ոք յանդգնի՝ եղիցի ընդ խաչահանուսն Քրիստոսի, զի դատաւորքն իշխանք են եւ ոչ քահանայք:

ԲԳԿ ճՁԵ. Կերակուր որ յազեալ է յանաւրինաց՝ զայն շունք կերիցեն եւ ի հաւատացելոց մի՛ ոք իշխեսցէ ճաշակել ընդ նոսա. եւ եթէ ոք յանդգնի՝ եղիցի նզովեալ:

ԲԳԿ ճՁՁ. Ոչ է արժան քահանայի յանաւրինաց պտուղ առնուլ կամ կաթն կամ խունկ, կամ ողջոյն տալ եւ վիճել վասն հաւատոյ, եւ զանունն Աստուծոյ հայհոյել, կամ փոխ տալ եւ առնուլ ի նոցանէ, բայց զայն միայն որ ի սպանդանոցի վաճառի. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ լիցի:

ԲԳԿ ՄԴ. Այր կամ կին եթէ ի զղջումն գան եւ ի խոստովանութիւն՝ մի՛ տացէ

du fait qu'il est emmené en captivité ou qu'il ne reçoit aucune aide face au danger ne sera pas puni, mais l'homme ne pourra pas accéder à la cléricature; mais si la fornication forcée se fait avec un coreligionnaire, il se tiendra pendant un an sous surveillance avant de pouvoir entrer dans l'église et communier.

ECB 154. L'infidèle qui épouse une croyante et souhaite embrasser la foi chrétienne sera examiné sur la sincérité de sa conversion, puis il recevra l'onction du baptême et la couronne de bénédiction du mariage. Mais s'ils se souillent avant le mariage, elle supportera la pénitence réservée à ceux qui ont forniqué avec des infidèles.

ECB 155. Le fornicateur ou l'infidèle qui se prépare à la cléricature et qui vit avec sainteté pourra accéder à la prêtrise, avec le témoignage de ceux qui attestent de sa pureté, car les fonts baptismaux effacent tous les péchés.

ECB 158. Le croyant en captivité ne doit pas se faire tuer en raison d'une nourriture impure, en revanche, il doit le faire pour la foi, afin de recevoir la palme en compagnie des saints. Mais s'il se renie, dans les cieux le Père le reniera; mais si par la suite, il revient à la foi, le *vardapet* agira avec piété.

ECB 161. Celui qui place son espoir dans un homme mortel sera anathématisé par Dieu.

ECB 178. Le prêtre ne doit pas entrer dans la maison d'une chrétienne dont le mari est un infidèle et il ne doit pas la laisser entrer dans l'église de Dieu, et il ne doit pas recevoir de salut de sa part ni donner du sel à son bœuf pour le *matal*, ni baptiser ses fils et ses filles; ni à sa mort, leur offrir le viatique, sauf s'ils se convertissent et font pénitence selon la règle; et si un prêtre ose aller vers eux pour offrir la sainteté de Dieu aux chiens, il sera compté parmi les crucificateurs du Christ.

ECB 179. Le prêtre ne laissera personne jurer dans l'église ni n'éteindra un flambeau comme un apostat, car les juges peuvent faire cela mais pas les prêtres; mais celui qui laisse faire de telles choses sera compté parmi les crucificateurs.

ECB 185. La nourriture qui a été immolée par les impies doit être donnée aux chiens; et le croyant qui ose en manger sera anathématisé.

ECB 186. Le prêtre ne doit pas acheter des fruits, du lait ou de l'encens à des impies ni les saluer ou discuter de foi avec eux – sous peine de blasphémer le nom de Dieu –, ou leur accorder un prêt, ou en bénéficier d'un de leur part, mais il doit seulement acheter ce qui se vend à la boucherie; sinon il sera anathématisé.

ECB 204. L'homme ou la femme qui se repent et se confesse ne doit pas s'adresser

կրաւնաւորի կամ յայլ վիճակի, այլ իւրում քահանային՝ իւրում վիճակին: Եւ զկարգն առեալ թէ գտցին ի պղծութեան՝ եղիցի ապաշխարութիւն նոցա ընդ ուրացողացն:

ԲԳԿ ՄԻԶ. Թէ ոք ի հաւատացելոց տեսանէ զխաչ ի գերութեան ի ձեռս անաւրինաց եւ ոչ ջանայ մինչեւ ցմահ թափել զնա՝ եղիցի նզովեալ ի Քրիստոսէ:

ԲԳԿ ՄԾԴ. Որք ընթանան առ նոսա եւ որք զաղանդսն առնեն եւ մոլորեցուցանեն զմարդիկ ի բանէն Քրիստոսի՝ որպէս զաւձն հողակեր նզովեալ լիցին:

ԲԳԿ ՄԿԸ. Որք բանիւ Աստուծոյ աներկեւան երդմամբ դաշն խաղաղութեան հաստատեն վասն առ թշնամիս պատերազմողս՝ առ հաւատացեալս կամ առ հեթանոսս, եւ յետ այսորիկ ուխտադրուժ գտան դաշանցն եւ սպանին զնոսա եւ կամետուն ի ձեռս բարբարոսաց կամ յետս կացուցին ի հաւատոյն՝ այս չարիք եւ աղէտք հաւասար են այնոցիկ, որք ուրացան զՔրիստոս. պարտ է նոցա զամենայն ժամանակս ապաշխարել, զի կրկին ընկալցին զսպանողացն զդատաստանս, զի որով բանիւ փրկեցան արարածք, զնոյն բան դեղ մահու նիւթեցին:

ԲԳԿ ՄԿԹ. Որք հրամանաւ հեթանոսաց եւ բռնաւորաց առաքեցան լրուտես եւ զաշխարհս հաւատացելոց ի ձեռս թշնամեաց նոցա երթեալ ազդումն առնելով գուշակմամբ ապրեցուցին զբազումս փախստեամբ, նոքա ոչ ըստ առաջին մեղացն ընկալցին զդատաստանն, վասն զի բաժանորդ կացին այնոցիկ, որոց գրով պատմին նահատակութեամբ յիշատակք: Ապա եթէ դաւաճանող չարին գտանի պատճառաւ որ ի սուր եւ ի գերութիւն յափշտակութեան, այս չարիք ի վեր են եւթն պատիկ առաւել քան զսպանողացն դատաստանս. այսուհետեւ ոչ գտանի սահման կանոնական տալ նոցա դարձ փրկութեան, այլ եպիսկոպոսն տեսցէ զդարձ նոցա խոստովանութեանն, զինչ կամեսցի արասցէ՝ իշխան է, այլ մի՛ անյուսութեամբ դատապարտեսցէ, զի մի՛ իսպառ կորուսցէ, այլ կարեկից եւս լիցի իբրեւ ժառանգակից, զի հոգին ապրեսցի յահագին դատաստանացն:

ԳԱՍ Ե. Եթէ ոք զկնի մկրտութեանն ըմբռնեցաւ յուրացութիւն եւ եկեսցէ դարձեալ ի սրբութեան հաւատն՝ ընդունելի լիցի ապաշխարութեամբ եւ արտասուաւք՝ մնալով յերախայիցն կարգի որչափ յամեացն արտաքոյ, եւ ապա ի ներքս ածցի Ե. ամեայ ապաշխարութեամբ եւ ապա հաւասարեսցի խորհրդոյն. իսկ եթէ դարձեալ ուրասցի՝ ոչ եղիցի ընդունելի:

ԳԱՍ Է. Իսկ որք ի կռապաշտութիւն տարագրեցան, զոհեցին եւ կերան յաժդհցն, եթէ երախայ իցէ՝ մկրտութեամբ սրբեսցի՝ Ե. ամեան ժամանակաւ ապաշխարեալ եւ սրբեալ աւազանաւն. ապա եթէ ոք ի մկրտելոց իցէ՝ Ժ. ամեան ժամանակաւ ապաշխարեալ հանդիպեսցի փրկութեան՝ Ե. ամ արտաքոյ եւ Ե. ի ներքս յոյժ երկիւղածութեամբ եւ հաւատով սրբեալ հաղորդեսցի. եւ եթէ արժանաւոր է այլովք վարուք կենաց իւրոց՝ յաշտիճան մատիցէ:

ՍԿՆ ԺԴ. Վասն որ զհեթանոսս կին առնէ կամ լինի առն՝ չար է, մանաւանդ

à un ecclésiastique d'une autre juridiction, mais uniquement au prêtre de sa paroisse. Et si une fois placés parmi les pénitents, ils sont trouvés dans la souillure, ils seront placés avec les apostats.

ECB 226. Le fidèle qui aperçoit une croix en captivité aux mains d'impies et ne cherche pas à la délivrer au péril de sa vie sera anathématisé par le Christ.

ECB 254. Ceux qui s'allient à ceux qui s'adonnent à la pratique des écritures démoniaques (litt. sectaires) ou qui scrutent la lune, ou les étoiles et adhèrent à leurs sectes, et éloignent les hommes de la parole du Christ seront anathématisés à l'instar du serpent.

ECB 268. Ceux qui prêtent serment par Dieu pour établir des traités de paix avec des guerriers ennemis croyants ou païens, puis violent le traité et massacrent ces ennemis ou les livrent aux barbares, alors qu'ils s'étaient convertis à la vraie foi, seront identiques à ceux qui ont renié le Christ; ils feront pénitence durant toute leur vie sous peine d'être doublement traduits devant le tribunal des homicides, et les mêmes paroles qui ont sauvé les créatures seront des remèdes contre la mort éternelle.

ECB 269. S'agissant de ceux qui sur ordre des païens ou des oppresseurs espionnent des pays peuplés par des croyants, mais profitant de leur influence parviennent à sauver beaucoup d'habitants en les incitant à fuir, on ne les condamnera pas pour leur péché, car ils auront partagé le sort de ceux dont le souvenir est inscrit dans le livre des martyrs. Mais si le traître accomplit son méfait en raison de la violence (litt. de l'épée) et de la captivité, son crime sera pire que tous les homicides, et aucun canon en vue du salut n'existant à ce sujet, l'évêque observera la confession du criminel avec clémence, afin de ne pas le livrer au désespoir.

GNT 5. Celui qui après avoir été baptisé, tombe dans l'apostasie, puis revient de nouveau à la sainte foi sera reçu en restant dans le rang des catéchumènes avec une pénitence et des larmes autant d'années qu'il est resté en dehors de la foi, et il sera admis à l'intérieur de l'église pour une pénitence de cinq ans, puis il participera au mystère; mais s'il apostasie de nouveau, il ne pourra plus être reçu.

GNT 7. Celui qui a été déporté chez les idolâtres (litt. en idolâtrie) et qui a sacrifié, et mangé des viandes immolées sera – s'il est catéchumène – purifié par le baptême après avoir fait pénitence pendant une durée de cinq ans et avoir été purifié dans la piscine; mais s'il s'agit d'un baptisé, il obtiendra la rédemption après avoir fait pénitence pendant dix ans – cinq ans à l'extérieur de l'église et cinq ans à l'intérieur – avec grande crainte et foi, il sera alors purifié et communiera; et si, pour le reste, il a une conduite de vie convenable, il accédera à la cléricature.

NPT 14. Celui qui épouse une païenne - ou la païenne qui se marie avec un

եթէ յանհաւատութեան կան մնան: Եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցէ եւ զծնունդսն ածիցէ ի հաւատս:

ՍԿՆ ԻԶ. Վասն որ չարապաշտ էր եւ հմայից հաւատայ բժժանաց՝ Ե. ամ ապաշխարեսցէ:

ՍԲՆ Ա. Թէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր աւելի քան զդպրացն եւ զփարիսեցւոցն (Մատթ. Ե. 20), եւ թէ ոք պակասեալ գտցի, ո՛րպիսի պատժոց պատժապարտ գտանիցի. զի եթէ հրեշտակաց խաւսիւք հաստատեցաւ բանն եւ ամենաստուգանողն պատժապարտեցաւ՝ քանի՞ եւս պատուհաս ի վերայ յանցանացն որք ի վերայ կատարելութեանն թերակատարք գտանիցին. զի փարիսեցին պարծէր՝ «Պահեմ երկիցս ի շաբաթու». եւ որք ուխտադրուժք գտանիցին՝ քան զփարիսեցին եւս հայհոյանաց արժանի են: Նոքա ոչ առաւելեան յարդարութիւն, այլ եւ պակասեալ եւս գտան. եւ այս յետին անմտութիւն է՝ զի յաւրինացն հրաժարեն եւ ի շնորհս ոչ դադարեն. եւ զինչ կամին լինել. քաջ գիտեմ, ի հեթանոսութիւն կամին դառնալ եւ ի զոհաբեր ճենճերսն վայելել: Վասն զի նախնիքն երկուս աւուրս ի շաբաթուն պահեցին՝ զմին վասն բանսարկուին յանցանացն եւ Եւայի անկմանն եւ զմիւսն վասն Ադամայ պատրանացն եւ ելանելոյն ի դրախտէն: Եւ վասն այսպիսի պատճառանաց հարքն մեր զյիշատակ սրբոցն յաւուրցս այսցիկ յառաջիկայսն անցուցին, բայց միայն զԱստուածոյն եւ զԱստուածորդւոյն ուր եւ հանդիպեսցի՝ կատարել զայն, զի Աստուած է եւ զամենայնն լուծանէ: Զծննդեանն ասեմ եւ զմկրտութեանն, զի նա ծոմացուցանէ աւուրս Ը. համարէն ամենայն հաւատացելոց՝ զշաբաթն եւ զմիաշաբաթն. եւ զտաւն Աստուածայայտնութեանն յորում աւուր դիպեսցի՝ կատարեսցեն:

2. Հեթանոս եւ Մոգ

ԿԱՌ ԺԶ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ որ սիրէ զՀրէայս եւ հաղորդի ընդ նոսա, կցորդ եղիցի Յուդայի Սկարիովտացւոյ, որ սիրեաց զՀրէայսն կամ զհեթանոսս, որ երկիր պագանեն արարածոց փոխանակ Արարչին, մի՛ մտցէ յեկեղեցի եւ մի՛ բնակեսցէ ի մէջ հաւատացելոց. եւ եթէ իցէ ի միջի նոցա՝ մի՛ թողցեն զնա, այլ որոշեսցեն եւ զատուսցեն ի բաց յինքեանց, եւ մի՛ կացցէ ի միջի նոցա, զի մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ պղծեսցին նովաւ բազումք:

ԿԱՌ ԺԷ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ ոք Հրէայ կամ հեթանոս եկեսցէ եւ խառնեսցի յեկեղեցի, եւ դարձեալ թողցէ եւ երթիցէ յիւր բնութիւնն, եւ դարձեալ կրկնեսցի եւ եկեսցէ ի նոյն պաշտաւնն, զոր անարգեացն, մի՛ ընդունիցիք եւ մի՛ խառնիցէք ի մէջ ձեր, այլ որոշեալ զատուսցի ի միջոյ ամենեցունց, եւ կացցէ ի նմին կարգի ուր էր զառաջինն, եւ մի՛ հաղորդեսցին ընդ նմա, որք ճանաչեն զնա:

ԵԱԿ ԾԷ. Եթէ ոք ժառանգաւոր վասն մարդկային երկիւղի Հրէի կամ հեթանոսի կամ թերահաւատի կորասցի, եթէ զանուն Քրիստոսի՝ ունի՝ լուծցի եւ որոշեսցի. իսկ եթէ զանուն ժառանգաւորի՝ լուծցի:

chrétien - est un criminel, et tout particulièrement s'il reste dans l'incroyance. Mais s'ils se séparent ou si l'infidèle meurt, elle fera pénitence pendant quinze ans et leurs enfants seront menés vers la foi.

NPT 26. L'impie qui a foi dans les amulettes des ensorceleurs fera pénitence pendant cinq ans.

SVN 1. Les chrétiens qui ne respectent pas les jeûnes prescrits sont pires que les pharisiens (Mt 5, 20) et paraissent souhaiter retourner au paganisme pour jouir des graisses de leurs sacrifices. Les Anciens jeûnaient deux jours par semaine, un jour pour les ruses qui ont causé la chute d'Ève et un jour pour la séduction d'Adam suivie de son expulsion du paradis. Mais les pères ont fait passer la mémoire des saints de ces jours-là aux jours de l'avent, excepté s'agissant des fêtes de Dieu et du Fils de Dieu qui doivent être célébrées quel que soit le jour où elles tombent, car Dieu libère (litt. délie) tout. Pour la Nativité et le Baptême, l'ensemble des croyants jeûne huit jours y compris le samedi et le dimanche, et il faut célébrer l'Épiphanie quel que soit le jour où elle tombe.

2. Les païens et les zoroastriens

CAP 16. Celui qui aime les juifs et communie avec eux sera un complice de Judas; et celui qui aime les juifs ou les païens et se prosterne devant les créatures au lieu du Créateur n'entrera pas à l'église, et ne restera pas parmi les croyants; et si c'est le cas, il devra être retranché de parmi eux, afin que la souillure soit contenue.

CAP 17. Le juif ou le païen qui se convertit au christianisme, puis retourne à sa religion d'ơrigine, puis se convertit à nouveau ne pourra pas être reçu parmi vous, mais il devra retourner avec ses coreligionnaires et ses connaissances ne devront pas communier avec lui.

CCL 57. Le clerc qui par crainte humaine devant un juif, un païen ou une personne de peu de foi renie le nom du Christ sera déposé et exclu; s'il se repent on le recevra comme laïc.

ԵԱԿ ԿԶ. Եթէ ոք ի քրիստոնէից ձէթ տարցի ի մեհեանս հեթանոսաց կամ ի ժողովարանս Հրէից ճրագունս՝ լուծցի:

ԵԱԿ ՀԴ. Զառ ի հեթանոսաց եկեալն եւ մկրտեալն եւ կամ ի խառնակ վարուց՝ ոչ իրաւացի է վաղվաղակի ընձեռել յեպիսկոպոսութիւն, քանզի անիրաւ է զոր չեւն փորձեալ է այլոց լինել վարդապետ, բայց եթէ երբեք յաստուածային շնորհացն եղիցի:

ՆԻԿ Բ. Վասն այնոցիկ որք յարտաքնոցն յայլ աղանդացն կամիցին հաւատալ եւ քո առեալ՝ վերստին ծնցիս աւազանաւն եւ վարդապետեսցես զուսումն գրոց սրբոց՝ կամ եղեւ սուրբ ժողովոյն, բայց առանց փորձելոյ եւ քննելոյ եւ ամենեւին ի վերայ հասանելոյ մի՛ հաւատասցեն ի նա զիշխանութիւն եկեղեցւոյ եւ զաւրինաց մերոց միչեւ արմատ առցէ եւ հաւաստեաւ սրտիւ իւրով իմասցի զզաւրութիւն Աստուծոյ մերոյ. «Մի՛ մատաղատունկ. զի մի՛ հպարտացեալ ի դատաստան սատանայի անկանիցի» (Ա. Տիմ., Գ. 6):

ԱՆԿ Ժ. Վասն որք ուտեն խառն եւ անխտիր զկերակուրս հեթանոսաց՝ կամ եղեւ սուրբ եւ մեծ աստուածասէր ժողովոյն ասել, թէ սրբոցն ամենայն ինչ սուրբ է եւ պղծոցն ամենայն ինչ պիղծ է (Տիտ. Ա, 15). զի զոր ինչ արժան է ուտել նոցա այս է, թէ հնար ինչ իցէ ամենեւին մի՛ ճաշակել. ապա եթէ ոք յանդգնեսցի յորկորստութիւն զպանիր, զմիս, զոր երախայ մարդոյ զենեալ իցէ՝ մի՛ կերիցէ եւ զամենայն ինչ կերակուր եւ զըմպելի եւ զմիրգ եւ զբանջար անգամ, զոր ինչ ընդ յաժտ անցուցեալ է, ամենեւին մի՛ մերձենալ, բայց զոր ինչ ընդ յազումն պղծութեան իւրեանց չիցէ անցուցեալ զհաց, զգինի, զմիրգ, զբանջար, զհանդերձ, զկենդանի անասուն համարձակ լիցի: Այլ եւ դու նոյնպէս մի՛ տայցես զսրբութիւն շանց, զկերակուր ուխտի սրբոյ եկեղեցւոյ մարդոյ որ ոչ ունի զդրոշմ տէրունական (Մատթ. Է. 6), ոչ հրամայեն կանոնք: Եթէ կամեսցի զառաքելոյ բանն ի կիր արկանել՝ «զոր ինչ ի սպանդանոցի վաճառի կերայք» (Ա. Կոր. Ժ. 25, 28), լուր անդէն նմին, զոր ինչ ասեն, թէ գիտիցես թէ զոհեալ է կամ թէ ոք ասիցէ պղծեալ է՝ մի՛ ուտիցես: Ապա թէ ոք յանդգնեալ ընդդէմ հրամանիս եւ զորկորստութեան կամսն առնիցէ՝ ապաշխարութեամբ եւ գթով տնանկաց սրբեսցէ Ա. ամ ընդ ձեռամբ լինել, այլ ուխտի մանկանց ամենեւին ոչ մերձենալ: Ո՞չ գրեալ է, թէ. «Առ արտաքինսն իմաստութեամբ գնասջիք». (Կողոս. Դ. 5) զի մի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյեսցի ի մէջ հեթանոսաց:

ԿԵՍ Է. Վասն դիւթաց որք խոտորին եւ ըստ սովորութեան հեթանոսաց գիետ երթան, որպէս թէ ի տունս հեթանոսաց մտանել իբրեւ գիտակ լինել եւ ուսանել գիրս կախարդութեան եւ ապա ի զղջումն եկեսցեն եւ ի խոստովանութիւն՝ փորձեսջիր եւ քննեսջիր զդարձն, Ե. ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ Բ. ամ ընդ ձեռամբ հաւասարեսցէ աղաւթիցն, ողորմութեամբ եւ գթով տնանկաց սրբեալ զինքն հաղորդեսցի աւրինաց ըստ սուրբ ժողովոյն:

ԼԱԻ Զ. Չէ արժան այլազգւոյն եւ հերձուածողին ի յամելն իւրում յայսպիսի իրս՝ ի տաճար Աստուծոյ մտանել:

CCL 66. Le chrétien qui offre de l'huile à un sanctuaire païen ou à la synagogue des juifs, ou encore des lampes sera déposé.

CCL 74. Le païen qui vient d'être baptisé ou celui qui a mené une vie de débauche n'accédera pas immédiatement à l'épiscopat, car n'ayant pas encore été éprouvé, il ne peut devenir le *vardapet* des autres, à moins que cela ne se réalise par la grâce divine.

NIC 2. Les païens ou ceux venant d'autres sectes recevront le baptême dans la piscine et bénéficieront d'un enseignement biblique, mais ils n'accéderont pas à une autorité dans l'Église ou sur nos lois sans avoir été examinés et éprouvés de façon approfondie; un catéchumène ne pourra pas recevoir une telle autorité (1 Tm 3, 6).

ACY 10. Ceux qui mangent indifféremment les nourritures des païens devraient s'en abstenir et, si possible, ne pas en manger du tout, même si «pour les purs, toute chose est pure et, pour les impurs, toute chose est impure» (Tt 1, 15); aucune nourriture – notamment du fromage et de la viande – ou boisson offerte en sacrifice aux idoles ne doit être mangée par gloutonnerie; mais ce qui n'a pas été offert en sacrifice – pain, vin, fruits, légumes, provisions, animaux vivants – peut être mangé. Inversement, la nourriture de l'Église ne doit pas être donnée à un non-baptisé (Mt 7, 6), car les canons ne l'autorisent pas (1 Co 10, 25; 10, 28). Mais celui qui satisfait ses désirs gloutons fera pénitence pendant un an sous surveillance et par la pitié (*i.e.* des aumônes) en faveur des pauvres, il pourra communier, mais il ne pourra pas accéder au clergé (Col 4, 5).

CES 7. Les devins qui suivent la coutume des païens et entrent dans leurs maisons pour apprendre la sorcellerie, si ensuite ils se repentent, on les examinera et ils feront pénitence en se tenant pendant cinq ans avec les auditeurs, et pendant deux ans ils participeront aux prières sous surveillance, et grâce aux dons aux pauvres, ils communieront.

LAO 6. Le païen (litt. étranger) ou l'hérétique, tant qu'ils persévèrent dans cet état, n'entreront pas dans le temple de Dieu.

ԼԱՒ Թ. Չէ մարթ համարձակել երթալ ի հանգիստս եւ ի դիրս եւ բնակս կամ որ ասին մատրունք ամենայն այլազգեաց, առ ի պէտս ինչ աղաւթից կամ մխիթարութեան, այլ զայսպիսիս թէ ի մերոց հաւատացելոց են՝ մերժել արժան է եւ կապել յեկեղեցւոյ մինչեւ ապաշխարել եւ խոստովանել զանցանսն, եւ ապա խառնեսցին:

ԼԱՒ Ժ. Չէ մարթ ոյք յեկեղեցւոյ մերոյ են ի պէսպէս եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ զդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ:

ԼԱՒ Լ. Ոչ է մարթ ուխտականաց եւ վանականաց կամ բնաւին քրիստոնեայք եւ թէ աշխարհական ոք եւ թէ այլ ոք ընդ կանայս ղուղել եւ լուանալ, զի նախ այսու մեղադրեն զմեզ հեթանոսք:

ԼԱՒ ԼԱ. Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել կամ առ հերձուածողս, բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի:

ԼԱՒ ԼԲ. Չէ մարթ յայլազգեաց աւրհնութիւն առնուլ, զի չէ աւրհնութիւն, այլ անմտութիւն եւ բարկութիւն:

ԼԱՒ ԼԳ. Չէ մարթ ընդ այլազգիս կամ ընդ հերձուածողս յաղաւթս կալ:

ԼԱՒ ԼԴ. Չէ մարթ քրիստոնէի թողուլ զմարտիւրոսս Քրիստոսի եւ երթալ առ սուտ մարտիւրոսս այլազգեաց, որ աւտարացեալ են յԱստուծոյ. եւ որ յայնպիսիսն մերձեսցին՝ նզովեալ լիցին:

ԼԱՒ ԼԵ. Չէ արժան քրիստոնէից թողուլ զեկեղեցի Աստուծոյ եւ երթալ ի տեղիս ուրեք եւ հրեշտակս անուանել եւ ժողովս առնել եւ ի գաղտնիս կուռս պաշտել. զի եթէ գտցի ոք այսպիսի՝ նզովեալ լիցի, զի եթող զՔրիստոս՝ որդի Աստուծոյ եւ յայսպիսի իրս համարձակեցաւ:

ԼԱՒ ԼԷ. Չէ արժան՝ Հրէից կամ այլազգեաց զտաւնական պատարագս նոցա կամ զնուէրս ընդունել. զի մի՛ գտցուք հաւասարորդք տաւնից նոցա եւ մեղաց:

ԼԱՒ ԼԸ. Չէ արժան ի տաւնս հեթանոսաց հաւասարել, որ առանց Աստուծոյ է:

ԳՐԻ Դ. Որք երթան ի տունս հեթանոսաց, եւ ուտեն եւ ըմպեն անխտիր՝ Գ. ամ արտաքոյ ապաշխարեսցեն, ապա արժանի լիցին հաղորդել:

ԳՐԻ Է. Թէ ոք կերիցէ ի տեղւոյ՝ սրգելցէ զուտելն եւ տացէ աղքատաց նոյնչափ:

ՀԱԹ ԺԹ. Հարցումն. Թէ ուրուք ի հեթանոսութեան ժամանակի արարեալ իցէ զկին եղբաւր իւրոյ եւ արդ կամիցի լինել քրիստոնեայ եւ ասէ. «Տուք ինձ կնիք». պաՀրտ է առնուլ յանձն, թէ մեկնել ի կնոջէն եւ ապա կնքել:

Պատասխանի. Չէ արժան մեկնել, զի ոչ էր ընդ աւրինաւք յորժամ զկինն արար:

LAO 9. Le croyant qui va aux tombeaux, aux sépulcres, aux sépultures et aux *martyria* des païens (litt. étrangers) pour les prières ou l'exhortation sera exclu et interdit par l'Église, jusqu'à ce qu'il fasse pénitence et se confesse, et alors, il communiera.

LAO 10. Il n'est pas permis pour les membres de notre Église de livrer garçons et filles aux mariages bizarres et dissolus des païens (litt. étrangers), de donner à ceux-ci ou prendre femme d'eux.

LAO 30. Les clercs, les moines et les chrétiens en général ne doivent pas nager et se baigner avec les femmes, car c'est d'abord cela que les païens nous reprochent.

LAO 31. Il ne faut pas contracter alliance avec les païens (litt. étrangers) ou les hérétiques, sauf s'ils acceptent de croire en la sainte Église.

LAO 32. Il est interdit d'accepter une bénédiction des païens (litt. étrangers) car ce n'est pas une bénédiction, mais folie et colère.

LAO 33. Il est interdit de prier avec les païens (litt. étrangers) ou avec les hérétiques.

LAO 34. Le chrétien qui délaisse les martyrs du Christ pour aller prier les pseudo-martyrs des païens (litt. étrangers); ainsi que ceux qui se rendront chez eux seront anathématisés.

LAO 35. Ceux qui délaissent les églises de Dieu pour aller en quelque endroit invoquer les anges et faire des réunions pour honorer les idoles en cachette seront anathématisés.

LAO 37. Il ne faut pas accepter les offrandes ou les dons festifs des juifs ou des païens (litt. étrangers), pour ne pas se trouver en train de participer à leurs fêtes et à leurs péchés.

LAO 38. Il ne faut pas participer aux fêtes des païens qui sont sans Dieu.

GLI 4. Ceux qui se rendent dans les maisons des païens, qui y mangent et y boivent sans réserve feront pénitence pendant trois ans à l'extérieur de l'église, puis ils pourront communier.

GLI 7. Celui qui mange dans un lieu interdit (*i.e.* chez des païens) donnera la même quantité de nourriture aux pauvres.

QCA 19. Le païen qui a épousé la femme de son frère, puis demande à être baptisé pourra l'être sans avoir à se séparer de sa femme; car il n'était pas soumis à la loi (*i.e.* chrétienne) quand il s'était marié.

ՀԱՌ ԼՉ. Հարցումն. Եթէ ոք անուանեալ քրիստոնեայ է եւ ի մահուան որդւոյ իւրոյ կամ դստեր կամ զինչ եւ է մերձաւորի կոծ դնէ հեթանոսաբար անյուսութեամբ եւ անառակութեամբ, փողովք եւ լկտութեամբ, պարուք զճակատ հարկանել արիւն հանել եւ ոչ լսել ձայնի խրատու քահանայիցն, այլ թշնամանել եւս եւ մերժել յինքեանց զքահանայսն անյուսութեան բանիւք, զինչ պարտ է առնել: Կամ վասն կենդանեացն, որ արարին այնպէս լկտութիւն կամ մեռելոյն յիշատակի կամ յետ միանգամ եւ երկիցս խրատուն եւ սոցա յանդգնութեանն, եւ մեզ յորո՞մ կարգի պարտ է հաստատուն կալ:

Պատասխանի. Ի բաց կալ ի նոցանէ եւ զնոսա արտաքոյ եկեղեցւոյ առնել, մինչեւ ի զղջումն եւ ապաշխարել բազում ժամանակս. իսկ զյիշատակ մեռելոյն քահանայքն արասցեն:

ՀԱՌ ՁԲ. Հարցումն. Թէ մոգի ուրուք կին կամի քրիստոնեայ լինել եւ այրն չարգելու, բայց ի կենդանութեան իւրում չարձակէ ի բաց, պարտ է նմա կնիք տալ, թէ ոչ. նոյնպէս եւ այրն եթէ կամի քրիստոնեայ լինել եւ կինն ի նմին մոգութեան հաստատուն կայ, պարտ է տալ կնիք ի նմին ամուսնութեան, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է տալ, կարի քաջ:

ՀԱՌ ՁԳ. Հարցումն. Թէ ոք ի քրիստոնէից լինի մոգ եւ կին նորին ի քրիստոնէութեան հաստատուն կայ. խիղճ ինչ է կնոջն, ընդ մոգի առնն կեալ, թէ ոչ, կամ սրբութեան հաւասարել համարձակութիւն է, թէ ոչ:

Պատասխանի. Ի սրբութիւնսն չէ իշխանութիւն մերձենալ, վասն զի նա եւ այրն իւր մի մարմին են. «Եղիցին, ասէ, երկոքին ի մարմին մի» (Ա. Կոր. Ձ. 16):

ԲԱԿ ԻԵ. Եթէ ոք ի սարկաւագաց ընդ հեթանոսի պոռնկեաց՝ անընդունելի է եկեղեցւոյ. ապա յետ Է. ամի ընկալցին զնա ի հաղորդութիւն, վասն զի յայտնի եցոյց զժամանակ ապաշխարութեան իւրոյ: Որոց միանգամ զանուն Քրիստոսի յանձինս իւրեանց առեալ է եւ զգործ քրիստոնէութեան թշնամանեն, ոչ ինչ աւգուտ է նոցա ի կոչմանէն:

ԲԱԿ ԼԹ. Իսկ որ հմայից եւ հարցկաց միտ դնեն եւ զհեթանոսական սովորութեան զհետ երթիցեն եւ դարձցին եւ խոստովան եղիցին՝ զտարի մի լալով կացցեն հեռացեալք յեկեղեցւոյ եւ զտարի մի արժանաւորք եղիցին լսել զձայն պաշտամանն եւ զերեամ մի առաջի անկանելով ժողովրդեանն եւ զտարի մի ընդ հաւատացեալսըն կացցեն եւ այսպէս եղիցին ընկալեալք:.

ՇԱՒ ԺԱ. Որք կոծ դնեն մեռելոյ եւ անյուսութեամբ լան՝ թողեալ զյուսով եւ զաւրհնութեամբ զհրաժեշտն, զորմէ ասէ քարոզն, «Եթէ այսու կենաւք միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք» (Ա. Կոր. ԺԵ. 19). եւ եթէ «Մի տգիտանայք վասն ննջեցելոցն» (Ա. Թես. Դ. 12), իբրեւ զանյոյս հեթանոսս: Արդ՝ եթէ յազատաց կամ ի շինականաց առաքելական կանոնին ընդդիմանան եւ կոծ դնեն՝ նզովեալ լիցին դնելիքն եւ կոծողքն, տարի մի յեկեղեցի մի՛ մտցեն եւ տուգան կալցին ազատին՝ Ճ. դրամ եւ շինականին՝ Ծ., եւ աղքատաց բաշխեսցեն. զի որով բարկացու-

QCA 36. Le chrétien qui, à l'occasion de la mort de son fils, de sa fille ou d'un de ses proches se lamente comme les païens, de façon obscène et débauchée avec des trompettes, des danses et en se frappant le front jusqu'aux sangs, et n'écoute pas les conseils des prêtres, mais les outrage et les repousse avec des paroles désespérées; et si, après été réprimandé par les prêtres, il persiste dans son impudence, il faudra se séparer de telles personnes et les exclure de l'Église jusqu'à ce qu'elles se repentent et fassent pénitence durant un long moment, et les prêtres commémoreront le souvenir du défunt.

QCA 82. Si la femme d'un zoroastrien souhaite devenir chrétienne et que son mari ne l'en empêche pas, mais que de son vivant il ne la répudie pas – ou si un mari zoroastrien veut devenir chrétien mais que sa femme reste fermement dans le zoroastrisme, l'un comme l'autre devront être baptisés, assurément.

QCA 83. La chrétienne dont le mari chrétien se convertit au zoroastrisme restera avec lui, mais elle ne pourra plus communier; car elle et son mari ne forment qu'un seul corps (1 Co 6, 17).

BAC 25. Le diacre qui fornique avec une païenne ne pourra plus être admis dans l'Église; mais après sept ans de pénitence, il pourra communier. Ceux qui après avoir porté le nom du Christ outragent la cause du christianisme ne tireront aucun bénéfice de leur nom.

BAC 39. Ceux qui prêtent attention aux augures et aux devins en suivant la coutume des païens, puis se convertissent et se confessent devront pleurer pendant un an en se tenant à l'écart de l'église et pendant un an ils seront dignes d'entendre le son de la liturgie, puis ils se prosterneront face à l'assemblée pendant trois ans, et ils se tiendront avec les *credentes* pendant un an, et alors ils seront admis.

SHV 11. S'agissant de celles qui se frappent par deuil à côté des morts et qui pleurent avec désespoir, faisant fi des obsèques célébrées avec des bénédictions pleines d'espérance (1 Co 15, 19; 1 Th 4, 12), comme les païens qui n'ont pas d'espérance. À présent, si des nobles ou des vilains s'opposent au canon apostolique et se frappent par deuil, ils seront anathématisés, autant celles qui se frappent que ceux qui les commanditent, et ils n'entreront pas dans l'église pendant une année; et ils s'acquitteront d'une amende – de 100 *dram* pour les nobles et de 50 pour les

ցինն զԱստուած եւ զհոգի մեռելոյն խռովեցուցին. ի ձեռն տնանկաց տրոցն Աստուած հաշտեսցի եւ վախճանելոյն հանգիստ լիցի: Եւ մանաւանդ թէ որ վախճանէրն՝ կոծ չհրամայեաց դնել եւ ընտանիքն եդին, որպէս ասացաքն, կոծադիրքն եւ կոծողքն յաւրինութենէ հեռի եղիցին եւ յեկեղեցւոյ: Եւ մեռելոյն ընտանիք պատարագ մի՛ արասցեն, զի ինքեանք ընդ բանիւ են, բայց երիցունքն եւ պաշտաւնեայքն յիւրեանց անձանց յանուն մեռելոյն պատարագ մատուսցեն, որպէս եւ արժանն խնդրէ, մինչեւ ընտանիքն ի կարգ եկեսցեն եւ զանունն յիշեսցեն ի սուրբ խորհուրդն. զի հոգիքն ի հանգստեան եղիցին: Ապա եթէ մեռեալն ի կենդանութեան իւրում պատուիրեաց թէ կոծ դիջիք, զտուգանն զոր հրամայեն կանոնք՝ երկպատիկ տացեն, եւ ընտանիքն եւ կոծողքն զպատուհասն զոր եդաք՝ կրեսցեն. բայց մեռելոյն պատարագ ոք մի՛ մատուսցէ եւ յիշատակ մի՛ արասցէ, եւ զանուն նորա մի՛ յիշեսցեն փոխանակ անյուսութեան նորա:

ՇԱՀ ԺԳ. Որ զազգական կին առնէ՝ այս պղծութիւն եւ գարշանք յայտնի լիցի, «Եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում» (Եփես. Ե. 3). զի մի՛ ոք ընդ աղտախանս մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց եւ անաստուած ամպարիշտ ազգացն. զոր հրաման առեալ մեծ աւրէնսուսոյց մարգարէին Մովսէսի ի Կենարարէն, թէ՝ «Պատուիրեա որդւոցն Իսրաէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ, յայտնել զառակաս նոցա» (Ղեւտ. ԺԸ. 6): Եւ յանէծսն գրէր Մովսէս, թէ «Անիծեալ որ ննջիցէ ընդ մերձաւորի արեան իւրոյ» (Բ. Օրէնք ԻԷ. 20, 22): Արդ՝ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն եւ զքրիստոնէութիւն զգեցեալ եւ զտէրունական մկրտութիւն՝ զկնիք եւ զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբաւրորդի կամ զհաւրաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի «Բարկութիւն անձին իւրում գանձէ» (յմմտ. Յռ. Բ. 5) այնպիսին. «Որդի անաւրինի թերակատար եղիցի եւ զաւակ անաւրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի» (Իմաս. Գ. 16): Զի եթէ զկին եղբաւր իւրոյ ունելոյ՝ մեծի մարգարէին եւ կարապետին Յովհաննու գլուխն կտրեցաւ (յմմտ. Մատթ. ԺԴ. 3-11, Մարկ. Զ. 24-27), ապա զինչ եւս աղէտս ոչ համարեսցի ոք, որ զազգական իւր կին առնիցէ, զոր ոչ հրամայեն աւրէնքն քրիստոնեականք եւ սուրբ առաքեալքն եւ աշակերտքն Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք ընդդիմացեալ աւրինացս եւ հաստատեալ կանոնիս եւ ամպարշտեալ ի հեթանոսութիւն եւ ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին եղիցի եւ բաժին նորա եւ ի սրբոյ եկեղեցւոյ աւտարացեալ եղիցի, որպէս եւ գրեալ է. «Բարձցի ամպարիշտն յերկրէ եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ» (Ես. ԻՁ. 10). «Ընդ անաւրէնս համարեսցի» (Ես. ԾԳ. 12, Մարկ. ԺԵ. 28) ըստ գրեցելոյն՝ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանաւրէնութիւն» (Սաղ. Զ. 9), մի՛ ոք ընկալցի զպատարագս նորա, քանզի պիղծ է առաջի Տեառն պատարագ նորա: Եւ թէ մատուցողն պիղծ է, առաւել եւս եւ զհին նորա: Եւ եկեղեցի եւ կանոնք զապաշխարութիւն նորա ոչ ընդունին, զի «Ի խոտորել յինէն անզգամին եւ ես ինչ ոչ փոյթ առնէի» (Սաղ. Ճ. 4). մինչեւ թողցեն եւ դարձցին յանզգամութենէն եւ ի պիղծ գործոցն ըստ մարգարէին ձայնի. «Ընկեցէք զչարիս ձեր» (Ես. Ա. 16), ասէ Տէր:

Եթէ ոք այնպիսեացն պսակ աւրինեսցէ, կամ ի հարսանիս երթիցէ, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա՝ եւ ի կարգէ պաշտաւնէից հեռացեալ եղիցի: Եւ եթէ ոք

vilains – qui seront distribués aux pauvres. Et notamment, si le défunt n'avait pas commandé qu'on célèbre son deuil en se frappant et que sa famille a néanmoins préposé des pleureuses, comme nous l'avons dit, les organisateurs du deuil et celles qui l'accomplissent seront bannis des bénédictions de l'Église. Et la famille du mort ne fera pas dire une messe car elle est sous interdit, mais les prêtres et les ministres prendront l'initiative de célébrer la messe en l'honneur du mort, comme si cela avait été réclamé par une personne digne, jusqu'à ce que la famille retourne à l'ordre, alors elle aura le droit de demander à l'Église de commémorer le nom du défunt lors du saint mystère, afin que les âmes reposent en paix. Mais, si de son vivant, le mort avait ordonné qu'on célèbre son deuil en se frappant, alors sa famille versera le double de l'amende imposée par les canons et la famille, et celles qui se frappent supporteront le châtiment que nous avons fixé; mais personne n'offrira une messe à la mémoire du mort et ils n'auront pas le droit de rappeler son nom en raison de son manque d'espoir.

SHV 13. Celui qui prend pour femme une parente, commet un acte manifestement impur et abominable et suit la coutume des païens et des nations athées impies (Ép 5, 3; Lv 18, 6; Dt 27, 20, 22). Aucun chrétien n'aura le droit de prendre pour femme sa sœur ou la fille de sa sœur, ou la fille de son frère, ou la sœur de son père, ou toute autre personne membre de sa parenté jusqu'au quatrième degré (Rm 2, 5; Sg 3, 16; Mt 14, 3-11). À présent, si quelqu'un s'oppose à ces lois et à ce canon qui a été établi, et avec impiété s'égare dans le paganisme et le judaïsme, sa part sera placée avec eux, et il deviendra étranger à la sainte Église (Is 26, 10; 53, 10; Ps 6, 9; 100, 4; Is 1, 16).

Celui qui bénit le mariage de telles personnes ou assiste aux noces se rend complice de leurs actes malfaisants, et il sera éloigné de l'ordre des ministres du culte. L'évêque ou le prêtre convaincu d'avoir été au courant sera déchu de son siège et de son sacerdoce, et il ne s'approchera pas de l'ordre des ministres du culte. Mais ceux qui se sont écartés des saintes lois et de la règle de l'Église, s'ils se convertissent de leur mariage impur et se séparent l'un de l'autre, pour le salut de leur âme, ils donneront des dons considérables, jusqu'à la moitié de leur fortune et de leurs biens aux nécessiteux, aux affligés et à la sainte Église; ils feront pénitence chaque jour de leur vie, pour devenir dignes de recevoir la communion à l'achèvement de leur vie. Mais les autorités ecclésiastiques qui étaient au courant et qui avaient béni le mariage paieront une amende de 500 *dram* aux pauvres, si c'est un évêque, de 200 *dram*, si c'est un prêtre; et celui qui a béni le mariage paiera 200 *dram*, et alors ils pourront regagner leur siège et leur sacerdoce.

Mais si les époux ne renoncent pas à leur mariage impur, le célébrant du mariage et ceux des prêtres qui étaient au courant ne regagneront pas leur siège et leur sacerdoce. Ces lois et ces canons s'appliquent autant pour le noble que le vilain.

Mais si quelqu'un s'élève contre ces canons et demande pour quelle raison les canons de Nicée n'ont pas disposé des sanctions aussi sévères, la réponse est que personne ne pouvait prévoir que des méfaits et des crimes aussi considérables

եպիսկոպոս կամ երէց գտցի ի խորհրդեանն՝ յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկեալ եղիցին եւ ի կարգ պաշտաւնէիցն մի՛ մերձեսցին: Բայց որ խոտորեցան յաւրինաց սրբոց եւ ի կարգէ եկեղեցւոյ, եթէ դարձցին ի պիղծ ամուսնութենէն, եւ մեկնեսցին ի միմեանց՝ ի ձեռն մեծամեծ տրոց մինչեւ զկէս կենաց եւ ընչից իւրեանց հոգւոց իւրեանց բաժին տացեն ի կարաւտեալս եւ ի վշտագնեալս եւ ի սուրբ եկեղեցի. զաւուրս կենաց իւրեանց ապաշխարեալ՝ ի վախճանին թէ լիցին հաղորդելոյ արժանի: Ապա եւ գլխաւորք եկեղեցւոյն որ ի խորհրդին էին եւ որ զպսակն աւրհնեաց, Շ դրամ եպիսկոպոսն, տուգանեսցի յաղքատս եւ Մ՝ երէցն, եւ Մ՝ որ զպսակն աւրհնեաց, եւ ապա մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն:

Ապա եթէ նոքա ոչ մեկնեսցին ի պիղծ ամուսնութենէն՝ եւ պսակադիրն եւ ի քահանայիցն որ ի խորհրդին եղեալ էին, մի՛ մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն: Թէ ազատ է, թէ շինական, աւրէնք եւ կանոնք այդ կացցեն:

Ապա եթէ ոք ընդդէմ եկեալ ասիցէ, թէ ի Նիկիական կանոնսն ընդէ՞ր չէ այդպէս ծանր եղեալ. վասն զի ոչ ունէր ոք ակն թէ այդպիսի մեծամեծ չարիք եւ աւճիրք յաշխարհի գործիցին, այլ անդէն վաղվաղակի մաւտակտուր խզէին զչար արմատ կորստեանն:

ՅԻԱ ԻԸ. Իսկ զայնոսիկ, զորս աւրհնութեամբ եւ աւծմամբ կատարեալ է, որք միանգամ եւ իցեն աստուածային խորհրդոցն գործարանք, պարտ է զնոսա պատուել եւ պաշտել, երկրպագել եւ համբուրել, զի ի նոսա բնակէ Հոգին սուրբ, եւ նոքաւք մատակարարէ ի մարդիկ զպահպանութիւնս եւ զշնորհս բժշկութեան ախտից հոգւոց եւ մարմնոց: Այլ եթէ մեռանել հասցէ ի վերայ այնոցիկ ի ձեռն հեթանոսաց՝ մի՛ հրաժարեսցէ, զի մեծագոյն այնպիսւոյն առաջի կայ յոյս եւ ընդ մարտիրոսս համարեալ է:

ՍԻՈՆ Ներածութիւն. Որք պատմող աստուածային աւրինադրութեանն եղեն աշակերտքն՝ առաքեալք ի Տեառնէ եւ ընդհանուր ընդ տիեզերս աւետարանել առին հրաման զբանն կենաց եւ ընկալան զաջողութեան շնորհ ի Սրբոյ Հոգւոյն՝ իջմամբ ի նոսա, ուր էին իսկ ժողովեալ ի վերնատունն միով միաբանութեամբ հաւատով, քանզի «Ուր իցեն երկուք կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ եւ ես ի մէջ նոցա» ասաց Տէր (Մատ. ԺԸ. 20): Զնոյն եւ մեծն Պաւղոս ասէ. «Ոչ թողուցուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք» (Եբր. Ժ. 25):

Ի սոյն միաբանական ժողով ամ յամէ մեզ արժան է հասանել, քննել եւ տեսանել զկարգս եկեղեցւոյ, զոր կանոնեցին սուրբ հարքն, թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողովուրդք եկեղեցւոյ: Վասն որոյ ես՝ Սիոն, որ ոչ ըստ արժանեաց, այլ ըստ ողորմութեանն Աստուծոյ, եպիսկոպոսապետ Հայոց, հոգ զայս յանձին եդեալ կոչեցի զեպիսկոպոսակիցս իմ ի հոգեկան հարկիս այսորիկ, խորհուրդ տնտեսել մեզ սպասաւորաց բանին, զոր ընկալաք յանձին՝ հովուել զժողովուրդ Տեառն, հաստատել զաւանդեալ աւրինադրութիւն սուրբ հարցն, իսկ զթերին լնուլ բարեպաշտութեամբ, ի նոյն կանոն միաբանել: Եւ վասն զի ամենայն ուրեք խափան եւ արգելեալ տեսանեմք զգործ մշակութեան վերատեսուչ դիտողաց եկեղեցւոյ ի բռնագոյն գործաւար իշխեցողաց, որ ընդ մեզս են եպիսկոպոսացս որոց խափան եղեւ ի նոցանէ առ մեզ գալ, հաւանական իւրեանց թղթովք գրեցին մեզ ածել յաւարտումն բարի զբարւոքապէս խորհուրդն:

seraient commis en ce monde, mais pour le reste les Pères de Nicée arrachaient au plus près et détruisaient la mauvaise racine de perdition.

YAP 28. Les croix bénies et ointes sont des instruments des mystères divins à honorer, car elles contiennent l'Esprit Saint qui protège et guérit les maux corporels et spirituels. Mais celui qui meurt pour elle à cause des païens, sans y renoncer, sera compté parmi les martyrs.

SIO Préambule. À l'image des disciples envoyés par le Seigneur (Mt 18, 20; Hb 10, 25), il convient que nous aussi, tous les ans, nous accourions à ce même genre d'assemblée générale pour examiner et voir les institutions de l'Église, que les saints pères ont établies, afin de savoir comment les prélats et les fidèles de l'Église les conservent.

C'est pourquoi moi, Sion, chef des évêques d'Arménie non par mérite, mais du fait de la miséricorde de Dieu, je me suis chargé de ce souci et j'ai convoqué les évêques, mes collègues, dans cette nécessité spirituelle, pour que nous nous concertions entre nous, serviteurs de la parole que nous avons reçue, pour conduire le peuple du Seigneur, afin de consolider la législation transmise par les saints pères et de combler les lacunes par la piété, et de rassembler cela dans un même canon. Car nous constatons qu'en tout lieu, on entrave et on empêche le labeur des inspecteurs gardiens de l'Église, par la violence d'audacieux fonctionnaires, et de ce fait, les évêques de notre juridiction qui ont été empêchés par eux de venir jusqu'à nous, nous ont écrit par lettres leur accord, afin que nous menions à terme ce bon projet.

ՍԻՈ ԺԱ. Քահանայք պատուէր արասցեն արանց եւ կանանց եւ դստերաց նոցա, զի ոչ արասցեն ընդ հեթանոսի զուգութիւն, զի չէ ամուսնութիւն, այլ անաւրէն եւ պիղծ խառնակութիւն, զի զինչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, զի չար է քան զշնութիւն, եւ որ գարշագոյն է քան զշնութիւն՝ բնական յանցանք:

ՓԻԻ Դ. Իսկ որ զենուն զնա եւ զվերարկու նորա վաճառեսցեն՝ որոշեսցին յեկեղեցւոյ. եւ որք զանմաքուրսն ի գազանաց կամ յանասնոց զենցեն եւ զվերարկուս նոցա վաճառեսցեն հեթանոսաց եւ զարծաթն կերիցեն՝ այնպէս է, թէ զշուն ուտիցեն. նոքա որոշեսցին յեկեղեցւոյ, զի հեթանոսական սովորութիւն է:

ՓԻԻ Ե. Որսորդք որ զմաքուր անասունս որսացեն եւ վիրաւորեալ եւ առանց զենման ուտիցեն՝ նոքա որոշեսցին յեկեղեցւոյ. ապա եթէ զվերարկուն հանցեն կամ թէ լոկ մերձեսցին ի մեռեալ մարմինսն, զի եւ այս հեթանոսական սովորութեան չարիք են:

ԵՓՐ Դ. Որք մեռելոտի ուտեն կամ զհեթանոսի զենեալ՝ նզովեալ լիցին ի կենդանութեան եւ ի մեռանել, եւ որոշեսցին յեկեղեցւոյ. Ապա եթէ ապաշխարեսցեն եւ դարձցին՝ յետ ամի մի ապաշխարութեան հաղորդեսցին:

ԿԻԻ Գ. Որք ամուսնացեալ են ընդ հեթանոսաց եւ տացէ նոցա Աստուած ժամանակ ապաշխարութեան, զամենայն ժամանակս ապաշխարեսցեն արտասուալք եւ ողորմութեամբ, որպէս զի զամենայն ինչս իւրեանց տացեն աղքատաց, ի տարւոջն միանգամ հաղորդեսցին աւրինաց: Ապա եթէ ոչ գոյ տեղի եւ ոչ զերծանի ի կապանաց անաւրէնութեանն, գնեսցեն ծառայս եւ ազատեսցեն քանի եւ կարասցեն. եւ ապա յետին թոշակին արժանի լինիցին:

ԿԻԻ Դ. Որք զժառանգս հեթանոսաց առնուն ի սնունդ, այնպէս է որպէս ոք զաւձ խնամարկեալ պաշտեսցէ ի ձեռն սովորութեան՝ ըստ ամուսնացելոցն ընդ հեթանոսական ազգին ուսան զանաստուածպաշտութիւնս նոցա. նոքա զթովչացն ապաշխարութիւնս կրեսցեն, Գ. ամ արտաքոյ ապաշխարեսցեն եւ Գ. ամ ընդ ապաշխարողսն ելցեն, եւ ապա հաղորդեսցին աւրինաց:

ԳՏԵ Ա. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ որ տանտիկին ունիցի ի տանն ըստ հեթանոսական սովորութեանց, լուծցին յիւրաքանչիւր աշտիճանէ, բայց ի հանուոյ կամ ի մաւրէ կամ ի քերց:

ԿԵՆ Բ. Ոչ է պարտ զհեթանոսաց զնորատունկս եւ զնորուսումնս առժամայն յեպիսկոպոսութիւն յառաջ ածել:

ԿԵՆ ԿԳ. Ոչ է պարտ աւրինել ընդ Հրէայս կամ ընդ հերձուածողս կամ ընդ հեթանոս, եւ ոչ տաւնական ընծայս առնուլ:

ԲԳԿ ԻԱ. Քահանայ որ զաշխարհական գործով զբաղի եւ ոչ կայ զգոյշ տաւնից

SIO 11. Les prêtres ordonneront aux hommes, aux femmes et à leurs filles de ne pas contracter d'union avec les païens, car il ne s'agit pas là d'un mariage, mais d'un concubinage impie et sale, car il n'y a rien de commun entre le fidèle et l'infidèle et cette union est pire que l'adultère, et ce qui est plus abominable que l'adultère est une faute contre-nature.

PHI 4. Ceux qui immolent un âne et vendent sa peau seront exclus de l'Église; et ceux qui immolent des fauves ou des animaux impurs, et vendent leurs peaux aux païens, et mangent l'argent, c'est comme s'ils mangeaient du chien; ils seront exclus de l'Église car il s'agit d'une coutume païenne.

PHI 5. Les chasseurs qui chassent et blessent des animaux purs, et les mangent sans les immoler seront exclus de l'Église; de même que s'ils enlèvent la peau ou touchent simplement aux cadavres, car il s'agit d'une mauvaise coutume des païens.

SEP 4. Ceux qui mangent des charognes ou des viandes sacrifiées par les païens seront anathématisés dans la vie comme dans la mort et seront exclus de l'Église; mais s'ils se convertissent par la pénitence, ils pourront communier après un an de pénitence.

CYR 3. Si certains sont mariés avec des païens et que Dieu leur donne l'occasion de se repentir, ils feront pénitence avec des larmes et des aumônes en donnant la totalité de leurs biens aux pauvres, afin de pouvoir communier une fois par an. Mais si les époux ne se séparent pas, ils achèteront des serviteurs pour les affranchir, autant qu'ils le pourront, et ainsi, ils seront dignes du viatique.

CYR 4. Ceux qui prennent des rejetons de païens pour les élever sont identiques aux adorateurs d'un serpent qu'ils choieraient, à l'image de ceux qui ont contracté mariage avec la race des païens, ayant appris d'eux l'athéisme; ils subiront la pénitence des charmeurs de serpents en se tenant trois ans hors de l'église, puis en sortant de celle-ci en compagnie des pénitents durant trois ans, et enfin, ils communieront à l'eucharistie.

CSE 1. L'évêque, le prêtre ou le diacre qui a une *tantikin* chez lui suivant la coutume des païens sera chassé de sa dignité, sauf s'il s'agit d'une tante, de sa mère ou d'une sœur.

SCN 2. Les païens néophytes et fraîchement instruits ne seront pas immédiatement proposés à l'épiscopat.

SCN 63. Il ne faut pas offrir de louanges avec les juifs ou avec les hérétiques, ou avec les païens ni accepter d'eux les présents festifs.

ECB 21. Le prêtre qui s'occupe d'affaires séculières et néglige les fêtes et les

եւ պաշտամանց, ունելով բարեխաւս զսուրբ մարտիւրոսսն, եղիցի նա որպէս հեթանոսն:

ԲԳԿ ՀՂ. Եթէ ոք զհեթանոսաց բարս ունիցի, զաւուրս եւ զժամս խտրէ, եւ զհին եւ զնոր լուսնի, եւ զաւուրս եւ զշաբաթս պահէ, որպէս Հրէայ, եւ ոչ գործէ յաւուր շաբաթու՝ ընդ խաչահանուսն եղիցի:

ԲԳԿ ՁԴ. ՁԴ. Թէ ոք ուտէ ի տեղւոյ իրս՝ տացէ ընդ միոյն չորս, ապա թէ ոչ՝ ապաշխարեսցէ ըստ գործոցն հրամանաւ քահանային:

ԲԳԿ ճԼԴ. Մի՛ ոք իշխեսցէ ի տան Աստուծոյ գինեմոլս առնել կամ ի մահիճս ննջել կամ շատախաւս լինել որպէս հեթանոսս, այլ ահիւ եւ դողութեամբ կալ առաջի Աստուծոյ եւ խնդրել զթողութիւն մեղաց. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի:

ԲԳԿ ճՂ. Եթէ ոք յազեսցի ի մսոյ՝ իւր կամաց, որ յանաւրինաց զենեալ են, Բ. ամ՝ ընդ ունկնդիրս կացցէ, Ա. ամ՝ ընդ ձեռամբ առ դրանն ապաշխարեսցէ: Նոյն կանոն որ զմեռելոտի ուտեն:

ԲԳԿ ՄԿԹ. Որք հրամանաւ հեթանոսաց եւ բռնաւորաց առաքեցան լրուտես եւ զաշխարհս հաւատացելոց ի ձեռս թշնամեաց նոցա երթեալ ազդումն առնելով գուշակմամբ ապրեցուցին զբազումս փախստեամբ, նոքա ոչ ըստ առաջին մեղացն ընկալցին զդատաստանն, վասն զի բաժանորդ կացին այնոցիկ, որոց գրով պատմին նահատակութեամբ յիշատակք: Ապա եթէ դաւաճանող չարին գտանի պատճառաւ որ ի սուր եւ ի գերութիւն յափշտակութեան, այս չարիք ի վեր են եւթն պատիկ առաւել քան զսպանողացն դատաստանս. այսուհետեւ ոչ գտանի սահման կանոնական տալ նոցա դարձ փրկութեան, այլ եպիսկոպոսն տեսցէ զդարձ նոցա խոստովանութեանն, զինչ կամեսցի արասցէ՝ իշխան է, այլ մի՛ անյուսութեամբ դատապարտեսցէ, զի մի՛ իսպառ կորուսցէ, այլ կարեկից եւս լիցի իբրեւ ժառանգակից, զի հոգին ապրեսցի յահագին դատաստանացն:

ԲԳԿ ՄՀԲ. Որք զուգաւորին ընդ կնոջ եղբաւր կամ ընդ քերց նորա, բաժանեսցին եւ ապաշխարեսցեն զամենայն աւուրս կենաց իւրեանց. ապա եթէ ոչ բաժանեսցին՝ եղիցին իբրեւ զհեթանոսս:

ՄԲԿ Ա. Արդ՝ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ, թէ որ զմանուկ տգէտ եւ զտխմար որ ոչ կարէ կարդալ զԱւետարանն ի բեմի ի լուր ժողովրդոց եւ զբոլոր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա՛ կրէ՝ որ ձեռնադրեացն զնա, զի գիասնոցն եւ զուսելոցն զմեղացն համարս անձինք իւրեանց տան: Այլ աւրէն է առաւել զգիտունն եւ գիասական կատարեալն արժանացուցանել այսմ շնորհի որ կարող են ապրեցուցանել զանձինս եւ առաջնորդել ժողովրդեան. վասն որոյ մեծին իսկ Պաւղոսի ձայնարձակ բարբառովն զբողոք բարձեալ ասէր Տիմոթէի թէ՝ «Ձեռն յուրուք վերայ վաղվաղակի մի՛ դնիցես եւ մի՛ լինիցիս կցորդ մեղաց աւտարաց» (Ա. Տիմ. Ե. 22). եւ դարձեալ թէ՝ «Մի՛ մատա-

célébrations, dont les intercesseurs sont les martyrs sera considéré comme un païen.

ECB 76. Celui qui adopte les mœurs des païens et observe leurs calendriers, et leurs célébrations basées sur les anciennes et les nouvelles lunes ou qui jeûne les samedis comme les juifs et ne travaille pas le samedi sera compté avec les crucificateurs.

ECB 84. Celui qui mange hors de sa place (*i.e.* chez les païens) donnera le quadruple de ce qu'il a mangé, sinon il sera anathématisé par le prêtre.

ECB 134. Celui qui organise une beuverie dans l'église ou qui y installe son lit, ou qui vient y bavarder comme les païens sera anathématisé, car il faut venir à l'église avec la crainte de Dieu et supplier pour la rémission des péchés.

ECB 190. Celui qui se goinfre volontairement de viandes immolées par les infidèles ou de charognes se tiendra pendant deux ans avec les auditeurs, et fera pénitence pendant un an à la porte de l'église sous surveillance.

ECB 269. S'agissant de ceux qui sur ordre des païens ou des oppresseurs espionnent des pays peuplés par des croyants, mais profitant de leur influence parviennent à sauver beaucoup d'habitants en les incitant à fuir, on ne les condamnera pas pour leur péché, car ils auront partagé le sort de ceux dont le souvenir est inscrit dans le livre des martyrs. Mais si le traître accomplit son méfait en raison de la violence (litt. de l'épée) et de la captivité, son crime sera pire que tous les homicides, et aucun canon en vue du salut n'existant à ce sujet, l'évêque observera la confession du criminel avec clémence, afin de ne pas le livrer au désespoir.

ECB 272. Ceux qui s'unissent avec la femme de leur frère ou avec leur sœur devront se séparer et faire pénitence durant toute leur vie; mais s'ils ne se séparent pas, ils seront équivalents aux païens.

PYM 1. L'ordinand qui a ordonné un enfant ignorant et crétin – qui ne peut pas lire l'Évangile sur le *bêma* à l'attention des membres de l'assemblée et qui n'a pas étudié l'ensemble des enseignements de l'ordre sacerdotal – supportera la punition pour cette ordination, car il lui revient de rendre compte des péchés des personnes mûres et instruites. Mais il convient de légitimer davantage le savant et celui qui est parfait en âge de cette grâce, eux qui peuvent se sauver eux-mêmes et guider l'assemblée; c'est pourquoi le grand Paul lui-même se plaignit à haute voix auprès de Timothée: «N'impose les mains à personne avec précipitation, et ne participe point aux péchés d'autrui» (1 Tim. 5, 22); et de nouveau: «Qu'il ne soit point néophyte, de peur que,

ղատունկ, զի մի՛ հպարտացեալ՝ ի դատաստան սատանայի անկանիցի» (Ա. Տիմ. Գ. 6). այլ զի պարտ է, ասէ, քահանային անարատ լինել, որպէս Աստուծոյ տնտեսի, վերակացու լինել բանին վարդապետութեան հաւատարիմ (յմմտ. Տիտ. Ա, 9): Արդ՝ զոր աւրինակ Պաւղոս զՔրիստոս դնէ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ երաշխաւոր եւ փրկանս ամենայն աշխարհի, արդ ոչ ապաքէն նոյնաւրինակ եւ քահանային աւրինակ է ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ եւ փրկանք քաւութեան մեղաց ժողովրդեանն Աստուծոյ: Արդ՝ եթէ վասն մեծին Մովսէսի ասէ գիր թէ՝ «Հեզ եւ խոնարհ եւ հանդարտ էր մարգարէն քան զամենայն մարդիկ եւ ուսեալ զամենայն իմաստութիւն Եգիպտացւոց» (յմմտ. Թիւք, ԺԲ. 3). զի թէ հեզն եւ հանդարտն եւ իմաստունն եւ անարատն ի բծոյ, հաւատարիմ պատգամաւորն Աստուծոյ եւ մտերիմ տեսուչ ժողովրդեանն ոչ կարաց ի մեղաց ողջ պահել զժողովուրդն եւ ապրեցուցանել զնոսա ի հարուածոցն Աստուծոյ եւ ժառանգեցուցանել նոցա զպարգեւական երկիրն, իսկ արդ այլ քահանայք տգէտք եւ արատաւորք զիա՞րդ կարեն ապրեցուցանել զժողովուրդսն ի մեղաց, որք եւ զանձինս անգամ ոչ կարեն պահել ի մեղաց, թող թէ ժողովրդեանն Աստուծոյ լինել միջնորդ եւ երաշխաւոր, տանել յարքայութիւնն Աստուծոյ. քանզի գրեալ է եւ պատուիրեալ եթէ՝ «Մի՝ յաջ խոտորիցիս եւ մի՝ յահեակ» (Առ. Դ. 27): Վասն որոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ զգուշանալ ի ձեռնադրութենէ տգիտաց, եւ մի՛ կաշառաւք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն կամ յերիցութիւն կամ ի սարկաւագութիւն կամ յայլ աշտիճան, այլ որպէս ի սուրբ Աւետարանին Փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն թէ՝ «Զրի առէք եւ ձրի տուք» (Մատթ. Ժ. 8):

Նորին. Իսկ որ զուրբաթ որպէս կիւրակէ պահեն եւ ի գործոյ դատարկացուցանեն՝ մեղք են, եւ կոչեն զնա ծեր. ո՞յր է տեսեալ զնորա ծերութիւնն, զի Ե. աւրն աւագ է քան զնա, իսկ որք չորեքտասան չորեքշաբաթ տաւնս կատարեն տգիտաբար՝ մեղք են, զի հեթանոսական է եւ անհրաման:

Իսկ վասն նապաստակի եւ ցռոյ մսոյ, զոր ուտեն ոմանք, ոչ եթէ աւրենք ինչ հրամայեցին ուտել կամ վարդապետք, այլ ի գարշանէ եւ ի սովորութենէ՝ ըստ սովորութեան նախնեացն հեթանոսաց, այլ ըստ աւրինացն հրամանի ոչ է պատուեալ: Նոյնպէս եւ վասն ամճոց է իմանալ, յորոց սովորութիւն է եւ ի գարշանէ զմեռելոտիսն ուտեն անխտիր, որպէս հեթանոսս, այլ ոչ հրամանաւ: Իսկ որք ուտեն, պարտին սուրբ հաղորդութեանն զգուշանալ՝ մինչեւ սրբեսցին ի ձեռն պահոց եւ աղաւթից: Իսկ որք զթիւրակէսն առնուն վասն կարեաց մարմնոյն՝ ի սուրբ մարմնոյն զգուշասցին մինչեւ սրբեսցին ի ձեռն պահոց եւ աղաւթից: Այս ամենայն եւ այլ բազում կայ որ եւ ոչ բաւեմ զգրով արկանել, կամ գուսանացն արուեստ որ զպոռնկութիւնս յորդորէ, զի քրիստոնէից, վասն յուսոյն որ կայ պահի յերկինս, հարկ է պարկեշտանալ յամենայնէ, զի անուն Տեառն յոյս է նորա:

ՍԿՆ ԺԲ. Վասն որ ընդ հեթանոսի չնան՝ Թ. ամ ապաշխարեսցեն:

ՍԿՆ ԺԳ. Վասն որ ընդ հեթանոսի ուտէ եւ ըմպէ աւելի քան զհաց եւ զգինի պարտաւոր է ապաշխարել ըստ յանցմանն:

ՍԿՆ ԺԴ. Վասն որ զհեթանոս կին առնէ կամ լինի առն՝ չար է, մանաւանդ եթէ

étant enflé d'orgueil, il ne tombe dans le jugement de Satan» (1 Tim. 3, 6); mais, en effet, il faut que le prêtre, dit-il, soit sans tache comme économe de Dieu, qu'il soit un fidèle surveillant de la parole de la doctrine» (cf. Tite 1, 9). Donc, à l'exemple de Paul qui pose le Christ comme intermédiaire entre Dieu et les hommes, garant et rachat du monde entier, le prêtre doit à partir de cet exemple être un guide totalement exempt de taches et permettre le rachat expiatoire des péchés du peuple de Dieu. À présent, l'Écriture dit à propos du grand Moïse que le prophète est le plus doux, le plus humble et le plus paisible de tous les hommes (cf. Nb 12, 3), et instruit de toute la sagesse des Égyptiens; car si le doux, le paisible, le sage et l'immaculé de tache, le fidèle messager de Dieu et intime surveillant du peuple ne peut pas garder préservé des péchés le peuple et le sauver des coups de Dieu, et le faire hériter de la Terre promise, comment les autres prêtres ignorants et maculés pourraient-ils sauver les assemblées des péchés, eux qui ne peuvent pas même se garder des péchés, sans parler d'être un intermédiaire et un garant du peuple de Dieu et de le conduire au royaume de Dieu. En effet, il est écrit et ordonné: «N'incline ni à droite ni à gauche» (Prov. 4, 27). C'est pourquoi je commande (*i.e.* Yovhannēs Mandakuni) aux prélats de l'Église de prendre garde à ne pas ordonner des ignorants ni à faire présenter par quelqu'un des pots-de-vin d'argent pour l'épiscopat, la prêtrise, le diaconat ou tout autre degré, mais comme le dit le Rédempteur dans le saint Évangile à ses saints disciples: «Vous avez reçu gratuitement, donnez gratuitement» (Mt 10, 8).

Du même. Mais ceux qui jeûnent le vendredi comme le dimanche et s'arrêtent de travailler, c'est péché, et on l'appelle vieux; où ont-ils vu sa vieillesse ? Car le dimanche est plus vieux de cinq jours que le vendredi; mais ceux qui de façon ignorante célèbrent le 14 février la venue du Seigneur au Temple le 40e jour comme des mercredis, c'est péché, car c'est une attitude païenne et non autorisée.

Mais concernant la viande de lapin (litt. lièvre) et d'onagre, que certains mangent, ce n'est pas la Loi qui ordonne d'en manger ou les *vardapet*s, mais c'est par goût pour l'abomination et par habitude, selon l'habitude des ancêtres païens, mais selon l'ordre de la Loi ce n'est pas acceptable (litt. honoré). De même aussi, concernant les mets préparés à partir de ces viandes, il faut savoir que c'est l'habitude de ceux qui mangent sans réserve des charognes par goût pour l'abomination, comme les païens, mais ce n'est pas par ordre. Quant à ceux qui en mangent, ils devront s'abstenir de la sainte communion jusqu'à ce qu'ils se soient purifiés par les jeûnes et les prières. Mais ceux qui prennent de la thériaque en raison de besoins corporels s'abstiendront du saint corps jusqu'à ce qu'ils se soient purifiés par les jeûnes et les prières. Il y a en plus de tout cela beaucoup d'autres choses que je ne peux pas coucher par écrit ici, tel l'art des aèdes qui exhorte à la fornication car, pour l'espoir qui est gardé dans le ciel, le chrétien doit se montrer modéré en tout, car le nom du Seigneur est son espoir.

NPT 12. Ceux qui commettent un adultère avec un païen feront pénitence pendant neuf ans.

NPT 13. Celui qui mange et qui boit – plus que simplement du pain et du vin – avec un païen devra faire pénitence avec les criminels.

յանհաւատութեան կան մնան: Եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցէ եւ զծնունդսն ածիցէ ի հաւատս:

ՍԿՆ ԻԸ. Վասն որ ընդ հեթանոսի կայ եւ մեղանչէ ընդ նոսա՝ Է. ամ ապաշխարեսցէ:

ԿՈՉ Ա. Թիւ խոստովանութեան. Թէ կոյս ընդ կուսի, թէ մինն կոյս է եւ մինն արամբ, եթէ աւճիրս ինչ ի յղանալն գործեաց, եթէ յղացեալ եւ սպանեալ, թէ ընտանիք իցեն, եթէ ի ծննդականն երթեալ է, եթէ յապարահիտ երթեալ է, եթէ ի շնալն երդուաւ, եթէ ի շնալն զսոդոմայականն գործեաց գործ, եթէ ընդ այլազգւոյ, եթէ շնալն զկիւրակէն ոչ պատուեաց, եթէ աւրէնս առ ի շնալն:

3. Հրեայ

ԿԱՌ ԺԶ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ որ սիրէ զՀրէայս եւ հաղորդի ընդ նոսա, կցորդ եղիցի Յուդայի Սկարիովտացւոյ, որ սիրեաց զՀրէայսն կամ զհեթանոսս, որ երկիր պագանեն արարածոց փոխանակ Արարչին, մի՛ մտցէ յեկեղեցի եւ մի՛ բնակեսցէ ի մէջ հաւատացելոց. եւ եթէ իցէ ի միջի նոցա՝ մի՛ թողցեն զնա, այլ որոշեսցեն եւ զատուսցեն ի բաց յինքեանց, եւ մի՛ կացցէ ի միջի նոցա, զի մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ պղծեսցին նովաւ բազումք:

ԿԱՌ ԺԷ. Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ ոք Հրէայ կամ հեթանոս եկեսցէ եւ խառնեսցի յեկեղեցի, եւ դարձեալ թողցէ եւ երթիցէ յիւր բնութիւնն, եւ դարձեալ կրկնեսցի եւ եկեսցէ ի նոյն պաշտաւնն, զոր անարգեացն, մի՛ ընդունիցիք եւ մի՛ խառնիցէք ի մէջ ձեր, այլ որոշեալ զատուսցի ի միջոյ ամենեցունց, եւ կացցէ ի նմին կարգի ուր էր զառաջինն, եւ մի՛ հաղորդեսցին ընդ նմա, որք ճանաչեն զնա:

ԵԱԿ Է. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զսուրբ զչարչարանաց զաւրն, նախ քան զգարնանային զուգաւորութիւնն, թէ ընդ Հրէայս կատարեսցէ՝ լուծցի:

ԵԱԿ ԾԷ. Եթէ ոք ժառանգաւոր վասն մարդկային երկիւղի Հրէի կամ հեթանոսի կամ թերահաւատի կորասցի, եթէ զանուն Քրիստոսի՝ ունի՝ լուծցի եւ որոշեսցի. իսկ եթէ զանուն ժառանգաւորի՝ լուծցի:

ԵԱԿ Կ. Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցէ ի ժողովարան Հրէից կամ թերահաւատից աղաւթել՝ լուծցի:

ԵԱԿ ԿԵ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ այլ ոք ի ժառանգաւորաց պահեսցէ ընդ Հրէայսն կամ տաւնեսցէ ընդ նոսա կամ ընկալցի ի տաւնից նոցա ընծայս, որպէս թէ բաղարջ կամ այլ ինչ յայսպիսեաց՝ լուծցի:

ԵԱԿ ԿԶ. Եթէ ոք ի քրիստոնէից ձէթ տարցի ի մեհեանս հեթանոսաց կամ ի ժողովարանս Հրէից ճրագունս՝ լուծցի:

NPT 14. Celui qui épouse une païenne - ou la païenne qui se marie avec un chrétien - est un criminel, et tout particulièrement s'il reste dans l'incroyance. Mais s'ils se séparent ou si l'infidèle meurt, elle fera pénitence pendant quinze ans et leurs enfants seront menés vers la foi.

NPT 28. Celui qui fréquente les païens et pèchent avec eux fera pénitence pendant sept ans.

APR 1. Ordre de la confession. La personne vierge avec la personne vierge, si l'un est vierge et l'autre a déjà été marié, si à la suite d'un forfait, la femme tombe enceinte et tue l'enfant, si elle commet l'adultère avec quelqu'un de sa famille ou alors qu'elle est en couche, ou pendant ses règles, ou qu'elle jure de le commettre, ou qu'elle commet l'adultère des sodomites, ou avec un païen (litt. étranger), ou un dimanche, ou qui communie après l'adultère.

3. Les juifs

CAP 16. Celui qui aime les juifs et communie avec eux sera un complice de Judas; et celui qui aime les juifs ou les païens et se prosterne devant les créatures au lieu du Créateur n'entrera pas à l'église, et ne restera pas parmi les croyants; et si c'est le cas, il devra être retranché de parmi eux, afin que la souillure soit contenue.

CAP 17. Le juif ou le païen qui se convertit au christianisme, puis retourne à sa religion d'origine, puis se convertit à nouveau ne pourra pas être reçu parmi vous, mais il devra retourner avec ses coreligionnaires et ses connaissances ne devront pas communier avec lui.

CCL 7. L'évêque, le prêtre ou le diacre qui, à l'instar des juifs, célèbre le saint jour de Pâques avant l'équinoxe du printemps sera déposé.

CCL 57. Le clerc qui par crainte humaine devant un juif, un païen ou une personne de peu de foi renie le nom du Christ sera déposé et exclu; s'il se repent on le recevra comme laïc.

CCL 60. Le clerc ou le laïc qui se rend dans l'assemblée des juifs ou des gens de peu de foi pour prier sera déposé.

CCL 65. L'évêque, le prêtre ou tout autre clerc qui jeûne avec les juifs ou célèbre les fêtes avec eux, ou accepte des présents provenant de leurs fêtes – comme des azymes ou toute autre chose de ce genre –, sera déposé.

CCL 66. Le chrétien qui offre de l'huile à un sanctuaire païen ou à la synagogue des juifs, ou encore des lampes sera déposé.

ԵԱԿ ԶԲ. Որ զՀայր ասէ չարչարեալ՝ ամպարիշտ է եւ ծանրագոյն քան զՀրէայսն՝ ընդ Քրիստոսի եւ զՀայր բեւեռելով. իսկ որ զՈրդին ուրանայ զմիածինն վասն մեր մարմնացեալ եւ խաչի համբերեալ՝ աստւածամարտ է եւ սրբոցն պատերազմող: Իսկ որ զՀոգին սուրբ Հայր անուանէ կամ Որդի՝ տգէտ եւ անմիտ է, քանզի Որդին արարչակից է Հաւր եւ աթոռակից եւ աւրէնսդրակից եւ դատաւոր եւ յարութեան պատճառ. եւ Հոգին սուրբ համագոյ, քանզի երեք են առանձնաւորութիւնք համագոյական աստուածութեաննն. վասն զի առ մեաւք Սիմոն կախարդ զգայռեաւ ձգելով ժողովրդեանն մոլար եւ անհաստատ եւ չար յինքն հոգի, եւ մի եռանուն գոլ լեզուանեցաւ զԱստուած: Իսկ երբեմն զչարչարանսն Քրիստոսի եւ զծնունդն եհատ: Արդ՝ դուք, ով տենչալիք, ի մի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգի երիցս մկրտեցէք ըստ Տեառնն կամաց եւ ըստ մերոյ հոգւոյն հրամանի:

ԱՆՏ Ա. Ամենայն ոք ով եւ համարձակեսցին եւ լուծցեն զսահմանս սուրբ եւ մեծ ժողովոյն որ ի Նիկիայ ժողովեցան, եւ զառաքելոցն, իբրեւ էր անդ աստուածապաշտ եւ աստուածասէր թագաւորն Կոստանդիանոս, վասն ամենասուրբ տաւնից փրկութեան, կապել եւ մերժել յեկեղեցւոյ, թէ կացցեն եւս հակառակութեամբ ընդդէմ դառնալ որ ինչ բարեգոյնքն կամեցան եւ կարգեցին. եւ այս ասացաւ վասն աշխարհականացս:

Ապա թէ ոք ի գլխաւորաց եւ յառաջնորդաց եկեղեցւոյ՝ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ յետ սահմանիս այսորիկ համարձակիցի շրջել եւ խռովել եւ խանգարել եւ փոփոխել զկարգս եկեղեցւոյ եւ առանձին լինել եւ ընդ Հրէայս կատարեսցէ զտաւնս, զայսպիսիսս սուրբ եւ մեծ ժողովն աստեն առ ետեղ յայտնապէս աւետար համարեցան յեկեղեցւոյ, զի ոչ անձին միայն մեղաւ, այլ զբազումս ապականեաց, եւ թիւրութեան պատճառք եղեն. ոչ միայն զայնպիսիսն հատանել եւ ընկենուլ եւ որոշել ի պաշտամանէ եկեղեցւոյ, այլ եւ որք սոցին հաւասարել համարձակեցան յետ մերժելոյ զայսպիսիսն, եւ որք մերժեցան՝ խափանեսցին եւս եւ յարտաքին պատուոյն, որ սուրբ կանոն եւ Աստուծոյ քահանայութիւն ընկալեալ գտանիցի:

ԼԱՒ ԻԹ. Չէ արժան քրիստոնէից զՀրէից վարս ունել եւ բանդագուշել եւ դատարկացուցանել զաւր շաբաթուն, այլ գործել արժան է, բայց զաւր կիւրակէին պատուել արժան է, եւ հանգչել արժան, որպէս քրիստոնեայք. ապա եթէ գտցի ոք հրէաբար՝ նզովեալ լիցի:

ԼԱՒ ԼԷ. Չէ արժան՝ Հրէից կամ այլազգեաց զտաւնական պատարագս նոցա կամ զնուէրս ընդունել. զի մի՛ գտցուք հաւասարորդք տաւնից նոցա եւ մեղաց:

ԳՐԻ ԻՁ. Եթէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց առցէ կաշառս՝ եկեսցէ անէծքն Սիմոնի կախարդի ի վերայ նոցա եւ կցորդ եղիցին կաշառոյն Յուդայի մատնչի եւ Գէեզի բորոտութեամբն այրեսցին ոգիք կաշառառուացն:

ԳՐԻ ԻԸ. Պարտ է քրիստոնէից պատուել զաւր կիւրակէի, աղաւթել եւ հանգչել ի նմա, ապա եթէ ոք պահեսցէ հրէաբար՝ նզովեսցի ի Քրիստոսէ:

CCL 82. Celui qui affirme que le Père a souffert est un hérétique (litt. mécréant) et est pire que les juifs, car il mélange le Père avec le Fils; mais celui qui nie le fait que le Fils Monogène s'est incarné et a enduré la croix pour notre salut est un ennemi de Dieu et il guerroie contre les saints; mais celui qui qualifie l'Esprit Saint de Père ou de Fils est ignorant et insensé, car le Fils est co-créateur avec le Père et il siège avec lui sur le trône céleste, et légifère avec lui, et il est le juge et la cause de la résurrection; le Saint-Esprit leur est consubstantiel, car la divinité consiste en trois hypostases consubstantielles; car, c'est de nos jours que Simon le Mage a attiré vers lui par ses vomissements l'âme errante, inconstante et mauvaise des gens en clamant avec désinvolture que Dieu a trois noms. Et ainsi, il renonça aux souffrances et à la naissance du Fils. Donc vous, très chers, baptisez par trois immersions au nom du Père, du Fils et du Saint-Esprit, selon la volonté du Seigneur et l'ordre de notre esprit.

ATC 1. Ceux – clercs comme laïcs – qui violent les décrets du saint concile de Nicée réuni en présence du pieux empereur Constantin et les décrets des apôtres concernant les saintes fêtes de Pâques seront interdits et exclus de l'Église.

Mais si après cela, un évêque, un prêtre ou un diacre altère les dispositions de l'Église et se tient à part ou célèbre les fêtes avec les juifs, il sera étranger à l'Église car il a fait du tort non seulement à sa personne, mais aussi à nombre de ses fidèles; et il sera chassé de son siège – y compris des honneurs extérieurs de son rang –, de même que ceux qui continueront à être en communion avec lui après sa sanction.

LAO 29. Les chrétiens ne doivent pas, à l'instar des juifs, passer le samedi dans l'oisiveté mais travailler, mais il faut honorer le dimanche et se reposer en tant que chrétien; mais celui qui judaïse sera anathématisé.

LAO 37. Il ne faut pas accepter les offrandes ou les dons festifs des juifs ou des païens (litt. étrangers), pour ne pas se trouver en train de participer à leurs fêtes et à leurs péchés.

GLI 26. Si un prêtre ou un laïc reçoit des pots-de-vin, il sera maudit comme Simon le Mage, complice de Judas et lépreux comme Ghēez.

GLI 28. Les chrétiens doivent honorer le jour du dimanche, prier et se reposer en ce jour-là, mais si quelqu'un jeûne à la manière des juifs, il sera anathématisé par le Christ.

ՇԱՀ ԺԳ. Որ զազգական կին առնէ՝ այս պղծութիւն եւ գարշանք յայտնի լիցի, «Եւ անուանեսցի մի ի միջի ձերում» (Եփես. Ե. 3). զի մի՛ ոք ընդ աղտախանս մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց եւ անաստուած ամպարիշտ ազգացն. զոր հրաման առեալ մեծ աւրէնսուսոյց մարգարէին Մովսէսի ի Կենարարէն, թէ՝ «Պատուիրեա՛ որդւոցն Իսրաէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ, յայտնել զառականս նոցա» (Ղեւտ. ԺԸ. 6): Եւ յանէծսն գրէր Մովսէս, թէ «Անիծեալ որ ննջիցէ ընդ մերձաւորի արեան իւրոյ» (Բ. Օրէնք ԻԷ. 20, 22): Արդ՝ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն եւ զքրիստոնէութիւն զգեցեալ եւ զտէրունական մկրտութիւն՝ զկնիք եւ զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբաւրորդի կամ զհաւրաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի «Բարկութիւն անձին իւրում գանձէ» (յմմտ. Յռ. Բ. 5) այնպիսին. «Որդի անաւրինի թերակատար եղիցի եւ զաւակ անաւրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի» (Իմաս. Գ. 16): Զի եթէ զկին եղբաւր իւրոյ ունելոյ՝ մեծի մարգարէին եւ կարապետին Յովհաննու գլուխն կտրեցաւ (յմմտ. Մատթ. ԺԴ. 3-11, Մարկ. Զ. 24-27), ապա զինչ եւս աղէտս ոչ համարեսցի ոք, որ զազգական իւր կին առնիցէ, զոր ոչ հրամայեն աւրէնքն քրիստոնեականք եւ սուրբ առաքեալքն եւ աշակերտքն Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք ընդդիմացեալ աւրինացս եւ հաստատեալ կանոնիս եւ ամպարշտեալ ի հեթանոսութիւն եւ ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին եղիցի եւ բաժին նորա եւ ի սրբոյ եկեղեցւոյ աւտարացեալ եղիցի, որպէս եւ գրեալ է. «Բարձցի ամպարիշտն յերկրէ եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ» (Ես. ԻՁ. 10). «Ընդ անաւրէնս համարեսցի» (Ես. ԾԳ. 12, Մարկ. ԺԵ. 28) ըստ գրեցելոյն՝ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանաւրէնութիւն» (Սաղ. Զ. 9), մի՛ ոք ընկալցի զպատարագս նորա, քանզի պիղծ է առաջի Տեառն պատարագ նորա: Եւ թէ մատուցողն պիղծ է, առաւել եւս եւ զոհն նորա: Եւ եկեղեցի եւ կանոնք զապաշխարութիւն նորա ոչ ընդունին, զի «Ի խոտորել յինէն անզգամին եւ ես ինչ ոչ փոյթ առնէի» (Սաղ. Ճ. 4). մինչեւ թողցեն եւ դարձցին յանզգամութենէն եւ ի պիղծ գործոցն ըստ մարգարէին ձայնի. «Ընկեցէք զչարիս ձեր» (Ես. Ա. 16), ասէ Տէր:

Եթէ ոք այնպիսեացն պսակ աւրինեսցէ, կամ ի հարսանիս երթիցէ, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա՝ եւ ի կարգէ պաշտաւնէից հեռացեալ եղիցի: Եւ եթէ ոք եպիսկոպոս կամ երէց գտցի ի խորհրդեանն՝ յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկեալ եղիցին եւ ի կարգ պաշտաւնէիցն մի՛ մերձեսցին: Բայց որ խոտորեցան յաւրինաց սրբոց եւ ի կարգէ եկեղեցւոյ, եթէ դարձցին ի պիղծ ամուսնութենէն, եւ մեկնեսցին ի միմեանց՝ ի ձեռն մեծամեծ տրոց մինչեւ զկէս կենաց եւ ընչից իւրեանց հոգւոց իւրեանց բաժին տացեն ի կարաւտեալս եւ ի վշտագնեալս եւ ի սուրբ եկեղեցի. զաւուրս կենաց իւրեանց ապաշխարեալ՝ ի վախճանին թէ լիցին հաղորդելոյ արժանի: Ապա եւ գլխաւորք եկեղեցւոյն որ ի խորհրդին էին եւ որ զպսակն աւրհնեաց, Շ դրամ եպիսկոպոսն, տուգանեսցի յաղքատս եւ Մ՝ երէցն, եւ Մ՝ որ զպսակն աւրհնեաց, եւ ապա մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն:

Ապա եթէ նոքա ոչ մեկնեսցին ի պիղծ ամուսնութենէն՝ եւ պսակադիրն եւ ի քահանայիցն որ ի խորհրդին եղեալ էին, մի՛ մատիցեն յաթոռն եւ ի քահանայութիւնն: Թէ ազատ է, թէ շինական, աւրէնք եւ կանոնք այդ կացցեն:

Ապա եթէ ոք ընդդէմ եկեալ ասիցէ, թէ ի Նիկիական կանոնսն ընդէ՞ր չէ այդպէս ծանր եղեալ. վասն զի ոչ ունէր ոք ակն թէ այդպիսի մեծամեծ չարիք եւ աւճիրք

SHV 13. Celui qui prend pour femme une parente, commet un acte manifestement impur et abominable et suit la coutume des païens et des nations athées impies (Ép 5, 3; Lv 18, 6; Dt 27, 20, 22). Aucun chrétien n'aura le droit de prendre pour femme sa sœur ou la fille de sa sœur, ou la fille de son frère, ou la sœur de son père, ou toute autre personne membre de sa parenté jusqu'au quatrième degré (Rm 2, 5; Sg 3, 16; Mt 14, 3-11). À présent, si quelqu'un s'oppose à ces lois et à ce canon qui a été établi, et avec impiété s'égare dans le paganisme et le judaïsme, sa part sera placée avec eux, et il deviendra étranger à la sainte Église (Is 26, 10; 53, 10; Ps 6, 9; 100, 4; Is 1, 16).

Celui qui bénit le mariage de telles personnes ou assiste aux noces se rend complice de leurs actes malfaisants, et il sera éloigné de l'ordre des ministres du culte. L'évêque ou le prêtre convaincu d'avoir été au courant sera déchu de son siège et de son sacerdoce, et il ne s'approchera pas de l'ordre des ministres du culte. Mais ceux qui se sont écartés des saintes lois et de la règle de l'Église, s'ils se convertissent de leur mariage impur et se séparent l'un de l'autre, pour le salut de leur âme, ils donneront des dons considérables, jusqu'à la moitié de leur fortune et de leurs biens aux nécessiteux, aux affligés et à la sainte Église; ils feront pénitence chaque jour de leur vie, pour devenir dignes de recevoir la communion à l'achèvement de leur vie. Mais les autorités ecclésiastiques qui étaient au courant et qui avaient béni le mariage paieront une amende de 500 *dram* aux pauvres, si c'est un évêque, de 200 *dram*, si c'est un prêtre; et celui qui a béni le mariage paiera 200 *dram*, et alors ils pourront regagner leur siège et leur sacerdoce.

Mais si les époux ne renoncent pas à leur mariage impur, le célébrant du mariage et ceux des prêtres qui étaient au courant ne regagneront pas leur siège et leur sacerdoce. Ces lois et ces canons s'appliquent autant pour le noble que le vilain.

Mais si quelqu'un s'élève contre ces canons et demande pour quelle raison les canons de Nicée n'ont pas disposé des sanctions aussi sévères, la réponse est que personne ne pouvait prévoir que des méfaits et des crimes aussi considérables seraient commis en ce monde, mais pour le reste les Pères de Nicée arrachaient au plus près et détruisaient la mauvaise racine de perdition.

յաշխարհի գործիցին, այլ անդէն վաղվաղակի մաւտակտուր խզէին զչար արմատ կորստեանն:

ՅԻԱ ԻԴ. Իսկ կիւրակէին աւուր առաւաւտինքն՝ այսգունի խորհրդով յաւրինեալ բերէ զկարգն իւր: Զկնի Հարցինն՝ Մեծացուսցէ ասել, վասն զի հարկաւորապէս պարտի այն որ զՅարութիւնն Քրիստոսի ճառէ՝ ընդ նմին եւ զգերեզմանն յիշել, եւ զսուրբ Կոյսն: Զի եթէ ոչ էր ծնեալ՝ ոչ էր հնար եւ ոչ թաղել, եւ եթէ ոչ էր թաղեալ, ապա եւ ոչ յառնել: Արդ՝ գերեզմանն յընթեռնլոյն զԱւետարանն յիշեալ լինի, իսկ զսուրբ Կոյսն՝ ի Մեծացուսցէն ասելոյ յիշեմք: Զի որպէս ընկալան ի միմեանց զՓրկիչն յարութիւնն՝ ի գերեզմանէ, եւ գերեզմանն՝ յարգանդէ, ըստ նմին եւ վկայք պարտին լինել միմեանց վասն յարուցելոյն. եւ այս է ճշմարիտ մարդեղութեանն եւ մահուանն Քրիստոսի խոստովանութիւն: Այլ սակայն ի ծննդենէն առ յարութիւնն զհետ եկեալ միաւորին, իսկ ի յարութենէն առ ծնունդն վերջադարձիլ անկարելի է, զի չեւ գործեցելոցն ի Քրիստոսէ պատմութիւն առնել անհնար է: Եւ յաղագս այսորիկ՝ աւետիքն եւ ծնունդն եւ մկրտութիւնն Քրիստոսի ի միասին առեալ տաւնախմբին, եւ սոքա ամենեքին եւ որ այլն եւս իցեն տնաւրինեալք ի Քրիստոսէ՝ ի յարութեանն միաւորեալ բովանդակին: Եւ այս յաղագս Մեծացուսցէ ասելոյն յառաւաւտինսն յաւուր կիւրակէի: Յետ որոյ դարձեալ՝ մինչ չեւ զԱւետարանն ընթերցեալ, որպէս թէ տակաւին եւս ի թաղման վարկանելով զՏէրն, արտաքուստ առ նա ի գերեզմանն աղաղակիցեմք ասելով, թէ «Արի, Տէր, աւգնեա մեզ եւ փրկեա զմեզ» (Սաղ. ԽԳ. 26). եւ թէ «Լուր Աստուած աղաւթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ» (Սաղ. ՃԳ. 4). եւ եթէ «Թագաւորեսցէ Տէր յաւիտեան» (Սաղ. ԻԸ. 10): Իսկ յետ ընթեռնլոյ զԱւետարանն, իբրու թէ զնոյն ինքն գյարուցեալն անդէն եւ անդ ընդ աւետարանական բանին ի դէմս մեր բերելով, հրամայեմք միմեանց, թէ «Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, եւ աւրհնեցէք զՏէր» (Սաղ. ՃԼԳ. 2). վասն զի լուեալ աղաւթից մերոց՝ յարեաւ եւ աւգնեաց մեզ, փրկելով զմեզ ի մահուանէ եւ թագաւորելով մշտնջենաւորաբար ամենայն տիեզերաց: Բայց գիշեր ոչ այնքան գժամանակն, որքան թէ զհրէական զանհաւատութիւնն անուանելով, որ զաղջամղջին խաւարի արդարեւ բերէ զաւրինակ, ըստ Եսայեայ պանծալի բանին, թէ «Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւաւտել առ քեզ Աստուած» (Ես. ԻՁ. 9). այսինքն թէ ի միջոյ ամպարշտաց համարձակիմ բարեպաշտել առ քեզ Աստուած: Արդ՝ զայսոսիկ այսպէս եւ այսու աւրինակաւ յառաջ վարելով զկարգն՝ արժան է զկնի Փառք ի բարձանցն՝ զՅարութիւն ասել, իսկ զՍուրբ Աստուածն՝ հանդերձ սրբոյ Աստուածածնին կցորդիւն ի վերջն անցուցանել, որպէս եւ յայլ աւուրսն ըստ ասացելումն պատճառին: Եւ զկնի ամենեցուն՝ զԱրեւագային նուագել սաղմոս, զոր Եղիցի անուն Տեառն ասել սկսեալ են ի ժամանակացն Եզրի կաթողիկոսի:

ԿԵՆ ԾԸ. Ոչ է պարտ քրիստոնէից ի շաբաթու կամ ի կիւրակէի շաբաթանալ կամ հրէանալ:

ԿԵՆ ԿԳ. Ոչ է պարտ աւրհնել ընդ Հրէայս կամ ընդ հերձուածողս կամ ընդ հեթանոսս, եւ ոչ տաւնական ընծայս առնուլ:

YAP 24. Mais les mâtines du dimanche présentent un ordre disposé selon le mystère que voici: après le «Dieu de nos pères», il faut dire le Magnificat, car celui qui proclame la résurrection du Christ est nécessairement obligé de rappeler en même temps le tombeau et la sainte Vierge. Car s'il n'était pas né, il ne serait même pas possible qu'il ait été enterré et s'il n'avait pas été enterré, il n'aurait pas ressuscité. Le tombeau est commémoré par la lecture de l'Évangile et nous commémorons la sainte Vierge en disant le Magnificat. De la même façon qu'ils ont reçu le Sauveur l'un de l'autre, à savoir que la résurrection l'a reçu du tombeau et le tombeau l'a reçu du ventre, semblablement, ils sont obligés de rendre témoignage l'un à l'autre sur le ressuscité; et ceci est la véritable confession de l'incarnation et de la mort du Christ. Néanmoins, les choses qui se succèdent de la naissance à la résurrection sont toutes unies, mais il est impossible de revenir de la résurrection vers la naissance, car il est impossible de faire le récit des choses qui n'avaient pas encore été accomplies par le Christ. Et pour cette raison, l'annonciation, la Nativité et le baptême du Christ sont pris et célébrés tous ensemble et tout cela, et toutes les autres dispositions de l'économie du Christ sont contenues toutes ensemble dans la résurrection. Et voilà pourquoi, on doit dire le Magnificat à l'office du matin le dimanche. Et après cela, avant la lecture de l'Évangile, comme si nous supposions que le Seigneur est encore au tombeau, nous crierons de l'extérieur vers lui dans le tombeau «Relève-toi Seigneur, aide-nous et sauve-nous» (Ps 43, 26); et «Écoute Dieu ma prière, prête l'oreille aux paroles de ma bouche» (Ps 53, 4); et que «Le Seigneur règne pour l'éternité» (Ps 28, 10). Après avoir lu l'Évangile, comme s'il nous apportait en face de nous le Ressuscité en personne sur place, en même temps que la parole évangélique de la bonne nouvelle, nous nous donnons l'ordre les uns aux autres: «Levez vos mains dans la nuit dans la sainteté et bénissez le Seigneur» (Ps 133, 2); parce qu'ayant écouté nos prières, Il s'est levé et nous a secourus en nous sauvant de la mort et en régnant pour l'éternité sur tout l'univers. Mais la nuit ne désigne pas tant l'heure que l'incrédulité des juifs qui offrent l'exemple des ténèbres obscures, selon la glorieuse parole d'Isaïe «Mon âme devance la nuit pour se hâter vers toi Dieu» (Is 26, 9), c'est-à-dire du milieu des impies, j'ose t'adorer pieusement mon Dieu, ainsi poursuivant l'ordre de cette façon, il convient de dire après le «Gloire dans les hauteurs», le «Résurrection» et enfin, réciter le «Dieu saint» avec l'antienne de la sainte Vierge comme pour les autres jours selon la raison qui a été exposée précédemment. Et après tout cela, il faut chanter l'hymne des mâtines «Que le nom du Seigneur soit» que l'on a commencé à dire à partir de l'époque du catholicos Ezr.

SCN 58. Les chrétiens ne doivent pas judaïser le samedi ou le dimanche.

SCN 63. Il ne faut pas offrir de louanges avec les juifs ou avec les hérétiques, ou avec les païens ni accepter d'eux les présents festifs.

ԲԳԿ ՀՁ. Եթէ ոք զհեթանոսաց բարս ունիցի, զաւուրս եւ զժամս խտրէ, եւ զհին եւ զնոր լուսնի, եւ զաւուրս եւ զշաբաթս պահէ, որպէս Հրէայ, եւ ոչ գործէ յաւուր շաբաթու՝ ընդ խաչահանուսն եղիցի:

ԲԳԿ ճԺԸ. Այր կամ կին որ սրբութեամբ են՝ արժան է ի սուրբ խորհուրդն մերձենալ. ապա եթէ անապաշխար են եւ անսուրբ՝ մի՛ իշխեսցեն. եւ եթէ ոք յանդգնի՝ ընդ խաչահանուսն Քրիստոսի եղիցի եւ ընդ անամաւթին Յուդայի:

ԲԳԿ ՄԻԳ. Քահանայ թէ զչարիս ուրուք ծածկէ վասն կաշառաց կամ վասն երկիւղի կամ վասն ամաւթոյ՝ մինչեւ ցմահ բաժին նորա ընդ Յուդայի եղիցի:

ԳԱՍ Ը. Եթէ ցանկայ ոք լինել եպիսկոպոս՝ ահա բարւոյ գործոյ ցանկացաւ ըստ Պաւղոսի, այլ ի հրամայելոց առաքելոցն մի՛ գտցի նուազեալ ամենայն բարեձեւութեամբ զնալ առ եկեղեցականսն եւ առ արտաքինսն, առաւել կալցի բան վարդապետութեան սերմանել լսաւղաց, որպէս եւ Տէրն ի լերինն իւրոց աշակերտացն խրատել, բժշկել, զի մի՛ անունն Աստուծոյ անպատուեսցի ի տգիտութենէն, զի տգէտ հովիւ անպատուելի է Աստուծոյ եւ սրբոց. զի զիմիրդ լինի յանձանձիչ եկեղեցւոյ Աստուծոյ որ տգիտանայ քննել զգիրս, որով բանն Աստուած առ Հրեայսն ասէր ունել կեանս եւ Պաւղոս հրաժարեցոյց ի թղթին որ առ Տիմոթէոս եւ Տիտոս (յմմտ. Ա. Տիմ. Գ. 1-7, Տիտ. Ա, 10-16), նաեւ հայրս մեր երկրորդ Աբրահամ ի բեմական նախընծայ վարդապետութեանն հանապազ ասէր. «Ոչ կալ այնպիսեացն յակաստանի, այլ լուծանել հրամայէ բազում ըստգտանաց փաստաւոր», զոր եւ մեծ քարոզն Հռոմայ ի շրջաբերական կանոնեալ թուղթսն ոչ հրամայէ աւծանել զայնպիսիսն եւ զաւծեալսն լուծանել: Արդ՝ որք փառամոլութեամբ եւ վասն մամոնայի ձգեցան առ այսպիսի պատիւ՝ մերժեսցին յառաքելական աթոռոյն. նաեւ ձեռնադրեցին զնա, որպէս ի մէնջ Անտիոքացին որ արծաթով զայս նախաձեռնէր կոչեցելոցն, նոյնպէս եւ Ղուկիոս արիոսեան եւ Զոսիմոս, զի ոչ գիտացեալ զինքեանս, կորուստ բազմաց եղեն. փորձեսցեն նախ զինքեանս եւ ապա ի պատիւն սուրբ մատիցեն, որպէս ուսոյց առաքեալն:

ԿԿՄ Դ. Եթէ ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթիցին կամ իշխանութեամբ իշխանաց շրջիցին հարկապահանջս լինելով կամ ոստիկանս կարգիլ աշխարհական գործոց, ասէ գիրն առ նոսա. «Լաւ էր նոցա, թէ բնաւ չէր ծանուցեալ զարդարութեան ճանապարհին» (Բ. Պետր. Բ. 21). այնպիսիքն մի՛ լիցին քահանայք, այլ աստուածախաբք, պատարագք նոցա կափունք շանց, մկրտութիւնք նոցա որպէս թլփատութիւն Հրէի, տունք նոցա որպէս մեհեանք դիւաց, եկեղեցիք նոցա կրկին աւրինեսցին, իսկ ի գղջումն եկեալ՝ Ժ. ամ ընդ ունկնդիրս կացցեն եւ ի ներքս մտեալ մինչեւ ցվախճան ընդ ժողովրդականս կացցեն:

ԵՊԿ Ա. Ի վերայ բազում նշանացն եւ մարգարէութեանցն, եւ այս շնորհեալ երանելւոյն Եպիփանու, զի յորժամ պատարագ կամէր մատուցանել, յառաջին յաղաւթսն իւր, զոր վասն արժանաւոր լինելոյ զանձն իւր, աղաչէր վասն իջից Սուրբ Հոգւոյն ի խորհուրդն սուրբ որ ի վերայ սուրբ սեղանոյն, եւ տեսանէր յայտնապէս զՀոգին Սուրբ իջեալ ի սեղանն սուրբ եւ յամենայն ի կեանս իւր ոչ երբեք կատարէր

ECB 76. Celui qui adopte les mœurs des païens et observe leurs calendriers, et leurs célébrations basées sur les anciennes et les nouvelles lunes ou qui jeûne les samedis comme les juifs et ne travaille pas le samedi sera compté avec les crucificateurs.

ECB 118. Les époux qui se tiennent dans la sainteté pourront s'approcher du saint mystère; dans le cas inverse, ils n'en auront pas le droit; et s'ils le font quand même, on les comptera parmi les crucificateurs et ils partageront la honte de Judas.

ECB 223. Le prêtre qui dissimule les crimes d'une personne du fait de la corruption, de la crainte ou de la honte aura sa part avec Judas jusqu'à sa mort.

GNT 8. Le candidat à l'épiscopat doit être capable d'enseigner la doctrine et les Écritures et, en aucune façon être un ignorant, afin de ne pas déshonorer le nom de Dieu, car l'ignorant ne peut pas prendre soin de l'Église et – à l'image du Seigneur – dire aux juifs comment faire usage de leurs biens – et à l'image de Paul – leur faire y renoncer (cf. 1 Tm 3, 1-7; Tt 1, 10-16); de telles personnes ne seront pas consacrées à l'épiscopat et si elles sont déjà évêques, elles seront déposées, comme le disait Abraham et les lettres encycliques canoniales de l'évêque de Rome. Et ceux qui ont usé de la corruption pour accéder à la cléricature – à l'exemple des ariens Lucius et Zosime – seront chassés de leur trône, de même que leurs ordinands.

CYM 4. Les prêtres qui font du commerce ou qui circulent avec les autorités séculières pour prélever des taxes, ou qui se voient confier des tâches séculières par des fonctionnaires cesseront d'être prêtres car ils abusent Dieu (2 P 2, 21); et leurs messes sont pareilles aux aboiements des chiens, leurs baptêmes sont équivalents à la circoncision des juifs, leurs maisons sont pareilles aux temples des démons et les églises où ils officient devront être bénies à nouveau, mais s'ils se repentent, ils feront pénitence pendant dix ans avec les auditeurs, puis se tiendront dans l'église avec les laïcs jusqu'à leur mort.

CEC 1. Les prêtres et les diacres ne doivent pas coucher avec leur femme la veille de leur participation au saint mystère. Bien plus, si les membres du sacerdoce juif s'abstenaient de leur épouses durant trois jours avant de s'approcher de l'autel, il est évident que les clercs de l'Église du Christ ne peuvent pas agir autrement. De la même façon, ils doivent s'abstenir des plaisirs de la table et passer la nuit en

զխորհուրդ պատարագին, եթէ ոչ իջեալ եւ հանգուցեալ տեսանէր զշնորհս Հոգւոյն Սրբոյ ի պատարագն: Եւ եղեւ աւր մի ի կալ նորա առաջի սուրբ սեղանոյն եւ յասել զբանս աղաւթից ըստ սովորութեան իւրոյ որ առ Աստուած, զի իջցէ Հոգին եւ կատարեսցէ զխորհուրդ սուրբ պատարագին, եւ յայնժամ երեւումն տեսլեան Սուրբ Հոգւոյն ոչ եղեւ ըստ սովորութեանն որպէս յերէկն եւ յեռանդն: Եւ զարհուրեալ դողութեամբ, ուժգին արտասուաւք, եւ հառաչանաւք երիցս անգամ կրկնեաց զբանս աղաչանաց եւ ոչ եղեւ երեւումն շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Իսկ երանելին կայր զարհուրեալ եւ ողբալով աղաչէր վասն յայտնելոյ զպատճառսն չլինելոյ ընդունելի աղաւթից նորա վասն իջից Հոգւոյն Սրբոյ:

Եւ հայեցեալ նորա ի ձախակողմն կոյս ի սարկաւագն որ զքշոց պատարագին ունէր եւ տեսանէր զճակատն նորա լի չարաչար բորոտութեամբ որ յառաջագոյն սուրբ էր ի բորոտութենէ: Իսկ երանելին Եպիփան ձգեաց զձեռն իւր փութապէս ի բաց առ զքշոցն ի նմանէ եւ ասէ ցնա հեզութեամբ. «Երթ, որդեակ, գնա ի տուն քո եւ մի՛ ճաշակեր այսաւր յաստուածային խորհրդոյն»: Եւ սարկաւագն ել արտաքս եւ գնաց ի տուն իւր: Եւ հրամայեաց երանելին զքշոցն այլում սարկաւագի սպասաւորել սրբոյ խորհրդոյն: Եւ ապա սկիզբն արարեալ նորա աստուածային բանից պատարագին ուժգին արտասուաւք, եւ նոյն ժամայն ետես զՀոգին Սուրբ ի վերայ աստուածային խորհրդոյն ի սեղանն սրբութեան անարատ գառինն՝ փառակցին իւրոյ: Եւ զկնի արձակելոյ խորհրդոյն կոչեաց զսարկաւագն եւ ասէ. «Կամիմ ուսանել զպատճառս իրացն որ եղեն ի քեզ, որդեակ»: Նա պատասխանի տուեալ ասէ ցերանելին. «Ի գիշերիս յայսմիկ մերձեցայ ի կին իմ եւ յանդգնեալ ի սպասաւորութիւն սուրբ խորհրդոյս, զայս կրեցի»: Յայնժամ հրամայեաց կոչել զամենայն երիցունս եւ զսարկաւագունս եւ ասէ զնոսա. «Որդեակք իմ, որք արժանիդ եղէք սպասաւորութեան սրբոյ խորհրդեանն, ի բաց արարէք զմարմնասիրութիւն յանձանց ձերոց, զի մի՛ յանցանիցէք նոքաւք եւ արհամարհիցէք զիրաման մեծի քարոզին որ աղաղակէ եւ ասէ. «Որ ունիցին կանայս, որպէս թէ չունիցին՝ այնպէս կալցին» (Ա. Կոր. Է. 29): Եւ ցմեծ մարգարէն Մովսէս ասէր Աստուած, թէ ի սպասաւորութիւն կոչեցար՝ «Լոյծ ի բաց ընկեա զհողաթափս յոտից քոց» (հմմտ. Եսայ. Ի. 2), որ է մեռելութեան գործք, զի սպասաւորութիւնդ յոր կոչեցար՝ սուրբ է. եւ յայնմ հետէ ոչ մարմնաւոր հեշտութեանց պարապեաց մարգարէն, այլ բանին սպասաւորութեան: Եւ ի հնումն, որք կամէին ի սպասաւորութիւն խորանին մերձենալ՝ Գ. աւրեայ ի կանանց զգուշանային, որչափ պարտ է ի նորումս: Սոյնպէս եւ յորժամ կամիմք հաղորդել մեղսաքաւիչ խորհրդոյն, թէպէտ եւ կարեւոր է կերակուրն քան զանկողնոցն ցանկութիւն, սակայն զգիշերն ընդ մէջ անցուցանեմք: Այլ եւ ի սուրբ կերակուրս եւ յըմպելիս որք յանդգնաբար մերձենան մինչեւ անառակ արբենալ՝ ի մեղս եւս համարիմք նոցա ոչ եթէ զգինին, այլ զանառակ եւ զյանդուգն ցանկութիւն նոցա, զի վասն հացին առաջաւորութեան ասէր քահանայն ցԴաւիթ, թէ՝ «Զգուշացեալ են մանկունքդ քո ի կանանց, կերիցեն» (Ա. Թագ. ԻԱ, 4), ասէ Դաւիթ. «Սուրբ են յերէկէ եւ յեռանդէ յորմէ հետէ ելաք ի ճանապարհ» (Ա. Թագ. ԻԱ, 5). եւ ապա հրամայեաց՝ ահա որ ինչ բնութեամբ բարի է, յանդգնութիւն պիղծ առնէ, եւ ոչ եթէ զբնութիւնն, այլ զյանդուգն եւ զանժամսն ասեմ: Արդ՝ որք արժանաւորեցայք աստուածային խորհրդոյն՝ մեծաւ երկիւղիւ զգուշացարուք բազում երկիւղիւ զանձինս ձեր արժանացուցանել կալ առաջի սեղանոյն եւ հաղորդել մարմնոյ եւ արեան Տեառն:

prière. Ils doivent notamment éviter le vin, non pas que la consommation de cette boisson constitue un péché, mais afin de se trouver en état de sainteté au moment de s'approcher de l'autel pour communier au corps et au sang du Seigneur.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Հրատարակեց՝ Պրոֆեսոր Արամ Մարտիրոսեան

Պատասխանատու խմբագիր՝ Տ. Շահէ Ծ. Վրդ. Անանեան

Հրատարակչութեան տնօրէն՝ Տ. Արարատ քահանայ Պօղոսեան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Տ. Մկրտիչ եպս. Պռոշեան, Տ. Ռուբէն վրդ. Զարգարեան, Տ. Ասողիկ աբդ.Կարապետեան, Տ. Արարատ քհնյ. Պօղոսեան, Տ. Գաբրիէլ քհնյ. Վարդանեան, Գէորգ Տէր-Վարդանեան, Կարէն Մաթևոսեան,

Էջադրումը՝ Տ. Ղևոնդ աւ. քհնյ. Մայիլեանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2020

Չափսը՝ 210x297 (A4), ծաւալը՝ 912 էջ (57 տպ/մ),
կազմը՝ N7:

SAINT-SIÈGE D'ETCHMIADZIN

ORDONNANCEMENT DU LIVRE DES CANONS ARMÉNIENS

Auteur : Professeur Aram Mardirossian

Responsable éditorial : Proto-archimandrite Shahé Ananean

Directeur d'édition P. Ararat Poghosean

Membres du Conseil éditorial Evêque Mkrtitch Prochean
Archimandrite Rouben Zargarean
Hiéromoine Asoghik Karapetean
P. Ararat Poghosean
P. Gabriel Vardanean
Dr. Gevorg Ter-Vardanean
Dr. Karen Matevosean

Mis en page Archiprêtre Ghevond Mailean

ÉDITION DU SAINT-SIÈGE D'ETCHMIADZIN
SAINT-SIÈGE D'ETCHMIADZIN - 2020

ISBN 978-9939-59-245-9





ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ